Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1923

82
П-95

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ

ԼՈՐԴ ԼԻՏՏՕՆ

ՊՈՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Թարգմ. անգլ.
Ց. ՄԻՐՋԱՑԵԱՆ

ԹԻՓԼԻՍ
Տպարան Տ. Վ. Թօմբնեանցի
1903

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍՏԱՆԵԱՆ
07 JUN 2005
82
Բ-95
16 OCT 2009

ԼՈՐԴ ԼԻՏՏՕՆ

ՊՈՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Թարգմ. անգլ.
Ց. ՄԻՐՋՈՑԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօսթիսեանցի
1903

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ»
Դրախանութում վաճառում են հետևալ
ՎԻՊԱԿԱՆ գրքերը՝

	Ր.	Կ.
Պամպէլի վերջին օրերը, լորդ Լիտտօնի, անգլիական բնագրից թարգմ. Յ. Միրզայեան	1	50
Յարութիւն, կոմս Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Տ. Յակոբեան	1	50
Փրօֆէսոր կրասեր և Ռուսլէր աւազակ, Դօդէի, հանձնար.	1	—
Հեղինէ, երկու հատոր, տիկին Մ. Մարկհամի	1	75
Խորամանկած կնանք, Լ. Մանուէլեանի	1	—
Յիսուն երեսուս, Հ. Սենկևիչէի, վէպ Ներոնի ժամանակից, լեհերէնից թարգմ. Ս. Լիսիցեան	1	50
Մարդ եմ, էքէրսի, թարգմ. Սա. Մալխասեան	1	—
Թեղճերը, Ա. Հարոնեանի	1	—
Մելանիա, վէպիկ, Շերվանզադէի	—	50
Վէպիկներ, Շերվանզադէի	—	50
Նամուս, Շերվանզադէի	1	—
Կրակ, Շերվանզադէի	—	30
Քաօս, երկու մասից, Շերվանզադէի	1	50
Էմմա, վէպ ժամանակակից բարքերից, Վ. Փափազ.	1	—
Փարաւօնի աղջիկը Գ. Էբէրսի, թարգմ. Գ. Շահ-	—	80
Իշխանն ու աղքատը, Մարկ Տուէնի, բազմաղեանի	1	—
Լինդարդ և Վերարտոզ, Պեռոալտցցի, ժողովրդի համար, վերծն. թարգմ. Ի. Յարութիւնեան	1	50
Արութիւն և Մանուէլ, Վ. Ազայեանի, երեք հատոր	—	60
Վէքֆիլդի երէց, Գօլդսմիթի, Թ. Մ. Բուդաղեան	1	—
Անդրանիկ Կամիէն, Փերվանօղլի, թարգմ. Կ. Մարտ.	—	50
Խաչակիր մանուկները, թարգմ. Կ. Մարտիրոսեան	—	20
Եւալե աղջկերքը, Հուսկի, Փրանս. թարգմ. Մ.	1	—

L1 1 03 2013

1923

Доз. Цензурою, Тифлисъ, 15 Февраля, 1902 г.

486-69

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՄ ԱՄՍՀ
Գ. ԹՈՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Մեր առաւօտեայ դրականութիւնը չաս միակողմանի զարգացումն է առանուամ։ Երբն մը ժողովուրդ, որ նար է ազգ կոխամ քաղաքակրթութեան ասպարիզի վրայ, որ նար է առնամ դրականութեան ճաշակը, մենք, անտագակոյս, չենք կարող և գայն գեռ երկար չը կասրողանանք առնգագործել դրական այնպիսի արտադրութիւններ, որոնք կարգադնան որևէ տեղ վրաւել տանուրթարձային կամ, ասելի ճիշդն ասած, եւրոպական դրականութեան նչանաւոր արտադրութիւնների չարքում. մենք գեռ աշակերտներ ենք, մենք գեռ պէտք է ամրընք, չաս և երկար աւզարնք, մինչև կարգադնանք. եմք ոչ տանել մեր ուսուցիչներին, վարպետների կատարելագործութեան, գոնէ մօտենալ նրանց։ Մեր առնանձնձ ուսուցիչն եղել է առաւօտ դրականութիւնը. նա ոտային ապրելակերպն է գործել, գործում է և այսուհետև նա պէտք է գործէ անընդհատ մեր մտքի, մեր մտածողութեան եզրագիծ, մեր ամբողջ դրականութեան, նայն իսկ մեր լեզուի, ոճի վրայ։ Սակայն նայն իսկ այդ գլխաւոր ուսուցիչ—առաւօտ դրականութիւնից մենք չաս քիչ բան ենք վերցրել. այդ դրականութեան չաս գլխաւոր գործոցները գեռ մնում են մինչև յարդ չը թարգմանված, անլսած՝ ընթերցող հայ հասարակութեան այն մա-

սին, որ հնարաւորութիւն և միջոց չունի օգուտ քաղել բնագրից։

Առաջ գրականութիւնից լեռալ Ֆրանսիական գրականութիւնը ունեցել է ամենից շատ ազդեցութիւն մեր վրայ, իսկ թիւրքահայոց գրականութեան վրայ նա, կարելի է ասել, ունեցել է, անբաժանելի ազդեցութիւն. արեւմտեան նոյ բարբառով թարգմանված են Ֆրանսիական նշանաւոր վիպագրողների գլխաւոր գործերը. սակայն մենք, առաջնորդուելու, թէ լեզուի, թէ հնարաւորութեան և հաղորդակցութեան բացակայութեան պատճառով անկարող ենք եղել օգտվել այդ թարգմանութիւններից, ինչպէս թիւրքահայերը անկարող են եղել օգտվել առաջ գրականութիւնից կատարած մեր թարգմանութիւններից։

Առաջ և Ֆրանսիական գրականութիւններից լեռալ գալիս է գերմանականը, որի մի քանի արուեստագործները թարգմանվել են մեր մէջ և, անշուշտ, ունեցել են իրանց ազդեցութիւնը, թէև շատ աննշմանաւոր կերպով։ Գալով անգլիական գրականութեան, որ այնքան պատուաւոր տեղ է բռնում համաշխարհային գրականութեան մէջ, նա դեռևս միանգամայն անծանօթ է մնացել մեզ. միայն վերջին ժամանակներս, Յովհաննէս Մաամեան առաջ մեզ Շէքսպիրի անմահ արուեստագործութիւնների մի քանիսի թարգմանութիւնը, գնահատելի մեզ համար մանաւանդ այն պատճառով, որ թարգմանութիւնը կատարված է բնագրից, իսկ պ. Մխրտչեան առաջ մեզ Վալտեր Սկոթի մի աշխատութեան—«Կղզիների լորդը» օգնական թարգմանութիւնը, նոյնպէս բնագրից։ Սակայն մինչև այժմ մենք չունենք անգլիական նշանաւոր վիպագրողների որևէ աշխատութեան թարգմանութիւնը և այդ թերութիւնը մեր մատաղ գրականութեան համար չատ զգալի է։ Որքան չատ մենք ծանօթ լինենք համաշխարհային-եւրոպական գրականութեան արուեստագործութիւնների հետ և ծանօթ լինենք՝ բան ազգերից չափազանցով մեր ծարաւը, այնքան բնական կը լինի մեր ինքնական գրականութեան զարգացումը և կանոնաւոր՝ նրա բնական ընթացքը։

Այդ անհակասով, մենք համակրութեամբ ողջունում ենք պ. Մխրտչեանցի այս նոր թարգմանութիւնը, որ մի ջայլ է տալիս հայ հասարակութեան ծանօթանալ անգլիական գրականութեան մի գեղեցիկ արուեստագործութեան հետ։ Լօրդ Լիտտընի պատմական վէպը՝ «Պօմպէյի վերջին օրերը» դեռ մինչև այսօր ևս համարվում է կլասիքական և պատմական վիպասանութիւնների մէջ նշանաւորներից մէկը։ Անկէվիչի «Յո Երթաս» վէպից յետոյ, անշրաժեշտ է, որ հայ հասարակութիւնը կարդայ և Լիտտընի «Պոմպէյի վերջին օրերը» վէպը, իր ամբողջութեան մէջ, թարգմանված անգլիական բնագրից։ Կլասիքական, պատմական, լուրջ վիպասանութիւնների ճաշակը պէտք է պատուաստել հայ հասարակութեան և մենք անհապաղ ենք, որ նոյնիսկ վէպը ոչ միայն հաճելի, այլ և օգտակար կը լինի և կը նպաստէ այդ ճաշակի ջայլոյ պատուաստմանը։

Այժմ մի քանի խօսք հեղինակի և վէպի մասին *)։

Սըր Էդուարդ Լիտտըն-Բուլվէր, անգլիական գիւղօդատան և պրոպ, ծնվել է 1801-ին և վախճանվել 1873-ին։ Նա սկսել է անգլիացի ամենահին պտուտական բնաս-

*) Օգտվում ենք Օ. Ֆլոնի Histoire de la litérature anglaise գրքից։

նիքնևրի մեկից։ Փալըն կերպով ատարեալով ուսումը համալսարանում, նա հրատարակեց «Pelham» անունով իր առաջին գրական փորձը, որ ընդունվեց իբրև մի վարպետ գրչի արտադրութիւն. արդէն այդ աշխատութեան մէջ Բիւլվերը երևաց իբրև փիլիսոփայ և երևակայող. թէև 23 տարեկան հասակում նրա փիլիսոփայութիւնը չէր կարող դեռ չատ խոտ լինել, ոչ էլ երևակայութիւնը չատ կծու, սակայն հետևնակի ուշադրութիւնն աչքի ընկաւ։

Երեսուն տարեկան, 1831-ին, նա գրեթէ պարտաւորուեցաւ մի այնպիսի ժամանակ, որ չատ նպատակաւոր էր երիտասարդ վերանորոգչի համար. նա 1832-ի նշանակուած Բիւլի պատգամաւորներից մինն եղաւ։ Բայց գրանից նրան յաջողվեց անցկացնել ուղ գործունեութեան երկու օրէնսդրական բիլլ. առաջինը նպատակում էր լրագրների վրայ դրված հարցը, երկրորդը հասարակական անվտանգութեան պատիժներ։ Սակայն նա գրեթէ գաղափարութիւնների մինչև լօրդ Բերրիի կաբինետի մէջ։ Սակայն իբրև պետական մարդ և քաղաքական գործիչ նա երկրորդական տեղ էր բռնում, և եթէ նա բարձրացաւ Անգլիայի պերութեան աստիճանին «լօրդ Լիտոն» անունով, այդ պատիւը նա ստացաւ ոչ թէ իբրև վարձատրութիւն իր քաղաքական, այլ իր գրական գործունէութեան. նրա իսկական կոչումը՝ գրականութիւնն էր, որին նա և նուիրվեց ամենայն եռանդով և սիրով. այդ կոչումը արտահայտվեց գրականութեան զանազան ճիւղերի մէջ և նա հանդիսացաւ, միաժամանակ յաջողութեամբ, իբրև բանաստեղծ, իբրև փիլիսոփայ, պատմաբան, բարոյագէտ, երկիծարան, դրամատուրգ և վիպագրող։ Նա մրցում էր Վոլտէր

Ակտաի, Դիկինսի և Թէկերէյի վէպերի հետ, միայն այդ չքնաղ վիպագրողների բարձրութեան վրայ. նրա գրուածները դարձան հանրահռչակ, կարդացվում էին ամենքից, թարգմանվեցին եւրոպական գրեթէ բոլոր լեզուներով, մանաւանդ նրա երկու պատմական վէպերը «Պոմպէյի վերջին օրերը» և «Ռիէնցի» ու «Ռիչըրդ»։ դրամաներ։

Նրա գրական արտադրութիւնների բազմազանութիւնը տարել է քննադատներին դատարկել նրանից և ասել, որ նա ունի պատմական վէպեր, փանտաստիկ վէպեր, փիլիսոփայական կամ սոցիալ բնաւորութիւն ունեցող վէպեր, վերջապէս երևակայական կամ բնութեական վէպեր։

Իբրև սոցիալական վէպեր նա տուել է «Գըվէրթօ», «Մալտրավէր», «Երևիլ և Առաւօտ», «Ենգինէ Արամ» վէպերը, որոնց մէջ, գրույցի և նկարագրութեան ձևով, նա ասանդում է իր վերանորոգչական անուրջները։ «Զանոնի» և «Մի օտարոտի պատմութիւն» վէպերի մէջ նա կամենում է քննադատել մարդկութեան և ճշմարիտ պատմութեան մէջ։ «Հարօլդ», «Բարօնների վերջինը», «Ռիէնցի» և «Պոմպէյի վերջին օրերը» պատմական վէպերի մէջ նա վերակենդանացնում է հնադարեան և միջնադարեան աշխարհները ու պատկերները։

Որոնք են Բիւլվերի սոցիալական գաղափարները։ Իր սոցիալական վէպերի մէջ նա այս հարցն է դնում. «մարդը յարգում է սովորական, առօրեայ մարդկութիւնները և սխալները, բայց անվնաս հատկութիւն է, իբրև սէր, ատանձին բանութեան գործողութիւնը։ Երբ մէկը ընկերութեան մէջ գոգանում է իր ընկերի, բարեկամի, ծանօթի բնաւորութեան պատիւը, հասարակութիւնը ներողամտօրէն է վերաբերվում դէպի նրան, չէ արատաւոր

նրան իր միջից, այլ այդ հասարակությունը անխնայ հալածում է այն մարդին, որ լուսամտության ճշմարտության գաղափարն է անում։ Միմիայն այդպիսի վերաբերմունքը։ Ինքով այդ հարցը, վիպասանը լուծում է բացասական։ Նա պահանջում է, որ օրենքը միջամտություն կրքից և լուսամտության ազատ յանգումների համար։ Նա կամենում է, որ հասարակական կարծիքը, այլ ի չիք օրենքն, ինչն գաղափարի և հալածի վարձում և բարեփոխիչ մարտիրոսները։ «Երեկ և առաջ» վիպի մեջ քարոզվում է նույն միտքը, ինչ որ Բալզակը քարոզում է Մանֆրեդի մեջ, իսկ ազատամարտական տեսակետից, ազատատյացները Մանֆրեդի հեղինակի կողմն է։ Բալզակը ատում էր և մարդկանց և հասարակությունը։ Բայրոնը արհամարհում է հասարակությունը, բայց սիրում է մարդկանց. այդ տրամադրությունն չի թողում, որպեսզի նրան հասարակությունը ոչինչ չարժե, գարշ է, որ այդ հասարակությունը կազմող մարդն ևս ոչինչ չարժե։ Ամերյան այդ հակասությունը լորդ Նիսոն-Բայրոնի մեջ սկսած է վերապրել նրա մարդի վճռաճակատությունը։ Նա անուսանում էր իր սերնդի մարդկանց հետևել հետաքրքրությամբ, բայց նա փափագում էր ոչնչացնել նրանց անհատությունը։ Նա ցանկանում էր, որ իր ծագրը չկատարած երկաթ մնան և վերջը լսչկելու կարողությունն ունենան։

Գալով Նիսոնի պատմական վիպերին, որոնց մեջ և ամփոփած նրա բոլոր գրական աշխատությունների մեջ—գլխ գործոն կազմում է «Ֆոմպիի վերջին օրերը», որի թարգմանությունը առել է մեզ ոչ 3։ Արդյունքն, պետք է ասել, որ այդ վիպերը տարբերվում են Վալտեր Սկոտտի վիպերից ամբ ինչով։ Վալտեր Սկոտտ վոխ է

առնում պատմությունից ֆոնի կտավը, գարդը, տարրերվիքը (ակեսսուար)։ Նա երկրորդական տեղ է տալիս պատմական մեծ դեմքերին։ Նիսոնը վոխ է առնում պատմությունից տեղությունները, դիպվածները, լուծումը։ Նա դնում է ինքը պատմությունը ամբողջովին վիպի մեջ. այդ մի առանձին բարեփոխություն է և որովհետև բարեփոխությունն միշտ պատժվում է, ուստի վիպասանի համար պատիժն կատարում է նրանում, որ կարող է ճանճրացնել ընթերցողներին, որովհետև այդ սխեմայով կազմված վիպերի մեջ վախճանը, լուծումը առաջուց յայտնի է։ Սակայն այդ սխեմայը, որին անշեղ հետևել է Նիսոնը իր երեք պատմական վիպերի մեջ, չէ գործադրված նրա չորրորդ վիպի «Ֆոմպիի վերջին օրերի» մեջ. այդտեղ, հեղինակը չեղել է սխեմային և դրա համար այդ չորրորդ պատմական վիպը դարձել է հետաքրքրական և սաղցել դրեթե համաչխարհային նշանակություն։

Լորդ Նիսոնի այդ գլուխ գործոցի նախը տասնյական Ֆոմպիի քաղաքի կործանման է 79 թուականին. ինչպես յայտնի է, Վեզուվ հրաբխային սարը 79 թուի օգոստոսի 23-ին հար ու մոխիր ժայթքելով, ծածկեց Ֆոմպեյին, Հերկուլանում և Սաբրիա ծաղկեալ քաղաքները իր լավայով. այդ երեք քաղաքները թաղվեցին իրանց բնակիչներով, անասուն, չինովնիկներով, այդինների մոխրի և լավայի տակ և անհետացան այնպես, որ նրանց հետքը անգամ չը մնաց. տասնհինգ դարերով, ամբողջ 17 դարերը մնացին անտեսու, ծածկված մոխրեղեակ, մոռացված նույն իսկ մարդկանց հիշողությունից։ Այդ ժամանակի ընթացքում հունական հզոր գաղութները կործանվեց, նոր ազգեր եկան գրավեցին Ասիան Հունաստանն և Հին Կոստանդնուպոլի նոր բնակիչները ոչ մի

պաղ ափսո չանենալով այդ երկար քաղաքների մասին, նոր գիշերը հիմնեցին, նոր այլևևներ տնկեցին նրանց վրայ։ Այդ բնակիչները ամենևին չէին կասկածում, որ իրանց տնկած տղերի, իրանց գիշերի տակ թաղված են հին աշխարհի քաղաքների ավերակները և անթաս հարստութիւնները։ Միայն 1748 թվին, դիպուածը երևան հանեց Պամպեյը և, այսօր, կատարված պեղումների չնորհիւ, նրա գրեթէ կէսը բացված է արդէն և ճանապարհորդները կարող են գիտել հին աշխարհի հռոմէական քաղաքներից մինը իր ամբողջ կեանքով։

Եւ լորդ Լիտտօն իր վէպի մէջ վերակազմել է հռոմէական կայսրութեան դատաստական կեանքը քրիստոնէութեան առաջին դարում։ Պոմպէյ քաղաքը մի փոքրիկ Հռոմ էր կազմում իր յարգական կամարներով, իր կրկեսով, իր թատրոնով, իր առճարներով և անուանականոցներով, իր սահմանափակ ֆօրումով, ուր մարքսում էին մեռնողի առարկաների համար ժողովրդական կրքերը և պատրիկեան մեռապարծութիւնները, իր քրիստոնեաներով, որոնք չարժվում էին սառերում և համարվում էին մի վայրենի և անծանօթ ազգից։ Պոմպէյը մի սապարէզ էր, ուր հանգիստ էին բոլոր գիշերի տապանները և խղճերը. նրբամիտ, պերճախօս և քաջ յոյնը. կիսատացին, որ իր խորհրդատու ծանրաբարոյութեան քօղի ներքև ծածկում էր սարսափի խորամանկութիւն և յոտազի ախորժակ։ Այդ սառերութիւնների և սիրոյ մէջ երևում է նիհիլիզմը, մի կայր կայս, ապիսակ փղամիդով, որը այն ամենաանբաժան աներկբայներից, որոնք երբեմնի թափանցել են բանասաղծի երևակայութիւնը։ Վրայ է հասնում վերջապես վախճանական աղէտը։ Վեսուվ այդ աղէտի բոլոր սեռարանները նկարագրելու համար սա-

ռել է դրական վրձինի բոլոր միջոցները և նկարել է մի սքանչելի պատկեր, որի միակ պակասութիւնը—նկատում է Ֆրանսիայի քննադատը—նոյն իսկ իր կատարելագործութիւնն է։ Այդ նկարի մէջ արուեստագէտը աչքից չէ վրիպցրել լոյսի մի շողն անգամ. պատմագրանը՝ դիպուածի ոչ մի մանրամասնութիւնը. բարոյագէտը՝ սառաբինութեան կամ սառնութեան ոչ մի դիծը. հռետորը՝ ոչ մի հակադրութիւն, դրամատուրգը՝ ոչ մի բնական կեցուածք։ Կա մի կանոնաւորված քաոս է, ճարտարապետ ձեռքով ի լոյց դրված. միակ պակասը՝ մի քիչ անկարգութիւնն է։

Եւ այդ կատարելագործված վրձինի պատճառով է, որ «Պոմպէյի վերջին օրերը» վէպը միշտ այսօր էլ թարգմանվում, կարդացվում է հռետութեամբ, ծառայում է իբրև նրբի թատրոնական դրամաների համար և համարվում է եւրոպական կրթիչ արուեստներից մինը։

Դարավ նեղկալ թարգմանութեան, մեր կարծիքով, նա բուռական աշխատված է, մանաւանդ եթէ՝ ի նկատի ունենանք այն գժուարութիւնները, որոնց պէտք է յաղթահարի հայ թարգմանիչը այդպիսի մի կլասիքական դրամատ ճշգրտութեամբ արտայայտելու համար մի լեզուով, որ դեռ անձնական է, դեռ չուռ կատարներ ունի անցնելու, միշտ կը մնայ կանոնաւոր բարեշրջման չափի մէջ։

Հ. ԱՐՈՒԹԵԼԵԱՆ

ԼՈՐԴ ԼԻՏՏՈՆ

ՊՈՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

«Ավարտած է վէպը, և այս գլուխները անգի են անցնում նրա մէջ առանձին տարբեր։ Բայց նրա բոլոր պատմիչները, որոնք այդ ժամանակագրութեան ի վեր անգի են անցնում, նոյն-իսկ նրանք միահամուռ են մի չնչին բան պիտի երևայնին բազդատմամբ այն պատմութեան հետ, որի մասին խօսում ենք։

. . . . . .

Յեւրիկը պիտի վախճանէր և լսող հասարակ, վշտահար և մտերիմ մի աննկարագրելի թախանձանքն զարթնում էր ժպիտներից, ծամկիլով ցաւերը, ծովը և օդը, և թռչելով երկու ամբողջ դարեր, Ելիսաբեթում և Պամպէյ այն ժամանակ՝ երբ ժողովուրդը նստած էր թատրոնի մէջ»։

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՒՍ

ԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Ագռեխով մի հին քաղաքի պեղուած աւերակները, որոնք Ճոնապարտոպին հրապուրում են դէպի Նապղիի մերձակայքը, կարելի է ասելի՝ քան հարիւր անուանի երկունքի անուղղ գիմիւնը, մանրիակով ծածկուած հովիտները և նարնջենու ծառաստանները. անոնցմով այն դեռ թարմ և կենդանի անունը, փողոցները, առճարները և թատրոնները, որոնք դոլոթիան անկին Հռոմի կայսերական ամենից իրուխան գարում՝ — անբնական չէր որ մի պրոյ, որ առաջ էլ աչխատած էր, թէև անարժանարար, վերակենդանացնելու և ստեղծագործութեան արուեստի մէջ, մի լուռն վախող ղդար նորից ընակեցնելու այս թափուր փողոցները, վերանորոգելու այդ չնորհալի աւերակները, կրկին կեանք տալու այն ամրոցներին, որոնք դեռ պատուած էին նրա աչքերի համար. թաչելու սառն և ամբ գարերի վիհից և մի երիտասարդ գոլոթիան պարգեւելու Միջերկրականի Բազաքին։

Եւ ընթերցողը դիւրութեամբ կարող է երեակայել, թէ այս վախտը ինչ զգալի կերպով ծանրացաւ մի մարդու վրայ, որ ձեռնարկեց այս աչխատութեանը Գամպէլի անմիջական մերձակայքում։ Այն ծովը, որ մի ժամանակ անդամիսում էր այդ քաղաքի վաճառականական ապրանքները, և ընդունում էր նրա փոխարտականներին, ալուսած էր հեղինակի առջեւին—և վե-

աւելի չարաչար լեռը անդադար կրակ և ծուխ էր արտաշնչում նրա աչքերի առջև *):

Ես սկզբից ճանաչում էի այն մեծ գժտարտնքները, որոնց դէմ ես պիտի մաքառէի։ Մի վարպետ հանճարի ձեռքը հարկաւոր եղաւ Միջին Դարի սովորութիւնները նկարելու և նոցա կեանքը լոյս աշխարհ դուրս բերելու համար. սակայն, կարելի է որ այդ գործը չնչին և դիւրին էր, բազդատելով այն փորձին հետ, որ ուզում էր գծագրել մի ամբողջ մեծ և ամբողջ անծանօթ ժամանակ։ Մենք մի բնական համակրութիւն ունինք դէպի առաւօտեան ժամանակները մարդիկը և մի ազգակցական կապ նոցա հետ. այդ մարդիկը մեր իսկական նախահայրերն էին—այդ սովորութիւններից մենք առացանք մեր սովորութիւնները. մեր ասպետական հպարտութեան կրօնքը մեր կրօնքն է—նոցա դժբաղդները դեռ նոյնպէս մեծ են մեր ներկայիներս. նոցա բերդերի աւերակները դեռ խրոխտում են մեր հովիտների վրայ։ Մեր ներկայ հասարակութիւնների սկզբնաւորութիւնը մենք գտնում ենք նոցա ազատութիւնի և պատճառը մենք գտնում ենք նոցա արդարութիւնի համար մղած պայքարների մէջ, և նոցա բնակերական կազմութիւնի տարերքի մէջ մենք անհնարին ենք մերի նախատիպը։

Բայց կլասիկական դարի հետ մենք ոչ մի ընդհանուր կամ ծանօթ նմանութիւններ չունինք։ Այդ ջնջուած կրօնքի ազդեցը, այդ անցած լուսաւորութիւնը սովորութիւնները քիչ բան ունին՝ որ սրբազան կամ հրապարիչ լինի մեր հետաքրքրութիւնը հետաքրքրութեան համար. նոքա աւելի հասարակ և հնամաչ են թուում մեզ այն աբսլատական իմաստասիրութիւնների չնորհիւ, որոնց միջոցով մենք առաջին անգամ ծանօթացանք նոցա բնաւորութեան հետ, և նոքա կորած են այնպիսի ուսումնասիրութիւնների վերստանին, որոնց մշակումը մեզ համար մի պարտաւորութիւն է եղած և ոչ թէ մի հաճոյք։

Այնուամենայնիւ ինձ սիրելս թուաց, որ այս ձեռնարկը, թէև չատ դժուար, փորձելու արժանի է. և իմ ընթացած ժամանակի և տեղատեղի ընթերցողի հետևելի է պահել, որ կարողանայ տալ ընթերցողին հետաքրքրութիւնը և պրաելի նրա ուշադրութիւնը դէպի հեղինակի նկարագրութիւնները։ Դա մեր կրօնքի առաջին գարի մէջ էր և Հռոմի ամենադարձր լուսաւորութեան ժամանակ. պատմութիւնը անզգաստած է այնպիսի վայրկեան, որոնց նշմարները մենք դեռ կարող ենք գտնել. և վերջապէս՝ ամենաանկալի ապէնեներից մէկն է, որ պատմութեան ապրեցութիւնները ներկայացնում են մեր հետազոտութեան։

Իմ առջև դիզուած աստ սկսելուց հետ աշխատել եմ ընտրել այնպիսիները, որոնք ամենից չատ կարող էին հրապարիչ լինել մի ժամանակակից ընթերցողի համար, այն սովորութիւնները և նախապաշարմունքները, որոնք ամենից քիչ անծանօթ էին նրան. այն սովորութիւնները, որոնք երբ վերակենդանացուէին, նրան պիտի ներկայացնէին անցեալը և միևնոյն ժամանակ նոցա անհետացքը պիտի լինէին ներկայի հետևցողութեան համար։ Եւ իրօք, աւելի ինքնաղոպտութիւն տարօրինակ եղաւ՝ քան ինչ ընթերցողը կարող է երևակայել, միջոց համար չատ բաներ, որոնք ինքն իրա ինքնան

486.69

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм ССР

*) Գրեթէ ամբողջ այս գիրքը գրուեց Նապոլիում 1832—1833 թ. ձմեռը

հրապուրիչ էին, բայց միևչդեռ այդ յաւերժածները կարող էին զարդարել աշխատասիրութեան զանազան մասերը, նոքա պիտի վնասէին դրքի ամբողջութեանը։ Զոր օրինակ, իմ պատմութիւնը տեղի է ունենում Ցիտոսի կարճ թագաւորութեան օրով, երբ Հռոմը գտնուում էր իւր զեղխութեան և զօրութեան ամենաբարձր գագաթնակէտում։ Ուրեմն մի մեծ փորձութիւն էր հելլենական հոգիս, իւր սիրելիը պատմութեան ընթացքում Հռոմ տեղափոխել։ Ո՞նչ բան կարող էր ասելի չատ սիրելիք մատակարարել նկարագրութեան համար, կամ յուցասլուութեան ասելի լայն ասպարէզ ընձեռել՝ քան այնքան վսաստեղ քաղաքը, որի չքեղութիւնը կարող էր այնքան վայելուն նկրչնումներ տալ երեակայութեան և այնքան նպատակաւոր և հանդիսաւոր մի արժանիք ընծայել հետազօտութեանը։ Բայց Պոմպէյի կործանումը ընտրելով ինձ նեղ՝ չատ փոքրիկ ծանօթութիւն էր հարիւրաւոր արուեստի բարձրագոյն սկզբունքների հետ, հանգամանքս համար, որ իմ պատմութիւնը պէտք է սահմանափակուած լինի միայն Պոմպէյի մէջ, բաւի լուսն նշանակութեամբ։

Կամպանիական գեղարդ քաղաքի տեղեկութիւնը և զեղխութիւնը պիտի կորցնէին իրենց նշանակութիւնը, երբ դրուէին փոխանակ Հռոմի փարթամութեան մօտ։ Այդ քաղաքի օտարի վախճանը չնչին և կղզիացած նահանգութիւն պիտի համարուէր՝ կայսերական իշխանութեան ահագին ծովերի մէջ, և այն օժանդակութիւնը, որ ես պիտի սահմանի ի նպաստ իմ պատմութեան՝ կորուսեան կմնայինէր այն դասը, որին կոչուած էր օգնելու։ Ես հետևաբար ստիպուեցայ ինս կենալ այս յարդանդական չեղումից և սահմանափակուել միայն Պոմպէյի մէջ, ուրկէնեղին թողնելով Հռոմի փոքր բայց վսաստեղ լուսաւորութեան նկարագրութեան պատիւը։

Նոյն քաղաքը, որի ճակատագիրը մատակարարեց իմ պատմութեան այսպիսի մի վսեմ և ահեղ վախճան, մատակարարեց ինձ նաև այնպիսի տիպեր, որոնք առանձին չատ յարմար էին նրկիին և անաարանին։ Հերկուլէսի այն կիսալուսնական գաղթականութիւնը, որ Խաղաղասէր ձևերի հետ խառնուած էր հելլէնների զգեստներով՝ սկզբնապատճառը եղաւ Պլուտոսի և Խոնէի տիպերի առեղծագործութեան։ Իսիսի կրօնքը, նրա գեղ կանգնած մնացած մնհանը, իւր քօղաներձ սուտ քարիրներով, Պոմպէյի և Ալէքսանդրիայի առևտուրը, Սարնոսի և Նեղոսի յարակցութիւնները՝ յարմարութիւն տուին եղիպտացի Արբակին, սատր Կալենուսին և ջերմեռանդ Ապէկիդէսին։ Քրիստոնէութեան դարնի մատուռումը հեթանոսութեան դէմ՝ թեպետև Օլինթոսի աստղագործութիւնը, և Կամպանիայի ալրեցիալ դաշտերը, որոնք երկար ժամանակ հռչակուած էին վնասի կախարդութիւններով պատճառով՝ բնականապար արտադրեցին Վեսուվի Սագալին։ Իսկ կայր աղջկայ գոյութեան համար ևս պարտական եմ մի պատահական խոտակցութեան մի պարոնի հետ, որ լաւ ճանաչուած է Նապոլիում եղած անգլիական շրջանի մէջ՝ կեանքի զանազան չատիղների մէջ իւր ուսնեցած ընդարձակ տեղեկութիւնների համար։ Խօսելով այն կատարեալ մխութեան վրայ, որ ընկերացած է Վեսուվի յիշատակարուած առաջին պայթիւնին, և այն աւերող արդիւնքի վրայ, որ այդ խաւարը յարուցած է բնակիչների փախուստի առջև՝ նա նկատեց, որ այդ պիսի երեւոյթ կոյսերը ամենից նպատաստուր պայմանի մէջ են եղած և ամենից աւելի դիւրութեամբ են գտած

ֆրենց ազատութիւնը։ Այս նկատողութիւնից սկիզբ առաւ Նիդհալի տիպը։

Վէպի տիպերն, ուրեմն, բնական դասակներն են նրա տնօրանի և ժամանակի։ Պատմութեան դէպքերը, կարելի է, նոյնչափ համերաչխ են այն ժամանակաշրջանի ընկերութեան տրուհետ. որովհետև մենք չենք վերակենդանացնում անցեալը՝ տեսնելու համար միայն նրա կեանքի ամենօրեայ սովորութիւնները, նրա խնջոյքները և ֆօրմաները, նրա բաղնիքները և ամիթհաթարները, նրա գեղեցկութեան սովորական կրկնութիւնները.—այլ նոյնչափ նշանակութիւն ունին և շատ աւելի հետաքրքրական են այն կրքերը, ձգտումները, տարաբախտութիւնները և անյաջողութիւնները, որոնք կարող են պատահած լինել այն տաւերներին, որոնց մենք կոչում ենք ի գոյութիւն։ Մենք աշխարհի որևէ ժամանակը լաւ չենք կարող հասկանալ եթէ չգիտենք նրա վիպական մասը։ Նոյնչափ ճշմարտութիւն կայ գիտնքի բանաստեղծութեան արգան նրա պրոզայի մէջ։

Անծանօթ ու հետաքրքիր ժամանակները չօչափելու ամենամեծ դժուարութիւնը կայանում է նրա մէջ, որ մատչել իւր տիպերին «կենդանի և չարժուն» էակներ դարձնել ընթերցողի աչքի առջև, և հետևաբար այդ պիտի լինի այսպիսի գործի առաջին նպատակը. վիպութիւնը ցոյց տալու բոլոր փորձերը՝ միայն երկրորդական տեղ պիտի բռնեն այս բանի մօտ, որ վիպասանութեան գլխաւոր կարիքն է։ Բանաստեղծի (ստեղծագործողի) առաջին պարտքը պիտի լինի՝ տեսնել կեանքի չունչը իւր տարածների մէջ, լսել նոցա խօսքերը և գործերը յարմարցնել այն ժամանակին, որի մէջ նորա խօսում և գործում են։ Այս վերջին պարտքը, կարելի է, ամենից

լաւ կերպով կատարում է այն դէպքում, երբ գործարուհետը անդադար չենք բերում ընթերցողի աչքի առջև, երբ գործ էջը չենք ծանրաբեռնում վկայութիւններով և լատանոքը ծանօթութիւններով։ Այն խնդիրը ապին, որ հնութիւն է դնում հին պատկերների մէջ կարելի է, միակ ճշմարիտ գիտութիւնն է, որ հարկաւոր է այսպիսի գործի. առանց դրան հմտութիւնը անախորժ է և դրա հետ, անհարկաւոր։ Ով որ կատարելագէս տիրապետ է, թէ տրձակ վիպասանութիւնը ինչ է գործել մեր օրով. ով որ ճանաչում է դրա լարքը և ազդեցութիւնը, այն ձևը, որով դա առաջնահերթ կլանել է իրականութեան բոլոր համանման ձիւղերը. ով որ ծանօթ է նրա զօրութեան հետ թէ սովորեցնելու և թէ զուարճացնելու մէջ՝—նա չէ կարող այն առաջին մոռանալ նորա յարակցութիւնը պատմութեան, փիլիսոփայութեան, քաղաքականութեան հետ, նրա կատարեալ ներդաշնակցութիւնը բանաստեղծութեան հետ և հնագանդութիւնը ճշմարտութեան—որ առարկայն նրա բնաւորութիւնը հատատարացնելով դրան պրոպատիկական ունայնասիրութեան. նա բարձրացնում է հմտութիւնը և տալիս է նրան ստեղծագործիչ ոյժ. նա չէ խոնարհեցնում ստեղծագործականը պրոպատիկականին։

Ինչ վերաբերում է իմ տիպերի գործածած լեզուին՝ ես ամենայն ուշադրութեամբ խուս եմ տուել այն մահացու սխալից, որով հեղինակները աշխատել են, ներկայ ժամանակներում, դուրս բերել կլասիկական դարի էակներ։ Հեղինակները մեծ մասամբ դրել են իրենց տիպերի բերանը նոյն ուսուցիչ պարբերութիւնները, լեզուի նոյն ցուրտ և պերպակիք հանդիսաւորութիւնը, որոնք ամենից չատ աքանչացում են պատճառել նրան կլասիկա-

կան գրպանների մէջ։ Նոյնչափ մի անհեթեթ սխալ է՝ հոգամտելցինների, իրենց սովորական կեանքի մէջ, խոսեցնել տալ Ալկիբեանի նախադասութիւնները՝ որքան էլ մի վիպասան իր անպէտացի ախպերին բարբառել տար Ջանանի կամ Բուրդի երկար պարբերութիւններով։ Այս դէպքում սխալն ուղիղ է. որովհետև մի չգիտ դա գիտական յատկանութիւններ ունի՝ դա յայտնում է իր ոգեորութիւնը արդար քննադատութեան մասին. դա յոգնեցնում է, դա ձանձրացնում է, դա զզուեցնում է. և յօրանջկոտ ժամանակ մենք չունենք գէթ այն բաւարարութիւնը, որ մենք յօրանջում ենք՝ վատահած լինելով մեր ոտացած անգիտութիւններից։ Ոչ մի բան չեզրնակին չէ կարող տալ մի աւելի անհանգիստ և անդադար դիրք՝ որքան ոտքալի չտապմամբ զրկումը։ Մենք պէտք է բերենք մեր աշխատութեան մէջ երկար տարիներից ի վեր մեր ձեռք բերած տեղեկութիւնները. տարրութիւնները, ոճը և ընդհանրապէս լեզուն պէտք է հասնի մի վտակից, որ երկար ժամանակ լի է եղած. ծանրիները պէտք է տեղափոխուին կենդանի հոգից, և ոչ թէ գնահին մերձակայ հրապարակից։ Այս առաւելութիւնը, որ առաջ է գալիս մեր նիւթի հետ ունեցած ծանօթութիւնից, աւելի պատահարի գործ է քան արժանիքի, և կախուած է այն առաքինից, որով կլասիկ գրողները մուտք են գործել մեր պատանութեան կրթութեան մէջ և մեր հասուն հասակի ուսումնասիրութիւնների մէջ։ Այնու ամենայնիւ էթէ մի գրող ունենայ նոյն իսկ ամենամեծ աւանդութիւնը, որ կրթութիւնը և ուսումնասիրութիւնը կարող են բաշխել՝ գարձեալ անկարելի կլինի նրա համար կատարելապէս տեղափոխուել մի գարի մէջ՝ որ ամբողջ տարբեր է իր ժամանակից.

նա գարձեալ կզգայ մի քանի անճշտութիւններ, անուշադրութեան և մոռացութեան սխալներ։ Եւ երբ նոյն իսկ վեր է վերայ տեղեկութիւն ունեցող քննադատներ կարող են այս տեսակ թերութիւններ գտնել այնպիսի գրուածներում, որոնք չօչափում են նախնիների՝ սովորութիւնները և որոնք գոնէ են եկած ամենամօտիկ ուսումնասէրների գրչի տակից՝ վերին աստիճանի չանգստութիւն կլինէր իմ կողմից յուսալ, որ ես աւելի բախտաւոր մարգ եմ եղած քան այնպիսի մարդիկ, որոնք անհամեմատ աւելի պիտոն են եղած և հեղինակած են այնպիսի աշխատութիւններ, ուր պիտութիւնը անհամեմատ աւելի քիչ տարածութիւն էր։ Հէնց այս պատճառով է, որ ես քաջութիւն ունեմ հաւատալու, որ գիտութիւնները իրենք իմ ամենից մեղմ դատաւորները պիտի լինին։ Բաւական է եթէ այս գիրքը, ինչ որ էլ լինին դրա թերութիւնները լինի մի պատկեր կարելի է անցաղող իր գոյների մէջ և սխալ իր գծագրութեան մէջ, բայց ոչ բոլորովին անհատատարիմ զէմի գիմագիծը և զգեստը այն գարի, որ ես փորձել եմ նկարել։ Եթանէ թէ դա լինի (ինչ որ չատ աւելի նշանաւոր է) մի ճիշտ պատկերացում մարդկային կրքերի և մարդկային սրտի, որոնց տարերքը նոյնն են եղած ամեն գարերում։

ՊՈՄՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

ԳԻՐՔ ՍՈՒՏՋԻՆ

Գլուխ Ա.

ՊՈՄՊԷՅԻ ԵՐԿՈՒ ՊԱՐՈՆՆԵՐ

«Օհօ, Դիոմեդ, լաւ ժամանակին հանդիպեցինք։ Դուք էլ էք ընթրելու Գլոկուսի տանը այս գիշեր», ասաց մի կարճահասակ երիտասարդ, որ կրում էր իւր պարեգօտը աջ արմակ և կանացի ծալքերով, որոնցից յայտնւում էր՝ թէ նա մի ջէնտէլմէն է և մի սեթեւեթ երիտասարդ։

«Աւաղ, ոչ սիրելի Կլոդիուս. նա ինձ չէ հրաւիրած», պատասխանեց Դիոմեդը, որ մի վալէնտիոցի և մինչեւ սարիքի տէր մարդ էր. «Պոլլուքսը վկայ, դա նրա կողմից կեղտոտութիւն է, որովհետև տասը են, որ նրա ընթրիքները ամենալաւն են Ռոմպէյի մէջ»։

«Վատ չեն, թէև ինձ յագեցնելու չափ պինդ չկայ երբէք։ Հին յունական արիւնը չէ որ հոսում է նրա երակների մէջ, որովհետև նա պատճառ է բերում, թէ պինդն նրան ապուշ է դարձնում հետեւեալ առաւօտը»։

«Կարելի է մի ուրիշ պատճառ ունել այդ սակաւապաւթիւնը», ասաց Դիմիդ՝ բարձրացնելով իւր յօնքերը։ «Ջնայելով բոլոր նրա ինքնահաճութեան և չոալուխեան՝ նա այնքան հարուստ չէ, որքան ուզում է երեալ, և հաւանական է, որ աւելի վախտում է խնայել իւր ամֆօրները *) քան իւր միտքը»։

«Այդ էլ նոր պատճառ է նրա հետ ընթրելու, քանի որ սեսաերցները ** դեռ չեն վերջացած։ Գալ տարի, Դիմիդ, մենք մի ուրիշ Գլոկուս կը գտնենք։

«Լաւ եմ, խաղից վատը չէ գալիս»։

«Նա սիրում է ամէն զուարճութիւն. և քանի որ նա սիրում է ընթրիքներ տալու զուարճութիւնը՝ մենք բոլորս էլ սիրում ենք նրան»։

«Հա, հա, Կլոդիուս, լաւ ասացիք։ Բայց երբէք սեսած էք իմ դինու մառանները»։

»Չեմ կարծում, իմ բարի Դիմիդ»։

«Վա՛, ուրեմն, դուք պէտք է ընթրէք ինձ հետ մի պիչնը. ես բաւական լաւ մուրէնա ***) ունիմ իմ չուեմաբանում, և էգիլ ****) Պանոպիից էլ կը խնդրեմ, որ ներկայ լինի»։

«Ո՛չ, խնդրեմ այդպիսի պաշտօնական մեծ մարդկանց մի հրաւիրէք ինձ հետ—Persicos odiapparatus. ինձ

*) Մի սեռակ հռովմէական երկկանթ պինու կամ, Ե. Թ.

**) Հռովմէական գրամ, լատիներէն «սեսաերտիում» որ համապատասխանում է մօտաւորապէս քսան սանտիմ ֆրանսական դրամին։ Ե. Թ.

***) Գարեզ ձուկ։

****) Մի պաշտօնեայ երիտ, հռովմայեցիների մէջ յանձնուած էին լինում հասարակական շինքերը, փողոցները, ճանապարհ ները և այլն։ Ե. Թ.

դիւրութեամբ կարելի է բաւարարացնել։ Լաւ, արդէ մտնում է. ես երեսում եմ բաղնիքները, իսկ դուք»։

«Քէսթըր *) մօտ—պետական պրագմատք. ինուց Իսիան տառարը։ Vale»։

«Ի՞նչ մի ցուցամոլ, չատախօս, անբարոյական մարդ է նդել», մրմնջում էր Կլոդիուս՝ կամաց-կամաց թալկելով։ Նա մտածում է, որ իւր ընթրիքներով և իւր մատանիներով կարող է մեզ մոռացնել տալ, թէ ինքը մի ազատագրուած գերու որդի է. և մենք էլ կմոռանանք՝ երբ նրան պատուենք՝ նրա դրամները չանելով խաղի մէջ. այս հարուստ պլեբէյանները մի հանճար են չուալ ազնուականներու համար»։

Աւարէս մենախօսելով, Կլոդիուս հասաւ Վիա Փոմիցիանա, որ խոնուած էր անցորդներով և կառքերով և ցոյց էր տալիս կեանքի և չարժման բոլոր այն ուրախ և հաճոյ յորդութիւնը, որ մենք սովոր ենք նկատելի վազոցներում։

Կառքերը արագ անցնելիս՝ մի դուռ-թ ձայն էին հանում իրենց դանդակներով, և Կլոդիուսը ժպտերով կամ գլխի չարժումով յայտնում էր իւր մտերիմ ծանօթութիւնը այնպիսի կառքերի հետ, որոնք զարգարուած էին ամէնից աւելի դեղեցիկ կամ ֆանտաստիկ կերպով. և իրօք ոչ մի թատերավարժիկ աւելի լաւ ճանաչուած չէր Պոմպէյի մէջ։

«Այդ դուք էք, Կլոդիուս, և ինչպէս քնեցիք ձեր լաչուզ բախտից լետոյ», գոչից հանկարծ և հրաժչտական ձայնով մի երիտասարդ, որ նստած էր մի վերին ա-

*) Քէստորը հռովմայեցիների կառավարութեան դատաստանի պաշտօնեան էր. Ե. Թ.

ախճանի վայելուչ կառքի մեջ։ Կառքի բրոնզեայ մակերևույթի վրայ գեղարուեստական ոճերիգով քանդակուած էին Ողիմպիական խաղերը, յունական զեւ ևս աքանչելի ձեւացած արուեստով. կառքին լծուած երկու ձիերը պարթեւական հազուագիւտ ցեղից էին. նոցա նրբակազմ անդամները կարծես արհամարհում էին հողը և քայլում էին օդի մեջ. բայց և այնպէս երբ ամենաթեթեւ մի նշան արուում էր կառապանի կողմից, որ կանգնած էր կառքի երիտասարդ տիրոջ ետևին, նոքա կանդնում էին անշարժ, կարծես յանկարծ քարացած լինէին, ունկնդրելով իւրեանք ունեցողի նման, ինչպէս Պրաքսիտելի չնչաւոր հրաշալիքներից մէկը։ Կառքի տէրը ինքն էլ ունէր այն բարակիկ և գեղեցիկ կազմուածքը, որով նշանաւոր էին Աթէնքի քանդակագործները։ Նրա թեթեւ, բայց խիտ գանգուրները ետևից էին ածուած. նրա երեսն կատարեալ ներդաշնակութիւնը ցոյց էին տալիս նրա յունական ծագումը։ Նա չէր հասած տակաւին այն հասակին, որ կոչուում է մարդկանց կողմից, որոնք յատկութիւն ունէին մոռալ ուրիշների տկարութիւնները, և այն ճարմանդները, որոնցով նա կոճակուած էր՝ չպղպզում էին մարմնին. նա ձգած էր իւր վզին մի ոսկեայ շղթայ, որ պարանով նրա կուրծքի վերայ՝ սառնում էր մի օձի պէս ձեւը. այդ օձի բերանից կախուած էր մի մեծ մատանի, ճարպաւոր և սքանչելի բանուածքով։ Պարեզօտի թեւերը արձակ էին, և նոցա բերանը, ձեռքերի մօտ, ոսկեթել ծոպերով զարդարուած էր. մի գօտի, նոյն ծոպերի մեջ-

քից և արաբեակ նկարներով, սեղմում էր նրա մէջքը և դրպանի տեղ ծառայում էր պահելու նրա թաշկինակը և քսակը, տախտակը և լուչտաեարը։

«Իմ սիրելի Գլոկուս» ասաց Կլոպիտս. «ես ուրախ եմ տեսնելով, որ ձեր կրուանները այդքան չնչին ազդեցութիւն են արած ձեր ձեւերի վերայ։ Կարծես դուք Ապոլլոնի ներչնչման տակ էք, և ձեր երեսը երջանկութիւնից փառքի նման վայլում է. մեկ ուրիշը կը կարծէր թէ չահագը դուք էք եղած և կորցնողը ես»։

«Ես ինչ կայ մրթմրթալ այդ մեռածի լիմար կառներըը չահելու կամ կորցնելու մէջ, որ կարողանայ փոխել մեր տրամադրութիւնը։ Վէնուսը վկայ, քանի որ երիտասարդ ենք մենք՝ կարող ենք մեր առաջ պիտակները ծածկել պտակներով, մինչդեռ կիմաստը հնչում է մեր անցած տարիներին, մինչդեռ Լիլիալի կամ Պլօէլի ժպիտը վայրաստակում է մեր երակների վրայ, որոնց մէջ արիւնն այնքան արագ է վազում։ Այո, քանի որ այդ է իրերի դրութիւնը՝ մենք կհրճուենք արեւոտ օդի մէջ, և ճաշատ ժամանակին մենք մեր գանձապահը կլինենք։ Դուք գիտէք արդէն, որ այս գիշեր ինձ հետ պիտի ընթրէք»։

Ո՞վ արդեօք կարող է մոռանալ Գլոկուսի հրաւէրը։

«Բայց ինչ ճանապարհով էք երթում հիմա»։

«Ես ուզում էի բաղնիքները երթալ. բայց դեռ մեկ ժամ կայ մինչև սովորական ժամանակը»։

«Լաւ, սիրելիս, ես իմ կառքը կտամ կուզարկեմ և կընակեցանամ քեզ։ Ապոլոս Ֆիլիաս», ասաց նա, չգիտելով այն ձիաւոր, որ առաջից մօտիկ էր նրան, «գտ մի ազատ օր կտեսնեմս»։ Ձին մի մեղմիկ խրխնջիւն արձակելով

և իր ականջները վեպի չեմ թնդելով զուարճախրատրանք պատասխանեց այդ թղթաքաղարան թեանն.

«Գնդեցիկ չէ, Կլոդիուս»։

«Աբժանի է Ֆելտաին և կամ Գրկուսին», պատասխանեց ախտական պարագիաը»։

Գլուխ Ը.

Կայր ծաղկավառաս աղջիկը և մօգալի գեղեցկութիւնը.—Անհետացու խոստովանքը։—Ընթերցողի ծանօթանալը Եպիտացի Աբրակի հետ։

Հազարամիկ նեթի վրայ գրուց տալով՝ երկու երիտասարդները չէջատուում էին փողոցների մէջ. նոքա այժմ հասան քաղաքի այն մասին, որ լեցուած էր առևտրի զարդարուն խանութներով. խանութների ներքը վառվռում էր փրկոնների աչքի պարկուղ բայց և այնպէս ներդաշնակ գոյներով, անկեռակալելի կերպով պեպեռացած փանտագիայի և նկարների մէջ։ Պապղուն չատրտանները, որոնք առնն մի հեռանկարի խորքում վեր էին ցայտեցնում իրենց գովացուցիչ գոյը ամառնային օդի մէջ. անցորդները, կամ ասելի լաւ ասած, չէջամոգները ամբոխը, ձեռ մասամբ հագած ալերիական զգեստներ. այն ոտքա խոտմերը, որոնք հատաքուած էին ասելի հրապուրիչ խանութների առջև. գերիները, որոնք աճապարում էին աշ ու ձախ, կրելով իրենց գլուխների վերայ ըրանգեայ գոյներ ամենաչնարհալի ձևերով. գեղացի աղջիկները, որոնք միմեանցից գիչ հետու կրում էին իրենց կոզիկները՝ լի պատրաստներով և ծաղիկներով, որ ասելի հրապուրիչ էին նախնի խանութների համար քան նոցա յաջորդները (որոնց համար

կարծես խակապէս մի ախտ կայ քնած ամէն մի մանուշակի և վարդի մէջ, «latet anguis in herba» *). այն բազմաթիւ յաճախատեղիները, որոնք այն ժամանակուայ պարտադ մարդկանց համար կատարում էին նոյն գերը՝ ինչ որ սրճարանները և կլուբները կատարում են այսօր. այն խանութները, ուր մարմարեայ դահակների վրայ չարուած էին գինու և իւղի անօթներ և որոնց չեմքի առջև դրուած էին նստարաններ արևից պաշտպանուած ծիրանի հովանիներով,— հրապուրիչ վայրեր, որոնք յորդածին հրապուրում էին հանդստանալու և ծոյլին թմբելու. այս բոլորը կազմում էին վառվռուն և կենդանի պանորամեան մի տեսարան, որ կարող էր Գրկուսի աթենական ոգու առջև ներկել դարձնել իւր զգայնութիւնը վեպի ուրախ կեանքը։

«Այլևս մի խօսիր ինձ հետ Հռոմի մասին», ասաց նա Կլոդիուսին։ «Զուարճութիւնը չափազանց չքով և չափազանց վիթխարի է այդ հսկայական օրանների մէջ. նոյնիսկ արքունիքի չրջապատի մէջ, նոյնիսկ Ներոնի ոսկեայ տան մէջ, նոյնիսկ Տիտոսի պալատի դեռ նոր ոտոտղ վառքերի մէջ, չքեղութեան մի դանդաղկոտութիւն կայ. մարդու աչքը յոգնում է, և ոգին մի խանջութիւն է զգում. բացի դրանից, իմ Կլոդիուս, մենք անդատարար ենք դառնում երբ բազդատում ենք ուրիշների անապին հարստութիւնը և վեհութիւնը մեր միջակ դրութեան հետ։ Բայց այսօր մենք դիտութեամբ ենք մտնում զուարճութիւնների մէջ, և մենք ունինք վեհութեան փոյթը՝ առանց չքեղութեան յոգնեցուցիչ ծանրութեան»։

---

*) Տես բացատրութիւն Ա.

«Ուրեմն այդ զգացմունքից դրդուած դուք Պոմպէյը ընտրեցիք որպէս ձեր ամարանոցը»։

«Ախ, այդ զգացմունքից դրդուած ես գերադասում եմ ոչոտեղը Բայիէլին. ես խօսք չունեմ վերջինի հրապոյրների մասին, բայց ես չեմ սիրում այն խմաւոակիներին, որոնք հաւաքւում են այնտեղ և որոնք կարծես կշռում են իրենց զուարճութիւնները իրենց դրախտներով»։

«Եւ դուք սիրում էք գիտուններին. իսկ գալով բանաստեղծութեան՝ ձեր սուրը ասպետական ճշտութեամբ լի է Նաբիլլեաւ և Հոմերոսով, դիւցազներգութեամբ և դրամայով»։

«Ախ, բայց այդ հռովմայեցիները, որոնք կապկի պէս աշխատում են նմանուել իմ աթենացի նախահայրերին՝ ասպետիկի ծանրութեամբ են անում ամեն բան։ Նոյնիսկ որսի ժամանակ, նոքա Պլատոն են քարշ տալիս իրենց վառից գերիների ձեռքով. և երբ վարագը կտրւում է անմիջապէս նոքա դուրս են քաշում իրենց գրքերը և իրենց պապիրուսները, որպէսզի ժամանակ չկորցնեն։ Երբ կաքաւչուհիները լողում են նոցա առջև պարզական բոլոր գրաւիչ ձևերով որևիցէ մի ախմար գերի, ասպատժալին երեսով, նոցա հաճար կարդում է Կիկերոնի De Officis-ից մի կտոր։ Անհմուտ դէզդործները, գուարճութիւնը և ուսումնասիրութիւնը այնպիսի սարքեր չեն, որոնց կարելի լինի այդպէս խառնել միմեանց. նրանց պէտք է դատ դատ վայելել։ Հռովմայեցիք երեսուն էլ կորցնում են այն անտեղի ու չափազանց ցուցամոլութեամբ, որ ունին դէպի գարգացումը, և ապացուցանում են, որ նոքա չունին այն հոգին, որ թարգմանում գնահատել ոչ այս և ոչ այն։ Ա՛հ, իմ Կատոն, քո երկրացիք ինչքան քիչ գեաեն ինչ է նշանակում մի Պէրիկլէսի ճշմարիտ հասկութիւնը կամ մի Ասպասիայի ճշմարիտ հմայքը։ Անցեալ օրը ես մի այցելութիւն արեցի Պլինիոսին. նա նստած էր իւր ամարանոցում և գրում էր, մինչդեռ մի ստրուհի գերի նուագում էր սրնգի վրայ։ Նրա եղբօրորդին, (ա՛հ, գրողը տանի այդպիսի իմաստակ փիլիսոփաներին) կարդում էր Թուկիդիդէսի մի ժանռաթուի նկարագրութիւնը և չարժում էր իւր ինքնահաւան վսեմութեան չափը պահելով, մինչդեռ նրա չրթունքները կրկնում էին բոլոր զայրոյթ ծանրաբանութիւնները այդ սարսափելի նկարագրութեան։ Տեսար չես ձագը անհետեւի ուշիմ չէր տեսնում մինուոյն ժամանակ մի սիրուհ տալ և մի ժանռաթուի նկարագրութիւնը տալու մէջ»։

«Ինչո՞ւ գրեթէ միևնոյն բաներն են այդ երկուսը», ասաց Կլոդիուս։

«Եւ այդպէս էլ տասի նրան, ուզելով քօղարկած կերպով նրան հասկացնել իւր խմաւոակութիւնը. բայց իմ պատասխան աչքերը չտնդիմանական ձևով չաւելց իմ երեսին, առանց հասկանալու իմ կատակը, և պատասխանեց, որ երաժշտութիւնը անդրադ ականջին միայն հաճոյք է պատճառում, մինչդեռ գովքը (մեր ինչեր ժամանակի, նկարագրութիւնը) տալիս է սրտին մի վերամբարձում։ «Ա՛հ», ասում է պարարտ օրիորդը, «իմ ազատ մի կատարեալ աթենացի է. նա միշտ զուգում է պլատոնին և տանելին։ Ո՛հ, Մինեռվա, ես ինչպէս ծիծաղում էի իմ սրտում։ Մինչդեռ այնտեղ էի՝ եկան ասելու իմ սպիտակ ոտքերին, որ նրա սիրելի ազատ-պրուած գերին մեռաւ չկարծիս։ «Անգո՛ւթ մեռ», գոչեց նա, «բերէք ինձ իմ Հօրասը։ Ի՛նչպէս լաւ միտքեր ասում

է մեզ այդ քաղցրիկ բանաստեղծը այսպիսի ապարդարաստիճանների ժամանակ»։ Ա՛հ, միթե կարող են սիրել այս մարդիկը, իմ Կլոդիա։ Հազիւ թէ կարող լինին իրենց զգայարանքներովը անգամ։ Ո՛չ հազուագիւտ բան է, որ մի հոգեմտելի սիրտ ունենայ։ Նա լոկ տանճաձի մեքենան է. նրան պահանջում են ոսկորները և միսը»։

Թէև Կլոդիա, իւր սրտի խորքում մի քիչ վիրաւորուած էր զգում, լսելով այս նկատողութիւնները իւր հարեմակիցների վերաբերութեան, բայց և այնպէս նա այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ համակրում է իւր բարեկամին. այս կեղծաւորութեան պատճառներից մէկն այն էր, որ նա բնականաբար մի պարզամիտ էր, և միւսն էլ այն, որ այդ ժամանակ մօտ էր գտած հոգեմտելի զեղխ երիտասարդների մէջ արհամարհանքով վերաբերուել դէպի այն ծագումը, որն իսկական պատճառն էր նոցա զուարճութեան. մօտ էր գտած չարներին օրինակել, ամօթն ծիծաղել ընդօրինակութեան ձախողութեան վրայ։

Այսպէս խօսակցելով նոքա կանգ առան մի ամբոխի առջև, որ հաւաքուած էր մի բաց անդամ, ուրկից քաժանուում էին երեք վոզոյներ. և ճիշտ այնտեղ, ուր մի կոկիկ և շնորհագեղ տառերի սիմետարդ արձանները առուեր էին ձգած՝ կանգնած էր մի մանկամարդ ազջիկ. նրա աջ թևին ձգուած էր մի զամբիւղ լի ծաղիկներով, և ձախ ձեռքին կար երաժշտական երեքլարեակ մի նուագարան, որի ցած և վախուկ ձօների հետ նա պեղդեղում էր մի անուշ վայրկեան և կիսաարբեցուսական եղանակ։ Ամէն անգամ կանգ առնելուց իւր երգեցողութեան մէջ, նա չնորհալի ձևերով պատչնում էր իւր կոզովը և դաստրակաչջիկներին հրաւիրում էր պնդելու. և

այդ ձևով բազմաթիւ սեռաերգներ սեզում էին նրա կոզովի մէջ, ամենք որպէս կոմպլիմենտ նրա գեղեցիկ երաժշտութեան և ամենք էլ մարգարիտարար—որովհետև երգչուհին կոյր էր։

«Դա իմ խեղճ թեոսալացին է», ասաց Կլոդիա, կանգ առնելով։ «Ես քանի վերադարձել եմ Պոմպէյ՝ նրան չեմ տեսած։ Սուտ, նրա ձայնը անույշ է. եկ ականջ դնենք»։

Կոյր ծաղկավաճառ աղջկայ երգը։

II.

Գընեցէք, խնդրեմ, իմ ծաղիկները,
Առէք ինձանից.
Պանդուխտ է այստեղ խեղճ կոյր աղջիկը,
Հետս իր սանից։
Եթէ աչխարհը այնչափ սիրուն է,
Որչափ լրսում եմ
Ապա ծաղկունքը են իր մանկունքը.
Գընեցէք խընդրեմ։
Նոքա կըլսում են իրենց չըքնաղ մօր
Ժըպիտը չըքնաղ,
Դեռ նոր են եկած իրենց մօր զոգից,
Այն զոգից խաղաղ.
Դեռ մէկ ժամ առաջ են զըտալ ապրանց
Երբ նիրհած էին,
Եւ նոցա մայրը օթօր էր երթում
Նոցա ականջին.
Չի նոցա մայրը երգ է նըւագում
Չևիխուխ լարով.

Օդի մըրմունջը է նորա չունչը
Անուշիկ և զով։

Նոցա չըրխմունքից գետ չէ յառաքած
Այդ մեր համբույրը.
Նոցա այտերից գետ թարմ փըչում է
Արցունքի բույրը.
Եւ նա լալիս է, այո լալիս է
Մայրը կաթողին,
Որ իւր արցունքով գեղեցկութիւն տայ
Իւր զաւակներին։
Նա լաց է լինում, լացի ապրիւրն է
Մայրական իւր սէր.
Նա լաց է լինում, ցօղի չիմերը
Են իր կաթիլները։

Բ.

Դուք ունիք աչխարհ, աչխարհը լուսոյ
Եւ ուրախութեան.
Աչխարհ, ուր սէրը, իւր սրրածի մէջ,
Գըտնում է հըրճուանք,
Քայց կայ աղջկայ խաւար աընակը
Տունն է մըրիմեան,
Ուր բնակիչները ձայներ են զառարկ,
Նկարներ անկեանք։
Ինչպէս ողիներ յոմի աչխարհի՝
Նոյնպէս իմ հողին
Ծըխուր կանդնած է գառը յաւերի
Հոսանքի ափին։

Ա՛խ, լըսում եմ, առում անցնում են
Այդ գառարկ ոգիք,
Ա՛խ, ըզգում եմ նոցա չունչերի
Սօսափիւն մեղմիկ։
Օ՛հ, ծարաւում եմ անունելու նոցա
Սիրեցեալ ձևեր,
Եւ գէպ առնն կամ ես տարածում եմ
Իմ սիրոյ թևեր։
Իսկ ինչ բանում եմ՝ մի ձայն է անձև,
Մի ձայն օդալին,
Ջի կենդանիքը, ինչպէս ոգիքը,
Անառիս են կոյրին։
Եկէք գընեցէք, եկէք գընեցէք
Իմ ծաղիկներըս.
Լսեցէք ինչպէս հնձծում առում են
Անուչիկներըս.—
«Ա՛խ կոյրի չընչից վարդը թախծալից
Փակում է աերև
Վարդը քընքուչ է, վարդ անույշ է,
Իր աչխարհն՝ արև։
Մութի աղջկան առում են վարդեր,
Խորչում նորանից.
Ո՛հ մեզ գառեցէք, մեզ ազատեցէք
Կոյր աղջկանից։
Մեծ է մեր սէրը դէպ ձեր աչքերը
Որով առնում էք.
Մեր գըւարթ գեղին գիշեր մըթագին
Արժան չէ կրկէք։
Ձեր աչքերի մէջը, կան լուսոյ անչէջ
Ջըքնաղ չողիներ.

Եկէք ըլնենք, եկէք ըլնենք
Սիրան ծաղիկներ»։

«Ազգ մանչակաների վճռնջը լնձ պէտք է ասա, քաղցրիկ Նիղիա», ասաց Գլոկուս, ճիղրելով ամբոխը և ձգելով նրա կողովի մէջ սի բուռ փոքրիկ գրաճներ. «քո ձայնը աւելի դիպիչ է քան երբէք»։

Կար աղջիկը առաջ գաւակից՝ լսելով աթենացու ձայնը. լեռալ նոյնպէս յանկարծ կանգ առաւ, մինչդեռ նրա արիւնը բուռն հոսանքով զարկեց նրա վզին, թշերին և քունքերին։

«Ախպէս ուրեմն դուք վերադարձել էք», ասաց նա ցած ձայնով. և լեռալ ինքնիրան և կիսաձայն կրկնեց. «Գլոկուս վերադարձել է»։

«Այո, զաւակս, մի քանի օր, աւելի չէ որ ես եկած եմ Պամպէլ։ Իմ պարտեզս կարօտ է քո հոգածութեան ինչպէս առաջ. յոյս ունիմ որ վաղը կկաս նրան մի այցելութիւն տալու։ Եւ ուրիշ ոչ ոքի ձեռքերը պահպանէ չպիտի հիւանդ իմ առնս մէջ՝ եթէ ոչ գեղեցիկ Նիղիալինը։

Նիղիան ուրախութենից ժպտաց, բայց չպատասխանեց. և Գլոկուսը, ուրախ և անհոգ, կամ գարձաւ ամբոխի միջից։

«Ուրեմն այս աղջիկը քո կիներանոցից մէկն է» ասաց Կլոդիուս։

«Այո. գեղեցիկ չէ երդում։ Ինձ շատ հետաքրքրում է այդ խեղճ գերուհին։ Բացի դրանից, նա առուածների լեռան երկրից է—Ոլիմպոսը խոժոռած է իր դէմքը նրա օրօրոցի վերայ—նա թեսսալացի է»։

«Վհուկների երկրից»։

«Այո, բայց ըստ իս սանն մի կին մի վհուկ է, և Պամպէլի մէջ, Վենուսը վկայ, նոյն իսկ օդը կարծես սիրահար խմած լինի, այնքան գեղեցիկ են երևում իմ աչքիս անհօրուք երեսները»։

Եւ ահա Պամպէլի սահնագեղեցիկներից մէկը, ծեր Դիամիդի աղջիկը, Տարուտա Ջուլիան, ասաց Կլոդիուսը, երբ մի օրիորդ, երևոյթ փոփարկուած, իր երկու գերատիների հետ երթում էր դէպի բազնիքները։

«Ջինուղդ Ջուլիա, մենք ողջունում ենք քեզ», ասաց Կլոդիուս։

Ջուլիան բարձրացրեց իր քողի ծալրը, այնպէս որ պշրագական ձևով ցոյց տուաւ մի հռովմէական կանդակն կիսագէմ, մի լի ան և պայծառ աչք, և մի քնաշ, որի ձիմագոյն մորթի վերայ քուսած էր մի աւելի գեղեցիկ և վառուկ վարդագոյն նեխկ։

«Եւ Գլոկուսը վերադարձել է», ասաց նա, ձգելով մի խորհրդաւոր ակնարկ դէպի աթենացին։ «Արդեօք նա մոռացել է», աւելացրեց օրիորդը մի կիսաժպտուն ձայնով, «իր անցեալ սարուսի բարեկամներին»։

«Գեղանի Ջուլիա, նոյն-իսկ Լեթէն երբ անեղուխտուած է աշխարհի մէկ մասում՝ նորից երևում է մի սրիչում։ Արամազդը մեզ թոյլ չէ տալիս մոռանալ իրեն աւելի քան մի վայրկեան. բայց Վենուսը, աւելի խաղաղասէր, չէ պիղատում նորից մինչև անդամ մէկ բոպէի մոռացութիւնը»։

«Գլոկուսին երբէք չեն պակասում գեղեցիկ խօսքերը»։

«Եւ ամէն կարող են պակասել՝ երբ նոցա առարկան այդքան գեղեցիկ է»։

«Մենք չատով կհանդիպինք ձեզ իմ հօր ամարանոցում», ասաց Ջուլիան դառնալով Կլոդիուսին։

Սպիտակ քարով պիտի նշան անենք այն օրը՝ երբ այցելենք ձեզ», պատասխանեց խաղամոլը։

Ջուլիան յած ձգեց իւր գլուխը, բայց կամաց, այնպէս որ նրա վերջին նայուածքը ուղղուած էր աթենացուն. այդ նայուածքը լի էր կնոջ երկչոտութեամբ և իսկական յանդգնութեամբ, և դա յայտնում էր բազդրութիւն և յանդիմանութիւն։

Բարեկամները անցան։

«Ջուլիան անասելակոյս գեղեցիկ է», ասաց Գլոկուսը։

«Եւ անցեալ տարի դուք կխոստովանեիք այդ բանը աւելի ջերմ չէիր տալ»։

»Ճշմարիտ է. առաջին նայուածքում իմ աչքերը չլացան, և ես գոնարի անդ դրի՝ ինչ որ մի արուեստական նմանութիւն էր։

«Ո՛չ» պատասխանեց Կլոդիուս, «բոլոր կանանց սիրտը միևնոյն է։ Երանի այն մարդուն, որ ամուսնանում է մի գեղեցիկ երեսի և մի մեծ օժիտի հետ։ Ալևս ինչ ուրիշ բան կարող է ցանկանալ»։

Գլոկուսը հառաչեց։

Նոքա այժմ գտնւում էին մի վայրում, ուր ամբողջ աւելի սակաւաթիւ էր. այդ վայրի ծայրում նոցա առաջ բացւում էր այն լայն և ամենագեղեցիկ ծովը, որ կարծես կորցրած է իւր սահմանները։ Այդ դիւթիչ ծովեզերքի մօտ, այնքա՜ն վաճառք են այն հովերը որ ճախրում են նրա կապոյտ չուրջը, այնքա՜ն փայլուն և պերճ են այն գոյները, որ նա տալիս է վարդագոյն ամպերից, այնքա՜ն անույշ են այն բոյրերը, որոնց գեղիւռը բերում է ցամաքից և ալեաց ան-

դունդների երեսին։ Ափսոսի մի ծովից հեռանալի է որ Ափրոդիտէն գուցա նկած լինի՝ աշխարհի իշխանութիւնը ձեռք առնելու։

«Գեռ բաղնիքների ժամանակը չէ հասած», ասաց յոյնը, որ սարսափն էր ամեն այն բանի՝ որ բանաստեղծութեան սպին էր կրում իր մէջ. «եկ հեռանանք այս բազմամարդ քաղաքից և նայենք ծովին, քանի որ միջօրէն ծիծաղում է նրա կոհակների երեսին»։

«Ամենայն հաճութեամբ», ասաց Կլոդիուս, «և ծովափորչը քաղաքի ամենագեղեցիկ մասն է»։

Պոմպէյը իւր դարի քաղաքակրթութեան մանրանկարն էր։ Նրա օրերի նեղ չրջապատի մէջ ամփոփուած էին բոլոր այն բարիքները, որ զեղխութիւնը ընծայում է զօրութեան։ Նրա փոքրիկ բայց չքնաղ խանութների մէջ, նրա մանրիկ պալատների, նրա բաղնիքների, նրա ֆօրումի (հրապարակի), նրա կրկեսի—նրա ժողովրդի ժրաջանութեան բայց փառաժութեան, զարգացման բայց մոլութեան մէջ կարելի էր տեսնել ամբողջ կայսրութեան մի մանրանկարը։ Դա մի խաղալիք էր, հեռադիտակով նոսոխներով լեցուած մի տնտակ, որի մէջ կարծես առասածները հաճել էին ներկայացնել աշխարհի մեծ պետութիւնները, և լեռել թաքցնել ժամանակի աչքից, որպէս զի ի զարմացում ապագայ սերունդների, նոքա հասատատեն այն առաջին ճշմարտութիւնը, որ ոչ մի նոր բան չկայ արեւի ներքեւ։

Համակրուած բիւրեղանման ծոցի մէջ՝ կանգնած էին վաճառականական նաւեր, և այն սակէզօծ գոհանալերը, որ հարուստ քաղաքացիները պահում էին իրենց զուարճութեան համար։ Զինուորների նաւակները լողում էին աջ և ձախ, և հեռուում տեսնում էին նաւա-

առաջին բարձր կայմերը, որ գանուում էր Պլինիոսի հրահանգարարության ներքոյ։ Ծովափի վերայ նստած էր մի սիկիլիացի, որ բուռն չարժումներով և դիւթական ձեռքով մի խումբ ձկնորսների և պիղպացիների առջև պատմում էր նաւաբեկուած նաւազների և բարեկամ ղլիւինների հէքեաթը, ճիշտ ինչպէս այսօր Պամպէյի մերձակայքում, դու կարող ես լսել Նապոլիի բլրակի վրայ։

Դարձ տանելով իւր ընկերոջը աւերակի միջից՝ յոյնը թեքուեցաւ դէպի ծովեզերքի մի լուռ կողմը, այնտեղ երկու բարեկամները նստած մի փոքրիկ ժայռի վերայ, որ ընկած էր հարթ խիճերի մէջ, ծծում էին զով և հնչուն ջուրը, մինչդեռ նա պարելով ջրերի երեսին՝ չափ էր պահում ծովի հրաժշտութեան հետ իր ոտներուի աքերով։ Մի ինչ-որ բան կար տեսարանի մէջ, որ նորանց հրաւիրում էր դէպի լռութիւն և երազային մտազմայլութիւն։ Կլոդիուս իր ձեռքով պաշարապանելով իւր աչքերը արեգ արեի ճառագայթներից՝ հաչում էր իւր նախորդ չարաբաստ չափերը. և յոյնը, վերնելով նրա ձեռքի վրայ, և չքաշուելով արեգակից (որ իւր ազգի պահապան աստուածն էր) որի բանաստեղծական, և սիրոյ, և գնդութեան թափանցիկ լուսով լցուած էին նրա երակները՝ նայում էր այդ լոյն աստուածութեան վրայ, և ով գիտէ, նախանձում էր քամուածին մի հոսանքին, որ թեքում էր իւր թեւերը դէպի Յունաստանի ափերը։

«Առա՛ ինձ, Կլոդիուս», ասաց նա վերջապէս, «դու երբեմն սիրասարուած եղել ես»։

«Ա՛խ, յաճախ»։

«Նա որ յաճախ սիրած է»՝ պատասխանեց Գլոկուս,

«երբէք չէ սիրած։ Մէկ հատ սիրելն էլ ոչ կայ, թէև նրա կնոջ նմանութիւնները չատ են»։

«Բայց և այնպէս այդ նմանութիւնները վատ փոքրիկ աստուածներ չեն», պատասխանեց Կլոդիուս։

«Ես համաձայն եմ ձեզ հետ», պատասխանեց յոյնը։ «Սիրոյ աստուծին անդամ ես պաշտում եմ, բայց իրան էլ աւելի եմ պաշտում»։

«Ներեցեք դու յոյնդ և խակասէս սիրահարուած ես։ Ասո՞ւմ դու այն դիտցուն, որ բանաստեղծները նկարագրում են—մի դիտցում, որ մեզ մոռացնել է տալիս մեր ընթրիքները, մեզ երջանկացնում է դարձնում դէպի թատրոնը և եղերգեներ է սրել ատլիս։ Ես երբէք չէի կարող մտածել այդ բաները։ Դու չատ լաւ ես կնդծում»։

«Ես դեռ այնքան հետաքրքիր չեմ դնացած իմ սիրոյ մէջ», պատասխանեց Գլոկուս ժպտալով. «դատ մնում է Տիբուլլուսի հետ կարող եմ ասել—

«Ես, արեն իջնում է ոչխրը, դէպի ոտ էլ դնաց՝ Նա ապահով է և հոգիական»։

«Խակասէս սիրահարուած չեմ, բայց կարող էի լինել՝ եթէ աւելի պատեհութիւն ունենայի տեսնելու սիրելի աստուհին։ Երեսն ուզում է վառել ջանք. բայց թռանտաները թոյլ չեն տալիս նրան»։

«Մտածես դու չգիտեմ ով է սիրելի աստուհին—Վիտելիի աղջիկը չէ։ Նա պաշտում է ձեզ և չէ ուզում թաքցնել այդ բանը. և Հերկուլէսը վկայ, ես նորից և նորից կասեմ, որ նա թէ գեղեցիկ է և թէ հարուստ։ Նա իր առնուտուր դատն չեմքը ոսկի կարող է բռնել»։

»Ոչ, ես վատիտ չունեմ ինձ վառճառելու։ Վիտելիի աղջիկը սիրուն է, իսօք չունեմ. և կար ժամանակ, երբ, եթէ նա չլինէր մի պատատարուած տորուկի թոռը՝ կա-

րելի էր. . . . բայց ոչ. Նա իր բոլոր գեղեցկութիւնը կրում է իր երեսի վրայ. նրա ձևերը օրիորդի վայել ձևեր չեն, և նրա միտքը բացի զուարճութիւնան մշակութիւնից ուրիշ մշակութիւն չէ ստացած»։

«Դու երախտամոռ ես։ Ասա ինձ ուրեմն, ով է այդ բախտաւոր կոյսը»։

«Հիմա կպատմեմ, իմ Կլոդիուս։ Մի քանի ամիս առաջ ես կենում էի Նապոլիում, մի քաղաք, որ կառարելագոյն իմ սրտի հատանածն է, որովհետև դա դեռ կրում է իր լատինական ծագումի ձևերը և դրոշմը, և նայելով նրա անուշարույր օդին և գեղեցիկ ծովեզերքին՝ նա դեռ արժանի է Պարթենոպ անուանն։ Մի օր ես մտայ Միներվայի տաճարը իմ աղօթքներս մատուցանելու, ոչ այնքան իմ համար, որքան այն քաղաքի, որի վրայ Պալլասը այլ ևս չէ ժպտում։ Տաճարը դատարկ էր։ Ամէնքի ուշադրութիւնները արագ և հալեցուցիչ կերպով խրամատեցան իմ դիմաց. երևակայելով, որ ես միայնակ եմ տաճարի մէջ, և մտաղրաղած պաշտամանս ջերմեռանդութեամբ՝ իմ աղօթքս սրտից հանկց պէսպէս չրմունքներս, և ես սկսեցի լալ աղօթած ժամանակ։ Իմ պաշտամանս ընթացքում ես ուշքի եկայ, լսելով մի հառաչի ձայն. յանկարծ չես նայեցի, և ձիչս իմ եաև կանգնած էր մի կին։ Նա էլ իր փողը բարձրացրած էր աղօթելու. և երբ մեր աչքերը հանդիպեցին՝ կարծես երկնային մի ճառագայթ պացաւ իմ հոգու խորքը այդ ակ և ժպտաւէն կամարներից։ Երբեք չեմ անսած մի մահկանացուի երես, որ ունէի կատարեալ և ունէի ընտիր ձևով ձուլուած լինէր. մի ինչ-որ մելամաղձոտութիւն նրա արտայայտութեանը տուել էր մի վսեմութիւն և վերամբարձում. այն անսանելի բանը, որ բղխում է հոգուց և

որը մեր քանդակագործները տուած են Պսիքէի կերպարանքին, սիրել էր նրա դեղեցկութեան վրայ մի ինչ-որ աստուածային և աղնիւ բան. արտասուքները ցած էին գլորուում նրա աչքերից։ Ես անմիջապէս գուշակեցի, որ նա էլ աթենացի աղգատոհմից պիտի լինի, և որ իմ արտասուած աղօթքի մէջ, Ախիլլէսի համար, նրա սիրտը պէտք է համապատասխանած լինի իմին։ Ես խօսեցի նրա հետ, թէև դողդոջուն ձայնով—«Դու էլ աթենացի ես», ասացի ես, «ով չքնաղ կոյս»։ Նա իմ ձայնից չիմացաւ և երեսի կէսը ծածկեց իր քողով։—«Իմ նախահայրերի աճիւնը», ասաց նա, «հանգչում է Իլիսոսի ջրերի մօտ. իմ ծնունդս սեղի է ունեցած Նէապոլիսում. բայց իմ սիրտս, ինչպէս նաև իմ նախնիքս աթենացի են»։ «Ուրեմն թոյլ տուր», ասացի ես, «որ մենք միասին կատարենք մեր ուխտերը». և երբ քահանան երեաց՝ մենք կանդնեցինք կողք կողքի և հետևեցինք քահանայի հանդիսաւոր աղօթքին. միասին մենք դրանք տուաւ ծնկերին, միասին մենք դրինք մեր ձիմինու պսակները սեղանի վրայ։ Նրա ընկերութեան մէջ ես զգում էի դրեթէ սրբազան փափկասրտութեան զգացմունքը։ Մենք օտարականներս, մի հեռաւոր անկեալ երկրից, կանգնած էինք միասին և միայնակ այն տաճարի մէջ, որ պատկանում էր մեր երկրի աստուածուհուն. սրտիօք բնական չէր, որ իմ սիրտը հեսար դէպի իմ հայրենակցուհիս, քանզի անտարակոյս իրաւունք ունէի այդ անուանով կոչելու նրան։ Ես այնպէս էի զգում, որ կարծես ասրելներից ի վեր ճանաչում էի նրան, և կարծես այդ պարզ արարողութիւնը, հրաշքով, պատճառ էր գալիք դնում ժամանակի համակրութիւնների և կապերի վրայ։ Մենք լուռ դուրս եկանք տաճարից. ես ուզում

էր նրանից հարցնել, թե ինչպես է բնակվում, և թագուհին խնդրել երթալու նրան ապնակումեան՝ երբ մեհեանի առնուածքների վրայ կանգնած մի երփառարդ, որի կերպարանքի մէջ տեսնում էր օրիորդի նմանութիւնը՝ բռնեց նրա ձեռքից։ Նա ինա զարմաւ և ինձ հետ բարեաւ սուաց։ Անխոր մեզ բաժանեց, և ոչ ևս նրան չտեսայ։ Երբ առն հասայ՝ ես առայել նամակներ, որոնք ստիպեցին ինձ անմիջապէս մեկնել դէպի Աթենք, որովհետև իմ ապրուստներդ սպառուում էին դուս բռնել իմ դէմ իմ ժառանգութեան մասին։ Երբ այդ գործը բարեբախտաբար վերջացաւ՝ ես վերադարձայ Նեապոլիս. ես ամբողջ քաղաքը սակնատիրայ արեցի հարցափորձով, բայց իմ կորուսած հայրենակցիս ոչ մի հետքը չը կարողացայ գտնել, և յուսալով, որ գուցէ ճանապարհի մէջ կարող եմ կորչնել այդ գեղեցիկ տեսիլքի ամէն ցնորութիւնը՝ ես ուշադրութեան դալ Վոտզկ և թագուհի գնալուս մասին մէջ։ Այս է բոլոր իմ պատմութիւնը. ես չեմ սիրում, բայց լինում եմ և լուում»։

Այն ինչ Կլոդիուսը ուզում էր պատասխանել մի մարդ հանդիսաւոր քայլերով մօտեցաւ նրանց. նրա սուի ձայնից նորա չեռ դողդղին, և երկուսն էլ անմիջապէս ճանաչեցին նորին։

Դա հասկ քառասուն տարեկան մի մարդ էր, բարձրահասակ, նիհար, բայց ջղային և ուժեղ կազմուածքով։ Նրա թուխ և բրոնզեայ մորթը յայտնում էր նրա արևելեան ծագումը. նրա կերպարանքը կրում էր իր վրայ յոնական գծեր (մանաւանդ կզակը, շրթունքները և ճակատը), բայց քթից որ մի քիչ լայնդ էր և աչքերն. և սակայնները, կոշտ և խստանի, արդէն դարձած այն մանր և դպրոցական բարքերից որ մի յունական կերպարանքի վրայ, նոյն իսկ հասուն տարիքի մէջ, պահպանում էին երիտասարդութեան զեղեցիկ գծագրութիւնը։ Նրա աչքերը փայլում էին ոչ—լեզեզուկ և անհաստատ յոյսով։ Մի խօր, մտախոհ, և կէս մելամաղձային խաղաղութիւն կարծես անթափանցելի կերպով հաստատուած էր նրա փառաւոր և հրամայական նայուածքի մէջ։ Նորա քայլուածքը և կեցուածքը մանաւանդ կերպով անյոդդողդելին և վեհ. նրա երկար զգեստների մէջ կային մի ինչ որ օտար երկրի ձեւ և լուրջ գոյները, որոնք աւելի ևս չեշտում էին նրա խազաղ կերպարանքի և չքնդ ձևի ապաւորող ազդեցութիւնը։ Երիտասարդներից ամեն մեկը բարևելով նորին մեքենայաբար մի չարժում կամ նշան արեց իր մտանեղով, բայց ամեն գգուշութիւն ի գործ գնելով որ նա չ'ունենայ այդ, որովհետև մարդիկ այնպես էին մտածում որ եգիպտացի Ապրակը օժտուած է չար աչքի զժբախտ յատկութեամբ։

«Ճեռարանը անպատճառ չուտ գեղեցիկ պէտք է եղած լինի», ասաց Ապրակ մի պազ բայց քաղաքավարի ժպիտով, «որ կարողացած լինի գուս քաշել ուրախ Կլոդիուսին, և ամեն մարդու հետացման առարկայ Գլոկուսին քաղաքի բազմամարդ հրապարակներից»։

«Մեծ գնութիւնը սովորաբար գուրկ հրապարից» հարցրեց յոյնը։

«Զուարճասէրների համար—այո»։

«Մի խիստ պատասխան, բայց ոչ չուտ խնամասիրից։ Զրուսամրութիւնը սիրում է հակապատկերներ. զուարճասիրութիւնից մենք սովորում ենք մենութիւնը վայելել և մենութիւնից զուարճասիրութիւնը»։

«Ափսոս են մտածում պարապող երիտասարդ փիլի-

ժոխանները», պատասխանեց եպիսկոպոսին. «նոքա յոդնութիւնը մոռանում են տեղ են դնում, և երևակայում են որ որովհետև նոքա յագեցել են ուրիշներից, նոքա հագեցել են մինուճար հաճոյքը։ Բայց բնութիւնը այդպիսի յոդնածին եղած կուրծքերի մէջ չէ կարող զարթնացնել մի այնպիսի ոգևորութիւն որ կարողանայ ծծել նրա կոյս չեռնարանից բոլոր նրա անսահման զեղեցկութիւնը. նա պահանջում է քեզանից, ոչ թէ քո կրքերիդ յոդնութիւնը, այլ ամբողջ այն ջերմ անկեղծութիւնը որից դու ազատուելիս ես վնասում բնութիւնը պաշտելով։ Երբ որ, ով երիտասարդ Աթէնացի, լուսինը ինքն իրան տեսնէ քնարների մէջ յայտնեց Էնդիմիոնին այդ երիտասարդն անց էր կացրած մի ամբողջ օր ոչ թէ մարդկանց տեղը յաճախատեղիների մէջ, այլ լուռ լեռների և որսորդների առանձնացած ձորերի մէջ»։

«Գեղեցիկ օրինակ», գոչեց Գլոկուս. «բայց անտառի կիրպով մէջ բերուած։ Յոդնութիւն, այդ բառը ծերութեան համար է չէնուած ոչ թէ երիտասարդութեան Գէթ ես մէկ րոպէ չեմ կշտում որ յագեցած լինեմ։

Նորից եպիսկոպոսին ժպտաց, բայց նրա ժպիտը ցաւալի էր և խորշակէր։ Նա չըպատասխանեց Գլոկուսի բուռն բացականչութեան, այլ քեզ լուռթիւնից լեռալ, ասաց մի փափուկ և մելամաղձոտ ձայնով։

«Վերջ՛ի վերջոյ, դու իրաւունք ունես վայելելու քո ժամը մինչդեռ դա ժպտում է քո համար. վարդը շուտով թառամում է և նրա բոյրը չուտուի մեզ համար, ով Գլոկուս, որ օտարական ենք այս երկրում և հեռու մեր հայրերի սահմաններից այլ ես ինչ է մնում, եթէ ոչ զուարճութիւն կամ ապաշխարանք—քեզ համար առաջինը, և ինձ համար կարելի է վերջինը»։

Յոյնի վայլուն աչքերը չռտուով լցուեցան արտասուքով։ «Ո՛հ մի խօսիր, Արբակ», գոչեց նա, «մի խօսիր մեր նախահայրերի մասին։ Թող մոռանանք թէ երբևիցէ եղած են աղատութիւններ՝ Հռոմի տուածներից տարբեր։ Եւ վատը—ո՛հ, դուր պիտի լինէր ազատել նորա ոգուն Մարաթոնի և Թերմոպիլէի դաշտերից»։

«Քո սիրտը լանդիմանում է քեզ՝ մինչդեռ դու խօսում ես, ասաց եպիսկոպոսին. և այս դիչեր քո դատաստանութիւնների մէջ դու ունչի ուշադրութիւն կ՛անես Լէօնտիոսին *), ապա Լախին։ Vale»։

Այս ասելով, նա հատաքեց իր պատմուճանը և կամաց կամաց հեռացաւ։

«Այժմ ունչի ազատ չունչ եմ առնում, ասաց Կլոդիուս։ Եթէ եպիսկոպոսներին օրինակին հետևենք, պէտք է մի կմախք ներկայացնենք մեր հանդէսների մէջ։ Իսկապէս այնպիսի մի եպիսկոպոս ներկայութիւնը, որպիսին է այն մեղմաբարբ ուրուականը, բաւական է թթուացնելու Ֆալերնիանի ամենալաւ խաղողը»։

«Տարօրինակ մարդ է», ասաց Գլոկուս մոռմոռ կերպով. «արդեօք էլ անտարբեր լինի նա դէպի գուարճութիւնը և պաղ դէպի այս աշխարհը, նրա մասին պատած պլույնները ուրիշ բան են ասում. կամ նրա սիրտը և նրա տունը կարող են տարբեր մի բան պատմել»։

«Ախ, մարդիկ փոխուում են, որ Օսիրիսի հանդէս-

---

*) Լէօնտիոս, Արիստոգիտոնի դիւցազն սիրուհին, երբ տանջանքի ենթարկուեց, կծելով կտրեց իր լեզուն, որպէս զի ցաւից չսասլով մատնել այն գաղտնութիւնը, որ սարքուած էր Պիսիստրատի որդիների դէմ։ Պատանիսի ժամանակ, Աթէնքում կար մի եղ առիթի արձան, որ շինուած էր ի պատիւ այդ հերոսուհու։

ներից բացի ուրիշ բաքոսալին ոճներ էլ սեղմ են ու-նենում նրա՛մտալ պալատի մէջ։ Ասում են որ հարուստ է։ Արդեօք չենք կարող նրան մէջտեղ բերել և սովորացնել զառերի հրապոյրը։ Զուարճութիւն զուարճութեանց. ջերմ տապ լուսով և երկիւղ. անարատալատելի, անլռդնելի կիրք. ինչ կատարի է քո գեղեցկութիւնը, ով խաղ»։

«Ներչնչում, ներչնչում». գոչեց Գլոկուսը, ծիծաղելով. «Գաբիրը բանաստեղծութիւն է խօսում Կլոպիւսի բերանով։ Ուրիշ էլ ինչ հրաշք պիտի անտեսնենք»։

Գլուխ III.

Գլոկուսի ծագումը։—Պոմպէյի տների նկարագրութիւնը։—Կերուխումի կլասիկական հանդէս։

Երկինքը չնորհել էր Գլոկուսին ամեն տեսակ ձիրքեր բացի մէկից միայն. նա սուել էր նրան գեղեցկութիւն, առողջութիւն, հարստութիւն, հանճար, ազնիւ ծագում, բոցավառ սիրտ, բանաստեղծական միտք. բայց նրան զրկեր էր ազատութեան ժառանգութիւնը։ Նա ծնուած էր Աթէնքում իբրև Հռոմի հպատակ։ Իր երիտասարդ հասակում ժառանգած լինելով մի մեծ հարստութիւն՝ նա սկսել էր ցոփութեամբ ապրել իր աշխարհասիրութեան հակումին, որ այնքան բնական էր երիտասարդների համար, և մինչև տակը ծծել էր զուարճասիրութեան արբեցուցիչ գաւաթը կայսերական պալատի վառուռնող զեխութիւնների մէջ։

Նա մի Ալկիբիադես էր առանց փառասիրութեան։ Նա այն էր ինչ որ մի մարդ՝ օժտուած երևակայութեամբ, հարստութեամբ և առաջնորդով դիւրութեամբ դասնում է, երբ նրան զրկում են փառքի ներչնչումներից։ Նրա Հռոմի մէջ ունեցած առնը խօսակցութեան նիւթ էր Բաքոսի երկրպագուների համար, բայց և արուեստ սիրողների համար. և Յունուստանի քանդակագործները մեծ հաճոյք էին զգում իրենց բոլոր ազատնդը գործ դնելով զարդարելու մի աթէնացու սրահները և գաւիթները։ Նրա առնը Պոմպէյում—աւազ, գոյներն այժմ թառամած են և սրմները մերկացած իրենց նկարներից—նրա պճուռուր գեղեցկութիւնը, նրա չնորհալի զարդարանքների կատարելագործուած արուեստը չքացած է. բայց երբ նորից առաջին անգամ դրուեց ի լոյս աշխարհի, ինչ զովեստներ, ինչ զարմանք պատճառեցին նրա մանրաչին և փայլուն պատճանքները—նրա նկարները, նրա մոզաիկները։ Վինելով մի կատարեալ սիրահար բանաստեղծութեան և զրամալի, որոնք լիչեցնում էին Գլոկուսին իր ազգի հանճարը և հերոսութիւնը, նա զարդարել էր իր այդ կախարդիչ պալատը Էնքիլեսի և Հռոմեի պատկերներով։ Եւ հնախոյզները, որոնք ճաչակը առնում են վերածում, այս դէպքում արուեստասէրին հեղինակի տեղ են դրած, և այժմ էլ (թէև սխալը հիմա հասկացուած է) նոքա սովորաբար այդ առնը կոչում են «Դրամատիկական բանաստեղծի առնը»։

Նախ քան այս առն նկարագրութեամբ զբաղուիլը, աւելի լաւ կլինէր ընթերցողին տալ մի ընդհանուր գաղափար Պոմպէյի տների մասին. նա պիտի տեսնէ որ դրա չատ նմանում էին Վիտրուվիուսի *) յատակագծերին, բայց մանրամասնութեան կապրիզի և ճաշակի

*) Վիտրուվիուս մի Հռոմայեցի ճարտարապետ էր ծընուած 76 կամ 80 Յռւսականին ն. ք. Ե։ Ե. Թ.

այնպիսի տարբերութիւններով, որոնք թէև բնական էին մարդկութեան մէջ, սակայն մինչ այժմ չփոխած են հնախոյզներին։ Մենք կաշխատենք այս նկարագրութիւնը որքան կարելի է պարզ և անխնամասակ կերպով անելու։

Անցնելով մի փոքրիկ մուտքից՝ (vestibulum), մարդ մանում է սրահը, որ երբեմն զարդարուած է լինում սիւներով, բայց ոչ յաճախ։ Սրահի երկար կողերից բացում են ննջարանների դռները (որոնց մէջ և դռնապանինը), սոցա ամենից լաւերը յատկացուած լինելով պիւզացի այցելուներին։ Եթէ տունը մեծ լինի, սրահի աջնձախ ծայրերում լինում են փոքրիկ սենեակներ՝ տանտիկինների գործածութեան համար. և սրահի ամենամեծ յատակի մէջտեղում անթացատարար գտնում է մի քառակուսի ծանծաղ աւազան անձրևի ջրի համար. աւազանի կլասիկական անունն է impluvium և անձրևի ջուրը նրա մէջ իջնում է մի ճեղքուածքով, որը ուղած րոպէին ծածկւում է մի հովանոցով։ Այս իմպլուվիումի մօտ, որ նախնիների համար մասնաւոր կերպով մի սրբազան նշանակութիւն ունէր, երբեմն դրւում էին ընտանիքի առաջնեկների պատկերները, բայց այս սովորութիւնը Հռոմում աւելի յաճախ գործածական էր քան Պոմպէյում. սան հիւրընկալ օջախը, որ այնքան յաճախ լինում է Հռոմայեցի բանաստեղծներից և որը նուիրուած էր Լարէններին, Պոմպէյում գրեթէ ասանց բացառութեան կազմուած էր մի չարժական կրակարանից, մինչդեռ սեղանի մի անկիւնում, և չատ անգամ ամենից աւելի աչքի ընկնող մի տեղում, գտնւում էր մի ադամէն փայտեայ տնտուկ, զարդարուած և ամրացուած բրոնզեայ կամ երկաթեայ չերտերով. նա ամուր կերպ երկաթներով այնպէս ամրացրած էր լինում իւր քարաշէն պատուանդանի վրայ,

որ ոչ մի աւազակ չէր կարող նրան խախտել իւր տեղից։ Այնպէս է կարծւում, թէ այդ տնտուկը տանտիրոջ հաճար զրամարկղի պաշտօն էր վարում. բայց քանի որ ոչ մի զրամ չտեսնուեց այն տնտուկների մէջ, որոնք գտնուեցին Պոմպէյում, հաւանական է որ նրանք աւելի զարդարանքի համար էին գործածւում։

Այս սրահի (կամ կլասիկական լեզուով խօսելով՝ ատրիումի) մէջ ընդունում էին աւելի ցած հիւրեր կամ այցելուներ։ Աւելի «պատուաւոր» մարդկանց անեբում պահում էր մի ատրիենսիս (atriensis), այսինքն մի սարուկ, որի պարտաւորութիւնն էր հիւրերին սպասաւորել, և նրա տեղիճանը իւր պաշտօնակիցների մէջ բարձր էր և նշանաւոր։ Սրահի մէջտեղի աւազանը փոքր ինչ վտանգաւոր զարդ պիտի եղած լինէր, բայց ատրիումի կենտրոնը նմանում էր մի ճեմարանի ծաղկանոցին, ուր արգելուած էր սաք կոխել, և անցուդարձ անողները պէտք է գնային սրահի եզերքով, որ բաւական լայն էր։ Մուտքի հանդէպ և սրահի միւս ծայրում կար մի սենեակ (tablinum), որի յատակը սովորաբար զարդարուած էր գեղեցիկ մոզայիկով և պատերը ծածկուած էին ճոխարուեստ պատկերներով։ Այստեղ սովորաբար պահում էր ընտանիքի պատմութիւնը կամ արձանագրութիւնը այն հատարակական պաշտօնի, որ տանտէրը վարած էր լինում։ Այս սրահի մէկ կողմում (եթէ մեզ ներելի լինի այդ անունը տալ այս սենեակին) յաճախ լինում էր ճաշարանը կամ արիկլինիումը (triclinium), իսկ միւսում՝ այն ինչ որ մենք այսօր կկոչէինք պռնտրեզչինների սենեակ. այստեղ պահում էին ընտանիքի բոլոր հնաոքրքիր, հազուագիւտ և թանկագին իրեզէնները. մի նեղ անցք թողում էր բացա-

ասպէս սարսկիների համար, որպէս զի նրանք կարողանան անցնել սան միւս մասերը՝ առանց մանելու վիշտած սենեակների մէջ։ Այս սենեակները բոլորը բացում էին մի քառակուսի կամ երկայնաձև սիւնաչարի (colonnade) մէջ, որ սովորական բառով կոչւում էր պերիստիլ (peristyle)։ Եթէ տունը փոքրիկ էր՝ նրա սանդանը վերջանում էր այս սիւնաչարով, և այդ դէպքում նրա կենդրոնը, որքան էլ փոքրիկ, սովորաբար պարտէզի էր վերածւում և զարդարւում պատուանդանների վրայ դրուած ծաղկամաններով. մինչդեռ սիւնաչարի ներքև, աջ և ձախ կողմում, կային դռներ, որոնք առաջնորդում էին դէպի ննջարանները *), դէպի մի երկրորդ արիկլինիում կամ սեղանատուն **), և եթէ սան սէրը դրականական ճաշակ ունէր—դէպի մի սենեակ, որ դրադարան փքուն անունն էր կրում. որովհետև մի փոքրիկ սենեակ բաւական էր պարունակելու մի քանի պապիրուսները, որոնք նախնիների համար կազմում էին դրքերի մի նշանաւոր հաւաքածոյ։

Ընդհանրապէս պերիստիլի վերջումը լինում էր խոհանոցը։ Ենթադրելով որ տունը մեծ լինէր՝ դա չէր վերջանալ պերիստիլով, և այդ դէպքում նրա կենդրոնը պարտէզ չէր լինի, այլ կարելի է զարդարուած կլինէր մի չաւրուանով կամ ձիւների մի աւազանով։ Միւս ծայրում, ուղղակի սալլինումի հանդէպ՝ կը լինէր մի ուրիշ

*) Հռոմայեցիները ոչ միայն պիշերուայ ննջարաններ ունէին, այլ և ցերեկուայ (cubicula diurna)։

**) Որովհետև նախնիները առնուազն երկու սենեակ էին յատկացնում սեղանատան համար, մէկը ամառուայ և միւսը ձմեռուայ, կամ մէկը հաւասարակ և միւսը հանդիսաւոր օրերի համար։

սեղանատունն, որի երկու կողմում կը լինէին ննջարաններ և կարելի է մի նկարների սալոն կամ pinacotheca *)։ Այս սենեակները հաղորդակցութեան դռներ ունէին մի քառակուսի կամ երկայնաձև սեղի հետ, որի երեք կողմը սովորաբար զարդարուած էր լինում սիւներով, ինչպէս պերիստիլը, և դա չատ էլ նման էր լինում պերիստիլին, միայն մի քիչ նրանից աւելի երկայնաձև էր լինում։ Սա էր իսկական viridarium-ը կամ պարտէզը և չատ դէպքերում դրա մէջ լինում էին մի չատրուան կամ արձաններ և չատ ծաղիկներ. դրա վերջին անկիւնում լինում էր պարախզպանի սանը. եթէ ընտանիքը մեծ լինէր, դրա երկու կողմում, սիւնների տակ լինում էին աւելորդ սենեակներ։

Պոմպէյի մէջ երկրորդ կամ երրորդ յարկը նշանակութիւն չունէր, որովհետև կառուցւում էր սան միայն մի փոքրիկ մասի վրայ և յատկացւում սարսկիներին. այս պատճառով նաքա տարբերւում էին Հռոմի աւելի չքեղ շինութիւններից, որոնց գլխաւոր սեղանատունը (կամ coenaculum) գտնւում էր երկրորդ յարկի մէջ։ Սենեակները ընդհանրապէս լինում էին փոքրիկ. որովհետև այդ սքանչելի եղանակներում մարդիկ կարող էին իրենց ապրելակերպին, որքան էլ լինէր նուազ թիւը, ընդունել պերիստիլում, սրահում կամ պարտէզում, և նոյն իսկ նուազ ընդունարանները, որքան էլ ճոխաբուխ կերպով զարդարուած կամ ուշադրութեամբ ընտրուած լինէին, նորից մեծ չէին։ Մասնաւորապէս զարդացած նախնիները, սերելով ոչ թէ ամբոխի, այլ որոշ

*) Հռոմի հոյակապ պալատների մէջ՝ այս նկարների սենեակը կցուած էր լինում սրահներին։

անձնատուրութեանց ընկերութիւնը, չատ քիչ անգամ էին լինն հոգուց առնլի հրաւիրում ընթրիքներին, այնպէս որ մեծ սեղանատունը նրանց համար այնչափ հարկատար չէր որչափ մեզ համար է *)։ Բայց այդ մի խումբ չքեղ անհատները մեծ ազդեցութիւն պէտք է ունեցած լինեն մատքից նայողի վրայ. մարդ մէկ անգամից տեսնում էր սրահը, իր ճոխ չատակով և նկարներով—տաբլինումը, չնորհագեղ պերիստիլը և (եթէ տունը առնլի մեծ լինէր) դիմացի ընդունարանը և պարտէզը և վերջապէս տեսարանը պիտի վերջանար մի չատրուանով կամ մարմարեայ մի արձանով։

Ընթերցողը մի գաղափար կազմած կը լինի Պոմպէյի տների մասին, որոնք մի քանի կէսերում նմանում էին չունականին, բայց մեծ մասամբ կառուցած էին հռոմէական ձևի ընտանեկան հարատարապետութիւնով։ Գրեթէ ամեն տուն մի տարբերութիւն ունի միւսներից իր մանրամասնութեան մէջ, բայց դլխաւոր գծերը միևնոյն են բոլորի մէջ։ Բոլորի մէջ դուք կգտնէք սրահը, տաբլինումը և պերիստիլը, որոնք բացւում են միմեանց մէջ. բոլորի մէջ դուք կգտնէք, որ սրահները չատ ճոխ նկարներ ունեն, և բոլորի մէջ դուք կտեսնէք մի ժողովրդի հետքերը, որ սիրելիս է եղած կեանքի նուրբ վայելչութիւնները։ Պոմպէյցիների ճաշակի պարզութիւնը, ինչևիցէ, կարող է վիճարանութեան առարկայ լինել։ Նոքա սիրում էին ամենից վառվռուն գոյները և փանտաստիկական նկարները. նոքա չատ ներկում էին իրենց սենեակների ցած կէսը վառ կարմիրով և

*) Մեծ ընդունելութիւնների ժամանակ՝ սրահը ծառայում էր իբրև սեղանատուն։

վերի կէսը թողնում էին անները, և ուր որ պարտէզը փոքրիկ էր, նրա պատի վրայ հեռանկարով գծում էին այնպիսի պատկերներ,—ծառերի, թռչունների, տաճարների և այլն,—որոնք խաբում էին մարդու աչքը և պարտէզն աւելի մեծ էին ցոյց տալիս—մի չողոքորթ պատրանք էր դա, որ սովորութիւն էր դարձրած ինքը Պլինին իւր չնորհալի իմաստակութեամբ, անպատճառ ինքն իր մէջ ունենալով մի ինքնահաճ գոհունակութիւն, իւր ցոյց տուած նրբամտութեան համար։

Գլխաւոր տունը՝ միևնոյն ժամանակ թէ Պոմպէյի ամենափոքր տներից մէկն էր և թէ ամենից չատ զարդարուն և կատարելագործուած. նոյն իսկ այսօր դա կարող էր ծառայել իբրև օրինակ «Մալֆէրի մի ամուրիի» բնակարանի համար, որ բոլոր գեղարուեստական կահկարասիքներ սիրող երիտասարդների տենչանքի և չուտանհատութեան առարկան է։

Դուք մտնում էք մի երկար նրբանցքով (vestibule), որի չատակի վրայ մոզաիկով չինուած է մի չուն պատկեր և նրա մօտ այս չայտնի բառերը «Leave canem», կամ «Զգուչացիր չնից»։ Անցքի ամեն կողմում կայ մի բաւական մեծ սենեակ, որովհետև տան ներսը բաւական մեծ չը լինելով իւր մէջ պարունակելու համար ամեն առանձին և հասարակական բաժանմունքները՝ այս երկու սենեակները չատկացուած էին այնպիսի հիւրերի ընդունելութեան համար, որոնք ոչ իրենց աստիճանի և ոչ իրենց մտերմութեան պատճառով կարելի էր ընդունել տան ներքին մասերում։

Վեսաիրուվից դուք մտնում էք մի տարիում, որը, երբ առաջին անգամ գտնուեց, չատ հարուստ էր նկարներով, որոնք անարգանք չէին կարող բերել Ռա-

ֆայէլի անուան։ Դուք կարող էք հէնց այսօր տեսնել դրանց Նապոլիի թանգարանում, ուր դրուած են ի սքանչացումն ճանապարհների. նոցա նիւթն է Աքիլլէսի և Բրիսէիսի բաժանումը։ Ո՛վ չէ տեսնում այն ոյժը, զօրութիւնը, զգեցկութիւնը, որոնք դրոշմուած են Աքիլլէսի և տմարտ գերասու պիմագների մէջ։

Աորիսում մի կողմից, մի փոքրիկ տանդուխք առաջնորդում էր դէպի ծառանների սենեակները, որոնք գտնւում էին երկրորդ յարկում։ Այնտեղ կային նաև երկու կամ երեք ննջարաններ, որոնց որմերի վրայ նկարուած էին Եւրոպայի առեւանգումը, Ամազոնների ճակատամարտը և այլն։

Դուք այժմ մտնում էք տաբլինումը, որի իւրաքանչիւր ծայրում կախուած էին ալաբաստեայ ծիրանիից չինուած վարագոյրներ՝ կիսով չափ հասակուած *)։ Որմերի վրայ նկարուած էր մի բանաստեղծ, որ իւր գրուածքները կարդում էր իւր բարեկամների շրջանում, և յատակի վրայ տեղաւորուած էր մի փոքրիկ և ամենահաճելի մողայիկ, որ ներկայացնում էր հրանդներ, որոնք բեմի անօրէնի կողմից տրուում էին գերասաններին։

Դուք անցնում էք այս սալօնից և մտնում էք պերիստիլը և այստեղ (ինչպէս արդէն ասած եմ, Պոմպէյի փոքրիկ տների դէպքում) տունը վերջանում է։ Գաւիթը զարդարող բոլոր հօթք սիւներից էլ կախուած էին ծաղկահիւս պատկեր. կենդրոնը, որ ծառայում էր իբրև բուբասան, լի էր ամենահաղուագիւտ ծաղիկներով, ճերմակ մարմարեայ վազերի մէջ, որոնք դրուած

*) Տաբլինումը՝ ուղած ժամանակ կարելի էր կողպել սահուն դռներով։

էին պատուանդանների վրայ։ Այս փոքրիկ պարտէզի ձախ կողմում կար պէնատներին նուիրուած մի շատ փոքրիկ մեհեան, որ նմանում էր այն մատուռներին, որոնք կաթոլիկ դատաստեան պատկանող եկեղեցիներում տեսնում ենք ճանապարհների եզերքին. դրա առջև դրուած էր մի բրոնզեայ եռոտանի. սենեակարի ձախ կողմում կային երկու փոքրիկ կուբիկուլաներ կամ ննջարաններ. աջ կողմում գտնւում էր տաբլինը, ուր հիւրերը այժմ հաւաքուած էին։

Այդ հիւրասրոյի մէջտեղում դրուած էր կիսարան *) փայտից մի կլոր սեղան, կատարելապէս յղկուած, որի վրայ արծաթեայ թևերով բռնուած էին արաբական նկարներ. սեղանի շուրջը դրուած էին երեք բազմոց, որոնք ունէին գործածական էին Պոմպէյի մէջ քան այն կիսակլոր նստարանները, որոնք նոր մոդա էին դարձած Հռոմում, և այս բրոնզեայ բազմոցների վրայ, ուր կարելի էր տեսնել ամենի թանկագին մետաղից պատրաստներ, ձգուած էին ընտիր ճոխութիւնից չինուած հատ մահիճներ, որոնք հէնց փափկութեամբ տեղի էին տալիս տեղմամբ առջև։

«Լաւ, ես պէտք է խոստովանեմ», ասաց Էդիլ Պանսան, «որ ձեր տունը, թէև ոչ ամենի մեծ քան կոճակների մի տուփ, մի գոհար է իւր տեսակի մէջ։ Ինչ գեղեցիկ նկարուած է Աքիլլէսի և Բրիսէիսի անջատումը, ինչ ձև, ինչ գլուխներ, ինչ մի... տե՛ս»։

«Իսկապէս որ Պանսայի տուած գովեստները՝ այս-

*) Ոչ այժմեան կիսրոնի ծառը, այլ մի շատ թանկագին փայտ։ Իմ գիտնական բարեկամ Լանդորը մտածում է, և շատ իրաւամբ, որ դա պէտք է մահոգոն եղած լինի։

պիսի առարկաների մասին՝ չատ չատ թանկագին են. ասաց Կլոփուս լրջօրէն։ Այն նկարները, որոնք իւր պատերի վրայ կան—ասա այդպէս մարդ իսկապէս կարող է տեսնել Զևբահի ձևերը»։

«Դուք չոդոքորթում էք ինձ, իմ Կլոփուս, իսկապէս չոդոքորթում էք», ասաց Էվիլը, որ չատանի էր ամբողջ Պոմպէյի մէջ որպէս ամենալաւ նկարներ ունեցող մի մարդ. դրա պատճառն այն էր, որ հայրենասէր լինելով՝ միայն պոմպէյցի նկարիչներից էր գնում իւր պատկերները։ «Դուք չոդոքորթում էք ինձ. բայց և այնպէս մէկ հատ սիրուն բան կը գտնուի իմ պատկերների մէջ—այն, էվիպոլը—դէթ իւր գոյների մէջ, եթէ ոչինչ չասենք նկարի մասին.—և լեռայ խոնարհութիւնը, բարեկամներս—ասա իմ երևակայութիւնը դրանից աւելի մի բան չէ կարողանում պահանջել»։

«Ի՞նչ է նկարը», ասաց Գլոկուս։ «Ես դեռ չեմ տեսած ձեր խոնարհութիւնը, թէև յաճախ առիթ եմ ունեցած վկայ լինելու թէ դա ինչ աքանչելի կերպարանք է ստանում»։

«Մի խոնարհ է, իմ Ախենացիս, մի խոնարհ, որ իւր հանճարի լոյսերանակները գոհ է ընդունում վնասատուի անդանի վրայ. մինչ քիչ հեռու մի չամիչի վրայ կայ մի գեղեցիկ մոլեկոս (կանաչից աւելուած),—և հնարագիտութիւն կայ նկարի մէջ, այնպէս չէ»։

Այդ վայրկեանին ստրուկները երեացին, ընդունելով իրենց հետ ընթրիքի նախնական ճաշակելիքներով լցուած մի մատուցարան։ Մատուցարանի մէջ կար անուշահամ թուզ, թարմ կանանչ՝ ձիւնով ծածկուած, կալին անձրևներ և ձուներ, իսկ դոյա մէջտեղ չորուած էին փոքրիկ բաժակներ, մեղրախառն գինով լի։ Երբ որ այս

բաները դրուեցան սեղանի վրայ, պատանի ստրուկներ սկսեցին հինգ հնարքներն պատճենել (որովհետև դրանից աւել չէր նոցա թիւը) մի արծաթեայ տաշտ ջրով և մի սրբիչ ծիրանեզոյն ծոպազարդ եղերքով։ Բայց Էվիլը յուցամոլաբար դուրս քաշեց իւր թաշկինակը, որը թէև նոյնչափ նուրբ կտորից չէր, բայց երկու անգամ աւելի մեծ եղերք ունէր, և սրբեց իւր ձեռքերը մի մարդու ձևերով, որ ուզում է աքանչացում հրաւիրել իւր վրայ։

«Ինչ գեղեցիկ մապպա ունիք» ասաց Կլոփուս. «դորա եղերքը նոյնչափ լայն է, որչափ մի գօտի»։

«Ընչին բան է, իմ Կլոփուս, ընչին։ Ես լսեցի, որ այս ձևի եղերքը Հռոմի վերջին մօդան է, բայց Գլոկուսը աւելի ուշադրութիւն է դարձնում այսպիսի բաների վրայ քան ես»։

«Բարեհաճ եղիր դէպի մեզ, ով Բաքոս», ասաց Գլոկուս լարպանդով խոնարհուելով այդ աստուծոյ մի գեղեցիկ պատկերի առջև, որ դրուած էր սեղանի մէջտեղում, իսկ սեղանի անկիւններում կանգնած էին Լարէները և ազամանները։ Հիւրերը հետևեցին Գլոկուսի օրինակին և լեռայ պինդն սրսկելով սեղանի վրայ նոքա կատարեցին սովորական պինեձոնը։

Վերջացնելով այս պարտականութիւնը սեղանակիցները թեք ընկան բազմոցների վրայ և գործը սկսուեց։

«Թող այս բաժակը իմ վերջինը լինի», ասաց երիտասարդ Սալլուստը, երբ որ սեղանը մաքրուելով իւր նախնական ողկիցներից այժմ դիպուածաւ ընթրիքի աւելի հիմնաւոր պարագաներով և ստուարկոզ ստրուկը լցրեց նրա համար մի լիկիաթուս (բաժակ)։ «Թող այս

բաժակը իմ վերջինը լինի, եթե սուտ ասեմ. դա ամենալա պինին է, որ ես խմած եմ Պոմպէյում»։

«Ախտեղ բեր ամֆորան» ասաց Գլոկուս, «և կարգա դինու թուականը և տոհմանիշները»։

Սարուկը ամպարից հիրերին տեղեկութիւն տալ, որ ամանի բերանին փակցուած պրեմիանը յայտնում էր, որ գինին վաճառ տարուայ է և գալիս է Ֆիսոլից։

«Եւ ձիւնը ինչ անուշութիւն է տուել նրան իր պաղութեամբ». ասաց Պանսան, «սառնութիւնը ճիշդ չափին է, ոչ աւելի՝ ոչ պակաս»։

«Դա նմանում է մի մարդու վարձատրութեանը, որ բաւական չափով գոհացրել է իր գործակիրութիւնը, նրան երկուսակ ավելորժակ տալու համար», գոչեց Սալլուստ։

«Դա նմանում է մի կնոջ ՈՉ-ին», աւելացրեց Գլոկուս. «դա գոհացնում է՝ էլ աւելի բարձրացնու համար»։

«Ե՞րբ տեղի կունենայ մեր նոր գաղանամարտը», ասաց Կլոդիուս Պանսային։

«Օգոստոսի իններորդ խղճին», պատասխանեց Պանսան, «Վուլկանալիայի հետևեալ օրը. մենք մի աքանչելի կռիւն ունենք այդ օրուայ համար պահուած»։

«Ո՞ւմ գոնենք, որ այդ կռիւնը նրան ուսի», հարցրեց Կլոդիուս։ «Աւազ, չարագործները չատ հազուագիւտ են։ Գուք անպատճառ մի անմեղ մարդ պիտի գտնէք առիւծին տալու համար, Պանսա»։

«Իսկապես որ վերջերս սկսել եմ չատ լրջօրէն մտածել այդ խնդրի վրայ», պատասխանեց էդիլը։ «Մի անարդիւն օրէնք է այն օրէնքը, որ մեզ արգելում է մեր արուեստներին ազատիկ գաղանների առջև։ Ի՞նչ է նշանակում մեզ արգելել վարուելու մեր ատացուածքի հետ, ինչպէս ուզում ենք. դրան ես կասեմ բռնաբարել մարդու անձնական իրաւունքները»։

«Այսպէս չէր հասարակապետութեան երանելի հին օրերում», հառաչեց Սալլուստ։

«Եւ լեռել գերիներին ցոյց տուած այս կեղծ ողորմութիւնը այնպիսի մի չուսահատութիւն է ազգատ ժողովրդին։ Որքան են սիրում նրանք սեանել մի ձգձգուած կռիւ մարդու և առիւծի մէջ, և բոլոր այս անմեղ զուարճութիւնը նրանք պիտի կորցնեն այս անիծուած օրէնքի պատճառով (եթե աստուածները մեզ մի չանցապարտ չուղարկեն)»։

«Ի՞նչ բան կարող է աւելի վատ քաղաքականութիւն լինել», ասաց Կլոդիուս հանդիսաւոր եղանակով, «քան միջամտել ժողովրդի առնայի զբօսանքների մէջ»։

«Լաւ, փառք Արամազդին և Պարկանեբին, որ ոչ մի Ներոն չունինք հիմա», ասաց Սալլուստ։

«Նա իսկապէս մի բռնակալ էր. նա ատը տարի ամիսիթատրոնները փակեց»։

«Ես զարմանում եմ թէ ինչպէս մի ապստամբութիւն չծագեց դրա համար», ասաց Սալլուստ։

«Գրեթէ ծագելու վրայ էր», պատասխանեց Պանսան, բերանը վարագի մտով լի։

Ախտեղ խռովակցութիւնը մի բոլէ ընդհատուեց արիւնների նուագով և երկու սարուկներ ներս մտան բերելով կերակուրի մի սկաուտակ։

«Ա, էլ ինչ համով բաներ ունես մեզ համար պահած, Գլոկուս իմ», գոչեց երիտասարդ Սալլուստը պրոպրեղուն աչքերով։

Սալլուստը միայն քառասնօրս տարեկան էր, բայց աչքարնում ոչ մի զուարճութիւն չգիտէր, որ հասասար

վնեէր ուտելու զաւարճաբեանը,—ով գիտէ, կարելի է բոլոր մեւանների վերջ էր տուած. այնու ամենայնիւ զուրկ չէր ապաղողից և սիրան էլ վատ չէր։

«Պալատքը վկայ, ես դրան ճանաչում եմ». գոչեց Պանսան. «գա Ամբրակիայի ուղէ է։ Էօ՛ (և նա չխկացրեց իւր մատներով, որ սովորական նշանն էր սարուկներին կոչելու), մենք պէտք է կատարենք մի նոր դիմեճօն՛ի պատիւ նարնկիեն»։

«Ես լոյս ունէի», ասաց Գլոկուս մելամաղձիկ եզրակով, «ձեզ համար Բրիտանիայի սարէնները ձեռք բերել, բայց այն հոգիները, որոնք այնքան անողորմէին դէպի Կեսարը, մեզ արդելքին ոտրէ ուտելուց»։

«Ես մինէ այդ սարէնները այդքան հասեղ են», հարցրեց Լեպիդուս, ունէի թուլացնելով իւր պարեգօտը, որի գօտին արդէն բացուած էր։

«Անկեղծօրէն խօսելով, ես մոածում եմ, որ հեռատեսութիւնն է նրանց համ ապիս. Բրունդուսիումի սարէնները ունէի դէր են։ Բայց Հռոմում ոչ մի ընթրիք կատարեալ չէ առանց դրանց»։

«Խեղճ բրիտաններ։ Վերջապէս մեզ բանի պէտք են գալիս», ասաց Սալուստ։ «Նոքա կարողանում են մեզ ոտրէ տալ»։

«Երանի թէ կարողանային մի պղպեղաւոր տալ մեզ». ասաց Էպիլը, որի հոգածու մտքը որոճում էր անիւիթատրոնի թերութիւնն վրայ։

«Պալատը վկայ», ասաց Գլոկուս, երբ նրա սիրելի սարուկը մի նոր ծագկանիւս պսակ դրեց նրա գանգրաձեղ մազերի վրայ. «ես չատ սիրում եմ այն վայրենի անասուններին, երբ գազանը կռւում է գազանի հետ. բայց երբ մի մարդ, որ մեզ նման ոսկոր և արիւն ունի,

անմեղայն պատարիւնութիւնամբ ուզարկում է կրկէսի վրայ կատր կատր լինելու, այն ժամանակ հեռատեսութիւնը չափազանց զզուելի է. ես հիանդանում եմ — զրկես պատում է և չունչս կտրում—ես զգում եմ մի անզօրութիւն փախչել նմանութիւնը և նրան պաշտպանելու։ Ժողովրդի ատելոյը այդ ժամանակ ինձ ունէի չատամիս է թւում, քան փութրիանների ազատականները, երբ նոքա հալածում են Օրնատին։ Ես տրճում եմ, որ այս սարի ոչ մի պատմութիւն չկայ այդ սարէնութեան կրկնութեան»։

Էպիլը չարժեց իւր ուսերը։ Երիտասարդ Սալուստը, չնայելով, որ Պոմպէյի մէջ համարուած էր ամենաարիւրա մարդը, զարմացմամբ չռեց իւր աչքերը։ Շնորհակալ Լեպիդուսը, որ հաղիւ երբէք խօսում էր՝ իւր վերարանքի գծերը չիանգարելու համար, արտասանեց «Հերկը» բառը։ Պարոզիա Կլոդիուսը մրմնջաց «Էդիլը» և վեցերորդ հիւրը, որ Կլոդիուսի սուտերն էր *), և որի պարտականութիւնն էր իւր ունէի հարուստ բարեկամին արձագանգ տալ, երբ որ չէր կարող նրա գովեստները երգել—պարոզիան պարոզիան—նա ևս մրմնջաց «Էդիլը»։

«Դուք, խոստացիներդ, սովոր էք այդպիսի սեռատրանների հանդիսաւոր լինելու, իսկ մենք լսենք ունէի պիեսերս ենք։ Ով Պինդարի սուտեր—հրճուանք մի ճշմարիտ լուսնական խաղի—մարդի մրցումը մարդու դէմ—ազնիւ պայքար—կես արտաքին յաղթութիւն — իմչ հպարտութիւն՝ մաքառել մի ազնիւ թշնամու հետ և նոյնչափ ուրախ լինել նրան պարտեալ տեսնելով։ Բայց դուք ինձ չէք հասկանում»։

*) Տես յանոթ. բ վերջումը։

«Ուլը աքանչելի է», ասաց Սալլուստ։ Սարսափը, որ պարտականությունն էր միայն կատարել ուզածդ համար և որ մեծ համարում ունէր ինքն իւր պիտանիութեան մասին, դեռ նոր էր կատարել իւր այդ պաշտօնը ուլի վրայ. նրա դանակը չափ էր պահում երաժշտականի ձայնի հետ. սկսելով մի ցած անօթով՝ նա վերջացրեց այդ քրոնաթոթ քաղաքծանութիւնը մի աքանչելի պլասպաղնով։

«Ձեր խոնարհը անպատճառ սիկիլիացի է», ասաց Պանսան։

«Այո, սիրակուսացի է»։

«Խաղանք նրա վրայ», ասաց Կլոդիուս։ «Մինչև նոր կիրակուրների վերադիլը մենք մի անգամ կխաղանք»։

«Անպատճառ այդ անսակ խաղը ամէն լաւ կլինէր քան մի գաղտնամարտ. բայց ես չեմ կարող իմ սիկիլիացուն այդքան պիտանութեամբ կորցնելու վտանգին ենթարկուել. դուք նոյնչափ քանակութեամբ կարող էք մեծ գինով գնել»։

«Իմ Ֆիլիպալին—իմ գեղեցիկ պարտէզն»։

«Ես կանայք գնելու սովորութիւն չունեմ». ասաց Ցիմբր, անհոգութեամբ կարդի գնելով իւր պակը։

Երաժիշտները, որոնք նստած էին դրսի պատին, սկսել էին իրենց պաշտօնը՝ յարմարացնելով այն հանդամանքին, որի մէջ գտնուում էր ուլը. նրա այժմ նստում էին մի մեզիդի, որ ամէն մեղմ էր, ամէն ուրախ և՝ կարելի է ասել՝ ամէն մասատրական, և նրա երգում էին Հորացիուսի այն երգը, որ սկսում է այս բառերով «Persicos odi» և այլն. այս գրեթէ անթարգմանելի երգը՝ նոցա կարծիքով, յարմար էր մի հանգիստ, որը, որքան էլ մեզի թուայ մեզ, իւր ժամանակուայ փառասէր հիւրընկալութիւնների մօտ չատ սիրուէր։ Այն, որ մենք

նկատում ենք, մի ընտանեկան հանգիստ էր և ոչ թէ հչխանական—մի քաղաքացի չկնայմենի հիւրընկալութիւն, ոչ թէ մի կայսեր կամ մի անտասրի խնջոյք։

«Ա՜հ, բարի ծերուկ Հորացիուս», ասաց Սալլուստ կարեկցարար. «նա լաւ էր երգում հանդէսների և աղջիկների մասին, բայց ոչ մեր նոր բանաստեղծների պէս»։

«Օրինակ, անմահ Վարիուսի», ասաց Կլոդիուս։

«Ո՜հ անմահ Վարիուսի», ասաց նորա սատևերը։

«Եւ Սալուստիոսի, և Կալիուս Մուսիուսը, որ երեք դիւցազներգութիւն գրել մի սարուայ մէջ,—կարող էր Հորացիուսը այդպիսի մի բան անել, և կամ Վիրգիլիուսը», ասաց Լեպիդուս։ Այդ հին բանաստեղծները բոլորը միևնոյն սխալը գործեցին, փոխանակ պատկերը օրինակելու, նոքա օրինակում էին քանդակագործութիւնը։ Պարզութիւն և անզարդութիւն—այս էր նոցա գաղափարը. բայց մենք, նայելով, ունենք կրակ և կիրք և եռանդ—մենք երբէք չենք քնում, մենք օրինակում ենք նկարի գոյները, նրա կեանքը և նրա գործերը։ Անմահ Վարիուս»։

«Ի վէպ», ասաց Սալլուստ. «գուք տեսած էք այն նոր քնարերգական բանաստեղծութիւնը, որ Սարսեղոն գրած է՝ ի պատիւ մեր եկիպտական Խեխէ։ Աքանչելի է,—այդ է ճշմարիտ կրօնական ջերմեռանդութիւնը»։

«Խեխէ մի սիրուած դիցուհի է Պօմպէյի մէջ», ասաց Գլոկուս։

«Այո», ասաց Պանսան, «այս վերջերս նա մեծ համբաւ է սացել. նրա գործերը չատ նշանաւոր գուշակութիւններ է արել։ Ես նախապաշարումներ չունեմ, բայց պէտք է խոստովանուեմ, որ նա աւելի քան մի անգամ իւր խորհրդներով օգնել է ինձ իմ գաղտնական

պաշտօնեա մէջ։ Նրա քաբանքն էլ չատ բարեպաշտ է և ամենևին չեն նմանում ձեր Կղեմեսի և Ֆօրտունատի գոռոզ գաւառացիք պաշտօնեաներին, նրա կօշիկ չեն հագնում, մխա չեն ուտում և պիչերատան մեծարգոն մատն էլ նրա գլուխն են տանձեին ազօթելով»։

«Ճշմարիտ մի օրինակ կարող են լինել մեր միւս քահանաների համար—Կղեմեսի տաճարը չատ կարօտ է բարեկարգութեան», ասաց Լևիվոտա, որ ամեն բանի համար մի մեծ բարեկարգիչ էր, բայց միայն իւր համար։

«Ասում են, որ Եվիսաայի Արքայը չատ խորհրդատու գաղտնիքներ է յայտնել Խմիսի քահանային», նկատեց Սալլուստ։ «Նա պարծենում է, թէ ինքը Ռոմուսեանների ցեղից է, և թէ իւր ընտանիքի մէջ պահուած են ամենահին գաղտնիքները»։

«Տարակոյս չկայ, որ նա չար աչք ունի», ասաց Կղեմեսս։ «Եթէ ես երբեմն տեսնեմ նրա Մեղուասյի ճակատը՝ առանց խաչանշանի նշանը անելու, ես անտարակոյս պիտի կորցնեմ իմ սիրած ձիերից մէկը, կամ գառներս ինն անգամ իրար հետևից կ ա ն է ս *) (canes) պիտի ձգեն»։

«Այդ վերջինը մի հրաշք կլինէր», ասաց Սալլուստս ըղձօրէն։

«Ի՞նչ է ուզում ասել, Սալլուստս», պատասխանեց խաղամոլը կարմրած երեսով։

«Ուզում եմ ասել այն, ինչ որ դուք կմոռնիք իմ դրպանում, եթէ ձեր հետ լաճախ խաղայի, այնինքն՝ ոչինչ»։

---

*) Canes կամ caniculae (շուն) ամենավատ թիւն է զառերի վրայ։

Կղեմեսի պատասխանն եղաւ մի արհամարհական ժպիտ։

«Եթէ Արքայը այդքան հարուստ չլինէր», ասաց Պանտան հանդիստաւոր եղանակով. «ես իմ իշխանութիւնը զործ կդնէի խնայելու, թէ արդեօք ճիշդ է այն լուրը, որ տարածուած է նրա մասին, թէ նա մի աստղաբաշխ է և կախարդ։ Ապրիպպան, երբ Հռոմի էդիլն էր, արտաքսեց բոլոր այդպիսի վտանգաւոր քաղաքացիներին։ Բայց նա հարուստ է, և էդիլի պարտականութիւնն է հարուստներին պաշտպանել»։

«Ի՞նչ է մտածում այն նոր գատաստանի մասին, որը, ինչպէս լսում եմ, Պոմպէյի մէջ էլ մի քանի նորահաստատներ ունի. խօսքս այն հրէայ Աստուծոյ մասին է —Քրիստոսի»։

«Օ՛, ոչինչ, չհամախղդրական մի ցնորք է այդ բոլորը», ասաց Կղեմեսս, «մենք հատ չենք ընդունին չունին իրենց մէջ. նոցա նորահաստատները ազքատ, աննշան և ոչխա մարդիկ են»։

«Որոնք այսու ամենայնիւ սկսած է խաչանշին իրենց հաւատքեան համար», ասաց Պանտան խիստ կերպով. «նոքա ուրանում են Վէնուսին և Իւպիտերին։ Նազովրեցի և անատատած՝ նոյնանիշ բառեր են։ Եթէ ձեռքս ընկնեն՝ բառական է»։

Երկրորդ կերակուրը արդէն վերջացած էր. հիւրերը թեք ընկան իրենց բազմոցների վրայ և մի լուսին ափերց բոլորի վրայ, մինչդեռ նոքա սկսան դնում Հորացիուսի վարուկ ձայներին և արկադիական արնդի երաժշտութեան։ Ալկեստը ամենից չատ չափազանցած էր այդ մանրիկասով և ամենից քիչ արամադիր էր լուս-

թիւնը բնականալու, բայց Կլոպիտաը արդէն սկսաց մոռանալ, որ նոքա ժամանակ են կորսնուած։

«Bene vobis (ձեր կենացը), իմ Վլսկուա», ասաց նա, պարպելով նրա անուան ամէն մի տառի համար մի բաժակ, փոքառաս խմոցի բոլոր դիւրութեամբ։ «Արդեօք չես կամենում քո երեկուայ ապարախտութեան վրէժը լուծել։ Տես, զառերը մեզ հրաւիրում են»։

«Ինչպէս կուզես», ասաց Վլսկուա։

«Աժառը խաղալ, մինչդեռ ես էդիլս ապառիկ նրատած եմ», *) ասաց Պանուան դառնաւորական եղանակով, «դա օրէնքի դէմ է»։

«Ոչ ձեր ներկայութեամբ, ո՛վ գոբ լաբջ Պանուա», պատասխանեց Կլոպիտա, չխչխկացնելով զառերը մի երկար առւփի մէջ. «ձեր ներկայութիւնը զսպում է ամեն մոլութիւն, գործը ինքը չէ որ վճռում է, այլ գործի չափազանցութիւնը»։

«Ի՛նչ խնամութիւն», մրմնջաց առուները։

«Լաւ ուրեմն, ես ուրիշ կողմ կը նայեմ» ասաց էպիլը։

«Դեռ ոչ, բարի Պանուա՛, սպասեցէք մինչեւ ընթրիքը վերջանալ», ասաց Վլսկուա։

Կլոպիտա ակամայ անկի առաւ, իւր վիշտը ծածկելով մի ծիծաղուածով։

«Նա բնաբանը բռնում է ամէին կլանելու» մրմնջաց Լեպիդուա Սալլուստի ականջին, այդ բառերը մէջ բերելով Պլաւտոսի աւլուլարիայից (aulularia)։

«Ա՛խ, ես լաւ եմ ճանաչում այս բազմասանիներին, նոքա ինչ բանի որ կպչում են, բայց չեն թողնում», պա-

*) Տես ծանօթ. Գ վերջումը։

տասխանեց Սալլուստը, մինչդուն եղանակով և մինչդուն թատերգութեան բառերով։

Այժմ նոքա բերանացան ամէն տեսակ մրգեղէններ, պիտակ, քաղցրեղէն, կարկանդակներ և չաքարեղէններ, որոնց տրուած էր հաղար ու մի տեսակ փանուսների և օգալին ձև. ծառաները սեղանի վրայ դրին նաև գինին, որ ցայժմ բաժակներով էր տրուում հիւրերին. ապակեայ մեծ բաժակների մէջ լցուած գինիների ամէն տեսակը կրում էր իւր տեղ իւր հնութեան և լաւկութեան վկայականը։

«Ճաշակեցէք այս Լեսբոսի գինուց, իմ Պանուա», ասաց Սալլուստ. «աքանչելի է»։

«Պա չատ հին չէ», ասաց Վլսկուա, «բայց մեր ընտան վաղտառա է դարձել՝ կրակի մօտ դրուելով։ Այս գինին ճօնում եմ Վուլկանի կրակին, որպէս մենք ճօնուած ենք նրա կնոջ բոցերին, ի պատիւ որին ես պարպում եմ այս բաժակը»։

«Անուշահամ է», ասաց Պանուան, «բայց խէժի համը մի չնչին չափով չատ է դրա մէջ»։

«Ի՛նչ սքանչելի բաժակ է», ասաց Կլոպիտա, վերցնելով այն թատանոցի բնաբանների մէկը, որի պատարազող կանթին օձերի ձև էր տրուած, մի ձև, որ այդ ժամանակ չատ հատանելի էր Պոմպէյի մէջ։

«Այս մասանին», ասաց Վլսկուա, հանելով մի թանկագին գոնար իւր մատի առաջին յօդուածից և կախելով բաժակի կանթին, «դրան տալիս է մի աւելի ճոխ երեսոյթ և նուազ անարժան է դարձնում քո ընդունելութեանը։ Առուծոները պարգևեն քեզ առողջութիւն և բախտաւորութիւն, որպէս զի երկար ժամանակ և լաճախ վայելես այդ բաժակից»։

«Դու չափազանց ազնիւ ես, Գլոկո՛ւս», ասաց խաղամոլը, բաժակը տալով իւր տարակին. «քայց քո սէրը դրան երկպառիկ արժէք է տալիս»։

«Այս բաժակը Գրացխանեբին», ասաց Պանուան՝ երկար անգամ գաւաթակելով իւր գաւաթը։ Հիւրերը հետևեցին նրա օրինակին։

«Հանդէսի համար ոչ մի կառավարիչ *) չենք որոշել», ասաց Սալլուստ։

«Զառ ձգենք և տեսնենք՝ ով կլինի», ասաց Կտիւս չարժելով իւր տուփը։

«Ո՛չ», ասաց Գլոկուս, «մեզ հարկաւոր չէ այլ հնամաշ սովորութիւնը գործ դնելով՝ մեր վրայ կարգել մի պաղ, վայրացած կառավարիչ. մեր հանդէսին հրամայող պէտք չէ, ոչ մի rex convivii։ Մենք հասկացիք չէն երդուած ոչ մի թագաւորի չհպատակվելու։ Ուզում էք՝ մենք նոյազ ազատ լինենք, քան ձեր նախահայրերը։ Հօ, երաժիշտնե՛ր, նուագեցէք այն երգը, որ ես գրեցի անցեալ գիշեր. դա մի բանաստեղծութիւն էր այս նիւթի վրայ—«Ժամերի բաբառական երգը»։

Երաժիշտները սկսեցին մի վայրենի իոնական եղանակ, որից խումբի ամենից երիտասարդը սկսեց երգել հետևեալը յոնական բառերով և չափով։

ԺԱՄԵՐԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԵՐԳԸ

Ամառ օրը, տաղտուկ օրը,
Սահել ենք մենք անդադար.
Նախ քան պառկ մութ գիշերը
Եւ պաշարէ մեզ խաւար՝

*) Թամադա։

Մեզ երգերով ազդուեցեք,
Ինչպէս երգը կրէատուս,
Երբ նա առաւ արշալոյսից
Յանդգնութիւն երգելու։
Երբ չորս կողմից առտակում էր,
Սիրատարբոք մի տաղով,
Էգէական վճիտ կոհակ
Եւ երգեցիկ կապոյտ ծով։

II

Այժից ընկած և յոգնած ենք
Մեր թրտիչքոնքը անդադար
Եւ գիշերուայ պեռութեան մէջ
Մեր ընթացքն է խիստ դժուար։
Թրջեցէք մեզ, ո՛հ, թրջեցէք
Մեր թևերը ուժասպառ,
Այն կազդուրիչ հեղուկի մէջ՝
Վարդի գոյնով և պայծառ,
Որ լցնում է ձեր բաժակը
Լուսանման ազնիւրից։
Քանզի, երբ որ մայր է մտնում
Արեգակը չորալից,
Դարձեալ նա մեզ լոյս է տալիս
Գինու փայլուն բաժակից։

Հիւրերի գովասանքին չափ չկար։ Երբ բանաստեղծը մարդու հիւրընկալն էր, նրա բանաստեղծութիւնը անպատճառ դիւթիչ կլինի։

«Կառավարելագէս յոնական է», ասաց Աթիկոս, «այլ լեզուի վայրենութիւնը, այժը և եռանդը անկա-

րելի է հասկական բանաստեղծությեան մեջ դուրս բերել»։

«Դա իսկապես հակապատկերն է», ասաց Կլոդիուս, սրան մեջ հեղնելով, բայց ոչ դրսից, «Հորացիուսի երգի այն հնացած և խեղճ պարզությեանը, որ մենք քիչ առաջ լսեցինք։ Եղանակը իռնական է և չատ գեղեցիկ. այդ բառը ինձ լիչեցնում է մի կենաց առաջարկել. ընկերներ, համենք հրաշագեղ Իոնեի կենացը»։

«Իոնե՛—այդ անունը լուսնական է», ասաց Գլոկուսը վախուկ ձայնով։ Ես այդ կենացը հաճույեամբ կը խմեմ։ Բայց ով է Իոնեն։

«Ա՛, դուք նոր էք եկած Ռոմպեյ, եթե ոչ դուք արժանի կլինեիք օսարակիզմի դատապարտուելու ձեր տգիտությեան համար», ասաց Ալսիդուս պարծենալով. «Իոնեին չճանաչել՝ նշանակում է չճանաչել մեր քաղաքի գլխաւոր հրապոյրը»։

«Նա մի հաղուագիտա գեղեցկուհի է», ասաց Պանսան, «և ի՛նչ ձայն ունի»։

«Նա սոխակի լեզու պիտի կերած լինի իր կեանքում», ասաց Կլոդիուս։

«Սոխակի լեզո՛ւ — գեղեցիկ միտք», հառաչեց սուսերը։

«Բացատրեցէք ինձ, ազերբաժ եմ», ասաց Գլոկուս

«Իմացիր ուրեմն», սկսեց Ալսիդուս։

«Թող ես խօսեմ», ըսչեց Կլոդիուս. «դու բառերդ այնպես ձգձգում ես, որ կարծես կրիաներ են դուրս գալիս բերնիցդ»։

«Իսկ քո բերնիցը քարեր են դուրս գալիս», մրմնջաց խմասակը ինքն իրեն և արհամարհական ձեով ընկաւ բազմոցի վրայ։

«Իմացիր ուրեմն, իմ Գլո՛կուս» ասաց Կլոդիուս, «որ Իոնեն մի օսարուհի է, որ նոր է եկած Ռոմպեյ։ Նա երջանիկ է Սաֆոյի պես, և նրա երգերն իւր չինածներն են. գալով սիրիային, կիլիացուին և փռիգիին, ես չըզիտեմ՝ թէ որ մեկով նա գերազանցում է մուսաներին։ Նրա գեղեցկութիւնը վերին աստիճանի չքայուցիչ է։ Նրա տունը կատարեալ է, այնպի՛սի ճաշակ—այնպի՛սի գոհարներ— այնպիսի բրոնզեպէնններ ունի։ Նա հարուստ է և հարստութեան չափով առատաձեռն»։

«Նրա սիրականներն», ասաց Գլոկուս, «անպատճառ թոյլ չեն տայ, որ նա սովամահ լինի. և գիտութեամբ չահուած դրամը միշտ չատկութեամբ է մսխուում»։

«Նրա սիրականնե՛րը—այդ է հանելուկը—Իոնեն միայն մեկ մուսութիւն ունի, և այդ նրա պարկեշտութիւնն է։ Ամբողջ Ռոմպեյը ընկած է նրա սաքերի առջև, և նա մեկ հատ սիրական չունի. նա մինչև անգամ չէ ամուսնանում».

«Սիրականներ չ'ունի», մրմնջաց Գլոկուս։

«Ո՛չ, նա ունի վեհասքի հոգին և վեհասքի գործերն»։

«Արտասովութեան ի՛նչ մի կատարելագործուած ձև», ասաց սուսերը։

«Հրա՛շք է», գոչեց Գլոկուս։ «Արդեօք չենք կարող անանել նրան»։

«Ես ձեզ այս երեկոյ կատնեմ այնտեղ», ասաց Կլոդիուս. «իսկ մինչ այդ.....» ասելացրեց նա չարժելով զաւերը։

«Բոլոր սրտով», ասաց այժմ հաճոյակատար դարձած Գլոկուսը։ «Պահնա՛, երեսդ չուս տուր»։

Ալսիդուսը և Սալլուստը զոյգ ու կենտ էին խա-

զան, իսկ առուները նայում էր Գլակուսին և Կլոպիուսին, որոնք սկսեցին բոլորովին խարտուղուել իրենց խաղի մէջ։

«Պոլուքսը վկա՛յ», գոչեց Գլակուս, «այս երկրորդ անգամն է, որ ես ձգում եմ փոքրագոյն խիլը»։

«Ով Վէնո՛ւս, դու ինձ օգնական եղիր», ասաց Կլոպիուս, մի քանի րոպէ չարունակ չարժելով աւելի։ «Ով արմա Վէնուս. դու ինքդ Վէնուսն ես», նա կրկնեց և ձգեց ամենամեծ խիլը, որ այդ առաւաձուհու անունովն էր կոչւում, առաւաձուհի, որ դրամ առնողներին միշտ օգնական էր։

«Վէնուսն ապերախտ է դէպի ինձ», ասաց Գլակուսը զուարթ դէմքով. «ես միշտ զոհեր եմ բերած նրա սեզանին»։

«Ով որ Կլոպիուսի հետ խաղայ», փսփսաց Էպիդոսը, «Պլուտոս Բաբքաբիոյի նման չուտով կտեսնի իր պալիումն *) էլ առնուել սար»։

«Այլ ես չեմ խաղում», ասաց Գլակուս. «ես կորցրեցի երեսուն սեստերցիում»։

«Ես սխալ եմ», սկսեց Կլոպիուս։

«Աքանչե՛լի մարդ», հառաչեց առուները։

«Երբէք», գոչեց Գլակուս. «այն հաճոյքը, որ ես զգում եմ քո չահելուզ մէջ բոլորովին փոխարինում է իմ կորուսեալ ցաբը»։

Խօսակցութիւնը այժմ աւելի ընդհանուր և աւելի պերճուսած դարձաւ. պինդն սկսեց աւելի արագ շրջան

*) Պալլիումը յունական մի մեծ վերարկու էր, որ համապատասխանում էր Հռոմայեցիների տոգային։ Ծ. Թ.

առնել. և Իսնէն նորից զուարճութեան նկատ դարձաւ Գլակուսի հետերի համար։

«Փախանակ նայելու և առուներն նայելու, երբեմն այլևլենք նրանցից մէկին, որոնց գեղեցկութեան առջև առուները պատասում են», ասաց Էպիդոսը։

Կլոպիուսը, որ այժմ այլ ևս պատճառ չէր տեսնում խաղը վերսկսելու, երկրորդից այլ առաջարկութիւնը, և Գլակուս, որն ամենայն քաղաքավարութեամբ խնդրեց հերերից չարունակել իրենց քէֆը, նայելն չկարողացաւ նրանցից ծածկել, որ իր հետաքրքրութիւնը շատ բորբոքած էր Իսնէի գովասանքով։ Հետևաբար նոքա բոլորը (պառաւից և առուներից զատ) զգուշին երթալ չքնաղ հերկնուհու տունը։ Նոքա համոզին Գլակուսի և Տիտուսի կնոջը, կառարելին իրենց վերջին պինդները, հագան իրենց կօշկեղենները, իջան սանդուխքներից, անցան լուսաւորուած սարխումից և, քալելով կառապի չան պահակի վրայ՝ առանց որ նա խանգներ, դուրս եկան Պանդեի դիս բաղմամարդ փողոցները և նոր ծագած լուսնի շողերի տակ։

Նոքա անցան գնդապետների չուկայով, ուր զոյները՝ անդրադարձնելով խանութների թանկագին քարերի մէջ՝ աւելի պայծառ էին գարձնում փողոցը, և վերջապես հասան Իսնէի տան դուռը։ Պետերները լուսաւորուած էր երկու կարգ լամպաններով։ Անհունապարծ ծերանի վարագոյրներ կախուած էին սարկնումի ամեն մի պատուհանի առջև. սարկնումի պատերը և մոզայիկ յատակը վառում էին գեղարուեստական ամենաճոխ գոյներով. և գահի մէջ, որ պատում էր անուշահոտ պարտէզի չուրջը, նստած էր Իսնէն, արդէն չրջապատուած պաշտող և գովասանող հիւրերով։

«Դուք ասացիք, որ նա ախենացի է», փոխեաց Պլուտոսը՝ նախ քան նոքա անցան պերիստիլը։

«Ո՛չ, նա նէապոլսցի է»։

«Նէապոլիս», արձագանք առաւ Պլուտոս, ու այդ բառիցն խոսքը բաժանուեց Խոնէի այս ու այն կողմը, և նրա աչքին արձանացաւ այն պայծառ, այն նիմֆայական գեղեցկութիւնը, որ մի քանի ամիսներից ի վեր ցոլացած էր նոքա վիշապութեան ջրերի մէջ։

Գլուխ Դ.

Նախի տառապը։— Նրա քոյրերը։ — Արբակի բնաւորութիւնը լուսաբանւում է։

Պատմութիւնը այժմ վերադառնում է դէպի եգիպտացին։ Մենք թողեցինք Արբակին ծովափի մօտ, երբ կէսօրին նա բաժանուեց Պլուտոսից և նրա ընկերից։ Երբ նա մօտեցաւ ծոցի ափերի բազմամարդ մասին, նա կանգ առաւ և, թևքերը ծալելով, նայեց այդ ամպհոյլ տեսարանի վրայ. մի սառն ժպիտ խաղում էր նրա մաքի դիմագծերի վրայ։

«Ծիծաղնե՛ր, խաւարամիտնե՛ր, լիմարնե՛ր», մըրմնջաց նա ինքն իրեն. «թէ գործի մէջ, թէ զաւարթութեան, թէ առևտրի, թէ կրօնքի մէջ դուք խաբուում էք այն կիրքերով, որոնց դուք պիտի իշխէիք։ Ինչպէս կարող էի ղղռնել ձեզանից, եթէ արդէն ձեզ առած չլինէի—այո, առելով առած եմ։ Յոյնե՛ր և Հռոմայեցինե՛ր, դուք մեզանից, Եգիպտոսի խորհրդաւոր պիտութիւններից էք գողացել ձեզ հոգի առած կրակը։ Ձեր պիտութիւնը, ձեր բանաստեղծութիւնը, ձեր օրէնքները, ձեր արուեստ-

ները, ձեր պատերազմի բարբարոսական հմտութիւնը (բոլորն՝ ինչքան էլ չնչին և անհաշտ լինեն համեմատելով նախաձեռնին) դուք առորակար գողացել էք մեզանից, ինչպէս մի առուկ գողանում է մի հայկերոլթի փչրանքները։ Եւ այժմ դուք, միմոնե՛ր միմոններ, Հռոմայեցիներ, կամ աւազակների բախտախնդիր հրոսակներ, դուք էք մեր տէրերը. Եգիպտոսի բարբարները այլ ևս չեն տեսնում Ռամսեսների առնմը իրենց առորառում. արծիւը կուչ է եկել Նեղոսի օձի վրայ։ Նոքա մեր տէրերն են, բայց ոչ իմ։ Իմ հոգին իր խնդասութեան զօրութեամբ իշխում է և չղթայում է ձեզ, թէև կապանքները անտեսանելի են։ Քանի որ խորամանկութիւնը կարող է տիրապետել ոյժի վրայ, քանի որ կրօնքն ունի մի տենչ, որի միջոցով դաբիրները կարող են խաբել մարդկութիւնը, խմաստունները կմտազաւորեն աշխարհի վրայ։ Նոյն իսկ ձեր մոլութիւններից Արբակը քաղում է իր զաւարթութիւնը,— զաւարթութիւններ, որոնք չեն պղծուած ռամիկների աչքերից, զաւարթութիւններ, անտե՛ւն, ճո՛խ, անապատե՛լի, որոնց մասին ձեր ջլատուած մտքերը՝ իրենց երևակայութիւնից զուրկ հնչուասիրութեամբ՝ չեն կարող պատկերացնել և ոչ էլ երազել։ Զարչարուեցէք, չարչարուեցէք, դուք, վիտասիրութեան և ագահութեան տխմար տարուհներ։ Ձեր առած ծարաւը ձողերի *), քուէատրութեան **) և սարկական իշխանութեան բա-

*) Ձողը ասելով հասկացուում է այն տպաւորը, որ կապուած էր մի քանի ձողերով և տարուում էր դատաւորների առջևից ի նշան նոցա իշխանութեան։ Ե. Թ.

**) Quaestor Հռոմայեցիք կոչում էին այն պաշտօնեային, որի ձեռքը յանձնուած էր կառավարութեան դանձարանը։ Նոյն

ըր կեղծ և մնասի ցույցերի համար, չարժում է իմ ծիծաղը։ Միայն իմ զօրութիւնը սիրուած է ամէն տեղ, ուր մարդը հաւատք ունի։ Ես ամենակոխ եմ անում նըրանց, որոնք ծիրանի են հագած։ Թեբէն կարող է ընկնել, և Եգիպտոսից միայն մի անուն մնալ, սակայն Արրակի հպատակները ամրողջ աշխարհի բնակիչներն են»։

Այս ասելով եգիպտացին կամաց կամաց առաջ գընաց. նա մտաւ քաղաքը և երբ հասաւ Ֆօրումը (հրապարակը) նրա գլուխը խաւարն ամբոխի մէջ ամէնից բարձր էր երևում. նա մտաւ այն փողոցից, բայց կողից տաճարը, որ նուիրուած էր Խոխին *)։

Տաճարի չէնքը նոր կառուցուած էր. հին տաճարը տասն և վեց տարի առաջ կործանուած էր երկրաշարժից, և այս նոր չինուածքը նոյնչափ անուն էր հռչակ գիւտաբոլոխ Պամպէյցիների մէջ, որչափ մի նոր եկեղեցի կամ մի նոր քարտուղիչ կարող է հանդիսել մեր մէջ։ Այդ առաւաձուհու դարերի պատմութիւնները խիստ մեծ նշանակութիւն ունէին Պամպէյում, ոչ այնքան նոցա խորհրդաւոր լեզուի, որչափ այն հաւատքի համար, որ ընծայում էր նոցա պատուէրներին և գուշակութիւններին։ Թէև մի առաւաձուհուց կողմից ուղարկուած չէին այդ պատգամները, բայց նոցա հեղինակը մի մարդ էր, որ չատ խոր ուսումնասիրել էր մարդկութիւնը. նա-քա կատարելապէս յարմարում էին անհատների հանդամանքներին և մի մեծ հակապատկեր էին կազմում այն անորոշ և թոյլ հանրապետութիւններին, որոնք

պաշտօնեային էր վերաբերում հարկերի, տուրքերի և այլն գանձումը։

Ե. Թ.

*) Տես ծանօթութիւն Դ վերջումը։

տրում էին մրցակից տաճարներից։ Երբ Արրակը մօտեցաւ այն երկաթեայ վանդակապատին, որ բաժանում էր տաճարի սուրբ մասը անսուրբ մասից, մի ամբոխ՝ կազմուած ամէն դասակարգի մարդկանցից, բայց մանաւանդ վաճառականներից, հաւաքուեց դարձի բազմաթիւ սեղանների առջև, չնչասպառ և յարգալից կերպարանքով։ Յետոյ *) սրանցի մէջ, որոնք բարձրացած էին Պարոսի մարմարիոնի հօմբը սանդուխքների վրայ, գտնակներ էին չինուած, որոնց մէջ դրուած էին զանազան արձաններ. իսկ պատերը զարդարուած էին Խոխին նուիրուած նկարներով։ Շինուածքեան ներքին մասում կառուցուած էր մի երկայնաձև պատուանդան. այս պատուանդանի վրայ դրուած էին երկու արձաններ, մէկը Խոխին և միւսը լուռ և միամիտ Օրտաին նուիրուած։ Բայց տաճարի մէջ դրուած էին ուրիշ չատ աստուածների արձաններ եգիպտական աստուածուհու գաւիթը զարդարելու։ Այնտեղ էր Խոխի ազգական բազմատիպոս Բաքոսը, Կիպրացի Վենուսը, որ դուրս էր գալիս իւր լողանոցից։ Աստեղ պէտք է ասել որ Վենուսը Խոխի յունական ալլափոխումն էր։ Այնտեղ էր չնազդուխ Անուբիսը և եղ Ապիսը և զանազան եգիպտական կուռքեր անուշ կերպարանքներով և անլաւ անուններով։

Բայց մենք չպէտք է նեղացնենք, թէ Մեծն Յունաստանի քաղաքներում Խոխին պաշտում էին այն ծիսակատարութիւններով, որ նրա իրաւունքն էր։ Հարուի խառնածին և նորազուն աղջիկը, իրենց գուզուզութեամբ և ազիւսութեամբ, ամէն երկիրների և դարերի

*) Cella — նշանակում է, լատիներէն, մի տաճարի ներքին միջնավայրը։

Ե. Թ.

պաշտամունքը խառնում էին միմիանց, և Նեղոսի խոր-
թախորհուրդ միաէրներըը այսպիսով յարգարուրկ էին լի-
նում, խառնուելով Կեփիսէսի և Տիբերի չանպիտանա-
և մեռած դատաւոր-իշխանների: Պամպելում Խեմի անաս-
րի մէջ ծառայում էին Հռոմայեցի և Յոյն քուրմեր,
որոնք բոլորովին անտեղեակ էին նրա հին պաշտօնեա-
նների թէ լեզուին և թէ ծէսերին. և Եգիպտոսի հզօր
թագաւորների չառաւելը՝ յարգալից տատանութեան քո-
ղի տակ ծիծաղում էր այն չնչին և ներկայական ցոյց-
երի վրայ, որոնք որպէս թէ ներկայացնում էին իւր
այրեցեալ հայրենիքի հանդիսաւոր և խորհրդաւոր պաշ-
տամունքը:

Սանդուխքների երկու կողմում կանգնած էր զո-
հաբերող խումբը ճերմակ զգեստներով, իսկ սանդուխ-
ների գլխին կանգնած էին երկու-հոգի սատրապաս քուր-
մեր, մէկի ձեռքում արմաւի ճիւղ և մեսի ձեռքում
ցորենի վառնջ: Վիմացի նեղ անցքի մէջ խառնուած էր
հանդիսաւոր ամբոխը:

Արքայ հասնելով հանդիսաւորներին՝ սկսեց վախը-
ռալ մէկի ականջին, որ մի վաճառական էր և գրա-
գրուած էր Ալէքսանդրիայի առևտրով. այդ առևտուրը
չատ կարելի է որ եգիպտական սատանայներին սատկին
անդամ ներմուծեց Պամպելի մէջ:

«Աբդիօք ինչ ասէիս», ասաց նա, «զուք այդպէս
հառաչաձրուած էք պաշտելի Խեմի սեղանների չուրջը:
Ճերմակազգեստ ամբոխի ներկայութիւնից այնպէս եմ
զգուշանում, որ մի գոմ պիտի մատուցուի, և քուրմե-
րի ներկայութիւնից զգուշանում եմ, որ սպասում էք մի
պատգամի: Աբդիօք ինչ հարցի պիտի դիջանի պատա-
խանել սատանայներին»:

«Մենք վաճառականներ ենք», պատասխանեց նոյն
ճարտար միւսը (որ մեզ ծանօթ Փիմենն էր), «և ազգա-
ենք խնդրել մէկ ինչ կը պատահի մեր նաւերին, որոնք
վաղը պիտի առագաստ բռնեն դէպի Ալէքսանդրիա:
Մենք ուզում ենք մի գոմ մատուցանել և մի պատա-
խան ստանալ աստուածներից: Ես գոմարբուղներից
չեմ, ինչպէս կարող էք տեսնել իմ զգեստներից, բայց
և այնպէս ինձ չեն ունեմ նաւատորմի չաջողութեան
մէջ.—Իսպիտերը վկայ, այդ: Ես մի փոքրիկ առևտուր
ունեմ, եթէ ոչ՝ ինչպէս կարելի է ապրել այս անյագաստ
ժամանակում»: Եգիպտացին լուրջ կերպով պատասխա-
նեց, որ «թէև Խեմը իսկապէս հոգագործութեան աս-
տուածուհին է, բայց նա նոյնպէս պաշտպանում է նաև
վաճառականութիւնը»: Յետոյ դարձնելով իւր երեսը դէպի
արևելք՝ նա կարծես խորասուզուեց լուռ աղօթքի մէջ:

Ես այժմ սանդուխքների կենտրոնում երկաց մի
քուրմ՝ գլխից մինչև ոտք ծածկուած սպիտակ զգես-
տով. երեսի քողը երկու մասի էր բաժանուում նրա գա-
գաթի վրայից: Երկու նոր քուրմեր եկան բռնելու
այն երկուսի տեղը, որոնք կանգնած էին անկիւննե-
րումը. այս երկուսի կուրծքերը վերևից մինչև կէսը
մերկ էին և մարմինների մնացած մասը ծածկուած էր
սպիտակ և նօսր զգեստով: Միևնոյն ժամանակ՝ մի
քուրմ, որ նստած էր սանդուխքի ստորոտում, սկսեց
նուագել մի հանդիսաւոր եղանակ մի երկար և հոգմա-
նուագ գործիքի վրայ: Սանդուխքների կէս ճանապար-
հին կանգնած էր մի ուրիշ քուրմ, մէկ ձեռքում բռնա-
ծ մի գրական պատկ և միւս ձեռքում մի սպիտակ
գաւազան. մինչդեռ չքնդ Խրիսը (որ մի թռչուն էր
նաւերուած եգիպտական պաշտամունքների), որպէս թէ

պահելու համար այդ արևելյան ծիսակատարության նկարչական տեսարանը, պատից լուռ նայում էր հանդիսի վրայ կամ ճեմում էր սանդուխքի տարբեր մեղանի կողքին։

Այդ մեղանի մոտ այժմ կանգնած էր զոհամատույց քուրմը։

Մինչդեռ քուրմերը քննում էին զոհերի ազիքները, Արրակի կերպարանքը կորցրեց բոլոր իր խիստ պաղությունը և նրա ուշադրությունը կարծես բարեպաշտ անձկությամբ լարուած էր,—պատրաստ դուարթանալու և ուրախանալու, եթէ նշանները նպաստաւոր համարուին։ Կրակը սկսեց վայլուն և պայծառ բոցերով լափել զոհի արբազան մասը, զմուռսի և կնարուկի հոտ մէջ։ Այդ ժամանակ մի մեանգլային լռութիւն տիրեց մըրմընջող ամբոխի վրայ, և քուրմերը սկսեցին հատաքուել Յեղլայի չուրջը. մի ուրիշ քուրմ, բոլորվին մերկ և մի չորի կոր վահճած իր մարմնի միջին մասի չուրջը, դուրս թռաւ և պարելով ու վայրենի չարժուններով մի պատասխան էր աղերսում դիցուհուց։ Վերջապէս ուժասպառ լինելով՝ նա դադարեց, և մի խուլ մրմնջիւն լսուեց արձանի միջից, յետոյ արձանի դլուխը չարժուեց, շրթունքները բացուեցին և մի խոր ձայն արտասանեց այս խորհրդաւոր բառերը։

Կան ալիքներ ձիւերի պէս,
Որ զարկւում են և դոռում,
Կան դամբաններ պատրաստ փորուած
Ձեր նեբքևի ժայռերում։
Ադազայի ճամբի վրայ
Կան վառնդի դաւերը,

Բայց օրհնեալ են ահեղ ժամին
Ձեր ուղարկած նաւերը։

Ձայնը լռեց. ամբոխը սկսեց աւելի ազատ չունչ առնել. վաճառականները սկսեցին նայել միմեանց երեսին։ «Ի՞նչ կարող է աւելի պարզ լինել, քան այդ», մըրմընջաց Դիոմեդ. «տեղորիկ պիտի պատահի ծովում, ինչպէս չաճախ պատահում է աշնան սկզբում, բայց մեր նաւերը անվտանգ պիտի մնան։ Ո՛վ բարեգութ Խիտ»։

«Յաւիտեան թող փառաւորուի աստուածուհու անունը», ասացին վաճառականները. «ինչ կարող է աւելի նուազ երկիմաստ լինել՝ քան նրա նախազուշակութիւնները»։

Քրմապետը բարձրացնելով իր մէկ ձեռքը ի նշան լռութեան (որովհետև այստեղ Խիտի պաշտամունքը պահանջում էր այն, ինչ որ անկարելի էր զուարճասէր Պոմպէյցիների համար նոցա ձայնական օրգանների չափազանց զործածութեան պատճառով) թափեց իր գինեձոնը սեղանի վրայ, և մի կարճ վերջնական աղօթքից յետոյ արարողութիւնը վերջացաւ ու ժողովուրդը ցրիւ եկաւ։ Տակաւին՝ քանի որ ամբոխը սփռւում էր այս և այն կողմ, եպիսկոպոսին կանդնած էր վանդակապատի մօտ և, երբ որ սաճարը բաւական դատարկուեց, քուրմերից մէկը մօտեցաւ ու չատ մտերմական ձևով ողջունեց նրան։

Քուրմի կերպարանքը վերին աստիճանի անհամակրելի էր. նրա ածիլուած գանգը այնքան ցած էր և այնքան նեղ ճակատով, որ չատ մօտենում էր աֆրիկացի բարբարոսների գանգերի կազմութեան, բայց քունքերի մօտ, այն օրգանի մէջ, որ ստացականութիւն են

անուանում արդի մի գիտություն *) աշակերտները (գիտությունն, որ նոր է անուանվել, բայց չատ լավ ծանոթ էր հներին, ինչպես նույա քանդակագործությունը մեզ ցույց է տալիս), երկու անագին ցցուած քներ ունէր աշակերտում էին արդէն ձեւ գլուխը. նրա մարմինը հաւասարած էր ուղիների չափը և իւր խոր ու անթիւ գծերով կազմում էր սարսափելի կնճիռներ,—աչքերը՝ սև և փոքրիկ՝ պատում էին ոզոոր և դեղին բազմակնների մէջ,—քիթը, կարճ բայց կոշտ, լայնացած էր անցքերի մօտ ինչպես մի սատիրի քիթ,—հատ և դժգոյն շրթունքները, ծնօտների ցցուած ոսկորները, կապուտակ և անորոշ գոյները, որոնք միմեանց յաջորդում էին նրա մազագործուածքի մորթի վրայ, լրացնում էին մի կերպարանք, որին ոչ ոք չէր կարող նայել առանց դողդոջի և քիչերը կարող էին նայել առանց սարսափի և անվստահութեան. ինչ որ էլ լինէին նրա մտքի ցանկութիւնները, նրա ամառնական կազմուածքը լաւ յարմարուած էր այդ վախերը իրագործելու. կոկորդի բարակ մկանունքը, լայն կուրծքը, ջղային ձեռքերը և նիհար բարակ թևերը, որոնք մինչև արմունկները մերկացած էին, ցոյց էին տալիս մի կազմուածք, որ ընդունակ էր թէ մեծ ներգործական աշխատութեան և թէ մեծ կրաւորական չարչարութեան։

«Վալենտա», ասաց եղբայրացին այս հնչուղ քարոզին, «դու չատ կատարելագործել ես արձանի ձուլումը իմ խորհուրդս հետևելով, և քո բանաստեղծութիւնները աքանչելի են։ Միչա լաւ գուշակութիւններ, բացի այն դէպքերից, երբ անկարելի է, որ լաւն իրագործուի»։

«Բայց դրանից», աւելացրեց Վալենտա, «մեզ վտ-

*) Գանգրաբանութիւն։

թարիկ պատահի և անիծեալ ծառերը կոտրանէ, մինչ մենք չենք գուշակած այդ բանը. ծառերը կարող են օրհնուած լինել հանգստանալու համար—հանգստութիւն է պահպանում ծառերը Եդեմեան ծովի մէջ կամ գէթ այդպէս է ասում Հարացիտասը. արդեօք նա կարող է ծովի երեսին ապրելի հանգիստ լինել՝ քան նրա յատակում»։

«Իրաւունք ունիս, Վալենտա. երանի թէ Ապեկիդէս քո իմաստութիւնից մի գաս առած լինէր։ Բայց ես ուզում եմ խորհրդակցել քո հետ նրա և ուրիշ խնդիրների մասին. դուք կարող էք ինձ առաջնորդել դէպի ձեր նուազ արբշռան սենեակները»։

«Անտարակոյս», պատասխանեց քուրմը, առաջ ընկնելով և մտնելով այն սենեակներից մէկը, որոնք չինուած էին բայց դրան չափը։ Նոքա նստեցին մի փոքրիկ սեղանի առջև, որի վրայ դրուած էին մրգեղէններ, հաւկիթներ, զանազան տեսակ պաղ մսեղէններ, սրուակներ՝ լի սքանչելի գինիով։ Մինչդեռ նոքա ճաշակում էին, մի վարպետ քաշուած էր դրան առջև՝ թագցնելով նրանց դրսի մարդկանց հետաքրքրութիւնից. այս վարպետը իւր բարակութեամբ նմանէր ծառայում էր նրանց զգուշացնելու, որ կամ կանայ խօսեն և կամ զազանիքներ չը խօսեն. նոքա ընտրեցին առաջինը։

«Դու գիտես», ասաց Արբակ, մի ձայնով, որ հազիւ չափում էր օդը, այնքան փափուկ և ներքնային էին նրա չեչաները, «որ միչտ իմ զգուշութիւն է եղել երիտասարդներին յայտնել։ Նրանց դիւրաբեկ և չկազմուած մտքերից ես կարողանում եմ չինել իմ ամենից յարմար դրծիքները։ Ես ծռում եմ, ես թևքում եմ և ուզածիս պէս կազապարում եմ նրանց։ Զափահասներից ես միայն չինում եմ հետևորդներ կամ ծառաներ. կանանցից…

«Սիրուհիներ», ասաց Կալենուս, այն ինչ մի զարհուրելի ժպիտ խաղում էր նրա անախորժ կերպարանքի վրայ։

«Այո, ես չեմ ծածկում այդ բանը. կինն է իմ գլխաւոր նպատակը, իմ հոգուս ամենամեծ վախճանը։ Ինչպէս ուրիշները կերակրում են ոչխարին սպանելու համար, նոյնպէս ես սիրում եմ իմ ձեռքով մեծացնել իմ զուարճութեանս առարկաներին։ Ես սիրում եմ կրթել նրանց, նոցա մտքերը հասունացնել, բանալ նոցա թաքուն կրքերի անուշ կոկոնը, որպէս զի պատրաստ իմ ճաշակիս յարմար պատրաստուի։ Ես զգում եմ հասունացած և արդէն պատրաստ կանանոցից. այն վախճանի և անդիտակից յառաջացման մէջ, որ անմեղութիւնը զարծում է դէպի ցանկութիւնը, ես դնում եմ սիրոյ ճշմարիտ հրապոյրը. այս ձևով է, որ ես խորամանկում եմ յափրացումը. ուրիշների թարմութեան հետ չփուելով, ես պահպանում եմ իմ զգայմունքներիս թարմութիւնը։ Իմ զոհերիս երիտասարդ սրտերից ես արտասանում եմ բաղադրութիւնները այն կախարդի, որի մէջ ինքս ինձ վերստին երիտասարդ եմ ձևանում։ Բայց բաւական է այսչափը սրա մասին, դառնանք դէպի մեր խնդիրը։ Դու պիտես, որ Նէապօլսում մի քանի ժամանակ առաջ ես հանդիպեցի Իօնէլին և Ալէկսիդէսին, որոնք նոյն ծնողների զաւակներ են։ Նոցա ծնողները, որոնք ինձ ճանաչում էին և յարգում, իրենց մահուան ժամանակ ինձ նոցա խնամակալը կարգեցին։ Ես անուշադիր չէի դէպի իմ սանները։ Երիտասարդը, մեղմ և ընտելացած բնաւորութեամբ, չուռում առացաւ ապատրուքների այն դրոշմը, որ ես ուզում էի դնել նրա մտքի վրայ։ Կնոջից վատ, ես սիրում եմ իմ հալածիչիս հիւանդագին ցասումները. ես սիրում եմ վառ պահել և տարածել հեռաւոր երկիրները (ուր՝ կարելի է՝ դեռ տպրում են նրա գաղթականները) նրա մութ և միստիկական դաւանութիւնները։ Կարելի է, մինչդեռ ես ծառայութիւն եմ մատուցանում աստուածներին, ինձ մի հաճոյք է պատճառում մարդկութիւնը մոլորեցնել։ Ալէկսիդէսին ես սովորեցրի Իսիսի խորհրդաւոր հաւատքը։ Ես բացատրեցի նրան այն վեհ ալլեգորութիւններից մի քանիսը, որոնք թագնուած են նրա պաշտամունքի մէջ։ Ես բորբոքեցի նրա հոգու մէջ (որ առանձին կերպով ընդունակ է կրօնական խանդով բոցավառուելու) այն ոգևորութիւնը, որ ծնում են երևակայութիւնը և հաւատքը միասին։ Ես նրան դրեցի ձեր մէջ, նա ձեզանից մէկն է հիմա»։

«Այդպէս է», ասաց Կալենուս. «բայց այդպէս բորբոքելով նրա հաւատքը՝ դու զրկել ես նրան իմաստութիւնից։ Նա ապրատիահար է եղած, որ այլ ևս խաբուած չէ. մեր իմաստուն պատրանքները, մեր խօսող արձանները և գաղտնի սանդուխքները արտմեցնում են նրան և վրդովեցնում. նա նիհարում է, նա հալումաշ է լինում. նա ինքն իրեն խօսում է, գառանգում է. նա չէ ուզում մասնակցել մեր արարողութիւններին։ Նա խառնուում է այնպիսի ընկերութիւնների մէջ, ուր գտնում են այն նոր ու անաստուած կրօնքի հետևողները, և մեր գաւիրներին անուանում է նեղչնչուածներ այն չար ոգուց, որի մասին խօսում է արևելեան աստղութիւնը։ Մեր գաւիրները, ասաց, մենք գիտենք ու մեր նեղչնչութիւնը կայ նոցա մէջ»։

«Ձիշդ հէնց այդ բանից ես վախենում էի», ասաց

Արթակ մռայլոտ եղանակով. «վերջին անգամ, երբ ես տեսայ նրան, նա մի քանի նախասենեակներ արեց ինձ։ Վերջերս նա ինձանից խույս է տալիս. ես պետք է գտնեմ նրան, ես պետք է չարաշահեմ իմ դասերը, ես պետք է առաջնորդեմ նրան խնամատարության արբանյակ—արբանյակացը։ Ես պետք է սովորեցնեմ նրան, որ արբազնության երկու ասոլեան կայ—առաջինը Հատատ և երկրորդը Պատրանք. առաջինը ամլիկների համար և երկրորդը պետուններին»։

«Ես երբեք առաջինը չեմ ունեցած», ասաց Կալինուս, «և ոչ էլ գոռ, կարծում եմ, իմ սիրելի Արթակ»։

«Դու սխալվում ես», պատասխանեց եպիսկոպոսին լուրջ կերպարանքով։ «Ես այս բոպեին էլ հատատում եմ (ոչ նրան, ինչպես սովորեցնում եմ, այլ նրան, ինչպես չեմ սովորեցնում). բնությունը այնպիսի արբանյակներ ունի, որոնց մասին ես ոչ կարող էի և ոչ կ'ուզեի մարդկանց համազումը վռնդել։ Ես հատատում եմ իմ պետությունը և գա ինձ բացատրել է... բայց աչքիդ թող կենան։ Այժմ գտնենք պետի աչքի աչքերն և աչքի հրապուրիչ նիստեր։ Եվ ես Ասկեպիոսի վերաբերությամբ այդպես գործադրեցի իմ նպատակը, ինչ էր իմ պետը Իսնէի վերաբերությամբ։ Դու արդեն պիտես, որ ես նրան ընտրած էի իմ թագուհին լինելու—իմ հարսը—իմ սրտիս Խնայը։ Մինչ այն օրը, որ նրան տեսայ, ես ինքս չգիտեի թե որ ատելյան սիրելու ընդունակ էր իմ բնությունը»։

«Ես հազարավոր չքնաղներից լսած եմ, որ նա մի երկրորդ Հելենէ է», ասաց Կալինուս, ծծելով իւր չերմանքները,—բայց դժուար էր վճռել՝ պինու համար էր այդ, թե այդ պեղեցկության։

«Ախ, նա մի այնպիսի պեղեցկություն ունի, որից գարձրը Յունաստանն անգամ ցարդ չէ արտագրել», պատասխանեց Արթակ։ «Բայց այդ չէ բոլորը. նա մի հոգի ունի, որ արժանի է իմ հոգուս զուգուելու։ Նա մի հանճար ունի, որ երբէք իգական սեռը չէ ունեցած, մի հանճար՝ խորաթափանց, չլացուցիչ և յանդուգն։ Բանասաեղծությունը հասած է նրա չքնաղներից ինքնաբերաբար։ Արտասանիր որևիցե ճշմարտություն, և որքան էլ կինճատ կամ խոր լինի դա, իսկույն նրա միտքը ըմբռնում և տիրապետում է դրան։ Նրա երևակայությունը և նրա բանականությունը հակընդդեմ չեն միմեանց, այլ ներդաշնակությամբ ուղղում են նրա ընթացքը, ինչպես քամիները և ալիքները քշում տանում են մի սիրահեմ նաւ։ Այս բոլորի հետ նա միացնում է մտքի մի ցանդուգն անկախություն. նա կարող է միանգամ գեմ գնել ամբողջ աշխարհին. նա կարող է լինել նույնչափ քաջանիրաս, որչափ քնքուշ և հլու. այս է այն բնաւորությունը, որ ես փնտռած եմ կնոջ մեջ բոլոր իմ կեանքիս ընթացքում և ցարդ չեմ գտած։ Իսնէն պետք է իմ լինի։ Նրա մեջ ես երկու կիրք ունիմ յագեցնելու։ Ես փափագում եմ վայելել մտքի պեղեցկությունը, ինչպես նաև կազմի»։

«Ուրեմն նա դեռ քոնը չէ», ասաց քուրմը։

«Ո՛չ. նա սիրում է ինձ, բայց ինչպես մի բարեկամի. նա ինձ սիրում է միայն իւր մտքով։ Նա երևակայում է իմ մեջ տեսնել այն չնչին առաքինությունները, որոնց ես արհամարհում եմ ամենի խոր առաքինության։ Բայց դեռ ականջ դիր նրա պատմությանը։ Գալը ու եղբայրը երևոտասարդ էին ու հարուստ. Իսնէն հպարտ է և փառասեր. նա հպարտ է իւր հանճարի վրայ,

իւր բանաստեղծութեան հմայքին, իւր թովիչ խօսակցութեան վրայ։ Երբ որ նրա եղբայրը թողեց լինել և մտաւ Յիւր առաքելը, նա էլ անդադրելուց Պօմպէյ, նրան մօտիկ լինելու համար։ Նա մարդկանց թոյլ է տուել ծանօթանալ իւր տաղանդների հետ։ Նա խումբ-խումբ մարդկանց հրաւիրում է իւր հանդէսներին. նրա ձայնը կախարդում է նրանց, նրա բանաստեղծութիւնը յաղթանակում է։ Նա հրճւում է, երբ մարդիկ մատծում են, թէ ինքը Երիննալի յաջորդն է»։

«Կամ Սաֆֆօյինը»։

«Բայց մի Սաֆֆօ՝ առանց սիրոյ։ Ես քաջալերում էի նրան իւր այս յանդուգն ասպարէզի մէջ, իւր մտապարծութիւնը և զուարճասիրութիւնը յագեցնելու մէջ։ Ես ուզում էի նրան խորասուզել այս հեշտասէր քաղաքի զեղխութիւնների մէջ։ Միա դիր, Կալենուս։ Ես ուզում էի թուլացնել նրա մաքի ջիղերը,—դա չափազանց մաքուր էր սառնալու համար այն չունչը, որ ես վախազում էի ոչ միայն փչել նրա մաքի հայելու երեսին, այլ այնպէս անել, որ այրելով ուտէ նրան։ Ես ուզում էի, որ նա չլսպասուած ունայնասէր, փուչ և անմիտ սիրահարներով (սիրահարներ, որոնց նրա բնաւորութիւնը չէ կարող չարհամարհել), որպէս զի նա զգայ սիրոյ պակասութիւնը։ Յետոյ Թուլութեան այն վախուկ ժամանակամիջոցներում, որոնք սովորաբար յաջորդում են մտաւոր զրգռումներին, ես կարող եմ զարձել իմ հմայքի ոտանը, բորբոքել նրա հետաքրքրութիւնը, հրապուրել նրա կիրքերը և սիրահատել նրա սրտին, որովհետև ոչ երևակայութիւնը, ոչ զեղեցկութիւնը, ոչ զուարճասիրութիւնը կարող է թովել Խօնէին. ամենից առաջ պէտք է չահել նրա երևակայութիւնը, և Արտակի ամբողջ կեանքը ներկայացնում է մի անընդհատ յաղթութիւն այդ աեսակ երևակայութիւնների վրայ»։

«Ուրեմն դու ոչ մի երկիւղ չունես քո հակառակորդներից։ Խօսակցի ուղերքը չատ հմուտ են իրենց սիրել տալու արուեստի մէջ»։

«Ամենևին։ Նրա լուսնական հոգին արհամարհում է բարբարոս հոմանեցուն, և նա ինքն իրեն ծաղրալի պիտի լինէր, եթէ մտածէր անգամ սիրել մէկին, որ պատկանում է այդ բախտախնդիր ցեղին»։

«Բայց դու եղիպտացի ես, յոյն չես»։

«Եղիպտոսը», պատասխանեց Արբակ, «Աֆէնքի մայրն է։ Նրա պաշտպանը, Մինեռվան, մեր աստուածուհին է և նրա հիմնադիրը Կեկրոպ՝ եղիպտական Սաիսից մի փախստական էր։ Այս բաները ես արդէն սովրեցրել եմ նրան, և նա իմ արևանց մէջ յարգում է աչխարհիս ամենաստուերին արքայացեղի արիւնը։ Այնուամենայնիվ ես կը խոստովանեմ, որ վերջերս կասկածներ անցել են իմ մաքից։ Նա սովրականից աւելի լուռ է, նա սիրում է մելամաղձիկ և արտացուցիչ երաժշտութիւնը. նա հառաչում է առանց արտաքին մի պատճառի։ Սոքա կարող են լինել սիրոյ սկզբնաւորութիւնը կամ սիրոյ չզոյութիւնը։ Ամենայն դէպքում, ժամանակը հասել է, որ ես սկսեմ իմ ներգործութիւններս նրա երևակայութեան և նրա սրտի վրայ, որպէսզի եթէ սկսել է սիրել, սիրոյ հոսանքը զարձնեմ դէպի ինձ, և եթէ վախազում է սիրել իմ մէջ զարթեցնեմ նրա սէրը։ Հէնց այդ պատճառով եմ այժմ եկած քո մօտ»։

«Ե՞ւ ինչ կանի մէջ կարող եմ քեզ օգնել»։

«Ես ուզում եմ նրան հրաւիրել իմ տունը. ես ուզում եմ չլացնել, չտարեցնել, պրպտել նրա զգայարանք-

նները։ Մեր արեւնառները, որոնցով Եղիսաւոսը կրթում էր իւր երիտասարդ նորընծաներին, պէտք է գործի դրուին և կրօնքի միաւէրների *) քոզի տակից ևս կը բառնամ նրա աչքի սիրուց գաղտնիքները»։

«Ա՛, հիմա հասկանում եմ,— այն հեշտալի հանդէսներից մէկը, որոնց մենք, չնայելով մեր ուխտերին՝ չարքաշութեամբ և ժուժկալութեամբ ապրելու, մենք, քո Խախի քաբոները... մասնակցած ենք քո տանը»։

«Ո՛չ, ո՛չ, դու կարծում ես, որ նրա մաքուր աչքերը բաւական հասունացած են այդպիսի մի տեսարանի հանդիսատես լինելու համար։ Ո՛չ. այլ նախ մենք պէտք է մեր որոգայթի մէջ ձգենք նրա եղբօրը, որ աւելի դիւրին գործ է։ Լսիր ինձ, մինչդեռ ես կը բացատրեմ իմ հրահանգները»։

Գլուխ Ը.

Աւելի տեղեկութիւն ծագկավաճառ աղջկայ մասին.—Սիրոյ յաղաղիմութիւնը։

Արեւի զուարթ ճառագայթները ընկած էին Գլոկուսի տան այն գեղեցիկ սենեակի մէջ, որ, ինչպէս առաջ ասացի, այժմ կոչւում է «Լեղալի սենեակը»։ Աւետաւետան ճառագայթները մտել էին սենեակի մէջ մի չարք վոքրիկ պատուհաններից, որոնք բացուած էին սենեակի աւելի բարձր մասում, և այն դռնից, որ բացւում էր դէպի պարտէզը. այդ պարտէզը՝ հարուստին քաղաքների բնակիչների համար միևնոյն նշանակութիւնն ունէր,

*) Խորհրդաւոր ձևս խորհրդաւոր վարդապետութիւն։

Ծ. Թ.

ինչ որ բուսաւոցը կամ ջերմանոցը ունի մեզ համար։ Պարտէզի մեծութիւնը չարմար չէր պրօսանքի, բայց այն բազմազան և բուրալից բոյսերը, որոնցով դա լցուած էր, տալիս էին մի տեսակ մեղկութիւն այն թուլութեանը, որ այնքան սիրելի է տաք կլիմայում բնակուղներին։ Եւ այժմ մի թեթև զեփիւռ, սառնով մօտակայ ծովից, սենեակը լցրեց ծաղիկների անուշահոտութեամբ. սենեակի պատերը մրցում էին ծաղիկների ճոխ և վառվռուն գոյների հետ։ Ի բաց առեալ սենեակի գոհարը—այսինքն Լեղալի և Տիդղարասի պատկերը—ամեն մի որմի կեդրոնում նկարուած էին ուրիշ նկարներ ամենանուրբ զեղեցկութեամբ։ Մէկ տեղ կարելի էր տեսնել Կուպիդոնին, չենուած Վենուսի ծնկների վրայ։ Մի ուրիշ տեղ Ադոնիսին, որ քնած էր ծովեզերքում և ոչ մի լուր չունէր Թեսէոսի անհաւատարմութեան մասին։ Ուրախ-ուրախ ճառագայթները պարում էին աղիւսանկար յատակի և չքնաղ պատերի վրայ, բայց աւելի երջանկահաչա էին այն չողերը, որոնք թափանցել էին երիտասարդ Գլոկուսի սրտի մէջ։

«Ես վերջապէս տեսայ նրան», ասում էր նա քալելով այդ նեղ սենեակի մէջ, «ես լսեցի նրա ձայնը,— ո՛չ, ես նորից խօսեցի նրա հետ,—ես ափանջ դրեցի նրա երդի մուղիկային, և նա երգում էր վառքի և ցնծասանի մասին։ Ես զգում եմ իմ երակների այնքան երկար որոնուած կուռքը և, կիպրացի քանդակագործի նման, ես կեանք եմ ներշնչել իմ երևակայութեանս մէջ»։

Կարելի է աւելի երկար կը տևէր սիրահարուած Գլոկուսի մենախօսութիւնը, բայց այդ րոպէին մի տուեր ընկաւ սենեակի չէմքի վրայ և մի մանկամարդ, սարիքով դեռ կէս երեխայ, խանդարեց նրա տանձնութիւնը։

Նա հագած էր մի պարզ ճերմակ պարեզօտ, որ նրա վրից կ'ընտամ էր մինչև նրա ոտքի ճանները. իւր թեւի տակ նա ունէր ծաղիկներով լի մի զամբիւղ և միւս ձեռքում կրում էր մի բրոնզեայ վազ. նրա կերպարանքը աւելի կազմակերպուած էր, քան կարելի էր սպասել նրա տարիքից, բայց կառուցուածքը փափուկ էր և կանացի իւր գծերով. նրա դէմքը, առանց գեղեցիկ լինելու, գեղեցիկ էր երևում իւր արտայայտութեամբ. մի ինչ որ անուանելի մեղմութիւն և համբերութիւն կար նրա դիմագծերի մէջ. Մի համակերպուող արտմութիւն և մի անդորր համբերատարութեան արտայայտութիւն վառնել էր ժպիտը նրա շրթունքներից, բայց ոչ անուշութիւնը. մի ինչ որ երկչոտ և զգուշաւոր բան նրա քայլուածքի մէջ, մի ինչ որ թաւիշուող նայուածք նրա աչքերի մէջ՝ մատնում էին այն տառապանքը, որին նա ենթարկուած էր, բայց նրա աչքերի պարուհակների մէջ պակասաւոր ոչ մի բան չէր երևում. նոյա մելամաղձիկ բայց զսպուած լոյսը պարզ էր, անամպ և խաղաղ. «Ինձ ասացին, որ Գլոկուսը այստեղ է», ասաց նա, «կարիղ եմ մտնել»։

«Ա՛հ, իմ Նիպիա», ասաց յոյնը, «այդ դու ես։ Ես պիտէի, որ դու չէիր մերժի իմ հրաւէրը»։

«Գլոկուսն այդպէս մտածելով միայն արդարութիւն է արած ինքն իրեն», պատասխանեց Նիպիան չինեալով, «որովհետև նա միշտ բարի է եղած դէպի խեղճ կոյր աղջիկը»։

«Ո՞վ կարող է ուրիշ կերպ վերաբերուել դէպի նա», ասաց Գլոկուս փաղաքշական և մի սիրագութ եղբօր ձայնով։

Նիպիան հառաչեց և մի վայրկեան լուռ մնաց խո-

սելուց առաջ, առանց պատասխանելու նրա նկատողութեան։ «Դուք նոր էք վերադարձել»։

«Այս վեցերորդ արևն է, որ վայելում է իմ վրայ Պոմպէյում»։

«Ես դուք լաւ էք զգում ձեզ։ Ա՛հ, պէտք չկայ այդ բանը հարցնելու, որովհետև ոչ կարող է տեսնել այս աչխարհը, որ ինձ պատում են այնքան գեղեցիկ է, և հետևաբար լինել»։

«Ես լաւ եմ։ Ես դու Նիպիա—ինչպէս մեծացել ես։ Եկող տարի դու կը սկսես մտածել, թէ ինչ պատասխան պիտի տաս սիրահարներին»։

Մի երկրորդ չիկնանք երևաց Նիպիայի թուչերի վրայ, բայց այս անգամ մի խոժոռուած էլ կար դրա հետ։ «Ես ծաղիկներ եմ բերել ձեզ համար», ասաց նա, առանց պատասխանելու մի նկատողութեան, որի վրայ ինքը բարկացած էր թէպէտ, և խարխափանքով Գլոկուսի սեղանը գտնելով՝ զամբիւղը դրեց նրա վրայ. «Զանչին բաներ են, բայց թարմ»։

«Կարծես Ֆլորան ինքը բերած լինի այդ ծաղիկները ինձ համար», ասաց Գլոկուս քաղցրութեամբ. «Ես նորոգում եմ իմ ուխտը դէպի Դրացիանները՝ ոչ մի ուրիշ ծաղիկպսակ չդնել իմ գլխիս, քանի որ քո ձեռքերը կարող են այսպիսիները հիւսել ինձ համար»։

«Ես ինչպէս էք գտնում ձեր վիրիդարիումի ծաղիկները—ածում են»։

«Աքանչելի կերպով—Լարէները իրենք խնամած են նրանց»։

«Ա՛հ, այդ լուրը ինձ հաճոյք է պատճառում. ես երբ որ ժամանակ եմ ունեցել քո բացակայութեան մի-ջոցին՝ ներս եմ մտել նրանց ջուր տալու և խնամելու»։

«Ինչպէս չնորհակալ լինեմ քեզանից, չքնաղ Նի-

դիա», ասաց յոյնը։ «Գլոկուսը չէր երազում, որ նա թողել է մեկ հոգի Պոմպեյի մեջ, որ կարող էր այդքան հոգ տանել իր սիրելիներին»։

Երեխայի ձեռքը դողդողաց և նրա կուժը ելևէջներ էր գործում նրա պարեգոտի տակ։ Նա չխմեցած լեռ դարձաւ. «Ախեզակը չատ տաք է խեղճ ծաղիկների համար», ասաց նա. «այս օրն էլ անցնի և նոքա կը չորանան, որովհետև վերջերը հիւանդ եմ եղած և ինն օր է ինչ չեմ այցելած նրանց»։

«Հիւանդ ես եղած, Նիդիա, և քո թշերը աւելի դժգոյն են քան անցեալ տարի»։

«Ես յաճախ հիւանդանում եմ», ասաց կույր աղջիկը հոգեյոյզ եղանակով. «ես քանի մեծանում եմ՝ այնքան աւելի ախորժ եմ, որ կույր եմ ծնուած։ Բայց դառնանք ծաղիկներին»։ Այս ասելով, նա մի թեթև խոնարհութիւն յարեց իր ղէմով և անցնելով պարտէզի մէջ սկսեց դրաղուիլ ծաղիկները ջրելով։

«Խեղճ Նիդիա», մտածեց Գլոկուսը, նայելով նրա եռանից. չատ դառն է քո վիճակը. դու չես կարողանում տեսնել աշխարհը, արեգակը, ովկիանոսը, աստղերը և մանաւանդ՝ դու չես կարողանում տեսնել Իօնէին»,

Այդ վերջին խօսքով նրա միտքը դարձաւ դէպի նախընթաց դիշերը և մի երկրորդ անգամ նրա մտաղմալումը խանգարուեց Գլոկուսի մտնելովը։ Նա թէև իր զաղանիքը յայտնած էր Գլոկուսին, ասած էր թէ ինչպէս առաջին անգամ հանդիպեց Իօնէին և թէ այդ հանդիպումը ինչ ազդեցութիւն է գործել իր վրայ, բայց նա այժմ մի անյաղթելի ժխտամակութիւն էր զգում մինչև անգամ Իօնէի անունը լսելու նրա մօտ, և այդ բանը ինքն ըստ ինքեան մի ապացոյց էր, թէ աթէնա-

ցու սէրը դէպի Իօնէն ինչքան զօրացած և ինչքան մաքրուած էր։ Նա տեսել էր կոլոսն Պոմպէյի ամենից զուարճասէր և ամենից անառակ երիտասարդների չքերնի մէջ, բայց փայլուն, մաքուր և անարատ, որ, իր դիւթիչ ազդեցութեամբ աւելի քան թէ սարսափով, յարգանք էր ազդում ամենից յանդուգնին և մինչև անգամ վոխում էր ամենից աւելի հեշտասէրի և ամենից նուազ իդէալականի բնաւորութիւնը։ Կարծես՝ նա իր մտաւորական և նոյնը հմայքով Պիրկէի առասպելարանութիւնը հակառակ կողմն էր դարձրել, անառաւներին մարդիկ չինելով։ Նոքա, որոնք չէին կարողանում հասկանալ նրա հոգին, իդէալական էին դառնում նրա զիղեկութեան կախարդութեամբ. նոքա, որոնք բանաստեղծութեան ընդունակ սիրտ չունէին, զէթ ականջ ունէին լսելու նրա ձայնի անուշ ներդաշնակութիւնը։ Տեսնելով նրան այդպիսի մի չքնաղի մէջ և նկատելով, որ նա ամեն բան վայելեցնում և արբացնում է իր ներկայութեամբ, Գլոկուս՝ առաջին անգամը լինելով՝ զգաց իր բնաւորութեան ազնուութիւնը, նա զգաց թէ ինչքան անարժան են եղած իր ընկերները և իր զբաղմունքը՝ իր երազների կիսատուն։ Կարծես՝ մի քօղ յանկարծ ցած ընկաւ նրա աչքերի առջևից. նա տեսաւ այն անհուն հեռաւորութիւնը, որ կար իր և իր ընկերների միջև, հեռաւորութիւն, որ մինչև այժմ թաղնուած էր իր զուարճասիրութեան խաբուսիկ մշուշով։ Նա աւելի մաքուր զարձաւ այն քաջութեան դիտակցութեամբ, որով խորհում էր Իօնէին հասնել։ Նա զգաց, որ այնուհետև իրեն վիճակուած էր նայել դէպի վեր և առաջնել։ Նա այլ ևս չէր կարողանում արտասանել այդ անունը չատյա և դանիկ մարդկանց չրջանում. նրա ե-

ուսանողն երեակայութեան համար՝ այդ անունը մի սքանչացուցիչ և աստուածային բան էր։ Իսկին այլ ևս այն պզտիկ աղջիկը չէր, որին նա մի անգամ տեսած էր և միշտ լիշում էր։ Նա արդէն նրա հոգու սիրուհին, աստուածուհին էր։ Այլ չէ ունեցած այս պայծառ վարձը։ Եթէ դա չես ունեցած, ուրեմն դա երբէք չես սիրած։

Ոտաի երբոր Պլոդիուսը խօսում էր Իսկիի դպրոցականութեան մասին արուեստական պերճաբանութեամբ, Պլոկուսը միայն բարկանում և զզում էր, որ նրա չրխկունքները լանդգնում էին գովասանել Իսկիին. նա սրտի պատասխաններ էր տալիս և հոսանքային մտածում էր, որ նրա սէրը, վտանգակ ասելացած լինելու, բժշկուել էր։ Պլոդիուսը չատ չէր ախտասում այդ բանին, որովհետև նա վստահում էր, որ Պլոկուսը ամուսնանալ մի ասելի հարուստ աղջկայ հետ,—զոր օրինակ հարուստ Պիսմէնի աղջկայ հետ, որի ոսկիները, նա մտածում էր, դժուար բան չէր լինի խաղամոլի համար անզգամանել իր արտասուների մէջ։ Նոցա խօսակցութիւնը չէր հասում իր ժողովրական սահմանութեամբ և Պլոդիուս դուրս դնաց թէ չէ, Պլոկուս ճանապարհ ընկաւ դէպի Իսկիի տունը։ Շէմքից անցնելու միջոցին նա նորից հանդիպեց Նիդիային, որ վերջացրել էր իր քնքոյշ աշխատութիւնը։ Աղջիկն անմիջապէս ճանաչեց նրա տաքի ձայնը։

«Շատ վաղ ես դուրս գնում», ասաց նա։

«Այո, որովհետև Համպանիայի երկինքը լանդգնում է այն ծովերին, որոնք անուշապիր են դէպի նրան»։

«Ա՛հ, երանի թէ ես էլ կարողանայի տեսնել այդ երկինքը», մրմնջաց կոյր աղջիկը. բայց այնքան ցած, որ Պլոկուսը չլսեց այդ տրտունջը։

Թեսալոնիկին մի քանի րոպէ էլ կանգ առած մնաց

չմտքին և լսում մի երկար գասագանում, որը նա գործ էր ածում բուսական աշխոյժութեամբ, գնաց դէպի տունը։ Նա չատում դարձաւ ասելի չքնդ փողոցներից և մտաւ քաղաքի մի մասը, ուր չատ չէին յաճախում լուրջ և պատուաւոր մարդիկ։ Բայց նա իրեն չրջապատող այդ տար և կոպիտ մոլութիւններից անվնաս էր մնացած, իր տարտախտութեան չնորհիւ։ Այդ ժամին փողոցները հանդարտ էին ու լուռ և նրա դեռատես ականջը չէր պղծում անլսելս և չես ընկած խորշերից եկած ձայներով, խորշեր՝ որոնց աղջիկց նա անցնում էր համբերատար և ախորժ։

Նա բախեց մի պինեատն դուռը. դուռը բացուեց և մի կոպիտ ձայն հրամայեց նրան իր դրամը հաշիւը տալ։ Նախ քան աղջիկը կարողացաւ պատասխանել, մի ուրիշ՝ նուազ ահարիկ ձայն ասաց.

«Խոտորանոք մի լինիր այդ փոքրիկ հաշիւների մասին, Բուրրո, այս աղջկայ ձայնը չատով հարկաւոր կը լինի մեր հարուստ բարեկամի խնջոյքներին և, ինչպէս պիտես, նա բաւական լաւ է վճարում իր սոխակների համար»։

«Ո՛չ, լսես ունիմ որ ոչ», գոչեց Նիդիան դղրդոցով. «ես աստուծանից մինչև երեկոյ կը մտրամ, բայց ինձ այնտեղ մի ուղարկեցէք»։

«Բայց ինչու», ասաց միևնոյն ձայնը։

«Որովհետև... որովհետև ես մատաղտաս եմ և լաւ տանիից, և այն կանայք, որոնց հանդիպում եմ այնտեղ, չարմար ընկերուհիներ չեն այնպիսի աղջկայ համար...»

«Որ Բուրրոի տան տարուկն է», պատասխանեց նոյն ձայնը հեգնութեամբ և կոպիտ ծիծաղով։

Թևաթափեին ցած դրեց ծպտիկները և երեսը լիճին-ցավ ձեռքերին՝ լուռ արտասուեց։

Նոյն միջոցին Վլտկուսը հասաւ չքնաղ Նապոլիսանի առանը։ Իօնէն չդիտցաւ իր գաժիչնեւրով, որոնք գործում էին։ Նրա գնարը դրուած էր նրա մօտ։ Իօնէն ինքը արտասուոտ կերպով ծոյլ էր, կարելի է ասել, արտասուոտ կերպով մտախոհ էր այդ օրը։ Վլտկուս նրան աւելի վեհերիկ գտաւ առաւօտեան լոյսով և նրա պարզ չրջագգեստի մէջ, քան ինչ տեսած էր դահլիճներում զիշերը ճրագների լոյսով և թանկագին զարդարուած. ոչ էլ նուազ վեհերիկ գտաւ նրան այն ժամին պատճառով, որ սրտուտած էր նրա երեսի թափանցիկ երանգների վրայ, ոչ էլ նուազ վեհերիկ՝ այն չիկնանքի պատճառով, որ զարկեց նրա այտերին, երբ լոյնը մօտեցաւ։ Նա չաղաքրքիւ տաղտ էր, բայց չաղաքրքրութիւնը զամում էր նրա չրթունքներին, երբ նա խոսում էր Իօնէի հետ։ Նա զգում էր, որ առօրեայ կը լինէր Իօնէին, եթէ լ ե զ ո ւ ո վ մատուցանէր նրան մի պաշտամունք, որ ա մ ե ն մ ի ն ա յ ս ա ծ ք ո վ յայտնում էր։ Նոքա խոսում էին Յունաստանի մասին. սա մի նիւթ էր, որի մասին Իօնէն պերազատում էր լսել քան խոսել. սա մի նիւթ էր, որի մասին մի լոյն կարող էր լսխանուս պերճախօսել։ Վլտկուս նկարագրում էր ձիթենիների այն արծաթամնման ծառաստանները, որոնք դեռ պճնում էին Իլիսոսի եղերքը, այն տաճարները, որոնք՝ թէև պրկուած իրենց վառքի կէսից՝ դեռ այնքան գեղեցիկ էին իրենց աւերակների դրութեան մէջ։ Նա լսա նաեց ազատ Հարմոդիուսի և Արիստոգիտոնի մեծամարմին քանդակի վրայ, հեռուսր վիշտոլիանն այն բարձունքներից,

որոնք վաթիկացնում և մի մշտչանման լոյսի մէջ են պարփակում բոլոր խոժոռ և մութ առուերները։ Նա տեսած էր բանաստեղծութեան երկիրը պատանեկութեան բանաստեղծական հասակում, ու հայրենասիրութեան զգացումը նրա մէջ խառն էր կեանքի զարնան և ծաղկալից տարիքի վիշտակների հետ։ Եւ Իօնէն լսում էր նրան, հոգնմսլուած և մտնջ. նրան աւելի սիրելի էին այդ չնչտերը, աւելի սիրելի այդ նկարագրութիւնները, քան իր անմիս պաշտողների չռայլած չողոքութիւնները։ Միմէ մեղք էր սիրել մի հայրենակցի. նա սիրում էր Աթենքը Վլտկուսի մէջ,—իր ազգի աստուածները, իր երազների երկիրը այդ մարդու բերանով խոսում էին նրա հետ։ Այդ ժամանակուանից նոքա ամեն օր տեսակցում էին։ Երեկոյեան զովին նոքա միասին նաւակով զբօսնում էին խաղաղ ծովի երեսին։ Վիշերները նոքա նորից հանդիպում էին Իօնէի դահլիճներում և սրահներում։ Նոցա սէրը յանկարծական էր, բայց զօրեղ. զա լցնում էր նոցա կեանքի ամբողջ ազբիւրները։ Սէրա, ուզեղ, զգայարանք, երեւակայութիւն, բոլորն էլ զրա պաշտօնեաները և քաւիմներն էին։ Ինչպէս երբ վերցնում էք մի որեէ արդելը երկու առարկաների միջանդից, որոնք փոխադարձաբար քաշում են միմեանց, այնպէս նոքա հանդիպելին և միացան. նոքա միայն զարմանում էին, թէ ինչպէս այդքան ժամանակ ապրած էին առանց միմեանց ճանաչելու։ Եւ նոցա սէրը բնական էր։ Երիտասարդ, գեղեցիկ և տաղանդաւոր, ծագումով նոյն, հոգով նոյն, նոցա նոյն իսկ միացման մէջ կար մի բանաստեղծութիւն։ Նոքա երեւակայում էին, որ երկինքը ժպտում է նոցա սիրոյ վրայ։ Ինչպէս հալածուած մարդը ապաստան է փնտռում խորանի մէջ, նոյն-

պէս նոքա հաւատում էին, որ միայն իրենց սիրոյ սեղանի առջև կարող էին ապահովութիւն գտնել աշխարհի դաւերից։ Նոքա այդ սեղանը սիրում էին ծաղիկներով, բայց չգիտէին թէ ինչ օձեր կան պառկած նոցա տակ։

Մի երեկոյ, հինգերորդ երեկոն նոցա Պոմպէյում առաջին անգամ հանդիսութիւնից լեռայ, նոքա մի խումբ ընտիր բարեկամների ընկերութեամբ վերադառնում էին մի զբօսանքից, որ արել էին ծովախորշի մէջ։ Նոցա նաւակը թեթեւութեամբ սահում էր վերջնալոյսով ոսկեզօծած ջրի երեսին. թիակների հարուածներն էին միայն լսելանում ջրի վճիտ հայելին։ Խումբի միւս անդամները ուրախ-ուրախ խօսակցում էին միմեանց հետ. Գլոկուս պառկած էր Խոնէի ոտքերի առջև և շատ մեծ տենչ ունէր չարուհուն նայել նրա երեսին, բայց չէր յանդգնում։ Խոնէն խլեց նոցա մէջ սիրոյ լռութիւնը։

«Իմ խնդիր եղբայրս», ասաց նա, հառաչելով, «վաղ մի ժամանակ, երբ նրա համար այսպիսի մի ժամանակ մեծ վայելք կը լինէր»։

«Ձեր եղբայրը», ասաց Գլոկուս. «ես նրան չեմ ճանաչ։ Այնքան միտքս ղբաղուած է եղել ձեզանով, որ ուրիշ ոչ մի բանի վրայ չեմ կարողացել մտածել. եթէ ոչ ես պիտի հարցնէի ձեզանից թէ ձեր եղբայրը չէր այն մարդը, որի հետ դուք հեռացաք, երբ ինձ հետ դուրս եկաք Միներվայի տաճարից Նէապօլիսում»։

«Հէնց նա էր»։

«Եւ նա այստեղ է»։

«Այո»։

«Պոմպէյի մէջ և միշտ ձեր մօտ չէ դանուում։ Անկարելի է»։

«Նա ուրիշ պարտականութիւններ ունի կատարելու», պատասխանեց Խոնէն արտում ձայնով. «նա Խոխի քուրմերից մէկն է»։

«Այդքան երիտասարդ և մի քուրմ, այն էլ մի քուրմուհին, որ իր օրէնքների մէջ այդքան խիստ է», ասաց տաքարիւն և ուրախասիրտ յոյնը զարմանալով և խղճալով։ «Ինչն է հրապուրել նրան այդ պաշտօնին»։

«Նա միշտ ոգևորուած և ջերմեռանդ է եղած կրօնքի և աստուածպաշտութեան մէջ և մի եզիպտացու պերճախօսութիւնը, որ մեր բարեկամն է և խնամակալը, բորբոքել է նրա մէջ մի բարեպաշտական փափագ իր կեանքը նուիրելու մեր աստուածների ամենից աւելի խորհրդաւորին։ Կարելի է նա, իր անչափ ջերմեռանդութեամբ, հէնց այդ մասնաւոր պաշտօնի խոստակեցութեան մէջ է գտել նրա մասնաւոր հրապոյրը»։

«Եւ նա չէ զղջում իր արած ընտրութեան վրայ. լոյս ունիմ, որ երջանիկ է»։

Խոնէն մի խոր հառաչ արձակեց և իր գլուխը աւելի իջեցրեց իր աչքերի վրայ։

«Երանէ թէ», ասաց նա քիչ լեռայ, «նա այդքան աճապարած չլինէր։ Կարելի է՝ այն մարդկանց պէս, որոնք չափազանց մեծ բան են ակնկալում, նա էլ չատ չուտով յուսախաբուած է»։

«Ուրեմն նա երջանիկ չէ իր նորակոչ դրութեան մէջ։ Եւ այդ եզիպտացին ինքն էլ քուրմ է. որևէ չար ունի նա այդ սրբազան խումբը մեծացնելու մէջ»։

«Ո՛չ, նրա գլխաւոր նպատակը մեր երջանկութիւնն էր։ Նա մտածում էր, որ այդ բանն անելով նա աւելացնում էր իմ եղբօր երջանկութիւնը։ Մենք որը ևնք մեծացած»։

«Իմ պէս», ասաց Գլուխս, մի խոր նշանակութիւն դնելով իւր ձայնի մէջ։ Իօնէն աչքերը կախ ձգեց և չարտասանեց.

«Ես Աբրահամը ուզում էր մեր ծնողների տեղը բռնել։ Դու պէտք է ծանօթանաս նրա հետ։ Նա սիրում է հանճարը»։

«Աբրահամ, ես նրան արդէն ճանաչում եմ. դէթ տեսնելուց խօսում ենք. բայց եթէ դու գոված չլինէիր նրան, ես որտեղից առնէի ուղի ճանաչել այդ մարդուն։ Իմ սիրտս դիւրութեամբ հակւում է դէպի իմ համամտանները։ Բայց այդ մտալ եղիսպասային, իւր ամպամած ճակատով և սառուցեալ ժպիտներով, կարծես արեւելեան խոկ տերեկոյթում է։ Կարծես կրետացի Էպիմենիդէսի նման քառասուն տարի մի անձաւում է ապրել և մի բնչ որ անբնական բան է դտնում արևի մէջ»։

«Այնուամենայնիւ, Էպիմենիդէսի նման, նա բարեսիրտ է, իմաստուն և հեզ», պատասխանեց Իօնէն։

«Ո՛հ, երջանիկ մարդ, որ արժանացել է ձեր պաշտպանութեան։ Ուրիշ ոչ մի արժանիք պէտք չէ նրան ինձ սիրելի դարձնելու համար»։

«Նրա անդորր բնաւորութիւնը, նրա պաղատելիութիւնը», ասաց Իօնէն խոյս տալով նրանից, «կարելի է հետևանքներ լինեին անցած տառապանքների յոգնութեանը, ինչպէս այս լեռը (և նա ցոյց տուաւ Վեզուվը), որ մենք տեսնում ենք հետաւորութեան մէջ մութ և անչարժ, մի ժամանակ մուցանում էր այն կրակները, որ այժմ հանգած են յաւիտեան»։

Նոքա երկուսն էլ նայում էին լերան, երբ Իօնէն արտասանեց այդ բառերը. երկնքի մնացեալ մասը ողողուած էր վարդագոյն և մեղմ լոյսով, բայց լերան գագաթի վրայ, որ բարձրացած էր ծառաստանների և ալպիների միջից (գալարութիւն՝ որ հատնում էր մինչև վերան կէսը) կախուած էր մի սև և չարագուշակ ամպ, միակ մնացյ կէսը ամպոջ տեսարանի։ Մի չանկարծական և անբացատրելի թախիծ եկաւ երկուսի վրայ էլ, մինչդեռ նոքա այսպէս նայում էին, և այն համակրութեամբ, որ սերը բաշխել էր նրանց և որով նրանց հրամայում էր միմեանց մէջ ապաստան գտնել ղպացումների ամենաթեթև տաւերի, չարիքի ամենատաշտ նախազգացութեան ժամանակ, նոցա աչքերը միանդն բոպէին հեռացան լեռնից և հանդիպեցին միմեանց՝ լցուած անբևեակալի քնքշութեամբ։ Ինչ պէտք ունէին բառերի՝ յայտնելու համար թէ միմեանց սիրում էին։

Գլուխ Զ.

Տաղիկը նորից որոգայթի մէջ է ձգում այն թռչունին, որ նոր փախած էր, և իւր ցանցերը բաց է անում մի ուրիշ գոհ որսալու։

Այս պատմութեան մէջ՝ դէպքերը այնպէս խառնուած են և հետևում են միմեանց այնպիսի արագութեամբ, ինչպէս մի դրամայի մէջ։ Ես դրում եմ մի ժամանակուայ մասին, երբ օրերը բաւական էին հատուցանելու տարիների պատշները։

Աբրակ վերջերը չատ չէր յաճախած Իօնէի տունը. իւր այցելութիւնների միջոցին էլ չէր հանդիպած Գլուխսին և գեռ ոչինչ չգիտէր այն սիրոյ մասին, որ այդքան յանկարծ բուսել էր՝ նրա և նրա նպատակների մէջ մի արգելք լինելու։ Այն չահերը, որ նա ունէր Իօնէի եղբօր հետաքրքրութեամբ, նրան սպիսել էին, դէթ մի կարճ միջոց առ-

կախ թողնել Իօնէի նկատմամբ ունեցած չահերը։ Նրա հպարտութիւնը և եսասիրութիւնը զարթնեցին և զարհուրեցին, տեսնելով այն յանկարծական փոփոխութիւնը, որ եկած էր երիտասարդի հոգու վրայ։ Նա դողում էր մի գուցէ ինքը կորցնէ մի հրա աչակերտ և Իսխար՝ մի նոր դաւաճան ապառաժար։ Ապէկիպէսը այլ ևս չէր գնում նրա մօտ, նրանից խորհուրդ հարցնելու։ Նա շատ քիչ անդամ էր տեսնում, նա խոժոռած կերպարանքով խոյս էր տալիս եպիսկոպոսից—ոչ, նա մինչև անգամ փախչում էր, երբ նրան տեսնում էր հեռուից։ Արբակի հոգին այն խիտ և զօրաւոր հոգիներից մէկն էր, որոնք սովոր են ուրիշների վրայ ակրածականել. նա կատաղում էր, որ մէկը, երբ մէկ անգամ ընկել է նրա ազդեցութեան տակ, կարողանայ դուրս պրծնել նորա ձիրանից։ Նա իր մաքի մէջ երդւում էր Ապէկիպէսին բաց չթողնել իր ձեռքից։

Այս վճիռը կայացրած իր մէջ՝ նա մի օր Իօնէի տունը երթալիս անցնում էր քաղաքի մի խիտ ծառաստանի միջից, որ ընկած էր նրա տան և Իօնէի տան ճանապարհի վրայ. մի ծառի վրայ յենուած նա նայում էր դէպի, երբ անսպասելի կերպով նրա աչքն երևաց Իսխի երիտասարդ քուրմը։

«Ապէկիպէս», ասաց նա և իր ձեռքը փաղաքշական կերպով դրեց երիտասարդի ուսին։

Քուրմը ցնցուեց. նրա առաջին բնազդումը եղաւ փախչել։

«Որդի», ասաց եպիսկոպոսին, «ինչ է պատահել քեզ, որ դու ուզում ես խոյս տալ ինձանից»։

Ապէկիպէս կանգնած էր լուռ և խոժոռադէմ. նա ցած էր ձգել իր աչքերը, նրա շրթունքները դողդողում էին և նրա կուրծքը բարձրանում և իջնում էր յուզմունքի սաստկութիւնից։

«Խօսիր ինձ հետ, բարեկամս», շարունակեց եպիսկոպոսին. «խօսիր։ Ինչ որ մի բան ճնշում է քո հոգին։ Ի՞նչ ունես յայտնելու»։

«Ոչ—ոչինչ»։

«Ես ինչու՞ հէնց ինձ հետ դու անմտերմաբար ես վարվում»։

«Որովհետև դու իմ թշնամիս ես եղած»։

«Ե՛կ խօսակցենք», ասաց Արբակ ցած ձայնով և քաշելով քուրմի գիմակալ ձեռը իր ձեռի մէջ՝ նա նրան առաջնորդեց դէպի այն նստարաններից մէկը, որոնք անդ-անդ դրուած էին ծառաստանի մէջ։ Նոքա նստեցին. մի ինչ որ համանման բան կար այդ ամպամած կերպարանքների և այդ վայրի առանձնութեան և առուների մէջ։

Ապէկիպէսը դեռ չէր անցել իր կեանքի զարտնից, այնու ամենայնիւ կարծես սարիքը նրան աւելի մաշել էր, քան եպիսկոպոսին. նրա նուրբ և կանոնաւոր կերպարանքը հիւծուած էր և անզգոն. նրա աչքերը փայլում էին մի պայծառ և տենդային բոցով. նրա կազմուածքը կորացել էր ժամանակից առաջ և նրա կանոնի ձեռքերի մէջ՝ կապտած և ուռած երակները յայտնում էին նրա թուլացած նեարդների անզօրութիւնը և տկարութիւնը։ Նրա երեսի վրայ կարելի էր տեսնել մեծ նմանութիւն Իօնէի երեսի հետ, բայց արտայայտութիւնը կատարեալ տարբեր էր այն փառասէր և ոգեկան անզգուշութիւնից, որ սփռում էր այնքան երկնային և կլասիկական մի խաղաղութիւն նրա քրոջ դէմքի վրայ։ Իօնէի մէջ՝ պետրութիւնը տեսանելի էր, բայց

ամենուած և ճնշուած. այդ բանից էր գոյանում նրա դէմքի հմայքը և ղպայնութիւնը. մարդ մի բուռն վախ էր զգում սթափեցնել մի ոգի, որ հանգիստ էր առնում, բայց քնացած չէր։ Ապէկիպէսի ամբողջ անձը յայտնում էր նրա բնաւորութեան առանձնը և կիրքը. իսկ նրա աչքերի վայրենի բոցը, նրա քունքերի ամպին լայնութիւնը՝ նրա ճակատի բարձրութեան հետ բաղդատած և շրմունքների զգլզգլուն անհանգստութիւնը պարզ ցոյց էին տալիս, որ նրա երևակայութիւնը և իղձերազգացութիւնը բռնանում և իշխում էին նրա մտաւորական ոյժերի վրայ։ Բոլոր մէջ՝ երևակայութիւնը կանգ էր առնում, հանձնելով բանաստեղծութեան ոսկեայ նպատակին. իսկ եղբօր մէջ, նուազ երջանկաբեր և նուազ ամենազարուած, դա թռիչքում էր աւելի անչափելի և աւելի օգտին անկրկնութիւնների մէջ։ Եւ այն ունակութիւնները, որոնք մեկին տալիս էին հանճար, միևնոյն ազատնում էին խելագարութիւնից։

«Դու տեսիլներ, որ ես քո թշնամին եմ եղած», տեսաց Արբակ։ «Ես գիտեմ այդ անարդար զրպարտութեան պատճառը. ես քեզ գրկել Խալխի քուրմների չրջանի մէջ, դու բարկացած ես նոցա խարդախութիւնների և խաբեութիւնների վրայ, դու մտածում ես, որ ես էլ խաբել եմ քեզ. քո հոգուդ մաքրութիւնը վիրաւորուած է. դու երևակայում ես, թէ ես էլ խաբեբայ եմ»։

«Դու դիտէիր այդ ամբարիշտ արուեստի ձևնածութիւնները», պատասխանեց Ապէկիպէս. «ինչու թագցրիր ինձանից։ Երբ դու բորբոքում էիր իմ փափագը իմ կեանքս նուիրելու այն պաշտօնին, որի պսակը ես կրում եմ, դու խօսում էիր ինձ այն սուրբ կենցաղի մասին, որ խմաստութեան նուիրուած մարդիկ վարում են, և դրա փոխարէն՝ դու ինձ ձգել ես այնպիսի տգէտ և հեշտասէր մարդկանց մի նախիրի մէջ, որոնք ոչինչ չգիտեն, եթէ ոչ ամենաչնչին նենգութիւններ. դու խօսում էիր ինձ այնպիսի մարդկանց մասին, որոնք իրենց աչխարհային զուարճութիւնները զոհում են բարձրագոյն առաքինութիւնների զարդացմանը, և դրա փոխարէն դու ինձ տուել ես այնպիսի ընկերներ, որոնք թաւալում են ամենակեղտոտ մոլութիւնների մէջ. դու խօսում էիր ինձ մարդկութեան բարի կամեցողների և լուսաւորիչների մասին և դրա փոխարէն ես տեսնում եմ խարդաւանողներ և մոլորեցուցիչներ։ Ո՛չ, խիստ տարբեր էր քո պատկերը. դու խլեցիր ինձանից երիտասարդութեան վառքը, հաւատքը դէպի առաքինութիւն և իմաստութիւն որոնելու սրբազնացուցիչ ծարաւը։ Ես երիտասարդ էի, հարուստ, եռանդուն, իմ առջև ունենալով աչխարհի ժպտուն զուարճութիւնները. ես թողեցի այդ բոլորը առանց մի հառաչանքի, ոչ, այլ բերկրութեամբ և այն ցնծութեամբ, մտածելով, որ ես թողնում եմ դրանց, որպէս զի մտնեմ երկնային գիտութեան խորհրդաստ և խրթին միաբերների մէջ, որպէս զի վայելեմ աստուածների ընկերակցութիւնը, որպէս զի հասկանամ երկնքի չարժուութիւնները և այժմ... այժմ...»

Հեկեկանքը ցնցեց քուրմի ամբողջ մարմինը և խեղդեց նրա ձայնը. նա իր ձեռքերով ծածկեց իր երեսը և արտասուքի մեծ կաթիլներ դուրս հոսելով նրա նիհար մատների արանքից՝ առատութեամբ վազում էին նրա ղեկտների վրայ։

«Ինչ որ ես խոստացայ, ես այդ կը տամ քեզ, իմ բարեկամս, իմ աչակերտս. մինչև հիմա քո առաքինութիւնը միայն փորձի էր ենթարկուում և այժմ անսում

ամ, որ դա ամենի փալանն է դուրս գալիս իր վարձից և քո նպատակասլացությունից վեր այլ ևս մի մտածիր այդ տեսակ խորհուրդների վրայ, այլ ևս մի ընկերակցիր առաքինասեր այդ տարուկների, նրա սրտին այդ տարիներին *) հետ. դու արժանի ես մտնելու սրբությունների սրբությունը։ Ես կը վկայեմ այսուհետև քո քրմությը, քո ուղեցույցը և դու, որ հիմա անիծում ես իմ բարեկամությունը, պիտի պատրես և օրհնես դրան»։ Երիտասարդը բարձրացրեց իր գլուխը և իր դարմացած և ապշած աչքերը յառեց եպիսկոպոսը երեսին։

«Ախր ինձ», չարաշահեց Աբբակ անձկալից և լուրջ ձայնով, նախ իր սուր աչքերը չորս կողմը ձգելով տեսնելու թե արդեօք միայնակ են թե ոչ։ «Եպիսկոպոսից եկաւ աշխարհի բոլոր լսմասուրությունը. Եպիսկոպոսից եկան այն նախկին և խորհրդաւոր ազդերը, որոնք ունէին գիտութեան բոլոր արուեստները և մասնորական կեանքի բոլոր պրոպրիետները։ Այո, Եպիսկոպոսից եկան դուքս և չատ առաջ քան Հռոմայեցոց հրոսակները տարածուեցին Իտալիայի դաշտերի վրայ և դէպքերի յաւիտենական շրջանով յետ մղեցին լուսաւորութիւնը դէպի բարբարոսութիւն։ Եպիսկոպոսից եկան վեհապանծ Պէրէի ծէսերը և չուքը, Պէրէի՝ որի բնակիչները իրենց հաւիտենական պարկեշտ յաղթողներին սովորեցրին ինչ որ վերամարմնած է կրօնքի մէջ և ինչ որ վսեմ առաքինապաշտութեան մէջ։ Ես ինչպէս ես կարծում, ոչ երիտասարդ, որ այդ սքանչելի Եպիսկոպոսը, այդ անմիջական ազդերի մայրը հասաւ իր մեծութեան և սաւառնեց մինչև իր խմասուրեան ամպամած դպրոցնակէտը։ Այդ բոլորը հետևանք էր մի

*) Սարիենս նշանակում է սարսուռի մէջ ծագողի

խորհրդաւոր և սուրբ քաղաքականութեան։ Բո նոր ազգերը Եպիսկոպոսից են սացել իրենց մեծութիւնը և Եպիսկոպոսը իր քաւարանից։ Իրենց մարքերի մէջ խորասուզած և անհայտով իշխանութիւն ունենալ մարդու ամենասպրի մասերի վրայ, այն է, նորա հոգու և հասարակի վրայ, Աստուծոյ այդ հին պաշտօնեաները ներշնչուեցան ամենամեծ մարքերով, որոնք երբեմն բարձրացրած են մահկանացուների մակարդակը։ Աստղերի թափառումներից, երկրի եղանակներից, մարդկութեան վախճանի կլոր և անփոփոխ շրջանակից՝ նոքա հնարեցին մի փառահեղ ալքիմիա. նոքա այդ բոլորը բացատրեցին և չօշափելի գարձրին ռամիկների համար աստուածների և աստուածուհիների նշաններով և ինչ որ իսկապէս մի կառավարութիւն էր՝ նոքա կոչեցին կրօնք։ Խմբի մի առասպել է—մի վեր թռչիր սեղիցդ. այն բանը, որի օրհնակն է Խմբի, մի իսկութիւն է, մի անմահ էութիւն, Խմբի ոչինչ չէ։ Բնութիւնը, որի ներկայացուցչն է նա, բոլոր բանների մայրն է, նա մութ է, հին, անբռնելի, երբէք ոչ մի քանի առանձնաշնորհեալների համար։ «Մահկանացուներից ոչնչ չէ բարձրացրել իմ քողը», ասում է Խմբի, որին դու պաշտում ես, բայց խմասուրները բաց թողել են այդ քողը, և մենք կանդնել ենք բնութեան մեծափառ չքնաղութեան հետ երես առ երես։ Ուրիշն քաւարանը մարդկութեան բարեբարները, լուսաւորիչներն էին. ճշմարիտ է, նոքա ձեռնածուներ էին—խարեբաններ, երբէ կ'ուզես, բայց մի քէ կարծում ես, երիտասարդ, որ նոքա կարող էին ծառայել իրենց համամանուններին, եթէ խաբած չլինէին նրանց։ Տգէտը, սուրբաքարչը, ռամիկը՝ պէտք է կուրացած իր իսկական բարիքին հասնելու համար. նա չէ հասնում

մի ճշմարտութեան, բայց նա յարգում է պատգամը։ Հոմիլ կայսրը իշխում է աշխարհի անապին և բազմազան ցեղերի վրայ և միացնում է անհամերաշխ և անմիարան տարրեր. այդ բանից դուրս է գալիս խաղաղութիւն, կանոն, օրէնք և կեանքի օրհնութիւնները։ Դու կարծում ես, թէ կայսեր անձն է, անհատն է, որ այսպէս իշխում է. ոչ, այլ այն չուքը, անը և փառահեղութիւնը, որով շրջապատուած է այդ անձնաւորութիւնը—դրա են նորա խարբերանները, նորա մոլորեցուցիչ ցնորքները։ Մեր պատգամները, մեր դուշակութիւնները, մեր ծէսերը և մեր արարողութիւններն էլ մեր թագաւորութեան միջոցներն են և մեր զօրութեան մեքենաները։ Նոքա երկուսն էլ նոյն միջոցներն են նոյն նպատակի համար, այն է մարդկութեան բարօրութիւնը և ներդաշնակութիւնը։ Դու ականջ ես դնում ինձ ժպտոյդ և ուշադիր—լոյսը սկսում է ցոլալ քո վրայ»։

Ապիկիդէս լուռ էր, բայց այն փոփոխութիւնները, որոնք արագ-արագ անցնում էին նրա արտայայտիչ երեսի վրայից՝ յայտնում էին թէ ինչ ազդեցութիւն էին գործում եգիպտացու բառերը—բառեր՝ սառն անդամ ահեղի պերճաբան դարձած այդ մարդու ձայնով, տեսքով և ձեռքով։

«Ոբեմն», շարունակեց Արբակ, «երբ մեր նեղոսեան հայրերը այս ձևով ստեղծեցին առաջին տարրերը, որոնց դոյութեամբ քաոսը կործանւում է, այսինքն այն սկզբունքը, որով ամբոխը հնազանդւում և յարգում է մի քանիսին, լուռ նոքա արտադրեցին իրենց փառաշուք և աստեղամարձ մտքերից այն խմաստութիւնը, որ այլ ևս ցնորք չէր. նոքա հնարեցին օրէնքի կանոնագիրքը, դոյութեան արուեստները և փառքերը։ Նոքա

պահանջեցին հաւատք և դրա փոխանակ տուին լուսաւորութիւն։ Արդեօք նոցա խաբեբայութիւնը մի առաքինութիւն չէր։ Հաւատա ինձ, որ եթէ աստուածային և բարեգութ որևէ մի էակ լինի այն հեռաւոր երկինքներում և նայի մեր աշխարհին, հաւանութեամբ պիտի ժպտայ այն խմաստութեան վրայ, որ այսպիսի նպատակներ է իրագործել։ Բայց դու ուզում ես, որ այդ ընդհանրութիւնները յարմարեցնեմ քեզ. ես չեմպատմեմ հնազանդել քո փափագին։ Մեր հին հաւատքի աստուածուհու սեզանները ծառայողների պէտք ունին և ծառայողներ՝ տարբեր այս կիմար և անհոգի իրերից, որոնք նմանում են զգեստ կամ ժպտալէն կախելու գամերի և կարթերի։ Ձիշիր պիթագորեան Սիքստուսի երկու խօսքերը, որոնք փոխ են առնուած Եգիպտոսի դրքերից։ «Մի խօսիր ամբոխին Աստուծոյ վրայ», և երկրորդը «Այն մարդը, որ արժանի է Աստուծոյ, մի Աստուած է մարդկանց մէջ»։ Ինչպէս որ հանճարը տուաւ Եգիպտոսի պաշտօնեաներին՝ կրօնքը, այդ կայսերութիւնը, որ վերջին դարերի ընթացքում սարսափելի անկման է հասել, նոյն կերպով հանճարը միայն կարող է վերականգնել նրա իշխանութիւնը։ Ես՝ տեսայ Ապիկիդէս, որ դու իմ դասերիս արժանի մի աշակերտ ես, ես դասդ չանձին քո մի պաշտօնեայ արժանի այն մեծ նպատակներին, որոնք դեռ կարող են իրագործուել. քո էներգիան, քո տաղանդները, քո հաւատքի սրբութիւնը, քո ողևորութեան անկեղծութիւնը, բոլորը յարմար էին այն կոչմանը, որ այնքան ստիպողաբար պահանջում է բարձր և եռանդուն յատկութիւններ. ես այդ պատճառով բորբոքեցի քո սրբազան փափագները, ես քեզ քաջալերեցի անելու այդ քայլը, որ, արել ես բայց դու

ինձ նախատում ես, որ ես քեզ տեղեկութիւն չտուի քո ընկերների փոքրիկ հոգիների և ձեռնածութիւնների մասին։ Եթէ այդպէս արած լինէի, ես խարտեաշ կլինէի իմ նպատակը. քո աղնիւ բնաւորութիւնը անմիջապէս կը գայրանար և Խոխոը կզրկուէր իւր քուրմից»։

Ապէկիզէս բարձր ձայնով հառաչեց։ Եղիպատացին ուշադրութիւն չդարձնելով այդ ընդհատման վրայ՝ չարունակեց.

«Ես» հեռաւոր ուղարկեցի քեզ տաճարը առանց նախապատրաստութեան, ես քեզ թողեցի, որ դու ինքդ ճանաչէ այն ցնորամիտ ունայնութիւնները, որոնք կատեզինում են ամբոխին և ինքդ ղեկավարես նրանց։ Ես ուզեցի, որ դու տեսնես, ինչպէս է չարժում այն մեքենան, որով աշխարհը զավազնող ապիրատը իւր ջրերը ձգում է օդի մէջ։ Դա մի փորձ է հին ժամանակուանից վճռուած բոլոր մեր քուրմերի համար։ Նրա, որոնք սովորում են ռամիկներին խաբել, թողնում են այդ գործն անելու իսկ քո նմանների համար, որոնց բարձրագոյն բնաւորութիւնը պահանջում է բարձրագոյն կշռում, կրօնքը բացատրում է աւելի ստուգամտութեամբ։ Ես շատ ուրախ եմ գտնելու քո մէջ այն բնաւորութիւնը, որ ես նախատեսել էի։ Դու ասում ես արել և չես կարող վերադառնալ։ Առաջարկը և ես կատարեմ քեզ»։

«Ես ինչ պիտի սովորեցնես ինձ, ով ստրկնական և զարհուրելի մարդ։ Նոր խարդախութիւններ—հոգ...»

«Ո՛չ, ես քեզ ձգեցի անհատականութեան վէմ մէջ և ես քեզ հիմա կատարելեմ դէպի հատարքի բարձունքները։ Դու տեսար տեսա օրինակները և դու հիմա պիտի տեսնես այն խաղութիւնները, որոնց ներկայացուցիչ-

ներն են նոքա։ Ոչ մի տուեր չկայ առանց այն նիւթի, որ ձգում է այդ տուերը։ Այս գիշեր ևկ ինձ մօտ։ Զեռքդ տուր»։

Եղիպատացու խօսքերից զգացուած, յուզուած և չփոթուած՝ Ապէկիզէսը իւր ձեռքը տուաւ նրան և վարդապետ ու աշակերտ հեռացան։

Ձշմարիտ է որ Ապէկիզէսի համար ոչ մի վերադարձ չկար։ Նա ուխտած էր ամուրի մնալ. նա ինքն իրեն նուիրած էր մի կեանքի, որ առ այժմ կարծես ունէր փանտաիկոսութեան բոլոր խոստութիւնները առանց հաստատի միութիւնների։ Բնական էր նրա մէջ վախեցել հաշտուելու մի անփոփոխելի ապագայի հետ։ Եղիպատացու հզօր և խոր միտքը հաստատած էր իւր իշխանութիւնը նրա երիտասարդական երևակայութեան վրայ. նա յուզում էր նրան ունայն ենթադրութիւններով և նրան պահում էր յուսով և վախի փոխադարձ և անհատական դրութիւնների մէջ։

Նոյն միջոցին Աբրակ համաց և հանդիսաւոր քայլուածքով չարունակում էր իւր ճանապարհը դէպի Իօնէի տունը։ Երբ որ մտաւ սալիճումը, նա լսեց մեծ կոպմի պերիստիլ իպոտրիկօններից մի ձայն, որ չնայելով իւր երաժշտական հնչիւնին, շատ անախորժ թուաց նրա ականջին—դա, երիտասարդ և գեղեցիկ Գլոկուսի ձայնն էր, և առաջին անդամ լինելով, նախանձի մի ակամայ ցնցում անցաւ եղիպատացու կրծքի միջից։ Մանելով պերիստիլը՝ նա գտաւ Գլոկուսին Իօնէի կողքին նստած։ Անուշահոտ պարտէզի սէջ չարաւանը իւր արծաթեայ փրփուրը ցայտեցնում էր օդի մէջ և տարածում էր մի ախորժելի զովութիւն կէսօրուայ չոքի միջոցին։ Աղախինները գրեթէ միշտ գտնւում էին Իօնէի

չուրջը, որով Յոնէն իր ազատ բարքերի հետ միասին պահպանում էր մի փոփիկանական համեստութիւն. նա նստած էր մի քիչ հեռու. Գլոկուսի ոտքերի առջև ընկած էր այն քնարը, որի վրայ նա նուագել էր Յոնէի համար լեռնային եղանակներից մէկը։ Այդ անսարանը —այդ խումբը, որ երեսց Արբակին, կրում էր դրչիմը այն յատուկ և զարդացած իդեալականութեան և բանաստեղծութեան, որ մենք կապում ենք, և ոչ սխալմամբ, հնախնիների վիշտակի հետ,—մարմարեայ սիւներ, ծաղկամանոներ, ճերմակ և հանդարտ արձաններ, որոնք վտակում էին ամեն մի տեսարան և, բոլորից աւելի, այն երկու կնդանի պատկերները, որոնցից քանդակագործը կարող էր առանձնապէս ներշնչում կամ յուսահատութիւն։

Արբակ մի րոպէ կանգ առնելով նայեց այդ զոյգին. նրա ճակատից փախաւ նրա սովորական անդորրութիւնը. նա ուշքի եկաւ մի ճիպ գործ դնելով իր վրայ և կամաց կամաց մօտեցաւ նրանց. նրա քայլուածքը այնքան վախուտ և անճարն էր, որ նոյն իսկ աղախինները չկասցին, ուր մնաց Յոնէն և նորա սիրականը։

«Ախտաւանդնալիս», ասում էր Գլոկուս, «սիրելուց առաջ է, որ մենք կարծում ենք թէ մեր բանաստեղծները չատ ճշդութեամբ նկարագրած են այդ կիրքը. այն րոպէին, երբ արևը ծագում է, բոլոր այն առարկաները, որոնք վայելում էին նրա բացակայութեան ժամանակ, անհետանում են օդի մէջ։ Բանաստեղծները գոլութիւն ունեն միայն սրտի պիչերուայ մէջ, իսկ նորա ոչինչ են մեզ համար, երբ մենք զգում ենք սիրոյ աստուծոյ ամբողջ վառքը։

«Մի չատ պեղեցիկ և փայլուն նկարագրութիւն, աղնիւ Գլոկուս»։

Երկուսն էլ վեր թռան և Յոնէի նստարանի հետ տեսան եղիպտացու սառը և հեղնական կերպարանքը։

«Դուք մի չանկարծատես հիւր էք», ասաց Գլոկուս, կանգնելով և բոնի ժպտալով։

«Այդպէս պիտի լինին բոլոր այն հիւրերը, որոնք պիտեն թէ իրենց այցելութիւնը ախորժելի է», պատասխանեց Արբակ նստելով և նշան անելով Գլոկուսին նստելու։

«Ես ուրախ եմ», ասաց Յոնէ, «ձեզ միասին տեսնելով. որովհետև դուք չարմար էք միմեանց և ստեղծուած էք բարեկամներ լինելու»։

«Ցաւէք ինձ տատնուհիդ տարի իմ անցած կեանքից», պատասխանեց եղիպտացին, «նախ քան ինձ հաստատելուցնէք Գլոկուսի հետ։ Ես երջանիկ պիտի լինէի ունենալու նրա բարեկամութիւնը. բայց ինչ բանով կարող եմ փոխարէնը տալ նրան։ Կարող եմ միւնոյն մտերմութիւնը ունենալ նրա հետ, ինչ որ նա իմ հետ։ Նրա պրօսանքներն են հանդէսներ և պատկերներ, պարթեւական նժոյգներ և զառեր, այդ զուարճութիւնները չարմար են նրա տարիքին, նրա բնութեան, նրա տպաւորիչին, բայց ոչ ինձ»։

Այս ասելով խորամանկ եղիպտացին դեմին նայեց և հատաչեց. բայց իր աչքի անկիւնից պաղատագուլ մի ակնարկ ձգեց Յոնէի երեսին տեսնելու թէ նրա վրայ ինչ ազդեցութիւն էր արած իր այցելուի զրաղմունքների լիշատակութիւնը։ Նա բաւարար չմնաց Յոնէի կերպարանքից։ Գլոկուս մի քիչ կարմրեց և աճապարեց պատասխանել։ Նա էլ կարելի է առանց վախտի չէր եղիպտացուն ամաչացնելու։

«Դուք լրատուներ ունիք, իմաստուն Աբրահամ», ասաց նա. «մենք կարող ենք յարգել միմեանց, բայց բարեկամներ լինել չենք կարող։ Իմ հանդիսականերին պակասում է այն զաղտնի աղը, որը, ինչպես ասում են, այնքան անհրաժեշտ է զարձնում ձկներինները։ Եւ Հերկուլէսը վկայ, երբ ես տանեմ ձեր սարիքին, եթէ ես էլ ձեր նման իմաստութիւն համարեմ առնական զուարճութիւններին հետևելու, անպատճառ, ինչպես դուք, ես էլ հեղնութեամբ պիտի վերաբերուեմ դէպի երիտասարդական քաջագործութիւնները»։

Եգիպտացին նայեց Գլոկուսի երեսին մի յանկարծական և խորաթափանց նայուածքով։

«Ես ձեզ չեմ հասկանում», ասաց նա պաղութեամբ, «բայց սովորութիւն է մտածել, որ սրախօսութիւնը թագնուած է մթութեան մէջ»։ Նա իւր երեսը զարձրեց Գլոկուսից՝ հազիւ նկատելի մի քամահրական ժպիտով և մի րոպէ լռութիւնից յետոյ իւր խօսքն ուղղեց Իօնէին։ «Ես բաւական բախտաւոր չեմ եղել, ով գեղեցիկ Իօնէ», ասաց նա, «ձեզ տանը գտնելու վերջին երկու կամ երեք անգամը, որ այցելած եմ ձեր վեհափառութիւը»։

«Մովի խաղաղութիւնը մի մեծ փորձութիւն է եղել ինձ անից հեռացնելու», ասաց Իօնէ մի քիչ չփոթուելով։

Այդ չփոթութիւնը աննկատ չմնաց Աբրակի կողմից, բայց առանց ցոյց տալու, թէ ինքը ուշադրութիւն էր զարձրած դրա վրայ, նա պատասխանեց ժպտալով. «Դուք գիտեք, որ հին բանաստեղծն *) ասում է՝ «Կանայք պէտք է տանը մնան և այնտեղ զբօսնեն»։

*) Եւրիպիդես։

«Այդ բանաստեղծը մի յիմիկ էր և ասում էր կանանց», ասաց Գլոկուս։

«Նա խօսում էր իւր երկրի սովորութիւնների համեմատ և այդ երկիրը ձեր պարծեցեալ Յունաստանն է»։

«Տարբեր ժամանակներն ունին տարբեր սովորութիւններ։ Եթէ մեր նախահայրերը տեսած լինէին Իօնէին, նոքա տարբեր օրէնք կը դնէին»։

«Այս գեղեցիկ հաճոյախօսութիւնները Հռովմում սովորեցիք», ասաց Աբրակ, չկարողանալով զսպել իւր յուզմունքը։

«Անպատճառ Եգիպտոս չեն գնում հաճոյախօսութիւններ սովորելու», պատասխանեց Գլոկուս խաղալով իւր չղթայի հետ։

«Խնդրեմ, խնդրեմ», ասաց Իօնէ, աճապարելով կարճ կարել մի խօսակցութիւն, որը, ի մեծ ցաւ իւր, չատ քիչ հատանականութիւն ունէր առաջացնելու իւր ցանկացած մտերմութիւնը Գլոկուսի և իւր բարեկամի մէջ։ «Աբրակ չպէտք է այդքան խիստ լինի դէպի իւր խնդաշակերտուհին։ Լինելով մի որբ և զուրկ մայրական հոգածութիւնից՝ ես կարող եմ յանցաւոր համարուել այն անկախ և դրեթէ առնական ազատութեան համար, որ ես առած եմ իմ կեանքի մէջ, այնու ամենայնիւ դա աւելի մեծ չէ քան հռովմայեցի կանանց ազատութիւնը, աւելի մեծ չէ քան այն՝ ինչ որ պէտք է ունենայ մի հելլենուհի։ Աւազ, միայն ազատարկանց մէջ ազատութիւնը և առաքինութիւնը կարող են միանալ։ Ինչու պէտք է մեզ պահպանելու միակ ձևը լինի այն գերութիւնը, որ կործանում է ձեզ։ Ա՛, հաւատացէք ինձ, որ մարդկանց ամենից մեծ սխալն է եղած—և մի սխալ, որ չատ դառն արդիւնք է ունեցած նոցա ճակատագրի վրայ—երևակա—

ցել, թէ կանանց բնութիւնը (չեմ ասիլ սոսր, թէև կարող է այդպէս լինել) այնքան տարբեր է իրենց բնութիւնից, և օրէնքներ հաստատել, որոնք անհնազանդ են կանանց մտաւոր յառաջադիմութեանը։ Արդեօք նոքա, այդպէս անելով, օրէնքներ չեն հաստատած իրենց զաւակների դէմ, որոնց պէտք է կանայք անուցանեն և մեծացնեն, ամուսիններին դէմ, որոնց համար կանայք պէտք է բարեկամուհիներ, ոչ, երբեմն նոյն իսկ խորհրդատուներ լինեն»։ Իօնէն յանկարծ կանգ առաւ և նրա երեսը ծածկուեց ամենապիսի չկինանքով։ Նա վախենում էր, որ մի գուցէ իր ոգևորութիւնը նրան չափազանց յառաջ մղած լինի. բայց նա վախենում էր քաղաքավարի Գլոկուսից աւելի քան դաժան Արքակից, որովհետև նա սիրում էր առաջինին և յոյները սովոր չէին տալու իրենց կանանց (դէթ նրանց, որոնց ամենից շատ պատում էին) նոյն ազատութիւնը և նոյն դիրքը, որոնցից զուրկ չէին խաղալուհիները։ Ասաի երջանկութեան մի տարտուր զգայ, երբ Գլոկուսը եռանդով պատասխանեց։

«Միշտ այդպէս մտածիր և թող քո մաքուր սիրտը լինի քո անսխալ առաջնորդը։ Երջանիկ պիտի լինէր Յունաստանը, եթէ նա տուած լիներ իր պարկեշտասիրտներին նոյն մտաւոր հմտութիւնը, որոնք այնքան հռչակաւոր են իր նուաղ արժանաւոր դստերների մէջ։ Ոչ մի դիրք չէ նուաստանում ազատութեան և գիտութեան պատճառով, քանի որ ձեր սէրը ժպտում է ազատին և գնահատելով քաջալերում է իմաստունին»։

Արքակը լուռ էր, որովհետև նրան չարմար չէր ոչ հաստատել Գլոկուսի դաղափարը և ոչ պատասխանել

Իօնէինը՝ և մի կարճ և անկապ խօսակցութիւնից յետոյ Գլոկուս հեռացաւ։

Երբ որ նա գնաց, Արքակ մօտեցնելով իր նստարանը չքնաղ նապօլիտանին, ասաց իր ձայնի զգուշած և մեղմ չեչտերով, որոնց մէջ նա այնքան լաւ թագցնել գիտէր խաբեպատութեան և կատարութեան այն խառնուրդը, որ բնորոշ էր նրա մէջ։

«Մի մտածէք իմ անուշիկ աշակերտուհիս, եթէ ինձ թոյլ արուի այդ անունով կոչել ձեզ, որ ես կամենում եմ չղթայել այն ազատութիւնը, որին դուք մի զարդ էք տալիս, երբ ստանձնում էք այդ ազատութիւնը, թէև ոչ աւելի մեծ, ինչպէս դուք լրատեսիք, քան հռոմայեցի կանանց վայելածը, այնուամենայնիւ պէտք է միացած լինի աւելի մեծ չրջանկատութեան հետ, երբ գտնում է մի չամուսնացած կնոջ ձեռքում։ Շարունակեցէք հրապուրել զարթնասէրներին, վայլուններին և նոյն իսկ իմաստուններին խումբերը մինչև ձեր ոտքը— չարունակեցէք գիմել նրանց մի Ասպազիայի խօսակցութեամբ և մի Էրիննայի երաժշտութեամբ, բայց դէթ մտածեցէք այն բամբասող լեզուների մասին, որոնք այնքան դիւրութեամբ կարող են աղարտել մի օրիորդի անբիծ անունը, և մինչդեռ դուք սքանչացում էք պատճառում, աղաչում եմ ձեզ, մի թոյլ տաք, որ նախանձը որ և է յաղթական տանէ ձեր վրայ»։

«Ի՞նչ էք ուզում ասել, Արքակ». ասաց Իօնէ մի երկիւղալից և դողդոջուն ձայնով. «ես պիտեմ, որ դուք իմ բարեկամն էք և ձեր վախտը իմ պատուասիրութիւնը և բարօրութիւնն է։ Ի՞նչ էք ուզում հակացնել ինձ»։

«Ձեր բարեկամը—Ո՛հ ինչ անկեղծութեամբ։ Ուրեմն

խօսեմ բարեկամի նման առանց մի բան պահելու և առանց վշտացնելու։

«Աղերսում եմ, խօսեցէք»։

«Ինչպէս ծանօթացաք այս երիտասարդ անառակի, այս Գլոկուսի հետ»։ Եւ Աբրակ այս ասելու ժամանակ իր աչքերը անթարթ կերպով յառած էր Իօնէլի երեսին, կարծես ուզում լինէր թափանցել նորա հոգու մէջ։

Յետ ընկրկելով այդ նայուածքից և մի սարսափելի և անբացատրելի երկիւղ զգալով իր սրտի մէջ՝ նապօլիտանուհին պատասխանեց չփոթուած և տարտամ ձայնով։

«Նա ներկայացուեցաւ ինձ որպէս իմ հօր և կարելի է ասել իմ հարևնակիցը։ Մեկ չարաթ է ինչ ծանօթացել եմ նորա հետ. բայց ինչ է պատճառը»։

«Ներեցէք ինձ». ասաց Աբրակ, «ես մտածում էի, որ ասելի ժամանակից ’ի վեր նա ճանաչում է ձեզ։ Սակը պարծենկոտ»։

«Ինչպէս, ինչ էք ուզում ասել, ինչու այդպէս կոչեցիք նրան»։

«Վնաս չունի, թող քո բարկութիւնը չգրգռեմ մեկի վրայ, որ արժանի չէ այդ մեծ պատուին»։

«Աղաչում եմ ձեզ խօսեցէք։ Ո՞նչ է արած Գլոկուսը կամ ինչ բանի մէջ դուք նրան կասկածում էք, որ նա յանցաւոր է»։

Խեղդելով իր բարկութիւնը Իօնէլի հարցի վերջին մասի վերաբերութեամբ՝ Աբրակ չարունակեց — «Դուք գիտէք ովքեր են նորա բարեկամները և ինչ են նորա զբաղմունքը և սովորութիւնները. կերուխումը և զառերն են նորա գործը և մոլութեան այս ընկերակցութեան մէջ ինչպէս է կարող նա երազել առաքինութեան վրայ»։

«Դուք նորից հանելուկներ էք խօսում։ Ի սէր աստուածների, խնդրում եմ ձեզանից անմիջապէս ասացէք ձեր ասելիքի ամենավատ մասը»։

«Լաւ ուրեմն այդպէս լինի։ Գիտացէք, իմ Իօնէ, որ երէկ Գլոկուսը հրապարակաւ — այո, հասարակաց բաղնիքներում — պարծեցել է թէ դուք սիրում էք նրան։ Նա ասել է թէ իրան զուարճութիւն է պատճառում այդ հանգամանքից օգուտ քաղել։ Ո՛չ, թող ասեմ, յարդարացում նորա, որ նա զոհել է ձեր պեղեցկութիւնը։ Ո՞վ կարող էր ուրանալ այդ բանը։ Բայց երբ նորա Կլոպիուսը, կամ Անտիպատը հարցրել են թէ ձեզ այնչափ սիրում է, որ ամուսնանալ ձեզ հետ. կամ երբ է մտածում իր դրան անկիւնները զարդարել ծաղիկներով, նա ծիծաղել է ծաղրածութեամբ։

«Անկարելի է։ Ինչպէս լսեցիք այդ սուտ զրպարտութիւնը»։

«Ո՛չ, ուզում եմ պատմեմ ձեզ այն լիրբ խմասուկութիւնների բոլոր մանրամասնութիւնները, որոնց հետ միասին այդ պատմութիւնը պատած է ամբողջ քաղաքի մէջ։ Վատահ եղէք, որ ես ինքս նախ չհաւատացի այդ բանին, բայց զանազան ականջալուր մարդկանց վկայութիւններով ստիպուած եմ, ի մեծ ցաւ իմ, հաւատալ այն ճշմարտութեանը, որ ակամայ հաղորդեցի ձեզ»։

Իօնէն լուռ ընկրկեց և նորա երեսը աւելի ճերմակ էր քան այն սիւնը, որի դէմ նա յենուեցաւ, որպէս զի ցած չընկնէ։

«Ես խոստովանում եմ, որ ինձ մեծ ցաւ և բար-

կութիւն պատճառեց լսելով, որ ձեր անունը այդպէս անարդուած անցնում էր չրթունքից չրթունք ինչպէս մի կաքաւչուհու անունը։ Ես այս առաւօտ աճապարեցի ձեզ տեսնել և ձեզ ղգուշացնել։ Ես Գլոկուսին դուշ այստեղ։ Ես չկարողացայ ծածկել իմ ղգայմունքը, ա՛յն, ես մինչև անգամ անբաղաքավարի դանուեցայ ձեր ներկայութեամբ։ Կարող էք ներել ձեր բարեկամին, Իօնէ»։

Իօնէն իւր ձեռքը ղրեց նորա ձեռքի մէջ, բայց չպատասխանեց։

«Ա՛յլ ևս մի մտածէք այս բանի վրայ», ասաց նա. «բայց թողէք այս բանը մի աղքարար ձայն լինի ձեր համար ձեզ ասելու թէ ինչքան խոհեմութեան պէտք ունի ձեր դերը։ Այս լուրը մեկ րոպէ անգամ չէ կարող ձեզ վիրաւորել. որովհետև սորա նման մի թեթևասիրտ մարդին Իօնէն չէր կարող պատուած լինել մեկ լուրջ մտածութեամբ։ Այս անպատուիչ խօսքերը այն ժամանակ միայն վիրաւորական են՝ երբ գալիս են մի սիրուած անձնաւորութիւնից. չպատճառը պիտի լինէր այն մարդը, որին Իօնէն ղիջանի սիրել»։

«Սիրել». մրմնջաց Իօնէն մի հիւթերիկական ծիծաղով։ «Ա՛, խակապէս»։

Զուրկ չէ հետաքրքրութիւնից նկատել, որ անցեալի այդ հետաւոր դարերում և ընկերական այնպիսի պայմանների մէջ այնքան տարբեր մերիններից, նոյն փոքրիկ պատճառներն էին խանգարում և ընդհատում «սիրոյ ընթացքը» ինչ որ ընդհանրապէս գործադրւում են այսօր.—միևնոյն հնարագէտ նախանձը, միևնոյն խարդախանքի զրպարտութիւնը, միևնոյն փոքրիկ ասուլիսները վարպետութեամբ և յաւելուածներով կրկնուած, որոնք այսօր այնքան յաճախ բաւական են բեկանելու

ամենից ջերմ սիրոյ կապերը և փոխելու հանգամանքների ամենից դիւրընթաց և բնական երևացած հոսանքը։ Առասպելաբանութիւնը մեզ պատմում է, որ երբ նաբ առագաստում է ամենահաղագ ովկեանի երեսին, մի փոքրիկ ձուկ կպչում է նորա յատակից և կանդնեցնում է նորան. նոյնպէս է եղած միշտ մարդու մեծ կրքերի դէպքում և մենք կեանքը լաւ նկարած չենք լինիլ, եթէ խօսելով այն ժամանակների մասին, որոնք ամենից շատ շուայլ են եղած վիպալին դէպքերի մէջ և որոնց վէպերից մենք այսօր օգտւում ենք, մենք զանց առնէինք չարիքների այն աննշան և տնային մեքենայութիւնները, որոնց մենք ամեն օր տեսնում ենք գործածուելիս մեր տեղեակների մէջ և մեր օջախների շուրջը։ Սորանցով կեանքի այս փոքրիկ ինարիքներով է, որ մենք անցեալի պատմութեան մէջ գտնում ենք այսօրուայ կեանքի մի նմանութիւն և ասելի ախորժում ենք նրանից։

Եգիպտացին մեծ խորամանկութեամբ էր զարկած Իօնէի ամենից թոյլ կողմին—մեծ վարպետութեամբ էր մղած թունաւոր նետը նորա հպարտութեան մէջ։ Նայելով այն կարճ ժամանակին, որ Իօնէն ճանաչած էր Գլոկուսին՝ Արքակ յոյս ունէր, որ նորա ղգայուածը մի նորածիլ համակրութիւն պիտի լինէր դէպի Գլոկուս և նա երևակայում էր, որ դորա առջևն առած էր։ Նա ապատարեց նիւթը փոխել և սկսեց խօսել նորա եղբօր վրայ։ Նոցա խօսակցութիւնը երկար չըտևեց։ Նա թողեց Իօնէին վճռելով այլ ևս այդքան վստահութիւն չը դնել իւր բացակայութեան վրայ, այլ ամեն օր այցելել նրան և հսկել նորա վրայ։

Նորա տուները հեռացաւ թէ չէ Իօնէի ներկայու-

թիւնից, կնոջ հպարտութիւնը — իր սեռի դիմակը — լքանում եզիպտացու զոհին և խրախում Իօնէին սկսել դաժան արշաւանք թափել։

Գլուխ Ը.

Մի պոմպէյցի զօրաճաշերի կեանքը։ Հռոմէական բաղնիքների մի փոքրիկ նմոյշը։

Երբ Գլաւկուս դուրս եկաւ Իօնէի մօտից, նա իրեն այնպէս էր զգում որպէս թէ օդի վրայ սահում լինէր։ Իր Իօնէի հետ ունեցած այս վերջին խօսակցութեան մէջ, նա, առաջին անգամը լինելով, պարզ կերպով հասկացած էր, որ իր սէրը անախորժ չէր օրիորդին և անվարձ չպիտի մնար նորա կողմից։ Այս յոյսը լցրել էր նրան այնպիսի մի բերկրութեամբ, որ երկինքը և երկիրը չափազանց նեղ էին երևում նորա համար։ Անտեղեակ լինելով այն յանկարծ երևան եկած թշնամու մասին, որ նա եւս էր թաղած և մոռանալով ոչ միայն նորա հեղնաբանութիւնները, այլ նոյն իսկ նորա զոյութիւնը՝ Գլաւկուս անցնում է զուարթ վազոցներով. իր գնծութեան, լուսեան մէջ նա ինքն իրեն կրկնում էր այն քնքուշ եղանակը, որին Իօնէն այնքան ուշադրութեամբ ականջ է դրել. նա մտաւ բախտի փողոցը, որի մայթը գետնից բարձր էր և անելի դրսի կողմը ներկուած. բայց անուերից կարելի էր տեսնել նեղտի վառվռուն ջրէնները։ Փողոցի լուրաքանչիւր ծայրը զարդարուած էր մի յաղթական կամարով. այդ զեղեցիկ աստուածուհու դուրս ցցուած պորտիկոն (կարծիք կայ, որ Կիկերոնի ընտանիքից մէկը, կամ նոյն ինքը հռետորը պէտք է չինել տուած լինի այդ) տալիս էր յարգալից և պատ-

կառելի երևոյթ այդ տեսարանին, որը դուրս բացակայութեան դէպքում, իր տիպի մէջ, աւելի փայլուն պիտի լինէր քան վսեմ։ Տաճարը հռոմէական ճարտարապետութեան ամենաչնորհալի նմուշներից մէկն էր։ Դա կառուցուած էր մի բարձր պոդիումի *) վրայ. աստուածուհու արձանը կանգնած էր մի պատուանդանի վրայ, որի գլուխը երթալու համար երկու սանդուխքներ էին չինուած երկու կողմերում։ Այս պատուանդանից մի ուրիշ լայն սանդուխք չինուած էր մինչև պորտիկոն, որի ակօսաձև սիւների ծայրերից կախուած էին ամենաճոխ ծաղիկների քանդակազարդուած պսակներ։ Տաճարի իւրաքանչիւր ծայրում դրուած էին յունական գեղարուեստի արձաններ և նրանցից մի քիչ հեռու խրխխում էր յաղթական կամարը. կամարի գլխին դրուած էր Կալիդոլայի ձիաւոր արձանը իր երկու կողմում ունենալով բրոնզեայ յաղթական կողոպտանքներ։ Տաճարի առջևի հարթ գետնի վրայ հաւաքուած էին մի խումբ անծոց մարդիկ. նրանցից ոմանք նստած էին նստարանների վրայ և վիճում էին կայսերութեան քաղաքականութեան վրայ, և ոմանք զրուցում էին ամիսիթատրոնի հանդէսի մասին, որ չուտով պիտի տեղի ունենար։ Մէկ խումբ երիտասարդներ գովում էին մի նոր զեղեցկուհու, և մի ուրիշ խումբ վիճում էր վերջին ներկայացման արժանիքների վրայ. մի երրորդ խումբ, աւելի հասակաւոր մարդիկ խօսակցում էին Ալէքսանդրիայի վաճառականութեան չահ ու վնասի վրայ, և սոցա մէջ կային արեւելեան զգեստներով չատ վաճառականներ, որոնց ար-

*) Յատակից մարդու կուրծքի բարձրութեամբ մի որմ որի վրայ կառուցուում էր շինութիւնը։ Ե. Թ.

ձակ և տարօրինակ հագուստները, ներկուած և պճնաբազդ կօշիկները, և լուրջ կերպարանքները, մի հակապատկեր էին կազմում խռովացիների պարեգօտով ծածկուած մարմինների և ոգևորուած չարժումների հետ։ Որովհետև այդ անհամբեր և վառվռուն ժողովուրդը ուներ այն ժամանակ ինչպէս նաև հիմա խօսակցութիւնից տարբեր մի լեզու—նշանների և չարժումների մի լեզու, որ անհնարապրելի կերպով արտայայտիչ էր և աչխոյժ. նոցա չաջօրդները պահպանած են այդ լեզուն և դիտական Հօրհոն մի վերին աստիճանի հետաքրքիր աչխատութիւն ունի այդ տեսակ հիէրօգլիֆական չարժումների մասին։

Անհոգութեամբ քալելով ամբոխի միջից, Գլոկուս չուտով ինքն իրեն դուռ չրջապատուած իւր ուրախ և պջսամոլ ընկերներով։

«Ա՛...» ասաց Սալլուստ, «մի ամբողջ լուսարուսմ *) է ինչ որ քեզ չեմ տեսել».

«Եւ ինչպէս ես անցկացրել այդ լուսարուսմը։ Ի՞նչ նոր կերակուրներ ես հնարել»։

«Ես կերակուրների գիտական ճիւղի մէջ եմ աչխատել այս անգամ», պատասխանեց Սալլուստ, «և մի քանի փորձեր եմ արել իմ մարդ ձկներին կերակրելու մէջ. ես խոստովանում եմ, որ լուսանաուած եմ նրանց տալու համեղութեան նոյն կատարելութիւնը, ինչ որ մեր հռոմէացի նախահայրերը տալիս էին»։

«Թչուառ մարդ, և ինչո՞ւ»։

«Որովհետև», պատասխանեց Սալլուստ, հառաչելով, «այլ ևս օրէնքը թոյլ չէ տալիս գերիների մսով կերակրել նրանց։ Ես քանի անգամ փորձեր եմ իմ գեր կարպատրիս (ամպաուալիս) կտոր տրելու աւազանի մէջ։ Ձեզ հաւատացնում եմ, որ նա մի վերին աստիճանի ճարպալից համեղութիւն կը տայ ձկներին։ Բայց գերիները, գերիներ չեն այսօր, և ոչ մի համերաչխութիւն չունին իրանց տէրերի չահի հետ—եթէ ոչ Գալուսը անպատճառ ինքն իրեն կը գտնէր ինձ պարտաւորեցնելու համար»։

«Ի՞նչ լաւ կայ Հռոմից», ասաց Լեպիդուսը թուլիկ մուլիկ քայլուածքով մօտենալով խմբակին։

«Կայսրը մի չքեղ ընթրիք է տուել սենատորներին», պատասխանեց Սալլուստ։

«Լաւ արարած է», ասաց Լեպիդուս, «ասում են ոչ ոքի դուրս չէ ուղարկում իւր ներկայութիւնից առանց նորա խնդրուածքը չնորհելու»։

«Կարելի է ինձ թոյլ տալ մի գերի ապահել իմ աւազանիս համար», պատասխանեց Սալլուստը անձկութեամբ։

«Անհատանական չէ», ասաց Գլոկուս. «որովհետև ով որ մի հռոմայեցու մի չնորհ անէ, դա պիտի լինի ի վնաս մի ուրիշի։ Վստահ եղիր, որ Տիտոսի պատճառած ամեն մի ժպիտի փոխարէն հարիւրաւոր աչքեր արտասուել են։

«Ահագին Տիտոս», գոչեց Պանսան, լսելով կայսեր

*) Լուսարուսմ—նշանակում է հինգ տարուայ ժամանակամիջոց։ Ս. Թ.

*) Հռոմայեցիների մէջ սովորութիւն կար, որ մի կամ աւելի հաւատարիմ քաղաքացիներ մտնում էին մի նշանաւոր մարդու պաշտպանութեան տակ։ Պաշտպանողը կոչւում էր «պատրոնուս» և պաշտպանութիւն ստացողը «կլիէնտս»։ Ս. Թ.

անունը մինչդոռ նա պատրոնական ձևով անցնում էր ամբոխի միջից, «նա իմ եղբոր քաւչատութիւն է խոստացել, որովհետև նա վերջացրել էր իւր ամբողջ հարստութիւնը»։

«Եւ այժմ ուզում է հարստանալ ժողովրդի հաշուով, Պանուռգ», ասաց Գլոկուս։

«Ճիշդ այդպէս», ասաց Պանուռգն։

«Այդ նշանակում է ժողովրդին պիտանի գործել», ասաց Գլոկուս։

«Անտարակոյս», պատասխանեց Պանուռգն։ «Լաւ, ես պէտք է երթամ նայեմ էրարիումին—դա մի քիչ նորոգութեան պէտք ունի». և էգիլը դադրած մարդու անհամբերութեամբ հեռացաւ մինչդեռ նրան հետևում էր կլիէնտների մի ամբողջ խումբ, զանազանուելով հասարակութիւնից իրենց առաջնորդով, (որովհետև առաջն, որ մի ժամանակ ազատ քաղաքացիութեան դրօշակն էր այժմ դարձած էր սարկութեան նշանը)։

«Խնդճ Պանուռգ», ասաց Լևպիդուս. «նա երբէք ժամանակ չունի զուարճանալու։ Փառք աստուածներին, որ ես էգիլ չեմ»։

«Ա՛հ, Գլոկուս, ինչպէս ես, զուարթ որպէս միշտ», ասաց Կլոդիուս միանալով խմբին։

«Եկիր ես Բախուին զոհ մատուցանելու», ասաց Սալլուստ։

«Ես ամեն դիշեր զոհ եմ մատուցանում այդ աստուածուհու սեղանի վրայ», պատասխանեց խաղամոլը։

«Ես տարակոյս չունիմ այդ բանի մասին։ Ոչ ոք աւելի զոհեր չէ մատուցել»։

Հերկուլէսը վկայ, կծու խօսք էր այդ», գոչեց Գլոկուս ծիծաղելով։

«Այդ չեն խօսքը միշտ քո բերանի՛ մէջ է, Սալլուստ», ասաց Կլոդիուս բարկացած. «դու միշտ մրմռում ես»։

«Ի՞նչ պարանք՝ եթէ չեն խօսքը միշտ իմ բերանում լինի, մինչդեռ քեզ հետ խաղալուց միշտ չանթիը իմ ձեռքում է», պատասխանեց Սալլուստ։

«Մնա», ասաց Գլոկուս, առնելով մի, վարդ մի ծաղկամաման աղջկանից, որ կանգնած էր նորա մօտ։

«Վարդը լռութեան նշան է», պատասխանեց Սալլուստ. «բայց ես սիրում եմ լռութիւնը միայն ընթրիքի սեղանի առջև։

«Ի դէպ—Փիսոնի մի մեծ հանդէս է տալիս եկող չարաթի», ասաց Սալլուստ. «դու հրաւիրուած ես Գլոկուս»։

«Այո՛, ես այսօր առաւօտ մի հրաւէր ստացայ»։

«Եւ ես էլ», ասաց Սալլուստ, դուրս քաշելով մի փառանկիւնի պապիրոս իւր գօտու միջից. «Ինչպէս տեսնում եմ նա քեզ մի ժամ է հրաւիրել սովորական ժամից, երևի մի փառաւոր բան պիտի պատրաստած լինի *)։

«Օ՛հ, նա կրեսոսի պէս հարուստ է», ասաց Կլոդիուս. «և նրա ծախքի ցուցակը նոյնպէս երկար է, որչափ մի դիւցազներգութիւն»։

«Լաւ, եկէք երթանք բաղնիքները», ասաց Գլոկուս. «հիմա այն ժամն է, երբ ամբողջ աշխարհը կը հաւաքուի այնտեղ, և Թուլլիուսը, որի վրայ դուք այդքան

*) Համապատասխան մեզ նման սովոր էին տոմսակներով հրաւիրել մարդկանց, նշանակելով հացկերոյթի ժամը. եթէ հանդէսը շքեղ մի բան պիտի լինէր այն ժամանակ ժամը սովորականից առաջ էին նշանակում։

աքանչանում էր, մեզ պիտի կարողայ իր վերջին բահանեղծութիւնը»։

Երիտասարդները չուտով ընդունելին այդ առաջարկը, և քալլեցին դէպի բաղնիքները։

Թէև հասարակաց թէրմերը, կամ բաղնիքները հասատատած էին ազգաս քաղաքացիներուն համար աւելի քան հարուստներուն (որովհետև սոքա իրենց անոնց մէջ բաղնիքներ ունէին) այնու ամենայնիւ նոքա խոստակցութեան և անպօծութեան ժամերը սիրելի ժողովատեղին էին ամեն դասակարգի մարդկանց համար, որոնք խումբ-խումբ գիմում էին դէպի այնտեղ։ Պոմպէյի բաղնիքները գանազանվում էին Հռոմի ոճերուն և բազմաման թէրմերից մէկ իրենց չափակցութեան և մէկ չինութեան ձևի մէջ. և այնպէս է երևում, որ կայսերութեան ամեն մի քաղաքում մի վոքրիկ ատրճանութիւն կար, հասարակաց բաղնիքների ընդհանուր ճարտարապետութեան մէջ։ Այս բանը չատ չվիճելիում է պատահականներին—որպէս թէ ճարտարապետները և մօտաներն իրենց քմահաճութիւններ ունեցած չլինելին տասնեակներ դարից առաջ։ Մեր խումբը նոքա մտան պլհատար դռնից, որ բացում էր Հռոմի փողոցի մէջ։ Պոմպէյցի մի կողմում նստած էր բաղնիապանը, իր առջև դրած իր երկու մնտակները, մէկը ոսկեայ դրամներ, և միւսը բաժանելի ստմանիների համար։ Պոմպէյցի պատերի մօտ դրուած էին նստարաններ. նոցա վրայ նըստել էին ամեն դասակարգի բազմաթիւ մարդիկ,—մինչդեռ ուրիշները հետևելով այն ժամանակուայ բժիշկների խորհրդին՝ արագ-արագ երթևեկում էին Պոմպէյցի մէջ և երբեմն կանգ էին առնում նայելու այն ցոյցերին, խաղերին, վաճառքների անթիւ յայտարարութիւններին,

որոնք նկարուած կամ գրուած էին պատերի վրայ։ Ընդհանուր խոստակցութեան նիւթը ամփիթատրոնի տեսարանն էր. ամեն մի նորնկ չրջապատուում էր մի խումբ մարդկանցով, որոնք ուզում էին իմանալ արդեօք Պոմպէյը բաւական բախտաւոր էր եղած արտադրելու մի հրէշաւոր չարագործ, կամ մի մարդասպան, կամ սրբապղծութեան ոճրով ամբաստանուած մէկը, որին էդիլները կարողանալին չանճնել առիւծի երախներին. բոլոր միւս ամեն հասարակ ցոյցերը լիմար և անհամ բաներ էին այս երջանիկ դէպքի կարելիութեան բաղդատմամբ։

«Ըստիս», ասաց մի գուարթադէմ մարդ, որ ոսկերիչ էր արհեստով, «ես մտածում եմ, որ կայսրը եթէ այնչափ բարի է, որ պատմում են, պէտք է մի հրեայ ուղարկէ մեզ համար»։

«Ինչու՞ չառնել մէկ հոգի այս նազովրեցիների նոր աղանդից», ասաց մի վիլլիասփան։ «Ես անգութ մարդ չեմ», բայց մի անասուած, մէկը, որ ուրանում է նոյն իսկ Աբրահամը, ոչ մի ողորմութեան արժանի չէ»։

«Հոգս չէ, թէ մի մարդ քանի աստուածների կարող է հաւատալ», ասաց ոսկերիչը, «բայց ուրանալ բոլոր աստուածներին մի հրէշաւոր յանցանք է»։

«Այնու ամենայնիւ», ասաց Գլոկուս, «ես կարծում եմ այդ մարդին կատարեալ անաստուածներ չենք։ Ես լսել եմ, որ նոքա հաւատում են մէկ Աստուծոյ—ոչ, այլ և մի ապագայ կեանքի»։

«Բոլորովին սխալ է ձեր լսածը, Գլոկուս, ասաց փիլիսոփան։ «Ես խօսակցել եմ նոցա հետ—նոքա ծի-

ծաղեցին, երբ ես խօսեցի Պաւոնի և Հաղէսի *) մասին»։

«Ո՛վ աստուածներ», գոչեց ոսկերիչը ապշահար, «այս թշուառականներից Պոմպէյի մէջ էլ կան»։

«Ես պիտեմ մի քանիսը կան։ Բայց այնքան զգոնի են պահում իրենց ժողովները, որ անկարելի է իմանալ թէ ովքեր են»։

Երբ Գլոկուս լեռ դարձաւ, մի անդրիադործ, որ մեծապէս ոգևորուած էր իւր արուեստով, հետևեցաւ նորա ետևից։

«Ա՛հ», ասաց նա «եթէ կարողանայինք այս մարդուն արէնային վրայ դուրս բերել—ինչ լաւ օրինակ կը լինէր։ Ի՛նչ անդամներ, ինչ դլուխ, նա պէտք է գլադիատոր եղած լինէր։ Մի նիւթ, մի նիւթ է նա արժանի մեր արուեստին։ Ինչո՞ւ դորան չեն տալիս, որ առնեն ուտի»։

Միևնոյն ժամանակ Թուլլիուս, Տոմպէյի բանաստեղծը, որին իւր ժամանակակիցները անմահ էին կոչում, և որը եթէ այս պատմութիւնը չլինէր, երբէք չպիտի լիշուէր մեր այս մռայլկոտ դարում, անձկութեամբ մօտեցաւ Գլոկուսին։ «Ո՛հ իմ աթենացիս, իմ Գլոկուս, դուք եկել էք իմ բանաստեղծութիւնը լսելու։ Իսկապէս պատիւ էք արել ինձ. դուք մի յոյն,—որի համար հասարակ կեանքի նոյն իսկ լեզուն մի բանաստեղծութիւն է։ Ինչքան չնորհակալ եմ ձեզանից։ Մի չնչին բան է իմ գրածը, բայց եթէ ձեր հաւանութիւնն ստանամ, կարելի է կարողանամ ներկայացնել Տիտոսին։ Ո՛հ, Գլոկուս, մի բանաստեղծ առանց մի պատրոնի մի՛ևնոյնն է ինչ որ մի դինու կուժ, առանց վկայագրի, դինին կարող է լաւ լինել, բայց ոչ ոք չպիտի դովէ։ Եւ

*) Հոդինների աշխարհը։

ինչ է ասում Պլիտագորաս—կնդրուկը աստուածներին, բայց դովեստը մարդկանց։ Հետևաբար պատրոնը բանաստեղծի քաւարն է. նա գտնում է նորա համար հաւատացեալներ և խնկարկութիւն»։

«Բայց բոլոր Պոմպէյը քո պատրոնն է, և ամեն մի պարսիկն մի սեղան է քո դովեստին»։

«Ա՛հ, իմ խեղճ պոմպէյցիները չատ քաղաքավարի են—նոքա սիրում են արժանիքը յարգել։ Բայց նոքա միայն մի փոքրիկ քաղաքի բնակիչներն են—sperome-liora։ Ներս չերթանք»։

«Անպատճառ. քանի որ բանաստեղծութիւնը չենք լսում, մեր ժամանակը վատնուած է»։

Այս րոպէին մօտաւորապէս քսան հոգի մեկ անդամից դուրս խուժեցին բաղնիքից դէպի պորտիկոն. և մի դերի, որ կանգնած էր մի փոքրիկ նրբանցքի դրանը ներս հրամցրեց բանաստեղծին, Գլոկուսին, Կլոդիուսին և մի ամբողջ խումբ քնարերգակի բարեկամներից։

«Աղքատիկ տեղ է սա, ի աղղատելով Հռոմի թերմերին», ասաց Լեպիդուս, արհամարհական եզանակով։

«Այնու ամենայնիւ առաստաղը ճաշակով է շինուած», ասաց Գլոկուս, որ ամեն բան հաւանելու տրամադրութեան մէջ էր գտնւում, ցոյց տալով յարկի վրայ բանուած աստղերը։

Լեպիդուս չարժեց իւր ուսերը, բայց իրեն չափազանց ծոյլ էր զգում պատասխանելու։

Նոքա մտան մի փոքր ինչ մեծ սենեակի մէջ, որ ծառայում էր իբրև ա պ ո դ իտերիում (այսինքը մի տեղ ուր լողացողները պարապւում էին իրենց հեշտասիրական լուացումների համար)։ Դմբէթաձև առաստաղը կանգնած էր մի քինի վրայ, որ վառվռում էր

զանազան անհրեմի նկարների գոյներով. առաստաղի վրայ գծուած էին ոսկեայ բաժանմունքներ ՝ որոնց կարմիր ներքոյ. մաքուր և փայլուն յատակը ներկուած էր սպիտակ մոզայիկով, և պատերի մօտ չարուած էին, նըստարաններ լաճախորդների հանգստութեան համար։ Այս սենեակը չունէր այն բազմաթիւ և մեծ պատուհանները, որոնց Վետրովիտսը վերագրում է իր աւելի չքեղ առնարանին։ Պոմպէյինները, ինչպէս նաև բոլոր հարուստները իսալացիները, սիրում էին արտաքսել իրենց հրատապ երկիւղները լոյսը, և իրենց հեչտասիրական հնարքների մէջ նըմա զուգում էին ազօտութեան և փափկասիրութեան գաղափարները։ Երկու ապակեայ *) պատուհաններից՝ միայն ներս էր տանում փափուկ և մեղմ լոյսը. և առաստաղի այն մասը, որի մէջ զետեղուած էր այս պատուհաններից մէկը զարդարուած էր Տիտանների կործանման մի մեծագիր բէլիէֆ պատկեր։

Այս սենեակի մէջ Վուլվիտսը բազմեց զաւակներին եղբայրակի, և նոցա ուսուցիչները հաւաքուեցան նոցա շուրջը քաջալերելով նրան սկսելու իր ընթերցումը։

Բանաստեղծը մի երկրորդ հրաւէրի չսպասեց։ Նա դուրս քաշեց իր ծոցից պապիրոսի մի պարան, և երեք անգամ «ընդմ» անելով, թէ մարդկանց ուշադրութիւնը գրաւելու և թէ իր ձայնը մաքրելու համար, սկսեց իր հրաշալի քնարերգութիւնը, որից, ոչ մի տուն ձգելի

*) Պոմպէյի հնութիւնները ապացուցին հնագէտների այն վարդ հաստատած սկզբը, թէ հասարակաց չունէին ապակեայ պատուհաններ։ Ապակու գործածութիւնը, ինչպիսի, ընդհանրացած չէր միջին և ստորին դասակարգի մարդկանց մէջ։

չէ եղած գանել։ Նայելով նորա սացած գովասանութեան՝ տարակոյս չկայ, որ նորա բանաստեղծութիւնը արժանի էր նորա հռչակին. և Վլոկուս միակ ազնիւրն էր, որ այդ կարը չգերազանց Հորատի լատազոյն քնարերգութիւններից։

Բանաստեղծութիւնը վերջացաւ. նոքա, որ ուզում էին սրտ ջրով լողանալ, սկսեցին հանուիլը. նոքա կանգնին իրենց զգեստները որիին փակցրած կեռերից, և նոցա փոխարէն առան իրենց վրայ արձակ պատմուճաններ, ոմանք իրենց գերիներից և ոմանք բաղնիքի ծառաներից, սակն մարդ իր տասիճանի համեմատ. վասոյ մնաց այն սիրուն և կլորակ չինութեան մէջ, որ դեռ կենում է յաճախ հարաւային անլուսայ սերունդի։

Աւելի զեղեցը մի ուրիշ գռնով գնացին ա ե լ ի պ ա բ ի ու մ ը, մի սեղ, որ հանգիստ տասիճանով տաք էր. բաղնիքի այդ մասը տանում էր իր ջերմութիւնը մասամբ մի չարժական կրակարանից, բայց գլխաւորապէս իր տակից յատակի միջոցով, որի տակից լ ա կ ո ն ի կ ո ւ մ ի կրակը տաքացնում էր բաղնիքը։

Լողացողներից նոքա, որ մնում էին բաղնիքի այս բաժանմունքի մէջ, զգեստները հանելուց յետոյ մի քիչ կանգ էին առնում վայելել հեչտալի օդի արուեստական ջերմութիւնը։ Եւ այս սենեակը, ինչպէս վայել էր իր նչանաւոր գիրքին լողարանների երկար չարքի մէջ, աւելի ճոխութեամբ և աւելի արուեստով էր զարդարուած քան միւսները. կամարակապ առաստաղը ծածկուած էր գեղեցիկ քանդակներով և նկարներով. վերի պատուհանները, յղկուած ապակուց, զարդ էին լուսյ բեկլիկ և տարատամ ճառագայթներ. սուսար քիւերի տակ կային մեծ և դուրս ցցուած բէլիէֆ պատկերներ.

պատերը վառվռում էին կարմիր գոյնով, և քառանկիւնաձև յատակը չատ ճարտարութեամբ բանուած էր ճերմակ մոզայիկով։ Նոքա, որ բաղնիք երթալը սովորութիւն էին չինած, ասկնքն մարդիկ, որոնք օրական եօթն անգամ պիտի լողանային, այստեղ մնում էին մի թուլացած և անխօս դրութեան մէջ ջուրը մտնելուց կամ առաջ և կամ (ինչպէս աւելի յաճախ պատահում էր) յետոյ։ ԵՒ այս առողջապահութեան զոհերից չատերը դարձնում էին իրենց արտայայտութիւնից զուրկ աչքերը դէպի առեղ մի նորեկ, ումանց հետ իրենց ծանօթութիւնը յայտնում էին միայն դլխի մի չարժումով սարսափելով խօսակցութեան պիտոյից։

Ախտերից խումբը նորից բաժանուում էր. ումանք երթում էին սուդատորիումը, որը համապատասխանում էր մեր այսօրուայ չոգու բաղնիքին, և այնտեղից տաք բաղնիքը. նոքա, որոնք աւելի վարժ էին, և չէին քաշւում յղնութիւնից ուղղակի դիմում էին դէպի կալիդարիումը, կամ ջրի բաղնիքը։

Որպէս դի մեր նկարագրութիւնը թերի չլինի, և որպէս դի մի կատարեալ դաղափար տուած լինենք ընթերցողին, այս, նախնիների ամենամեծ զեղխութեան վերաբերմամբ, մենք կը հետևենք Լեպիդային, իր լուացման բոլոր ընթացքի մէջ։ Նա կանոնաւորապէս մտաւ ամեն մի լողարան բացի պաղ բաղնիքից, որը այդ ժամանակ այլ ևս մոդա չէր։ Աստիճանաբար տաքանալով տեպիդարիումի մէջ, որը քիչ առաջ նկարագրեցինք, պոմպէյցի վայելուչ երիտասարդը իր քայլերն ուղղեց դէպի սուդատորիումը։ Թող ընթերցողը երևակայէ մի չոգու բաղնիք, որի օդը լի է անուշահոտութիւններով, և նա կունենայ իր առջև բաղ-

նիքների այս մասը։ Երբ մեր լողացողը վերջացրեց այս բաժանմունքի պատշաճ արարողութիւնները, նորա գերիները, որ բաղնիքի մէջ սպասում էին նրան, սկսեցին մի սեռակ քերիչով սրբել նրա մարմնից տաքութեան ցողերը։ Անտեղի չէր լինի այստեղ ասել, որ մի նոր ճանապարհորդ ամենայն ըղձութեամբ նկարագրում է այդ քերիչները որպէս կեղտը մաքրելու գործիքներ, մինչդեռ կեղտի ոչ մի հիւլէ չէր կարող նստած լինել լողամոլ հռոմայեցու յղկուած մարմնի վրայ։ Այնտեղից, երբ մի քիչ զովացաւ, նա մտաւ ջրի բաղնիքը, որի վրայ չռայլութեամբ ածուած էին նոր անուշահոտութիւններ, և անհնարին հակառակ կողմից դուրս գալու ժամանակ, մի զովացուցիչ տարափ տեղայնում էր նրա գլխի և մարմնի վրայ։ Յետոյ, վաթսթուելով մի թեթև վերարկուի մէջ, նա նորից վերադարձաւ տեպիդարիումը, ուր նա դտաւ Պլոկուսին. մեր լոյնը դեռ չէր մտած սուդատորիումը։ Եւ այժմ այստեղ, այսինքն տեպիդարիումի մէջ սկսում էր բաղնիքի գլխաւոր զուարճութիւնը և զեղխութիւնները։ Գերիները օծում էին լողացողներին ոսկեայ, արծաթաներկ կամ բիւրեղեայ սրուակներից որոնք բանուած էին թանկագին քարերով, և պարունակում էին աչխարհի ամեն կողմից բերուած հաղուագիւտ օծանելիներ։ Հարուստների գործածած օճառային բաղադրութիւններից մի քանիսի նկարագրութիւնը բաւական կը լինէր մի ամբողջ հատոր լեցնելու, մանաւանդ եթէ այդ հատորը ապագրուէր մի մօդալի հրատարակչի ձեռքով. Amaracinum, Megalium, Nardum-Omne quod exit inum. — Այս միջոցին կից սենեակից լսում էր երաժշտութեան վաւիկ մեղեդին. նոքա, որ չափազանց միայն յաճախում էին բաղնիքները, թարմանալով և նոր այժ առա-

նալով այդ հաճելի արարողութիւնից՝ խօսակցում էին վերահին երիտասարդացած կեանքի բոլոր ջերմութեամբ և եռանդով։

«Օրհնեալ լինի նա, որ բաղնիքը հնարեց», ասաց Գլոկուա պահելով այն բրոնզեայ նռասարաններից մէկի վրայ, որոնց այսօր իսկ Պոմպէյի պեղելուն կարող է տեսնել նոյն ատիտարիումի մէջ. անզգաստաւ այդ ժամանակ դուքա ծածկուած էին փափուկ օթոցներով։ «Թէ Հերկուլէսը եղած լինի նա թէ Բաքոսը, արժանի է աստուածանալու»։

«Բայց ասացէք ինձ», ասաց մի հասուսակար քաղաքացի, որ հետաքրքրում էր և վինջում էր մինչդեռ նրա մարմինը չիւում էին, «ասացէք ինձ ով Գլոկուա — դրսից անդի ձեռքերդ, զերի, ինչու այդպէս կոպտութեամբ ես արտրում, ասացէք ինձ... ուխ... ուխ Հռոմի բաղնիքները իսկապէս այդքան չքեղ են»։ Գլոկուա զարհուռ և տեսաւ որ Պիտիդն էր իրեն հարց ուղղողը, թէև շատ դիւրին չէր նրան ճանաչել, խեղճ մարդու թչերը այնքան կարմրել և ուռել էին չիուելու քրտնաթոր աշխատութիւնից, որին նա ենթարկուել էր։ «Կարծում եմ սրանից շատ աւելի լաւ պիտի լինեն. այնպէս չէ»։ Գլոկուա զսպելով իր ժպիտը՝ պատասխանեց.

«Երևակայեցէք, որ ամբողջ Պոմպէյի քաղաքը բաղնիքների վոխարկուած լինի, և այն ժամանակ դուք մի զգալիար կունենաք Հռոմի կայսերական բաղնիքների մասին։ Բայց մի զգալիար նորա մեծութեան մասին միայն։ Երևակայեցէք մտաւորական և ֆիզիկական բոլոր զուարճութիւնները — թուեցէք բոլոր այն մարմնամարզական խաղերը, որ մեր հայրերը հնարած են; — հաշուեցէք բոլոր այն գրքերը, որ դուրս են եկած Յունաստանից և Իտալիայից — ենթադրեցէք յարմար վայրեր բոլոր այս խաղերի համար — աւելացրէք դրանց վրայ ամենամեծ և ամենաբարդ հարստարապետութեամբ կառուցուած բաղնիքները — այդ բոլորի մէջ սիրեցէք պարտէզներ, թատրոններ, պորտիկոներ, ուսումնարաններ — մէկ խօսքով, երևակայեցէք աստուածների մի քաղաք, բաղկացած միայն պալատներից և հասարակաց չինութիւններից, և դուք կարող էք մի թոյլ գաղափար ունենալ Հռոմի մեծ բաղնիքների չքեղութեան վրայ»։

«Ո՛վ Հերկուլէս», ասաց Պեամէդ, չռելով իր աչքերը, «մի ամբողջ կեանք է հարկաւոր այդ բաղնիքների մէջ մէկ անգամ լողանալու համար»։

«Եւ Հռոմում յաճախ այդպէս է պատահում», ասաց Գլոկուա լրջօրէն։ «Շատեր կան, որ չէնց միայն բաղնիքներումն են ապրում։ Նոքա մտնում են այնտեղ անմիջապէս, երբ դռները բացւում են, և մնում են մինչև դռները փակելու ժամանակ։ Կարծես նոքա ոչինչ չգիտեն Հռոմի մնացեալ մասի վրայ, կարծես նոքա արհամարհում են ամեն ուրիշ կեանք։

«Պռլուք վկայ, դուք ինձ զարմացնում էք»։

Նոյն իսկ այն մարդիկը, որ օրական երեք անգամ միայն լողանում էին, նորից իրենց բոլոր կեանքը այս ձևով էին անցկացնում։ Նոքա կատարում էին իրենց մարզումը տէննիսի բակում կամ պարտիկոներից մէկի մէջ, պատրաստուելով առաջին անգամ լողանալու համար. բաղնիքից յետոյ նոքա մտնում էին թատրոնը զուարճանալու։ Նոքա ուտում են իրենց պրանդիումը (ճաշը) ծառերի տակ, և մսածում են իրենց երկրորդ բաղնիքի վրայ։ Մինչև տակը պատրաստուէր, նոքա մարսում էին ճաշը։ Երկրորդ բաղնիքից յետոյ նոքա քայլում էին դէ-

պի պերիսաիլներից մեկը մի նոր բանաստեղծութիւն լսելու, կամ դրագարանը մի հին քերթուածի վրայ քննելու։ Յետոյ գալիս էր ընթրիքը, որը նորից բաղնիքի մի մասն էր համարւում. յետոյ մի երրորդ անգամ էլ նոքա մտնում էին լողարանը, որպէս ամենից յարմար վայրը իրենց բարեկամների հետ խօսակցելու։

«Հերակլը վկայ, մենք նոցա օրինակներն ունինք Պամպէյի մէջ»։

«Այո, բայց առանց այն պատճառի, որ նոքա ունին։ Հռոմէական բաղնիքների չքեղակեաց հիւսուածքները երջանիկ են. նոքա ոչինչ չեն տեսնում այլ միայն շուք և փառք. նոքա չեն երթում քաղաքի կեղտոտ կողմերը. նոքա չգիտեն, որ աշխարհի մէջ չքաւորութիւն կայ։ Ամբողջ բնութիւնը ժպտում է նոցա համար, և միայն այն ժամանակ է խոժոռւում իւր կերպարանքը երբ նրանց ուղարկում է վերջին անգամ լողանալու Պոքիտուսի բաղնիքի մէջ։ Հաւատացնում են ձեզ, որ միայն նոքա են ձեր ճշմարիտ փիլիսոփաները»։

Մինչդեռ Վլոկուս այսպէս խօսակցում էր, Լեպիդուսի վրայ կատարւում էին բոլոր խորհրդաւոր ծիսակատարութիւնները, որոնց ամենափոքրիկը նա թոյլ չէր տալիս իւր ծառաներին զանց առնել. իսկ ինքը բոլոր ժամանակը ընկղմած էր աչքերը կիսաբաց, և չնչառութիւնը հազիւ նկատելի։ Անուշահոտութիւններից և օծանելիքներից յետոյ վերինները ածեցին նրա վրայ այն փոշին, որ չերմութիւնը այլ ևս թոյլ չէր տալիս նորա մարմնի վրայ ազդել. յետոյ այս փոշին չվնասին ոսկեաքարի յղկուած կտորով, և նա սկսեց հագնել ոչ թէ այն զգեստները, որ հագած էր, այլ մի աւելի չքեղ ձեւը, որ կոչւում էր «սենթեսիս». զորանով հռոմէ-

յիք սովոր էին ցոյց տալ իրենց յարգանքը դէպի ընթրիքը, եթէ, նայելով կերակուրի ժամանակին, (որ քան մեզ ժամը երեքն էր), աւելի յարմար չէր գրան ձաչ կոչել։ Այդ էլ որ վերջացաւ Լեպիդուս բացաւ իւր աչքերը և կենդանութիւան նշաններ տուաւ։

Նոյն միջոցին, Սալլուստ ևս, յայտնեց իւր գոյութիւնը մի երկար յօրանջումով։

«Ընթրիքի ժամանակ է», ասաց Լեպիդուսը. «գուք Վլոկուս և Լեպիդուս եկէք ընթրելու ինձ հետ».

«Ինչեղէք, որ գուք երեքդ էլ գայով չարաչի հրաւիրուած էք իմ տունը», գոչեց Պիտէդ, որ վերին սանիճանի պարծենում էր իւր բարձրաստիճան ծանօթների վրայ։

«Այո, այո, մենք կիշում ենք», ասաց Սալլուստ. «կիշողութեան կեդրոնը անատրակոյս սասմոքսի մէջ է, քեմ Պիտէդ»։

Դուրս գալով փողոցը և զով օդի մէջ՝ մեր այդ օրուայ պարոնները վերջացրին իրենց բաղնիքի բոլոր գործողութիւնները։

Գլուխ Ը.

Արբակ հանգիստ նստում է իւր գործերը և չահում է։

Երեկոն իւր վերարկուն տարածած էր անհանգիստ քաղաքի վրայ, երբ Ալեկսիդէս ճանապարհ ընկաւ դէպի Եպիտուսը տունը։ Նա խոյս էր տալիս աւելի բազմամարդ և լուսաւորուած փողոցներից. և մինչդեռ նա քայլում էր դիմիկար, իւր թևերը թաղրած իւր վերարկուի տակ, նա իւր լուրջ կերպարանքով և հիւծուած դէմքով, ներկայացնում էր մի զարմանալի հակապատկեր այն

մարդկանց, որոնք երբեմն անցնում էին նորա կողքից՝ անհոգ ճակատներով և ոգևորված ձևերով։

Ի վերջոյ, ամեն լուռ և ծանր կեցուածքով մի մարդ, որ երկու անգամ անցած էր Ալեկիզէսի մօտից մի տարօրինակ և կասկածալից նայուածք ձգելով նորա վրայ ձեռք դպցրեց նորա ուսերին։

«Ալեկիզէս», ասաց նա, և իր ձեռքերով մի արագ չարժում գործեց. դա խաչի նշանն էր։

«Վաւ, նազովրեցի», պատասխանեց քահանան ամենի դէմ նայուածքով, «ինչ ես ուզում»։

«Ո՛չ», ասաց օտարականը, «ես չէի կամենում ընդմիջել քո մտածութիւնները, բայց երբ վերջին անգամ հանդիպեցինք՝ դու ամենի լաւ ընդունելիր ինձ»։

«Ես չուզեցի անբաւարար լինել դէպի ձեզ, Օլինթոս. բայց ես տխուր եմ և յոգնած և չեմ կարող այս պիչեր վիճաբանել այն նիւթերի մասին, որոնք ամենից շատ ախորժելի են ձեզ։

«Ո՛վ Թուլասիրա», ասաց Օլինթոս դառն անձկութեամբ. «դու տխուր ես և յոգնած և դու փախչում ես այն աղբիւրներից, որոնք կարող են քեզ մխիթարել և ոյժ տալ»։

«Ո՛վ երկիր», գոչեց երիտասարդ քահանան, կոճեղով իր կուրծքը յուզուած կերպով», արդեօք որ կողմից պիտի բացուին իմ աչքերը դէպի ճշմարիտ Աստուածը, ուր քո աստուածներն իսկապէս բնակուում են։ Արդեօք ընդունեմ, այս մարդու հետ, թէ իմ հայրերիս այնքան տարուայ պաշտած աստուածները ոչ գոյութիւն ունեն և ոչ անուն։ Արդեօք փչեմ իմ ամենասուրբ նկատած սեղանները, որպէս հայհոյական և պիղծ մի բան, կամ մտածեմ լինչպէս Աբրակը... ինչ։

Նա լռեց, և արագութեամբ հեռացաւ. նա իր անհամբերութեամբ նմանում էր մի մարդու, որ ուզում է ինքն իրենից ազատուիլ։ Բայց նազովրեցին այն տակուն, կորովի և ոգևորութեամբ լի մարդկանցից մէկն էր, որոնց ձեռքով Աստուած ամեն ժամանակ գործել է իր յեղափոխութիւնները երկրի երեսին, և մանաւանդ նորանցից, որոնք հաստատեցին և բարեփոխեցին Աստուծոյ կրօնքը.— մարդիկ, որոնք կազմուած էին հաստատիչներ սահմանելու, որովհետև կազմուած էին տակալու համար։ Այս կազապարի մարդիկն են, որոնց ոչինչ չէ թուլացնում, ոչինչ չէ վախեցնում. հաստատի ջերմեռանդութեան մէջ նոքա ներշնչուած են և նոքա ներշնչում են։ Նոցա բանականութիւնը նախ զրգռում է նոցա կիրքը. բայց կիրքն է այն գործիքը, որով նոքա աշխատում են. նոքա բանի մտնում են մարդկանց սրտերի մէջ՝ մինչդեռ առ երեսի կարծես միայն մարդու պատուղութեան հետ գործ ունին։ Ոչ մի բան այնքան տարափոխիկ չէ, որքան ոգևորութիւնը. դա իսկապէս Որփէոսի պատմութեան աղեղորիան է—դա չարժում է քարերին, դա հմայում է գազաններին։ Ոգևորութիւնը անկեղծութեան ոգին է. և ճշմարտութիւնը առանց դորան, ոչ մի յաղթանակ չէ տանում։

Օլինթոս թուլ չը տուաւ որ Ալեկիզէս այսպէս չուտով իր ձեռքից խոյս տայ։ Նա հասաւ նորա ետևից և այսպէս սկսեց խօսել։

»Ես չեմ զարմանում, Ալեկիզէս, որ դու նեզանում ես ինձանից. որ քո մաքի բոլոր տարերք ցընցուում են երբ ես խօսում եմ քեզ հետ. որ դու ընկղմած ես կասկածների մէջ. որ դու ծփում ես մաքի տարակուսանքի և մթութեան անհուն ովկիանոսի վերայ։ Ես չեմ

զարմանում, ասացի, բայց մի քիչ էլ համբերություն ունեցիր ինձ հետ. զարթուն կաց և աղոթիր, խաբարը կը վարատուի, վոհորիկը կը դադարի, և ինքը Աստուած, ինչպես քայլեց Գալիլիայի ծովի երեսին, նոյնպես պիտի քայլէ խոնարհուած ալիքների վերայ և պիտի դայ քո հոգին փրկելու։ Մեր կրօնքը նախանձաւոր է իւր պահանջների մէջ, բայց ինչքան անհունապէս չտալ է իւր պարգևների մէջ։ Դա մէայն մի ժամ կը վրդովէ քեզ, բայց կը վարձատրէ մի ամբողջ անմահութեամբ»։

«Այդպիսի խոստումները», ասաց Ալեկիպէս թիթառած ներսով, «այն խաղերն են որոնցով մարդկանց խարում են։ Ո՛հ, վատաւոր էին այն խոստումները որոնք ինձ առաջնորդեցին դէպի Խաչի խորանը»։

«Բայց», պատասխանեց նազովրեցին, «քո դատողութեանդ հարցրու, արդեօք կարող է ճշմարիտ լինել այն կրօնքը, որ բռնաբարում է ամեն բարոյականութիւն։ Զեզ պատուիրում են պաշտել ձեր աստուածներին։ Ի՞նչ են այդ աստուածները, նոյն իսկ ձեր խօսքին նայելով։ Ի՞նչ են նոցա գործքերը, նոցա յատկութիւնները։ Արդեօք նոքա չեն ներկայացնում ձեզ որպէս ամենատես ոճրագործներ, այնուամենայնիւ դուք սիրատած էք ծառայել նրանց, որպէս ամենատուրը աստուածների։ Արամազդը ինքը մի հայրասպան է և մի շնացող։ Ի՞նչ են աւելի վատը աստուածները, եթէ ոչ նոցա մոլութիւնների հեղհեղները։ Ձեր կրօնքը պատուիրում է ձեզ մարդասպանութիւն չգործել, բայց դուք հրկրպատութիւն էք անում մարդասպանների առջև, պատուիրում է ձեզ չնութիւն չգործել. բայց դուք ուղղում էք ձեր աղօթքները դէպի շնացողներ։

«Ո՛հ, ինչ է այս բոլորը եթէ ոչ ծաղր դէպի մարդու բնաւորութեան ամենատուրը մասը, այն է հաւատքը։ Պարթեր այժմ դէպի Աստուած, միակ և ճշմարիտ Աստուածը, որի խորանի առջև ես ուզում եմ առաջնորդել քեզ։ Եթէ նա չափազանց վեհ, չափազանց աստեղամած թուալ մարդկային հասկացողութեան համար, Արաբչի և արարածների մէջ եղած նուրբ յարաբերութիւնների համար, որոնց գաղափարից չեն կարողանում բաժանուիլ թոյլ սրտերը, այն ժամանակ դիտիր Նորան, Նորա Որդու մէջ, որ մեզ պէս մարդկութիւն զգեցաւ։ Նորա մարդկութեան պատմութեան մէջ չեն արձանագրուած, ինչպէս ձեր առասպելական աստուածների պատմութեան մէջ, մեր բնաւորութեան մոլութիւնները, այլ ամեն առաքինութեանց իրագործումը. Նորա մէջ միացած են ամենախիտ բարոյականութիւնը և ամենախիստ դորովը։ Եթէ նա մի հասարակ մարդ եղած լինէր, նա արժանի կը լինէր Աստուած կոչուելու։ Դուք յարգում էք Սոկրատեսին — նա ունի իւր հետևողները, իւր աշակերտները, իւր ուսումնարանները։ Բայց ինչ են այդ աթենացու կասկածելի առաքինութիւնները Քրիստոսի վայրկեան, անվիճելի, գործնական, անխոնջ և անձնուէր սրբութեան առջև։ Ես խօսում եմ քո հետ իսկ Նորա մարդկութեան վրայ։ Նա եկաւ այդ մարմնով, որպէս մի օրինակ ապագայ դարերի համար. նա եկաւ մեզ ցոյց տալու այն առաքինութեան ձևը, որը Պլատոն տեսնում էր մարմնացած տեսնել։ Այս էր ճշմարիտ զոհարերութիւնը, որ նա կատարեց մարդկութեան համար, բայց այն լուսատուակը, որ շրջապատած էր Նորա մահուան ժամը ոչ միայն լուսաւորեց ամբողջ աշխարհը, այլ բացեց մեր առջև երկնքի հրաշալիքները։ Իմ խօսքերս ազդեցին քեզ վրայ, — քո սիրտը յուզուեցաւ։ Ա-

տուած դործում է քո սրտի մէջ։ Նորա հոգին քեզ հետ է։ Եկ, մի ընդդիմանար այդ սուրբ մղումին։ Դու ախուր ես, դու յոգնած ես։ Լսիր ուրեմն Աստուծոյ խօսքերին։ «Եկէք ինձ», ասում է նա, «Ով ծանրաբեռնեալներ, և ես ձեզ հանդիստ կը տամ»։

«Ես հիմա չեմ կարող», ասաց Ապէկիդէս. «ուրիշ անդամ»։

«Հիմա-հիմա», գոչեց Օլիբիուս անձկութեամբ և բռնելով նորա թեից։

Բայց Ապէկիդէս դեռ չէր նախապատրաստուած բայ թողնելու այն կրօնքը, այդ կեանքը, որի համար նա այդքան զոհողութիւններ էր արած, և միւս կողմից եղիպտացու խոստումները նորա մտքից չէին հեռանում, նա հետևաբար ուժով դուրս քաշեց իւր թևը քրիստոնէի ձեռքից, և դգալով, որ իւր կողմից մի ճիգ էր հարկաւոր յաղթելու այն վարանմունքին, որ քրիստոնէի պերճախօսութիւնը առաջ էր բերած նորա անդալին և վառուած մտքի վրայ, նա սկսեց վախչել այնպիսի արագութեամբ, որ նրան հետևելը անօգուտ կը լինէր։

Նա վերջապէս չնչաստող և յոգնած հասաւ քաղաքի մի հեռաւոր և բաժանուած մասը, և եղիպտացու միայնակ տունը յայտնուեց նրա առջև։ Մինչդեռ նա կանդնած էր չունչ առնելու, լուսինը դուրս եկաւ մի արծաթագոյն ամպի եռևից, և լուսաւորեց այդ խորհրդաւոր բնակութեան որմերը։

Ոչիչ ոչ մի տուն չկար դորա մերձակայքում, չինութեան առջևում խիտ առ խիտ հիւսուած էին մշտադալար ծառերը, նիրհած էին մեղամաղձիկ լուսնի ճառագայթների տակ. ամէն հեռուն տարածուած էր հեռաւոր քլուբների սառերագիծը, և նոցա մէջ Վեսուվի հանդարտիկ գագաթը ոչ այնքան բարձր, որքան ճանապարհորդը կարող է տեսնել այսօր։

Ապէկիդէս անցաւ կամարաձև որթերի տակից և հասաւ լայն ու մեծ պորտիկոյի առջև։ Դրան դիմաց և սանդուղքների իւրաքանչիւր կողմում դրուած էր եղիպտական սֆինքսների մի մի արձանը. լուսնի ճառագայթները տալիս էին մի աւելի հանդիսաւոր անդորրութիւն այն մեծ, ներդաշնակ և անկիրթ դէմքերին, որոնց մէջ, իմաստութեան այդ տիպի քանդակագործները միացնում էին այնքան քնքշութիւն, այնքան անաւորութեան հետ. սանդուղքների մէջ տեղում մոխի գոյնով երևում էին հալուէի կանանչ և մեծ տերևները. և արևելեան աբմուկնու երկար և խաղաղիկ ճիղերը մասամբ ձգած էին լրենց սառերը սանդուղքների մարմարեայ մակերևոյթի վրայ։

Մի ինչ որ բան կար այդտեղի լռութեան, և քանդակուած սֆինքսների տարօրինակ կերպարանքների մէջ, որ քուրմին ազդում էր մի անանուն և ուրուական երկիւղ, և մինչդեռ նա բարձրանում էր դէպի դուռը, նա տենչում էր մինչև անգամ, իւր անձային քայլերի մի արձագանքը լսել։

Դրան ճակատին կար մի դրութիւն, որի տառերը անծանօթ էին նրա աչքերին. նա դուռը բաղխեց և դա քաջուածաւ առանց մի ձայնի, մի բարձրանասակ եթովպացի տարուկ, առանց խօսելու կամ բարևելու, նշան արեց նրան, որ ներս մտնի։

Մեծ սրահը լուսաւորուած էր բարձր և բրոնզեայ աշտանակներով։ Պատերի վրայ չինուած էին անագին

հիէրոգլիֆներ, մութ և լուրջ գույներով. դա մի հակապատկեր էր ներկայացնում այն փայլուն գույների և չնորհալի պատկերների, որոնցով Խալվալի ժողովուրդը սովոր էր զարդարել իր բնակարանները։

Սրահի մեջ ծայրում կանգնած էր մի պերի, որի կերպարանքը թէև ոչ ափրիկեան, այնուամենայնիվ չատ աւելի թուխ մի երանգ ունէր քան հարաւի սովորական բնակիչները. պերին մօտեցաւ նրան պիտաւորելու։

«Արքային եմ ուզում», ասաց քահանան, բայց նորա ձայնը դողում էր նոյն իսկ իր ականջում։ Պերին լուռ գլուխ տուեց, և Ապէկիպէսին հրամցնելով սրահից դուրս դէպի չինուհեան մի թևը՝ վերև առաջնորդեց մի նեղ սանդուխանների. յետոյ անցնելով պահապան սենեակների մէջից, ուր քահանայի ուշադրութիւնն ամենամեծ և ամենանշանաւոր առարկան դեռ ափինքսի խիտ և մառախուղ վեզեկուիխնն էր՝ Ապէկիպէսը մտաւ մի նեղ և կիսով չափ լուսաւորուած սենեակ, ուր դրուած էր եղիպտացին։

Արքայ նստած էր մի փոքրիկ սեղանի առջև, որի վերա բաց ընկած էին զանազան պապիրուսներ դրուած մեծ մխինդն տառերով, որ նա սեսել էր ապարանքի դրան ճակատին։ Քիչ հեռուն դրուած էր մի փոքրիկ եռոտանի, որից կամաց կամաց բարձրանում էր խունկի ծուխը։ Նորա մօտ կար մի ադամին գոտի, որի վրայ նկարուած էին երկնքի նշանները. և մի ուրիշ սեղանի վրայ դրուած էին տարօրինակ և զեղեցիկ ձևի գործիքներ, որոնց գործածութիւնը անծանօթ էր Ապէկիպէսին։ Սենեակի հեռաւոր ծայրը ծածկուած էր վարագոյրով. առաստաղի երկայնաձև պատուհանից մանում էին լուսնի

ճառագայթները, և մի տրտում խաւնուտ էին կազմում սենեակի մյակ ճրագի լոյսի հետ։

«Նամբր Ապէկիպէս», ասաց եղիպտացին, առանց կանգնելու։

Երիտասարդը հնազանդեց։

«Դու ինձանից հարցնում ես», ասաց Արքակ, մի կարճ լռութիւնից յետոյ, երբ նա կարծես խորասուզուած էր իր մտածութեանց մէջ։ Դու ինձանից հարցնում ես, կամ ուզում ես հարցնել այն անաւոր գաղտնիքները, որ մարդու հոգին ընդունակ է ըմբռնելու. դա կեանքի առեղծուածն է, որ դու ուզում ես լուծեմ քեզ համար։ Մի կարճ ժամանակուայ համար դրուած լինելով այս նեմ և սահմանափակ գոյութեան մէջ՝ ինչպէս երեխաները խաւարի մէջ, մենք կազմում ենք մեր ուրուականները մոռութեան քօղի տակ. մեր մտքերը երբեմն սարսափած լետ են խորասուզում մեր մէջ և երբեմն վայրենարար նետուում են մեզ շրջապատող անչափիլ խաւարի մէջ, անելմն ենթագրութիւններ անելով թէ դա ինչ է պարունակում՝ այս կոյր խարխափանքի մէջ մենք կարկառում ենք մեր ձեռքերը այս և այն կողմ, որպէս զի մեր ոտքերը չկպչին մի որ և է անուսանելի վտանգի դէմ. մենք չենք ճանաչում մեր սահմանները. երբեմն մենք խեղդուում ենք նոցա ճնշումով, և երբեմն տեսնում ենք, որ նոքա տարածուում են հեռու և հեռու մինչև անհետանում են յաւիտենականութեան մէջ։ Այս դրութեան մէջ բոլոր խմաստութիւնը կամայ ակամայ պատնակուած է երկու տարբի լուծման մէջ—«Ի՞նչ բանի պիտի հասատանք և ինչ բան պիտի հերքենք։ Սոքա չեն այն հարցերը, որոնց վճիռն ուզում էք ինձանից»։

Աբէլիդէս պլուխը խոնարհեցրեց ի նշան հաւատնութեան։

«Մարդը պէտք է մի հաւատք ունենայ», չարունակեց եղիպատցին մի ախուր եղանակով։ «Նա պէտք է կապել իւր յոյսը մի որ և է բանի. երբ դու անարեկւում և սարսափում ես տեսնելով, որ այն բոլորը, որին հաւատացել ես, չքանում և օդն է ցնդում, մարդկօրէն էլ, որ դու ծիսաս անսասուպութեան զարհուրելի և անծայրածիր ծովի երեսին, որ վիտուես մի ապրանակ նրան պպշելու համար, որ ուզես հասնել մի որ և է ցամաքի, որքան էլ մռայլ և հեռաւոր լինին նրա եզերքը։ Լաւ, ուրեմն լսիր։ Դու չես մոռացել մեր այսօրուայ խօսակցութիւնը։

«Մոռացել»։

«Ես խոստովանուեցայ քեզ, որ այն աստուածները, որոնց համար ծխում են այսքան սեղաններ, լոկ անուններ են։ Ես խոստովանուեցայ, որ մեր ծէսերը և արարողութիւնները լոկ խաղեր են լինար ամբոխին հրապուրելու դէպի իւր խնկական բարիքը։ Ես բացատրեցի քեզ, որ ամբոխի այդ պատրանքից առաջ են գալիս ընկերութեան փոխադարձ կապերը, աշխարհի նորդանակութիւնը, իմաստուններին զօրութիւնը. այդ զօրութիւնը կայանում է հասարակութեան հնազանդութեան մէջ։ Թող չարունակենք ուրեմն այս առողջարար պատրանքները, եթէ մարդուն անհրաժեշտ է որևէ հաւատք ունենալ. չարունակենք սովորեցնել նրան այն բանը, որ նրա հայրերը սիրելի են դարձրել նրա համար, և որոնց սովորութիւնը նուիրագործում է և ոյժ է տալիս։ Մինչդեռ մենք մեզ համար վիտուում ենք մի ամէն վերացական հաւատք, որը չափազանց հազուադէպ է մարմնաւոր ամբոխի հասկացողութեան համար։ ուրիշներին թողնենք բաւականանալ միայն մեր սեղանից թափած փշրանքներով։ Սա խմաստութիւն է — մարդասիրութիւն է»։

«Շարունակեցէք»։

«Այս այսպէս լինելով», չարունակեց եղիպատցին, «և իրերի հին դրութիւնը անձեռնմխելի թողնելով նոցա համար, որոնց ուզում ենք լքանել, մենք ամրացնում ենք մեր դռները և մնկնում ենք դէպի հաւատքի նոր մթնոլորտներ։ Անմիջապէս հեռացրու քո լիշողութիւնից, քո մտքից, բոլոր այն բաները, որոնց դու առաջ ոուժով էիր հաւատալ։

Ենթադրիր թէ միտքդ անպատաս է, մի պարզ մտադաղաթ, որ պատրաստ է առաջին անգամ ընդունել իւր վրայ տպաւորութիւններ։ Նայիր, քո շուրջը, նայիր աշխարհի վրայ, նկատիր նրա օրէնքները, կանոնաւորութիւնը, նպատակը։ Մի բան պէտք է ստեղծած լինի այդ բոլորը—նպատակը ցոյց է տալիս, որ կայ մի նպատակ ունեցող. այդ հաստատութեան ցամաքի վրայ մենք առաջին անգամ պիտի դնենք մեր հաւատքի հիմը։ Բայց ինչ է այդ «մի բանը»—մի Աստուած, դուշման ես դու անմիջապէս։ Այդտեղ կանգ առ, չչփոթենք մեզ չփոթեցուցիչ անուններով։ Այն բանի մասին, որ ստեղծած է աշխարհը, մենք չգիտենք, չենք կարող խմանալ որևէ մի բան, բացի սրանից, որ Նա զօր է և պահպանում է մի անփոփոխ կանոնաւորութիւն—խիստ, ճնշող, անգութ կանոնաւորութիւն, որ ուշադրութեան չէ առնում ոչ մի անհատական դէպք, որ թաւալում է, աւերում, ալրում է և առաջ է երթում, հազ չէ թէ ինչ ցրիւ ընկած սրաեր, յաժանուելով ընդհանուր ամբողջից, ընկնում են ցած և

փչրում նորա անիւների ներքև։ Ջարի և բարու խառնուրդը— առատապանքի և չարագործութեան գոյութիւնը, ամեն ժամանակ չփոթեցրել են իմաստասէրներին։ Նոքա ստեղծում են մի աստուած և ենթադրում են որ նա բարի է։ Որտեղից ուրեմն եկաւ չարութիւնը, ինչու նա թոյլ տուեց դրան մտնել աշխարհի մէջ, ոչ, ինչու նա հնարեց այդ, և ինչու չարունակում է պահպանել դրա գոյութիւնը։ Այս հարցը լուծելու համար Պարսիկը ստեղծում է մի երկրորդ հոգի, որի բնութիւնը չար է և ենթադրում է մի անընդհատ պատերազմը նրա և բարութեան աստուծոյ միջև։ Մեր կրօնքի աստուածաշունչ մէջ Տիփոնի մէջ եղիպտացիք երևակայում են մի համանըմանութիւն։ Սակայն ոչքա մոլորեցուցիչ սխալներ են որ էլ աւելի չարաբեղնում են մեզ.—լիմարութիւններ են ծնուած այն ունայն ցնորքից, որ մարմնաւոր, չօչափելի և մարդկային է դարձնում այս անձանօթ գոյութիւնը.— որ Աներևոյթին զգեցնում է նոյն յատկութիւններով և բնաւորութեամբ, որ ունին Երևելիները։ Ոչ. Մոռ այս արարչին մենք տանք մի անուն, որ առաջ չբերէ գաղափարների մի չփոթեցուցիչ համախմբում և միտքերը այն ժամանակ աւելի լուսաւորուած կը լինի—այդ անունը Հարկ է։ Հարկը, ասում են յոյները, բռնապատում է աստուածներին։ Եվ ինչի պէտք են աստուածները, նոցա գործակցութիւնը անհարկաւոր է դառնում—արձակիր նրանց բոլորին։ Հարկն է, որ իշխում է մեր սեռած բոլոր բաների վրայ, և նրա բնաւորութիւնը կազմող յատկութիւններն են, զօրութիւն և կանոնաւորութիւն։ Եթէ աւելի հետաքրքիր լինես ոչ մի բան չես կարող հասկանալ. թէ արդեօք նա յաւիտենական է թէ արդեօք նա սկիզբ ունի մեզ, իր արարածներին, կեանքի մի նոր

ասպարէզի մէջ մտնել այն մթութիւնից ելած, որին մենք կոչում ենք մահ—այդ չենք կարող ասել։ Այժմ թողնենք այս հետաքրքիր, անհետաքննելի, անըմբռնելի զօրութիւնը, և դառնանք այն բանին, որը մեզ համար, նրա գործունէութեան մեծ պաշտօնեան է։ Արանից աւելի բան կարող ենք ասել, աւելի բան կարող ենք սովորել, ապացոյցները գտնում են մեր չուրջ— նրա անունն է Բնութիւն։ Իմաստասիրների սխալը այն բանի մէջն է եղած, որ նոքա ուզել են իրենց հետազօտութիւնները, դէպի Հարկի յատկութիւնները, ուր ամենը խաւար է և կուրութիւն։ Եթէ նոցա հետախուզութիւնները ամմանափակուած լինէին բնութեան մէջ—ինչ մեծ գիտութիւններ ձեռք բերած կը լինէինք մենք արդէն։ Ազատել համբերութիւնը, քննութիւնը երբէք ապարդիւն չեն մնում։ Մենք տեսնում ենք այն բանը, որով հետաքրքրուած ենք. մեր մտքերը բարձրանում են պատճառների և հետևանքների մի չօչափելի առնպատիքից։ Բնութիւնն է ամենամեծ գործակատարը արտաքին սիրեղերքի, և Հարկը տալիս է նրան այն օրէնքները որով նա գործում է, և բաշխում է մեզ այն ունակութիւնները որոնցով մենք քննում ենք. այդ ունակութիւններն են հետաքրքրութիւն և լիշողութիւն—նոցա միացումը բանականութիւն է, նոցա կատարելագործումը իմաստութիւն։ Լաւ, ուրեմն այս սիմերի օգնութեամբ ես քննում եմ անսպառելի բնութիւնը։ Ես քննում եմ երկիրը, օդը, ովկեանը, երկինքը, ես տեսնում եմ, որ նոքա բոլորը մի խորհրդաւոր համակրութիւն ունին միմեանց հետ,—որ լուսինը իշխում է մակընթացութեան վրա,— որ օդը պահում է աշխարհին, և մի միջոց է հակների կեանքի և զգայարանք-

նների համար,—որ աստղերի միասնությամբ մենք չափում ենք երկրի սահմանները,—որ մենք բաժանում ենք ժամանակի մասերը,—որ նոցա աղօտ լոյսով մենք առաջնորդում ենք անցեալի անդունդի մէջ, որ նոցա անսուտ միասնության մէջ մենք կարդում ենք ապագայի գաղտնիքները։ Եւ այսպիսով մինչդեռ մենք չգիտենք թէ ինչ է Հարկը, մենք դէթ իմանում ենք թէ ինչ են նրա վճիռները։ Եւ այժմ ինչ բարոյականութիւն ենք քաղում այս կրօնքից,—որովհետև անտարակոյս դա մի կրօնք է։ Ես հաւատում եմ երկու աստուածների—Բնութիւն և Հարկ. ես պաշտում եմ վերջինին յարգանքով և առաջինին հեառազօսութեամբ։ Ի՞նչ է իմ կրօնքի սովորեցրած բարոյականութիւնը։ Այս որ ամեն բան ենթակայ է ընդհանուր օրէնքների. արեգակը փայլում է ի գնդութիւն չաւերի—դա կարող է տխրութիւն բերել քչերի համար. գիշերը քուն է տարածում ընդհանրութեան վրայ, բայց դա պաշտպանում է իւր թևի տակ մարդասպանին եւս. անտառները զարդերն են մեր երկրի, բայց նոցա մէջ ապաստանում են օձը և առիւծը։ Ովկիանոսը իւր կուրծքի վրայ կրում է հազարաւոր նաւեր, բայց մէկին կլանում է։ Ագռէս բնութիւնը գործում է ընդհանրական չափերի և ոչ տիեզերական չափերի համար. և Հարկը չարունակում է իւր անսուտ ընթացքը։ Այս է բարոյականութիւնը աշխարհիս գարհուրելի գործօնների —և դա է իմը, որ նոցա արարածն եմ։ Ես կը պահպանեմ քրմական մոլութիւնները, որովհետև նոքա օգտակար են ամբոխին. ես կը տարածեմ մարգութեան մէջ Իմ արած գիւտերը, իմ կատարելագործած գիտութիւնները. ես կը վերացնեմ լուսաւորիչ գիտութեան լայնածաւալ յառաջացումը։

Այս բանով ես կը ծառայեմ ժողովուրդին, ես կը հնազանդեմ ընդհանուր օրէնքի տրամադրութեանը. ես կը գործադրեմ բնութեան քարոզած ընդհանուր բարոյականութիւնը Իսկ ինձ համար ես կը պահանջեմ անհատական բացառութիւն. ես կը պահանջեմ այդ բոլոր խմաստունների համար։ Գոհ լինելով որ իմ անհատական գործերը ոչինչ են ընդհանուր բարու և չարի կշեռի մէջ—գոհ լինելով որ իմ գիտութեան արտադրութիւնը կարող է աւելի մեծ օրհնութիւններ տեղալ մեծամասնութեան գլխին, քան իմ փափագներս կարող են չարիք գործել փոքրամասնութեանը, (որովհետև առաջինը կարող է տարածուել մինչև ամենահեռաւոր սահմանները և լուսաւորել դեռ չծնուած աղգեր), ես կը տամ աշխարհին գիտութիւն և ինձ ազատութիւն։ Ես կը լուսաւորեմ ուրիշների կեանքը, և ես կը վայելեմ իմս։ Այո, մեր իմաստութիւնը չափահասական է, բայց մեր կեանքը կարճ. վայելենք այդ կեանքը, քանի դեռ կայ։ Նուիրիր քո երիտասարդութիւնը զուարճութեանց, և քո զղայարանքները հրճուանքի։ Շուտով կը գայ այն ժամը, երբ գինու բաժակը կը փըչրուի, և պակները, կը թոռոմին։ Վայելիր քանի դեռ կարող ես։ Եղիր, ով Ապիկիպէս, իմ աչակերտս և իմ հետևողս։ Ես քեզ կը սովորեցնեմ բնութեան մեքենայութիւնները, նրա ամենամանր և ամենավայրենի գաղտնիքները—այն գիտութիւնը, որին լիմարները կոչում են կախարդութիւն—և աստղերի մեծազօր միստէրները։ Սրա միջոցով դու կարող ես կատարել քո պարտականութիւնդ դէպի ամբոխը. սրա միջոցով դու կարող ես լուսաւորել քո ցեղը։ Բայց ես քեզ նաև կատաղիորեն դէպի այնպիսի վայելքներ, որոնց մասին ամիկը

Ձերազել անգամ չէ կարող. այն ցերեկին, որ դու նուիրուում ես մարդկութեան, կը հետեւէ քաղցրանուէչ գիշերը, որ դու կը նուիրես քո վայելքներին»։

Անմիջապէս եղիսաացու լռութիւնից լսուէր, սեւնեակի վերից, ցածից, չորջից, ամեն կողմից բարձրացաւ երաժշտութեան մի մրմունջ, աւելի անուշ քան Լիդիան երբևիցէ սովորած է կամ Իօնան կատարելագործած։ Դա եկաւ ձայների մի հոսանքի նման չանկարծ ողողելով ղղայարանքները. թուլացնելով և հրճուանքի տակ չաղթահարելով նրանց։ Կարծես աներևոյթ հոգիների մեղեդին լինէր դա, այնպիսի մեղեդի, որ ասկեղէն դարում հովիւը կարող էր լսած լինել Թեսսալիի հովիտների օդի մէջ, կամ Պաթմոսի մէջ, միջօրէի ծառաստաններում։ Այն բոլորը, որ Ապէկիդէսի մտքից վխտացել էին դէպի նրա չրթունքները ի պատասխան եղիսատացու սոփեստութիւններին, դողդողալով աներևութացան։ Նա այնպէս էր զգում, որպէս թէ սրբապղծութիւն կը լինէր խանգարել լարի դիւթիչ ազդեցութիւնը. նրա պղպտած բնութեան զգայնութիւնը, նրա թաքուն հոգու յուզական փափկութիւնը և տալը չանկարծակիի բերուեցան և չաղթուեցան։ Նա ընկղմեց նուագարանի մէջ, բայց չրթունքներով և ծարաւ ականջներով. և մի խումբ քնքոյշ և հեշտաբեր, այն ձայների նման, որ Պանքէին զարթնեցրին սիրոյ դաշինների մէջ, երգեցին հետեւեալ երգը.

ԷՐՈՍԻ ԵՐԳԸ

Այն զով ափի մօտ, ուր հեզ Կեթիսը
Հոսում է կամաց,

Թրթռուն մի ճայն օդի ծփանքից
Սահեց դէպի ցած.
Աւելի չիմնեց տէյեան վարդերի
Ներքակազմ թերթիկ,
Եւ աղաւնիներն իրենց բոյնի մէջ
Կուչ եկան հեզիկ։
Փափուն ժամերը կանգ առան լսել
Եթերքում երկնի,
Եւ նոցա ձեռքից թափուեցան ծաղկունք,
Մաղկունք ծիրանի.
Պանի քարայրից մինչև էգէլի
Կախարդուած անձաւ
Դիւթուած աչխարհը մէկ անուչ հառաչ
Մէկ հառաչ դարձաւ։
«Սիրեցէք ուրեմն, որդիք աչխարհի,
Ես Ույժն եմ Սէրի,
Ինչպէս Բաօսը ես անդրանիկն եմ
Ո՛ղջ աստուածների.
Իմ ժպիտները վերին եթերքում
Տարածում են լոյս,
Իմ համբոյրներից բանում է աչքերն
Արթնում արչալոյս։
Իմս են աստղերը—և մինչ նայում էք
Դուք նոցա վերան,
Այնտեղ տեսնում էք հզօր հրմայքը
Աչքիս դիւթութեան։
Իմս է լուսինը—եթէ արտում են
Նորա հեզ չողեր,
Քանզի նայում է անդ ուր պառկած է
Կարիան—իւր ընկեր.

Իմս են ծաղկունքը, չառագեղ չիկնանքն
Անույշ վարդերի,
Մանիշակ դիւթող զովիկ զեփիւռը
Փափուկ սոսերի.
Իմս է Մալիսի կենսատիւռ լոյսի
Ճառագայթն անչէջ,
Եւ իմս է նոյնպէս ցերեկոյայ երազն
Լուռ անտառի մէջ։
Սիրեցէք, ուրեմն, զի սէրն է երկրի
Անույշ դիտումիւնն,
Նայեցէք, տեսէք համայն աշխարհը
Ինձանով զեղուն։
Դաս առէք ծովից, որ իր ափերը
Համբուրում է միշտ
Դաս առէք հովից, որ ծովի վրայ
Գուրգուրում է միշտ։
Համայն տիեզերք սէր է քարոզում
Եւ սէր հանապազ»։
Եւ անույշ ձայնը հալուեց լուսոյ մէջ
Ինչպէս մի երազ,
Սակայն եթերքը, կարկաչուն վտակ,
Երերուն թռուիւեր
Եւ կանանչ անտառ մեղմիկ սոսաւում
Մրմնջում են «Սէր»։

Հէնց որ ձայները լռեցին, եղիպտացին բռնեց Ապէլիդէսի ձեռքից, և առաջնորդեց նրան դէպի այն վարպետը, որ քաշուած էր սենեակի մէկ ծայրում. Ապէլիդէս նրան հետևում էր կէս դժկամ և մի տեսակ թափառուն և հարբած մարդու քայլերով։ Վարպետի հետ-

ից կարծես ցոլացին հազարաւոր պսպղուն աստղերի նը վարպետը, որ մինչև հիմա սև էր երևում, եղել լոյսերի պատճառով սոացաւ երկնքի ամենաքնքոյշ կապոյտ գոյնը։ Դա ներկայացնում էր երկինքը,—այնպիսի երկինք, որ յունիսի գիշերները ծիծաղում է Քասսալիի վտակների մէջ։ Տեղ տեղ նկարուած էին վարպետն և օդի նման թափանցիկ ամպեր, որոնց միջից նկարչի արուեստով ժպտում էին երկնային գեղեցկուհիներ և րևներ և որոնց վրայ հանգչում էին Փիղիասի և Ապելլէսի երազած դէմքերը։ Այն աստղերը, որոնք զարդարած էին երկնքի երեսը, արագութեամբ թաւալւում էին, մինչդեռ երաժշտութիւնը, որ նորից հնչեց աւելի աշխոյժ և աւելի թեթև ձայնով, կարծես նուագում էր զուարթ դանդերի մեղեդին։

«Ո՞ն, ինչ հրաշք է սա, Արբակ», ասաց Ապելլիդէս դողդողուն չեչտերով։ «Աստուածներին ուրանալուց չեսույ, դու ուզում ես ինձ յանգել...»

«Նոյա զուարճութիւնները», ընդհատեց Արբակ մի եղանակով, որ չատ տարբեր էր իր սովորական պաղ և հանդարտ ձայնի ներդաշնակութիւնից և որից Ապելլէս ցնցուեց և մտածեց, որ ինքն եղիպտացին էլ կերպարանափոխուած էր։ Եւ այժմ երբ նրանք մտեցան վարպետին, մի վայրենի, բարձրաձայն և ցնծալից մեղեդի պայթեց նրա թափանցիկներից։ Այդ ձայնի հետ միասին վարպետը երկուքի պատառուեց, նրա կտորները բաժանուեցան միմեանցից, և կարծես չքացան օդի մէջ, և մի տեսարան, որի նմանը ոչ մի սիրարխտ չէր երազել պարզուեց երիտասարդ քահանայի չլացած աչքերի առջև։ Մի անպատում ճաշարան տարածուեց նրա պիտոյց լուսաւորուած անթիւ ճրագներով, որոնք լցնում

էին ջերմ օդը կնդրուկի, յասմիկի, մանիշակի և զմուռսի անուշահոտութիւններով. ինչպէս ամենահոտաւէտ ծաղիկները, ինչպէս ամենաթանկագին համեմները կարող են արտադրել, կարծես խմորած էին մի անսպառելի և ամբրոսիական հիւթի մէջ. այն բարակ սիւներից, որոնք բարձրանում էին մինչև օդանման առաստաղը, կախուած էին սպիտակ առուիներ ոսկեայ ասղերով։ Անհնարին իւրաքանչիւր ծայրում մի մի չարուհան ցայտեցնում էր օդի մէջ իր բիւրեղանման ջուրը, որը վարդագոյն լոյսերի ճառագայթներից պսպղում էր ինչպէս անթիւ ադամանդներ։ Երբ նրանք մտան սենեակի մէջ, նրա յատակի կեդրոնից, աներևոյթ երաժշտութեան ձայնով, կամաց կամաց բարձրացաւ մի սեղան, ծածկուած այն բոլոր կերակուրներով, որ ճաշակը երբեմն նուիրել է երևակայութեան. պնակները և զաւաթները, բոլորը պատկանում էին այժմ կորուսած Մերրիական *) դրծարանին, այնքան վառվռուն էին նրանց գոյները, այնքան թափանցիկ էր նրանց նիւթը և նրանց մէջ դրուած էին արևելքից բերուած համազամ կերակուրներ։ Սեղանի չուրջը դրուած նստարանները ծածկուած էին կապուտակ ոսկեթել օթոցներով. կամարաձև առաստաղի մէջ փաթնուած աներևոյթ խողովակներ մաղում էին սենեակի մէջ անուշահոտ ջրեր, որոնք զովացնում էին անուշաբոյր օդը, և մրցում էին ճրագների հետ. կարծես ջրի և հրի ոգիները ճգնում լինէին ցոյց տալ թէ ո՛ր մէկը կարող է աւելի անույշ բոյր արտադրել։ Եւ այժմ ճիւնանման վարագոյրների հետից խումբ խումբ ներս

*) Սա հատանականաբար չինական յախճապակին է, թէև վիճաբանելի հարց է։

եկան այնպիսի ձևեր, որ Ադոնիսը տեսաւ երբ իր պլսիսը դրած էր Վենուսի գոգին։ Նրանք եկան, ամանք պահկներ բռնած իրենց ձեռքում, և ամանք քնարներ. նրանք չրջապատեցին երիտասարդին, նրան առաջնորդեցին դէպի սեղանը։ Նրանք ձգեցին այդ պահկները նրա վրին, որպէս ծաղկահիւս շղթաներ։ Աչխարհը —աչխարհի միտքն անդամ անհետացաւ նրա հոգուց։ Նա երևակայում էր, որ երազում է, և իր չունչն իսկ դադում էր, որ մի գուցէ չափազանց վաղ զարթնի. այն դդացումները, որոնց առջև երբէք տեղի չէր տուած, բարախում էին նրա հրատապ երակների մէջ և պտտեցնում էին նրա չլացած և չփոթուած տեսութիւնը։ Եւ մինչդեռ նա այնպէս ապշած էր և խելակորոյս, մէկ անդամ ևս լսուեց երաժշտութեան կախարդիչ հնչիւնը, բայց մի աւելի ուրախ և բաքոսական եղանակով.

Պերճ բաժակի մէջ փրփրում վառւում է
Շիկնեռանգ օրթի հըրեղէն արիւն,
Բայց պատանութեան մաստղ բաժակում
Կայ մի աւելի երկնային աւիւն.
Հեզուկ լոյսի պէս
Փայլում են վայլում

Նորա ալիքներ թարթիչիդ տակում։
Լ՛ացրէք, ո՛հ, լացրէք մինչ չորուն եղերք
Կարմիր հեզուկը մատաղ Վիէոսի
Որմն է բանալին, որ նա մեզ տուեց
Փրկուելու բանտից երկրային հոգսի.
Խմիր, ո՛հ, խմիր.
Է՞ր երկչոտ լինել
Երբ լոկ ջահերը կարող են տեսնել։

Խմիր, ո՜հ խմիր, ինչպէս քո աչքից
Անյագ խմում եմ մի դիւթիչ գինի,
Տնըր ժպիտներդ որթի ատամնուն
Իսկ հառաչանքդդ, հոգիս, ինձ լինի.
Դարձիր, ո՜հ, դարձիր
Աչքերս ալրւում են
Քո մեկ նայուածքիդ խիստ ծարաւում են։

Երբ երգը վերջացաւ, աղջիկներից երեքը միմեանց հետ կապուած առատազարդ ծաղկեայ չղթայով կաքաւեցին նրա առջև Խոնական պարի սահուն քայլերով. քայլ նրանք, որ օրինակում էին Բարիթանների խնամպէս վերարտադրում էին նրանց. նրանք պարում էին ինչպէս ներկիդներ լուսնի լոյսով, և Եգիւան ծովերդի ափի վրայ—ինչպէս Կիթերեան սովորեցրեց իր ազատ խնամներին պարել երբ իր որդին ամուսնանում էր Պսիքէի հետ։

Մերթ մօտենում են և իրանց պսակները դնում նրա գլխին, մերթ երեքն կրտսերը ծունր է դնում նրա առջև և մատուցանում է բաժակը լցուած Լեսբոսի փրփրուն և պսպղուն գինիով։ Երիտասարդը այլ ևս չկարողացաւ դիմադրել. նա առաւ արբեցուցիչ բաժակը, և նրա արիւնը սկսեց կատաղութեամբ հոսել նրա երակների մէջ։ Նա ընկաւ իր կողքին նստած յաւերժահարսի կուրծքի վրայ և դարձրեց իր լոզուն աչքերը Արքակին գտնելու, որին նա իր զգայմունքների մէջ, աչքից կորցրել էր։ Նա տեսաւ նրան սեղանի վերի կողմում նստած մի ամպհովանու տակ. Արքակ ուղղել էր նրան մի ժպտուն նայուածք, որով քաջալերում էր նրան դէպի զուարճութիւնը։ Նա տեսաւ Արքակին, բայց ոչ ինչպէս տեսել էր մինչև հիմա, մութ և լուրջ գոյնի

զգեստներով, խոհուն և ամաւոր ձակատով։ Ոսկով և գոհարներով զարդարուած մի ամենասպիտակ պատմուճան բոցափայլում էր նրա փառահեղ մարմնի վրայ։ Սպիտակ վարդից, զմրուխտից և յակինթից չինուած մի եռապսակ խոյր պսակում էր նրա սև մազերը։ Նա կարծես Ողիւմպի պէս առացել էր մի երկրորդ երիտասարդութիւն—նրա դիմագծերի մէջ կարծես խոհունութիւնը փոխարկուած էր գեղեցկութեան և նա կանգնած էր մի բերդի նման իրան չրջապատող գեղեցկուհիների մէջ ոլիմպիական աստուածոյ բոլոր ժպտուն և գիջանող մարդասիրութեամբ։

«Խմիր, կնիր, սիրիր, իմ աշակերտս», ասաց նա, «մի չիկնիր որովհետև քո կրքերդ վառ են և դու երիտասարդ ես։ Ինչ որ կաս, դու այդ գրում ես քո երակների մէջ. ինչ որ պիտի լինես, ան՜...»

Այս ասելով նա ցոյց տուաւ մի անկիւն, և Ապէկիդէսի աչքերը հետևելով նրա ցոյց տուած ուղղութեանը, մի պատուանդանի վրայ տեսան մի կմախք զրուած Բաքոսի և Խաւիսալի արձանների մէջ տեղ։

«Մի զարմանար, չարունակեց եղիպտացին. «այդ հիւրը մեզ յիշեցնում է թէ կեանքը կարճ է։ Նրա երախներից ես լսում եմ մի ձայն, որ մեզ գոչում է «ՎԱՅԵԼԵՅՏՔ»։

Երբ վերջացրեց իր խօսքը մի խումբ նիմֆաներ չրջապատեցին արձանը. նրանք պսակներ դրին նրա պատուանդանի վրայ, և, մինչդեռ բաժակները լցուում և պատարկուում էին սեղանի չուրջը, նրանք երգում էին հետևեալ կերպով.

Բաքոսական երգեր նուիրուած մահուան պատկերին։

I

Եւ դու գնայիր սառուցի երկիր,
Որ երբեմն արբում և սիրում էիր.
Անեզ դեռևզրում մի սահուն սառուց,
Բայց դեռ այստեղ են, մեզ մօտ քո մարմիր
Թէ լիշողութիւնք թռչել կարող են,
Եւ դառնալ դէպի երկինք ամպերէն
Եւ ողբալ իրենց
Կորցրած վայելք։
Զօնում ենք ծաղկունք դանլիճիդ աւեր,
Ուր հոգիդ երբեմն ապարանք ունէր,
Երբ վարդը դեռ քեզ քաղցր էր ու սիրուն,
Երբ բաժակիդ մէջ ժպիտ կար լեցուն,
Երբ դեռ կիթառը արծաթահնչիւն
Կարող էր սրտիդ բաշխել ցնծութիւն,
Եւ գիշերուայ մօտ
Մութն էր ցերեկը։

Այստեղ մի նոր խումբ մերձենալով՝ երաժշտութեան հոսանքը դարձրեց դէպի մի աւելի արագ և աւելի ցնծալից մեղեդի։

II

Մահ, մահն է այն խաւար եզերք
Ուր դիմում է մեր նաւակ.
Մեղմիկ վիշիր, քաղցրիկ զեփիւռ,
Հեզիկ, հեզիկ, իմ թիակ։
Պերճ ծաղկահիւս պսակներով
Շղթայեցէք ժամերին.
Թէ գոհեր են—եթող ու ծաղկով
Թող այդ գոհերն սպանուին։

Մի վայրկեան կանգ առնելով, արագ և աւելի արագ կաքաւեց արծաթաձոյն երաժշտութիւնը։

Քանի որ կեանքն այսքան կարճ է
Թող վայելենք ցը վախճան,
Եւ ապրելով միշտ ծիծաղենք
Ինչու վատնենք մի վայրկեան։
Եթէ առոյգ պատանութիւն
Դեռ նեկտարն է բաժակիդ,
Թող որ անույշ սէրը լինի
Նորա միջի մարգարիտ։

Այժմ մի երրորդ խումբ, բռնած լի լի բաժակներ մօտեցաւ. բաժակները որպէս պինեճօն թափուեցան այդ տարօրինակ սեղանի վրայ, և նորից փոփոխական մեղեդին հնչեց դանդաղ և լուրջ չափերով։

Բարև ես եկել, ոգիդ խաւարի,
Այն աներ ծովից, ծովից հեռաւոր,
Երբ չնչենք բոլորը վերջին վարդերի
Քո հետ կը սիրենք սեղան փառաւոր։
Քեզ հազար բարև
Ով հիւր սպաւոր։
Ո՛վ իրաւունք ունի քո պէս
Մեզ հաճելի հիւր լինելու,
Դու, որի տան սրահն անարկու
Մեզ պիտի տայ վերջին հանդէս։
Այն ժամտ ափում և մթապատ
Երկար կ՚ընենք մենք քո հիւրեր,
Իսկ դու այսօր, մեռեալ սառուցր,
Թէև արտում քո մութ ճակատ
Դու մեր հիւրն ես
Մի կարճ միջոց։

Այս բոլորին այն կինը, որ նստած էր Ապեկիսկոսի ճոպքին յանկարծ սկսեց երգել այս բառերով.

Դեռ երջանիկ է մեր վիճակ,
Մերն է երկիր և արեգակ.
Եւ դեռ հեռու գերեզմանից
Են ժամերը մեր բերկրալից.
Դեռ քաղցր է քեզ գինուդ բաժակ,
Քաղցր է դեմքըդ, ով իմ հոգեակ։
Ես թռչում եմ դեպ քո հոգին
Ինչպես թռչունն իր զուգակցին.
Ընդունիր ինձ
Ո՛հ, ընդունիր։
Մէջքիս քո սուր պաշտպան բազուկ
Թող իմ նինջը լինի փափուկ,
Բայց զարթնեցնուր
Ո՛հ, զարթնեցնուր,
Եւ ասա ինձ մեզմ հառաչով
Բայց աւելի հալուող աչով
Թէ չէ մոռաց
Իմ արևը,
Թէ դեռ իւղ կայ կեանքիս ջահում
Թէ սիրում ենք, չնչում, այրուում,
Ասա որ ինձ
Դեռ սիրում ես։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Գլուխ Ա.

Պոմպէյի սաորին դասակարգի անձերից մէկը և կլասիկական շըրջանի ճէնտլմէնները։

Մենք այժմ կ'առաջնորդենք ընթերցողին Պոմպէյի այն մասերից մէկը, ուր բնակւում էին ոչ թէ գուարճասէրները, այլ նրանց սաորակները և զոհերը, գլադիատորները և ըմբշամարտները, մոլիները և անփոյները, վայրենիները և անասունները. մէկ խօսքով մենք կ'առաջնորդենք նրան դէպի մի հին քաղաքի Ալեսանան։

Մի մեծ սենեակ էր դա, որի դուռը բացւում էր նեղ և բազմամարդ փողոցի մէջ։ Պրան առջև կանգնած էին մի խումբ մարդիկ, որոնց երկաթեայ և զարգացած մկանունքը, որոնց կարճ և հերկուլական վիզը, որոնց կոպիտ և անվախ դէմքը ցոյց էին տալիս թէ գոքա կըրկէսի ախոյեաններն են։ Խանութի դրսի կողմը, մի դռնակի վրայ չարուած էին գինու և իւղի ամաններ. դրանց վերև պատի մէջ զետեղուած էր մի չատ հասարակ նկար, որ ներկայացնում էր գլադիատորների գինարբուքը — այնքան հին և իր հնութեամբ այնքան պատկառելի է դրուագները փակցնելու սովորութիւնը։ Սենեակի ներսը դրուած էին մի քանի փոքրիկ սեղաններ, չարուած այսօրուայ մեր օթեակների ձևով, և նրանց չուրջը նստած էին մարդկանց զանազան խմբեր. խըմ-

բերից ոմանք խոսում էին, ոմանք զառ խաղում և ոմանք էլ զբաղուած էին այն հանճարեղ խաղով, որ կոչւում էր «duvdecim scripta». գիտուններից ոմանք սխալմամբ ենթադրել են, որ այդ խաղը սատրանջ էր. թէև սէկն կարող է նորդ հանարտիլ, և ընդհանրապէս, բայց ոչ միշտ, խաղացւում էր զառերի օգնութեամբ։ Առաւօտ էր, և այդ անյարմար ժամանակից աւելի լաւ ապացոյց չէր կարող լինել այդ գինեսան յաճախորդների սովորական ծուլութեանը։ Այնուամենայնիւ, չնայելով սան գիրքին և բնակիչների բնաւորութեանը՝ այդ գինեսունը չունէր այն զգուելի կեղտոտութիւնը, որ մարդ կարող է տեսնել մեր ժամանակակից քաղաքների մի հասարակ օրջում։ Բոլոր պոմպէյցիների ուրախ արամադրութիւնը, որոնք ուզում էին չգիտէրդ տալ գէթ զգայարանքներին, ուր նոքա անուշադիր էին թողնում մինաքը. նոցա ուրախ արամադրութիւնը, կրկնում եմ, չատ լաւ տեսնում էր այն վառվռուն գոյների մէջ, որոնցով նոքա զարդարում էին իրենց պատերը, և այն փանտաստիկ, բայց ոչ տգեղ ձևերի մէջ, որով չինուած էին ճրագները, բաժակները և ամենահասարակ տնական իրեղէնները։

«Պօլլուքս վկայ», ասաց գլադիատորներից մէկը, որ չեռած էր չէմբի պատին, «այն գինին, որ դու տալիս ես մեզ, ձեր Սիլենուս»—և այս խօսքերն ասելու ժամանակ նա զարկում էր այդ անձնաւորութեան մէջքին—«բաւական է մարդու ամենալաւ արիւնը ջրի փոխելու իր երակների մէջ։

Այն մարդը, որին ուղղուած էին այս խօսքերը և վազաքչանքը, և որի մերկ թևերը, ճերմակ գոգնոցը, բանալիները և թաչկինակը, անհոգութեամբ խրուած իր

գօտու մէջ, յայտնում էին թէ նա էր գինեսան տէրը, արդէն մոռած էր իր տարիքի աչնան մէջ. բայց նրա կազմը այնքան առողջ էր և հաւժկու, որ նա կարող էր պաշտպանել նոյն իսկ այն հասարակութիւնների չրջանի մէջ, որոնցով չրջապատուած էր նա։

Գլադիատորների և գինեվաճառի մէջ եղած տարբերութիւնը միայն այն էր, որ այս վերջինի մկանունքը կարծես հասունացել էին և մսի փոխարկուել, նրա թևերը ուռչել էին, և նրա մեծ փորը սուեր էր տարածում նրա լայն կրծքի վրայ։

«Այդ չիմար կատակներդ քեզ համար պահիր», գոռաց վիթխարի խանութպանը, բարկացած վազրի մի կիսամռնչիւնով. «իմ գինիս բաւական լաւ է մի գէշ համար, որ չուտով պիտի թրջէ սպոլիարումի *) հողը։

«Կարիր այդ կռնչիւնդ, ձեր պռաւս», պատասխանեց գլադիատորը, արհամարհական ծիծաղով. «դու պէտք է ապրես մինչև չգրուդ գնաս քեզ խեղդես, երբ ես սահման դաժնեայ պակը. և երբ սահման քսակը ամիսիթաարոնում, ինչպէս որ անպատճառ պիտի սահման, իմ առաջին ուխտս Հերկուլէսին այն կը լինի, որ չաբխանաս չը նայեմ քո և քո պարչ ըմպելիքի երեսին։

«Ցեսէք, տեսէք ինչ է սուում այս համեստ Պլուտոպոլինիկէսը։ Նա անսարակուս ծառայած է Բոմբոմաքիդէս Պուբլինսառաբիպիարքիկէսի տրամանատարութեան ներքոյ, գոչեց խանութպանը։ Սպարտա, Նիպէր, Տեարախիդէս, նա սուում է որ նա կը չահէ քսակը ձեր ներկայութեամբ. Աստուածները վկայ, ձեր ամեն մէկի միանունքը բաւական ուժեղ են նրա ամբողջ մարմինը փըչ-

*) Սպոլիարումը այն տեղն էր, ուր սպանուածները կամ ճանապարհները քարշ էին տալիս կրկէսից։

րելու, եթէ այդպէս չը լինի ուրեմն ես կրկէս չեմ տեսած կեանքիս մէջ։

«Հա՛», ասաց դլադիատորը աւելի կարմրելով իր բարկութիւնից, «մեր լանիստան կարող էր մի տարբեր պատմութիւն անել»։

«Ի՞նչ պատմութիւն կարող էր անել իմ դէմ, մնասպարծ Լիդոն», ասաց Տետրակիէս խոժոռելով իր կերպարանքը։

«Իսկ իմ դէմ, որ յաղթող եմ հանդիսացած տասնուհինգ կռիւների մէջ», ասաց վիթխարի Նիգերը, ճեմելով դէպի դլադիատորը։

«Իսկ իմ դէմ, մրթմրթաց Սպորուսը, կրակոտ աչքերով։

«Փահ, ասաց Լիդոն, ծալելով իր թևերը, և նայելով իր հակառակորդների երեսին, մի խրոխտ, կռուասէր դէմքով։ «Փորձի ժամանակը չուտով կը դայ. պահեցէք ձեր քաջութիւնը մինչև այն ժամանակ»։

«Այո՛, պահեցէք», ասաց թթուած—երես խանութպանը. «և եթէ ես իմ բոլոր սեղմեմ քո կեանքդ ազատելու, ուրեմն թող Պարկանները կարեն իմ կեանքիս թելը։

«Ուզում ես ասել քո պարանը», ասաց Լիդոն, ծաղրածական եղանակով, ահա քեզ մի սխատէրս, գնա, մէկ պարան գնիր։

Տիտան գինեվաճառը բռնեց այն ձեռքը, որ ուղղուած էր դէպի ինքը, և այնպիսի ոյժով սեղմեց, որ արիւնը նրա մատների ծայրից ցայտեց կանգնողների զգեստների վրայ։

Բոլորը սկսեցին վայրենաբար ծիծաղել։

«Ես քեզ կը սովորացնեմ, դու պարծենկոտ պա-

տանի, թէ ինչպէս պիտի մակեդոնացի ձեռնամարտ իմ հետ։ Ես այս թզուկ պարսիկներից չեմ, հաւատացնում եմ քեզ։ Այ մարդ ես քսան տարի ոսկոր եմ կոտրել կրկէսի մէջ և մէկ անգամ իմ ղէնքերս ցած չեմ դրել։ Ես եմ զաւալան ստացել Խդիտորի իր ձեռքից ի նշան յաղթութեան, և որպէս չնորհ որով իրաւունք եմ ստացել ամփիթեատրոնից քաշուիլ և հանդստանալ իմ դափնիների վրայ. Ես հիմա մի երեխայից այդ խօսքերը լսեմ»։ Այսպէս ասելով, նա քամահրական եղանակով յետ ձգեց նրա ձեռքը։

Գլադիատորը, առանց չարժելու իր մկանունքը, և միևնոյն ժպտուն երեսով, որով նա ծաղրել էր գինեվաճառին, դիմացաւ այդ ցաւալից սեղմումին։ Բայց հէնց որ նրա ձեռքը ազատուեց, նրա գլխի և մօրուքի մազերը կանգնեցին. նա մի րոպէ կուչ եկաւ ինչպէս մի վայրի կատու, և մի կատաղի և սրաճաչ ոռնոց արձակելով նա ցատկեց հակալի կոկորդին. այնքան սաստիկ էր նրա թափը որ չնայելով հակառակորդի ահագին և վիթխարի կազմուածքին նա կորցրեց իր հաւասարակշռութիւնը և ցած ընկաւ մի ահագին թընդիւնով, ինչպէս ընկնում է մի ժայռ. նրա վերայ ընկաւ նրա կատաղի թշնամին։

Գինեվաճառը, կարելի է պէտք չպիտի զգար հետևելու Լիդոնի բարեկամական խորհրդին, և մի պարան գնելու եթէ երեք րոպէ էլ նոյն դրութեան մէջ մնար։ Բայց նրա ընկնելու ձայնից, մի կին, որ ցայժմ մնացած էր մի ներքնատեղեակում, վազեց դէպի պալքարի վայրը յօդնութիւն պարտաւորին։ Այս նորեկ նիզակակցուհին ինքն ըստինքեան բաւական ուժեղ էր գլադիատորի հետ մարտնչելու. նա բարձրահասակ էր, նիհար, և ունէր

այնպիսի թևեր, որոնցով հեշտալի պրկախառնութիւնից բացի, ուրիշ կերպ պրկախառնութիւններ էլ կարող էր անել։ Իրօք Բուրբօ պինելաճաւի այս քնքոյշ կենակցութիւն իր ամուսնու պէս կուռած էր ամիսիթատրոնում *) նոյն իսկ կայսեր ներկայութեամբ։ Եւ ինքը Բուրբոն — Բուրբօ անյաղթը, երբեմն սոսկալուած էր ձիթենու ճիւղը տալ իր վախկոտն սորատոնիկին։ Այս քաղցրիկ արարածը, հէնց որ տեսաւ այն մօտալուտ վտանգը, որ սպառնում էր իր վառոզոյն կէսին, առանց որևէ զէնքի քան ինչ որ բնութիւնը տուած էր նրան, նետուեց պատերազմական վրայ, և բռնելով նրա մէջքից իր երկար և օձանման թևերով մի յանկարծական թափով նրան քարթարացրեց իր ամուսնու մարմնի վրայից, բայց պատերազմողի ձեռքերը սեղմուած մնացին իր թշնամու կօրդինն։ Յաճախ մենք տեսած ենք այսպիսի մի պատկեր երբ մի նախանձոտ ծառայ բռնած է մի չար եւսի ոտքերից, թոյլ չտալով նրան խեղդել իր ընկած թշնամուն. մենք յաճախ տեսած ենք ինչպէս նրա կէսը, կրաւորական և անվնաս, բարձրացած է օդի մէջ, մինչդեռ միւս կէսը—գլուխը, ժանիքները, աչքերը ճիրանները, կարծես թաղուած է վիրակից և պիտապատ թշնամու մէջ։ Նոյն միջոցին պատերազմողները լակում էին և ուռում և անյագ աչքերով նայում արեանը. նրանք ուրախ խմբուեցան մաքառողների չուրջը—նրանց ուռնդերը լայնանում էին, նրանց առոյները բացուում. և նրանց աչքերը գազանային արտայայտութեամբ յառած

*) Ոչ միայն կանայք երբեմն կռում էին ամիսիթատրոնում, այլ նոյն իսկ ազնուական սիկիններ երբեմն կռնդրաններ էին ներկայանում այս քնքշիկ վտանգի համար։

Աչին մէկի արիւնոտ կոկորդի և միւսի կարթացած ճիրանների վրայ։

«Հաբէա, հաբէա, *), ոռնացին նրանք։

«Նոն հաբէօ, **) սաստեցին», գոչեց խանութպանը, երբ մի հակառակ ճիպ գործելուց յետոյ, նա ազատուեց այդ մահացու ձեռքերից, և ոտքի կանգնեց ուժասպառ, հևալով, վիրաւորուած և արիւնոտ. չնայելով, որ նրա գլուխը և աչքերը պատուում էին՝ նա նորից ուզեց յարձակուիլ իր անյաջող թշնամու վրայ, որ վայրկեան աչքերով և բաց առոյներով մաքառում էր (բայց քամահրանքով) ուժեղ ամազոնի թևերի մէջ։

«Հաւասար կռիւ, գոչեցին գլադիատորները, «մէկ մէկի հետ» և չարուեստով Լիզոնի և կնոջ չուրջ պատուար դարձան մեր հաճոյակատար խանութպանի և նրա քաղաքավար հիւրի մէջտեղ։

Բայց Լիզոնը, ամաչելով իր ներկայ դրութիւնից, ի զուր աշխատելով ազատուիլ այդ առնացի կնոջ ձեռքից, ձեռքը խրեց իր գօտու մէջ, և հանեց մի կարճ դաշոյն։ Այնքան սպառնալից էր նրա նայուածքը, այնքան վայրկեան էր դաշոյնը, որ սորատոնիկը, որ բռունցքի կռուից բացի ուրիշ կռիւ չգիտէր, վախից ցնցուեց։

«Աստուածներ իմ», գոչեց նա, չարագործը զէնք է թագցրած. դա ուզիղ բան է։ Դա մի ազնիւ մարդու և մի գլադիատորի գործ է։ Իսկապէս ոչ, ես արհամարհում եմ այդպիսի մարդկանց»։ Այդ խօսքերով նա իւր եռանդ արեց գլադիատորին, և չտապեց քննելու իր ամուսնի վիճակը։

*) Սատյա։
**) Չէմ սացել։

Բայց նա, նոյնչափ սովոր մարմնական այդպիսի մարզումներին, որքան մի անգլիական բուլ-դոգ սովոր է մաքառելու մի ահեղ քնքոյշ հակառակորդի հետ, արդէն վերսացել էր իր առողջութիւնը։ Ծիրանի երանգները թռել էին նրա երեսի կարմիր մսակերևոյթից, ճակատի երակները սառցել էին իրանց նախորդ հատուածեան չափը։ Նա չարժուեց մի ինքնաբաւարար խանչիւն արձակելով, երբ տեսաւ, որ ինքը կենդանի է, յետոյ չափեց իր թշնամուն գլխից մինչև ոտք, ահեղ հատնուածքին ցոյց տալով դէպի նրան, քան երբևիցէ արած էր։

«Կատարը վկայ, ասաց նա, դու ահեղ ես քան ես կարծում էի։ Ինչպէս տեսնում եմ դու արժանիքի և առաքինութեան տէր մարդ ես. ձեռքդ տուր լինճ իմ հերոս»։

«Կեցցէ բարեսիրտ ծեր Բուրբօն», գոչեցին գլադիատորները ծափահարելով. «քաջ մինչև ողնաչարը։ Ձեռքդ տուր իրան, Վիլոն»։

«Օ՛, անպատճառ», ասաց գլադիատորը. «բայց այժմ ես ճաշակել եմ նրա արիւնը և փափագում եմ բոլորը լակել»։

«Հերկուլէս վկայ, պատասխանեց հիւբրնկալը առանց վրդովուելու, դա է ճշմարիտ գլադիատորական զգացումը։ Ո՛վ Պոլլուքս, մոռացել թէ լաւ դաստիարակութիւնը ինչ կարող է չինել մարդուս. գազանը ահեղ կատաղի չի կարող լինել»։

«Գազանը, դու սխալար, մենք գազանների պոչը իրանց ուսն ենք ձգում», գոչեց Տէտրաիդէս։

«Լաւ, լաւ, ասաց Սարատոնիկը, որ այժմ զբաղուած էր կարգի դնելով իր մազերը և զգեստները. եթէ բոլորդ էլ հաչա բարեկամներ էք հիմա, ես ձեզ

խորհուրդ կը տամ հանգիստ և կարգին կենալ. մի քանի երիտասարդ ազնուականներ, ձեր պաշտպանները և ’լ նպատակ ձեզ գրաւ եկողները լաւ են ուղարկել թէ կամենում են գալ ձեզ այցելել. ուզում են մեկ անգամ ձեզ լաւ տեսնել նրանք զպրոցներում տեսնելուց առաջ և նախ քան գրաւներ բռնելը ամփիթատրոնի մեծ կուռում։ Նրանք սիրտ մեր տունն են գալիս այդ բանն անելու. նրանք գիտեն թէ մենք միշտ Պոմպէյի ամենալաւ գլադիատորներին ենք ընդունում մեր տան մէջ—թէ մեր ընկերութիւնը ամենից ընտիրն է—փառք աստուածներին»։

«Այո՛», չարունակեց Բուրբօն, խմելով մի գաւաթ կամ ահեղ լաւ ասած մի գոլ գինի, «մի մարդ, որ իմ չահած գափնիները չահած լինի քաջերին սիայն կարող է քաջալերել։ Վիդօն, խմիր, տղաս. աստուածները պարգևեն քեզ լինճ նման մի պատուաւոր ծերութիւն»։

«Ախաեղ ես», ասաց Սարատոնիկը, փաղաքչանքով քաշելով իր ամուսնու ականջից. դա այն դժուանքներից էր, որ Տիբուլլուսը այնքան դեղեցիկ կերպով նկարագրել է. «Ախաեղ ես»։

«Կամաց, էդ գալը, դու գլադիատորից ահեղ վատ ես», մրմնջացին Բուրբօյի ահապին ծնօտները։

«Սուս», ասաց կինը փափաղով նրա ականջին։ «Կալենուսը հէնց նոր ահեղ դռնից ծպտեալ ներս մտաւ։ Ցոյս ունիմ սէատէրները բերած լինի»։

«Հօ, հա, ես կերթամ նրա մօտ», ասաց Բուրբօն. «իսկ դու զգոյշ եղիր բաժակներից—հաչիւը լաւ պահիր։ Զնաբերն քեզ, այ կնիկ. նրանք հերոսներ են, խօսք չկայ, բայց և սուր սրիկաներ են. Կակուսը ոչինչ էր նրանց մօտ։

«Իմ հոգսը մի անիր, լիմար», եղաւ ամուսնական պատասխանը. և Բուրբօն գոհ այդ սիրալիր հաւատիքով, հեռացաւ սենեակից և մտաւ ատն ներքին մասը։

«Այսպէս ուրեմն այդ փափկակեաց պատրոնները գալիս են նայելու մեր վարունգի վրայ», ասաց Նիպէր։ «Ո՛վ մարդ ուզարկից քեզ լուր տալու, սիկին»։

«Լեպիդուսը։ Նրա հետ գալիս է և Կլոդիուսը, Պամպէյի ամենից հաստատ դրաւ եկողը, և երիտասարդ ցոյնը—Գլոկուսը։

«Մի դրաւ դրաւի վրայ», գոչեց Տետրախիդես. «Կոպիուսը իմ վրայ դրաւ կը գայ քսան սեստերս։ Ի՞նչ ես ասում Լիդոն։

«Իմ վրայ կը գայ», ասաց Լիդոն։

«Ոչ, իմ վրայ», մրմնջաց Սպորուս։

«Բահ, կարծում էք, որ ձեզ կը գերազանէ Նիպէրին», ասաց ըմբիշը, այսպէս համեստութեամբ տալով իր անունը։

«Լաւ, լաւ», ասաց Սարատոնիկը, ծակելով մի ատաղձին ամբողջ իր հիւրերի համար, որոնք այժմ նըստած էին սեղաններից մէկի առջև», ով մեծ և քաջ մարդիկ, ինչպէս դուք բոլորդ ձեզ կարծում էք, ձեզանից որ մեկը կը կռուի նոմենտանական ասիւծի հետ եթէ մի չարաբաստիկ չգտնուի ձեզ զրկելու այդ հաճոյքից»։

«Ես որ չմեռած դուրս եկայ քո բաղուկների միջից, քաջ Սարատոնիկ», ասաց Լիդոն, «կարող եմ առանց երկիւղի մաքառել ասիւծի դէմ։

«Բայց ասա ինձ», ասաց Տետրախիդես, «որտեղ է ձեր այն գեղեցիկ գերուհին—այն կոյր աղջիկը փայլուն աչքերով։ Ետա ժամանակ է նրան չեմ տեսել»։

«Օ՛, նա չափազանց քնքոյշ է քեզ համար, Նեպտունի զաւակ *), ասաց հիւրընկալուհին, և չափազանց նուրբ նոյն իսկ մեզ համար։ Մենք նրան ուղարկում ենք քաղաքը ծաղիկներ ծախելու և սիկինների համար երգելու. նա, այդ ձևով աւելի դրամ է չահում մեզ համար, քան ձեզ ծառայելով։ Բացի դրանից, նա ունի ուրիշ զբաղմունքներ, որոնք թագնուած են վարդի տակ։

«Ուրիշ զբաղմունքներ», ասաց Նիպէր, «դա դեռ տեսած է այդպիսի բաների համար»։

«Լռիր, դազան», ասաց Սարատոնիկը. «դու կարծում ես կորնթիականից բացի ուրիշ խաղ չկայ։ Եթէ Նիպիան երկու անգամ այդ տարիքն ունենար, նա նուրբից արժանի կարող էր լինել Վեստային—խնդճ աղջիկ»։

«Բայց, լսիր, Սարատոնիկ», ասաց Լիդոն. «ինչպէս ձեռք բերիր մի այդպիսի սարկուէյ։ Նա աւելի յարմար է հռոմայեցի մի հարուստ սիկնոջ նաժիշտը լինելու»։

«Ճշմարիտ է, պատասխանեց Սարատոնիկ, և մի օր ես լաւ դրամ կը չահեմ նրան վաճառելով։ Ասում ես ինչպէս ձեռք բերի նրան։

«Այո»։

«Այսպէս։ իմ Սատիրան-դու լիշում ես Սատիրային, Նիպէր։

«Այո, մեծ ձեռքերով մի աղջիկ. երեսը կարծես ծաղրածական մի դիմակ լինէր։ Վկայ է Պլուտոն, որի աղախինն է նա այս րոպէիս, նրան չեմ կարող մոռանալ»։

«Սուս կաց, անսանձ,—լաւ. Սատիրան մեռաւ. նրա մահը մեծ կորուստ էր ինձ համար և ես գնացի

*) Նեպտունի զաւակ—լատիներէն մի ասացուած է, որ նշանակում է մի զազանաբարոյ և կատաղի մարդ։

հրապարակը մի ուրիշ գերի գնելու։ Բայց, ասուածները վկայ, նրանք այնքան թանգացել էին խեղճ Սաֆիլային գնելուցս ի վեր, և դրամս այնքան սակաւ էր, որ ես, յուսահատուած՝ ուզում էի վերադառնալ, երբ մի վաճառական իմ զգեստներից բռնեց քաշեց։ «Տիկին», ասաց նա, «աժան գերի կը գնէք. ես մէկ ծախու երեխայ ունիմ։ Նա, ճշմարիտ է, փոքր է և դրեթէ մի երեխայ է, բայց շատ սրամիտ և հանգարտ աղջիկ է. նա հլու է, ճարպիկ է, լաւ երգում է, և հաւատացնում եմ ձեզ, որ աղնիւ արիւնից է։—«Ո՞ր երկրացի է», հարցրի ես։—«Թեսսալացի»։ Իմանալով, որ Թեսսալացիները սրամիտ և հեզ են, ասացի որ կուզէի տեսնել նրան։ Երբ որ տեսայ, նա ճիշդ այնպէս էր ինչպէս հիմա է, ոչ հասակով և ոչ էլ տարիքով աւելի փոքր էր երեսում, աւելի մանուկ։ Նա երեսլիմով շատ համբերատար էր և հեզ, ձեռքերը ծալած կամ կուրծքի վրայ և աչքերը ցած ձգած կանգնած էր։ Ես արժէքը հարցրի. վաճառականը մի չափաւոր գին որոշեց, և ես գնեցի նրան։ Վաճառականը նրան բերից մեր տունը, և անմիջապէս անհետացաւ։ Բարեկամներ, երեսակայեցէք իմ զարմանքը, երբ ես տեսայ, որ նա կոյր էր։ Հա, հա, ճարպիկ մարդ էր այդ վաճառականը։ Ես վազեցի դատաստանատունը. բայց խաբեբան արդէն հեռացած էր Պոմպէյից։ Ես սարսափեցայ տուն վերադառնալ վատ սրամտութեան մէջ, և խեղճ աղջիկն էլ զգաց այդ իմ սրամտութեան աղեղնաթիւնը։ Բայց իր յանցանքը չէր, որ կոյր էր ծնուած։ Աստիճանաբար մենք հաշտուեցանք նրա կուրութեան հետ։ Ճշմարիտ է որ նա Սաֆիլայի ոյժը չունէր, և տան մէջ շատ քիչ բանի պէտք էր գալիս, բայց նա չուտով կարողացաւ ճանաչել քաղաքի փողոցները, և նա այնպէս գնում էր իր ճանապարհը, որ կարծես Արգոսի աչքեր ունենար. և երբ մի առաւօտ նա մեզ բերեց մի քանի սեստէրներ, ասելով թէ նա վաստակել էր այդ՝ ծաղիկներ ծախելով, մենք մտածեցինք որ աստուածները են նրան ուղարկել մեզ համար։ Այդ ժամանակուանից մենք նրան թոյլ տուինք երթալ ուր որ ուզում է. մենք մեր փոքրիկ պարտիզից նրա զամբիւղը լցնում էինք ծաղիկներով. նա, այդ ծաղիկներից թեսսալական ձեով այնպիսի պսակներ է հիւսում, որ երիտասարդները շատ հաճոյում են։ Մեծ մարդիկը, կարծես, մի տեսակ համակրութիւն են զգում դէպի այդ աղջիկը. որովհետև նրանք միշտ նրան աւելի են վճարում քան միւս ծաղկավաճառ աղջիկներին, և նա այդ բոլոր դրամը բերում տալիս է մեզ, և ամեն գերի այդ բանը չի անի։ Այդ պատճառով ես եմ կատարում իմ գործը, բայց նրա վաստակած դրամով չուտով կարող կը լինեմ գնել մի ուրիշ Սաֆիլա. տարակոյս չը կայ որ թեսսալացի մանկագողը աւազակել էր նրան ազնուական ծնողներից։ Բացի պսակներ հիւսելու հմտութիւնից, նա երգում է, նուագում է կիթառի վերայ, այդ էլ մեզ բաւական դրամ է բերում, և վերջերս... բայց այս մէկը գաղտնիք է»։

«Այդ մէկը գաղտնիք է։ Ի՞նչը գաղտնիք է», գոչեց Լիդոն, «սֆինքս ես դարձել»։

«Սֆինքս, ոչ, ինչու սֆինքս»։

«Վերջ դիր այդ չատախօսութեանդ, իմ բարի սիրելին, և մեր կերակուրը բեր ուտենք—ես սոված եմ»—ասաց Սպորուս անհամբերութեամբ։

«Ես ես էլ», արձագանք տուաւ խոժոռադէմ Նիզերը, քսելով իր դանակը ձեռքի ափին»։

Ամազոնը ճեմեց դէպի խոհանոցը, և չուտով վերա-

դարձաւ ձեռքին բռնած մի մատուցարան լի կիսաեփ մսով. ինչպէս հիմա այն ժամանակն էլ ըմբշամարտութեան հերոսները կարծում էին որ այդպիսով նրանք աւելի լաւ կարող էին պահպանել իրանց քաջութիւնը և կատաղութիւնը. նրանք հաւատացան սեղանի շուրջը սովամահ գալների աչքերով — միսը անհետացաւ, դինին հոսում էր: Մենք թողնում ենք այդ կլասիկական կեանքի նշանաւոր անճոռնութիւններին՝ հետևելու Բուրբոյի քայլերին:

Գլուխ Բ.

ԵՐԿՈՒ ՋՈՋԵՐ

Հռոմի նախնի օրերում, քահանայութիւնը ոչ թէ չահադիտական մի պաշտօն էր, այլ պատուաւոր: Ամենից ազնուական քաղաքացիները միայն ընդունւում էին այդ կչման մէջ և պլեբէյեանները զրկուած էին դրանից: Ցեսոյ և ներկայ թուականից շատ առաջ, այդ աստիճանը բացուեց ամեն դասակարգի մարդկանց առջև, դէթ այդ աստիճանի այն մասը, որ իր մէջ պարունակում էր ոչ թէ ընտհանուր կրօնքի, այլ մասնաւոր աստուածների քաւարարութիւնը: Նոյն իսկ Արամազդի քուրմը (Flamen Dialis), որի առջևից երթում էր լիկտորը *), որ իր պաշտօնով իրաւունք ունէր մտնելու սենեակի մէջ և որ պատրիկների մէջ մասնաւորապէս մեծ պաշտօնեայ էր, նոյն իսկ նրա պաշտօնի դուռը, կրկնում եմ, վեր-

*) Մի պաշտօնեայ, որ կրում էր մի տոպրակ և մի փոքր հատ գաւազան միմեանց կապուած, և գնում էր մի մեծ մարդու առջևից, ի նշան այդ մեծ մարդու իշխանութեան: Ե. Փ.

ջերը բաց էր ժողովրդի առջև: Նոյնպէս ազգային, և նոյնիսկ յարգի ատուածներին ծառայում էին պլեբէյեան քահանաներ և չատերը ընդունում էին այդ կոչումը, ինչպէս հիմա կաթոլիկ քրիստոնեաները մտնում են վանքերը, ոչ այնքան բարեպաշտական զգացումից մղուած, որքան չքաւորութիւնից: Այս պատճառով Կալենուսը, Խոխի քուրմը, ամենահասարակ ծագումի տէր մի մարդ էր: Նրա ազգականները, եթէ ոչ նրա ծնողները, ազատագրուած մարդիկ էին: Նա իր ծնողներից ստացել էր ազատական կրթութիւն և իր հօրից մի փոքրիկ ժառանգութիւն. նա կարճ միջոցում չուայլել էր իր ստացուածքը և ընդունել էր քուրմութիւնը որպէս մի վերջին միջոց ապրուստ անելու աղքատութիւնից: Ինչ էլ լինէր կառավարական վճարը այդ արբազան պաշտօնի համար, վճար, որ այդ ժամանակ հաւանականապար մեծ բան չէր, մի ժողովրդականութիւն ունեցող տաճարի քուրմները չէին կարող դանգատուել իրանց կոչման չահերից: Ոչ մի արուեստ չկայ այնքան չահաբեր, որքան այն, որ գործ ունի ժողովուրդի նախապաշարումների հետ:

Կալենուսը միայն մի հոգի կենդանի մնացած ազգական ունէր Պոմպէյի մէջ և դա Բուրբոն էր: Ջահաղան ան և վատահամբաւ հանդուցեալներ, աւելի ամօթ քան արեան չղթաները, կապել էին նրանց սրտերը և չահերը միմեանց հետ և լաճախ Խոխի պաշտօնեան, ծպտուել և պաղտնի կերպով փախչում էր իր բարեպաշտութեան աւերուելի խաստութիւններից և եռանի դռնից ներս էր սահում կրկեսից քաշուած գլադիատորի տունը, մի մարդու, որ նոյնչափ վատահամբաւ էր իր մոլութիւններով, որչափ իր արհեստով, և այնտեղ ամենայն բերկ-

թութեամբ դէն էր ձգում իր կեղծաւորութեան վերջին ցնցոտին. եթէ չլինէին ազատութեան թեւատրութիւնները (նրա իշխող կիրքը), այդ դիմակը երբևիցէ սազ չէր գալ նրա բնաւորութեան, որը չափազանց դաժանային էր մինչև անգամ առաքինութիւնը կամկեղու համար։

Փաթաթուած այն մեծ վերարկուների մէկի մէջ, որոնք այնքան աւելի մոգա էին դառնում, որքան առդանները մոգայից ընկնում էին, իր մարմինը թագցրած նրա լայն ծալքերի մէջ, և իր գլուխը այն վեղարի նման մի գլխանոցի, որ սովորաբար կապած էր լինում վերարկուին՝ Կալենուսը նստած էր գինեվաճառի փոքրիկ առանձնասենեակում. այդ սենեակներից մի փոքրիկ անցք ուղղակի առաջնորդում էր դէպի եռակի դուռը, որ Պոմպէյի դրեթէ բոլոր տներն ունէին։

Նրա դիմաց նստած էր լայնալանջ Բուրբոն և մի սեղանի վրայ ուշադրութեամբ հաշւում էր մի կոյտ դրամ որ քուրմը հանել էր իր քսակից —որովհետև քսակները այն ժամանակն էլ նոյնչափ գործածական էին, որչափ որ են մեր օրերում, այս տարբերութեամբ միայն որ այն ժամանակ աւելի լի էին։

«Ցնծում եմ», ասաց Կալենուս, որ մենք լաւ ենք վճարում և դու պէտք է չնորհակալ լինես ինձանից, որ քեզ համար գտել եմ մի այսպիսի նպաստաւոր յաճախորդ»։

«Շնորհակալ եմ, Կալենուս, չնորհակալ եմ», պատասխանեց Բուրբոն սիրալիր կերպով, և դրամները հաշւեց մի կաշեայ քսակի մէջ. յետոյ քսակը դնելով իր գօտու մէջ նա աւելի ամուր քաշեց իր մէջ – կապը քան սովոր էր անելու իր անցալին զբաղմունքների անդոդ

ժամերի ընթացքում։ «Եւ դիտէ Խսիսը, Պիսիսը, Նիսիսը, կամ որևէ ուրիշ աստուած, որ կարող է լինել Եգիպտացում, որ իմ փոքրիկ Նիդիան մի ճշմարիտ Հասպերիդէսմի ոսկեայ պարտէզ է ինձ համար»։

«Նա լաւ է երգում, և նուագում է ինչպէս մի մուսայ», պատասխանեց Կալենուս և դրանք այնպիսի արժանիքներ են, որոնց համար իմ տէրը միշտ առատաձեռնութեամբ է վճարում»։

«Նա մի անատուած է», գոչեց Բուրբոն ոգևորուած. «իրաւացնչիր հարուստ և առատաձեռն մարդ արժանի է երկրպագութիւն առնելու։ Բայց ես, ա՛յ տղայ, մի բաժակ գինի խմիր, և ինձ աւելի պատմիր նրա մասին։ Ի՞նչ է անում Նիդիան, ինչը սարսափահար է, ասում է որ երգում է արել և ոչ մի բան չէ յայտնում»։

«Ոչ էլ ես կը յայտնեմ եթէ աչ ձեռքս կտրելու լինեն։ Ես էլ եմ արել զաղտնապահութեան այդ սարսափելի երդումը»։

«Երդում, երդումն ինչ է մեզ պէս մարդկանց համար»։

«Ճշմարիտ է հասարակ երդումները ոչինչ, բայց այս... և բարձրահասակ քուրմը ցնցուեց։ «Ախնուամեհանչիս», չարունակեց նա, պարպելով անխռան գինու մի ահագին բաժակ», ես խոստովանում եմ, որ երդումը չէ այնքան ինձ վախեցնողը, որքան երդում տուողի վրէժխնդրութիւնը։ Գիտեն աստուածները, որ նա մի հզօր կախարդ է, և կարող է լուսնից դուրս քաշել իմ խոստովանքը եթէ չանդգնեմ նրան յայտնել այդ գաղտնիքը։ Այլ ես այս մասին մի խօսիր ինձ հետ։ Գոլմնքը վկայ, որ չնայելով ինչքան վարձում են այդ մարդու հետ իմ վայելած զուարճութիւնները՝ ես երբէք կատա-

բեալ հաճույք չեմ զգում այնտեղ։ Ես զերապատում եմ այն ուրախ ժամը, որ անց եմ կացնում քո հետ և այն պարզ, անխարդախ, ծիծաղկոտ աղջիկներից մեկի հետ, որոնց հանդիպում եմ այս սենեակում՝ այդ փառահեղ կերուխումների ամբողջ դիշերներին»։

«Այդպէս, ուրեմն վաղը դիշեր, աստուածների օդնութեամբ, մենք մի լաւ բէֆ կ՚ունենանք այստեղ»։

«Ամենայն հաճութեամբ», ասաց քուրմը, չիմելով իր ձեռքերը, և աւելի մօտենալով սեղանին։

Այս րոպէին նրանք լսեցին մի ձայն. կարծես մեկը ձեռք էր տալիս դրան կանթին։ Քուրմը իր վեղարը քաշեց դլխի վրայ։

«Ոչինչ», մրմնջաց սանտաէրը, «կոյր աղջիկն է», և Նիդիան դուռը բացեց և ներս մտաւ սենեակը։

«Հօ, աղջիկ, և ինչպէս ես յանդգնում... դու դուռնաթափ ես, երեխ դիշերը չատ ես արթուն մնացել։ Վնաս չունեն, երեխաասարդները միշտ երիտասարդ պիտի լինեն», ասաց Բուրբօն քաջալերական եղանակով.

Աղջիկը պատասխան չտուեց, այլ ընկաւ նստարանների մեկի վրայ թուլացած մարդու ձեով։ Նրա գոյնը արագ-արագ փոխուում էր. նա իր փոքրիկ ոտքերը անհամբերութեամբ զարկում էր գետնին, յետոյ նա յանկարծ բարձրացրեց իր երեսը և վճռական եղանակով ասաց.

«Տէր, դուք կուզէք ինձ սովամահ արէք, ծիծաղեցէք, ինձ մահուամբ սպառնացէք—բայց այլ ևս ես չեմ երթալ այդ անուրբ տեղը»։

«Ինչպէս, լինա՞ր», ասաց Բուրբօն կատաղի ձայնով և նրա ծանրացած յօնքերը սպառնալից կերպով հաւաքուեցան նրա վայրկեան և արիւնոտ աչքերի վերև. ըմբոստութիւն, զգուշ կաց»։

«Անելիքս ասացի», պատասխանեց խեղճ աղջիկը իր թևերը ծալելով իր կրծքի վրայ։

«Ի՛նչ, իմ համեստիկս, իմ վեստալական անուշիկ կոյսս, դու չես դնալ։ Շատ լաւ ուրեմն քեզ կը տանեն»։

«Ես ամբողջ քաղաքը դլխիս կը հաւաքեմ իմ աղաղակներով», ասաց նա ուժդնութեամբ. և նրա բոլոր երեսը կարմրեց։

«Դրա հոգն էլ կանենք. բերանդ կը խցենք»։

«Ուրեմն թող աստուածները ինձ օդնեն», ասաց Նիդիան վերկենալով։ «Ես կը բողոքեմ դատաւորներին»։

«Ցիչիր երդումդ», ասաց Կալենուսի խուլ ձայնը առաջին անդամ մտնոկցելով այդ վիճաբանութեան։

Այս բառերից մի սարսափ ցնցեց տարաբախտ աղջկայ ամբողջ մարմինը. նա իր ձեռքերը գալարեց ապերասական ձեով. «ինչ թշուառ եմ ես», դոչեց նա և սկսեց ուժդին կերպով հեկեկալ։

Տրամաբանութեան այդ բարձրաձայն պալթիւնն էր, որ վախկոտուն Սարասոնիկին բերեց այդ սենեակը թէ ոչ, այդ յայտնի չէ, բայց այս րոպէին նրա զարհուրելի կերպարանքը երևաց դռնից։

«Ի՞նչ կայ, ինչ ես արել իմ զերուհուն, գաղան, ասաց նա բարկացած ձայնով Բուրբօյին։

«Լռիր, այ կնիկ», ասաց նա կէս ժանտ և կէս երկչոտ ձայնով, «նոր գօթի և սիրուն զղեսաներ ես ուզում։ Լաւ, ուրեմն հոգ տար զերուդ, ապա թէ ոչ այլ ևս չես ունենալ։ Voe capiti tuo—վա՛յ քո գլխին, թշուառական»։

Այս ինչ է նշանակում», ասաց քաւթառը, նայելով մեկից միւսը։

Նիզհան յանկարծական մի թափով առաջ թռաւ այն պառից, որի դէմ յենուած էր. նա ընկաւ Սարատոնիկի ոտքերը. նա գրկեց նրա ծնկերը, և նայելով նրա երեսին անլոյս բայց սրատեսութեամբ աչքերով.

«Ո՛վ իմ ախկին», հեկեկաց նա, «դուք կին էք— դուք քոյրեր էք ունեցել—դուք երիտասարդ էք եղել իմ նման—դթացէք իմ վիճակին—ազատեցէք ինձ։ Ես այլ ևս չեմ մասնակցի այս սարսափելի հանդիսաներին»։

«Փուհ», ասաց քաւթառը, կոպտութեամբ քաշելով նրա քնքոյշ ձեռքերից մեկը, որոնք միայն յարմար էին հիւանդու այն ծաղիկները, որոնք նրա զուարճութիւնն էին կամ արուեստը.— «փուհ, այդ դեղեցիկ փափկանկատութիւնները դերձների համար չեն։

«Լաւ», ասաց Բուրբօն, դուրս քաշելով իր քսակը և զարկելով նրա պարունակութիւնը. «այ կնիկ, լսում ես այս երաժշտութիւնը. եթէ այդ քուռակիդ լաւ չսանձահարես, այլ ևս չվիճի լսես»։

«Աղջիկը յոգնած է», ասաց Սարատոնիկ, դլուխը շարժելով դէպի Կալենուսը. միւս անդամ երբ դուք ուղէք նրան, նա աւելի ընտելացած կը լինի»։

«Դուք, դուք, ոչ կայ այստեղ», գոչեց Նիզհան, իր աչքերը պտտցնելով սենեակի չորսդը, այնպիսի մի սարսափահար և յուսահատ նայուածքով, որ Կալենուսը վախեցած վեր կացաւ իր նստարանից։

«Նա անատոմիա է անում այդ աչքերով»։ մրմնջաց նա։

«Ո՞վ կայ այստեղ։ Խօսեցէք յանուն երկնի։ Ա՛հ, եթէ ինձ պէս կոյր լինէիք, դուք նուազ անդութ կը լինէք», ասաց նա. և նորից յորդ արտասուքը սկսեց թափուիլ նրա աչքերից։

«Հեռացրու նրան այստեղից», ասաց Բուրբօն անհամբերութեամբ. «ես ատում եմ այս կանացի ճիչերը։

«Ա՛կ, ասաց Սարատոնիկ, հրելով խեղճ երեխային ուսերից։

Նիզհան մի կողմ քաշուեց, մի ձեւով, որի վճռողականութիւնը յարգանք էր ազդում։

«Լսեցէք ինձ», ասաց նա. «Ես ծառայել եմ ձեզ հաւատարմութեամբ—ես, որ սնուում էի... Ա՛հ, իմ մայրս, իմ խեղճ մայրս, դու երբ և իցէ կարող էիր երազել, որ ես այստեղ կը հասնեմ։ Նա սրբեց արտասուքը իր աչքից և չարունակեց.—«Հրամայեցէք ինձ որևէ ուրիշ բան անել և ես կը հնազանդեմ. բայց ես հիմա ասում եմ ձեզ, որ այդքան խիստ, կոպիտ և անողորմ էք, ես ասում եմ ձեզ, որ այլ ևս այնտեղ չեմ երթայ. կամ եթէ ինձ բռնի տանէք այնտեղ ես կը դիմեմ պրէտորին իրան—ահա մէկ անդամ ընդ միշտ ասացի ձեզ։ Լսեցէք, ով աստուածներ, իմ երդումս»։

Քաւթառի աչքերը բոցափայլեցին. նա մեկ ձեռքով բռնեց երեխայի մազերից, և բարձրացրեց միւս ձեռքը – այն զօրաւոր ձեռքը, որի ամենաթեթև հարուածը կարծես բաւական ուժեղ էր փշրելու այն քնքոյշ և նուրբ կազմուածքը, որ դողդողում էր նրա ձեռքի մէջ։ Կարծես հէնց այդ միտքը արդելք եղաւ նրան, որովհետև նա իջեցրեց իր բռունցքը բայց փոխելով իր նպատակը և Նիզհային քարշ տալով պատի մօտ բռնեց մի կարթ և մի պարան, որոնք, ասւղ, յաճախ նոյնանման դործերի էին ծառայում, և մեկ րոպէ չանցաւ, որ կոյր աղջկայ սուր և սրատեսիլ ճիչերը սկսեցին արձագանք տալ տան ամեն կողմից։

Գլուխ Գ.

Գլուխս գնում է մի աղջիկ, որ վերջը նրան շատ թանգ է նստում։

«Օհո, իմ քաջիկ», ասաց Լեպիդուս, գլուխը կորացնելով և ներս մտնելով Բուրբոի տան ցած դռնից։ «Մենք եկել ենք տեսնելու թէ ձեզանից որ մէկը ամէն պատիւ է բերում իր լանիստային»։ Գլադիատորները վեր կացան տեղանի մօտից և պատիւ այն երեք երիտասարդներին, որոնք ճանաչուած էին որպէս Պոմպէյի ամենահարուստ, ամենազուարճասէր ազնուականները, և որոնց ձայնից էր կախուած որևէ մարդու ամիլիթատրոնական հռչակը։

«Ի՛նչ գեղեցիկ անասուններ», ասաց Կլոդիուս Գլաուկոսին, «արժանի են գլադիատորներ լինելու»։

«Ախոռ որ առյուծներ չեն», պատասխանեց Գլաուկոս։

Մի տարօրինակ բան էր տեսնել քնքշակազմ և կնամարդի Լեպիդուսին, որին հանդէպ մէջ լուսով մի ճառագայթը կարծես կուրացնում էր, բաղնիքի մէջ քամու մի շունչը կարծես թուռամեցնում էր, որի մէջ բնութիւնը կարծես ծոռացած էր և չեզոքած ամեն բնական շաւղից, որ կազմում էր կանացիութիւնից և արուականութիւնից մի երկդիմի ամբողջութիւն. մի տարօրինակ բան էր, ասում եմ, տեսնել այս Լեպիդուսին, որ այժմ լի անձկութեամբ, էներգիայով և կեանքով չոչում էր գլադիատորների առաջին ուսերը իր սպիտակ և մի աղջկայ ձեռքի պէս փափկիկ ձեռքով—չօշափում էր մի թոյլ մեզմուսով նոցա մեծ, ուժեղ և երկաթեայ մկանունքը, լո-

գորովին սքանչացած այն կորովի մարդկութեան վրայ, որից նա իր ամբողջ կեանքի ընթացքում ամենայն ուշադրութեամբ խուս էր տուել։

Ինչպէս այդպէս էլ մենք տեսել ենք մեր օրերում Լոնդոնի սալոնների անմօրուք թիթեռնիկներին, որ վխտում են Ջալվօքորթի հերոսների չուրջը. մինչդուն կերպով նրանք նայում և սքանչանում են և գրաւել հատանգամանութիւններն են հաչում. նոյն կերպով համակրում են, մի ծիծաղաշարժ բայց ախորալի զուգորդութեամբ, լուսաւորեալ ընկերութեան երկու ծայրահեղութիւնները, զուարճասէրն սիրողները և նրա տարօրինակները—տարընտրողները ամեն տարօրինակների, որոնք մինչդուն ժամանակ թէ կատաղի են և թէ վարձկան. տգամարդ բողերը, որոնք վաճառում են իրանց ոյժը ինչպէս կանայք իրանց գեղեցկութիւնը. գազաններ, գործքով, բայց աւելի նուաստ քան գազաններ չարժանիթով, որովհետև վերջիններս գէթ միմեանց չեն պիչատում դրսի համար։

«Էհ, Նիգէր, ինչպէս կը կռուես», ասաց Լեպիդուս. «և ում հետ»։

«Սպորուս ինձ հրաւիրում է», ասաց խոժոռադէմ հսկան. «և ոյս ունիմ, որ մենք կը մաքառենք ցըմահ»։

«Ա՛, անուսուցիկոյս», մրմնջաց Սպորուսը, թարթելով իր վոքրիկ աչքը,

«Նա կը վերջնէ սաբը խակ ես ուռկանը և եռաժանին. կռիւը հաղուագիւտ մի բան կը լինի։ Ցոյս ունիմ, որ ապրողը բաւական դրամ կունենայ կառավարութեան պատիւը բարձր պահելու համար։

«Մի վախենաք, քանակը լաւ կը լցնենք, իմ քաջ Հեկատը», ասաց Կլոդիուս. «Թող տեսնեմ—դու կռւում

ես Նիզիբի հետ։ Գլոկուս, եկ դրաւ դանք — ես վերցնում եմ Նիզերին»։

«Ես ձեզ ասացի», գոչեց Նիզերը ուրախացած։ «Ազնիւ Կլոդիուսը լինձ ճանաչում է. քեզ արդէն մեռած համարիր, իմ սիրելի Սպորուս»։

Կլոդիուսը հանեց իր յուշատետրը—«դրաւ դանք, ասաը սեստերտիում*)։ Ի՞նչ ես ասում»։

«Լինի», ասաց Գլոկուս։ «Բայց այս ոմ է այստեղ։ Ես առաջ չեմ տեսել այս հերոսին». և նա մի ակնարկ ձգեց Լիդոնի վրայ, որի անդամները աւելի բարակից էին իր ընկերների անդամներից. բայց նա իր երեսի վրայ ունէր մի ինչ որ չնորհալիութիւն և մրնչէ անդամ ազնուութիւն, որոնց դեռ բոլորովին չէր ոչնչացրած նրա արհեստը։

«Դա Լիդոնն է, մի երիտասարդ, որ դեռ վարժ է թուրերով կռուելու միայն վարժուած է», պատասխանեց Նիզեր բարեհաճօրէն. «բայց նա ունի իր մէջ ճըշմարիտ արիւն, և հրաւիրել է Տէտրախիդէսին»։

«Նա հրաւիրեց լինձ», ասաց Լիդոն. «և ես ընդունում եմ նրա հրաւէրը»։

«Եւ ինչպէս պիտի կռուէք», հարցրեց Լեպիդուս։ «Տղաս, դու պիտի մի քիչ սպասէիր նախ քան Տէտրախիդէսի հետ մարտնչելդ»։ Լիդոն արհամարհական կերպով ժպտաց։

«Նա քաղաքացի է թէ զերի», ասաց Կլոդիուս։

«Քաղաքացի. մենք բոլորս քաղաքացիներ ենք» պատասխանեց Նիզէր։

*) Փիչ աւելի քան ութսան անգլիական ռուբլի։

«Թեզ երկարացրու, Լիդոն», ասաց Լիդուս, ճանաչող մարդու եղանակով։

Գլադիատորը, մի խորհրդաւոր ակնարկ ձգելով իր ընկերներին, բացաւ մի բաղուկ, որը, եթէ ոչ նոյնչափ հասու, որչափ իր բարեկամներինը, բայց նոյնքան ամուր մկանուներ ունէր և այնքան զգեցիկ էր իր մասերի համեմատութեան մէջ որ երեք այցելուները մէկ անգամից հիացման մի ձայն արձակեցին։

«Լաւ, ինչ է քո զէնքդ», ասաց Կլոդիուս, յուշատետրը ձեռքին։

«Մենք նախ կը կռուենք պեստուսով *) և յետոյ եթէ երկուսս էլ կենդանի մնացինք, սուրերով», պատասխանեց Տէտրախիդէս, մաղձոտ ձայնով և նախանձոտ նայուածքով։

«Պեստուսով, գոչեց Գլոկուս. «այդտեղ դու սխալուած ես, Լիդոն։ Պեստուսի կռիւը յուսնական է և ես պիտեմ դրա ձևը։ Դու պէտք է աւելի մեզ լինէիր. դու չափազանց նիհար ես այդ ձևի պայքարի համար—խոյս տուր պեստուսից»։

«Ես չեմ կարող», ասաց Լիդոն։

«Եւ ինչու»։

«Ասացի—որովհետև նա է հրաւիրել լինձ»։

«Բայց նա քեզ չի ստիպի այդ որոշ զէնքով կռուելու»։

«Իմ պատիւս է լինձ ստիպում», պատասխանեց Լիդոն հպարտութեամբ։

---

*) Պեստուսը մի կաշեայ զէնք էր, որի մէջ ըմբշամարտանները յաճախ լցնում էին կապար կամ երկաթ և վաթսաթելով իրենց ձեռքին կռւում են միմեանց հետ։ Ծ. Թ.

«Ես դրաւ եմ դալիս Տէսպահիկի վրայ, երկաւոր մէկի դէմ Պեսառաբի կառոյց, ասաց Կլոդիուս. ընդունեմ ես Լեպիդուս — սրի կռիւն էլ հաչուելով։

«Եթէ ինձ երեք ասս մէկի դէմ, չեմ ընդունիր, ասաց Լեպիդուս. Լիդոնը երբէք սրի կռուին չի տանի։ Դուք չափազանց բարի էք»։

«Դու ինչ ես ասում, Գլոկուս», ասաց Կլոդիուս։

«Ես ընդունում եմ երեքի դէմ մէկ»։

«Ուրեմն ասաը սեսաեբահում երեսունի դէմ»։

«Այո»։

Կլոդիուսը նշանակեց դրաւը իր յուշատետրի մէջ։

«Ներեցէք ինձ, ազնիւ պարոն, ասաց Լիդոն Գլոկուսին ցած ձայնով. կարծում էք որքան դրամ կը չահի յաղթականը»։

«Որքան. կարելի է հօթը սեսաեբահում»։ *)

«Դուք վատահ էք, որ այդչափ կը լինի»։

«Գէթ այդպէս մտածում եմ։ Բայց կորիր, մի յոյն կը մտածէր փառքի վրայ և ոչ դրամի։ Ո՛վ խաղացիներ, ամէն տեղ դուք խաղացիներ էք»։

Մի չիլնանք տարածուեց պլադիատորի բրոնզադոյն երեսի վրայ։

«Մի անիրաւէք ինձ, ազնիւ Գլոկուս. ես երկուսի վրայ էլ մտածում եմ, բայց ես երբէք մի պլադիատոր չպիտի լինէի եթէ դրամի համար չլինէր։

*) Ընթերցողը չպիտի շփոթէ սեսաեբսը սեսաեբահումի հետ։ Մի սեսաեբահումը որ մի դահեկան էր և ոչ մի դրամ, միևնոյնն էր ինչ հազար հատ սեսաեբս։ Սեսթինը ութը ասկի, 1 շիլինգ, 5½ պէննի անգլիական դրամ է, մինչդեռ վերջինի արժէքն էր 1 պէննի 3¾ բաժնով։

«Սակայն, երանի թէ չպիտի։ Ազատը երբէք հերոս չէ եղել»։

«Ես ազատ չեմ», ասաց Լիդոն խրոխտաբերեամբ, և նա քաշուեց սենեակի միւս նայրը։

«Բայց ես չեմ սեստում Բուրբոնին, ուր է Բուրբոն։ Ես պէտք է խօսեմ նրա հետ», գոչեց Կլոդիուս։

«Նա ներսն է», ասաց Նիգէր, ցոյց տալով սենեակի մէջ բացուող դուռը։

«Եւ Սարսոնիկը, այդ քաջ պառաւ աղջիկը որտեղ է», ասաց Լեպիդուս։

«Ձեր գալուց առաջ այստեղ էր. բայց մի ինչ որ անհաճելի բան լսեց և անյապաղաւ։ Կարելի է ծերուկ Բուրբոն մի աղջիկ էր ձեռք ձգել հանի սենեակում։ Ես մի կնոջ ձայն լսեցի, և պառաւ սիկինը նոյնչափ նախանձոտ է որչափ Յունօն։

«Հօ, աբանչելի է», գոչեց Լեպիդուս, ծիծաղելով։ «Ե՛կ Կլոդիուս, եկ երթանք ընկերանանք Իուպիտերի հետ. կարելի է նա մի Լեդա ձեռք բերած լինի»։

Այս բոպէին ցաւի և սարսափի մի բարձրաձայն ազազակ հնչեց նրանց ականջներին,

«Ո՛հ, խնայիր ինձ, խնայիր ինձ։ Ես երեխայ եմ, ես կոյր եմ—դա բաւական պատիժ չէ՞ ինձ համար»։

«Ո՛հ, Պալլաս, ես ճանաչում եմ այդ ձայնը. դա իմ խեղճ ծպտավաճառ աղջիկն է», գոչեց Գլոկուս, և նա նետուեց այն կողմը՝ ուրկից գալիս էր այդ ձայնը։

Նա դուռը կոտրեց և տեսաւ, որ Նիգիան գալարուում էր կատաղած քաւթառի ձեռքի մէջ. պարանը արդէն արիւնով ներկուած բարձրացած էր օդի մէջ,—դա չանկարծ բռնուեց։

«Ծուրիա», ասաց Գլոկուս, և իր ձախ ձեռքով

ջսից Նիդիային կնոջ ձեռքից. ինչպէս ես չանդգնում այդպէս վարուել մի աղջկայ հետ, որ պատկանում է քո տեսչին, և մի երեխայ է: Իմ Նիդիան, իմ խնդճ երեխան».

«Ո՛հ, այդ դուք էք—այդ Գլոկնեան է», բացականչեց աղջիկը ցնծութիւնից չափչփուած մի ձայնով և արտասուքի կաթիլները ցամաքած մնացին նրա թշերի վրայ. նա ժպտաց և կպաւ Գլոկուսի կրծքին, և կսկծալով համբուրեց նրա զգեստները:

«Եւ ինչպէս ես չանդգնում դու, խիզախ օտարական, միջամտել մի ազատ կնոջ և նրա զերու մէջ: Ատուածները վկայ, որ չնայելով քո զեղեցիկ պարեզօտին և քո զրաւչի անուշահոտութիւններին՝ ես ստիպուած կունեմ, որ դու Հռոմի քաղաքացի լինես, իմ պարոն Թզուկ»:

«Կամաց, տիկին, կամաց—ասաց Գլոկուս, այժմ մանելով Կլեոպատրայի հետ: «Սա իմ բարեկամն է և իմ երդուեալ եղբայրը. ես պէտք է պաշտպանեմ նրան քո լեզուից, որ քարեր է տեղում»:

«Ցնծա ինձ իմ զերուս, ճչաց քաւթառը, բռնելով յսյնի կրծքից իր հզօր բազուկով:

«Զեմ ասէ, եթէ բոլոր քո քոյր փարիսեցիներին էլ օգնութեան կանչես, պատասխանեց Գլոկուս: Մի վախենար, քաղցրիկ Նիդիա. մի աթենացի երբէք չի լռանի տատապելին»:

«Հօ, գոչեց Բուրբոն, ականջ վեր կենալով իր տեղից. այս ինչ աղմուկ է մի զերու համար: Բայց Թզուկ աղնուական պարոնին, այ կնիկ,—բայց Թզուկ նրան. նրա խաթեր համար այս չանդուդն աղջկան կը ներենք այս անգամ»: Այս ասելով նա լեա քաշեց իր կատաղի կնոջ ձակատագունեն».

«Կարծեմ երբ մենք ներս մտանք, ասաց Կլոդիուս, «մի ուրիչ մարդ էլ կար այստեղ»:

«Նա գնաց»:

Որովհետև Խիսի քուրմը իրօք տեսել էր, որ անհետանալու ժամը հասած է:

«Օ՛, նա իմ բարեկամս է, մի բաժակի ընկեր, մի հանդարտ շուն, որ չէ սիրում այսպիսի աղմուկներ, ասաց Բուրբոն անտրոնութեամբ: Բայց գնա, աղջիկս, դու կրպատուհաս պարոնի զգեստները եթէ այդպէս կախուես նրանից. գնա ներսից քեզ այս անգամ»:

«Ո՛հ, մի Թզուկիր մի Թզուկիր ինձ», գոչեց Նիդիան, աւելի կսկծալով աթենացուն:

Այդ աղջկայ Թշուառ կացութիւնը տեսնելով, նրա քոյրը լսելով, և նրա անթիւ ու սրտաչարժ չնորհքներից զգածուած՝ յսյնը նստեց կոպիտ նստարաններից մէկի վրայ: Նա պահել էր աղջկան իր ծնկների մօտ. նա սրբեց նրա ուսերի արիւնը նրա երկար մազերով,—նա համբուրեց նրա Թշերի վրայի կաթիլները, նա մըրմնջաց նրա ականջին հազար ու մէկ փաղաքշական բառեր, որոնցով մենք մեզմացնում ենք մի երեխայի վիշտը—և այնքան զեղեցիկ էր երևում նա իր այս ազնիւ և մխիթարիչ զերի մէջ, որ նոյն իսկ Սարատանիկի անողոք սիրտը և գութ չարժուեց: Նրա ներկայութիւնը կարծես լոյս էր սփռում այդ Թշուառ և պղծ բնակութեան վրայ: Երիտասարդ, զեղեցիկ, փառաւոր՝ նա ներկայացնում էր մի մարդ, որին աշխարհը տուել էր ամեն երջանկութիւն և որը մխիթարում է մի տարաբախտի, որին աշխարհը լքանել էր:

«Ո՞վ կարող էր մտածել, որ մեր կոյր Նիդիան

այսքան պատիւ կատանայ», ասաց քաւթառը, սրբելով իր տաքացած ճակատը։

Գլոկուսը նայեց Բուրբոնին։

«Բարեկամ», ասաց նա, սա քո գերին է. նա լաւ է երգում, նա լաւ ծաղիկներ պահել գիտէ—ես ուզում եմ սրան ընծայեմ մի սիրնոջ։ Կը ծախես նրան»։ Մինչդեռ խօսում էր նա ղդաց, որ աղջկայ ամբողջ մարմինը ցնցւում էր ուրախութիւնից. նա վեր թռաւ, նա չէտ քաշեց իր արձակ մազերը իր աչքերի առջևից. նա նայեց իր շուրջը որպէս թէ, աւազդ, կարող լինէր տեսնել։

«Մեր Նիզիային ծախենք, անպատճառ ա՛յ», ասաց Սարասանիկ կոպտութեամբ։ Նիզիան մի երկար հառաչանք հանեց, և նորից կպաւ իր պաշտպանի ղգեստներին։

«Յիմար խօսք», ասաց Գլոկուս հրամայաբար. «դուք պէտք է պարտաւորեցնէք ինձ։ Ինչ ես ուզում անել այ կնիկ, ուզում էք ինձ բարկացնել, բարկացրէք և ձեր գործը վերջացած է։ Բուրբոն իմ ազգական Պանսալի կլիէնտը չէ։ Ես չեմ արդեօք ամիսխթատրոնի և նրա հերոսների դաբրը։ Եթէ մէկ բառ ասեմ, գնացէք կոտրատեցէք ձեր գինու կարասները—այլ ես ոչինչ չէք կարող ծախել։ Գլոկա, գերին քոնը է։

Բուրբոն սկսեց քորել իր ահագին գլուխը, չուտած գրուխեան մէջ։

«Աղջիկը իր ծանրութեամբ ոսկի արժէ ինձ համար»։

«Արժէքդ ասա, ես հարուստ եմ», ասաց Գլոկուս։

Հին խաղացիները նորերի նման էին. ոչ մի բան չկար, որ նրանք չծախէին, ուր միայն մի խեղճ կոյր աղջիկ։

«Ես վեց սեստերտիում վճարեցի նրա համար, նա այժմ տասներկու կ'արժէ, մրմնջաց Սարասանիկը։

«Ես քսան կը վճարեմ. եկէք անմիջապէս ինձ հետ դատաւորի մօտ, և այնտեղից իմ տունը դրամը տասնալու»։

«Ես այդ սիրելի աղջկան հարիւրի էլ չէի ծախիլ, բայց ստիպուեցայ աղնիւ Կլոդիուսին պարտաւորացնել, ասաց Բուրբոն դանդատուելու եղանակով։ «Եւ դուք կը խօսէք Պանսալի հետ դէզիդնատորի պաշտօնի մասին ամիսխթատրոնի մէջ, աղնիւ Կլոդիուս. դա շատ լարմար է ինձ»։

«Դու կ'ունենաս այդ պաշտօնը», ասաց Կլոդիուս, աւելացնելով Բուրբոի ականջին. «այդ յոյնը կարող է քեզ հարստացնել. գրամը հոսում է նրա ձեռքի արանքից, որպէս ջուրը մի մազի միջից. այս օրը սպիտակ գծով նշան արա, իմ սիրելի Պրիամ»։

«An dabis», ասաց Գլոկուս առևտրի պաշտօնական լեզուով։

«Dabitur», պատասխանեց Բուրբոն։

«Լաւ, լաւ, ես պիտի քո հետ գամ, քո հետ։ Ո՛չ երջանկութիւն», մրմնջաց Նիզիան։

»Այո՛, իմ սիրունիկս. և քո ամենից դժուար գործը պիտի լինի յունական երգեր երգել Պոմպէյի ամենաչքնաղ սիրնոջ համար»։

Աղջիկը դուրս ցատկեց նրա ձեռքից. մի փոփոխութիւն անցաւ նրա բոլոր երեսի վրայ, որ այնքան պայծառ էր մի րոպէ առաջ. նա սրտի խորքից հառաչեց և կեցոյց մէկ անդամ էլ բռնելով նրա ձեռքը ասաց.

«Ես կարծեցի պէտք է դամ քո տունը»։

«Եւ առ այժմ այդպէս էլ կը լինի. եկ, ժամանակ ենք կորցնում»։

Գլուխ Դ.

Գլոկուսի մրցակիցը աւելի առաջանում է իր ասպարիզի մէջ:

Իօնէն այն վայելուն անձնաւորութիւններից մէկն էր, որոնցից միայն մի կամ երկու հոգու մենք հանդիպում ենք կեանքի մէջ: Նրա մէջ միացած էին աչքարէի ամենահազուագիւտ արժանիքները իրանց բարձրագոյն կատարելագործութեամբ. նա ունէր հանճար և գեղեցկութիւն: Ոչնչ չէ ունեցած գերազանց մտաւոր ձիրքեր, առանց իմանալու որ ինքը դրանց տէրն է: «Հանճար» և «հանճարեղ» բառերը չատ գեղեցիկ նոյնատառութիւն են կազմում, բայց ուր որ հանճարը մեծ է, հաւեստութեան քօղը, որի վրայ մենք այնքան ուշադրանում ենք, երբէք այնքան թանձր չէ որ հանճարեղը չը կարողանայ տեսնել իր արժանիքի ամբողջ տարածութիւնը: Որոշ յատկութիւնների հպարտ գիտակցութիւնն է (յատկութիւնների, որ նա չէ կարող յայտնել ամենօրեայ աշխարհին), որ տալիս է հանճարին այն ամաչկոտ, վերապահ, և անհանգիստ կերպարանքը, որի առջև մենք այնքան չվոխուած և չողոքորթած ենք զգում մեզ:

Իօնէն սրեմն ճանաչում էր իր հանճարը, բայց այն թովիչ ճապկութեամբ, որ իրաւամբ պատկանում է կանանց, նա մի մանաւոր ձիրք ունէր թեքելու և ճանչելու իր չնորհալի միաքը իւրաքանչիւր մարդու կազմարի համեմատ, որին նա հանդիպում էր. մի ձիրք, որ նոյնանման հանճարներից քչերը կարող են ունենալ նուազ կամ նեղ մտքի մէջ: Շողշողուն ազնիւը զուարճացնում էր իր ջրով թէ անծաւը և թէ ծաղիկները. ամեն տեղ դա ժպտում էր, թարմացնում էր, վայելում

էր: Նրան չատ սաղ էր գալիս այն հպարտութիւնը, որ գերազանցութեան անհրաժեշտ հետևանքն է, և նրա կուրծքում դա կեդրոնացած էր անկախութեան մէջ: Նա այսպէս չարունակում էր իր պայծառ և մենաւոր ուղին: Նա ոչ մի պատասխանից չէր խնդրում վերահսկել և առաջնորդել իրան—նա քայլում էր մենակ իր անարատութեան հաստատուն լոյսով. նա չէր հնազանդում ոչ մի բռնակալ և ընդհանուր սովորութեան. նա ձուլում էր սովորութիւնները իր կամքի համեմատ. բայց այնքան փափկութեամբ, այնքան կանացի չնորհքով էր անում այդ բանը, այնքան հեռու էր նրա արածները սխալից, որ չէր կարելի ասել թէ նա բռնաբարում էր սովորութիւնը, այլ իշխում էր դրա վրայ: Նրա ձիրքերի հարստութիւնը անսպառելի էր—նա գեղեցկութիւն էր գնում իր ամենահասարակ գործի մէջ. նրա մի բառը, մի նայուածքը կարծես կախարդանք էին: Սիրիր նրան, և դու պիտի մտնես մի նոր աշխարհ բոլորովին տարբեր այս ամենօրեայ հնամաշ աշխարհից: Դու կը լինես մի երկրում, ուր քո աչքերը կը տեսնեն ամեն բան մի գիւթական ակնոցի միջոցով: Նրա ներկայութեամբ դու այնպէս կզգաս որպէս թէ լսում լինէիր հիանալի երաժշտութիւն. դու կը խորասուզուես այն զգայմունքի մէջ, որից աչխարհը այնքան քիչ մաս ունի, և որի երաժշտութիւնը այնքան նեղչնչում է այն արարածութեան մէջ որ զարդարում է և բարձրացնում, որ թէև տիրում է զգայարանքներին, բայց տիրելով նրանց տալիս է հոգու բնորոշ յատկութիւնները:

Նա յատկապէս ստեղծուած էր իշխելու և թովելու. Նուազ հասարակ, և աւելի յանդուգն բնաւորութեան տէր

մարդկանց. սիրել նրան, նշանակում էր միացնել երկու կիրք—սէր և փառասիրութիւն. նրան պաշտելու բոպէին մարդ զգում էր մի անհուն ուժ դէպի ինչ որ բարձր է և վեհ։ Ուրեմն զարմանք չէ որ նա կատարելապէս չըզթալել և հալածակայրել էր եղիպատցու խորհրդաւոր բայց այրուզ հոգին, մի մարգու, որի մէջ բնակւում էին ամենակատաղի կիրքերը։ Նրա զեղեցկութիւնը և նրա հոգին միանման դերել էին նրան։

Առանձնացած ապրելով սովորական աշխարհից՝ եղիպատցին սիրում էր բնաւորութեան այն յանդգնութիւնը, որ հասարակ բաներին մէջ զարձնում էր նրան բարձր և մեկուսացած։ Նա չէր տեսնում, կամ չէր ուզում տեսնել, որ նոյն այդ կղզիացումը Իօնէին հեռացնում էր իրանից աւելի քան ամիկներից։ Ինչքան մէկ բևեռը միւսից, և ինչքան գիշերը ցերեկից, նոյնքան հեռու էր եղիպատցու մենակեցութիւնը հելլենուհու մենակեցութիւնից։ Մարդը առանձնակեաց էր զարձել իր փարթամ մոլութիւնների պատճառով—կինը՝ իր երևակայութեան զեղեցկութեան և իր առաքինութեան անարատութեան պատճառով։

Զարմանալի չէր որ Իօնէն այսպէս գերել էր եղիպատցուն, և աւելի նուազ զարմանալի էր, որ նա այդպէս չտեսած և անդառնալի կերպով սիրել էր նոյնի վայլուն և արևածիծաղ սրտին։ Գլուխաի բնաւորութեան ուրախութիւնը, բնաւորութեան որ կարծես հիւսուած լինէր արևի ճառագայթներից, առաջնորդել էր նրան դէպի զուարճասիրութիւն։ Իր ժամանակուայ չռայլութիւնների մէջ թափառելով՝ նա չէր ենթարկւում մոլի և վատ ազդեցութիւնների աւելի քան ինչ թելադրում էին նրա երիտասարդութեան և առողջութեան ուրախացուցիչ ձայ-

նները։ Նա ձգում էր իր բնաւորեան փայլը ամէն մի վիճի և անճաշակ վրայ, որոնց մէջ նա թափառում էր։ Նրա երևակայութիւնը չլացնում էր նրան, բայց նրա սիրտը մնում էր միշտ անապակ։ Շատ աւելի թափանցիկ, քան ինչ նրա ընկերները կարծում էին նրան, նա հասկանում էր, որ նրանք ուզում են իրանց համար մի որս չինել նրա հարստութիւնը և երիտասարդութիւնը. բայց նա արհամարհում էր հարստութիւնը, եթէ ոչ այն դէպքում երբ դա կարող էր վայելքի մի միջոց լինել, և երիտասարդութիւն էլ, համակրութեան այն մեծ հանդոյցն էր, որ կապում էր նրան իր ընկերների հետ։ Ճշմարիտ է, նա զգում էր իր մէջ մի մղում դէպի ազնուացոյն մաքեր, և բարձրագոյն նպատակներ քան ինչ կարող էր ունենալ զուարճասիրութեան մէջ. բայց աշխարհը նրան թուում էր որպէս մի անապին բանտ, որի կայսերական բանտապահը Հռոմի միամիտ արքան էր. և հենց այն առաքինութիւնները, որ Աթէնքի ազատութեան օրերում նրան փառասէր պիտի զարձնէին, այդ երկրի զերութեան ժամանակ նրան չինում էին ծոյլ և հեզ։ Այդ անընական և անապարձ լուսաւորութեան ժամանակ ինչ որ աղնիւ էր և մրցման արժանի, արգելուած էր։ Փառասիրութիւնը մի բռնակալ և զեղխ աքսունիքի մէջ ուրիշ բան չէր, եթէ ոչ չոզոքորթութեան և խորամանկութեան մի պալքար։ Ազատութիւնն էր եղած միակ փառասիրութիւնը – մարդիկ ուզում էին ունենալ պրէտորութիւններ և նահանգներ որպէս կոզոպատելու մի ապօնութիւն։ Փոքրիկ պետութիւնների մէջ էր, որ փառքը աւելի գործնական է և մաքուր. որքան աւելի նեղ են չրջանի սահմանները, այնքան աւելի ազանդատն է հալրենասիրութիւնը։ Փոքրիկ պետութիւն-

նների մէջ զաղափարը կեղրոնացած է և ուժեղ—ամենէ ազգ կարդում է քո գործերը—քո հասարակական չարժառիթները խառնուած են քո անհատական կապերի հետ, - քո նեղ շրջանիդ ամեն մի կէտի վրայ հաւաքուած են այնպիսի կերպարանքներ, որոնք երեխայութիւնից քեզ ծանօթ էին—քո քաղաքակիցների գովեստը քո բարեկամներիդ զգուանքին է նմանում։ Բայց մեծ պետութիւնների մէջ պատահում է միայն քո քաղաքը. նահանգները—քեզ անծանօթ, իրանց սովորութիւններով և կարելի է իրանց լեզուով—ոչ մի հայրենասիրութիւն չեն պահանջում քեզանից. նրանց բնակիչների նախանձիքը քո նախանձիքը չեն եղած։ Պալատի մէջ չնորհ է հարկաւոր քեզ, փոխանակ փառքի. պալատից հեռու, հասարակաց զաղափարը ոչնչացած է քեզ համար, և անձնական չահասիրութիւնը ոչ մի հակակշիռ բան չ'ունի իր հետ։

Ո՛վ Իտալիա, Իտալիա, մինչդեռ դրում եմ այս տողերը, քո երկինքը տարածուած է իմ դլխիս վերև—քո ծովերը ափռուած են իմ ոտքերիս ներքև, ականջ մի դնիր այն կոյր քաղաքականութեան, որ ուզում է միացնել, մէկ կայսերութիւն դարձնել քո բոլոր պերճ քաղաքները, որոնք ոդրում են իրանց հասարակապետութիւնները։ Սուտ և վնասակար չնորք է դա. քո վերածնութեան միակ յոյսը բաժանման մէջ է։ Ֆլորէնցը, Միլանը, Վենետիկը, Ձէնովան, կարող են դարձեալ ազատ լինել, երբ առանձնապէս ազատ լինեն։ Մի երաշիր ազատութիւն տալ ամբողջին, մինչդեռ դու չդիտես եա մասերը. սիրտը պիտի լինի կազմուածքի կեդրոնը և արիւնը ազատութեամբ պիտի չրջան առնէ ամեն տեղ. վիթխարի պետութիւնների մէջ դու կը տես-

նես մի սնափառ և անզօր հսկայ, որի ուղեղը տխմար է, որի անդամները մեռած են, և որ հիւանդութեամբ ու ակարութեամբ պատժւում է այն չանցանքի համար, որ նա գործել է չափազանցելով բնութեան որոշած առողջութեան և ոյժի սահմանները։

Այսպէս զգալով՝ Գլոկուսի աւելի վաւերական յատկութիւնները ոչ մի ելք չէին գտնում, եթէ ոչ այն զեղուն երևակայութեան մէջ, որ չնորհք էր մատակարարում նրա զուարճութիւններին և բանաստեղծութիւն նրա մտածմունքներին։ Հանդստութիւնը նուազ զգուելի էր քան պարապիտների և սարուկների հետ մաքառումը և պէտք կարելի էր կատարելագործել զեղխութիւնը, թէև փառասիրութիւնը չէր կարելի աղնուացնել։ Բայց ինչ որ նրա հոգու մէջ լաւ և փայլուն բան կար, անմիջապէս զարթնեց, երբ նա ծանօթացաւ Իօնէի հետ։ Անա կայսրութիւն, որի տիրապետութիւնը կիսաստուածներին արժանի մի գործ էր. անա մի փառք, որին չոռի ընկերութեան չարաթոյն ծուխը չէր կարող կեղտոտել կամ սևացնել։ Սէրը, ամեն ժամանակ և ամեն դրութեան մէջ կարող է տեղ գտնել իր ոսկեայ սեղանների համար։ Եւ ասա ինձ, եթէ երբէք, նոյն իսկ այն դարերում, որ ամենից չատ նպաստաւոր են եղած փառքի համար, որևէ չաղթանակ կա՞ղ է աւելի փառաւոր և պատուաբեր լինել քան մի աղնիւ սրտի տիրապետումը։

Կարելի է այս զաղափարի ներչնչումից էր, որ Իօնէի ներկայութեամբ նրա մտքերը փայլում էին աւելի պայծառ և նրա հոգին թռում էր աւելի արթուն և տեսանելի։ Եթէ բնական բան էր սիրել Իօնէին, նոյնպէս բնական էր Իօնէի համար՝ վերադարձնել այդ սէրը։ Երիտասարդ, փայլուն, պերճախօս, սիրահարուած և աթե-

նայի, Գլոկուա թուում էր նրան իր հայրենիքի բանաստեղծութեան մարմնացումը։ Նրանք չէին նմանում մի աշխարհի արարածներին, որի տարերքն են՝ մաքառումը և տխրութիւնը, որոնք նմանում էին այնպիսի բաների, որոնց կարելի է հանդիպել բնութեան ոտն օրերում միայն, այնքան վառուռը, այնքան թարմ էր նրանց երիտասարդութիւնը, նրանց գեղեցկութիւնը և նրանց սէրը։ Նրանք տարօրինակ էակներ էին թուում մեր առնինօրեայ կոպիտ աշխարհում. նրանք իրաւամբ պատկանում էին կուռնոսական դարին և կիսաստուածների ու նիմֆաների երազներին։ Կարծես կեանքի բանաստեղծութիւնը հաւաքուում և անուում էր նրանց մէջ և նրանց սրտերի մէջ կենդրոնացած էին Դէլոսի և Յունաստանի արեգակի վերջին ճառագայթները։

Բայց եթէ Իօնէն անկախ էր իր կեանքի ընարութեան մէջ, նրա համեստ հպարտութիւնը նոյնպէս համեմատաբար արթուն էր և դիւրախրտելի։ Եզիպտացին դարձրնել էր իր սուրը նրա բնաւորութեան խոր ուսումնասիրութեան երեսից։ Գլոկուսի կարծեցեալ կոպտութիւնը և անփափուկ վարմունքը խորապէս խայթել էր օրիորդի սիրտը։ Նա այդ բանը մի նախատինք էր համարում իր բնաւորութեան և իր ասպարէզին և ամենից առաջ մի պատիժ իր սիրոյն. առաջին անգամը լինելով նա զգաց թէ ինչքան յանկարծ տեղի էր տուած այդ սիրոյ առջև. նա ամօթից չկրնաց իր թուլութեան վրայ, որի մեծութիւնը նրան սարսափեցնում էր. նա մտածեց թէ այդ թուլութիւնն էր, որ դրդել էր Գլոկուսի արհամարհանքը. նա ինքն իրան ենթարկուած էր զգում ամենից բնաւորութիւնների ամենապատուական անէծքին, այն է խոնարհացման։ Բայց նրա սէրը, կա-

րելի է, ոչ նուազ վիրաւորուած էր քան նրա հպարտութիւնը։ Եթէ մէկ րոպէ նա նախատինքներ էր մըրմնջում Գլոկուսի հասցէին, եթէ մէկ րոպէ նա ուրանում էր, դրեթէ առում էր նրան—միւս րոպէին նա բոլոն արտասուում էր. նրա սիրտը չէր դիմանում իր բնական փափկութեանը, և նա ասում էր իր վշտի ամբողջ դառնութեամբ, «նա արհամարհում է ինձ—նա ինձ չէ սիրում»։

Այն րոպէից, որ եգիպտացին հեռացել էր նրա մօտից, Իօնէն մտել էր իր առանձնարանը. նա իր սենեակից դուրս էր արել իր աղախիններին, և իր ներկայութիւնը զգացել էր այն ամբոխին, որ միշտ շրջապատում էր նրա տան դուռը։ Գլոկուսն էլ արտաքսուած էր միւսների հետ միասին. նա զարմանում էր, բայց չէր կարողանում դուշակել դրա պատճառը։ Նա երբէք չէր կարող վերապրել իր Իօնէին, իր թագուհուն, իր աստուածուհուն, այն կանացի քմահաճոյքը, որից Խոտալիայի սիրային բանաստեղծները այդպէս անդադար դառնում են։ Նա երևակայում էր նրան, նրա անկեղծութեան վեհափառութեան մէջ, վեր այդպիսի արուեստական խաղերից՝ մարդկանց տանջելու համար։ Նրա միտքը անհանգիստ էր, բայց նրա յոյսերը նսեմացած չէին, որովհետև նա արդէն դիտէր, որ ինքը սիրում է և փոխադարձաբար սիրուած է. այլ ևս ինչ բան պէտք էր նրան, որպէս մի Թալիսման երկիւղի դէմ։

Գիշերները, մի ժամանակ երբ փողոցները յուռ էին, և միայն բարձրացած լուսինը կարող էր տեսնել նրա պաշտողութիւնը, նա զազանի գնում էր դէպի իր սրտի տաճարը—Իօնէի տունը *). և իր սէրն էր յայտ-

*) Աթենայում. «Պոպիլի հշմարիտ տաճարը սիրեցեալի տունն է»։

նում իր երկրի գեղեցիկ ձևով։ Նա ծածկում էր նրա տան չէմքը ամենաճոխ պսակներով, որոնց ամեն մի ծաղիկը անույշ սիրոյ մի ամբողջ հատոր էր. և նա անց էր կացնում երկար ամառնային գիշերը լիղիական սրնգի ձայնով, և այնպիսի բանաստեղծութիւններով, որ նա չարադրում էր բոպէի ներշնչման տակ։

Բայց վերի պատահանը չէր բացատրում. ոչ մի ժպիտ չը կար աւելի սուրբ դարձնելու գիշերուայ փայլուն օդը։ Ամեն բան լուռ էր և խաւար։ Նա չըգիտէր թէ արդեօք հաճելի էին իր բանաստեղծութիւնները և իր սիրաբանութիւնները։

Բայց Իօնէն ոչ քնած էր, և ոչ էլ արհամարհում էր լսել։ Այդ փափուկ նօտերը բարձրանում էին մինչև նրա սենեակը. նրանք ամոքում էին նրա վիշտը, նրանք յաղթահարում էին նրան։ Մինչդեռ նա ականջ էր դնում, նա իր սիրականին անդադար ոչ մի բանի չէր հաւատում. բայց երբ այդ ձայները վերջապէս լռում էին, և դալիս էր Գլոկուսի հեռացման քայլերի ձայնը, հմայքը, բեկանում էր և իր հոգու զգայնութեամբ, օրիորդը, այդ փափուկ չողոքորթութեան մէջ գրեթէ տեսնում էր մի նոր նախատինք։

Ես ասացի որ սա ոչնչի չէր ընդունում. բայց այդ օրէնքից կար մէկ բացառութիւն. կար մէկ հոգի, որ մերժման չէր հանդիպում, և մի ծնողի իշխանութիւն էր գործ դնում նրա գործերի և տան վրայ. Արբակն էր այդ բացառիկ անձնաւորութիւնը, որ չէր ենթարկւում ընդհանուր կանոնին։ Նա մտնում էր գնից մի առանձնաշնորհեալ մարդու արտօնութեամբ։ Նա մտնում էր նրա առանձնասենեակը առանց ներողութիւն խնդրելու և այնպիսի մի անդորր ձևով, որ կարծես նրա վայելած

իրաւունքը կատարելապէս համապատասխան էր իրերի բնական ընթացքին։ Զընայելով Իօնէի բնաւորութեան բոլոր անկախութեան Արբակի սիրտը կարողացել էր մի գաղտնի և հզօր իշխանութիւն ձեռք բերել նրա մտքի վրայ։ Իօնէն չէր կարողանում թօթափել այդ լուծը. երբեմն նա ուզում էր այդպէս անել, բայց նա երբէք իր բոլոր ուժով չէր մաքառել այդ բանի դէմ։ Արբակի օձի աչքը թովել էր նրան։ Նա արթնանում էր, նա հրամայում էր նրան իր այն մտքի հմայքով, որ երկար սովորել էր տիրապետելու և ահ ազդելու։ Կատարելապէս անծանօթ լինելով նրա ճշմարիտ բնաւորութեան հետ, և անտեղեակ նրա թաքուն սիրոյ մասին, հելլենուհին տածում էր դէպի նրան այն յարգանքը, որ հանճարը նուիրում է իմաստութեան և առաքինութիւնը՝ արբակեցութեան։ Նա նկատում էր նրան որպէս հնութեան այն հզօր իմաստասէրներից մէկը, որոնք հասած էին իմաստութեան մրատէրներին, հեռու կենալով իրանց ցեղակիցների մոլութիւններից։ Նա նրան չէր նկատում իբրև մի աշխարհային էակ, ինչպէս ինքը, այլ որպէս մի գաղափար մթապատ և սրբազան։ Նա չէր սիրում նրան, բայց վախենում էր նրանից։ Նրա ներկայութիւնը տանելի էր օրիորդին. դա նեմեսացնում էր նրա հոգին նոյն իսկ իր ամենից վայլուն րոպէներում։ Իր ցրտացուցիչ և վեհապանծ երևոյթով Արբակ նմանում էր մի բարձր լերան որ ստուեր է ձգում արևի վրայ։ Բայց Իօնէն երբ և իցէ չէր մտածում վերջ դնել նրա այցելութիւններին։ Նա կրաւորական դեր էր կատարում այն ազդեցութեան ներքոյ, որ ստեղծել էր նրա կրծքի մէջ ոչ թէ սոսկումի զգուանքը, այլ նրա անդորրութիւնը։

Արբակ այժմ վճռել էր թափել իր հնագիտութեան

ամբողջ ճիգը ձեռք բերելու համար այն գանձը, որին այնքան ասպով ցանկանում էր։ Նա ուրախ էր և պարծենում էր նրա եզրօր վրայ տարած իր յաղթութեամբ։ Այն րոպէին երբ Ապէկիդէս ընկաւ յաղթահարուած մեր նախարարած հանդէսի կախարդիչ հեչտասիրութեամբ, Արբակ զգաց որ իր ախրապետումը երիտասարդ քանդակի վրայ հասատատած էր և ապահով։ Նա գիտէր թէ ոչ մի ղոհ չըկայ, որ այնքան կատարելապէս յաղթահարուած լինի, որքան մի երիտասարդ և տաքարիւն մարդ, որ առաջին անգամ մտնում է մարմնական ցանկութիւնների չղթաների տակ։

Երբ լոյսը բացուեց և Ապէկիդէս զարթնեց այն խոր քնից որ հետևել էր նրա զարմացման և հրճուանքի մոտոնորքին, նա խիստ ամօթահար եղաւ և ոսկեայ։ Իր խտակեցութեան և ժուժկալութեան համար սրած սովորները արձագանք տուին նրա ականջների մէջ. արդեօք այսպիսի մի անառալը վտակից չպղեցաւ նրա արքունակեցութեան ծարաւը։ Բայց Արբակ գիտէր բոլոր միջոցները իր յաղթութիւնը ապահովելու։ Չուարճասիրութիւնից նա անմիջապէս առաջնորդեց երիտասարդ քահանային իր խորհրդաւոր գիտութեան մէջ։ Նա մերկացրեց նրա հիացած աչքերի առջև Նեղոսի մասլ փիլիսոփայութեան տարրական գաղանիքները—գաղանիքներ, քաղուած աստղերից և այն վարժեի տարրալուծութիւնից, որ այն օրերում, բանականութիւնը ինքն երևակայութեան երբ արարչագործութիւն էր, կարող էր ընդունուիլ որպէս աստուածային կախարդութեան գիտութիւնը։ Քահանային դեռատի աչքերին նա երևում էր մահկանացուներից բարձր մի էակ, օժտուած գերբնական ձիրքերով։ Այն չնաչխարհիկ տենչը

և անհուն փափագը գիտութեան համար—որ տպաւորութիւնից ի վեր վառ է մնացել քահանայի սրտում—նախ չլացրին, չեղաւ չփոթեցրին և ի վերջոյ կուրացրին նրա աւելի պարզամտեալ դատողութիւնը։ Նա անձնատուր եղաւ այն խարէութեան, որ միևնոյն ժամանակ բաւարարութիւն էր խոստանում մարդկային երկու ամենազօրաւոր կիրքերին, այն է հեչտասիրութեան կիրքը և գիտութեան կիրքը։ Նա չէր ուզում հաւատալ որ այդքան իմաստուն մի մարդ կարող էր սխալուիլ, և այդքան վեհ մի հոգի կարող էր ստորնանալ խաբելու։ Բռնուած մեսոփիզիկայի բարոյականութեան սև ցանցի մէջ՝ նա խեղդում էր իր խղճի ձայնը այն պատճառաբանութիւնով, որով եգիպտացին մոլութիւնը առաքինութիւն էր ձևացնում։ Նրա հպարտութիւնը անզգայաբար չորքորթուած էր զգում այն հանգամանքից, որ Արբակը գիջանել էր իր հետ դասելու նրան, նրան բացատրութիւն համարելու այն օրէնքներից, որոնցով կաշկանդուած էր ոամիկը, և նրան առանձնաշնորհեալ մասնակիցը դարձնելու իր խորհրդաւոր ուսումնասիրութիւնների և իր մենութեան հնարքների։ Օձինթուսի կրօնքի խիստ և մաքուր դասերը քչուեցան նրա յիշողութեան մէջից, նոր կիրքերի այդ հեղեղով։ Եւ եգիպտացին, որ չատ լաւ տեղեկութիւն ունէր այդ ճշմարիտ կրօնքի վարդապետութիւնների մասին և որ չուտով հասկացաւ թէ ինչ ազդեցութիւն էր թողել դա իր աշակերտի մտքի վրայ, ուզեց ջրել, (և ոչ առանց վարպետութեան) այդ ազդեցութիւնը, իր կէս ծաղրածու և կէս լուրջ արտայայտութեամբ։

«Այդ հաւատքը», ասաց նա, «միայն մի փոխ առնուած բանապաղութիւն է մեր հին քահանաների հնարած բազմաթիւ ալլեգորիաներից։ «Նէտաէր», աւելացրեց

նա ցույց տալով մի մագաղաթ, որի վրայ գծուած էին հիէրոգլիփական պատկերներ—և այս հին նկարների մէջ առ քրիստոնէական Երրորդութեան ծագումը։ Այսուհ էլ կան երեք աստուածութիւններ—Ատուածը, Հոգին, և Որդին։ Նկատի որ նրա մարգկային յատկութիւնների նշանը խաչն է *)։ Ուշադրութեան առ նաև Օսիրիսի խորհրդաւոր պատմութիւնը։ Ինչպէս նա մտաւ գերեզմանը, և ինչպէս այնտեղ կատարելով մի մեծ քաւութիւն՝ նա նորից յարութիւն առաւ։ Այս պատմութիւններով մեր նպատակն է պատկերացնել մի ալլեգորիա բնութեան գործողութիւնների և երկնքի մշտնջենական չըրջափոխութեան, բայց չը հասկացուած ալլեգորիան, և նրա մէջի գերակատար սիրերը դիւրահաւատ ազգերին մատակարարել են բազմաթիւ դաւանութիւնների սկիզբը։ Նրանք ճանապարհորդել են մինչև Հնդկաստանի ահագին գաչտերը, նրանք հիւսուած են յունի վերացական մտացնորքների մէջ. նրանք աւելի և աւելի թանձրացած և մարմնացած են հետանալով իրանց հին ծննդավայրի սահմաններից. նրանք սոսկել են մի մարդկային և չօչափելի կերպարանք այս նոր հաւատքի մէջ. և Գալիլիայի հաւատացեալները անդիտակցարար կրկնում են Նեղոսի առաջնորդարանութիւններից մէկը։

Սա վերջին տրամաբանութիւնն էր, որի ներքոյ քահանան կատարելապէս ընկճուեց։ Անհրաժեչտ էր նրա համար, ինչպէս ամեն մարդու, մի որևէ բանի հաւատալ. և նա, առանց երկբայութեան, և ոչ ակամայ, հպատա-

*) Հաւատացեալը եգիպտացու առաջ բերած և զուգադիպական անորոչ նմանութիւններից տարբեր եղրակացութեան կը հանէր։

կուեց Արբակի քարոզած հաւատքին. հաւատք, որին միանում էր այն բոլորը, ինչ որ մարդկային էր կրքերի մէջ—ինչ որ չողոքորթիչ էր անապարծութեան մէջ—ինչ որ հրապուրիչ էր զուարճասիրութեան մէջ, հաստատելու և հաւանելի դարձնելու համար։

Ապացէս դիւրութեամբ ստանալով այս յաղթութիւնը՝ եգիպտացին այժմ կարող էր կատարելապէս նուիրուել մի չատ աւելի սիրելի և չատ աւելի զօրաւոր գործի. և նա, եղբօր հետ ունեցած իր յաջողութեան մէջ, արդէն ողջունում էր այն յաղթութիւնը. որ պիտի տանէր քրոջ վրայ։

Նա կրկին տեսել էր Իօնէին հետևեալ օրը նրա այն այցելութեան, որին մենք հանդիսատես եղանք. այս ինքը մէկ օր այն դէպքից յետոյ երբ նա թուսնաւորել էր աղջկայ միտքը իր հակառակորդի դէմ։ Հետևեալ օրը, և նորից հետևեալ օրը նա այցելեց Իօնէին, և ամեն անդամ նա կատարեալ ճարպկութիւն գործ դրեց մատամբ աւելի խոր փորագրելու նրա մտքի այն վատ տպաւորութիւնը, որ ինքը ներչնչել էր Վլոկուսի դէմ. և մանաւանդ նրան պատրաստելու այն նոր տպաւորութիւնների համար, որ ուզում էր ներչնչել ի նպաստ իւր։ Հազարա Իօնէն զգուչութեամբ թաղցնում էր իր զգացած վիչտը։ Կնոջ պատուասիրութիւնը մի կեղծաւորութիւն ունի, որ կարող է խաբել ամենից սուր միտքը։ Բայց Արբակ ինքն էլ նուազ զգուչաւոր չէր, չը վերադառնալու համար դէպի մի հարց, որը նա քաղաքականութեամբ ստիպուած էր չօչափել որպէս մի վերին ատիճանի աննչան բան։ Նա դիտէր որ չատ վատաբանել մի հակառակորդի՝ նչանակում է բարձրացնել նրա նչանակութիւնը իր սիրուհու առջև. գործելու ամենից խաս-

տուն ձեռն է ոչ չափազանց սահմանելի ցույց տալ դէպի հակառակորդը և ոչ չափազանց սեացնել նրան. ամենից խնամատուն ձեռն է ստորացնել նրան՝ ուշադրութիւն չը դարձնելով նրա վրայ, որպէս թէ դու չես կարող երազել անդամ որ նա կարող է սէրտիլ։ Բո ապահովութիւնը այնքանի մէջ է, որ թագցնես քո հպարտութեան ստացած վէրքը, և աշխատես աննկատելի կերպով երկիւղի ենթարկել քո դատաւորի ինքնասիրութիւնը, այն դատաւորը, որի ձայնը քեզ համար դատավճիռ է։ Այսպէս ամեն ժամանակներում սիրտ լինի այն մարդու քաղաքականութիւնը, որ ծանօթ է գեղեցիկ սեռի սրտի հետ—այս էր և Եղիսաբեթ թագուհու քաղաքականութիւնը։

Նա, ուրեմն, այլ ևս չէր վերադառնում Գլոկուսի խնդրին, նա լիշում էր նրա անունը, բայց ոչ աւելի յաճախ քան Կլոդիուսինը կամ Լիսիդուսինը։ Նա նրանց դասում էր ցած և վաղանցիկ բաների շարքում, որոնք ոչ մի բանով պակաս չէին Թիմեոնիկից, եթէ ոչ անմեղութեամբ և չնորհալիութեամբ։ Երբեմն նա մի թեթև ակնարկ էր անում որևէ նոր պինարբութեան մասին, որի մէջ, նա նրանց բոլորին ներկայացնում էր իրրև ընկերներ. երբեմն նա նրանց օրինակ էր բերում որպէս հակապատկերներ այն վեհ և հոգևոր բնաւորութիւնների, որոնց դասակարգին պատկանում էր ինքը Իօնէն։ Կուրացած Իօնէի հպարտութեամբ և զուրկ նաև իր հպարտութեամբ, նա չէր երազում, որ Իօնէն արդէն սիրում է. բայց նա վախենում էր մի գուցէ նրա մէջ կազմուած լինին այն սկզբնական թրթռուն նախապատրաստութիւնները, որոնք առաջնորդում են դէպի սէր։ Եւ նա, կատաղութիւնից և նախանձից, գաղտնի կրճատում էր իր ատամները երբ մտածում էր իր զօրաւոր հակառակորդի երի-

տասարդութեան, հմայքների, և վայելչութեան վրայ, հակառակորդ, որի վարկը նա ամեն դէպքում ուզում էր վայր ձգել։

Այն օրուայ պատմութիւնից, որով նախորդ գիրքը վերջացաւ, անցել էր չորս օր, երբ Արբակ և Իօնէն դէմ առ դէմ նստած էին։

«Դուք ձեր տանը, քօղարկում էք ձեր երեսը», ասաց եղիսաբեթին, «դա մի զրկանք է այն մարդկանց համար, որոնց դուք պատում էք ձեր բարեհամութեամբ»։

«Բայց Արբակի համար», պատասխանեց Իօնէն, որ իսկապէս քօղարկել էր իր երեսը իր արտասուքից կարմրած աչքերը ծածկելու համար, «Արբակի համար, որ նայում է մտքի խորքը, ինչ նշանակութիւն ունի, որ երեսը ծածկուած է»։

«Ես նայում եմ մտքին», պատասխանեց եղիսաբեթին. «ուրեմն ցոյց տուէք ինձ ձեր դէմքը որպէս դի այնտեղ տեսնեմ այդ»։

«Դուք կնահաճոյ (զալտնա) էք դառնում Պօմպէյի մէջնոլորտում», ասաց Իօնէն, զուարճութեան մի բռնազբօսիկ եղանակով։

«Մի՞թէ կարծում էք, չքնաղ Իօնէ, որ Պօմպէյի մէջ միայն, ես սովորել եմ գնահատել ձեզ»։ Եղիսաբեթու ձայնը դողաց—նա մի բոպէ կանգ առաւ, և ապա շարունակեց։

«Մի սէր կայ, զեղանի հելլենուհի, որ անմիտների և երիտասարդների սէրը չէ—մի սէր կայ որ չէ տեսնում աչքերով, որ չէ լսում ականջներով. այդ սիրոյ մէջ հոգին սիրահարուած է հոգու հետ։ Բո նախնիքների հայրենակիցը, անձատարնակ Պլատոնը, երազում էր այդպիսի մի սիրոյ վրայ—նրա հետևողները աշխատել են օրի-

նակել այդ. բայց դա մի սէր չէ, որ կարողանայ արձագանք գտնել ամբոխի մէջ—դա մի սէր է, որ միայն վեհ և ազնիւ բնաւորութիւնների մէջ կարող է ծնունդ—դա ոչ մի բանով չէ նմանւում կոպիտ տարփանքի համակրութիւններին և կապերին. կնճիռները չեն փախցնում դրան—կերպարանքի ազդեցութիւնը չէ պաղեցնում. դա որոնում է երիտասարդութիւն, բայց երիտասարդութիւնը զգացմունքների թարմութեան մէջ. դա որոնում է գեղեցկութիւն, բայց մաքի և հոգու գեղեցկութիւն, Այս է այն սէրը, ով Իօնէ, որ քեզ արժանի մի զոհաբերութիւն է մի պաղած և խիստ մարդու կողմից։ Դու խորհում ես, որ ես պաղ եմ և խիստ—այս է ուրեմն այն սէրը, որ ես յանդգնում եմ դնել քո խորանի վրայ—դու կարող ես ընդունել այդ առանց չիկնելու։

«Եւ դրա անունն է Բարեկամութիւն», պատասխանեց Իօնէն, նրա պատասխանը անմեղ էր, բայց դա նմանում էր մի մարդու նախատինքին, որ հասկացած լինէր խօսողի նպատակը։

«Բարեկամութիւն», ասաց Արբակ ուժգին չէչտով։ «Ոչ, դա չափազանց յաճախ պղծուած մի բառ է այսպիսի մի սրբազան զգացմունքի անունը լինելու։ Բարեկամութիւն, դա այն չղթան է՝ որ միացնում է մի Գլոկուսի կամ մի Կլոդիուսի զուարճամոլ սրտերը։ Բարեկամութիւն, ոչ դա երկրային մի սէր է, ռամկական սովորութիւնների և զարշ համակրութիւնների մի արտայայտութիւն է։ Այն զգացմունքը, որի մասին ես խօսում եմ, վեհ է առնուած աստղերից *)—դա պարունակում է իր մէջ այն խորհրդաւոր և աննկարագրելի տենչը, որ մենք

*) Պլատոնից։

զգում ենք երբ նայում ենք նրանց—դա ալրում է, բայց դա սրբագործում է—դա նաւթի լամպն է ալաբաստրեայ ամանի մէջ, որ վառւում է անուշահոտ բոլբերով, բայց փայլում է լոկ ամենանուրբ անօթների միջից։ Ո՛չ. այն ինչ Արբակը զգում է Իօնէի համար ոչ սէր է ոչ բարեկամութիւն։ Ոչ մի անուն մի տալ դրան—դա չնայելահիկ է—ինչու՞ ստորնացնել այդ աչխարհային օրինակներով»։

Արբակ առաջին անգամն էր ինչ յանդգնում էր այսպան առաջ երթալ, բայց նա չօչափում էր իր ոտնատակը՝ քայլ առ քայլ. նա դիտէր թէ ինքը խօսում է մի լեզուե, որը այդ ժամանակ օտարոտի էր և անծանօթ, որին չէր կարելի մի որոշ նշանակութիւն տալ, որից նա կարող էր աննկատելի կերպով առաջ երթալ կամ յետ դառնալ նոյն չափով, որ նա քաջալերութիւն կը ստանար և յետ կը մղուէր. թէև այդ լեզուն մեր օրում, կեղծ պլատոնականութիւնների այս դարում, երկդիմի նշանակութիւն չէր կարող ունենալ զգեցկուհիների ականջում։ Իօնէն մի սարսուռ զգաց, թէև ինքն էլ չը դիտէր թէ ինչու. Նրա քոյրը ծածկում էր նրա կերպարանքը, և թագցնում մի արտայայտութիւն, որը յուսահեակ պիտի անէր եղիսաացուն, և պիտի կատաղացնէր նրան, եթէ նա տեսնէր այդ, և իրօք նա երբ և իցէ այդքան անհանգիստ չէր թուել Իօնէին—ամենահամոզիչ ձայնի տէրն և փափուկ ելեկջները, որոնք երբ և իցէ քօղարկած են մի անսուրբ դիտում, աննկերպաչնակ էին հնչում օրիորդի ականջին։ Նրա ամբողջ հոգին դեռ լցուած էր Գլոկուսի պատկերով, և սրևէ մի ուրիշ մարդու սիրաբանական չէչտերը բարկացնում և վշտացնում էին նրան, բայց և այնպէս նա չէր խորհում, որ Արբակի բառերի տակ կայ

որևէ կերպ, ավելի հրաժարվ քան այն պատճառականությունը, որ նրանց արտաքինը նշանակում էր։ Իսնէն մտածում էր, որ նա ճշմարտապես խոստում էր հոգու սիրուց և համակրությունից մասին. բայց միթէ ճիշտ հենց այդ սերը, և հենց այդ համակրությունը չէին կազմում մի մասը այն բանի, որ նա զգում էր Գլոկուսի համար. և միթէ կարելի էր, որ նրա քայլերից զատ ուրիշի քայլերը մերձենային կոլսի սրտի այդ անմատչելի ներքինախորանին։

Փափագելով իսկույն փոխել խօսակցության նիւթը՝ նա պատասխանեց պարզ և անտարբեր ձայնով։ «Ում որ Արբակը պատում է իր յարգանքի զգացումով, բնական է որ նրա գերազանց իմաստությունը այդ զգացմունքին տալ իր մտնելուր երանգները. բնական է որ նրա բարեկամությունը ավելի մաքուր լինի այնպիսի մարդկանց նկատմամբ զգացումից, որոնց զբաղմունքներին և սխալներին նա չէ կիսանում մասնակցել։ Բայց ասա՛ ինձ, Արբակ, դու վերջերս տեսել ես իմ եղբորը։ Քանի օր է որ նա չէ եկել իմ մոտ. և երբ ես վերջին անգամ տեսայ նրան, նրա կացությունը մեծ վիշտ պատճառեց ինձ։ Ես վախենում եմ որ մի դուռ չափազանց չոտպամբ սրած լինի այդ խիստ ընտրությունը, և որ այժմ նա զղջում է իր սրած այդ անդառնալի քայլի վրայ»։

«Միամիտ եղիր, Իսնէ, պատասխանեց եղիպտացին։ «Ճշմարիտ է որ քիչ առաջ մի սխրություն պատել էր նրա ոգին. այնպիսի կասկածներ չէին նրա միտքը, որոնք բնականաբար հալածում են նրա նման հանդուրն բնաւորությունն ունեցող մարդկանց, բնաւորություններ, որոնք միշտ մակընթացությունն և տեղատության մէջ են, որոնք միշտ թրթռում են ոգևորությամբ և ուժասպառության միջև։ Բայց դա, Իսնէ, նա եկաւ ինձ մօտ իր մասնաճյուղների և իր տասպանքի բոլորում. նա դիմից մինչև որ խղճում է նրա վրայ և սիրում է նրան. ես հանդուրժել եմ նրա միտքը—ես փարատել եմ նրա կասկածները. ես առաջնորդել եմ նրան խաղաղությանն ընդդեմ դեպի նրա տաճարի ներսը. և աստուածուհու վհատությունն առջև նրա հոգին գտել է իր հանդստությունը և անդորրությունը։ Մի վախեցար, նա այլ ևս չըպիտի զղջալ. նրանք, որ իրանց լոյսը գնում են Արբակի վրայ, երբէք չեն ապաշխարում, թէկուզ մեկ րոպէ»։

«Դուք ուրախացնում էք ինձ», պատասխանեց Իսնէն»։ Իմ սիրելի եղբայր, նրա բարեբարությունն մէջ ես ինձ երջանիկ եմ զգում»։

Խօսակցությունը լռեց գարձաւ ավելի թեթև նիւթերի վրայ. եղիպտացին իր ճիգը թափում էր հաճելի լինել, նա մինչև անգամ ջիջանում էր զբաղեցնել իր խօսակցուհուն. նա, իր ունեցած ոչնչով գիտությունների ահագին պաշարով կարողանում էր գեղեցկացնել բոլոր իր չօշափած նիւթերը, և լոյս ձգել նրանց վրայ. և Իսնէն, մոռանալով նրա առաջին խօսքերի թողած տհաճելի ազդեցությունը, և չը նայելով իր տրտմությանը՝ տարուեց նրա մտաւոր ոյժերի դիւթիչ հոսանքով։ Նա ավելի ազատություն առաւ իր ձևերի և լեզուի մէջ. և Արբակ, որ սպասում էր մի յարմար պատեհության այժմ չ'ուշացաւ օգուտ քաղել դրանից։

«Դուք երբէք չէք սեսել», ասաց նա, «իմ տանս նեղի կողմը. դա կարող է ձեզ համար հետաքրքիր լինել. ես մի քանի սենեակներ ունիմ, որոնք կարող են բացատրել ձեզ ինչ որ յաճախ դուք խնդրում էք ինձ-

նից նկատեցրել ձեզ համար—այն է մի եգիպտական տան ձևը. ոչ թէ դուք կարող էք տեսնել այս հռոմէական ճարտարապետութեան աղքատիկ և չնչին արտադրութեան մէջ—այն վիթխարի զօրութիւնը, այն ահագին մարածութիւնը, և այն հսկայական հոյակապութիւնը որ տեսնւում էին Թեբէի և Մեմֆիսի նոյն իսկ հասարակ պալատների մէջ. բայց իմ տան մէջ նորից տեղտեղ կայ մի բան, որից մի գաղափար կարող էք կազմել այն հին լուսաւորութեան մասին, որ իր լոյսը տարածեց ամբողջ աշխարհի վրայ։ Նայեցեցէք ուրեմն, ձեր երիտասարդութեան խստակեաց բարեկամին, այս ամառուայ պալծառ իրիկուններից մէկը, և ինձ թոյլ տուէք պարծենալ, որ աքանչելի Իօնէն պատուել է իմ մեայլ տունը իր ներկայութեամբ»։

Իօնէն բոլորովին անտեղեակ այդ տան պղծութիւնների այն վտանգի վերաբեր մասը որ իրան սպասում էր այնտեղ, ընդունեց այդ առաջարկը։ Հետևեալ իրիկունը որոշուեց այդ այցելութեան համար. և եգիպտացին հեռացաւ անդորր կերպարանքով և մի սրտով, որ զբաղուած էր կատաղի և անսուրբ ցնծութեամբ։ Հազիւ նա հեռացել էր, որ մի ուրիշ այցելու թոյլտուութիւն խնդրեց ներա մտնել։ Բայց մենք այժմ պիտի վերադառնանք Գլաւկուսին։

Գլուխ Ը.

Խեղճ Պրիան։—Նոր փոխոխութիւններ Նիդիայի համար։

Առաւօտեան արեգակը փայլում էր այն փոքրիկ և անուշաբոյր պարտիզի վրայ, որ գտնւում էր Աթենացու տան պերիստիլի մէջ։ Նա՝ տխուր և անմտադիր,

ընկողմանած էր իր վիրիզարեումի փափուկ խոտի վրայ. մի թեթև հովանի պաշտպանում էր նրան ամառնային արեգակի կատաղի ճառագայթներից։

Երբ այդ ֆէրիավայել ապարանքը առաջին անգամ պեղուեց, նրա մէջ գտնուեց մի կրկնակի խեցեմորթը, որ այդ տան բնակիչներից մէկն էր եղել *)։ Այդ կենդանին, որ այնքան տարօրինակ մի օղակ է կազմում բնութեան չղթայի մէջ, որին կարծես բնութիւնը զլացել էր կեանքի բոլոր զուարճութիւնները, բացի միայն կեանքի կրաւորական և երազանման զգացումներից, այդ տան հիւրն էր եղել Գլոկուսի գնելուց տարիներ առաջ. այնքան առաջ որ ոչ մի մարդ չէր յիշում նրա սկիզբը և աւանդութիւնը, իրօք, մի անհաւատալի թուական էր նշանակում դրա համար։ Տունը կառուցուել և վերակառուցուել էր—դրա տէրերը փոխոխուել և անցել էին—սերունդներ ծնուել և մեռել էին—և դեռ կրիան քարշ էր տալիս իր հզգ և անհամակիր գոյութիւնը։ Այն երկրաչարժը, որ տասնուվեց տարի առաջ կործանել էր այդ քաղաքի հասարակաց չինութիւնների մեծ մասը, և ցրիւ էր տուել երկիւղահար բնակիչներին, սարսափելի կերպով ցնցել և կործանել էր Գլոկուսի արդի տունը։ Դրա տէրերը մի քանի օր ոտք չը դրին այդ տան մէջ. երբ վերադարձան նրանք հեռացրին աւերակների բեկորները պարտիզի միջից և կրիային դատն բոլորովին անվնաս և անգիտակից դէպի իր չըր-

*) Ես չը գիտեմ թէ այդ խեցեմորթը պահուած է թէ ոչ (յոյս ունիմ, որ պահուած է) բայց մի կրկնակի խեցեմորթ գըտնուեց այն տան մէջ, որը այս գրքում յատկացուած է Գլոկուսին։

ջապատող փլատակները։ Նա կարծես մի կախարդած կեանք էր կրում իր դանդաղաշարժ արիւնի և անհնատելի չարժումների մէջ. բայց նա այնքան ծոյլ չէր որքան թուում էր. նա կատարում էր մի կանոնաւոր և միակերպ չրջան. քայլ առ քայլ նա պտտում էր իր վոքրիկ պետութեան չուրջը, ամիսների ընթացքում վերջացնելով ամեն մի չրջանը։ Մի անհանգիստ ձանապարհորդ էր այդ կրնան—համբերութեամբ և նեղութեամբ նա կատարում էր այդ ինքնակամ ճանապարհորդութիւնները, ոչ մի հեռաբրքրութիւն չը ղգալով դէպի իր չրջակայ առարկաները. նա մի փիլիսոփայ էր կեղրոնացած ինքն իր մէջ։ Մի ինչ որ վեհ բան ունէր նրա մենաւոր նահանգութիւնը։ Արևը, որի մէջ պատկում էր, չրերը որ ամեն օր թափւում էին նրա վրայ, օդը, որ նա չնչում էր անզգայաբար, կազմում էին նրա միակ և անսպառելի զեղուութիւնները։ Այդ սքանչելի օդում, եղանակի մեղմ փոփոխութիւնները չէին ազդում նրա վրայ։ Նա ծածկւում էր իր պատեանի մէջ ինչպես տուրբը՝ իր աստուածպաշտութեան, վիճականը՝ իր իմաստութեան, և սիրահարը՝ իր լոյսի մէջ։

Ժամանակի ցնցումները և փոփոխութիւնները ոչ մի կերպով չէին ազդում նրա վրայ. նա ինքը օրինակն է ժամանակի, դանդաղ կանոնաւոր, մշանջենաւոր. նա անտեղեակ էր այն կրքերի մասին, որ յուզում էին նրա չորս կողմը, նա անտեղեակ էր մարդկութիւնը մաշող հազար ու մեկ պատճառների մասին։ Խեղճ կրնայ, ոչ մի բան, նուազ ուժեղ քան մի հրաբղխի պայթիւնը, կամ ձեղքուած երկրի ցնցումները չէին կարող հանդցնել նրա կեանքից պղպջուն կայծը։ Անողոք մահը, որ չէր խնայում փառք և պեղեցկութիւն, անուշադիր կերպով

անցնում էր մի բանի մօտից, որի համար մահը այնքան անծանօթ մի փոփոխութիւն էր։

Այս անատուն համար պիտոիրա և աչխոյժ չրնը ղգում էր հակապատակների բոլոր զարմանքն ու սէրը։ Նա կարող էր ամբողջ ժամեր անցկացնել նկատելով նրա սողոսն առաջընթացութիւնը, և առնելով բարոյական դասեր նրա կազմակերպութիւնից։ Նա արհամարհում էր նրան իր ուրախութեան մէջ, բայց նախանձում էր նրա վրայ իր տրամութեան մէջ։

Ընկոզմանած խոտի վրայ՝ աթենացին նայում էր կրիայի մեղմ չարժմանը՝ մրնչդեռ դա անչարժ էր երեւում. նա սկսեց մրմնջալ.

«Արծիւը իր մագիլներից վայր ձգեց մի քար, քո պատեանը կոտրելու համար, և քարը իչրեց մի բանաստեղծի գլուխը։ Այս է Բախի ալլեգորիան։ Դանդաղ արարած։ Դու ունեցել ես մի հայր և մի մայր. կարելի է զարեր առաջ դու ունեցել ես և մի ընկեր։ Արդեօք քո ծնողները սիրում էին. արդեօք դու սիրում էիր։ Արդեօք քո չամբաչարժ արիւնը ունէր ցնծութեամբ էր չրջում, երբ դու սողում էիր քո կենսակցուհու կողքին։ Դու ընդունակ էիր սիրելու։ Դու ախրում էիր երբ նա հեռանում էր քեզանից։ Դու ղգում էիր երբ նա ներկայ էր։ Ինչ չէի տալ իմանալու քո զգայուն ուշքի պատմութիւնը—նայելու քո չնչին փափաղների մեքենայութիւնների վրայ—նկատելու թէ ինչ մազաչափ տարբերութիւններ բաժանում են քո վիչաը քո ուրախութիւնից։ Այնուամենայնիւ կարծում եմ, որ դու կը ղգայիր Իօնէի ներկայութիւնը։ Դու կըղգայիր նրա մերձենալը որպէս մի ուժի երջանիկ օդի հոսանք—որպէս մի ուժի ուրախ արևի ծագումը։ Ես նախանձում

եմ քեզ այժմ, որովհետև դու չըզիտես թէ նա անհնարկալ է. և ես, երանի թէ ես քեզ նման լինէի. այն ժամերում միայն, երբ նրան չէի տեսնում՝ Ի՛նչ կասկածներ, ինչ նախազգացումներ տանջում են իմ միտքը։ Ինչո՞ւ նա չէ ընդունում ինձ։ Անցան օրեր և ես չեմ լսել նրա ձայնը. առաջին անգամը լինելով՝ կեանքը անհամացել է ինձ համար։ Ես նման եմ մի մարդու, որ միայնակ է թողուած մի խնջոյքի մէջ, ուր լոյսերը հանգել են և ծաղիկները թառամել։ Ա՛հ, Իօնէ, կարող ես երազել թէ ես ինչպէս եմ պաշտում քեզ»։

Այս սիրահարական մտազմայլումները խանգարուեցան և Նիպհան նորս մտաւ։ Նա գալիս էր լուռ և դողդոջ քայլերով մարմարեայ սարվինուամի միջից։ Նա անցաւ պորտիկօից և կանգ առաւ այն ծաղիկների մօտ, որ բուսել էին պարտիզի եզերքին։ Նրա ջրի ամանը իր ձեռքումն էր, և նա ջուրը չաղ էր տալիս ծարաւ ծաղիկների վրայ, որոնք կարծես սեւլի զուարթանում էին նրա մօտենալովը։ Նա թեքուեց ծծելու նրանց անուշ բոյրը։ Նա կանգ դադաւ և չոյեց նրանց։ Նա չօչափեց նրանց ծնօտները տեսնելու թէ որևէ չորացած տերև կամ որևէ սողուն միջատ վտանգ է սպառնում նրանց գեղեցկութեանը։ Եւ մինչդեռ նա անցնում էր ծաղկից ծաղիկ, իր անձկալից զեւսաի երեսով և չնորհալի շարժումներով, չէր կարելի նրանից մի սեւլի յարմար առիթ երեւակալել պարտիզի աստուածուհու համար։

«Նիպհա, զաւակ», ասաց Գլոկուս։

Յոյնի ձայնը լսելով նա անմիջապէս կանգ առաւ, ուշադիր, չիմնած, անշունչ. շրթունքները բաժանուած, երեսը դէպի վեր դարձրած գտնելու նրա ձայնի ուղղութիւնը՝ նա ցած դրեց ջրի դոյլը և աճապարեց նրա մօտ

և զարմանալի էր տեսնել ինչպէս առանց սխալուելու նա չարունակում էր իր մեծապատ անցքը ծաղիկների միջօցով և ամենից մօտիկ ճանապարհով գալիս էր իր նոր սիրոջ մօտ։

«Նիպհա», ասաց Գլոկուս, քնքշութեամբ չոլելով նրա երկար և գեղեցիկ մազերը, «այժմ երեք օր է որ դու գտնուում ես իմ օջախս աստուածների պաշտպանութեան տակ։ Արդեօք նրանք ժպտացե՞լ են քո վրայ։ Դու երջանիկ ես»։

«Ա՛հ, այնքան երջանիկ», հառաչեց գերուհին։

«Եւ այժմ», չարունակեց Գլոկուս, «որ դու մի քիչ մոռացել ես քո նախկին կացութեան տանելի յիշատակները,— և այժմ որ դու ունես քո նուրբ կազմուածքին յարմար զգեստներ (ձեռք տալով նրա ասեղնագործ հագուստին)—և այժմ, քաղցրիկ աղջիկս, որ դու սովորել ես մի երջանկութեան, որի մէջ աստուածները թող քեզ յաւիտեան պահեն, ես ուզում եմ քեզանից մի մեծ բարիք խնդրել։

«Ո՛հ, ինչ կարող եմ անել քեզ համար», ասաց Նիպհան կծկելով իր ձեռքերը։

«Լսիր», ասաց Գլոկուս, «և չընդհատելով քո մանուկ հասակին՝ դու պիտի լինես իմ գազանապահ մտերմուհին։ Դու երբ և իցէ լսել ես Իօնէի անունը»։

Այդ աղջիկը, չունչը կտրուած մարդու նման, լեռնանը բացաւ օդ ծծելու, և գունատուելով այն արձանների մեկի նման, որ փայլում էր նրանց վրայ պերիստիլից՝ մի ձիպ գործեց և մի բոպէ լռութիւնից յետոյ պատասխանեց.

«Այո, լսել եմ որ նա նազելիտան է և գեղեցիկ»։

«Գեղեցիկ. նրա գեղեցկութիւնը այնպիսի մի բան

էր, որ ցերեկը նրա առջև ամաչում էր։ Նապոլիտան ձին նա լոկ է ծաղումով. Յունաստանը միայն կարող է այդպիսի կերպարանքներ արտադրել։ Նիղիա, ես սիրում եմ նրան»։

«Ես մտածում էի, որ այդպես կը լինի», պատասխանեց Նիղիան, հանդարտ ձայնով։

«Ես սիրում եմ, և դու պէտք է նրան տանս այդ քանը։ Ես ուզում եմ քեզ ուղարկել նրա մօտ։ Երջանիկ Նիղիա, դու կերթաս նրա մեհեանը — դու կըմտնես նրա ձայնի երաժշտութիւնը — դու կը զգուանաս նրա երջանկացուցիչ ներկայութեան արևածիծաղ օդի մէջ»։

«Ի՞նչ, ինչ, մի՞թէ ուզում ես քո մօտից հեռացնել ինձ։

«Քեզ ուղարկում եմ Իօնէի մօտ», պատասխանեց Գլոկուս, մի ձայնով որ կարծես ուզում էր ասել, «էլ ինչ ես ուզում պրանից լաւ»։

Նիղիան սկսեց արտասուել։

Գլոկուս թարթրանալով նրան մօտ քաշեց մի եղբօր չափիչ գութդութանքով։

«Աղջիկս, Նիղիա, դու լալիս ես որովհետև չըգիտես ինչ մեծ երջանկութիւն եմ պատրաստում քեզ։ Նա մեղմ է, գթած է և փափկասիրտ ինչպէս գարնան զեփիւռները։ Նա մի քոյր կը լինի քեզ համար — նա կը գնահատէ քո հրապուրիչ ատաղձները — նա կը սիրէ քո պարզ չնորհքները այնպէս, ինչպէս ոչոք չէ կարող սիրել, որովհետև դրանք նմանւում են նրա չնորհքներին։ Նորից լացում ես, սիրելի ախմախիկս։ Ես չեմ թոյլատրում քեզ վրայ, անուշիկս։ Չես ուզում այս ծառայութիւնն անել ինձ։

«Լաւ, եթէ ես կարող եմ ծառայել քեզ, հրամայիր։ Ես այլ ես լաց չեմ լինում — ես հանդարտ եմ»։

«Ա՛յ, իմ սիրելի Նիղիա», չարաճճիկ Գլոկուս, համբուրելով նրա ձեռքը։ «Գնա ուրեմն նրա մօտ. եթէ նա սիրով չըվարուի քեզ հետ, եթէ տեսնես, որ ես խաբել եմ քեզ, երբ որ կուզես վերադարձիր։ Ես քեզ չեմ տալիս ուրիշի. ես միայն փոխ եմ տալիս։ Իմ տունս միշտ քո ապաստանարանը կը լինի, իմ քաղցրիկս։ Ա՛հ, երանի թէ դա կարողանար ապաստան լինել բոլոր վշտակիրներին և բարեկամներից զրկուածներին։ Բայց եթէ իմ սիրտը ճշմարիտ է խօսում, դու չուտով կեան կը գաս ինձ մօտ, աղջիկս։ Իմ և Իօնէի տունը մէկ կը լինի, և դու կը մնաս մեզ մօտ»։

Մի սարսուռ անցաւ կոյր աղջկայ նուրբ կազմուածքի միջով, բայց նա այլ ես լաց չէր լինում, նա կրում էր իր ցաւը առանց արտնջալու։

«Գնա, ուրեմն իմ Նիղիա, Իօնէի տունը, ճանապարհը քեզ ցոյց կը տան։ Ա՛ռ քո հետ ամենագեղեցիկ ծաղիկները, որ կարող ես քաղել. ես քեզ կը տամ մի ծաղկեման. դու նրանից ներողութիւն կը խնդրես դրա անարժանութեան համար։ Դու կառնես նաև քո հետ այն սրինգը, որ երէկ տուի քեզ և որով դու այնքան լաւ կերան զարմացնել դիւթիչ ոգին։ Դու կը տաս նրան այս նամակը, որի մէջ հարիւր ճիպ թափելուց յետոյ, իմ մտածութիւններից մի քանիսը հազիւ կարողացել եմ նկարագրել։ Թող քո ականջդ խլէ նրա ձայնի ամեն մի չեշտը, ամեն մի ելևէջը, և երբ նորից հանդիպենք, ինձ ասա, թէ արդեօք նրա երաժշտութիւնը սըրտաբեկիչ է ինձ համար թէ քաջալերիչ։ Նիղիա, այժմ մի քանի օր է որ նա չէ ընդունել ինձ. անպատճառ մի

դաղանիք կայ նրա այս վարմունքի մէջ։ Կասկածները և երկիւղները ինձ ժամ է խենթացնում. հասկացիր ինչ է պատճառը այս խստասրտութեան, քո միտքը կարուկ է և իմ համար ունեցած սէրդ տասն անգամ աւելի սրտաթիւն կը տայ նրան. որքան կարող ես յաճախ խօսիր իմ մասին. թող իմ անունը միշտ քո շրթունքների վրայ լինի. տա սփոփութիւն նրան իմ սէրը քան յայտնիր. տես արդեօք հառաչում է երբ դու խօսում ես, արդեօք պատասխանում է քեզ, տես յանդիմանում է քեզ, և եթէ յանդիմանում է՝ ինչ չեչտերով. իմ բարեկամս եղիր, իմ դաժան փաստաբանն եղիր. և ահ, ինչ ահագին առաւելութեամբ լեռ վճարած կը լինես ինձ այն չնչին ծառայութիւնը, որ ես արեցի քեզ համար։ Դու հասկանում ես, Նիպիա. դու դեռ երեխայ ես, արդեօք մի քանի ամսոյ, որ քեզ համար դժուար լինի հասկանալ։

«Ո՛չ»։

«Եւ դու կանես ինձ այդ ծառայութիւնը։

«Այո»։

«Ծաղիկները հաւաքելուց յետոյ եկ ինձ մօտ Լիդալի անտառը, և ես քեզ կը տամ ծաղկամանը։ Այլ ևս ոխերիմ չես դեղեցիկիս»։

«Գլոկուա, ես մի դերի եմ. ինչ գործ ունեմ ոխերութեան կամ ուրախութեան հետ»։

«Այդպէս։ Ոչ, Նիպիա, ազատ եղիր։ Ես տալիս եմ քեզ քո ազատութիւնը. ուզածիդ պէս վայելիր դրան, և ներիր ինձ եթէ ես յոյս դրի քո փափագիդ վրայ ինձ ծառայութիւն անելու»։

«Դուք վշտացաք։ Ոհ, ես չէի ուզեր վշտացնել այն բանի համար, որ ոչ մի ազատութիւն չէ կարող տալ ինձ, Գլոկուա։ Իմ խնամակալս, իմ փրկիչս, իմ պաշտպանս,

ներիր խեղճ կույր աղջկան։ Նա չէ ախորժում նոյն իսկ հեռանալով քեզանից, եթէ այդպէս անելով նա կարող է երջանկացնել քեզ»։

«Ատուածները օրհնեն քո երախտագէտ սիրտը», ասաց Գլոկուա վերին աստիճանի յուզուած, և անտեղեակ իր բորբոքած բոցերին նա կրկին համբուրեց նրա ճակատը»։

«Դու ներում ես ինձ», ասաց նա, «և այլ ևս չես խօսել ազատութեան մասին. իմ երջանկութիւնն այն է, որ քո գերին լինիմ, դու խոստացար, որ ինձ ուրիշի չես տալ...»։

«Խոստացայ»։

«Լաւ, ուրեմն ես հիմայ կը քաղեմ ծաղիկները։

«Նիպիան լուռ թեամբ առաւ Գլոկուայի ձեռքից թանկագին և զոհարաժար ծաղկամանը, որի մէջ ծաղիկները մրցում էին միմիանց հետ գոյնով և անուշահոտութեամբ. յամաք աչքերով նա ատացաւ և վերջին հրահանգները։ Նա մի վայրկեան կանգ առաւ՝ երբ Գլոկուայի ձայնը դադարեց—նա չվստահացաւ իր վրայ պատասխան տալու—նա բռնեց նրա ձեռքը, դարձրեց շրթունքներին, յետ ձգեց իր քօղը և դուրս գնաց նրա ներկայութիւնից։ Նա նորից կանգ առաւ, երբ հասաւ դրան, նա իր ձեռքերը ձգեց դէպի չէմքը և մրմնջաց.

«Ես վայելեցի երեք երջանիկ օրեր—օրեր անպատմելի բերկրութեան այն ժամից՝ երբ ներս մտայ այս տունը, ով օրհնեալ չեմքը, թող խաղաղութիւնը իր թեւերը յաւիտեան տարածէ քո վրայ, երբ ես գնացած կը լինիմ։ Եւ այժմ իմ սիրտս պատռւում է քեզանից, և նրա արտասուած մենակ ձայնը հրամայում է ինձ—մեռիր»։

Գլուխ Զ.

Երջանիկ դեղեցկուհին և կույր գերուհին։

Մի գերի մատաւ Իօնէի սենեակը և յայտնեց, որ Գլոկուսի կողմից ուղարկուած մի պատգամաւոր ազատութիւն էր խնդրում նրա մասին։

Իօնէն մի րոպէ վարանեց։

«Կույր է այդ պատգամաւորը», ասաց գերին. «նա քեզանից զատ ոչոքի չէ ուզում յայտնել իր պատգամը»։

Նուաստ է այն սիրտը, որ չէ յարգում տառապանքը։ Հէնց որ լսեց թէ պատգամաւորը կույր է, Իօնէի համար անկարելի եղաւ մի ցուրտ պատասխան տալ։ Գլոկուսն ընտրել էր մի պատգամաւոր, որ իսկապէս արքայան էր—մի պատգամաւոր, որին չէր կարելի մերժել։

«Ի՞նչ է ուզում ինձանից։ Ի՞նչ պատգամ է ուղարկել», և Իօնէի սիրտը սկսեց աւելի ամուր բաբախել։ Գրան առջեւ վարագոյրը յետ էր քաշուած. փակուկ և անձայն քայլեր դալիս էին մարմարիոնին. և Նիպհան, որին առաջնորդում էր ծառաներից մէկը, ներս մտաւ իր թանկագին ընծայով։

Նա մի րոպէ լուռ կանգնեց, կարծես ականջ էր դնում մի որեւէ ձայն լսելու՝ որպէս զի իր քայլերն ուղղէ դէպի Իօնէն։

«Արդեօք ազնիւ Իօնէն, ասաց նա փափուկ և ցած ձայնով, «կը դիջանէ լսելու, որպէս զի ես խնդրամ թէ դէպի ո՛ր կողմ ուղղեմ իմ մթամած քայլերը, և նրա ոտքերի առջեւ դնեմ իմ նուէրը։

«Ջինուոր մանկամարդ, ասաց զգածուած Իօնէն, ամբիծ եղանակով, նեղութիւն մի կրիր անցնելու այս

դիւրաւոր յատակի վրայից, և նա նշան արեց աղախիններից առնելու ծաղկամանը։

«Քեզանից զատ ես ոչոքի չեմ ասլ ծաղիկները», պատասխանեց Նիպհան, և իր ականջները առաջնորդած՝ նա կամաց քայլեց դէպի այն տեղն, ուր նստած էր Իօնէն, և չոքելով նրա առջեւ՝ ներկայացրեց նրան ծաղկամանը։

Իօնէն առաւ այդ նրա ձեռքից և դրեց սեղանի վրայ իր կողքին։ Ձեռով կամաց բարձրացնելով Նիպհային՝ ուզեց նստացնել օթոցի վրայ, բայց աղջիկը համեստութեամբ մերժեց։

«Ես դեռ չեմ վերջացրել իմ պատգամը», ասաց նա, և իր ծոցից հանեց Գլոկուսի նամակը։ «Այս նամակը կարելի է կը բացատրէ ձեզ թէ ինչու՞ ինձ ուղարկողը, Իօնէին այսպիսի մի անարժան պատգամաւոր է ընտրել»։

Իօնէն առաւ նամակը մի ձեռքով, որի դողդոջալը Նիպհան զգաց, և զգալով՝ հառաչեց։ Մնացած թևերով և ծառած գլխով նա կանգնած էր Իօնէի վեր և հպարտ պատկերի առջեւ. ինքը իր խոնարհ դիրքով ոչ նուազ հպարտ քան նա։ Իօնէն չարժեց իր ձեռքը և սպասուհիները հեռացան. նա նորից նայեց մանուկ գերուհու երեսին, զարմանքով և դեղեցիկ զթասրտութեամբ. լսելու մի քիչ յետ քաշուելով նրանից՝ նա բացաւ և կարդաց հետևեալ նամակը.

«Գլոկուսից առ Իօնէն, աւելի քան նա լանդգնում է ասել։ Իօնէն հիւանդ է, քո գերիներն ինձ ասում են «ոչ», և դա ինձ համար մխիթարութիւն է։ Գլոկուսը տանձելի է եղել Իօնէին, այդ հարցը ներողութիւն չեմ կարող հարցնել։ Հինգ օր է որ ես արտաքսուած եմ քո ներկայութիւնից։ Արևը փայլել է—գէթ ինձ համար չէ

ժպտել։ Իմ արևը և իմ երկինքը Իօնէն է։ Արդեօք բնա-
կացնում եմ քեզ։ Արդեօք չափազանց յանդուգն եմ։ Ար-
դեօք իմ նամակիս մէջ ասում եմ այն ինչ որ լեզուս
վարանել է արտայայտելու։ Աւաղ, քո բացակայութիւնն
ժամանակ է որ ես ամենից չատ ղգում եմ այն հմայքը,
որով դու յաղթահարել ես ինձ։ Եւ բացակայութիւնը,
որ ինձ զրկում է ուրախութիւնից, տալիս է ինձ քա-
ջութիւն։ Դու չես ուզում տեսնել ինձ. դու նաև ար-
տաքսել ես քո ներկայութիւնից հասարակ չողոքորթ-
ների այն երամը, որ շրջապատում էր քեզ։ Արդեօք դու
կարծդ ես չը զանազանել ինձ նրանցից։ Անկարելի է։
Դու չատ լաւ գիտես որ ես նրանցից չեմ—որ նրանց
կաւը իմ կաւից չէ։ Եթէ նոյն իսկ ամենաչնչին հողից
լինէի ես, վարդի անուշահոտութիւնը թափանցել է իմ
մէջ, և քո բնութեան ոգին անցել է իմ մէջ ինձ անու-
շահոտ դարձնելու, և նեղչնչելու։ Արդեօք վատաբանել
են ինձ քո մօտ, ո՛վ Իօնէ։ Դու նրանց չես հաւատար։
Եթէ դէլֆական դաբիրն ինքը ինձ ասելու լիներ թէ
դու անարժան ես, ես չը պիտի հաւատայի. և ես նուազ
դժուարահաւատ եմ քեզանից։ Ես մտածում եմ մեր վեր-
ջին տեսակցութեան վրայ—այն երգի վրայ, որ ես եր-
գեցի քեզ համար—այն նայուածքի վրայ, որ դու ձօնե-
ցիր ինձ դրա փոխանակ։ Թագրուհ ինչպէս կարող ես,
Իօնէ, բայց համակրութեան մի կապ կայ մեր մէջ, և մեր
աչքերը խոստովանեցին այդ բանը, թէև մեր շրթունք-
ները լուռ էին։ Չիջանիր տեսնել ինձ, լսել ինձ, և դրա-
նից յետոյ վռնաիր ինձ, եթէ ուզում ես։ Ես չէի ուզում
այսքան չուտով ասել «սիրում եմ»։ Բայց այդ բառը վազում
է դէպի իմ սիրտը—և այնտեղից ուզում չուզում դուրս է
գալիս։ Ընդունիր, ուրեմն իմ յարգանքը և իմ ուխտերը։

Մենք առաջին անգամ հանդիպեցինք Պալլասի խորանի
մօտ. ինչ կը լինի եթէ նորից հանդիպենք մի աւելի
փափուկ և աւելի հին սեղանի առջև։

«Հրաշագեղ և պաշտելի Իօնէ։ Եթէ իմ վառ երիտա-
սարդութիւնը և իմ աթենական արիւնը ճանապարհից
չեղել և մոլորեցրել են ինձ, նրանք սովորացրել են իմ
թափառական կեանքիս գնահատել այն հանդստութիւնը,
այն նաւահանգիստը, որին նա հասել է։ Ես կախում եմ
իմ թաց զգեստները ծովի՝ աստուծոյ չիրիմի վրայ։ Ես
աղաստւել եմ նաւաբեկութիւնից։ Ես գտել եմ ՔԵՋ։
Իօնէ, պիջանիր տեսնել ինձ. դու բարեսիրտ ես դէպի օ-
տարները, արդեօք դու նուազ բարեսիրտ կը գտնուիս
դէպի քո երկրացիները։ Ես սպասում եմ քո պատաս-
խանին։ Ընդունիր իմ ուղարկած ծաղիկները—նրանց
քաղցրիկ հունչը աւելի պերճախօս է քան բառերը.
նրանք առնում են արևից այն բոլորը, որ նրանք հետ են
դարձնում—նրանք օրինակն են այն սիրոյ, որ ստա-
նում է տառնապատիկ վճար—օրինակն այն սրտի,
որ ըմպել է քո ճառագայթները, և քեզ է պարտական
այն դանձերի հնութը, որ դարձնում է քո ժպտին։ Ես
ուղարկում եմ քեզ մօտ մէկին, որին դու կ՚ընդունես
իր խաթեր համար, եթէ ոչ իմ։ Նա էլ, մեր նման մի
օտարական է. նրա հայրերի աճիւնները գտնում են մի
աւելի պայծառ երկնքի տակ. բայց աւելի տարաբախտ
քան մենք, նա կոյր է և զրկի։ Խնդամ Նիդիա, ես ու-
զում եմ, որքան կարելի է, ամոքել բնութեան անդթու-
թիւնը դէպի նա, քեզանից թոյլտւութիւն խնդրելով
նրան քեզ մօտ ուղարկելու։ Նա աղնիւ է, մեղմ և սրա-
միտ։ Նա չատ հմուտ է երաժշտութեան և իր երգեցողու-
թեան մէջ. և ծաղիկների համար նա մի կատարեալ

Գլուխ է (Գլօբա)։ Նա մտածում է, Իօնէ, որ դու կը սիրես իրան. եթէ չը սիրես, կեա ուղարկիր ինձ մօտ։

«Մէկ բառ էլ ու թոյլ տուր ինձ յանդուգն լինել, Իօնէ։ Ինչու այդքան բարձր դաղափար ունես այն մասլ եղիպատցու մասին. նա չէ նմանում մի ազնիւ մարդու։ Մենք յոյներս սովորում ենք մարդկութիւնը մեր օրօրոցից. մենք նուազ պիտնական չենք, որովհետև չենք առնում մի մտախոհապատ կերպարանք, մեր չրթունքները ժպտում են բայց մեր աչքերը լուրջ են—նրանք նկատում են—նրանք լիշատակում են—նրանք ուսումնասիրում են։ Աբրակ այն մարդկանցից չէ, որին կարելի լինի վատահել ամենայն դիւրահաւատութեամբ, որպէսզի նա է վատաբանել ինձ քեզ մօտ։ Ես այդպէս եմ մտածում, որովհետև երբ ես հեռացայ նա մնաց քո մօտ. դու աւելար ինչպէս իմ ներկայութիւնը խանգարում էր նրան. այն ժամանակուանից դու ինձ թոյլ չես տուել մտնել քո տունը։ Մի հաւատալ ինչ բանի, որ նա կարող է ասել իմ դէմ. և եթէ հաւատում ես, ինձ իսկոյն, ասա, որովհետև այդ մէկը Իօնէն պարտական է Գլոկուսին։ Մնաս բարև, այդ նամակը պիտի դպչէ քո աչքերին և աւելի օրհնեալ են քան այն էակը, որ նրանց հեղինակն է։ Մէկ անգամ եւս մնաս բարև»։

Իօնէին այնպէս թուաց նամակը կարդալուց յետոյ, որ մի մեզ հեռացաւ իր աչքերից։ Ի՞նչ էր եղած Գլոկուսի կարծեցեալ յանցանքը,—որ նա իսրատ չէր սիրել։ Եւ այժմ նա պարզութեամբ և ոչ երկիմի բառերով խոստանում էր այդ սէրը։ Այդ րոպէից նա կատարելապէս վերստացաւ իր վարկը։ Այդ նամակի առնն մի սրտաչարժ բառը կարդալիս, նամակ, որ այնքան լի էր ոսոխանակական և վատահող սիրով, նրա սիրտը յանդիմանում էր

նրան։ Եւ նա կասկածել էր նրա հաւատարմութեան և նա հաւատացել էր ուրիշին, և նա արդեօք չէր զրկել նրան յանցաւորի իրաւունքը, այն է՝ իմանալ իր մեղքը, և ինքն իրան պաշտպանել։ Արտասուքի չիթերը սկսեցին ցած գլորուել նրա թշերից—նա համբուրեց նամակը, և դրեց իր ծոցը, և պատկերացրեց Նիդիային, որ կանգնած էր նոյն տեղը և նոյն կացութեան մէջ.

«Նասիր, պատկա», ասաց նա, մինչդեռ ես կը գրեմ այս նամակի պատասխանը»։

«Ուրեմն դու կը պատասխանես դրան», ասաց Նիդիան պատասխանեց։ «Լաւ, իմ հետ եկող գերին կը տանէ քո պատասխանը»։

«Որովհետև դու», ասաց Իօնէ, «կը մնաս ինձ մօտ—հաւատացնում եմ քեզ, որ քո ծառայութիւնը ծանր չի լինի»։

Նիդիան խոնարհեց իր գլուխը։

«Ի՞նչ է քո անունը, չքնաղ աղջիկ»։

«Ինձ կոչում են Նիդիա»։

«Քո հայրենիքը»։

«Ողիմպոսի երկիրը—Թեսսալիա»։

«Դու ինձ համար մի բարեկամուհի կը լինես», ասաց Իօնէն, չ՚ելով նրան, «ինչպէս արդէն կէս հայրենակից ես։ Իսկ ու այժմ մի կանգնիր, խնդրեմ այդ պաղ և ապակենման մարմարիոնի վրայ։—Ահա, հիմա որ նստեցիր ես կարող եմ մի բոպէ հեռանալ քո մօտից։

«Իօնէից Գլոկուսին աղջոյն։—Ե՛կ ինձ մօտ, Գլոկուս», գրում էր Իօնէն, «ե՛կ ինձ մօտ վաղը։ Իմ վարմունքը գէպի քեզ կարող է անարդար եղած լինել, բայց դէթ ես քեզ կը յայտնեմ այն պատճառը, որով դու ամբաստանուել ես։ Այսուհետև մի վախենալ եղիպատցուց—ոչ

ոքից մի վախենալ։ Դու ասում ես, որ չափազանց շատ բան ես լայտնել քո նամակում—ասաղ, այս չասվածքը գրուած մի քանի բառի մէջ ես էլ նոյն բանն եմ արել։ Մնաս բարև»։

Երբ որ Իօնէն վերադարձաւ նամակը ձեռքին, որը ինքը չէր յանդգնում կարդալ գրելուց յետոյ (ահ, սիրոյ սովորական անխոհեմութիւնը և սովորական երկչոտութիւնը)—Նիպիան վեր կացաւ իր նստած տեղից։

«Դուք գրեցիք Գլոկուսի պատասխանը։

«Գրեցի»։

«Եւ նա չնորհակալ կը լինի այն պատգամաւորից, որ այդ նամակը յանձնէ նրան»։

Իօնէն մոռացաւ որ իր ընկերը կոյր էր. նա չիկնեց ճակատից մինչև վիզը և պատասխան չը տուաւ։

«Այս եմ ուզում ասել», ասելացրեց Նիպիան, ասելի անդորը ձեռով. «քո կողմից ամենաչնչին մի պաղ խօսքը կը տխրեցնէ նրան—ամենաչնչին ուշադրութիւնը կ'ուրախացնէ։ Եթէ առաջինը լինի թէզ գերին տանէ քո պատասխանը, եթէ վերջինը՝ թէզ ես տանեմ և երեկոյեան կը վերադառնամ»։

«Եւ լինչու», հարցրեց Իօնէն խոյս տալով հարցից, «դու ես ուզում տանել իմ նամակը»։

«Այդպէս է ուրեմն», ասաց Նիպիան։ «Ա՛հ, լինչպէս կարող էր ուրիշ կերպ լինել. ով կարող էր կոպիտ լինել դէպի Գլոկուսը»։

«Ջաւակա», ասաց Իօնէ, քիչ ասելի լուրջ քան առաջ. «դու չատ համակրութեամբ ես խօսում Գլոկուսի մասին, ուրեմն նա սիրելի է քեզ»։

«Ազնիւ Իօնէ, Գլոկուսը եղել է ինձ համար լինչ որ

չէն եղած ոչ բախտը և ոչ աստուածները—այն է մի բարեկամ»։

Այն ախորժութիւնը և այն պատասխրութիւնը, որով Նիպիան արտասանեց այս պարզ բառերը յուզեցին դեղեցիկ Իօնէի սիրտը. նա թեքուեց և համբուրեց նրան։ «Դու երախտագէտ ես, և իրաւունք ունես այդպէս լինելու. լինչու չիկնեմ ասելու, որ Գլոկուս արժանի է քո երախտագիտութեան։ Գնա, իմ սիրելի Նիպիա, այս նամակը ինքդ տար—բայց դարձեալ վերադարձիր։ Եթէ ես տանը չը լինեմ այս երեկոյ երբ դու վերադառնաս—ինչպէս չատ կարելի է որ չը լինեմ—քո սենեակը իմ սենեակիս կողքին պատրաստուած կը լինի։ Նիպիա, ես քոյր չ'ունեմ—դու քոյր կը լինես ինձ համար»։

Թեսսալացին համբուրեց Իօնէի ձեռքը, և յետոյ ասաց քիչ չփոթուած ձայնով

«Մէկ չնորհք եմ խնդրում քեզանից, չքնաղ Իօնէ, արդեօք յանդգնեմ ասել»։

«Չէ կարելի որ դու ուզես մի բան և ես չըտամ», պատասխանեց նապոլիտանը։

«Ինձ ասում են», ասաց Նիպիան, «որ քո դեղեցկութիւնը վեր է աչխարհային դեղեցկութիւնից։ Աւաղ, ես չեմ կարողանում տեսնել այն բանը, որ տրճուանք է պատճառում աչխարհին։ Թոյլ կը տաս ինձ ձեռքովս չօշափել քո երեսը—այդ է միակ ձևը, որով ես կարողանում եմ ըմբռնել դեղեցկութիւնը, և ես սովորաբար ուղիղ եմ գուչակում։

Նա չ'սպասեց Իօնէի պատասխանին, բայց մինչդեռ խօսում էր, վախկոտութեամբ և կամաց իր ձեռքը քսեց հելլենուհու թեքուած և կէս դարձրած դէմքին—դէմք, որը աչխարհում մի՛այն մէկ կերպարանք կարող է

ղացել Գլոկուսի դեմ որևէ ազդեցութիւն գործ դնել. մի առթուս անցաւ նրա մարմնից, երբ նա նորից լիշեց Գլոկուսի խօսքերը, որով նրան խորհուրդ էր տալիս ղոյչ կենալ Արբակից. և այն թաքուն վախը, որ ունէր այդ մեայլադէմ մարդուց, աւելի մութ մի գոյն ստացաւ, և անի փոխարկուեց: Նրա ապաստիները խանգարեցին նրա մտածութիւնները, յայտնելով որ հասել էր Արբակին խոստացուած այցելութեան ժամը. նա ցնցուեց. նա մոռացել էր այդ խոստումը: Նրա առաջին մտքն եղաւ անկատար թողնել խօսքը. նրա երկրորդ մտքն եղաւ ծիծաղել իր երկիւղի վրայ, երկիւղ որ կրում էր իր ամենահին կենդանի բարեկամից: Նա աճապարեց աւելացնել սովորական զարդերը իր զգեստների վրայ և մտածելով թէ արդեօք աւելի մօտից քննել եգիպտացուն՝ Գլոկուսի ամբաստանութեան մասին, թէ սպասէ նախ Գլոկուսին յայտնելու այդ բանը առանց ամբաստանողի անունը տալու. նա մեհենից դէպի Արբակի մօտալ ապարանքը:

Գլուխ Ը:

Յօնէն որոգայթի մէջ ընկած.—Մուկը աշխատում ցանցը ծամել:

«Ո՛չ, ամենասիրելիդ իմ Նիդիա», գոչեց Գլոկուս, երբ Յօնէի նամակը կարդաց, «դու և աւելի ճերմակազգեստ ես քան որևէ պատգամաւոր, որ անցել է երկնքից երկիր—ինչպէս, ահ, ինչպէս չնորհակալ լինեմ քեզանից»:

«Ես արդէն վարձատրուեցի», ասաց խնդմ Թեսալուհին»:

պատկերացնել և լիշեցնել—այդ կերպարանքը այն անդամահատուած բայց համայնատքանչ արձանն է, որ գտնուում է նրա բնիկ քաղաքում, Նապօլիում—այն Պարթռսական երեսը, որի առջև ֆլօրէնցիական վէնուսի բոլոր զեղեցկութիւնը աղքատ է երևում և երկրային—այն կերպարանքը, այնքան լի նեղրպչնակութեամբ, երիտասարդութեամբ, հանճարով, հոգով—որը, ըստ նեռկայ դարի քննադատներին, ներկայացնում է Պսիքէին*:

Նիդիայի ձեռքը կանգ առաւ նրա հիւսուած մազերի և յղկացած ճակատի վրայ—նրա մետաքսանման թիլերի աղաւամազի վրայ—նրա չրթունքների փոսորակի վրայ—նրա կարապանման և սպիտակ վզի վրայ: «Ես այժմ գիտեմ որ դու զեղեցիկ ես», ասաց նա, և այսուհետև մինչև յաւիտեան կարող եմ պատկերացնել քեզ իմ մութ աչքերիս առջև»:

Երբ Նիդիան հեռացաւ, Յօնէն խորասուզուեց մի անույշ մտազմայլման մէջ: Գլոկուս ուրիշին սիրում էր նրան. նա խոստովանում էր այդ բանը—այո, նա սիրում էր նրան: Նա գարձեալ դարս լսերեց այդ սիրելի խոստովանքը. նա կանգ առաւ ամէն մի բառի վրայ, նա համբուրեց ամէն մի չարքը. նա չէր հարցնում թէ ինչու վատաբանել էին նրան, նա միայն զգում էր, որ այդպէս էր եղած: Նա զարմանում էր թէ ինչը ինչպէս էր հաւատացել նրա դէմ ասուած մեկ բառին անդամ. նա զարմանում էր թէ եգիպտացին ինչպէս էր կարո-

*) Մարմօ Բորրոնիկոում եղած, այս անունով կոչուած, արձանի հրաշալի բնիկը: Երեսը, զգացմանքի և կանոնաւորութեան տեսակէտից, ամենագեղեցիկ բնիկն է, որ մեզ մնացել է հին քանդակագործութիւններից:

«Վաղը—վաղը, արդեօք ինչպէս անցկացնեմ ժամերս մինչև վաղը»։

Սիրահարուած յոյնը թոյլ չէր տալիս Նիփխային դուրս պրծնել իր ձեռքից, թէև նա քանի անգամ ուղեց հեռանալ սենեակից. նա մի քանի անգամ նրան տատ տատ պատմել տուեց այն կարճ խօսակցութիւնը, որ տեղի էր ունեցել նրա և Իօնէի մէջ. հազար անգամ մոռանալով նրա դժբախտութիւնը՝ հարցրեց իր սիրուհու կերպարանքի և նայուածքի մասին. և յետոյ խոկուն ներողութիւն խնդրելով, նորից սկսել տուեց բոլոր պատմութիւնը, որ լինքը այդպէս խանդարել էր։ Նիփխայի համար այնքան ցաւալի ժամերը՝ չատ արագ և ուրախ անցան Գլոկուսի համար, և երեկոյեան վերջնալոյսը արդէն սկսել էր մթնել՝ երբ սա նորից Նիփխային ուղարկից Իօնէի տունը նոր նամակով և նոր ծաղիկներով։ Հազիւ աղջիկը դուրս էր գնացել, երբ Գլոկուս և նրա ընկերներից մի քանիսը ուրախ ուրախ ներս թափուեցին նրա տունը, և սկսեցին կատակներ տեղալ նրա գլխին, ծաղրելով նրան իր ամբողջ օրուայ առանձնութեան և այն մեկուսացման համար, որ նա պահել էր մի քանի օր չերթալով իր սովորական լաճախատեղիները. նրանք հրաւիրեցին նրան իրանց հետ գնալ այդ աշխոյժ քաղաքի զանազան զբօսավայրերը, որոնք դիշեր ցերեկ միշտ մի նոր պէսպիսութիւն էին տալիս հասարակաց զուարճութիւններին։ Այն ժամանակ, ինչպէս նաև հիմայ հարուստին կոմմերսան, իտալացիների երջանկութիւնն էր երեկոները մթասին հաւաքուել և տաճարների պորտիկոների տակ, կամ փողոցների մէջ եղած ծառաստանների տուերների տակ, ականջ դնել երաժշտութեան կամ մի աչուղի լինքնահնար պատմութեանը, և այդ մինչև սովորաբար ոջխը-

նել լուսնի ծագումը պինեձնով կամ երգի մեղեդիներով։ Կարելի է ոչ մի երկիր չկայ, որ որքան աւելի կորցրել է իր մեծութիւնը, այնքան աւելի պահպանել է իր հին սովորութիւնները, որքան Իտալիան։ Գլոկուս չափազանց երջանիկ էր անրնկերական լինելուն համար. նա վախճելով փափագում էր դուրս թափել իր ցնծութեան արտայդումը, որի տակ նա ճնշւում էր։ Նա յօժարութեամբ ընդունեց իր ընկերների առաջարկը և ծիծաղելով նրանք դուրս եկան անից և անցան խուռնամբոխ լուսաւորուած փողոցների միջով։

Նոյն միջոցին Նիփխան նորից հասաւ Իօնէի տունը. Իօնէն վաղուց արդէն դուրս էր գնացել անից. նա անասարբեր եղանակով հարցրեց թէ ուր էր գնացել Իօնէն, բայց նրա ստացած պատասխանը ապրեցրեց նրան։

«Աբրակի տունը... եղիսաբեցու։ Անկարելի է։

«Ճշմարիտ է իմ փոքրիկս», ասաց վերին, որ պատասխանել էր նրա հարցին։ «Նա չատ ժամանակ է որ ծանօթ է եղիսաբեցու հետ»։

«Շատ ժամանակ, ով աստուածներ, և դեռ Գլոկուսը սիրում է նրան», մրմնջաց Նիփխան։

«Եւ նա լաճախ այցելել է նրան», հարցրեց նա բարձր ձայնով։

«Ոչ երբէք մինչև հիմայ» պատասխանեց վերին։ «Եթէ Պոմպէյի մէջ պատուղ լամբատանը ճշմարիտ լինի, կարելի է աւելի լաւ կը լինէր, եթէ նա չըլանդգնէր այնտեղ երթալ։ Բայց նա, իմ խելօք աչկինը, երբէք չէ լսում ինձ որ մենք լսում ենք. վեսուվիուսի խօսակցութիւնը չէ հանգամ պերիտանելը։

«Մինչև հիմա երբէք չէ գնացել», կրկնեց Նիփխան։ «Վատահ եա»։

«Վատահ, զեղեցիկս. բայց քեզ համ մեզ ինչ է վերաբերում դա»։

Նիփիան մի րոպէ վարանեց և լեռայ ցած գնելով իր բերած ծաղիկները, նա կանչեց իր հետ եկած գերուն, և հեռացաւ առանց մի բառ ասելու։

Մինչև Գլոկուսի տան կէս ճանապարհը նա լուռ մնաց և լեռայ սկսեց ինքնիրեն մրմնջալ.

«Նա չէ երազում—նա չէ կարող երազել այն վտանգների մասին, որոնք սպասում են նրան։ Ինչ լիմար եմ... Փրկեմ նրան։ Այո, որովհետև Գլոկուսին աւելի եմ սիրում ինձանից»։

Երբ նա հասաւ աթենացու տունը, նա լսեց որ Գլոկուս դուրս էր գնացել մի խումբ բարեկամների հետ և ոչոք չըզիտեր թէ ուր։ Հաւանականապար նա կէս գիշերին տուն կը վերադառնար։

Թեսսալոնիկին հառաչեց. նա ընդհաւ սրտում պրտած նատարարներից մէկի վրայ, և իր երեսը ծածկեց իր ձեռքով որպէս թէ իր մտքերը աւիրովելու։ «Կորցնելու ժամանակ չը կայ» մտածեց նա, վեր թռչելով իր տեղից։ Նա գարձաւ դէպի այն գերին որ ընկերացել էր նրան։

«Դու գիտես», հարցրեց նա, «թէ Իօնէն որ և է աղգական կամ մտերիմ բարեկամ ունի Պոմպէյի մէջ»։

«Ինչպէս չէ, Արամազդը վկայ», պատասխանեց գերին, «դու պէտք է սխալմամբ լինես այդպիսի մի հարցումն անելու համար։ Պոմպէյի մէջ ամեն մարդ գիտէ, որ Իօնէն մի եղբայր ունի, որը երիտասարդ և հարուստ—վարդի տակ եմ խօսում քեզ—այնքան լիմար է եղել, որ Իսիսի քահանան է գարձել»։

«Իսիսի քահանան։ Աստուածներ իմ. անունը».

«Ապէկիդէս»։

«Հիմա բոլորը հասկացայ», մրմնջաց Նիփիան. «ուրեմն եղբայրը և քոյրը երկուսն էլ պիտի զոհ գնան։ Ապէկիդէս, այո այդ էր այն անունը որ ես լսեցի այն... Հա, նա ուրեմն չատ լաւ գիտէ թէ ինչ վտանգ է սպասում իր քրոջը. ես կ'երթամ նրա մօտ»։

Նա վեր թռաւ իր տեղից և առնելով իր գատաղանը, որ նրա ուղեցոյցն էր, նա աճապարեց դէպի Իսիսի մեծական տաճարը։ Մինչև այն ժամանակ որ Նիփիան բերուեց բարեբիրա չոլնի տունը, այդ գատաղանը բաւական էր եղել առաջնորդելու—խեղճ կոյրին Պոմպէյի փողոցների մէջ անկիւնից անկիւն։ Ամեն մի փողոց և քաղաքի նշանաւոր մասերի ամեն մի գարձը ծանօթ էր նրան. և քանի որ բնակիչները մի տեսակ փափուկ և կէսնախապաշարուած չարգանք էին զգում դէպի այն մարդիկ, որոնք ենթակայ էին նրա տարաբախտութեան, երթևեկողները միշտ ճանապարհ էին բացել նրա երկտող քայլերի առջև։ Խեղճ աղջիկ, նա չէր երազում, որ չատ չ'անցած, իր կուրութիւնը իր պաշտպանը պիտի լինէր, և մի չատ աւելի ապահով առաջնորդ քան ամենից սուր աչքերը։

Բայց այն օրից որ նա մտել էր Գլոկուսի չարկի տակ, մի գերի որոշուել էր նրան միշտ ընկերակցելու. և այն խեղճ տարաբախտը, որի պաշտօնն էր այդ, պատկանում էր դէր մարդկանց դասակարգին. երկու անգամ Իօնէի տունը գնալ վերադառնալուց յետոյ, այժմ տեսաւ որ դատապարտուած է մի երբորդ ճանապարհորդութիւն անել (աստուածները գիտէին թէ ուր)։ Նա չտապակեց նրա ետևից, դղալով իր բախտի վրայ, և ամենայն ջերմեռանդութեամբ հաւատացնելով Պաստորին և Պոլլուքս

սին, որ կույր աղջիկը ունէր նաև Հերմէսի թևամոկնները կուպիդի թերութեան հետ միասին։

Ինչևիցէ, Նիփիան մեծ կարօտութիւն չունէր նրա օգնութեանը, Խախի ժողովրդական մեհեանը գտնելու համար. դրա աչքևի տարածութիւնը այժմ դասալիկ էր և նա առանց արդելքի, հասաւ մինչև սրբազան վանդակապատը։

«Ոչ ոք չըկայ այստեղ», ասաց հասուկիկ գերին։ «Ի՞նչ ես ուզում կամ ո՞ւմ ես ուզում։ Ըզգիաես մի՛թէ որ քահանաները չեն բնակւում տաճարի մէջ։

«Ձայն տո՛ւր», ասաց նա անհամբերութեամբ. «գիշեր ցերեկ պէտ մէկ հոգի քահանայ կայ, որ հսկում է Խախի խորաններուի մօտ։

Գերին ձայն տուեց. ոչոք չերևաց։

«Ոչ ոք չես տեսնում»։

«Ոչ ոք»։

«Դու սխալւում ես. ես մի հառաչանքի ձայն եմ լսում. նորից նայիր»։

Գերին զարմանալով և մրթմրթալով, իր ծանր աչքերը պտտցրեց իր չորս կողմը և սեղանների մէկի առջև, որի բեկորները մինչև այսօր թափուած են իր տեղում, նա տեսաւ մի մարդու կերպարանք, որ թեքուած էր և խորասուզուած իր մտածութիւնների մէջ։

«Ես տեսնում եմ մի մարդու ձև», ասաց նա, «և սպիտակ զգեստներից նա մի քահանայ է թուում»։

«Ո՛վ Խախի քահանայ», գոչեց Նիփիան. ծառայ ամենահնաւանդ աստուածուհու, լսիր ինձ»։

«Ո՛վ է կոչում», ասաց մի ցած և մելամաղձիկ ձայն։

«Մէկը, որի բերած լուրը սովորական լուրերին չէ նմանում. ես գալիս եմ իբրև տաբիր՝ բարբառելու մի պատգամ և ոչ թէ տառնալու»։

«Ո՞ւմ հետ գործ ունիս։ Հիմա խօսելու ժամանակ չէ. հեռացիր, մի խանգարիր ինձ. գիշերը նուիրուած է աստուածներին, ցերեկը մարդկանց»։

«Կարծեմ ճանաչում եմ քո ձայնը, դու ես այն մարդը որին փնտռում եմ. սակայն մէկ անգամ միայն լսել եմ քո ձայնը։ Դու չես Ապէկիդէս քահանան»։

«Այո, ես եմ», պատասխանեց քահանան, տեսանելով վանդակապատին։

«Դու ես, փառք աստուածներին»։ Շարժելով իր ձեռքը, նա նշան արեց գերուն հեռանալ. և գերին որ բնականաբար երևակայում էր թէ մի որ և իցէ աւելորդապաշտութիւն՝ լարակից գործ, Իօնէի ապահովութեան հետ կարող էր միայն առաջնորդած լինել կոյր աղջկան դէպի այն տաճարը հնազանդուելու և մի քիչ հեռանալով նասեց—գետնի վրայ։ «Սուս», ասաց աղջիկը, խօսելով արագ և ցած ձայնով. «դու խաբեպէս Ապէկիդէսն» ես։

«Եթէ ինձ ճանաչում ես չես կարողանում յիշել իմ դէմքը»։

«Ես կոյր եմ», պատասխանեց Նիփիան, իմ աչքերս իմ ականջներիս մէջ են, և իմ ականջներս քեզ ճանաչում են. այնու ամենայնիւ երդուիր որ դու նա ես»։

«Երդւում եմ աստուածներով, իմ աջ ձեռքով, և լուսնով»։

«Սուս, կամաց խօսիր—ականջդ մօտ բեր—ձեռքդ տուր ինձ. դու ճանաչում ես Արբակէս։ Ծաղիկներ դրել ես մեռելների ոտքերի առջև։ Ա՜հ, քո ձեռքդ պաղ է—ականջ դիր. դու պիտի ես այն ահաւոր ուխտը։

«Դու ով ես, որտեղից ես գալիս, գունատ աղջիկ»,

ասաց Ալեկիոէս, սարսափահար. «ես քեզ չեմ ճանաչում. քո կուրծքը չէ այն կուրծքը, որի վրայ ես գլուխ դրեցի. ես քեզ չեմ տեսել սրանից առաջ։

«Բայց դու լսել ես իմ ձայնը. բայց այդ ոչինչ, այս յիշողութիւնները երկուսիս համար էլ ամօթ են բերում։ Լաւ, դու մի քոյր ունիս»։

«Խօսիր, խօսիր, ինչ գիտես նրա մասին»։

«Դու գիտես ինչ են նշանակում մեռելների հանդէսները, ով օտարական—քեզ երբեմն հաճոյք է պատահում մասնակցել նրանց—արդեօք նոյնչափ հաճոյք կ'զգաս եթէ քոյրդ էլ յաճախէր այդ հանդէսները։ Քեզ հաճոյք կը լինի իմանալ թէ Արբակի տանը հիւր է նա»։

«Ո՛վ աստուածներ. նա չի յանդգնի։ Աղջիկ, եթէ դու ծաղրում ես ինձ, դազա։ Քեզ կտոր կտոր կ'անեմ։

«Ես ճշմարիտ եմ խօսում. և մինչդեռ մենք խօսում ենք, Խոնէն գտնւում է Արբակի դահլիճներում, և այս առաջին անգամն է, որ նա նրա հիւրն է։ Դու լսեցիր գիտես թէ ինչքան վաղուց կայ այդ առաջին անգամի մէջ։ Մնաս բարև։ Ես կատարեցի իմ պարտականութիւնը»։

«Կաց, կաց», գոչեց քահանան, իր նիհար ձեռքը քաշելով իր ճակատին։ «Եթէ ճշմարիտ լինի քո ասածը, ինչ կարելի է անել նրան փրկելու համար։ Կարելի է ինձ թոյլ չը տան ներս մտնել։ Ես չը գիտեմ այդ լաբիւրինթոսի բոլոր անցուդարձերը։ Ո՛վ Նեմէսիս, ինչ արդարացի է իմ պատիժը»։

«Ես այն դերան չեմ կ'ուզարկեմ, դու եղիր իմ առաջնորդը և ընկերը. ես քեզ կը տանեմ տան դաղտնի դուռը։ Ես քեզ կ'տանեմ անցաբառը։ Որևէ դէնք առ հետդ կարող ես հարկաւոր լինել»։

«Սպասիր մի րոպէ», ասաց Ալեկիոէս, մտնելով տաճարի կողքի ներքնատներից մէկը, և քանի րոպէ յետոյ վերադարձաւ փաթաթուած այն մեծ վերարկուներից մէկի մէջ, որը այն ժամանակ շատ գործածական էր ամեն դասակարգի մարդկանց մէջ և որը ծածկում էր նրա արբազան հագուստը։ «Այժմ», ասաց նա կրճատելով իր առաջները, «եթէ Արբակ յանդգնել է... բայց նա չի յանդգնի. նա չի յանդգնի, ինչո՞ւ կասկածեմ նրա վրայ։ Նա այդչափ տուր մի սրիկայ է։ Ես չեմ կարող մտածել... Բայց ինչ սոփեստ. ինչ սո՛ւտ մոլորեցուցիչ է նա։ Ո՛վ աստուածներ, պաշտպանեցէ՛ք—սուս, աստուածներ կան արդեօք։ Այո, դէթ կայ մէկ աստուածուհի, որ կը լսէ իմ ձայնս. և այդ է—Վրէժխնդրութիւն»։

«Մրմնջալով այս անկապ բառերը, Ալեկիոէս աճապարում էր թափուր փողոցներով դէպի եգիպտացու առևտուրը. նրա հետից գնում էր նրա լուռ և կոյր ընկերուհին։

Գերին, որ այդպէս յանկարծ Նիղոսից հրամանատարի վերադառնալ, ցնցեց իր ուսերը, մի հայհոյանք մրմնջաց, և ոչ առանց հաճոյքի դարձաւ դէպի իր կուբիկուլումը։

Գլուխ Ը.

Եգիպտացու առևտուրը և մենախօսութիւնը։—Նրա բնաւորութեան տարրալուծումը։

Մենք այժմ մի քանի ժամ պիտի չետ դնանք մեր պատմութեան մէջ։ Այն օրուայ արշալոյսին, որ Գլոկուան արդէն ճերմակով էր նշան արած, եգիպտացին, անքուն և մխայնակ, նստած էր այն բարձր և բրդաձև

աշտարակի ծայրին, որ կազմում էր նրա տան մեկ կողքը։ Աշտարակի շուրջը քաշուած էր մի պատ, որը միանալով չինգի բարձրութեան, և չրջապատող մռայլ ծառերի հետ մի պատուար էր գառնում հետաքրքիր մարդկանց աչքերի առջև։ Նրա մօտ դրուած էր մի սեղան, սեղանի վրայ կար մի մատեան՝ մի խորհրդաւոր պատկերներով։ Վերևում ամպերը նուազում և դանդաղում էին, և պիչերուայ տուներները հալւում էին լեռների ապառաժային ծայրերից։ Վեղուվի գագաթի վրայ միայն կար մի սև և մեծ ամպ, որ քանի օր էր ինչ աւելի հաստանում և աւելի թանձրանում էր այնտեղ։ Դիշերուայ և ցերեկուայ մաքառումը աւելի յստակ էր լսւում ամպամած ովկիանոսի վրայ, որ սիրուած էր անդորը՝ ինչպէս մի վիթխարի լիճ, նա չրջապատուած էր որթերով և դալարութեամբ ծածկուած ափերով, որոնց վրայ տեղ տեղ փայլում էին քնած քաղաքների ոսկեայ պատերը։

Այդ ժամը ամենից աւելի նախրուած էր եգիպտացու յանդուգն դիտութեան—դիտութիւն, որ ուզում է կարդալ մեր փոփոխուող ապագան աստղերի մէջ։

Նա լսել էր իր մատեանը, նա վիշատակել էր լոպէն և նշանը և յենուելով իր ձեռքի վրայ՝ խորասուզուել էր այն մտածութեան մէջ, որ իր հաշիւները յուզել էին նրա գլխում։

«Դարձեալ աստղերը նախազգուշացնում են ինձ։ Ուրեմն մի վտանգ անսարակոյս ինձ սպասում է», ասաց նա, կամաց. «մի ուժգին և յանկարծահաս վտանգ։ Աստղերը զգենում են ինձ համար նոյն ծաղրալից սպառնալիքը, որը, եթէ մեր պատմութիւնները չեն սխալւում, նրանք մէկ անգամ զգեցան Պիւռռոսի համար—

նրա, որ դառապարտուած էր մաքառել ամեն բանի հետ, և ոչ մէկը չը վայելել—ամեն բանի վրայ յարձակուիլ, և ոչինչ չը չահել,—պատերազմել, պատուը չը քաղել—պահեստներ կրել առանց յաղթանակելու, հռչակ ունենալ առանց յաջողութեան. և վերջապէս երկչոտ դառնալ իր նախապաշարումներից, և չան նման սպանուիլ՝ մի պատառ ձեռքից դուրս չպրտուած մի կղզիներով։ Իսկապէս, աստղերի կողմից չողոքորթութիւն է սպասել ինձ այդ չիմար պատերազմը որպէս օրինակ,—խոստանալով իմ գիտութեան եռանդին նոյն արդիւնքները ինչ որ նոքա ասէին, նրա վտանգաւորութեան խելագարութեանը,—անպատճառ գործ—ոչ, որոշ նպատակ—Սիսիֆեանի աշխատանքը, լուռ և քարը—քարը, մի մռայլ պատկեր.—դա ինձ չիշեցնում է, որ ինձ սպառնում է Նպիրատեի մահը։ Թող նորից նայեմ։ «Զգուշացիր», ասում են վայլուն մարգարէները, երբ անցնում ես հին առասպաղների տակից, կամ պաշարուած որմերի կամ դուրս ցցուած ժայռերի տակից—մի քար, նետուած վերևից՝ իւր մէջ կրում է քո վախճանիդ անէծքները»։ Եւ ոչ ուշ պիտի դայ "վտանգը. բայց ես չեմ կարողանում որոշ կերպով կարդալ օրը և ժամը։ Լաւ, եթէ իմ աստղը վերջանալու վրայ նա պիտի փայլէ մինչև վերջին հատը։ Բայց եթէ ապաստիմ այս վտանգից—այո, եթէ ապաստիմ, վայլուն և պարզ կը լինի իմ գիտութեան ճնաղորդ մասը՝ ինչպէս լուսնի հետքերը ջրի մէջ։ Ես սեւեռում եմ փառք, երջանկութիւն, յաջողութիւն սև անդունդի ամեն մի կոհակի վրայ, որոնց մէջ, ի վերջոյ պիտի ընկղմիմ ես։ Իմ. ուրեմն, վտանգի միտս կազմում ունեցած իմ այդքան փայլուն յոյսերով ես ընկճուիմ վտանգի ներքև։ Իմ հոգիս լոյս է մրմնջում, դա ցնծու-

թեամբ սուրսում անցնում է սպառնալից ժամի վրայից և հրճւում է ապագայի մէջ.—իմ հոգուս քաջութիւնը, ամենայարմար դուշակութիւնն է։ Եթէ ես ոչնչանալու լինէի այսքան յանկարծ և այսքան չուռով, մահուան սուրը արդէն սարսածուած կը լինէր իմ վրայ և ես կը զգայի իմ վախճանիս սառուցեալ նախազգացումը։ Իմ հոգիս արտմութեամբ և թախիծով կ'արտայայտէր անաւոր Օրկուսի առաջընթաց մառախուղը։ Բայց դա ժըպտում է—դա ազատութեան վստահութիւն է ներչընչում ինձ։

Եպիսկոպոսին, երբ վերջացրեց իր մենախօսութիւնը, ակամայ վեր կացաւ։ Նա արագ արագ երթևեկում էր այդ աստղառատուած սենեակի նեղ չրջափակում. յետոյ կանգ առնելով պատի մօտ, նորից նայեց մոխրագոյն և մելամազձիկ երկնքի վրայ։ Արշալոյսի սպաղ շունչերը եկան զովացրին նրա ճակատը և աստիճանաբար նրա միտքը վերստացաւ իր բնական և ամիսի անդորրութիւնը։ Նա զարձրեց իր նայուածքը աստղերից, երբ մի լսա մէջ նրանք քաշուեցան երկնքի խորքերը, և նրա աչքերը ուղղուեցան դէպի ցածի լայն տարածութիւնը։ Քաղաքի լուռ ծովեզրից բարձրանում էին նաւերի նաեմ կայմերը. զեղխութեան և աչխատութեան այդ հրապարակի մէջ լուռ էր նրա հզօր որոտը։ Տեղտեղ, մի տաճարի սիւներին, կամ անձայն փողումի պորտիկոների առջև, մի քանի լոյսեր խանդարում էին մարանչղ առաւօտուայ անդոյն և դողդոջուն լոյսի միակերպութիւնը։ Անշարժ քաղաքի տրտից, որը չուռով պիտի թնդար հազարաւոր կրքերով, այժմ ոչ մի ձայն չէր գալիս. կեանքի հոսանքները չէին չրջում. նրանք բոլորը փակուած էին քնի տաւուցի մէջ։ Ամենից տարօրինակ

անագին մէջնաւայրից, իր մէկը միւսի վրայ տարուած քարեայ նստարաններով, իր պողոտաներով նման մի քնած հրէշի, բարձրանում էր մի նօսր և մեռելագէմ մշուշ. դա մթնում և աւելի մթնում էր, յետոյ հաւաքւում մերձակայքի ցիրուցան և մեայլ ծառերի վրայ։ Քաղաքը երևում էր այնպէս, ինչպէս տասնեւօթը դարերի ահաւոր փոփոխութիւնից յետոյ այսօր երևում է ճանապարհորդին—Մեռեալների մի Քաղաք *)։

Ինքը ովկիանոսը—այդ հանելու նման անդորը և անմակընթաց ծովը—ընկղմանել էր նոյնչափ անձայն, և նրա խոր կրծքից գալիս էր մի թոյլ և կանոնաւոր մրմունջ, որ հետաւորութեան պատճառով փափուկ դարձած՝ նմանում էր նրա քնի չնչառութեանը. նրա վճիտ մակերևոյթը պատեցնելով հեռու կանանչ և գեղեցիկ երկրի մէջ իւր երկայնատարած բազուկները՝ կարծես անդիտակցաբար զրկում էր այն քաղաքները, որ թեքւում էին դէպի նրա եզերքը—Աստարիէն **) Հերկուլանումը և Պոմպէյը—անդունդի այդ զաւակները և սիրեւիները։ «Դուք քնած էք», ասաց եպիսկոպոսին, նայելով այդ քաղաքների վրայ, որոնք Կամպանիայի պարծանքն էին և ծաղիկը. «դուք քնած էք—երանի թէ այդքանը նահուան յաւիտենական նինջը լինէր։ Ինչպէս դուք այժմ գոնարներն էք կայսերութեան թագի, նոյնպէս էին երբեմն Նեղոսի քաղաքները։ Նրանց մեծութիւնը ոչն-

*) Երբ որ սըր Ուալտեր Սկօտ, սըր Ուիլլիամ Գելլի հետ այցելեց Պոմպէյը, նրա գրեթէ միակ նկատողութիւնը այս բացականչութիւնն էր։ «Մեռեալների Քաղա՛քը—Մեռեալների Քաղա՛քը»։

**) Ստաբիէն այլ ևս մի քաղաք չէր, բայց դա դեռ սիրելի վայրն էր հարուստ մարդկանց ամառանոցների։

չացել է. նրանք այժմ նիրհում են վիսատակների մէջ. նրանց ապարանքները և տաճարները այժմ պեղումներ են. օձը քնած է նրանց փոզոցների խոտի տակ. մոզէսը հրճւում է նրանց մենաւոր դանվիճների տեսի մէջ։ Բնութեան այն խորախորհուրդ օրէնքի համաձայն, որ մեկին խոնարհեցնում է միւսին բարձրացնելու համար, ձեր բարգաւաճումը կառուցուած է նրանց աւերակների վրայ. դու, ով զոռող Հռոմ, դու ապագայիդ Աեոսարիսի և Շամիրամի վտանգը—դու մի զոռ ես, որ պղնում են նրանցից խլած կողոպուտը։ Եւ սրանց—այս քո յաղթութեան գերիներին, այս չանճարանները քո համաստրած զօրութեան և զեղխութեան, ես, վերջին չառաւիղս մոռացած մյսպետների, տեսնելով անիծում եմ։ Կը գայ ժամանակը երբ Եգիպտոսի վրէժը կը լուծուի, երբ Ներոնի ոսկեայ տունը բարբարոսի ձիան համար ախոռ կը դառնայ, և դու որ հոգի ես ցանել քո յաղթութեամբ, մրրկի մէջ պիտի ժողովես քո կործանման հունձքը»։

Երբ որ եգիպտացին բարբառում էր այս նախադուշակութիւնը, որը ժամանակաւոյ ընթացքում սարսափելի ճշդութեամբ կատարուեցաւ, նա մի այնպիսի հանդիսաւոր, և չարագուշակ կերպարանք ունէր՝ որպիսին երբէք չէ պատկերացած նկարչի կամ քանդակողի երազների մէջ։ Առաւօտեան լոյսը, որ այնքան ուժգին է զարձնում նոյն իսկ զեղեցկութեան գեղատի թշերը, տուած էր նրա վհատագնած և չքեղ դէմքին դրեթէ զեղազանի մի գոյն. նրա սև և խիտ դանդաւրները թափուած էին նրա երեսի չուրջը. նրա խաւարագոյն վերարկուն թափուած էր վերեից ցած, իր լայն և արձակ ծալքերով. նրա թևը տարածուած էր այդ բարձրութեան վրայից. նրա չոշորդուն աչքերը կատաղած էին մի վայրենի ուրախութեամբ. նա կարծես վինէր կէս մարգարէ և կէս զև։

Նա զարձրեց իր նայուածքը քաղաքի և ովկեանի վրայից. նրա առջև տարածուած էին չքնաղ Կամպանիայի այգեստանները և մարզպետինները։ Քաղաքի հին, կէս պելլասգիական զուտը և սրմները կարծես չէին տանմանափակում նրա տարածութիւնը։ Ամարանոցներ և պիղեր տարածուած էին Վեզուվի կողքերի վրայ, որոնք այն ժամանակ ոչ այնքան զտեխվեր էին ու ոչ այնքան բարձր՝ որչափ հիմայ։ Որովհետև, ինչպես ինքը Հռոմը կառուցուած էր սպառուած հրաբուղխի վրայ, նոյնպես հարուստ բնակիչներն էլ գրուած էին չրջակայ այգեստանները և զալարաղարդ զաշտերը մի հրաբուղխի, որի հուրը, նրանք հաւատում էին, թէ յաւիտեան հանգած է։ Քաղաքի մեծ զնիից սկսած տարածուում էր զերեզմանների երկար փոզոցը. զամբարանները տարբերուում էին միմեանցից մեծութեամբ և ճարտարապետութեամբ և ընկած էին քաղաքի այն կողմը, որ կողմից այժմ էլ ճանապարհորդը մերձենում է քաղաքին։ Բոլորից վեր բարձրանում էր սոսկալի լերան ամպամած զագաթը. նրա երանգները, տեղտեղ մութ և տեղտեղ սպիտակ, յայտնում էին մամռուտ արձանների և մոխրապոյն ժայռերի ներկայութիւնը, ժայռեր որոնք վկայում էին անցեալ հուրերի մասին, և որոնք կարող էին մարգարէանալ թէ ինչ պիտի լինէր ապագայում—բայց մարդը կոյր է։

Դժուար էր այն ժամանակ զուշակել թէ ինչու այդ վայրերի աւանդութիւնը այնքան մռայլ և զաժան էր. թէ ինչու այդ ժպտուն զաշտերի մէջ, որ տարածուած

Հին մղոններ մինչև Բալիէ և Միսենում, բանասաղծ-
ները զետեղած էին իրանց դժոխքի մուտքը—իրանց
Աքէրոնը, և իրանց առասպելական Սաիքսը. թէ ինչու
այդ ֆլեգրեի *) մէջ, որ այժմ ծխածուում էր այգինեերով,
նրանք երևակայել էին աստուածների պատերազմի
դաշտը. և ենթադրած այն մարտավայրը, ուր յանդուգն
Տիտաններն ուզել են յաղթել երկնքին—ինչու համար
այդ բոլոր լիշողութիւնները կապուած էին Պոմպէյի մեր-
ձակայքի հետ եթէ ոչ այն պատճառով, որ այն հրակէզ
և խանձուած զազաթի վրայ երևակայութիւնը ամենից
լաւ կարող էր կարդալ Ողիմպիական չանթերի քնորոշ
հետքերը։

Բայց այն բանը, որի վրայ այժմ զարձուած էր ե-
զիպտացու աչքը, ոչ լուռ հրաբուխի ժայռոտ բարձրու-
թիւնն էր, ոչ զառիվայր դաշտերի արդասաւորութիւնն,
ոչ զերեզմանների մելամաղձիկ շարքերը և ոչ էլ չոր-
չորուն ամարանոցները մի զարգացած և զեղեց ժողո-
վուրդի։ Տեսարանի մէկ կողմում վեղուվ լեռնից լը-
նում էր դաշտի մէջ մի նեղ և անմշակ լեռնաշուշ, որի
տարի մակերևոյթը տեղտեղ խանգարուած էր անապին
ժայռերով և վայրի թուփերով։ Սրա ստորոտում կար մի
ճահճային և վատառողջ լճակ. և Արքակի յառուած աչ-
քերը նշմարեցին մի կենդանի մարդու ուրուագիծը, որ
չարժուում էր ճախինների մէջ, և սերթ թևքերում էր քա-
զելու նրա թունաւից բերքը։

«Օհօ», ասաց նա բարձր ձայնով, «ես ուրեմն միայ-
նակ չեմ այս չնաշխարհիկ դիշերային հսկումների մէջ։
Վեղուվի վհուկը դուրս է եկել։ Ի՞նչ, նա էլ դիւրահա-

*) Կամ ֆլեգրեի կամպո—այսինքն այրեցեալ դաշտեր։

ւատների պէս երևակայում է... Նա էլ սովորում է մեծ
ապագերի գիտութիւնը։ Նա էլ լուսնին ուղղած է կա-
խարդական զարչ բառեր, կամ քաղած է (ինչպէս նրա
գաղարներից երևում է) ժանտ բոյսեր թունաւոր ճահ-
ճից։ Լաւ, ես պէտք է տեսնեմ իմ աշխատակցին։ Ով որ
ուզում է խնամատարութիւն ամբարել, սովորում է որ ոչ մի
մարդկային գիտութիւն ղղուելի չէ։ Ղղուելի էք դուք,
միայն—դեր և փքուն աստրկաններ—զեղխութեան ըն-
տրուհիներ—մտաւորականութեան ծոյլեր—որ ոչ մի բան
չէք կարողանում մշակել չոր հետաքրքրութիւնից զատ,
և երազում էք որ ձեր աղքատիկ հողը կարող է բուս-
ցնել թէ մրտենի և թէ դափնի։ Ո՛չ, խնամատարները
միայն կարող են վայելել—մեզ միայն արուած է ճշմար-
տութեան զեղխութիւնը, երբ միտքը, ուզղը, հնարագիտու-
թիւնը, փորձառութիւնը, մտածութիւնը, գիտութիւնը,
երևակայութիւնը, բոլոր մէկ անգամից գետերի նման
հոսում են ստեղծելու հետաքրքրութեան ծովերը։ Իօնէ»։

Երբ որ Արքակ արտասանեց այդ վերջին և կա-
խարդուած բառը, նրա մտքերը ընկղմեցին մի ահեղ
խորին հառաչանքի մէջ։ Նրա ոտքերը կանգ առան. նա
իր աչքերը չը հեռացրեց գետնից. մէկ կամ երկու ան-
գամ մի ցնծալից ժպիտ խաղաց նրա չրթունքների
վրայ, և յետոյ, երբ նա հեռացաւ այնտեղից ուր հանել
էր ամբողջ գիշերը և գնաց իր անկողնի մօտ. նա մըր-
մնջաց. «Եթէ մահը այսքան մօտից սպառնում է ինձ,
պէտք կ՛ասեմ որ ապրել եմ—Իօնէն իմ պիտի լինի»։

Արքակի բնաւորութիւնը նմանում էր մի սարդի
խճողուած և բազմահոգմանի ոստայնին. նոյն իսկ այն
միտքը, որ բնակւում էր դրա մէջ, չատ անգամ չխո-
ւում էր։ Նրա մէջ, որ գետին էր մի ընկած արբայա-

տհմին, և տարապիրը մի կործանուած ազգի, նաւած էր անբաւարար հպարտութեան ոգին. նա նմանուում էր մի մարդու, որ զգում է թէ ինքը անողորմաբար դուրս է ձգուած այն շրջանից, ուր նրա հայրերը փայլեցին և որը իր բնական իրաւունքն էր թէ ծագումով և թէ արժանիքով։ Այս զգացմունքի մէջ մարդասիրութիւն չէ լինում. դա պատերազմում է ընկերութեան հետ, դա մարդկութիւնը իր թշնամին է կարծում։ Բայց այս զգացմունքի հետ, Աբրակի դէպքում, չը կար նրա սովորական ընկերը, չքաւորութիւնը։ Նրա հարստութիւնը հասաւար էր շատ հռոմայեցի ազնուականների հարստութեանը. և դրանով նա կարողանում էր կատարեալ յարգանք տալ այն կրքերին, որոնք ելք չ'ունէին գործի կամ փառասիրութեան մէջ։ Ճանապարհորդելով մի քաղաքից միւս քաղաք և աւելն ու աւել հանդիպելով Հռոմին՝ միշտ աւելանում էր նրա ոխը դէպի ընկերութիւնը և նրա սէրը դէպի զուարճութիւն։ Նա գտնում էր մի անհուն բանակ մէջ, որը նա կարող էր լցնել իր հեշտասիրութեան պաշտօնեաներով միայն։ Նա չէր կարողանում փախչել բանտից, հետևաբար նրա միակ նպատակն էր պալատի ձև տալ դրան։ Եղիսպատիք աւելի նախնական ժամանակներից նուիրուած էին հեշտասիրութեան վայելքներին. Աբրակ ժառանգել էր թէ նրանց հեշտասիրութեան ախորժակը և թէ այն վառ երևակայութիւնը, որ բոցավառում և լոյսն է փոխարկում այդ զեղխութեան փառաւորութիւնը։ Նա միշտ մնում էր մենաւոր իւր զուարճութիւններին, ինչպէս նաև իր աւելի լուրջ պարապմունքների մէջ։ Չը կարողանալով հանդուրժել իրանից մեծ կամ իրեն հաւասար մի մարդու ներկայութեանը՝ նա չատ քիչ մարդկանց ընդունում էր

իր ընկերութեան մէջ բացի միայն նրանցից, որոնք կամայ ստրուկներն էին նրա չուայտութեան։ Նա միակ տէրն էր մի բազմամարդ հարէմի. բայց այսու ամենայնիւ նա ինքն իրեն զատապարտուած էր զգում մի յաւիտեանական, որ անբաժան անէծքն է այն մարդկանց, որոնց մտաւորական ունակութիւնները բարձր են իրանց պարապմունքից. և այն ինչ որ նախ եղած էր կրքի պարակը, այժմ սառում զառնում էր սովորական մի բան։ Հեշտասիրութիւնից յուսահատուելով նա ուզեց ինքն իրեն զբաղեցնել և բարձրացնել գիտութիւնը մշակելով. բայց քանի որ նա նպատակ չ'ունէր մարդկութեան մի ծառայութիւն անել, հետևաբար արհամարհում էր գործնական և օգտակար գիտութիւնը։ Նրա մեալլ երևակայութիւնը սիրում էր մարզուել այն աւելի երազական և մութը հետազօտութիւնների մէջ, որոնք միշտ աւելնից հաճելի զբօսավայրերն են մի կամակոր և մենասէր մարդի համար, և որոնք մանաւանդ հրապուրիչ էին նրա համար, նրա բնաւորութեան յանդուգն հպարտութեան, և նրա երկրի խորհրդաւոր աւանդութիւնների պատճառով։ Չ'ունենալով ոչ մի հաւատք դէպի հեթանոսական աշխարհի խառնաչփոթ դաւանութիւնները, նա իր ամենից մեծ վստահութիւնը դրել էր մարդկային իմաստութեան զօրութեան վրայ։ Նա չէր ճանաչում (կարելի է ոչնք որոշ չգիտէր այդ դարում) այն սահմանները, որ բնութիւնը դնում է մեր գիտութիւն։ Տեսնելով որ ինչքան մենք բարձրանում ենք գիտութեան մէջ այնքան աւելի մեծ հրաշալիքներ են ներկայանում մեր աչքերին՝ նա երևակայում էր որ բնութիւնը ոչ միայն հրաշքներ է գործում իւր սովորական ընթացքի մէջ, այլ մինչև անգամ մի բարձրագոյն հոգու կաթալայով կարող էր

չեզոքել իր սովորական ընթացքից։ Այսպէս նա հետեւում էր դիտութեանը, անցնելով նրա որոշ սահմաններից և մանելով սուրբի և չիմաստութեան երկիրը։ Աստղագիտութեան ճշմարտութիւններից նա խափանում էր դէպի աստղաբաշխութեան սուխիւնները. տարրալուծութեան գաղտնիքներից նա անցնում էր կախարդութեան, ուրուականային լաբիւրինթոսը. և այն մարդը, որ կարող էր թերահաւատութեամբ վերաբերուել դէպի աստուածների զօրութիւնը չատ դիւրահաւատ նախապաշարմունքներ ունէր մարդկային զօրութեան մասին։

Կախարդութիւնը, որի մշակութիւնը այդ ժամանակ գիտութիւնների մէջ հասել էր մի սարսափելի բարձրութեան, մանաւանդ արևելքում էր իր ծաղումով. դա անծանօթ էր յոյների նախնական փիլիսոփայութեանը և ոչ էլ դա սերտ կերպով ընդունելութիւն գտաւ Յունաստանում, մինչև որ Սատանէս, որ միացած էր Բօսէրքսէսի բանակին, հելլէնների սարդ գիւրահաւատութիւնների մէջ ներմուծեց Զրադաշտի չքնդ աւելորդապաշտութիւնները։ Հռոմի կայսրերի ժամանակ, դա ընդունուեց Հռոմում (մի յարմար նիւթ Յուվենալի կրակոտ սրախօսութեան համար)։ Խելթ պաշտամունքը չատ ամուր կերպով կապուած էր կախարդութեան հետ և եղիպտական կրօնքը մի միջոց էր սարածելու եղիպտական հմայութիւնը։ Պիցահմայութիւնը, (կամ բարի կախարդութիւնը) և կիւսահմայութիւնը (կամ չար և սև կախարդութիւնը) երկուսն էլ իրանց հռչակի գագաթնակէտին էին հասել քրիստոնէական թուականի առաջին դարում. և Ֆաուստի հրաշքները չեն կարող բազդատուել Ապոլլոնիուսի հրաշքներին *)։ Թպատրները,

*) Տես ծանօթին (ա), վերջը։

պալատականները, և իմաստուններ դողում էին այդ սարսափելի վիտութեան վարպետների առջև։ Եւ մի հասարակ տեղ չէր զրաւում խորագէտ և հզօր Արբակը իր պաշտօնակիցների չարքում։ Նրա գիտութիւը և նրա հրաշակը ծանօթ էին բոլոր նրանց՝ որոնք պատրաստում էին կախարդութեան մշակութեամբ. մինչև անգամ դրանք կենդանի սիացին նրա մահից յետոյ։ Բայց նրա իսկական անունը չէր, որ կախարդը և գիտնականը յարգում էին. նրա իսկական անունը ոչ ոքի ծանօթ չէր Խալիայի մէջ, որովհետև «Արբակ» մի զուտ եղիպտական բառ չէր, այլ մի մեղական բառ, որ հին ցեղերի խառնակութիւնների և անհաստատութիւնների պատճառով, սովորական էր դարձել Նեղոսի երկրում. և զանազան պատճառներ կային ոչ միայն հպարտութեան տեսակէտից, այլև քաղաքական, (որովհետև երիտասարդ ժամանակ նա դատապրտութիւն էր սարքել Հռոմի կայսեր դէմ), որոնք նրան սովորում էին թաքցնել իր ճշմարիտ անունը և ասիճանը։ Բայց կախարդութեան աշակերտները չէին ճանաչում իրանց մեծագոր վարպետին ոչ նրա մարական կչռմամբ և ոչ էլ այն անունով, որ եղիպտական ձեմարաններում մէջ կարող էր հասատաել նրա ծիրանեզգեստ ծագումը։ Նա ստանում էր նրանցից մի աւելի խորհրդաւոր սիտոյս և նա գեռ երկար ժամանակ կիշխում էր Մեծն Յունաստանում, և արևելեան երկիրներում որպէս «Հերմէս սէրը բոցավառ Փռռոս»։ Նրա նորընդունելու հալեցոզութիւնները, և գիտութեան պահածալի յատկութիւնները, կիշատակուած զանազան հատորներում պահում էին «հետաքրքիր արուեստների» նմոյշների մէջ, որոնց՝ քրիստոնեայ նորահաւատները մեծ ցնծութեամբ բայց և մեծ երկիւղով այրեցին Եփեսոսում,

պրկելով յետագայ սերունդները դեպի խորամանկութեան ապագոյցներից։

Արքայի խիղճը միայն մաւոր տեսակից էր. ոչ մի բարոյական օրէնք չէր սարսափեցնում դրան։ Եթէ մարդն է որոշել այս արգելքները գռեհիկների համար, նոյնպէս էլ նա հաւատում էր, որ մարդը բարձրագոյն իմաստութեամբ կարող է վեր բարձրանալ այդ օրէնքներից։ «Եթէ (տրամաբանում էր նա) ես ունիմ օրէնքներ դնելու, արգելք ես իրաւունք չունիմ հրամայելու իմ տարաբաժների վրայ։ Է՛լ աւելին. արգելք ես իրաւունք չունիմ քննադատելու, վնասելու կամ ծաղրելու իմ մերձից աւելի սուր մտքերի արտադրութիւնները»։ Այսպիսով, եթէ նա մի անզգամ էր, նա արդարացնում էր իր անզգամութիւնը այն բանով, որ պէտք է նրան առաքինի դարձներ, այս ինքը իր ունակութիւնների բարձրութիւնով։

Շատ մարդիկ, աւելի կամ պակաս, ունին իշխելու մի տենչ. Արքայի մէջ այդ կիրքը կատարելապէս համապատասխանում էր նրա բնաւորութեան։ Նա չէր փափագում ունենալ արտաքին և անուանական իշխանութիւնը, նա չէր փափագում ունենալ ծերանին և գատաղանը, որ նշաններն էին գռեհիկ հրամանատարութեան։ Նրա երիտասարդական փառասիրութիւնը երբ մէկ անգամ պարտութիւն կրեց, արհամարանքը բռնեց դրա տեղը. քամահրանք դէպի այն Հռոմը, որ այդ ժամանակ նշանակում էր ամբողջ աշխարհը։ Հռոմը, որի վրայ նա նայում էր նոյնչափ անարգալից աչքով, որչափ նոյն Հռոմը նայում էր բարբարոսների վրայ։ Նրան թոյլ չէր տալիս իշխանութիւն ունենալ, որովհետև այդ իշխանութիւնը նրան պիտի դարձներ կայսեր զորձիքը կամ արա-

գածը։ Նա, Ռամխանների մեծ տոհմի զաւակը, ուրիշից աւտանար իր զօրութիւնը, ո ւ ր ի չ ի հրամաններին հնազանդ էր.—լոկ այդ գաղափարը նրան լցնում էր կատաղութեամբ։ Բայց մերժելով մի փառասիրութիւն, որ խոստանում էր անուանական արտաքին նշանակութիւն՝ նա աւելի հակուած էր դէպի սրտերի վրայ իշխելու փառասիրութիւնը։ Յարգելով մաւոր զօրութիւնը որպէս աշխարհային պարգևների ամենից մեծը՝ նա սիրում էր չօչափելի կերպով ղգալ այդ զօրութիւնը իր մէջ, տարածելով դրան բոլոր այն մարդկանց վրայ, որոնց կեանքը հանդիպում էր կեանքի մէջ։ Այս էր պատճառը, որ նա մինչև որոնում էր երիտասարդներին, մինչև հմայում էր նրանց և ակրապետում նրանց վրայ։ Նա սիրում էր մարդկանց հոգիներին դարձնել իր հպատակները,—իշխել մի անբեւեռի և անմարմին կայսերութեան վրայ։ Եթէ նա նուազ հնչասէր լինէր և նուազ հարուստ, կարելի է էլը փորձէր մի նոր կրօնք հաստատել։ Բայց իր ներկայ դրութեան մէջ, զուարճասիրութիւնը արգելք էր լինում փառասիրական ձիգերին։ Բացի այս բարոյական իշխանութեան համար ունեցած իր անսրոչ սիրուց (մի մտասպրծութիւն այնքան սիրելի դիւանիներին) նա մի տարօրինակ և երազանման պաշտողութիւն ունէր դէպի ամեն մի բան, որ պատկանում էր իր նախահայրերի կառավարած խորհրդաւոր Երկրին։ Թէև նա չէր հաւատում նրա աստուածներին, նա հաւատում էր այն ալէկոծիանններին, որ նրանք պարունակում էին կամ աւելի ճիշդն ասած նա հաւատում էր, մեկնաբանած ալէկոծիաններին նա սիրում էր կենդանի պահել Եգիպտոսի պ ա շ տ ա մ ո ն ք ը, որովհետև այդ ձևով նա պահպանում էր նրա զ օ ր ո ւ թ ե ա ն տուները և յիշատակը։

Նա կուտակում էր Օսիրիսի և Իսիսի սեղաններին վրայ արքայական նուէրներ, և միշտ աշխատում էր բարձրացնել նրանց քահանաների լարդը և հեղինակութիւնը նոր հարուստ նորահաստատներով։ Նա սովորաբար իր զուարճասիրութեան ընկերներին ընտրում էր այն մարդկանց միջից, որոնք ուխտը կատարած և քահանայութիւնը դրկած լինելով՝ եղել էին նրա զոհերը. նրա այս վարմունքի պատճառն այն էր, որ նա մասամբ ապահովացնում էր նրանց զաղտնապահութիւնը և մասամբ նրանց աւելի էր ենթարկում իր մտնաւոր իշխանութեանը։ Սրանով բացատրւում են այն վարմունքի չարժաւորութիւնները, որ նա ունեցաւ Ապիկիոէսի հետ, չարժաւորութիւններ, որ նրա դէպքում, աւելի հզօր էին, Իօնէի համար իր ունեցած սիրոյ պատճառով։

Շատ քիչ անգամ էր պատահել, որ նա երկար բնակուէր միևնոյն տեղում. բայց քանի որ նրա տարիքը բարձրանում էր, նա աւելի ձանձրանում էր նոր տեսարանների ոգևորութիւնից, և նրա պանդխտութիւնը, Կամպանիայի չքնաղ քաղաքների մէջ, այնքան երկարաձգուել էր, որ նա ինքն էլ զարմանում էր։ Իրօք, նրա հպարտութիւնը կաշկանդում էր նրա բնակավայրի ընտրութիւնը։ Նրա անյաջող դատապրութիւնը արտաքսում էր նրան այն այրեցեալ կլիմաներից, որոնց նա նախատում էր որպէս իր ժառանգական և իրաւացի ատելութեան. այն պետութիւնը, որ հեղգ և ընկճուած՝ այժմ կոչ էր եկել Հռոմի արծուի թևերի տակ։ Ինքը Հռոմը աւելի էր նրա գուռզ հոգուն. նա չէր սիրում այնտեղ տեսնել արքունիքի տարուիներին, որոնք կարող էին մրցել նրա հետ հարստութեամբ. նա չէր սիրում տեսնել պալատի հակալական չքեղութիւնը, որի ամէն ինքը

համեմատաբար մի չքաւոր էր երևում։ Կամպանիայի քաղաքները ունէին ամեն այն բաները, որ նրա բնութիւնը պահանջում էր – մի անդուլական կլիմայի զեղխութիւնները, և մի հեշտասէր լուսաւորութեան մտաւոր զարգացումները։ Նա, այնտեղ, հեռու էր իրենից մի աւելի մեծ հարուստի ներկայութիւնից. նա իր հարստութեան մրցակիցներ չունէր և նա ազատ էր մի կատարեալ արքունիքի լուռանութիւնից։ Քանի որ նա հարուստ էր, ոչ ոք չէր քրքրում նորա վարմունքի խորքը» նա չարունակում էր իր խաւար ընթացքը ապահով և անխռովար։

Հետաքրքրների անկծքն այն է, որ նրանք չեն սխրում մինչև որ նրանց զատրճռութեան ախորժակը սկսում է սկարանալ. նրանց ջերմաբուն երիտասարդութիւնը բաժանւում է անհամար փափագների մէջ— նրանց սրտերը ուժասպառ են լինում։ Եգիպտացին անց էր կացրել իր տարիքի վառքը խաղալով սիրոյ հետ. նրա անհանգիստ երևակայութիւնը կարելի է նրան սովորեցրել էր չափազանցել սիրոյ իսկական հրապոյրը, և նա վատնել էր մարդկութեան ամենից փառաւոր մասը առանց հասնելու իր փափագների առարկային։ Վաղուան զեղեցկուհին յաջորդել էր այսօրուայ զեղեցկուհուն, և մինչդեռ նա փնտռում էր իսկական նիւթիչ նպատակը, դրա սուտերները չփոթեցնում էին նրան։ Երբ երկու տարի նախ քան ներկայ թուականը, նա տեսաւ Իօնէին, նա, առաջին անգամը լինելով՝ երևակայեց գտած լինել մէկին, որին ինքը կարող էր սիրել։ Նա այդ ժամանակ կանգնած էր կեանքի այն կամուրջի վրայ, որտեղից մարդ պարզ տեսնում է մի վատնուած երիտասարդութիւն մէկ կողմում, և մերձեցող ծերութեան սուտերը միւս կողմում. մի ժամանակ, երբ մենք կարելի

Ձ ավելի քան երբէք անհնարին էր իրագործել կեանքի վայելքները, կեանքի՝ որի լաւագոյն մասը արդէն անցել է։

Այնպիսի մի անձկութեամբ և այնպիսի մի համբերութեամբ Արբակն էր նուիրել Իօնէի սիրտը չահելու, որ նա երբէք չէր ունեցել իր զուարճութիւնների մէջ, նա չէր բաւարարւում սիրելով. նա վաւաշոտում էր սիրուել։ Այս յոյսով նա հակել էր հելլենուհու մանկութեան բացուող վարդի վրայ։ Խմանալով թէ միտքը ինչ ազդեցութիւն ունի նրաց վրայ, որոնք սովորում են միտքը մշակել՝ նա կամաց կամաց աչխատել էր կազմակերպել Իօնէի հանճարը և լուսաւորել նրա միտքը։ Նա յոյս ունէր, որ Իօնէն այսպիսով կարող կը լինէր դնահատել նրա մէջ այն բանը, ինչ որ, իր կարծիքի համեմատ, ամենից մեծ իրաւունքն ունէր նրա սէրը գրաւելու—այսինքն մի բնաւորութիւն, որը, որքան էլ յանգաւոր և մալի լինի, հարուստ էր իր զօրութեան և չքեղութեան ինքնատիպ տարերքով։ Երբ նա զգաց թէ Իօնէն արդէն հասկանում է այդ բնաւորութիւնը, նա յօժարութեամբ թոյլ տուաւ, ոչ մինչև անգամ քաջալերեց նրան խառնուելու զուարճութեան հեզգ խնկարկուների մէջ. նա հաւատում էր որ Իօնէի հոգին, յարմար մի ավելի բարձր ընկերութեան, կը զգար Արբակի բացակայութիւնը և համեմատելով ուրիշների հետ կսկիծ պիտի տար նրան։ Նա մոռացել էր, որ ինչպէս արեւածագիկը արեւին, նոյնպէս երիտասարդութիւնը դառնում է դէպի երիտասարդութիւն։ Նա մոռացել էր այդ իրողութիւնը մինչև Գլոկուս չարժեց նրա նախանձը և նա հասկացաւ իր սխալը։ Այդ րոպէից, նրա վազուց խեղդուած սէրը առաւ մի ավելի կատաղի և մի ավելի

աղմկալի ուղղութիւն, թէև ինչպէս տեսանք նա դեռ չը գիտէր իր վտանգի մեծութիւնը։ Ոչ մի բան այնքան չէ բարձրացում սիրոյ հուրը, որչափ նախանձի մի քանի կաթիլ մատուցանում է նրան։ Այդ ժամանակ դա ստանում է մի ավելի վայրենի, մի ավելի անհանդիստ բոց. դա մոռանում է իր փափկութիւնը. դա այլ ևս քնքոյշ չէ. դա ստանում է առելութեան թանձրութիւնը, գազանութիւնը։

Արբակ վճռեց այլ ևս ժամանակ չը կորցնել զուշաւար և վտանգաւոր պատրաստութիւններով. նա վճռեց մի անելանելի արկելք դնել իր և իր հակառակորդների մէջև. նա վճռեց սիրել Իօնէի մարմինն. ոչ թէ իր ներկայ սիրոյ մէջ, որը այնքան ժամանակ մնուած և կերակրուած էր ավելի մաքուր յոյսերով քան լոկ կրքի յոյսերը, նա կը բաւարարւէր այդ տիրապետութեամբ։ Նա փափագում էր Իօնէի սրտին, հոգուն, ոչ նուազ քան նրա գեղեցկութեանը։ Բայց նա մտածում էր, որ երբ նա մէկ անգամ բաժանուեցաւ ամբողջ մարդկութիւնից, այդ յանդուգն ոճիրի պատճառով—երբ նա մէկ անգամ կապուեցաւ Արբակին մի հանգոյցով, որին չկարողութիւնը չէր կարող կոտրել, նա կը սիրտուէր իր մտքերը կեղծոնացնել նրա մէջ։ Այն ժամանակ նրա հնարագիտութիւնը կարող էր կատարելագործել իր յաղթութիւնը. նա հաւատում էր ինչպէս հռոմայեցիք և արիները, որ բռնի առնուած կալսերութիւնը կարելի էր կոչել ավելի փափուկ միջոցներով։ Այս վճիռը ավելի հաստատում էր նրա մէջ այն հաւատքով, որ նա ունէր դէպի ատաղների մարդարէութիւնը. նրանք վաղուց գուշակել էին նրան, որ այս տարին և մինչև անգամ ներկայ ամիսը տեղի կ'ունենար մի զարհուրելի

աղէտ, սպառնալով նոյն իսկ նրա կեանքին։ Նա քաշուած էր մի սրոչ և սահմանուած թուականի։ Նա վճռեց արբալաբար իր մահուան խարոյկի վրայ հաւատալ բոլոր այն բաները, որ թանկագին էին նրա հոգու մօտ։ Իր բառերով, եթէ նա պիտի մեռնէր, նա վճռել էր զգալ որ դեմ ապրել էր և որ Իօնէն նրանն էր եղած։

Գլուխ Թ.

Ինչ պատահեց Իօնէին Արբակի տանը։—Զարհուրելի թշնամու բարկութեան առաջին նշանը։

Երբ որ Իօնէն մտաւ եզիպտացու լայնածաւալ սրահը, նոյն տարտափը իջաւ նրա վրայ, որ ալրել էր նրա եղբօրը, Իօնէին էլ, ինչպէս նրա եղբօրը, այնպէս թուաց թէ մի ինչ որ զգուշացուցիչ և խորհրդաւոր բան կար այն զարհուրելի թևերական հրէշների անդորր և սպառոր երեսների մէջ. այդ արձանների վեհախառնական և անկիւրք կերպարանքների վրայ մարմարիոնով չատ լաւ նկարուած էր։

Եթովպացի բարձրահասակ դերին մի չարագուշակ ժպիտ արձակեց և նրան նշան արեց ներս գալու։ Սրահի կէս ճանապարհին նրան հանդիպեց Արբակ, հագած իր խնջոյքի զգեստները, որոնք փալում էին զոհարեղէններով։ Թէև դեռ բաւական լոյս կար, բայց ապարանքը, զեղխակեացների սովորութեան համեմատ, արուեստականապէս մթացուած էր և ճրագները սկսում էին իրանց խաղաղ և բուրալից լոյսը ձոխ յատակների և փղոսկրեայ առաստաղների վրայ։

«Հրաշագեղ Իօնէ», ասաց Արբակ թեքուելով նրա ձեռքին դիպչելու, «այդ քո գեղեցկութեան լոյսն է, որի առջև խաւարել է օրը—այդ քո աչքերն են, որ լուսաւորել են սրահները—այդ քո չունչն է, որ անուշահոտութեամբ լցրել է սենեակները»։

«Դուք չը պէտք է այդպէս խօսէք իմ հետ», ասաց Իօնէն ժպտալով, «դուք մոռանում էք, որ ձեր պիտութիւնը բաւական զարգացրել է իմ միտքը, որպէս զի ինձ անախորժ թուան իմ անձնաւորութեանս ուղղուած այս չնորհալի չողոքորթութիւնները։ Դուք էիք այն մարդը, որ ինձ սովորեցրիք արհամարհել գովեստները և այժմ դուք, ձեր սովորեցրածի հակառակ ձևով ուզում էք վարուել ձեր աշակերտուհու հետ»։

Իօնէի այս խօսքերի մէջ մի ինչ որ բան կար այնպէս համարձակ և այնպէս պլուիչ, որ եգիպտացին աւելի քան երբէք սիրահարուեցաւ նրա հետ և աւելի քան երբէք տրամադիր էր կրկնել նոյն յանցանքը. նա, ինչ և իցէ, պատասխանեց արագ և ուրախ և չտացեց խօսակցութիւնը վերսկսել։

Արբակ առաջնորդում էր նրան իր սան զանազան սենեակների միջից. Իօնէին, որի աչքը սովոր էր լոկ Կամպանիայի քաղաքների աննշան չքեղութիւնները տեսնելու, այնպէս թուաց, որ աչխարհս գանձերը հաւաքած էին այնտեղ։

Պատերի մէջ դրուած էին անգին նկարներ և լուսերը փալում էին Յունաստանի ամենափառաւոր գործ արձանների վրայ։ Սիւներով միջանկեալ վայրերում կացուած էին գոհարեղէնների սենեակներ, որոնց ամեն մէկը ինքը մի գոհար էր։ Պուները և չէմքերը չինուած էին ամենաթանկագին փայտից. սակի և գոհարներ թա-

վուած էին ամեն կողմ։ Երբեմն նրանք մյուսնակ էին այդ սենեակների մէջ, երբեմն նրանք անցում էին գերիների չարքերի միջից, որոնք լուռ կանգնած՝ Իօնէի անցնելու ժամանակ չոքում էին և նրան մատուցանում ապարանջաններ, շղթաներ, և գոհարներ, բայց Արքակը իզուր աղերսում էր նրան ընդունել այդ նուէրները։

«Ես յաճախ լսել էի», ասաց օրիորդը զարմացած, «որ դուք հարուստ էք, բայց ես երբէք չէի կարող երազել ձեր հարստութեան չափը»։

»Երանի թէ ես կարողանայի այդ բոլորից մէկ թագ չինել և նրանով զարդարել քո ճիւնափայլ ճակատը»։

«Աւաղ, ես պիտի ջախջախուէի այդ ծանրութեան տակ. ես կը լինէի մի երկրորդ Տարպէիա», պատասխանեց Իօնէն ծիծաղելով։

«Բայց դու չես արհամարհում հարստութիւնը, ով Իօնէ. չքաւորները չը պիտեն ինչ է նշանակում կեանքը։ Ոսկին աշխարհս ամենամեծ կախարդն է. դա իրականացնում է մեր երազները. դա մարդկանց տալիս է առաւածների զօրութիւնը—մի վեհութիւն, մի չքեղութիւն կայ հարստութեան մէջ. դա մեր ամենահզօր բայց և ամենախոնարհ գերին է։

Հնարաւէտ Արքակը ուզում էր շլացնել գեռատի հեզնեուհու աչքերը իր գանձերով և իր պերճախօսութեամբ. նա ուզում նրա մէջ ծնեցնել մի փափաք՝ այդ բոլորի սիրուհին լինելու. նա յոյս ունէր որ օրիորդը կը չփոթէը առաջաւածքը առաջաւածքի սիրոյ հետ, և նրա հարստութեան հմայքը կը նկնկներ նրա անճնաւորութեան վրայ։ Նոյն միջոցին, Իօնէն իր սրտում մի քիչ անհանգիստ էր զգում նրա չրթունքներից թռած սիրա-

լին խօսքերի համար, մանաւանդ որ նա մինչև վերջին ժամանակները կարծես միշտ արհամարհած էր այն պաշտօղութիւնը, որով մարդիկ վերաբերում են դէպի գեղեցկութիւնը. և այն փափուկ ճարպիկութեամբ, որ կինը միայն ունի, նա աշխատում էր պաշտպանուել ուշադրութեամբ նշան առնուած նետերի դէմ և ծիծաղելով կամ խօսելով փոխել նրա հրատապ խօսքերի նշանակութիւնը։ Ոչ մի բան աշխարհիս վրայ այնքան գեղեցիկ չէ, որչափ այդ ձևի պաշտպանութիւնը. դրա մէջ կայ այն աֆրիկեցի կախարդի հմայքը, որ ասում էր թէ՝ մի փետուրով կարող է թեքել քամու հոսանքը։

Եղիպտացին գերում և հարբեցնում էր նրա չնորհքով և աւելի քան նրա գեղեցկութեամբ. նա չատ դժուարութեամբ էր կարողանում զսպել իր յուզմունքները. ուժգ, փետուրը լոկ զօրութիւն ունէր դիմադրելու ամառնային գեփիւռներին, իսկ փոթորկի համար դա մի խաղ կը լինէր։

Մինչդեռ նրանք կանգնած էին սրահներից մէկի մէջ, որ չրջապատուած էր սպիտակ և արծաթաթել աուեղործութիւններով, եղիպտացին յանկարծ ծափ զարկեց և որպէս թէ կախարդութեամբ մի խնջոյքի սեղան բարձրացաւ յատակից, նրա հետ միասին և Իօնէի առաքելի մօտ բարձրացաւ մի գահ, կարմիր ամպհովանիով ծածկուած և մխիթարի ժամանակ վարագոյրների եռանից հնչեց մի անբերելի և ամենափափուկ երաժշտութիւն։

Արքակ նստեց Իօնէի առաքելի մօտ—և երեխաներ, փոքրիկ և գեղեցիկ ինչպէս սիրոյ աստուածը, ծառայում էին սեղանակիցներին։

Ընթրիքը վերջացաւ. երաժշտութիւնը հնչեց աւելի

ցած և զսպուած մի եղանակ և Աբրակ այսպէս խօսեց իր զեղեցիկ հիւրին։

«Արդեօք այս խաւար և անհասանալի աշխարհում, դու երբ և իցէ չես վախեցել, ով իմ աչակերտուհի, նայել ապագայի մէջ—դու երբ և իցէ չես ցանկացել բարձրացնել նրա վարագոյրը, և պարկանների ափերի վրայ սեանել լինելիք բանների սաուերային կերպարանքները։ Որովհետև լոկ անցեալը չէ որ ունի իր ոգինները. ամեն մի դէպք որ պիտի տեղի ունենալ նոյնպէս ունի իր ուրուականը, իր սաուերը. երբ որ ժամը գալիս է, այն ժամանակ կեանք է մանում դրա մէջ, սաուերը մարմնանում է և քայլում է աշխարհի վրայ։ Այսպէս ուրեմն անդրդուելիզմանալին աշխարհում կան երկու անչօչափելի և հոգևոր բանականներ—գալիք բանների և եղած բանների։ Եթէ մենք մեր դիտութեամբ կարողանանք մուտք գործել այդ երկրի մէջ, մենք կը սեանենք թէ մկը և թէ մլուսը, և կը սովորենք, ինչպէս ես սովորել եմ, ոչ միայն մեռածների գազանիքները, այլ և կենդանիների ճակատագիրը»։

«Ինչպէս, դու սովորել ես. մթթէ կարող է դիտութիւնը մինչև այդպէս հասնել։

«Կուզես փորձել իմ դիտութիւնը, Իօնէ, և սեանել ճակատագրիդ ներկայացումը։ Դա մի գրաման է սեվ կենդանի քան Նաքլէնեանը. ես պատրաստել եմ այդ ներկայացումը քեզ համար, եթէ ուզես կարող ես սեանել թէ սաուերները ինչպէս են կատարում իրանց գործերը։

Հելլենուհին դողդողաց. նա մտածեց Գլոկուսի մասին և զգալով հանդերձ հաւաչեց. արդեօք նրանց ճակատագրերը միացած կը լինէին։ Կէս թերահաւատ, կէս

հաւատալով, կէս անարձակ, կէս վախենալով իր ստորիներնակ հիւրնկալի խօսքերից, նա մի քանի րոպէ լուռ մնաց և յետոյ պատասխանեց.

«Դա կարող է բարկացնել—կարող է սարսափեցնել մարդու. ապագայի դիտութիւնը կարող է զառնացնել ներկան։

«Ո՛չ, այդպէս չէ, Իօնէ։ Ես ինքս նայել եմ քո ապագայ բախտին և քո ապագայի պլինները հրճուում են Ելիսեան պարտէզներում. վարդի և ամփոփելի մէջտեղ նրանք պատրաստում են քո անուշիկ ճակատագրի պատկերները և Պարկանները, այնքան խիստ դէպի ուրիշ անհատներ, քեզ համար լոկ հիւսում են երջանկութեան և սիրոյ ոստայնը։ Կուզես ուրեմն գալ և սեանել քո ապագայ կեանքը, որպէս զի հիմիկուանից կարողանաս վայելել դրան։

Գարձեալ Իօնէի սիրտը մրմնջաց «Գլոկուս». նա մի կէս լսելի ձայնով յարմնեց իր հաւատութիւնը և եղիսաբացին վեր կենալով իր տեղից բռնեց նրա ձեռքը և առաջնորդեց ճաշարանի միջով. վարագոյրները վեր քաշուեցան կարծես կախարդական ձեռքերով և երաժշտութիւնը գարձաւ աւելի բարձրաձայն և աւել ուրախ. նոքա անցան մի շարք սիւների մօտից, որի իւրաքանչիւր կողմում չաորուհիները ցայտեցնում էին իրանց անուշաբոյր ջուրը օդի մէջ. նրանք իջան պարտէզը լայն և ցած սանդուխքներով։ Իրիկունը սկսուել էր. լուսինը բարձրացել էր երկնքի վրայ և այն քաղցրիկ ծաղիկները, որ ցերեկը քնում են և անպատմելի լոյսերով լցնում են դիշերուայ զեփիւռները, անխնայ ձեռքով թափուած էին ծառուղիների վրայ կամ ժողովուած զամբիւղների մէջ, դրուած էին որպէս նուէրներ

այն բազմաթիւ արձանների ոտքերի առջև, որոնք փայլում էին նրանց անցքի աջ և ձախ կողմերում։

«Ո՞ւր ես ուզում տանել ինձ, Արբակ», ասաց Յոնէն զարմացած։

«Ահա այնտեղ», ասաց նա, ցոյց տալով մի փոքրիկ չինուհիին հեռանկարի ծայրին։ «Դա Պարկանեբին նուիրուած մի տաճար է—մեր ծէսերը պահանջում են այդպիսի մի սուրբ վայր»։

Նրանք մտան մի նեղ սրահ, որի ծայրում կախուած էր մի սև վարագոյր։ Արբակ բարձրացրեց վարագոյրը. Յոնէն մտաւ և ինքն իրան տեսաւ չրջապատուած կատարեալ մթութեամբ։

«Մի վախեցար», ասաց եպիսկոպոսին, «անմիջապէս լոյս կը լինի»։ Մինչդեռ նա խօսում էր մի փափուկ և կարմիր լոյս սկսեց աստիճանաբար տարածուիլ նրա չորս կողմը. այդ լոյսով Յոնէն տեսաւ, որ ինքը գտնուում էր մի չափազանց մեծութեամբ սենեակի մէջ, որի ամեն կողմում կախուած էին սև վարագոյրներ. նոյն գոյնի պատառներով ծածկուած մի նստարան գտնուում էր նրա մօտ։ Սենեակի մէջ տեղում կար մի փոքրիկ սեղան, որի վրայ դրուած էր մի բրոնզեայ եռոտանի։ Մէկ կողմում հաստաքարի մի բարձր սիւնի վրայ դրուած էր մի հրակայական ղլուխ ամենատես մարմարիոնից, որը, իւր ճակատը չրջապատող ցորենի հասկերի պսակով, ներկայացնում էր մեծ եղիպտական աստուածուհին, Արբակ կանգնեց սեղանի առջև. նա դրել էր իր ծաղկեպսակը չիրիմի վրայ և ղբաղուած էր ածելով մի պղնձեայ ամանի պարունակութիւնը եռոտանու մէջ. յանկարծ այդ եռոտանու միջից ցատկեց մի կապոյտ, ալաքանման և երերուն բոց. եղիպտացին յետ քաշուեցաւ Յոնէի կողքին և

մրմնջաց մի քանի բառ մի լեզուով, որ նրա ականջին բոլորովին անծանօթ էր. սեղանի եռանի վարագոյրը սկսեց դողդողալով այս ու այն կողմ չարժուիլ—դա կամաց կամաց բաժանուեցաւ և այն ձեղքի մէջ որ բացուեցաւ, Յոնէն տեսաւ մի անորոշ և ժժգոյն տեսարան. դա աստիճանաբար աւելի պարզուեցաւ և պայծառացաւ. վերջ ի վերջոյ նա այնտեղ տեսաւ ծառեր, գետեր, մարդեր և ամենաճոխ երկրի գեղեցիկ պէսպէսութիւնները։ Վերջապէս, այդ տեսարանի առջև սահեց մի մեալլ ստուեր. դա կանգ առաւ Յոնէի դիմաց. կամաց կամաց միևնոյն դիւթութիւնը սկսեց ներգործել նրա վրայ, որ ներգործել էր ամբողջ տեսարանի վրայ. դա ստացաւ ձև կերպարանք և ահա նրա ձևի և նրա կերպարանքի մէջ Յոնէն տեսաւ ինքն իրան։

Յետոյ այդ ուրուականի եռանի տեսարանը անհետացաւ և դրա փոխանակ երևաց մի չքեղ պալատ. դրա սրահի կեդրոնում բարձրացաւ մի գահ և գերիների և թիկնապահների անորոշ ձևերը չարուած էին դրա չուրջը, և մի գունատ ձեռք պահել էր գահի վերև թագի նմանուութեամբ մի բան։

Այժմ երևաց մի նոր դերակատար. նա գլխից ոտք հագած էր մի սև պատմուճան—նրա երեսը քօղարկուած էր—նա չոգել էր տաւերալին Յոնէի ոտքին—նա բըռնած էր նրա ձեռքը—և ցոյց էր տալիս գահը, որպէսզի Յոնէն հրաւիրում լինէր բազմելու։

Հելլենուհու սիրտը բուռն կերպով բաբախում էր։ «Ուզում ես որ տաւերը բանայ իր երեսը» մրմնջաց մի ձայն նրա ականջին—Արբակի ձայնը։

«Ա՛, այո՛», պատասխանեց Յոնէն, կամաց։

Արբակ բարձրացրեց իր ձեռքը—ուրուականը կար-

ձեռ ցած ձգեց այն վերարկուն, որ ծածկում էր նրա կերպարանքը—և Յոնէն մի ճիչ արձակեց—Աբրահն էր որ այդպէս չոքել էր նրա առջև։

«Այս է իրօք քո ճակատագիրը», ասում էր մրմնջալ եղիազարու ձայնը նրա ականջին։ «Եւ քեզ համար վըճռուած է Աբրահմի տարբը լինել»։

Յոնէն ցնցուեցաւ—ահ վարագոյրը ծածկեց այդ ֆանտաստիագօրիան. և Աբրահը ինքը—իսկական, կենդանի Աբրահը ընկած էր նրա ոտքերի առջև։

«Ո՛հ, Յոնէ», ասաց նա, նայելով նրա երեսին սիրաբաբերք աչքերով, «ահանջ դիր մի մարդու ձայնին, որ երկար և իզուր մաքառել է իր սիրոյ դէմ։ Ես պաշտում եմ քեզ։ Պարիտները սուտ չեն խօսում—քեզ համար վճռուած է խմս լինել—ես փնտռել եմ ամբողջ աշխարհը և ոչոքի չեմ գտել քեզ նման։ Իմ մանկութենից ի վեր ես միշտ յառաջացել եմ քեզ նման։ Ես նրագում էի, մինչև այն բաղէն երբ քեզ գայ—ես զարմնում եմ և ափսոսում եմ, որ դու ես։ Երեսդ մի զարձնիր ինձանից, Յոնէ. այլ ես մի մտածիր իմ մասին ինչ որ առաջ խորհել ես. ես չեմ այն պաղ, անզգայ և մեռյալ մարդը՝ ինչպէս քեզ թուացել եմ։ Կինը երբէք չի ունեցել մի սիրական այնպէս անձնուէր, այնպէս սիրավառ ինչպէս ես կը լինեմ Յոնէի համար։ Մի աշխատիր զուրս գալ իմ ձեռքից. ամէն—ես ինքս բանում եմ իմ ձեռքը։ Ա՛ս այդ ձեռքը ինչպէս ուզում ես—լաւ, այդպէս լինի։ Բայց մի մերժիր ինձ Յոնէ—մի մերժիր առանց խորհելու—մտածիր ինչ ուժ է քո գօրութիւնը մի մարդու վրայ, որին կարող ես այսպէս փոխել։ Ես, որ ոչ մի մահկանացուի առջև չեմ չոքել, չոքում եմ քո առջև։ Ես որ հրամայել եմ Պարիտների վրայ, քո ձեռքից սպասում եմ իմ

գառամբիծը։ Յոնէ, մի զղջար, զու իմ թագուհին ես—իմ աստուածուհին ես, եղիր իմ հարսը։ Ինչ փափագ որ կարող ես ունենալ կը կատարուի։ Աչքերդի ծայրերը կը սպասարկեն քեզ—փառքը, գօրութիւնը, ճախութիւնը քո կենդանութեան կը լինեն։ Աբրահ ոչ մի փառասիրութիւն չի ունենալ քեզ հնազանդելու պարծանքից զատ։ Յոնէ, այդ աչքերը զարձրու իմ երեսին—չնայիր ինձ քո ժպիտը։ Ահ է իմ հոգին երբ քո երեսդ ծածկուած է նրանով—փայլիր իմ վրայ, իմ արեւս—իմ երկինքս—իմ ցնծութիւնս—Յոնէ, Յոնէ. մի մերժիր իմ սէրը»։

Միանգամ, և այս սարսափելի և ապօրինակ մարդու ձեռքում, Յոնէն զուռ երկիւղ չէր զգում նրա գործածած լեզուի յարգանքը, նրա ձայնի փափկութիւնը վասնզութիւն էին ներշնչում նրա մէջ. և իր անարատութեան մէջ նա զգում էր իր պաշտպանութիւնը։ Բայց նա չէր խաւած էր և զարմացած. մի քանի րոպէ անց նա կարողացաւ բնական ոյժ գտնել պատասխանելու։

«Վեր կաց Աբրահ», նա ասաց վերջապէս. և նա նրից առաւ նրան իր ձեռքը, բայց զարձնել չուաւ երես թաչից՝ երբ զգաց նրա շրմունքների տրակէզ հպումը, որ թիւնը։ «Վեր կաց և եթէ զու կատակ չես անում, և եթէ քո խօսքերը լուրջ են»։

«Եթէ». ասաց նա փափկութեամբ։

«Լաւ, ուրեմն, լսիր ինձ. զու եղել ես իմ խնամակալը, իմ բարեկամը, իմ ուսուցիչը. քո այս նոր պաշտամունքը չուաւ, երբ տեսաւ որ նրա ան աչքերը փայլատրից չուաւ, երբ տեսաւ որ նրա ան աչքերը փայլում էին սիրոյ կատաղութեամբ—«մի մտածիր որ ես արհամարհում եմ—որ ես չեմ զգաշուում, որ ես ինձ մի

պատիւ չեմ համարում այս սէրը. բայց ասա—կարող ես լսել ինձ առանց բարկանալու»։

«Այո, նոյն իսկ եթէ քո բառերը փայլակներ լինէին և չանթահար անէին ինձ»։

«Ես սիրում եմ ուրիշին» ասաց Իօնէ, չկընելով բայց անյողդողդ ձայնով։

«Ատոուածներ—ժպիր, գոռաց Արբակ վերկենալով. «մի յանդգնիր այդ ասել ինձ «մի յանդգնիր ծաղրել ինձ.—անկարելի է։—Ո՛ւմ ես տեսել դու—ում ես ճանաչել։ Ո՞հ Իօնէ, դա քո մի հնարագիտութիւնն է, քո կանացի ճարպիկութիւնը—դու ուզում ես ժամանակ շահել. ես զարմացրի և սարսափեցրի քեզ։ Արա՛ ինձ, ինչ որ ուզում ես—ասա, որ ինձ չես սիրում. բայց մի ասիր որ ուրիշին ես սիրում»։

«Լաւ, սկսեց Իօնէն. և յետոյ ահաբեկ նրա յանդգնութեան և անսպասելի բռնութիւնից, նա սկսեց արտասուել։

«Արբակ մօտեցաւ նրան—նրա չունչը կատաղի ջերմութեամբ ընդդիմում էր նրա թուչը. նա փաթթեց իր թևերը նրա չուրջը—Իօնէն դուրս թռաւ նրա գրկից։ Այդ մաքառման մէջ մի յուշատետր ընկաւ նրա ծոցից. Արբակը տեսաւ և վեցրեց այդ—դա այդ առաւօտ Գլոկուսի ուղարկած նամակն էր։ Իօնէն սարսափից կիսամահ ընկաւ նստարանի վրայ։

Արբակի աչքերը արագ լափեցին բոլոր նամակը։ Հելլենուհին չէր յանդգնում նայել նրա երեսին. նա չը տեսաւ այն մռայլ գոյնը, որ ծածկել էր նրա կերպարանքը—նա չը նկատեց նրա չանթիչ յօնքերը, ոչ էլ նրա չրթունքի դողալը, ոչ էլ այն ցնցումները, որ ուռեցնում են նրա կուրծքը։ Նա մինչև վերջը կարդաց

նամակը և լուռ, երբ նամակն ընկաւ նրա ձեռքից, նա ասաց մի կեղծ անդորրութեան ձայնով։

«Արա գրողն է այն մարդը՝ որին սիրում ես»։

Իօնէն հեկեկում էր բայց չէր պատասխանում։

«Խօսիր», նա աւելի ճչաց քան ասաց։

«Այո՛, այո՛»։

«Եւ նրա անունը—այստեղ գրուած է—նրա անունն է Գլոկուս»։

Իօնէն, կծկելով իր ձեռքերը, նայում էր չորս կողմը, որպէս թէ փախչելու մի ճանապարհ գտնելու համար։

«Ուրեմն լաւ լինէ», ասաց Արբակ, իր ձայնը ցածացնելով և դրեթէ մրմնջալով. «դու աւելի չուառով կը մահնես քո գերեզմանը՝ քան նրա բազուկների մէջ։ Ի՛նչ, դու մոռացում ես որ Արբակը թոյլ կը տայ այսպիսի մի չնչին յոյնի իր հակառակորդը լինել։ Ի՛նչ, դու մոռանում ես, որ նա հակել է պատուի վրայ, որ հասնելուց մի ուրիշի առյ։ Գնդեցիկ չիմար—ոչ։ Դու լաւ ես—ամբողջովին—մինչև խիլ. և այսպէս—այսպէս ես բռնում և պահանջում եմ քեզ»։ Այս ասելով նա բռնեց Իօնէին իր թևերի մէջ. և այդ կատաղի մազիլի ոյժը աւելի վրէժխնդրութեան էր պատկանում քան սիրոյ։

Բայց Իօնէին յուսահատութիւնը տուել էր գերբնական ոյժ. նա նորից ազատուեցաւ նրա ձեռքից—նա նետուեց դէպի սենեակի այն կողմը, որ կողմից էր—նա կէս չափ քաշեց վարագոյրը—Արբակ բռնեց նրան—նորից նա դուրս պրծաւ նրա գրկից—և ուժասպառ մի բարձր ճիչ արձակելով ընկաւ այն սիւնի տակ, որի վրայ գրուած էր եղիպտական աստուածուհու գլուխը։ Արբակ

մի բոպե կանգ առաւ արդէօք թէ չունչ առնելու և վառ նորից նետուելոց իր զոհի վրայ։

Այդ բոպէին վարագոյրը պատուեց և եգիպտացին զգաց մի կատաղի և ուժեղ ձեռք իր ուսի վրայ։ Նա դարձաւ—նա տեսաւ իր առջև Պլոկուսի կայծակնացայտ աչքերը և Ապեկիդէսի մաշուած, դունատ, բայց սպառնացող կերպարանքը։ «Ա՛հ», մնչեաց նա նայելով մեկին միւսը, «ինչ ֆուրիա է ձեզ ուղարկել այսօր»։

«Առէք», պատասխանեց Պլոկուսը և նա անմիջապէս վաթսմոնուց եգիպտացուն։ Նոյն միջոցին Ապեկիդէս գետնից բարձրացրեց իր քրոջ, որ այժմ գրեթէ անկենդան էր. նրա այժր, սպառուած մի չափից դուրս ձգտուած մարքի պատճառով, չը բաւականացաւ իր քրոջը դուրս տանել, չը նայելով թէ արքան քնքոյշ էր նրա մարմինը. նա հեռանալով գրեց նրան նռատրանի վրայ և կանգնեց նրա մօտ մերկ դաշոյնով, նայելով Պլոկուսի և եգիպտացու մաքառումները և պատրաստ խրելու իր զէնքը Աբրակի կրծքի մէջ՝ եթէ նա յաղթող դառնար մաքառման մէջ։ Կարելի է աչխարհիս մէջ չը կայ մի բան այնքան կատաղի, որքան անասնական ոյժի մերկ և անօգնական պայքարը, երբ կատաղութիւնը չունի մի ուրիշ զէնք բացի նրանից, որ բնութիւնն է տուել։ Երկու հակառակորդներն էլ այժմ սեղմուած էին միմեանց գրկում և իւրաքանչիւրի ձեռքը որոնում էր միւսի կոկորդը. նոցա երեսները կնա էին քաչուել, կատաղի աչքերը փայլատակում էին, մկանունքները լարուած էին, երակները ուռած, շրմունքները բաժանուած և ատամները սեղմուած։ Երկու ոյժն էլ ահռելի էր քան սովորական մարդկանց ոյժը, որովհետև երկուսն էլ պետրուած էին անդադար բարկութեան բոցով. նրանք պտրտում էին,

պատում էին միմեանց չուրջը. նրանք ընկնում էին երբեմն այս և երբեմն այն կողմ, նրանք ձգձգում էին և չրջում իրենց սոսկալի արհնալի մեկ գլխից միւսը. — նրանք արձակում էին բարկութեան և վրէժի գոչիւններ. նրանք մերթ գալիս էին սեղանի առջև—մերթ սիւնի մօտ, ուր մաքառումը սկսել էր. նրանք բաժանուելան չունչ առնելու. Աբրակ չկռնացաւ սիւնին իսկ Պլոկուս մի քանի քայլ հեռու։

Ո՛վ հիւսուածոց աստուածուհի, գոչեց Աբրակ, գըրկելով սիւնը և իր աչքերը բարձրացնելով դէպի սրբազան պատկերը, որ գրուած էր գրա վրայ, «պաչպանիր քո ընտրեալին և յաղթիր քո վրէժխնդրութիւնը այս ինքնահնար պատուհասին չնչին աչակերտի վրայ, որ արբաղձական բռնութեամբ ապականել է քո հանդստավայրը և յարձակուել է քո ծառայի վրայ»։

Երբ վերջացրեց, կարծես աստուածուհու անդորր և անպին կերպարանքը յանկարծ սկսեց ցոլալ կեանքով. սև մարմարիոնի միջից, որով մի թափանցիկ քողի, դուրս եկաւ մի կարմիր և ալրող լուսատու գոյն. գլխի չուրջը պարում և ցոլանում էին կապտագոյն փայլակի չողեր. աչքերը դարձան գունատ կրակի գնդակներ և կարծես չանթահար և անատնելի բարկութեան արտայայտութեամբ յառուած էին յաղթ երեսին։ Սարսափած և անարեկ եղած այս յանկարծական և գերբնական պատահանով, որ տուեց իր հակառակորդի աղօթքին՝ Պլոկուս, որ բոլորովին ազատ չէր իր ազգի ժառանգական նախապաշարմունքներից, գունատուեց երբ տեսաւ մարմարիոնի այդ տարօրինակ և չարագուշակ կենդանացումը—նրա ծնկները զարհուրանք միմեանց. բռնուած մի երկնային երկիւղով նա կանգնեց իր թշնամու առջև

զարհուրած և չմած։ Արբակ նրան չունչ քաշելու ժամանակ չը տուաւ, որ նա թօթափէ այդ ընդարմացումը։ «Մեռիր, թշուառական», գոչեց նա որոտալից մի ձայնով և նա նետուեց յոյնի վրայ։ «Հզօր Մայրը քեզ պահանջում է, որպէս մի կենդանի զոհ»։ Այսպէս յանկարծակիի բերուելով՝ իր նախապաշարումից առաջ եկած առաջին ապշութեան մէջ, յոյնի ոտքը սայթաքեց ապակու նման հարթ մարմարիոնի վրայ և նա ընկաւ։ Արբակ իր ոտքը դրեց իր ընկած թշնամու կրծքին։ Ապէկիդէս, որ իր սրբազան պաշտօնի և Արբակի հետ ունեցած մերձութեան չնորհիւ սովորած էր չը հաւատալ ոչ մի գերբնական երևոյթի, մանաւանդ չէր եղած իր ընկերոջ ապշութեանը. նա յառաջ վազեց. նրա դաշոյնը փայլեց օդի մէջ. զգուշ եղիպտացին բռնեց նրա դաստակը մինչ դա իջնում էր և իր հզօր ձեռքի մէկ սեղմումով հանեց քահանայի ակար բռունցքով։ յետոյ մէկ բռունցքով նրան գետին տապալեց և մի բարձրաձայն և ցնծալից ոռնոց հանելով Արբակ չոչղոչացրեց իր դաշոյնը օդի մէջ։ Գլոկուս նայում էր իր մօտալուտ վտանգի վրայ անթարթ աչքով և մի ընկած գլադիատորի խիստ և արհամարհիչ անհոգութեամբ, բայց այդ ահաւոր վայրկեանին, յաւտակը չարժուեցաւ նրանց ներքև, մի արագ և խիստ ցնցումով. մի ոգի, աւելի ուժեղ քան եղիպտացու ոգին կոտրել էր իր բանտի դռները—մի հսկայ և ջախջախիչ զօրութիւն, որի առջև անզամալուծուում էր նրա բոլոր կիրքը և արուեստները։ Նա զարհնել էր—նա չարժուում էր—երկրաչարժի այդ զարհուրելի դէը—ծիծաղելով թէ մարդկային խաբէութեան կախարդութեան վրայ և թէ մարդկային կատաղութեան ոխի։ Ինչպէս մի Տիտան, որի վրայ քեռնուած են լեռները, դա զարհնել էր ատ-

լինների քնից,—դա չարժուում էր իր անհանգիստ անկողնի մէջ և ստորին աշխարհի անձաւները դղրդում և հառաչում էին նրա անդամների ծանրութեան տակ։ Իր զօրութեան և իր վրէժխնդրութեան վայրկեանին, ինքնահաւան կիսաստուածը խոնարհուեցաւ մինչև իր բուն կաւը։ Հեռու, հեռու տարածուած գետնի երեսով եկաւ մի խուլ և դղրդալից թնդիւն. սենեակի վարագոյրները չարժուեցան որպէս թէ փոթորկի հզօր չունչից սեղանը օրօրուեցաւ. եռոտանին պտոյտ եկաւ և մաքառողների գլխի վերև սիւնը դղրդաց և ծածանուեցաւ. աստուածուհու սև գլուխը երերուեցաւ և ընկաւ իր պատուանդանից.—և մինչդեռ եղիպտացին թեքուած էր իր կարծեցեալ զոհի գլխի վերև, մարմարեայ դունդը ուղղակի գալաւ նրա ուսի և վզի մէջտեղին. այդ զարկը, ինչպէս մահուան հարուածը, նրան գետին տապալեց, յանկարծ, մէկ անդամից, առանց ձայնի կամ չարժման, առանց կեանքի որևէ նշան թողնելու նրա վրայ. կարծես այն աստուածութիւնը, որին նա ամբարշտաբար կենդանացրել և օգնութեան էր կոչել, ջախջախել էր նրան։

«Երկիրը պաշտպանեց իր զաւակներին» ասաց Գլոկուս, կանգնելով իր անհատատ ոտքերի վրայ։ «Օրհնեալ լինի զարհուրելի ցնցումը»։ Եկէք երկրպագութիւն տանք աստուածների նախախնամութեանը»։ Գլոկուս Ապէկիդէսին օգնեց ոտքի կանգնելու և յետոյ դէպի վեր դարձրեց Արբակի երեսը։ Մահը կարծես արդէն հաստատուել էր նրա վրայ. արիւնը հոսում էր եղիպտացու շրթունքներից և վազում նրա դոնարազարդ զգեստների վրայ. նա մի անչունչ բանի նման ընկաւ Գլոկուսի բազուկներից և կարմիր հեղուկը ներկեց յատակի մարմա-

բնանը։ Նորից երկիրը ցնցուեցաւ. նրանց ոտքերի տակ նրանք սարսափեցան բռնել միմեանց. ցնցումը դադարից նոյնպէս յանկարծ՝ որչափ եկել էր. նրանք այլ ևս չը կեցան. Գլոկուա գիւղաքաղաքի վեր առաւ Խնդէին իր բազուկների մէջ և նրանք վախան այդ անտառը վայրից։ Երբ նրանք մտան պարակը, նրանք հանդիպեցին կանանց և զեղչների անկատար խմբերի, որոնք վախչամ էին դէպի ամէն կողմ. նրանց վայրուն և խընջոյքի զգեստները մի ծաղրալի հակապատկեր էին կազմում այդ ժամի անտաւար սարսափի հետ. նրանք ոչ մի ուշադրութիւն չը դարձրին օտարականների վրայ—նրանք պրպտած էին իրանց իսկական երկիւղը։ Տանելով սարսալ անդորրութիւնից լուսոյ, այդ այրեցնել և զաւաճան հողը նորից կործտում էր սպառնում։ Նրանց միջից բարձրանում էր միայն մէկ ազազակ. «Երկրաշարժը, Երկրաշարժը»։ Ասկիլիդէս և իւր ընկերները, առանց որևէ արգելքի հանդիպելու, անցան նոցա միջից. նրանք չը մտան ամն մէջ, այլ ծառուղիներից դէպի գած աճապարելով՝ գուրս գնացին մի նեղ. բայց գանից, և այնտեղ նստած մի վտքրիկ բարձրութեան վրայ, որ ծածկուած էր մանր կանանչ հալուէների առուերով՝ և լուանի լոյսի տակ նրանք անսան կուր աղջկայ կորցրած մարմինը,—նա դառնագին արտասուում էր։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Գլուխ Ա.

Պոմպէյենների ծագումը։—Առաջին կոպիտ մեքենայութիւնը, որ բոլ աշխարհի նոր Քաղաքը չինուեցաւ։

Կէսօրից քիչ առաջ էր և ծագումի մէջ վիճաւում էին թէ զոր ուղեցողները և թէ անգործները։ Ինչպէս այսօր Փարիզում, նոյնպէս այն ժամանակ Խաղխալի քաղաքներում, մարդիկ զրեթէ միշտ իրանց տներից դուրս էին ապրում։ Հասարակաց չինուածքները, ծագումը, պորտիկոները, բազնիքները, և նոյն իսկ սաճարները կարող էին հաճարուել նրանց իսկական տները, զարմանալի չէր ուրեմն, որ նրանք այդքան փութով էին զարդարում այդ սիրելի յաճախատեղիները. նրանք զղում էին նրանց համար մի տեսակ անալին գեղեցկութիւնք ինչպէս նաև հասարակական պարծանք։ Եւ իսկապէս չատ աչխոյժ էր Պոմպէյի ծագումի տեսարանը այդ ժամանակ։ Լայնածաւալ յատակի վրայ, որ կազմուած էր մեծ տափարակ մարմարիոնից, հաստատուած էին զանազան խումբեր և իսօսակցում էին այն աչխոյժ ձևով, որ տեղն մի քաղի հետ կցում է մի չարժում և որ գեռ բնորոչ է հարաւի ժողովուրդի մէջ։ Սիւնաչարի մէկ կողմում եօթը վտքրիկ խանութների մէջ նստել են տեղանաւորները, իրանց վայրուն կոյտերը դրած իրանց առջև. վաճառականներ և զանազան զգեստներով ծովային

մարդիկ խմբուած են նրանց խանութների չուրջը։ Մի ուրիշ կողմում զանազան մարդիկ ոտանները *) հագած հազնելով բարձրանում էին դէպի մի չքեղ շինութիւն, ուր դատաւորները արձակում էին արդարութեան վճիռները. սրանք օրէնսգէտներն էին. իրենց աչխոյժ, աչխատասէր ձևերով, չատախօսութիւններով, կատակներով, բառախաղերով, ինչպէս այսօր կարող էք տեսնել Ուէստմինստերում։ Հրապարակի կեդրոնում, պատուանդանների վրայ դրուած էին զանազան արձաններ, որոնց մէջ ամենից նչանաւորն էր Կիկերոնի չքեղ անդրին։ Պաւթի չուրջը շինուած էր դորիական մի կանոնաւոր և սիսեեմատիկ սիւնաչար և չատեր, որոնք դործի պատճառով կանուխ եկել էին հրապարակը, այնտեղ ուսում էին իրանց առաւօտեան թեյն ևկերակուրը, որ իսկական նախաճաչիկն էր. նրանք տաք տաք խօսակցում էին նախորդ դիչերուայ երկրաչարժի վրայ և նոյն միջոցին հացի կտորները թաթախում էին թոյլ դինու բաժակների մէջ։ Հրապարակի բաց տեղում դուք կարող էք նաև տեսնել մանր առևտրականներ, որոնք զբաղուած են իրանց արուեստներով։ Ամեն մի մարդ ցոյց է տալիս իր ժապաւէնները մի զեղեցիկ զեղչկուհու. մի ուրիշը մի առոյգ երկրագործի մօտ պարծենում է իր կօշիկների լաւ լատուքներով. մի երրորդը, մի տեսակ թափառաչրջիկ խոհարար, զեռ այնքան տարօրինակ իտալական քաղաքներում, տաք կերակուր էր մատակարարում անօթի որկորներին իր վաքրիկ և դիւրափոխադրելի վառարանից, մինչդեռ—բնորոշ մի հակապատկեր այդ ժամանակուայ խառնափնդոր աղմուկի և մարքերի—այդ բոլորին մօտիկ, մի ուսուցիչ բացատրում էր իր ապչած աչակերտներին լատիներէն քերականութեան տարերքը։ Մի պատչգամի մէջ, պորտիկօի վերև, ուր բարձրանում էին վայտեայ փոքրիկ սանդուխքով, կար մի ուրիչ խումբ. բայց քանի որ այստեղ գլխաւորապէս կատարուում էին փորումի անմիջական դործերը, այդ խումբը աւելի հանդարտ էր և աւելի լուրջ։

Յաճախ ցածի ամբոխը չարպանքով ճանապարհ էր տալիս այս կամ այն սենատորին, մինչդեռ նա ճեմում էր դէպի Աբամազդի տաճարը, որը բռնում էր փորումի մէկ կողմը և ծառայում էր սենատորների համար որպէս ժողովատեղի. նա ցուցասիրաբար և զիջանողաբար չարժում էր իր գլուխը այս կամ այն բարեկամի կամ կլիենտի համար, որին նա ճանաչում էր ամբոխի մէջ։ Խառնուած բարձրագոչ դասի զուարթագեղ զգեստների մէջ՝ տեսնում էին մերձակայքի առոյգ և կոպիտ երկրագործները, որոնք չտապում էին դէպի հասարակաց չեմարանները։ Տաճարի մօտ տեսնում էր յաղթական կամարը և մլուս կողմի երկար փողոցը՝ խռնուած բազմութեամբ։ Կամարի անկիւններից մէկի մէջ խաղում էր մի չատրուան, ուրախ զուարթ չողչողալով արևի ճառագայթների տակ և կամարի քիւից վեր կանգնած էր Կալիգուլայի բրոնզեայ ձիաւոր արձանը, կազմելով մի մեծ հակապատկեր ամառնային երկնքի հետ։ Սեղանաւորների խանութների հետ զեն էր այն չինութիւնը, որ այժմ կոչուում է Պանթէոն. և մի խումբ չքաւոր պոմպէյցիներ անցնում էին փոքրիկ վեստիբուլից,

*) Որովհետև օրէնսգէտները և կլիենտները իրանց պատրոնների հետ եղած միջոցին ոտքա էին հագնում, նոյն իսկ երբ դա այլ ևս գործնական չէր միւս քաղաքացիների մէջ։

ամեն մեկը իր թևի տակ դրած մի գամբիւղ. նրանք դիմում էին դէպի մի տափարակ վայր երկու սիւնի մէջտեղ, ուր քահանաները ծախում էին այն պաշարները, որ նրանք ազատել էին գնի սեղանից։

Հասարակաց շինութիւնների մեկի մէջ, որ յատկացուած էր քաղաքի գործերին, որիշապիրները աշխատում էին սիւների վրայ և դուք լսում էիք նրանց գործելու ձայնը, որ ամեն րոպէ աւելի բարձր էր հնչում քան ժողովրդի դղրդիւնը.—ա խ ն ե ր ը կ ի ս ա ա մ ն ա գ ի ե ն մ ի ն չ և ա յ ս օ ր։

Բոլորն, ուրեմն, միացած՝ ոչ մի բան չէր կարող դիմադրանգել ամրոխի զգեստների տոպրաճանների, ձեռքի և գաղմուճքի պէսպէսութիւնը.—ոչ մի բան չէր կարող դիմադրանգել չքնաղատես կնոջ ազմուկը, զուարթութիւնը, ոգեորութիւնը և գոռում գոչումը։ Դուք տեսնում էիք այնտեղ մի հրաշագեղ և տենդային լուսաւորութեան բիւրաւոր նշոյլները,—ուր զուարճասիրութիւնը և վաճառականութիւնը, ծուլութիւնը և աշխատասիրութիւնը, ագահութիւնը և վատասիրութիւնը խառնում էին մեկ վէմ մէջ իրանց բազմազան՝ տարոյն ներդաշնակ տոհանքները։

Սրահազգի տաճարի տանդուխքների դիմաց, թեւերը ծալած, արեամարհող յօնքերը խոժոռած, կանգնած էր լիտուն տարեկանի մօտ մի մարդ։ Նրա գլուխը զարմանալի կերպով պարզ էր—ոչ այնքան մարդկային կողմից, որքան այն գարդերի բացակայութեան, որոնք գործածական էին ամեն դասակարգի պամպէյցիների մէջ—գործածական, մասամբ յուսամոլութեան և մասամբ էլ այն պատճառով, որ այդ գարդերը չինուած էին այնպիսի ձևերով, որոնք ամենից չատ զօրաւոր էին համարում դիմադրելու կախարդութեան կամ չար աչքի ազդեցութեանը *)։ Նրա ճակատը բարձր էր և ճաղատ. այն մի քանի փնջակները, որ մնացել էին նրա գլխի եռեւում, այժմ ծածկուած էին նրա վեզարի տակ, որը մի մատն էր կազմում նրա հագուստի. դա ուզուած ժամանակ քաշում էր գլխի վրայ կամ ցած էր թողում, և այժմ կիսով չափ պաշտպանում էր նրա գլուխը արևից։ Նրա զգեստների գոյնը թուխ էր, մի գոյն որ Պամպէյում ժողովրդականութիւն չունէր. բոլոր ծիրանու և կարմրի խառնուրդը կարծես ուշադրութեամբ արուարաստած էին նրա հագուստի մէջից։ Նրա գօտու մէջ կար մի թանաքաման, որ մի կեռով ամրացրուած էր նրա մէջկապից, կար նոյնպէս մի սաիլուս (կամ գրելու գործիք) և սովորական ծաւալից մեծ մի լուչաւետար։ Նշանաւոր բանն այն էր, որ նրա գօտու մէջ չը կար ոչ մի քսակ, մի առարկայ որ մէջկապի անբաժան ընկերն էր, նոյն իսկ երբ նա ունենում էր գաւառ լինելու տարաբախտութիւնը։

Յաճախ չէր պատահում որ եսասէր պոմպէյցիները զբաղուէին իրանց դրացու կերպարանքով կամ գործերով. բայց մի լինչ որ բան կար այս հանդիսաւոր դառն և անարդական աչքի և չրթունքի մէջ, մինչդեռ նա այդպէս կանգնած դիտում էր կրօնական թափօրը, որ անցնում էր տաճարի տանդուխքներից, որ չէր կարող չը գրաւել չատերի ուշադրութիւնը։

«Ո՞վ է այդ ցինիկը», հարցրեց մի վաճառական իր ընկեր գոհարավաճառից։

*) Տես բացատրութիւն (Ա.) վերջը։

«Նա Օլինթոսն է», պատասխանեց ոսկերիչը, «մի հռչակաւոր նաւավրեայ»։

Վաճառականը ցնցուեցաւ։ «Մի զարհուրելի ա-զանդ», ասաց նա, ցած ու երկչոտ ձայնով։ «Ասում են, որ երբ դիւերները նրանք հաւաքւում են, նրանք միշտ սկսում են իրանց ծիսակատարութիւնը՝ մի նորածին երեխայ մորթելով. նրանց դաւանութեան մէջ կայ նաև սատանաձի ընդհանրութիւնը—թշուառականներ։ Սատանաձի ընդհանրութիւն. ինչ կը գար վաճառականների կամ ոսկերիչների գլխին եթէ այդպիսի գաղափարները ընդունելութիւն գտնէին ժողովրդի մէջ»։

«Դա շատ ճշմարիտ է», ասաց ոսկերիչը. «դրանից զատ, նրանք գոհարներ չեն կրում իրանց վրայ և մի օձ տեսնելուց նզովք են կարդում. և Պոմպէյում բոլոր մեր զարդերը օձաձև են»։

«Նկատեցէք միայն խնդրեմ», ասաց մի երրորդը, որ բրոնզագործ էր, «ինչպէս այդ նաւավրեային խէթ խէթ նայում է գոհարեր թափօրի բարեպաշտութեանը։ Վստահ եղիր, որ նա անեծք է կարդում տաճարի վրայ։ Գիտես, Կելլինուս, որ այս մարդը, անցնելով իմ խանութի առջևից և տեսնելով որ ես պրաղուած էի Մինեռվայի մի արձանով, կերպարանքը խոժռեցրեց ինձ ասաց, որ եթէ դա մարմարիոնէ լինէր, ինքը պիտի կոտրէր այդ, բայց բրոնզից լինելով չէր կարող։ «Աստուածոհուն կոտրէ», ասացի ես։ «Աստուածոհի», ասաց անատոուածը. «դա մի դև է—մի չար ոգի է»։ Յետոյ նա չարունակեց իր ճանապարհը անիծելով։ Կարելի է մտքէ այսպիսի բաների հանդուրժել։ Ինչ զարմանք որ երկիրը այնպէս սարսափելի կերպով ցնցուեցաւ երէկ գիշեր, կամենալով հետս վրնտռել անատուածին իր կրծքի վրայից. Անատուածին, ասացի, աւելի վատ—գեղարուեստը ծաղրողներ են։ Վայ մեզ բրոնզագործներիս, եթէ այսպիսի մարդիկ պիտի լինեն ընկերութեան օրէնսդիրները»։

Սրանք են այն տրձիգները, որոնք այրեցին Հռոմը Ներոնի ժամանակ», հառաչեց ոսկերիչը։

Մինչդեռ այս տեսակ էին այն բարեկամական նկատողութիւնները, որ մարդիկ անում էին դրդուած նաւավրեացս ձևից և հատատքից, ինքը Օլինթոս զբաղ էլ ինչ ազդեցութիւն էր գործել. նա նայեց իր չուրջը և տեսաւ յարաճուն ամբոխի անձկալից երեսները. նա մի րոպէ նրանց վրայ ձգեց մի ակնարկ, որի մէջ կար նախ յանդգնութիւն և ապա մի զիջողութեան արտայայտութիւն, և յետոյ իր չուրջը հաւաքելով իր վերարկուն՝ նա անցաւ նրանց միջից և լսելի ձայնով մրմնջաց. «Մոլորուած կառապաններ—երէկ զիշերուայ ցնցումը բաւական ազդարարութիւն չեղաւ ձեր համար։ Ասող, ինչ պիտի անէք զատաստանի օրը»։

Ամբոխը լսեց այս չարագուշակ բառերը և նրանց տակաւ տարբեր մեկնութիւններ—ամեն մարդ իր տպաւորութեան և երկիւղի երանգների համեմատ. բայց բոլորը համաձայն էին մէկ կէտի վրայ, այն է թէ այդ բառերը պարունակում էին մի սոսկալի նզովք։ Նրանք նկատում էին քրիստոնեաներին որպէս մարդկութեան թշնամիներ. այն մակառուններն որ մարդիկ չսալում էին նրա վրայ, և սրանց մէջ «Անատուած» բառը ամենից հատանելին և ամենից յաճախ գործածուածն էր, կարող են ծառայել մեզ զգուշացնելու, մեզ որ հետևողներն ենք այժմ յաղթական նոյն կրօնքի, թէ ինչպէս մենք պիտի խոյս տանք զաղափարը հալածելուց, հալածանք,

որին Օլինթոս այն ժամանակ ենթարկուած էր. այս օրինակը կարող է մեզ զգուշացնել, որ մենք անարդարական անուններ չը տանք այն մարդկանց, որոնց դաշափարը տարբերւում է մերից—նախատում ենք, որին ենթարկուած էին մեր հաւատքի հայրերը։

Երբ Օլինթոս խրոխտ քայլուածքով անցաւ ամբոխի միջից և հասաւ փորումի նուազ լաճախանի ելքին մէկին, նա նկատեց, որ մի գունատ և անճկալից կերպարանք, աչքերը յառած նայում էր նրան. նա անմիջապէս ճանաչեց Նայողին։

Փաթաթուած մի պալլիումի մէջ, որը մասամբ ծածկում էր նրա արբազան զգեստները, երևոսարդ Ալեքսիդէսը նայում էր այդ նոր և խորհրդաւոր դատաստանին, որին ինքը մի ժամանակ կէս հաւատացող էր եղած։

«Արդեօք սա էլ մի խաբեբայ է։ Արդեօք այս մարդն էլ, այնքան պարզ իր կեանքի, իր հաղուստի, իր ձևերի մէջ, Արքակի նման համբերութիւնը մի ծածկոց է չինել հեշտասիրութիւնը թագցնելու։ Արդեօք սրան մէջ էլ վհատալի վերարկուն քօղարկում է պռունկի մեղութիւնները»։

Օլինթոս, տեսնելով ամեն դատակարգի մարդկանց և իր հաւատքի ոգևորութեան հետ միացնելով մի խորին և վարձառու ծանօթութիւն իր համանմանների կարևի է նրա կերպարանքի արտայայտութիւնից դուշակել թէ ինչ էր անցնում քահանայի կրծքի մէջ։ Նա Ալեքսիդէսի նայուածքի վրայ սևեռեց մի հաստատ աչք, և մի անդորր, բայց և անկեղծ ձայնով։

«Խաղաղութիւն ընդ քեզ», ասաց նա. ողջունելով Ալեքսիդէսին։

«Խաղաղութիւն», արձագանք տուեց քահանան այնպիսի մի դատարկ ձայնով, որ նա անմիջապէս մտաբ նայողութեան սիրտը։

«Այդ ողջոյնի մէջ», չարունակեց Օլինթոս, «ամեն բարի ցան պարունակուած է—առանց առաքինութեան դու չես կարող խաղաղութիւն ունենալ։ Ծիածանի նման, խաղաղութիւնը չենում է աչխարհի վրայ, բայց նրա կամարը կորուած է երկնքի մէջ։ Երկինքը ողողում է դրան լուսոյ երանգներով—դա ծնում է արտասուքների և ամպերի մէջ—դա անդորրութիւն է Յաւիտենական Արեգակի—դա անդորրութեան առնաւատչեան է—դա նշանն է մի մեծ ուխտի Աստուծոյ և Մարդու մէջ։ Այսպիսի խաղաղութիւնը, ով երիտասարդ, հոգու ժպիտն է. դա մի ճառագայթ է անմահ լոյսի հետաւոր պարտնակից։ Խ ա ղ ա ղ ո ւ թ ի ւ ն ընդ քեզ»։

«Աւաղ», ասեց Ալեքսիդէս, բայց երբ տեսաւ հետաքրքիր անցորդների նայուածքը, որոնք կանգ էին առնում լսելու թէ ինչ կարող էր լինել խօսակցութեան նիւթը մի յայտնի նազովրեցու և Իսխի մի քահանայի միջև, նա կարճ կարեց, և լեռայ ցած ձայնով ասաց—«Մենք չենք կարող խօսակցել այստեղ, ես կը հետևեմ քեզ դէպի գետի եզերքը. այնտեղ մի ճմեռվիք կայ, որ այս ժամանակ սովորաբար դատարկ է մարդկանցից»։

Օլինթոս հաւանութեան նշան արեց։ Նա անցաւ վաղորդների միջից արագ քայլերով, բայց սուր և չրջանկատ աչքով։ Ժամանակ առ ժամանակ մի որևէ անցորդի հետ, նա փոխանակում էր մի խորհրդաւոր նայուածք, մի թեթև նշան. այդ անցորդների զգեստները սովորաբար յայտնում էին, որ հաղնողը պատկանում էր պղծաս դատակարգին. որովհետև քրիստոնէութիւնը,

այս բանի մէջ նմանում էր բոլոր ուրիշ և նուազ հզօր ձեզափոխութիւններին—մանաւանդ նաեւ դոնուում էր խեղճերի սրտերում։ Զբաւորութեան, և աչխատութեան ճիւղերի միջից բղխեց անչչան աղբիւրը այն վիթխարի հոսանքի, որ չհաոյ իր լայնատիւս ջրերը տարածեց քաղաքների և աչխարհիս պալատների վրայ։

Գլուխ Բ.

Վչսորուայ դրօսանքը Կամպանիայի ծովերի վրայ։

«Բայց ասա ինձ, Գլոկուս», ասաց Իօնէն, մինչդեռ նրանք սահում էին պղպջահաս Սարնուսի վրայ իրանց դրօսանաւի մէջ, «ինչպէս պատահեց որ դու և Ապէկիդէս եկաք ինձ ազատելու այդ վատ մարդու ձեռքից»։

«Նիդիայից հարցրու», պատասխանեց ամենայնին՝ ցոյց տալով կոյր աղջկան, որ նրանցից մի քիչ հեռու նստած էր, և մտախոհ կերպով չինուած իր քնարի վրայ.—«Նրան են պատկանում քո չնորհակալութիւնը, ոչ թէ մեզ։ Երևի նա գալիս է իմ տունը, և տեսնելով որ ես տանը չեմ՝ դնում է տաճարը և գնում է քո եղբօրը. չհաոյ նրան ընկերակցում է մինչև Արրակի տունը. ճանապարհին նրանք հանդիպում են ինձ դրօսնելիս մի խումբ բարեկամների հետ, որոնց ընկերութեան մէջ մտնելու բաւական տրամադիր էք եղած չնորհիւ քո ուրախացուցիչ նամակի։ Նիդիայի սուր ականջը ճանաչում է իմ ձայնը. մի քանի բառ բաւական են լինում, և ես ընկերանում եմ Ապէկիդէսի հետ. ես չտասցի իմ բարեկամներին թէ ինչու թողեցի նրանց—մինչ կարող էի քո անունդ ձգել նրանց թոյլ ընթացը, և յանձնել նրանց բարեսաստիկ զազափարին։ Նիդիան մեզ տաճարից մինչև պարտէզի դուռը, որտեղից չհաոյ մենք քեզ դուրս բերինք. մենք նստեցանք, և հէնց ուզում էինք թափանցել այդ չար տան զազտնիքների մէջ, երբ քո ձայնը լսեցինք ուրիշ կողմից։ Մնացեալը դու գիտես»։

Իօնէն աստիճ կերպով չիկնեց։ Ցհաոյ նա իր աչքերը բարձրացրեց դէպի Գլոկուսի աչքերը, և Գլոկուս զգաց բոլոր այն չնորհակալութիւնը, որ կոյսը չէր կարողանում արտասանել։ «Ասատեղ ևկ, իմ Նիդիա» ասաց նա փաղաքչանքով։

«Դեզ չասացի, որ դու պէտք է իմ քոյրը լինես և իմ բարեկամը։ Եւ դու արդէն դրանից աւելին չես եղել ինձ համար—իմ պաշտպանս, իմ ազատիչը»։

«Ոչինչ», պատասխանեց Նիդիան պաղութեամբ և առանց չարժուելու։

«Ա՛, ես մոռացայ» չարունակեց Իօնէն, «ես պէտք է գալի քեզ մօտ». և նա առաջ չարժուեցաւ նստարանների կողքով մինչև հասաւ Նիդիայի նստած տեղը և իր բազուկները անհոգութեամբ ձգելով նրա չուրջը՝ նրա թչերը ծածկեց համբոյրներով։

Նիդիան այդ առաւօտ սովորականից աւելի ժպտուն էր և նրա կերպարանքը աւելի գունատուում և աւելի թառամում էր մինչդեռ նա ենթարկուած էր զեղեցիկ տեսնելուհու զրաւանքին։ «Բայց ինչպէս կարողացար դու, իմ սիրելի Նիդիա», մրմնջաց Իօնէն, «այդպէս ճշդութեամբ հասկանալ այն վտանգը, որին ես ենթարկուած էի։ Մի՞թէ դու եղիպտացու մասին մի բան գիտէիր»։

«Այո, ես ճանաչում էի նրա մոլորութիւնները»։

«Եւ ինչպէ՞ս»։

«Աղնիւ Իօնէ, ես չեմ եղել չար մարդկանց դերին և այն մարդիկը, որոնց ես ծառայում էի՝ նրա սարսափներն էին»։

«Ես դու մանել ես նրա տունը, քանի որ այդպէս լաւ ճանաչում էիր այդ դաղանի դուռը»։

«Ես իմ քնարի վրայ նուագել եմ Արբակի առջև», պատասխանեց Թեսսալուհին չվհատած։

«Ես դու ազատուել ես այն վարակումից, որից փրկեցիր Իօնէին», պատասխանեց Նէապօլսեցին այնպիսի ցած ձայնով, որ Գլոկուս չէր կարող լսել։

«Աղնիւ Իօնէ, ես ոչ գեղեցկութիւն ունիմ և ոչ դիրք. ես մի երեխայ եմ, մի գերի և կոյր։ Զղուելիները մինչև ապահով են»։

Մի վշտացած, հպարտ և բարկացած ձայնով էր, որ Նիդիան տուաւ այս խռնարհ պատասխանը. և Իօնէն դադար որ չարունակելով այդ խօսակցութիւնը՝ նա միայն վշտացնում էր Նիդիային։ Նա լռեց և նայուածքը այժմ մտաւ ծովի մէջ։

«Խոստովանուիր, որ ես իրաւունք ունէի», ասաց Գլոկուս, «քեզ համոզելու, որ այս գեղեցիկ կէսօրը անհետանում չը փակուիս—խոստովանուիր որ իրաւունք ունէի, Իօնէ»։

«Իրաւունք ունէիր, Գլոկուս», չանկարծ ասաց Նիդիան։

«Սիրելի երեխան խօսում է քո փոխանակ», պատասխանեց աթենացին։

«Բայց թոյլ տուր ինձ նայել քո դիմաց, ապա թէ ոչ մեր նայուածքը կը կորցնի իր հաւատարմակցութիւնը»։

Այս ասելով, նա նայեց ուղղակի Իօնէի հանդիպելով և առաջ լինելով՝ նա երևակայում էր նրա չունչն է ե-

ոչ ամառնային քամիները, որ անուշահոտութիւն են տարածում ծովի երեսին։

«Դու ուզում էիր ինձ ասել», ասաց Գլոկուս, «թէ ինչու այդքան ժամանակ քո դուռը փակուած էր իմ երեսին»։

«Օ՛, այլ ևս մի մտածիր դրա մասին», պատասխանեց Իօնէն արագութեամբ. «ես հաւատացի մի խօսքի, որ այժմ գիտեմ թէ ըղպարտութիւն էր»։

«Ես իմ ըղպարտիչը եղիսպացին էր»։

Իօնէի լռութիւնը սոսրասական պատասխան եղաւ այդ հարցին։

«Նրա չարժանիքները բաւական պարզ են հիմա»։

«Այլ ևս մի խօսիր նրա մասին», ասաց Իօնէ, ծածկելով իր երեսը, որպէս թէ իր մտքերին անդամ նրան դուրս ձգել ուզելով։

Շատ կարելի է, որ նա արդէն գտնում է գանգաղաքայլ Սաիքսի ափերի վրայ», չարունակեց Գլոկուս. «բայց այդ դէպքում մենք լսած կը լինէինք նրա մահուան լուրը։ Կարծեմ քո եղբայրը ղգացել է նրա մտայլ հոգու խաւար ազդեցութիւնը։ Երէկ դիշեր երբ մենք հասանք քո տունը, նա յանկարծ բաժանուեցաւ ինձանից քո տունը, նա յանկարծ բաժանուեցաւ ինձանից։ Արդեօք նա երբէք կը դիջանի իմ բարեկամը լինել։

«Մի ինչ որ դաղանի մատանջութիւն մաշում է նրան», պատասխանեց Իօնէն, արտասուալից աչքերով։ «Երանի թէ մենք կարողանայինք նրան դուրս բերել իր մտքերից։ Ե՛կ միասին կատարենք այդ փափուկ պաշտօնը»։

«Նա իմ եղբայրս պիտի լինի» պատասխանեց յոյնը։

«Ի՛նչ անդորրութեամբ», ասաց Իօնէն, դուրս գալով այն թախիծից, որի մէջ ընկղմել էր Ապէկիդէսին դիշելով—«ինչ անդորրութեամբ ամպերը հանդչում են

երկնքի վրկում. և դուք ինձ ասում էք, (որովհետև ես ինքս չը հասկացայ) որ երէկ պիշեր երկիրը չարժուեցաւ մեր ներքև։

«Այո, չարժուեցաւ և ինչպէս ասում են, ամէն ուժգին կերպով քան սոսնձվեց սարի առաջուայ մեծ ցնցումը. այն երկիրը, որի վրայ մենք բնակւում ենք դեռ անուշանում է իր մէջ գազանի զարհուրանքները. և Պլուտոնի պետութիւնը, որ տարածուած է մեր այրեցեալ դաշտերի ներքև կարծես պատռուում է մի անսահմանելի զրդիւնով։ Ես զգացի երկրաչարժը, Նիղիա, այնտեղ որ նստած էիր երէկ պիշեր. և այդ երկիւղից չէր որ դու լալիս էիր»։

«Ես զգացի որ հողը սողում և բարձրանում էր իմ տակ, ինչպէս մի վիթխարի օձ», պատասխանեց Նիղիան. «բայց քանի որ ոչինչ չէի տեսնում, չը վախեցայ. ես երևակայում էի որ այդ ցնցումը առաջ էր եկել դիպուածու կախարդութիւնից։ Ասում են որ նա իշխանութիւն ունի տարերքի վրայ։

«Դու Թեսսալացի ես, իմ սիրելի Նիղիա», պատասխանեց Գլոկուս, «և մի ազգային իրաւունք ունիս հաւատալու կախարդութեան»։

«Կախարդութիւն, ոչ կասկած ունի դրա մասին», պատասխանեց Նիղիան պարզութեամբ. «արդեօք դու ունիս»։

«Մինչև երէկ պիշեր (երբ մի կիւսական հրաշք երօք ինձ տարսափեցրեց), ես, կարծեմ, թերահաւատութեամբ էի վերաբերւում դէպի որ և է կախարդութիւն, սիրոյ հմայքից զատ», ասաց Գլոկուս մի թրթռուն ձայնով և իր աչքերը յառելով Իօնէի վրայ։

«Ա՛», ասաց Նիղիա, մի տեսակ սարսուռ զգալով.

և նա մեքենայաբար մի քանի ախորժելի նօտեր հնչեցրեց իր քնարի լարերից. այդ ձայնը չատ յարմար եկաւ ջրերի անդորրութեան և կէսօրուայ արեւուտ խաղաղութեան հետ։

«Նուագիր մեզ համար, սիրելի Նիղիա», ասաց Գլոկուս—«նուագիր քո հին թեսսալական երգերից մէկը, կախարդութեան վրայ լինի կամ ոչ, միայն թէ սիրոյ վրայ լինի»։

«Սիրոյ վրայ». կրկնեց Նիղիան, բարձրացնելով իր մեծ թախառուն աչքերը, որոնք տեսնողին միշտ ազդում էին մի տեսակ երկիւղահառն դիմք. մարդ երբէք չէր կարողանում ընտելանալ նրանց արտայայտութեան հետ. այնքան տարօրինակ էր թուում, որ այդ սև վայրենի լոլորակները չէն տեսնում ցերեկուայ լոյսը, կամ այնքան յառուած էր նրանց խորհրդաւոր նայուածքը, կամ այնքան անհանգիստ և տարտամ էր նրանց ուղղութիւնը, որ մարդ նրանց հանդիպելուց զգում էր միևնոյն անորոշ, ցրտացուցիչ և կէս արտաբնական ապատորութիւնը, որ զգում է խենթերի ներկայութեամբ — նրանց, որոնք ունենալով հանդերձ մերի պէս մի արտաքին կեանք, ունին և մի կեանք կեանքի մէջ, մի կեանք տարօրինակ, քնքշնելի, անդուշակելի։

«Կուզես երգեմ սիրոյ վրայ», ասաց նա յառելով այդ աչքերը Գլոկուսի երեսին։

«Այո», պատասխանեց նա, ցած նայելով։ Աղջիկը մի քիչ հեռացաւ Իօնէի թևից, որը դեռ ձգուած էր նրա չուրջը, որպէս թէ այդ մեզմ զգուածքը չփոթեցնում էր նրան. և դնելով իր թեթև և չնորհաձև քնարը իր ծնկի վրայ, մի կարճ նախերգանքից յետոյ նա երգեց հետևեալը.

ՆԻՊԻԱՅԻ ՍԻՐՈՑ ԵՐԳԸ

Շաղիկն ու քամին սիրում են մի վարդ.
Վարդը սիրում է նրանցից մեկին.
Չի ոմ չէ սիրում Շաղիկին չքնաղ,
Եւ ոմ վոյթ ունի ուրիշից է քամին։

Ոչ ոք չը պիտեր հէդ Քամու ծագում,
—Այդ երիկնքների թշուառ խաղալիկ—
Ոչ ոք չէր խորհում թէ արտում Քամին
Իր հնծծանքի մէջ ունի մի սրտիկ։

Թախտաւոր Շաղիկ, ինչպէս կարող ես
Ապացուցանել քո պայծառ գորով.
Քո լոյսիդ մէջ է փոսսը քո սիրոյ
Քեզ լոկ մընում է չոզալ քո գեղով։

Իսկ եղուկ Քամին, անդիւր հառաչով,
Ինչպէս կարող է իր սէրը յայտնել
Մունջ-մունջ թող սողալ նա իր վարդի մօտ
Իր ապացոյցն է—սիրել և մեռնել։

«Քո երգդ տխուր է անուշիկս», ասաց Գլոկուս. «քո պատմութիւնը աւ այժմ զգում է սիրոյ խաւար ատելը. բոլորովին տարբեր է նրա ներշնչումը երբ նա ինքը գալիս և լուսաւորում է մեր սրտերը»։

«Ես երգում եմ ինչ որ սովորել եմ», պատասխանեց Նիպիան հառաչելով։

«Քո վարպետն ուրիշն տարաբախտ է եղել սիրոյ մէջ—փորձիր մի աւելի ուրախ եղանակ։ Ոչ, աղջիկս,

տուր լինճ քնարը»։ Մինչդեռ Նիպիան հնազանդում էր այդ պատուէրին, նրա ձեռքը դպաւ Գլոկուսի ձեռքին և այդ թեթեւ հպումից նրա կուրծքը ուռեց և նրա թչերը կարմրեցին։ Իծնէն և Գլոկուսը զբաղուած մխիթարութեամբ չը նկատեցին այդ տարօրինակ և վաղանց զգացմունքի նշանները. այդ զգացմունքը կրծում էր նրա սիրտը, որ անուած երեւակայութեամբ, լոյսը արտաքսում էր իր միջից։

Եւ այժմ, լայն, կապոյտ և պայծառ նրանց առջեւ տարածուած էր այդ անխուռոչ ծովը, չքնաղ ինչպէս այս րոպէին, երբ տատանութիւնը դար այդ թուականից լեռոյ ես տեսնում եմ դրան պղպջալից նոյն չնաչխարհիկ ափերի վրայ։ Կլիմայ, որ այսօր էլ թուլացնում է մարդու ջիղերը մի մեղմ և կիրկէական հմայքով—որ մեզ ձուլում է անդիտակցաբար, դաղտնապէս և ներդաշնակ է դարձնում իր հետ, արտաքսելով մեր դլխից տաժանակիր աշխատութեան միտքը, վայրենի փառասիրութեան ձայները, կեանքի մաքառումը և դուռում դոչումը, որ մեզ լեցնում է փափուկ և հեշտալի երազներով, որ մեր քնաւորութեան համար հարկաւոր է դարձնում մի բան, որ կրում է իր մէջ մեր աշխարհային պէտքերի ամենափոքրիկ մասը, այնպէս որ նոյն իսկ օդը մեզ ներշնչում է սիրոյ մի ծարաւ և մի տենչ։ Ով որ այցելում է քեզ, ով դիւթիչ երկիր, կարծես նաև է թողնում աշխարհը և նորա կոպիտ հոգսերը—կարծես փղոսկրեայ դռնից մտնում է երազների երկիրը։ Ներկայի մաղաչ և ծիծաղկոտ ժամերը—ժամերը, այդ զաւակները Կռոնոսի, որոնց նա միշտ ուշում է կլանել, կարծես խլուած են նրա ձեռքից։ Անցեալը, ապագան մոռացուած են, և մենք վայելում ենք ներկայի չնչող ժամանակը։ Ով ծա-

դիվղ աշխարհի պարտէզի—ով երջանկութեան աղբիւր—Խաւիեր Խաւիեալի—չքնաղ, երանաւէտ Կամպանիա, իսկապէս մնապարծ էին Տիառաններդը, եթէ այսպիսի մի վայրում նրանք դեռ մաքառում էին մի ուրիշ երկնքի համար։ Եթէ Աստուած մէկ անվերջ ասն ստեղծած լինէր, կեանքի այս լի օրը, ով չէր ուզի այստեղ բնակուիլ յաւիտեան, բնակուիլ չ'ուզելով ոչ մի բան, չը յուսալով ոչ մի բանի, և չը վախենալով ոչ մի բանից. բնակուիլ այստեղ, ուր քո ծովերը վայրում են նրա ստքերի ներքև, ուր քո օդը լեցնում է նրան անույշ պատգամներ մանիշակից և նարնջից. բնակուիլ այստեղ, մինչ սիրտը նուիրուած միայն մէկ զգացման և բաբախելով լոկ դրա համար, կարող է դանել այն չրթունքները և աչքերը, որոնք չողոքորթում են դրան (ունայնութիւն ունայնութեանց) և ասում, որ սէրը կարող է դիմադրել աովորութեան և մշտնջենական լինել։

Այս կլիմայի մէջ էր—այսպիսի ծովերի վրայ, որ աթենացին նայում էր մի երեսի, որ կարող էր յարմար լինել մի նիմֆայի,—այդ վայրերի ոգին. նրա աչքերը լափում էին այդ ամենաափափուկ թշի յարատեւիկ վարդերը. նրա երջանկութիւնը բարձր էր սովորական կեանքի երջանկութիւնից. նա սիրում էր և գիտէր որ սիրուած է։

Նախնեաց կրքերի պատմութեան էջերում ինչ որ մի հետաքրքիր բան կայ նոյն իսկ ժամանակուայ հետաքրքրութեան մէջ։ Մենք սիրում ենք զգալ մեր մէջ այն կապը, որ միացնում է ամենահեռաւոր թուականները։ Մարդիկ, ազգեր, սովորութիւններ, բոլորը ոչնչանում են. ՍԻՐՐ ՄԻԱՅՆ ԱՆՄԱՀ Է. նրանից են բղխում այն համակրութիւնները, որոնք դրում են միմեանց ան-

վերջ սերունդները։ Անցեալը նորից ապրում է երբ մենք նայում ենք նրա զգածմունքների վրայ—նա ապրում է մեր կեանքի մէջ։ Այն որ կայ՝ միշտ կայ։ Կարդի այն պարզը, որ կենդանացնում է մեռեալներին, որ չունէ է տալիս մոռացած գերեզմանների փոշուն, գոյութիւն չունի հեղինակի վարպետութեան մէջ—դա գոյութիւն ունի ընթերցողի սրտի մէջ։

Միշտ իզուր աշխատելով գտնել Իսնէի կէս խոնարհած, կէս թեքուած, և կէս խուսափող աչքերը՝ աթենացին ցած և մեղմ ձայնով այսպէս արտայայտեց իր զգացմունքը, որոնք ներշնչուած էին աւելի երջանիկ մտքերով քան այն մտքերը, որոնք տուել էին Նիդիալի երգին իր ախտաւոր գոյնը։

ԳԼՈՒԽԻՍ ԵՐԳԸ

Ինչպէս ամառուայ անդունդի վրայ
Նաւակն է սողում,
Նմանպէս իմ սիրտը սիրոյս ծովի մէջ
Դէպ քեզ է լողում.
Տարածութեան մէջ կորուած, անվախ,
Սահում է անվախ
Քանզի քո հոգին զարձնում է ալին
Փայլուն և ուրախ։
Երկինն ալեկոծ, երկինն հանդիստ է
Ամէն սիրոյ ովկեան
Նայած թէ ժպիտ կամ հառաչանքըդ
Հանում է նրան.
Եւ զոյգ աստղի տեղ, որոնց պաշտում է
Նաւազն երկիւղած

Քո զույգ աչքերն են սրտիս ուղեցույց
Եւ նրա ասաուած։

Նաւը կ'ընկղմի թէ ամպը պատէ
Երեսը երկնից.
Քանդի կախուած է նրա զուսպթիւն
Քո սիրոյ լոյսից։
Ինչպէս սէրդ անկեղծ, ժպիտդ անուշ
Կեանք է երջանիկ,
Նոյնպէս խոժոռանքդ ու այլայլանքդ
Խորտակիչ մրրիկ։
Եթէ ապագան այլայլում ունի
Քո սրտի համար,
Քաղցր է ընկղմուիլ՝ մինչդեռ երկինքը
Պարզ է ու պայծառ
Եթէ ապրելը իմ համար կը'նկի
Լոկ աւազել քեզ,
Ո՛հ հազար անգամ թող հիմա մեռնեմ
Մինչ դիտեմ ինչ եաս։

Մինչդեռ երգի վերջին բառերը դեռ դողդողում էին ծովի երեսին, Իօնէն լարթրացրեց իր աչքերը. նրանք հանդիպեցին իր սիրականի նայուածքին։ Երջանիկ Նիդիա—երջանիկ քո թշուառութեամբ, որ դու չը կարողացար տեսնել այդ թովիչ, այդ դիւթիչ նայուածքը, որ այնքան բաներ էր ասում, որ աչքերին գալթիլ էր տալիս ձայնը, որ խոստանում էր փոխոխութեան անկարելիութիւնը։

Բայց, թէև թեսսալուհին չէր կարողանում տեսնել այդ նայուածքը, նա զուշակում էր դրա նշանակութիւնը նրանց լռութեամբ, նրանց հառաչանքներով։ Նա իր ձեռքերը ուժով սեղմում էր իր կրծքին որպէս թէ խեղդելու դրա դառն նախանձոտ խորհուրդները և յետոյ նա աճապարում էր խօսել, որովհետև այդ լռութիւնը անտանելի էր նրա համար։

«Վերջ ի վերջոյ, ով Գլոկուս», ասաց Նիդիան, «ձեր երգի մէջ էլ չատ ցնծալից բան չը կար»։

«Այնու ամենայնիւ ես ուզում էի, որ ցնծալից լինէր, երբ ես քնարն առայ քո ձեռքից, իմ դեղեցիկս։ Կարելի է երջանկութիւնը մեզ թոյլ չէ տալիս ցնծալից լինելու»։

«Ի՛նչ զարմանալի բան է», ասաց Իօնէն, փոխելով մի այլ խօսակցութեան, որը դիւթելով ընկճում էր նրան, —«որ այս վերջին քանի օրը այդ ամպը անշարժ կախուած մնացել է Վեղուվի գագաթին. բայց ոչ կատարելապէս անշարժ, որովհետև դա երբեմն փոխում է իր ձևը. և այժմ ինձ այնպէս է թուում, որ դա նմանում է մի վիթխարի հսկայի, որ իր մէկ թևը տարածել է քաղաքի վրայ։ Դու քլ ես տեսնում այդ նմանութիւնը, թէ միայն իմ երևակայութեան արդիւնքն է դա։

«Ձքնաղ Իօնէ, ես էլ եմ տեսնում։ Դա զարմանալի կերպով որոշ է։ Հսկան կարծես նստած է լերան գագաթին. ամպի զանազան երանգները նմանում են մի սպիտակ պատմուճանի, որ ծածկում է նրա անդային կուրծքը և անդամները. դա կարծես անշարժ երեսով նայում լինի իր տարրև փռուած քաղաքին և մէկ ձեռքը կարկառած լինի, ինչպէս դու ասում ես, դրա փայլուն փողոցների վրայ, իսկ միւսը լարթրացրած (չես նկա-

ասում) դէպի բարձրադոյն երկինքը։ Դա նմանում է մէ որ և իցէ ահագին Տիտանի ոգուն, որ մասսուզուած նայում է այն դեղեցիկ աշխարհին, որ ինքը կորցրել է. տխուր, անցեալի յիշատակներով— բայց սպառնալից դէպի ապագան»։

«Արդեօք այդ լեռը որ և է կապ ունի երկիր գիշերուայ երկրաշարժի հետ։ Ասում են, որ դարեր առաջ դրեթէ աւանդութեան ամենահնագոյն թուականներում, դրանից կրակ էր բղխում ինչպէս այսօր բղխում է Էտնայից։ Կարելի է դեռ բոցերը թաղնուած են նրա մակ»։

«Կարելի է», ասաց Գլոկուս, խոհուն կերպով։

«Դու ասում ես, որ դու թերահաւատութեամբ ես վերաբերուում դէպի կախարդութիւնը», ասաց Նիլիան յանկարծ։ «Ես լսել եմ որ մի հզօր վհուկ բնակւում է այդ լերան այրեցեալ անձաւների մէջ և այդ ամպը կարող է լինել այն դևի մռայլ սաւէրը, որի հետ նա բանակցում է»։

«Դու լցուած ես քո ծննդավայրը Թեսսալիայի վէպերով», ասաց Գլոկուս, և զգայնութեան և բոլոր մեքառող նախապաշարումների մի տարօրինակ խառնուրդով»։

«Մենք միշտ նախապաշարումներ ունինք, երբ գտնւում ենք մթութեան մէջ», պատասխանեց Նիլիան։ «Աա՛ ինձ», աւելացրեց նա, մի կարճ լռութիւնից յետոյ, «աա՛ ինձ ով Գլոկուս, արդեօք բոլոր դեղեցիկ բաները նմանուում են միմեանց։ Ինձ ասում են, որ դու դեղեցիկ ես և Իօնէն էլ դեղեցիկ է։ Ուրեմն ձեր երեսները միևնոյն տեսակ են։ Ես չեմ մտածում այդպէս լինի, բայց ուրիշ կերպ չէ կարող լինել»։

«Երբէք այդպիսի անարդարութիւն մի անի Իօնէին», պատասխանեց Գլոկուս, ծիծաղելով։ Բայց մեր մէջ, ասած, ոչ մի նմանութիւն չկայ, ինչպէս երբեմն պատահում է տղեղի և դեղեցկի մէջ։ Իօնէի մազերը սեւ են, իմս բաց. Իօնէի աչքերն ունին... ինչ գոյն Իօնէ։ Ես չեմ տեսնում, աչքերդ ինձ դարձրու։ Ո՛հ, սա՛ են, չափազանց փափուկ են սև լինելու։ Կապոյտ են, ոչ, չափազանց մութ են կապոյտ լինելու. նրանք փոխուում են արևի ամեն մի ճառագայթի հետ—ես չը գիտեմ նրանց գոյնը. բայց իմ աչքերս, քաղցրիկ Նիլիա, գորշ են և պայծառ միայն այն ժամանակ, երբ Իօնէն փայլում է նրանց վրայ։ Իօնէի թուչը...»

«Ես քո նկարագրութեան մէկ բառն անգամ չեմ հասկանում», ընդմիջեց Նիլիան խռովկան երեխայի ձևով։ «Ես այնքան միայն հասկանում եմ, որ դուք միմեանց չէք նմանում և ես ուրախ եմ»։

«Ինչո՞ւ, Նիլիա», ասաց Իօնէն։

Նիլիան մի թեթև կարմրեց։ «Որովհետև» պատասխանեց նա պազութեամբ», ես միշտ երևակայել եմ ձեզ տարբեր երևոյթներով և ինձ հաճոյք է պատճառում իմանալ, որ ես չեմ սխալուել»։

«Եւ Գլոկուսին ինչ բանի նման ես երևակայել», հարցրեց Իօնէն փափուկ ձայնով։

«Երաժշտութեան», պատասխանեց Նիլիան, ցած նայելով։

«Դու իրաւունք ունես», մտածեց Իօնէն։

«Եւ ինչ նմանութիւն ես տեսել Իօնէին»։

«Ես դեռ չեմ կարող ասել», պատասխանեց կոպ աղջիկը. «ես դեռ բաւական ժամանակ չէ ինչ նրան ճանաչում եմ և դեռ չեմ կարողացել մի ձև կամ նշան գըտնել իմ գուշակութեան համար»։

«Ուրեմն ես կասեմ քեզ», ասաց Գլոկուս, սիրաբորբոք. «նա նմանում է արեւին՝ որ առաքացնում է և ջուրին՝ որ զովացնում է»։

«Արեւը երբեմն այրում է և ջուրը երբեմն խեղդում», պատասխանեց Նիլիան։

«Ա՛ռ ուրեմն այս վարդերը», ասաց Գլոկուս «և թող նրանց բոլորը քեզ չիշեցնէ Իօնէին»։

«Աւաղ, վարդերը կը թոռոմեն», ասաց հելլենուհին, իշխանական եղանակով։

Այսպէս խօսակցելով, նրանք անց էին կացնում ժամերը. սիրահարները պիտակից միայն սիրոյ պայծառութեան և ժպիտներին. իսկ կոյր աղջիկը զգալով միայն նրա դառնութիւնը — նրա առնչանքները. — նախանձի կատաղութիւնը և նրա թշուառութիւնը։

Եւ այժմ, մինչդեռ նրանք ծիսում էին ջրի եւեռին, Գլոկուս նորից առաւ քնարը և անհոգ մաներով նրա լարերից հնչեցրեց մի եղանակ, այնքան վայրի և ցնծալից կերպով զեղեցիկ, որ նոյն իսկ Նիլիան սթափուեցաւ իր մտախոհ դրութիւնից և աքանչացման մի ճիչ արձակեց։

«Տեսնում ես, դաւակս, «զոչեց Գլոկուս, «որ ես զեռ կարող եմ անուանարկութիւնից ազատել սիրոյ երջանկութեան բնաւորութիւնը, և թէ ես սխալ էի, երբ ասացի թէ երջանկութիւնը չէ կարող ցնծալից լինել։ Ականջ դիր, Նիլիա, ականջ դիր սիրելի Իօնէ, և լսիր։

ՍԻՐՈՑ ԾՆՈՒՆԴԸ *)

Ինչպէս որ մի ասող ծովերում, վերը,
Ինչպէս մի երազ նիրհի հոսանքից,
Դէս-դրա - դուրս է գալիս ՄԱՐՄՆԱՑԵԱԼ ՍԷՐԸ
Նա բարձրանում է դիւթուած ծփանքից։
Երկինք սիրում է իր ժպիտ լուսն
Ջքնաղ Կիպրոսի կղզու երեսին։
Կանանչ անտառի սիրտը հովասուն
Ջեղուն է կեանքի չարժումով եռուն,—
Այն կեանք, որ առաւ իր օրհնեալ ծագում
Երջանիկ երկրի դիւթեալ արգանդում։
Ողջոյն, ո՜հ, ողջոյն։

Մթագոյն անձաւն ովկեանի ներքև
Բարձրագոյն կամարն եթերքի վերև
Ձանաչում են քեզ իրանց լուսթեամբ
Եւ հառաչում են սիրոյ ծնունդեամբ։
Ջեփիւռ, մեզմ զեփիւռ,

Բացած արծաթեայ քո թեւիկները,
Եկած քո բոյնից, զով արևմուտքում,
Շոյում ես նրա դանդրափետ հերը,
Մերթ նրա հետն կրծքի մէջ նընջում։
Եւ հետու չըշուն աւազի վրայ,
Եղանակները հրապատակ տարուայ
Կանգնած են պատրաստ ձեռն ի ձեռին
Քեզ ողջունելու, ծնունդ երկնային

---

*) Այս երգը ներշնչուած է մի պատկերով, որ ներկայացնում էր Վենուսին ծովից բարձրանալիս։ Նկարը հանուած էր Պոմպէյից և այժմ գտնւում է Նապոլիի թանգարանում։

Քեզ ընդունելու այս մեր աչխարհում
Որ այսուհետև քեզ է պատկանում։

II

Ահա չոքում է խեցուճն Անահիտ,
—Ծիսեն այրի մէջ վայլուն մարգարիտ—
Տես ինչպէս խեցու զոյնը վարդային
Պատում է նրա նրբանուշ մարմին,
Եւ ձիւնեայ մորթը իր թաչ և ուսի
Ինչպէս չիկնանքը ամպկոտ կուսի։
Ծ'ն նաւարկելով, հեղիկ սահելով,
Կաթոդին լոյսը տալիս է բարով
Տալիս է բարով իր դիզդ աղջկան։
Ողջոյն, բիւր ողջոյն,
Քանզդ ենք բոլորս, քոնըդ ցըվախճան
Ջըկայ մի տերև ցամաքում ժպտուն,
Չ'ունի մի ծիլիկ ալեզարդ ալիկան,
Ջըկայ մի հառաչ երկնքում անհուն,
Որ հըպատակ չէ
Քո իշխանութեան։

III

Եւ արդ, սիրուհիս, մինչդեռ խանդալից
Նայում եմ վառուկ աչքերիդ խորքին,
Այնպէս է թուում, որ նոցա միջից
Սուրը Սէրն առնում է ծնունդ վերստին.
Քո թարթիչներն են այն նուրբ այրերը
Ուր արդ ննջած է մանկամարդ Սէրը.
Տես, նա բանում է խեցին հրաշալից

Նա դուրս է գալիս քո ծիսեն աչից։
Ողջոյն, բիւր ողջոյն,
Եւ նա գալիս է դէպի իմ տոլին
Մինչ դա նայում է քո սուրբ երեսին.
Գալիս է գալիս.
Եւ նա գալիս է դէպի իմ տոլին
Մինչ դա նայում է քո սուրբ երեսին։
Ողջոյն, բիւր ողջոյն։

Գլուխ Գ.

Հաւատացեալների ժողովը։

Նաղավրեցին, որի եռեից գնում էր Աղեկիղէս, հասաւ Սարնաւսի եղերքը. այդ վետը, այժմ մի առու, այն ժամանակ ուրախ ուրախ հոսում էր դէպի ծովը. դա ծածկուած էր անթիւ նաւերով և նրա ալիքների մէջ անդրադարձուած էին Պոմպէյի պարտէզները, այգեստանները, պալատները և տաճարները։ Դրա աւելի ազմկալից և չաճախուած ափերից Օլինթոս իր քայլերը ուղղեց. դէպի մի չաւիղ, որ գեռից մի քանի քայլ հեռու ընկած էր ծառերի տուտերի տակ։ Այս ճեմուղին, իրիկուններըը, Պոմպէյցիների սիրելի զբօսավայրն էր, բայց ցերեկուայ չոգի և գործի ժամանակ քիչ մարդիկ այցելում էին այդ վայրը բացի միայն մի քանի խումբ խաղաւէր երեխաներից, մի քանի խոհուն բանաստեղծներից և մի քանի վիճասէր փիլիսոփաներից։ Գետից նայելիս՝ ամենից հեռաւոր կողմում, աւելի թարմ և դալար սաղարթների մէջ՝ տեղ տեղ երևում էին տօսախի թուփերը, որոնք կարուած էին հազար ու մէկ տարօրի-

նակ ձևերով. դրանք երբեմն ներկայացնում էին ֆաուն-ներ և սատիրներ, երբեմն եգիպտական բուրգեր, երբեմն մի նշանաւոր կամ ժողովրդական քաղաքացու անուան տառերը։ Այսպէս ուրեմն կեղծ ճաշակը նոյնչափ հին է, որչափ մաքուրը։ Մեկ դար առաջ, Հակինթի և Պադինգտոնի գործից քաշուած վաճառականները կարելի է շատ քիչ տեղեկութիւն ունէին, որ իրանց ծռմռուած դեղձերի և ձևուած տօտախների օրինակները նրանք պարտական էին հռոմէական հնութեան ամենազարգացած դարին. մի դար, երբ այդ բոլորը կարելի էր տեսնել Պոմպէյի պարտէզների և գժուարահաճ Պլինոսի ամարանոցների մէջ։

Այս զբօսավայրը, այժմ որ մի ջօրթի արեգակը ուղղահայեաց ճառագայթներով վայելում էր գոյնզգոյն տերևների միջով, կատարելապէս դատարկ էր. զեթ Օլինթուսի և քահանայի անձնաւորութիւններից զատ ոչ ոք չէր խանգարում այդ վայրի առանձնութիւնը։ Նրանք նստեցին այն նստարաններից մէկի վրայ, որոնք մէջ ընդ մէջ դրուած էին ծառերի արանքին. նրանց երեսները ուղղուած էին դէպի այն մեղմ զեփիւռը, որ դանդաղ չարժումով փչում էր դեպի կողմից. ալիքները պարում և շողշողում էին նրանց առջև. մի տարօրինակ և հակապատկեր անհատներից կազմուած զոյգ էր այդ զոյգը։ մէկը աշխարհիս ամենահին օրէնքի քահանան, միւսը ամենանորի հաւատացեալը։

«Այն ժամանակուանից, որ դու այնպէս յանկարծ հեռացար ինձանից», ասաց Օլինթուս, «արդեօք դու երջանիկ ես եղել. արդեօք քո սիրտը գտել է բաւարարութիւն այդ քահանայական զգեստի տակ. դու որ այդքան տենչ ունէիս Աստուծոյ համար, արդեօք նրա ձայնը մխի-

թարել է քեզ Խախի դաբերից։ Այդ հաւաչանքը, այդ խոստովող երեսը արդէն տալիս են ինձ այն պատասխանը, որ իմ հոգիս դուշակել էր»։

«Աւաղ», պատասխանեց Ապեկիդէս տխուր ձայնով, «դու տեսնում ես քո առջև մի թշուառ և մտամոլոր մարդ։ Երեխայութիւնից ի վեր տառապինութեան երազները եղել են իմ կուռքը։ Ես նախանձել եմ այն մարդկանց սրբութեանը, որոնք անձաւների և մենաւոր տաճարների մէջ, վայելել են գերաշխարհային էակների ընկերութիւնը. իմ ցերեկներս անցել են տենդալին և անորոշ տեսլերով, և իմ գիշերներս ծաղրածու, բայց չքեղ տեսիլներով։ Հրապուրուած մի խաթեթալի խորհրդաւոր մարդարէութիւններով՝ ես տազել եմ այս զգեստները. բայց իմ բնակութիւնը (անկեղծութեամբ խոստովանում եմ քո առջև) ապստամբած է այն բաների դէմ, որ ես տեսել եմ և որոնց դառապարտուած եմ եղել մասնակցելու։ Փնտռելով ճշմարտութիւնը՝ ես դարձել եմ սուտութեան պաշտօնեայ։ Այն երեկոյ, երբ մենք վերջին անգամ հանդիպեցինք, ես կատրացել էի նոյն խաթեթալի ներշնչած յոյսերով, խաթեթայ, որին ես արդէն պէտք է ճանաչած լինէի։ Ես բարդել եմ... Թողնենք այդ... Թողնենք. ես բարդել եմ երդմնազանցութիւն և մեղք իմ անխոհեմութեան և տրամութեան վրայ։ Քողը այժմ մէկ անգամ ընդմիշտ վերացել է իմ աչքերի առջևից. ես տեսնում եմ մի արիական մարդու մէջ՝ որին հնազանդում էի, որպես մի կիսաստուածի. աշխարհը մթնում է իմ աչքերի առջև. ես ընկել եմ խաւարի ամենախոր մի գաւթի մէջ։ Ես չը գիտեմ թէ աստուածներ կան վերևում. թէ մենք դիպուածի արարածներն ենք. թէ այս ահմանափակ և մելամաղձիկ ներկայից յետոյ ոչնչու-

թիւն է տիրում, թէ մի ապագայ։ Ասա ինձ, ուրեմն, քո հաւատքը. լուծիր ինձ համար այս կասկածները՝ եթէ զօրութիւն ունիս»։

«Ես չեմ զարմանում», պատասխանեց նազովրեցին, «որ դու այսպէս մոլորուել ես, կամ այսպէս թեթեւամտաբար ես դարձել։ Ուխտուն տարի առաջ մարդիկ ոչ մի տեղեկութիւն չ'ունէին Աստուծոյ, կամ անդրդուելի համոզում մի որոշ և հաստատ ապագայի մասին։ Նոր օրէնքներ քարոզում են նրանց, որոնք ականջ ունին լսելու. մի երկինք և մի ճշմարիտ Ղևմպաս յայտնուում են նրանց, որոնք աչքեր ունին տեսնելու։ Մխա դիր, ուրեմն, և լսիր»։

Եւ մի մարդու ամբողջ անձկութեամբ, որ ինքը ջերմեռանդութեամբ հաւատում է և նախանձախնդիր է նորահաւատներ չունենալու, նազովրեցին թափեց Ապէկիդեսի ուղեղի մէջ հոգևոր խոստման ապագայները։ Նախ խօսեց Քրիստոսի չարչարանքների և հրաշքների մասին, և խօսելու ժամանակ նա արտասուեց, նա լեռոյ պատմեց Քրկի Համբարձման փառքերը, Յայտնութեան պարզ մարգարէութիւնները։ Նա նկարագրեց այն մարդու և անհետացաւ երկինքը, որ խոստացուած էր առաքիններին և այն կրակը և չարչարանքը, որ սպասում էր յանցապարտներին։

Այն կասկածները, որ մուտք գործեցին յեռապատ տրամաբանների մտքում, մարդու համար Աստուծոյ տրած չափազանց մեծ գոհացութեան մասին, այնպիսի կասկածներ չէին, որ կարողանային դուրս հանել նախնի մի հնութեան համար։ Նա սովոր էր հաւատալու, որ աստուածները պարել էին աշխարհի վրայ, հաղել էին մարդու կերպարանք և մասնակցել էին մարդկային կրքերին, մարդկային աշխատութեանց և մարդկային դժբախտութիւններին։ Ի՞նչ էին տառապանքները նրա Ալկմենային *) որդու, որի սեղանները այժմ ծխում էին անթիւ քաղաքների խունկով, եթէ ոչ մի տաժանանք յօգուտ մարդկային ցեղի։ Արդեօք դորեան Ապոլլոնը չէր քաւել մի խորհրդաւոր մեղք գերեզման իջնելով։ Երկնքի աստուածները եղել էին աշխարհի օրէնսդիրները կամ բարերարները և երախտագիտութիւնը առաջնորդել էր դէպի պաշտօղութիւն։ Հետևաբար, հեթանոսի համար ոչ նոր և ոչ աւրօրինակ մի վարդապետութիւն էր, որ Քրիստոս ուղարկուել էր երկնքից, որ մի անմահ հաղել էր մահկանացուն և ճաչակել էր մահուան դառնութիւնը։ Եւ այն նպատակը, որի համար Քրիստոս այսպէս աշխատել և չարչարուել էր, որքան աւելի փառաւոր էր թուում Ապէկիդէսին քան այն, որի համար հնութեան աստուածները այցելել էին ստորին աշխարհը և անցել էին մահուան դռներից։ Արդեօք աստուածամարդ մի գործ չէր իջնիլ այս խաւար ձորերի մէջ վառնելու համար այն ամպերը, որոնք կախուած են ապագայի ըլուրների գագաթին, բաւարարութիւն տալու դիտնականների կասկածներին. իրողութիւնների փոխարինելու մտացածին խորհուրդները, օրինակով ցոյց տալու կեանքի օրինակները, յայտնութեամբ լուծելու գերեզմանի առեղծուածը և ապացուցանելու, որ հոգին զուր չէ երազում մի անմահութեան մասին և աւելորդ դէպի այն։ Այս վերջին կէտի մէջ էր կայանում այն հեղ մարդկանց մեծ տրամաբանութիւնը, որոնց վիճակուած էր կրօնափոխ դարձնել բոլոր աշխարհը։ Քանի որ ոչ

*) Հերկուլեսի մայրը։

մի բան աւելի չէ չղոքորթում մարդու հպարտութիւնը և նրա յոյսերը քան ապագայ կեանքի հաւատքը, հետևաբար ոչ մի բան աւելի քաոսական և աւելի չիմաթ չէր հեթանոս դիտնականների դլխի մէջ քան նրանց դաղափարները այդ խորհրդաւոր նիւթի մասին։ Ապէկիդէս արդէն սովորել էր, որ փիլիսոփաները չէին հաւատում ամրոխի կրօնքին. սովորել էր, որ եթէ նրանք դաղտնապահ դաւանում էին մի որևէ երկնային զօրութիւն, այդ դաւանութիւնը նրանք յարմար չէին համարում ուսուցանել հասարակութեանը։ Նա արդէն սովորել էր, որ նոյն իսկ քահանան ծաղրում էր այն բանը, որ նա քարոզում էր ժողովրդին, որ փոքրամասնութեան և մեծամասնութեան դաղափարները երբէք չէին միանում։ Բայց այս նոր հաւատքի մէջ, նրան այնպէս թուաց, որ փիլիսոփայ, քահանայ, ժողովուրդ, կրօնքը բացատրողները և կրօնքի հետևողները, բոլորը համերաշխ էին, նրանք չէին վիճում, կամ իրանց հայեցողութիւնը յայտնում անմահութեան վրայ, նրանք խօսում էին դրա մասին որպէս մի հաստատ, անտարակուսելի իրողութեան. խոստման չքեղութիւնը չացրեց նրան և դրա մխիթարութիւնները ամոքեցին նրա վիշտը։ Որովհետև քրիստոնէութիւնը իր նախնի հաւատացեալներին ժողովում էր մեղաւորների միջից. նրա հայրերի և մարդասիրների մեծ մասը այնպիսի մարդիկ էին, որոնք ճանչակել էին մոլութեան դառնութիւնը և որոնք, հետևաբար, այլ ևս նրա կեղծ երևոյթով չէին հրապուրւում չնդունելու մի խիստ և անխարդախ առաքինութիւնից։ Այս ամոքիչ հաւատքի բոլոր հատատութիւնը հրաւէր էր կարծում դէպի ապաշխարութիւն. նրանք մի մասնաւոր յարմարութիւն ունէին ջախջախուած և վիրաւոր հոդի-

նների համար. հէնց այն ապաշխարանքը, որ Ապէկիդէս զգում էր իր գործած վերջին յանցանքների համար, նրան տալիս է մի տեսակ հակում դէպի այն մարդը, որ կարող էր սրբութիւն գտնել այդ զղջման մէջ և կարող էր մխիթարել նրան զգալ թէ ինչ գնահատութիւն է տեղի ունենում երկնքում երբ մեղաւորը ապաշխարում է։

«Եկ», ասաց նաղովրեցին, երբ տեսաւ իր գործած ապերեցութիւնը, «եկ այն խղճուկ հիւղը, ուր մենք հաւաքւում ենք—մի բուռն ընտրեալներս—այնտեղ ակամջ դիր մեր աղօթքներին. նկատիր մեր ապաշխարութեան արտասուքների անկեղծութիւնը. մտանկցիր մեր պարզ զոհաբերութեան, ոչ թէ զոհերի, ոչ թէ գառների, այլ ճերմակազգեաց խորհուրդների, մատուցած սրտի սեղանի վրայ։ Այն ծաղիկները, որ մենք դնում ենք այնտեղ՝ անթառամ են. նրանք ծլում են մեր վրայ երբ մենք արդէն անցել դնացել ենք. ոչ, նրանք ընկերանում են մեզ հետ գերեզմանի միւս կողմում. նրանք բուսնում են մեր ոտքերի տակ երկնքում. նրանք պարարում են մեր հոտառութիւնը մշտնջենական բուրմունքով, որովհետև նրանք առաջ են գալիս հոգուց և ժառանգում են նրա յատկութիւնը. այս զոհաբերութիւնները յաղթուած փորձութիւններ են և ապաշխարուած մեղքեր։ Եկ, ո՜հ եկ, մի րոպէ մի կորցնիր. պատրաստութիւը արդէն այն մեծ, այն ահաւոր ճանապարհորդութեան համար, ճանապարհորդութիւն խաւարից դէպի լոյս, վշտից դէպի երանութիւն, ապականութիւնից դէպի անմահութիւն։ Այս է «Աստուածորդու» օրը, մի օր, որ մենք նուիրած ենք աղօթքների և աստուածպաշտութեան։ Թէև մենք ամեն դիչեր հաւաքւում ենք, բայց մեզանից մի քանիսը արդէն ժողովուած են։ Ինչ ցըն-

ծութիւն, ինչ յաղթութիւն պիտի լինի մեր բոլորիս համար եթէ կարողանանք մեզ մոլորուած դառնուկ մըտցնել արքային փարախի մէջ»։

Ալեկսիոսին, որ բնականաբար այնքան մաքուր սիրտ ունէր, այնպէս թուաց, որ մի անապատում ազնուութիւն և բարեսրտութիւն կար այն խօսակցութեան ոգու մէջ, որով ողևորուած էր Օլինթոս—մի ոգի, որ իր երջանկութիւնը տեսնում է ուրիշների երանութեան մէջ—որ իր լայնածաւալ ընկերասիրութեամբ աշխատում էր յաւիտենականութեան մասնակիցներ գտնել։ Նա զղածուեցաւ, կակղեց և յաղթահարուեցաւ։ Նա չէր գտնում այնպիսի մի արամադրութեան մէջ, որ կարող է հանդուրժել միայնակութեան. հետաքրքրութիւնն էլ խառն էր նրա աւելի մաքուր չարժաւորների հետ. նա փափագում էր տեսնել այն ծէսերը, որոնց վերաբերութեամբ այնքան մութ և հակասական լուրեր էին պատմում։ Նա մի րոպէ վարանուեցաւ, նայեց իր ղեկատներին, մռայեց Արրակի մասին, զարհուրանքից սարսռաց, իր աչքերը բարձրացրեց դէպի նաղովրեցու լայն ճակատը, որ արտայայտում էր անձկութիւն, ուշադրութիւն, հակուղութիւն և այդ բոլորը նրա օգոի համար, նրա փրկութեան համար։ Նա իր վերարկուն հաւաքեց իր չուրջը, այնպէս որ բոլորովին ծածկեց իր ղեկատները և ասաց. «Առաջնորդիր, ես հետևում եմ քեզ»։

Օլինթոս ուրախութեամբ սեղմեց նրա ձեռքը և լռութ իջնելով դեսի եղերքը կոչեց այն նաւակներից մէկը, որոնք միշտ անց ու դարձ էին անում գետի վրայ. նրանք մտան մակոյկի մէջ. նաւակի հովանին թէ պաշտպանում էր նրանց արևից և թէ թաղցնում էր նրանց անձնաւորութիւնները մարդկանց նկատողութիւնից։

Նրանք արագ արագ սահում էին ջրի երեսին։ Այն նաւակներից մէկի միջից, որոնք անցնում էին նրանց կողքով, լսուեցաւ մի մեղմ երաժշտութեան ձայն. նրա ցուկը զարդարուած էր ծաղիկներով և նա սլանում էր դէպի ծովը։

»Ապագէս», ասաց Օլինթոս տխուր ձայնով, անզգայ և ուրախ իրանց ցնորքների մէջ՝ զեղխութեան խնկարկուները սահում են դէպի փոթորկի և նաւաբեկութեան ովկիանոսը. իսկ մենք, լուռ և աննկատ՝ անցնում ենք նրանց կողքով դէպի հաստատուն ցամաքը»։

Ալեկսիոս բարձրացնելով իր աչքերը, հովանու ճղքից տեսաւ ուրախ զբօսողների մէկի երեսը. դա Խոնէի երեսն էր։ Սիրահարները գնում էին այն զբօսանքին, որին մենք արդէն ներկայ ենք գտնուել։ Քանանան հառաչեց և նորից նստեց իր տեղը։ Նրանք հասան գետափը, մի տեղ, ուր քաղաքի արուարձանների մէջ մի քանի փոքրիկ և աղքատիկ տներ չարուած էին մինչև գետի եղերքը. նրանք ճանապարհ ղրին նաւակը, դուրս եկան և Օլինթոս, երթալով քահանայի առջևից՝ անցաւ ուղիների մի լաբիրինթոսից և վերջապէս հասաւ մի փակ դրան, որը միւսներից մի քիչ մեծ էր։ Նա երեք անգամ զարկեց. դուռը բացուեցաւ և երբ Ապեկիոէս հետևելով իր ուղեցոյցին անցաւ չէմքից, նորից չուսուով դուռը փակուեցաւ։

Նրանք անցան մի լքանուած աւրիումից և հասան չափաւոր մեծութեամբ մի ներքին սենեակ, որը երբ դուռը կապուած էր լինում, իր լոյսը ստանում էր դրան վերևի մի պատուհանից միայն։ Բայց, կանգ առնելով այս սենեակի չէմքին և դուռը զարկելով՝ Օլինթոս ասաց. «Խաղաղութիւն ձեզ»։ Մի ուրիշ ձայն ներ-

ից պատասխանեց «Խաղաղութիւն ձեզ»։ «Հաւատացեալներին», պատասխանեց Օլինթոս և դուռը բացուեցաւ. ամէներիս կամ ամէն ու չորս հոգի դատած էինք մի կնատեղջանի ճեռվ և մի փայտի վրայ անտաշ արուեստով փորուած մի խաչելութեան դիմաց. նրանք լուռ էին և ըստ երեւոյթին խորասուզուած իրանց մտքերի մէջ։

Երբ Օլինթոս ներս մտաւ, նրանք բարձրացրին իրանց աչքերը առանց խօսելու. ինքը նաղովրեցին, նախ քան ողջունէր նրանց, յանկարծ չոքեց և նրա չարժուող շրթունքներից և աչքերից, որ անթարթ յառուած էին խաչելութեան վրայ, Ապէկիպէս տեսաւ որ նա աղօթում էր իր սրտի մէջ։ Վերջացնելով այս արարողութիւնը՝ Օլինթոս դարձաւ դէպի ժողովուրդը—«Մարդիկ և եղբայրներ», ասաց նա, «մի զարմանաք եթէ ձեր մէջ տեսնէք Խաթի մի քահանայ. նա պանդխտած է եղել կայսերի երկրում, բայց հոգին իջել է նրա վրայ—նա փափագում է տեսնել լսել և հասկանալ»։

«Թոյլ տուէք նրան», ասաց խումբից մէկը—և Ապէկիպէս տեսաւ, որ այդ խօսողը մի մարդ էր իրենից աւելի երիտասարդ. նրա կերպարանքը նոյնչափ մաշուած էր և ժժգոյն և նրա աչքերը նոյնպէս յայտնում էին նրա աչխատող մարքի անհանգիստ և կրակոտ դործունէութիւնը։

«Թոյլ տուէք նրան», կրկնեց մի երկրորդ ձայն և այս ասողը պատկանում էր ծաղիկ տարիքի կատարելութեանը հասած մի տղամարդ. բրոնզագոյն մորթը և ասիական գծերը յայտնում էին նրա Սիրիական ծագումը —նա իր երիտասարդութեան ժամանակ մի աւազակ էր եղած։

«Թոյլ տուէք նրան», ասաց մի երկրորդ ձայն և քահանան նորից դարձաւ նայելու և տեսաւ մի ծեր մարդ երկար ալեւոր մօրուքով և ճանաչեց նրան, որովհետև հարուստ Դիոմէդի գերիներից մէկն էր նա։

«Թոյլ տուէք նրան», կրկնեցին մէկ անդամից մնացեալները, մարդիկ, որոնք երկու բացառութեամբ բոլորն էլ պատկանում էին տուր դասակարգին։ Այս բացառութիւններից մէկը թիկնապահների մի պաշտօնեայ էր և միւսը աղէքսանդրիացի մի վաճառական։

«Մենք քեզ չենք տիպում», վերսկսեց Օլինթոս — «մենք քեզ չենք տիպում դաղտնապահ լինել. մենք քեզ երդում չենք տալիս (ինչպէս մեր տակաւ եղբայրներից մի քանիսն անում են) որ մեզ չը մատնես։ Ճշմարիտ է, որ ոչ մի բացարձակ օրէնք չը կայ մեր դէմ. բայց ժողովուրդը, աւելի վայրենի քան իր իշխանները ծարաւ է մեր արեանը։ Այսպէս իմ բարեկամներս, երբ Պիղատոս վարանում էր, ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն էր որ գոչեց «Թրխատոսին 'ի խաչ»։ Բայց մենք քեզ չենք կաշկանդում մեր ապահովութեան համար—ոչ։ Մատնիր մեզ ամբոխին, եթէ ուզում ես, վատաբանիր մեզ, չարախօսիր, ամբաստանիր.—մենք վեր ենք մահից, մենք ցընծութեամբ կը դիմենք ատիճանների որջը, մենք երդելով կերթանք դէպի դահիճը. մենք կարող ենք կոխկռտել գերեզմանի մթութիւնը և ինչ որ մահ է մի յանցապարտի համար, յաւիտենական կեանք է մի քրիստոնէի համար»։

Մի հատանութեան մեղմ մրմունջ անցաւ ամբոխի մէջից։

«Դու գալիս ես այստեղ որպէս մի քննիչ, երանի թէ դու մնայիր մեր մէջ՝ որպէս հաւատացեալ։ Մեր

կրճնքը, ահա տեսնում ես։ Այդ խաչը մեր միակ պատկերն է և այդ մազաղաթը մեր Պէրէի և Ելեսխի դաշնագիրքերը։ Մեր բարոյականութիւնը, դա տեսնում է մեր կենցաղների մէջ. մեզաւորներ ենք եղել մենք բոլորս էլ, բայց ով կարող է այժմ մեզ ամբաստանել մի յանցանքով. մենք մկրտուել մաքրուել ենք անցեալից։ Մի մտածիր որ դա մեր պատճն է, դա Աստուծոյ գործ է։ Մտածիր, Մեղոն», նշան անելով այն ծեր գերեզմանը, որ երբորդ խօսողն էր եղել Ապէկիդէսի մահուլու ժամանակ, «դու միակ մարդն ես մեր մէջ, որ ազատ չես։ Բայց երկնքում վերջինը առաջինն կը լինի. նոյնպէս է և մեր մէջ։ Բայց քո մազաղաթը, կարող և բացատրիր»։

Անօգուտ կը լինէր մեզ համար հետևել Մեղոնի ընթերցումին, կամ ժողովի բացատրութիւններին։ Այժմ լաւ ծանօթ են այն վարդապետութիւնները, որոնք այն ժամանակ օտարոտի էին և նոր։ Տանն և ուխտը զարեր քիչ բան են թողել մեզ Սուրբ Գրքի գիտութիւնից, կամ Բրիտոսի կեանքից, որ բացատրութեան կարօտ լինի։ Մեզ համար, նաև քեզ համակրելի բան կայ այն կատկածների մէջ, որ մի հեթանոս քահանայ կարող էր ունենալ և քիչ գիտութիւն այն պատասխանների մէջ, որ այդ կասկածները առանում են անուս կոպիտ և պարզ մարդկանցից, որոնք լոկ այնքան գիտեն՝ թէ իրանք աւելի մեծ մարդիկ են քան ինչ երևում են։

Մէկ բան մեծ ազդեցութիւն ունեցաւ նէսպօլանցու վրայ։ Երբ ընթերցումը վերջացաւ, նրանք լսեցին դրան մի թեթև բաղխիւն. դուռը բացուեցաւ և երկու երեխայ, որոնց մեծագոյնը հազիւ եօթը տարեկան լինէր, երկչոտութեամբ ներս մտան. նրանք տան միրոջ երեխաներն էին, այդ Թուին, առյդ Սիրիացու, որ անց

էր կացրել իր երիտասարդութիւնը աւարառութեամբ և արիւնհեղութեամբ։ Ժողովի երէց անդամը, որ ծեր գերին էր, իր թևերը բացաւ. նրանք վազեցին նրա գիրկը, և կպան նրա կրծքին և նրա կոպիտ դէմքը ժպտաց՝ մինչդեռ նա չոլում էր նրանց։ Եւ լեռոյ այդ յանդուգն և եանդուն մարդիկը, անուած բախտի փոփոխութիւնների մէջ և ենթարկուած կեանքի դաժան հոգսերին — մարդիկ, որոնց մէջ կարելի էր տեսնել ամեն երևակայելի հակապատկերներ երեխայութեան սկար ջղերի, թեթև սրտերի և վայրկեանական դիւրաբեկութեան — մարդիկ պինուած մի անպարտելի կորովով, պատրաստ չարչարանքի և մահուան, հաւաքուեցան երեխաների չուրջը. նրանց խոժոռ ճակատները հարթուեցան և նրանց մարմաջալի չրթունքները սիրալիր և գգուիչ կերպով ժպտացին։ Յետոյ ծերունին բացաւ մազաղաթը և երեխաներին կրկնել տուեց այն զգեցիկ աղօթքը, որ մենք այսօր էլ կոչում ենք Տիրոջ անունով և սովորեցնում ենք մեր երեխաներին և յետոյ նա պարզ ոճով ասաց նրանց՝ թէ Աստուած լինչպէս սիրում է երեխաներին, և թէ լինչպէս մի ճնճղուկ վայր չէ ընկնում առանց որ Նրա աչքը տեսնէ այդ։ Երեխաների ուսուցման այս աքանչելի սովորութիւնը երկար ժամանակ գոյութիւն ունէր նախնի եկեղեցու մէջ և յիշատակ այն բաների, որ ասում է «Թոյլ տուէք փոքրիկ երեխաներին գալ ինձ մօտ և մի արգելէք նրանց». կարելի է որ հէնց այս սովորութիւնն էր սկզբնապատճառը այն նախապաշարման, ամբաստանութեան, որ վերագրում էր նազովրեցուն մի ոճիր, որ երբ նազովրեցին յաղթանակեց, վերագրեց հրեային, այլևևքն, երեխաներին

հրապուրել դէպի հրէշային ծիսակատարութիւնները և այնտեղ նրանց զոհ մատուցանել։

Եւ կոպիտ ապաշխարող հայրը կարծես իր զաւակների անմեղութեան մէջ զգում էր, որ ինքը վերադառնում է դէպի իր նախնի կեանքը, այն կեանքը, որ անցել էր նախ քան նրա մեղսագործութիւնը. նա հետևում էր նրանց մանկական չրթունքների չարժմանը մի անձկալից նայուածքով. նա ժպտում էր երբ տեսնում էր թէ նրանք ամաչկոտ և յարդալից նայուածքով կրկնում էին սուրբ բառերը և երբ դասը վերջացաւ և նոքա վազեցին ազատուած և ուրախ նրա ծնկներին վրայ, նա սեղմեց նրանց իր կրծքին, համբուրեց նրանց նորից և նորից, և արտասուքները սկսեցին յորդութեամբ յած վազել նրա թշերից—արտասուքներ, որոնց աղբիւրը անկարելի էր գտնել, այնպէս որ խառն էին նրանք ուրախութեամբ և տրտմութեամբ, ապաշխարութեամբ և յոյսով—ապաշաւանքով իր համար և սիրով նոցա։

Մի բան կար, կրկնում եմ, այս տեսարանի մէջ, որ մատնատրաշէս ազդեց Ապէկիզէսի սրտին և խնայեցրեց, դժուար է երևակայել մի պաշտամունք, որ աւելի յարմար լինէր մարդասիրութեան կրօնքին, որ աւելի տեղ կտար անայլին և առօրեայ դորովին, որ կարողանար մի աւելի զգայուն լար չօչափել մարդկային կրծքի մէջ։

Այս ժամանակ էր, որ մի ներքնատներակի դուռը կամաց բացուեցաւ և մի չատ ծեր մարդ, յենուած մի դաւազանի վրայ, մտաւ սենեակը։ Նրա ներկայութեամբ ընդ խումբը ոտքի կանգնեց. ամէն մի դէմքի վրայ կարելի էր տեսնել խորին և սիրալիր յարգանքի արտայայտութիւնը և Ապէկիզէս, նայելով նրա երեսին,

զգաց որ մի անդիմադրելի համակրութեամբ ձգտում էր դէպի նրան։ Ոչինչ չէր նայել այդ կերպարանքի վրայ՝ առանց սիրելու. որովհետև այդ դէմքի վրայ փայլել էր Առաւածութեան ժպիտը, մարմնացումը ամենաերկնային սիրոյ.—և այդ ժպիտի փառքը երբէք չէր ջնջուած։

«Զաւակներս, Աստուած ձեզ հետ», ասաց ծերունին տարածելով իր բազուկները և նա խօսեց թէ չէ, երեխաները վազեցին կպան նրա ծնկներին։ Նա նստեց և նրանք մեծ հաճոյքով մտան նրա գոգը։ Շատ զեղեցիկ էր տեսնել կեանքի ծայրահեղութիւնների այդ խառնուրդը—վաստկները, որ նոր բաժանւում էին իրանց սկզբնական աղբիւրից և փառահեղ գեսը, որ սահում էր դէպի յաւիտենականութեան ովկիանոսը։ Ինչպէս որ ծերացած ցերեկաւայ լոյսերը կարծես խառնում են երկինքը երկրի հետ, հազիւ տեսանելի զարձնելով ամեն մէկի բաժանող գծերը և միացնելով լեռների կոպիտ գագաթները երկնքի փափուկ կապոյտի հետ, հէնց նոյնպէս էլ այդ առաստագրթ ծերուկի ժպիտը կարծես մի պրութիւն էր ոլորում իր շրջապատող կերպարանքների վրայ, կարծես մխիթարանք էր խառնում զանազան տարիքների որոշ տարբերութիւնները և կարծես տարածում էր թէ երեխայութեան և թէ առնութեան վրայ այն երկնքի լոյսը, որի մէջ նա չուտով պիտի ընկղմէր և անյետաձնար։

«Հայր», ասաց Օլինթուս, «դու, որի անձնաւորութեան վրայ Փրկիչը զործել է իր հրաշքը, դու որ խլուեցար գերեզմանից նրա ողորմութեան և նրա զօրութեան կենդանի վկան լինելու, տես, ահա մի օտարական մեր ժողովի մէջ—մի նոր գառնուկ, որ բերուած է վարագի մէջ»։

«Բերէք օրհնեմ նրան», ասաց Ներսէսին. Ներկայ եղողները լեռ քաշուեցան։ Ալէկիզէս, դրեթէ բնազդմամբ մօտեցաւ նրան. նա ծունկ չոքեց նրա առջև. Ներսէսին ձեռքը դրեց քահանայի գլխին և օրհնեց նրան, քայց ոչ բարձրաձայն։ Մինչդեռ նրա շրթունքները չարժուում էին, նրա աչքերը նայում էին վեր և արտասուքներ—այն արտասուքները, որ բարի մարդիկ թափում են մի ուրիչի երջանկութեան յոյսով - յորդ թափուում էին նրա թշերից։

Երեխաները կանգնած էին նորահաւատի այս և այն կողմում. նրա սիրտը նրանցն էր—նա եղած էր նրանցից մէկը—մանելու համար երկնքի արքայութիւնը։

Գլուխ Դ.

Սիրոյ վտակը հոսում է—ո՞ւր։

Օրերը տարիների են նմանում երիտասարդների սիրոյ մէջ, երբ ոչ մի արգելք, ոչ մի խոչնդոտ չը կայ նրանց տաների մէջև երբ արևը փայլումը է և ճանապարհը հարթ է, երբ նրանց սէրը յարատևած է և յաջող։ Իսկեն այլ ևս չէր թագցնում Գլոկուսից այն համակրութիւնը, որ ղգում էր դէպի նա և նրանց միակ խոսակցութիւնը այժմ իրենց սիրոյ մասին էր։ Ներկայի հրճուանքի վերև՝ փայլում էին ապագայի յոյսերը, ինչպէս երկինքը շողում է զարնանային պարտէզների գըլխին։ Նրանք իրանց յուսալից մտքերով կանխում էին ժամանակի հոսանքը. նրանք ղգում էին իրանց ապագայի յատակագիծը. նրանք թոյլ էին տալիս, որ այսօրուայ լոյսը պարփակէ վաղուան օրը։ Նրանց տաների երիտասարդութեան մէջ կարծես հոգսը, փոփոխութիւնը, մահը անծանօթ բաներ էին։ Կարելի է նրանք միմիանց ևս աւելի էին սիրում հէնց այն պատճառով, որ աշխարհի կացութիւնը թոյլ չէր տալիս Գլոկուսին սիրուց զատ որևէ ուրիչ նպատակ ունենալ—այն պատճառով, որ աթենացու համար զոյութիւն չունէին ազատ պետութիւնների այն սովորական զբաղմունքները, որոնք մարդու միտքը հեռացնում են սիրուց—այն պատճառով որ նրա երկիրը նրան չէր հրաւիրում դէպի քաղաքական կեանքի աղմուկը,—որ փառասիրութիւնը հակակշիռ չէր դառնում սիրոյ։ Հետևաբար նրանց ապագայի բոլոր ծրագիրների վրայ լոկ սէրն էր սիրապետում։ Այդ երկաթեայ դարում նրանք երևակայում էին, որ իրանք դտնուում են ոսկեայ դարում և իրանց համար վիճակուած է ապրել և սիրել։

Վեր ի վերոյ ընթերցողի համար, որ լոկ հետաքրքրուում է այնպիսի բնաւորութիւններով, որոնք խոր կերպով դծուած և աչքի զարկող գոյներով ներկուած են, այս սիրահարները կը թուան չատ թոյլ և հասարակ կաղապարի մէջ ձուլուած. այս դէպքում երբ բնաւորութեան սահմանագիծը դիտմամբ փափուկ և անորոշ է նկարուած, կարելի է ընթերցողը կ'երևակայէ բնաւորութեան բացակայութիւն։ Կարելի է միևնոյն ժամանակ, որ ես անարդարութեամբ եմ վերաբերուում դէպի այս սիրահարների իսկական բնութիւնը, երբ աւելի տպաւորիչ կերպով դուրս չեմ բերում նրանց ուժեղ անհատականութիւնը։ Բայց այնքան երկար կանգ առնելով նրանց վրայ և թէչնամանի կեանքի վրայ՝ ես անզգայաբար գտնուում եմ այն փոփոխութիւնների ազդեցութեան տակ, որոնք սպասում են նրանց և որոնց

դիմադրելու համար նրանք այնքան անպատրաստ էին։ Նրանց կեանքի հէնց այս փափկութիւնը և անհոգութիւն էր, որ մի մեծ հակապատկեր էր ներկայացնում նրանց դալիք բախտի ելևէջներին։ Կաղնու համար, որ ոչ պտուղ ունի և ոչ ծաղիկ, որի կարծր ու կոպիտ սիրտը յարմարցուած է փոթորկին դիմադրելու, նուազ երկիւղ կայ քան մրտենու քնքոյշ ճիւղերի և որթի ժպտուն ողկոյզների համար։

Օգոստոսից այժմ անցել էր նրա մեծագոյն մասը և հետևեալ ամիսը որոշուած էր նրանց ամուսնութեան համար. Գլոկուսի տան չէմքը հիմիկուանից մինչ դարդարուած էր ծաղկահիւս պսակներով և նա ամեն դիչեր դնում էր Իօնէի տան դուռը այնտեղ թաղելու ճոխ դիւնեճօններ։ Նա այլ ևս գոյութիւն չունէր իր ուրախ ընկերների համար. նա մինչ դասնում էր Իօնէի մտաւ Աղաւօնները նրանք անց էին կացնում ժամանակը եբաժշտութեամբ և իրիկուններ նրանք վախչում էին ուրախակեացների յաճախատեղիներից և գնում էին կամ ջրի վրայ զբօսնելու և կամ չրջապատելու այն բերրի և որթազարդ դաշտերի մէջ, որոնք սփռուած էին չարաչուք Վեզուվի սորոտում։ Երկիրն այլ ևս չէր չարժում. զուարթասիրտ պսակելցիները մինչև անգամ մոռացան, որ այդքան մօտիկ անցեալում իրանց տրուած էր մի սարսափելի աղդարարութիւն՝ իրանց վերահաս կործանման մասին։ Գլոկուս, իր հեթանոսական կրօնքի անհաւատութեամբ, երևակայում էր, որ այդ ցնցումը աստուածների մի մանուր միջամտութիւնն էր ոչ այնքան ի նպաստ իր ապահովութեան որքան Իօնէի։ Նա չնորհակալութեան զոհեր էր մատուցանում իր պաչատած կրօնքի սեղանների վրայ և մինչև անգամ Իսիսի սեղանն էլ

հեծում էր նրա երախտագիտութեան պսակների ծանրութեան տակ։ Իսկ ինչ վերաբերում էր մարմարիոնի կենսատուութեան հրաչքին, նա չիկնում էր լիչելով թէ դա ինչ ազդեցութիւն էր գործել իր վրայ։ Նա հաւատում էր, որ դա կատարուած էր մարդու կախարդութեամբ, սակայն գործի ելքից նա համոզուած էր, որ դա աստուածների գաւառն նչանը չէր։

Աղրակի մասին, նրանք միայն լսում էին, որ դեռ կենդանի է. պահած իր հիւանդութեան անկողնում, նա կամաց կամաց առողջանում էր իր ստացած հարուածի հետևանքից. նա այլ ևս չէր խանգարում սիրահարներին, բայց այդ անգործունէութեան մէջոցին նա խորհում էր թէ երբ և ինչպէս լուծէ իր վրէժը։

Թէ առաւօտները Իօնէի տանը և թէ իրիկուններ չրջապատութեան ժամանակ, Նիդիան սիրահար զոյգի անբաժան և յաճախ միակ ընկերուհին էր։ Նրանք չէին դադարում թէ ինչ թաքուն մի հոգ սպառում էր նրա սիրտը. այն յանդուգն ազատութիւնը, որով նա երբեմն ընդմիջում էր նրանց խօսակցութիւնը, նրա քմահաճ և յաճախ խռովկան ձևերը, չուտով նեղում էին ի չիշատակ նրա մատուցած մեծ ծառայութեան և նրա տարաբախտութեան։ Նրանք մի տեսակ հետաքրքրութիւն էին զգում այդ կոյր աղջկայ մէջ և այդ հետաքրքրութիւնը, կարելի է, աւելի մեծ և աւելի զորավոր էր, նրա հէնց այդ տարօրինակ և կամակոր բնութեան պատճառով, նրա փափկութեան և կրքի օտարոտի փոփոխութեան, հանճարի և տիտութեան այն խառնուրդի, նրա փափկասրտութեան և կոպտութեան, նրա մանկավայել դիւրափոփոխ տրամադրութեան և կանացի հպարտ անդրդրութեան պատճառով։ Թէև նա մերժում էր իր

ազատագրությունը, սակայն նրան միշտ թոյլ էր տրւում ազատ լինել. նա գնում էր, ուր որ ուզում էր և ոչ մի սանձ չէր դրւում նրա խօսքերի կամ գործերի վրայ։ Նրանք զգում էին դէպի նա, որ այնքան ժժգեսխատ էր իր վիճակով և այնքան զգայուն դէպի ամեն մի վիրաւորանք, միևնոյն զթած և զիջանող գորովը, որ մի մայր զգում է դէպի իր երես տուած և հիւանդոտ զաւակը, վախենալով ի գործ դնել իր իշխանութիւնը նոյն իսկ այնպիսի դէպքերում երբ դա անհրաժեշտ է ի նպաստ երեխայի։ Օգուտ քաղելով այս ազատութիւնից՝ նա մերժեց այն ընկերակցութիւնը, որին նրանք որոշել էին նրա հետ ընկերանալ երթևեկելու ժամանակ։ Իր բարակ դաւազանը ձեռին, որով նա ուղղում էր իր քայլերը, նա այժմ էլ, ինչպէս իր նախկին անպաչպան դրութեան մէջ, պտտում էր Պոմպէյի բազմամարդ փողոցները. գրեթէ հրաշալի մի բան էր տեսնել թէ ինչ արագութեամբ և ինչ ճարպիկութեամբ նա գտնում էր իր ոլոր մոլոր ճանապարհը ամեն մի ամբոխի միջից, խուսափում էր տալիս ամեն մի վտանգից և առանց սխալուելու չարունակում էր իր տուերապատ ընթացքը քաղաքի ամենախճճուած պողոտաների մէջ։ Նրա ամենից մեծ հաճոյքը կայանում էր Վլոկուսի պարտէզն այցելելու մէջ և խնամելու այն ծաղիկները, որոնք դեռ հատուցանում էին նրա աչքը։ Երբեմն նա մտնում էր այն սենեակը, ուր Վլոկուս նստել էր և փորձում էր մի խօսակցութիւն բանալ նրա հետ, բայց նա սովորաբար յանկարծ կարում էր իր խօսքը, որովհետև Վլոկուսի ամեն խօսակցութիւնը դառնում էր դէպի մի միակ առարկայ— Իօն է. և այդ անունը երբ դուրս էր գալիս նրա շրթունքներից, մի չափուր էր խրում խեղճ աղջկայ

սիրտը։ Ցաճախ նա գտնում էր այն ծառայութեան համար, որ արել էր Իօնէլին. յաճախ նա լինքն իրեն ասում էր, «եթէ նա ընկած լինէր, Վլոկուս այլ ևս չէր կարող սիրել նրան». և այդ ժամանակ մութ և զարհուրելի մտքեր սողում էին նրա կրծքի մէջ։

Նա դեռ չէր անցել իր համար վիճակուած փորձերի միջից, երբ նա արել էր այդ ազնիւ ծառայութիւնը։ Նա երբէք ներկայ չէր եղել երբ Վլոկուս և Իօնէ միմեանց նման էին. նա երբէք չէր լսել այդ ձայնը, որ թէև զթալից իր հետ խօսած ժամանակ, չատ աւելի փափուկ էր հնչում մի ուրիշի հետ խօսելուց։ Այն տարուածը, որ ջախջախել էր նրա սիրտը, տալով նրան Վլոկուսի սիրոյ լուրը, սկզբում միայն ախրեցրել և ընդարմացրել էր նրան. աստիճանաբար նախանձը սառնում էր մի աւելի վայրենի և մի աւելի կատաղի կերպարանք. դա սառնում էր աստուածեան գոյնը—դա մրմնջում էր վրէժխնդրութիւն։ Ինչպէս տեսնում էք, քամին չարժում է միայն կանանչ տերևը, որ կպած է ճիւղին, մինչդեռ այն տերևը, որ ընկած էր գետնի վրայ խամրած, խանձուած, ջախջախուած, ոտնակոխ եղած և անկեանք, յանկարծ նոյն քամու չունչից բարձրանում է օդի մէջ, մէկ այստեղ, մէկ այնտեղ առանց նեցուկի և առանց հանգստութեան. նոյնպէս սէրը, երբ այցելում է երջանիկներին և յուսալիցներին, միայն թարմութիւն է բերում իր թևերի վրայ, նրա ուժգնութիւնը լոկ խայտալից է։ Բայց այն սէրը, որ ղրկուած է աչխարհի դալարագեղ բանտերից, որ անյոյս է, որ ամառ չ'ունի իր նետարձերի մէջ, պատուում և գետնից գետին է զարկում միևնոյն քամու միջոցով, որը չոլում է նրա կենսատնակ եղբայրներին։ Բայց չորացած տերևը ոչ մի ոտ չունի նրանից

կախուելու համար, նա հալածւում է, զարկւում է քարից քար, մինչև հոգիները դադարում են և նա ոտնակոխ լինելով յաւիտեան անհետանում է ցեխի մէջ։

Նիղիալի բարեկամից զուրկ մանկութիւնը ժամանակից առաջ խոտացրել էր նրա բնաւորութիւնը. կարելի է հեշտասիրութեան այն հրատապ ախտարանները, որոնց միջից նա ըստ երեոյթին անվնաս անցել էր, հասունացրել էին նրա կրքերը, թէև չէին ազատել նրա անարատութիւնը։ Բուրբոի չաւտութիւնները կարող էին զզուելցրած լինել նրան իրանց ժամանակին և Արբակի խնջոյքները կարող էին միայն սարսափեցրած լինել. բայց այն քամիները, որոնք անդիտակցաբար անցնում են հոգի երեսից, սերմեր են թողնում իրանց հետ։ Եւ ինչպէս մթութիւնը նպաստում է երեակայութեանը, սարսափահար ապշկայ նոյն իսկ կուրութիւնը օգնում էր անուշացնելու նրա սէրը վայրենի և ցնորական տեսիլներով։ Վլոկուսի ձայնը առաջինն էր եղել երաժշտութիւն հնչելու նրա ականջին, լոյսի դիմաբերութիւնը մի մեծ ապաւորութիւն էր թողել նրա մտքի վրայ. երբ նախնեաց տարին Գլոկուս հեռացաւ Պոմպէյից, խեղճ աղջիկը ամփարել էր իր սրտում նրա ասած ամեն մի բառը և երբ մէկը նրան տեսնում էր թէ ծաղկավաճառ աղջկայ այս բարեկամը և պատրոնը ամենից փայլուն և ամենից չնորհալի երիտասարդն էր Պոմպէյի զօսասէրների մէջ, նա զզում էր մի հաճելի հպարտութիւն և իր սրտում աւելի թարմ էր պահում նրա յիշատակները։ Նոյն իսկ նրա ծաղիկները խնամելու գործը, որ նա կամայ չանձն էր առել, ծառայում էր լոյսին նրա մտքի մէջ պահելու. նա միացրել էր նրա յիշատակի հետ ինչ որ ամենից չատ դիմիչ ազդեցութիւնն էր գործել

նրա վրայ և երբ նա մերժել էր յայտնել թէ ինչ քանի է նմանացրել Իօնէին իր երեակայութեան մէջ, դա կարելի է մասամբ այն պատճառով էր, որ բնութեան մէջ ինչ որ փայլուն և քնքոյշ բան կար նա արդէն իր մըտքում զգել էր Գլոկուսի հետ։ Եթէ իմ ընթերցողներից ոմանք սիրել են այնպիսի մի տարիքում, որի յիշողութիւնը այժմ նրանց ժպտալ պիտի տայ—մի տարիքում երբ երեակայութիւնը առաջ է վազում բանականութիւնից, թող նրանք ասեն թէ արդեօք այդ սէրը, իր բոլոր տարօրինակ և խճողուած նրբութիւններով, աւելի զգայուն չէր դեպի նախանձոտութիւնը քան բոլոր յետագայ տարիքները։ Ես այստեղ չեմ ուզում որոնել նրա պատճառը. ես այն դիտեմ միայն, որ դա մի սովորական իրողութիւն է։

Երբ Գլոկուս վերադարձաւ Պոմպէյ, Նիղիալի կեանքից անցել էր մի տարի ևս. այդ տարին, իր վշտերով, իր մենութեամբ, իր փորձերով, մեծապէս զարգացրել էր նրա միտքը և սիրտը և երբ աթենացին անդիտակցաբար նրան սեղմում էր իր կրծքին, կարծելով նրան հոգով մի երեխայ, ինչպէս նա տարիքով էր, երբ որ նա համբուրում էր նրա հարթ թուշը և իր թևի մէջ էր առնում նրա դողդոջուն իրանը, Նիղիան յանկարծ և որպէս թէ յայտնութեամբ զգում էր, որ իր երկար և անմեղութեամբ անուցած զգացումները սէր էին։ Դադարեցուած՝ բնականութիւնից Գլոկուսի ձեռքով,—դադարեցուած ապաստանել նրա յարկի տակ—դադարեցուած նրա հետ չնչել, թէև մի կարճ միջոց, մինչև նոյն օրը—դադարեցուած լինելով լսել թէ նա սիրում է մի ուրիշին, երբ իր զեղուն սիրտը բաբախում էր հազար ու մէկ երջանիկ, երախտաճանաչ և անուշ զգա-

ցումներով—զառապարտած լինելով այդ ուրիշի պատ-
ժամասորը և սպասուհին դառնալ—և վերջապես զառա-
պարտած լինելով մեկ անգամ ընդ միշտ զրկուլ իր
կատարեալ ազնչութիւնը,—ազնչութիւն, որի մէջ նա յա-
ւիտեան պիտի ծնար, բայց որը մինչև այդ ժամանակ նրա
մատղաշ միտքը նրան չէր սովորցրել,—իր կատարեալ
ազնչութիւնը մի մարդու մօտ, որը ամեն բան էր իր հա-
մար—ինչ զարմանք, ուրեմն, որ նրա վայրենի և ա-
րատարբեր հոգու մէջ բոլոր ատրերքը հնչում էին ան-
ներդաշնակ ձայնով. ինչ զարմանք, որ եթէ սէրը բըզ-
խում էր այդ բոլորի վրայ, դա չէր այն սէրը, որ ծըն-
ւում է աւելի արբազան և վսեմուկ զգացմունքներից:
Երբեմն նա սարսափում էր թէ մի գուցէ Վլոկուս հա-
կանայ նրա զաղտնիքը. երբեմն նա բարկանում էր թէ
ինչու նա արդէն չէ զուշակել այդ բանը. Վլոկուսի ան-
պիտակցութիւնը այդ մասին արհամարհանքի մի նշան
էր—կարող էր նա երևակայել, որ մի կույր աղջիկ կը
յանդգնէր այնքան հեռու երթալ: Իօնէի համար Նիկիա-
յի ունեցած զգացմունքները ամեն ժամ ծալլի նման
մակընթացութիւն և տեղատուութեան մէջ էին. մերթ նա
սիրում էր նրան որովհետև Վլոկուս սիրում էր. մերթ
ատում էր նրան հէնց այն պատճառի համար: Բոպէներ
էին պատահում երբ նա կարող էր խոզխոզել իր ան-
պիտակից սիկնոջը. բոպէներ, երբ նա կարող էր իր
կեանքը տալ նրա համար: Կրքի այս կատաղի և փըր-
թուն փոփոխութիւնները չափազանց խիստ էին,
որ նա երկար կարողանար դիմանալ դրանց: Նրա առող-
ջութիւնը խանդարուեցաւ, թէև նա ինքը չէր զգում
այդ բանը—նրա թշերը գունատուեցան—նրա ոտքերը
անկարողացան արտասուքները աւելի յաճախ էին գա-

լիս նրա աչքերին և աւելի քիչ ամօքում էին նրա
վիշտը:

Մէկ առաւօտ, երբ նա գնում էր աթենացու պար-
տէզը, իր սովորական գործին, պերիստիլի սիւների տակ
նա հանդիպեց Վլոկուսին, մի քաղաքացի վաճառականի
հետ. Վլոկուս զոհարներ էր գնում իր ապագայ հարսի
համար: Նա արդէն պատրաստել էր նրա սենեակը. այդ
օրուայ գնած զոհարներն էլ նա դրեց այդ սենեակի
մէջ—բայց նրանց վիճակուած չէր զարդարել Իօնէի
չնորհագեղ մարմինը. նրանք այսօր իսկ կարող են տես-
նուիլ Պոմպէյից հանուած զանձերը Նապօլեի թանգա-
րանի մէջ *):

«Այստեղ եկ, Նիդիա. ցած դիր այդ ամանը և այս-
տեղ եկ: Այս չղթան պիտի սառնաս ինձանից—կամ—
ահա, ես ինքս հագցրի: Տես,—Սերվիլիուս, չէ սազում
նրան»:

«Սքանչելի է», պատասխանեց ոսկերիչը, որովհետև
ոսկերիչները, այն ժամանակ էլ քաղաքավարի և չողո-
քորթ մարդիկ էին: «Բայց երբ այս գինդերը չողան Իօ-
նէի ականջների վրայ, այն ժամանակ, Բաքոս
վկայ. դուք պիտի տեսնէք թէ արչալի իմ արուեստը
կարող է աւելացնել գեղեցկուհու փայլը»:

«Իօնէի», կրկնեց Նիդիան, որ ցայժմ ընդունել էր
Վլոկուսի ընծան ժպիտներով և չիկնանքներով:

«Այո», պատասխանեց աթենացին, անոգութեամբ
խաղալով զոհարների հետ. «ես աշխատում եմ մի ընծայ
ընտրել Իօնէի համար, «բայց նրան արժանի ոչ մի բան
չը կայ»:

---

*) Մի քանի ապարանջաններ, չղթաներ և զոհարներ
գտնուեցան այդ տան մէջ:

Նա խօսելու միջոցին ցնցուեցաւ Նիղիալի մի յանկարծական շարժումից. աղջիկը չդիման բռնի պոկեց իր վզից և զարկեց գետին։

«Ի՞նչ պատահեց քեզ։ Ի՞նչ կայ Նիղիա, դու չես սիրում այս մնոտի առարկան, դու վչտացար»։

«Դու լինճ հետ միշտ վարուում ես ինչպէս մի գերու և մի երեխայի հետ», պատասխանեց Թեսսալուհին և նրա կուրծքը տրաքուում էր անզուսպ հեկեկանքներով. նա չտապելով զարձաւ դէպի պարտիզի դիմացի անկիւնը։

Գլոկուս չը գնաց նրա ետևից նրան սփոփելու. նա վչտացել էր. նա չարունակեց քննել գոհարները և երկարաբանութիւններ անել նրանց ձևերի վերաբերութեամբ — մէկը մերժել միւսը գովել և վերջ ի վերջոյ վաճառականը այնքան խօսեց նրա հետ մինչև նա բոլորն էլ գնեց. դա ամենաապահով ձևն է մի սիրահարի համար և մի ձև, որ ամեն մարդու խորհուրդ կը տայի ընդունել այն պայմանով միայն, որ նա մի Իօնէ դառած լինի։

Երբ նա վերջացրեց իր գործը և ոսկերչին ճանապարհ դրեց, նա մտաւ իր սենեակը, զգեստները փոխեց, հնճաւ իր կառքը և գնաց Իօնէի մօտ։ Նա այլ ևս չէր խորհում կոյր աղջկայ կամ նրա անբաղդաբաղդ վարմունքի վրայ. նա արդէն մոռացել էր թէ այս և թէ այն։

Կէսօրից առաջուայ ժամերը նա անցկացրեց իր չքնաղ հեղինուհու մօտ, այնտեղից գնաց բաղնիքները, ընթրեց (եթէ ինչպէս առաջ ասել ենք, իրաւունք ունենալով այդ բառով թարգմանել հռոմայեցիների ժամը երեքի caena-ն) միայնակ և դրաւմը, որովհետև Պոմպէյն էլ ունէր իր հասարակաց ճաշարանները և վերա-

պատնալով տուն իր զգեստները փոխելու նախ քան նորից երթայ Իօնէի մօտ, նա անցաւ պէրեստիլից սիրահար մարդու բացակայ մտքով և անուշադիր աչքերով. նա չը նկատեց, որ խեղճ կոյր աղջայ մարմինը թեքուած մնացել էր ճիշտ այնտեղ, ուր նա թողել էր նրան։ Բայց թէև Գլոկուս չը տեսաւ նրան, աղջիկը անմիջապէս ճանաչեց նրա ոտքի ձայնը։ Նա բոլոր ժամանակը համբուում էր նրա վերադարձի րոպէները։ Նա հաղիւ մտել էր իր սովորական սենեակը, որի դուռը բացուում էր պէրեստիլի մէջ և հաղիւ մտախոհ նստել էր իր նըստարանի վրայ, երբ նա ղգաց, որ մէկը երկչոտութեամբ դիպաւ իր զգեստներին և դառնալով նա տեսաւ Նիդիալին, որ չոքել էր նրա առջև, իր ձեռքում բռնած մի փունջ ծաղիկ — մի քնքոյշ և յարմար հաչտութեան գոհ էր դա.—նրա աչքերը, իրանց մթութեան մէջ լառուած էին դէպի աթենացու երեսը և ողողուած էին արտօսրով։

«Ես վչտացրել եմ քեզ», ասաց աղջիկը, հեկեկալով, «և առաջին անգամն է դա։ Ես կը գերադասէի մեռնել քան մէկ րոպէի ցաւ պատճառել քեզ — ասա, որ լինճ ներում ես։ Տես, ես վերցրել եմ չղթան. ես ձգել եմ այդ իմ վիզը. ես երբէք չը պիտի բաժանուիմ դրանից — դա քո ընծան է»։

«Իմ սիրելի Նիդիա», պատասխանեց Գլոկուս, բարձրացնելով նրան և համբուրելով նրա ճակատը, «այլ ևս մի մտածիր դրա մասին։ Բայց ինչո՞ւ, զաւակս, դու այդպէս յանկարծ բարկացար։ Ես չը կարողացայ հասկանալ դրա պատճառը»։

«Մի հարցնի», ասաց նա, բոլոր կերպով չիկնելով։ «Ես լի եմ սխալներով և քմահաճոյքներով. դու գիտես,

որ ես մի երեխայ եմ միայն—դու լինքդ այնքան չճանաչում ես այդ բանը. արդեօք երեխայից կարելի է բացատրութիւն պահանջել իր գործած ամեն մի վնասութեան համար»։

«Բայց, իմ զեղեցիկս. դու չուտով այլ ևս երեխայ չես լինի և եթէ դու ուզում ես որ մենք քեզ հետ վարուենք ինչպէս մի կնոջ, այն ժամանակ դու պէտք է սովոր ես կառավարել այս կրքոտութեան տարօրինակ քմահնութիւնը։ Մի մոռանար, որ ես նախատում եմ քեզ. ոչ ես միայն երջանկութեան համար եմ խօսում»։

«Ճշմարիտ է», ասաց Նիդիան, «ես պէտք է սովորեմ ինքս ինձ կառավարել։ Ես պէտք է թագցնեմ, նուաճեմ իմ սիրտը։ Սա կնոջ գործն է և պարտականութիւնը. կարծեմ նրա առաքինութիւնը կայանում է կեղծաւորութեան մէջ»։

«Ինքնատանձութիւնը խարէութիւն չէ, իմ քաղցրիկ Նիդիա», պատասխանեց ամենայնին. «և դա մի առաքինութիւն է, որ հարկաւոր է թէ մարդկանց և թէ կանանց համար. դա ճշմարիտ անհատական օգտն է, նշանն այն արժանապատուութեան, որ ծածկում է»։

«Ինքնատանձութիւն, ինքնատանձութիւն, լաւ, լաւ, ինչ որ դու ասում ես ճշմարիտ է։ Երբ ականջ եմ դնում քո խօսքերին, Վլոկուա, իմ ամենից վայրենի մաքերը խաղաղում և մեղմանում են և մի անույշ անդորրութիւն գալիս է իմ վրայ։ Խրատիր, այո, առաջնորդիր ինձ միշտ, իմ ազատարարս»։

«Քո բարեսէր սիրտը քո ամենից լաւ առաջնորդը կը լինի՝ երբ դու սովորես նրա զգացումները կանոնաւորել»։

«Ա՛խ, այդ երբէք չի լինի», հառաչեց Նիդիան՝ սրբելով իր արտասուքները։

«Այդպէս մի ասիր. առաջին ճիգն է միայն դժուար»։

«Ես շատ եմ արել այդ առաջին ճիգերից», պատասխանեց Նիդիան, անմեղութեամբ։ «Իսկ դու, իմ Մենտոր, դու գիտում ես, որ այդքան դիւրին է ինքնատանձութիւնը։ Կարող ես դու թագցնել, կարող ես երբ և իցէ կանոնաւորել քո սէրը Իոնէի համար»։

«Սէր, սիրելի Նիդիա. ահ, դա բոլորովին ուրիշ բան է», պատասխանեց երիտասարդ դաստիարակը։

«Ես էլ այդպէս էի մտածում», պատասխանեց Նիդիան մի մելամաղձիկ ժպիտով։ Վլոկուա, կընդունես իմ խեղճ ծաղիկները։ Ինչ որ կ'ուզես արա նրանց – դու կարող ես տալ Իոնէին», աւելացրեց նա՝ մի քիչ վարանելուց յետոյ։

«Ո՛չ, Նիդիա», պատասխանեց Վլոկուա, դիմաբրաւութեամբ, դուշակելով թէ ինչ որ մի նախանձոտութիւն կար նրա խօսքերի մէջ, թէև նա երևակայում էր, որ դա մի զգայուն և ազնւագոյն երեխայի նախանձոտութիւն է. «ես քո զեղեցիկ ծաղիկները ոչ օքի չեմ տալ։ Նայիր այդտեղ և մի պակ հիւսիր. դա առաջին պսակը չի լինի, որ այդ քնքոյշ մատները հիւսել են ինձ համար»։

Խեղճ պղջիկը հրճուանքով նայեց Վլոկուայի կողքին։ Նա հանեց իր գօտիից գտնդուն թևերի մի կծիկ, կամ աւելի ճիշտ ասած բարակ ժապաւէնները, որոնք սովորաբար գործ էին ածում պսակներ հիւսելու համար և որոնց (որովհետև պսակներ հիւսել նրա արուեստն էր) նա միշտ կրում էր իր վրայ և սկսեց իր գործը աբաց և չնորհալի կերպով։ Նրա գեռատիպիթ թշերի վրայ

արտասուքի կաթիլները ցամաքել էին. մի հազիւ նկատելի բայց երջանիկ ժպիտ պարում էր նրա չրթունքների չուրջը. նա իրօք երեխայի նման լոկ զգում էր ներկայ րոպէի ցնծութիւնը. նա հաշտուել էր Գլոկուսի հետ. Գլոկուս մոռացել էր նրան. աղջիկը նստած էր նրա կողքին և նա անհոգութեամբ խաղում էր նրա մետաքսանման մազերի հետ. Գլոկուսի չունչը հովահարում էր նրա թուչը։ Իօնէն — անողորմ Իօնէն ներկայ չէր. ուրիշ ոչնչ չէր պահանջում, չէր բաժանում նրա ուշադրութիւնը։ Այո, նա երջանիկ էր և մոռացել էր ամեն բան. այդ րոպէին, նրա կարճ և բաղմաստանջ կեանքի այն սակաւաթիւ րոպէներից մէկն էր, որ նրա համար քաղցր էր ամբարել և յիշել։ Ինչպէս Թիթեռնիկը, հրապուրուելով ձմեռուայ արեգակից, մի կարճ միջոց հրճուում է նրա անակնկալ լոյսի մէջ, հրճուում է նախ քան զարթնում են հողմերը և վրայ է հասնում սառնամանիքը նրան կործանելու իրիկուանից առաջ. նոյնպէս էլ նա հանդչում էր մի ճառագայթի տակ, որը հաւանեալով սովորական երկնքնի հետ, ցրտացուցիչ չէր. և այն բնազդումը, որ պէտք է նրան զգուշացնէր դրա կարճատեւութեան մասին, հրամայում էր նրան լոկ ուրախանալ դրա ժպիտի ներքև։

«Գեղեցիկ դանդաւրներ ունիս», ասաց Գլոկուս։ «Ցաւակոյս չը կայ, որ նրանք մի ժամանակ մի մօր հրճուանքն են եղել»։

Նիպիան հառաչեց. այնպէս էր թուում, որ նա մի գերի չէր ծագումով. բայց նա միշտ խոյս էր տալիս իր ծնողների մասին խօսելուց և թէ նրանք աննշան մարդիկ էին եղել, թէ աղնուական՝ այդ մինչև վերջը չիմացան նրա բարեբարները և ոչ էլ ուրիշներ այդ հետաքր

նահմանները։ Տրամաբանեան և գաղտնիքի զաւակ՝ նա եկաւ և գնաց ինչպէս մի թռչուն, որ մի րոպէ մնում է մեր սենեակը. մենք մի կարճ ժամանակ միայն տեսնում ենք դրան թրթռալիս մեր առջև. մենք չը գիտենք թէ դա որտեղից է փախչում և դէպի ուր թռչում։

Նիպիան հառաչեց և մի կարճ լռութիւնից յետոյ, առաջ առանց պատասխանելու նրա նկատողութեանը։

«Բայց արդեօք չափազանց շատ վարդեր չեմ հիւսում քո պսակի մէջ։ Ես լսել եմ, որ վարդը քո սիրելի ծաղիկն է»։

«Եւ թող միշտ սիրելի լինի դա, իմ սիրուն Նիդիա, այն մարդկանց համար, որոնք ունին բանաստեղծութեան հոգին. դա սիրոյ և խնջոյքների ծաղիկն է. դա նաև այն ծաղիկն է, որ մենք նուիրում ենք լռութեան և մահին. դա բուրում է մեր ճակատների վրայ մինչդեռ կենդանի ենք և մինչդեռ կեանքը արժանի է ապրելու. դա թափւում է մեր գերեզմանների վրայ երբ մենք այլ ևս չը կանք»։

«Ո՛չ, երանի թէ», ասաց Նիպիան, «վախճանակ այս վաղաթառամ պսակին ես կարողանայի առնել քո կեանքի թելը Պարկանների ձեռքից և վարդերն այնտեղ հիւսել։

«Ձգնաղիկս, քո այդ փափաքը արժանի է մի ձայնի որ քոնիդ պէս յարմար է երգեր գեղգեղելու. այդ խօսքերդ արտասանուած են երգի ոգւով և ինչ էլ լինի իմ ճակատագիրը՝ ես չնորհակալ եմ քեզանից»։

«Ինչ էլ լինի իմ ճակատագիրը. արդեօք դա արդէն վիճակուած չէ՞ ամեն փայլուն և գեղեցիկ բանի։ Իմ վարպս իզուր էր։ Պարկանները նոյնչափ կոշմնակալ կը լինեն քեզ համար՝ որչափ ես կարող չէի լինել։

«Կարող էր այդպէս չը լինել Նիպիա, եթէ սէրը

մէջտեղ չը գար։ Քանի դեռ երիտասարդ եմ, կարելի է, որ մի կարճ միջոց մոռանամ իմ երկիրը։ Բայց արդեօք ինչ աթենացի, իր լուրջ տարիքում կարող է մոռանալ թէ ինչ էր Աթէնքը և բաւարար լինել, որ ինքը երջանիկ է, մինչդեռ նա ընկած է — ընկած և մինչև յաւիտեան։

«Եւ ինչո՞ւ մինչև յաւիտեան»։

«Ինչպէս որ մոխիրը չէ կարող նորից բոցավառուիլ — ինչպէս որ մէկ անգամ մեռած սէրը չէ կարող նորից վերակենդանանալ, նոյնպէս ազատութիւնը երբ մէկ անգամ հեռանում է մի ժողովուրդից այլ ևս ձեռք չէ գալիս։ Բայց չը խօսենք այս նիւթերի վրայ, որոնք անյարմար են քեզ»։

«Ո՞նց, ո՛հ, դու սխալւում ես։ Ես էլ ունիմ իմ հաւաչանքները Յունաստանի համար. իմ օրօրոցը օրօրուած է Ալիմպոսի սառոռուում. աստուածները հեռացել են այդ լեռնից, բայց նրանց հետքերը կարելի է տեսնել — տեսնել նրանց կլիմայի զեղեցկութեան մէջ. ինձ ասում են որ դա դեղեցիկ է և ես ղղացել եմ դրա զեփիւռները, որոնց առջև ալասեղ հովերը կոպիտ են. ես ղղացել եմ նրա արեգակը, որի մօտ այս երկինքները սառուցեալ են. ո՛հ, խօսիր ինձ Յունաստանի մասին։ Որքան էլ խեղճ և տգէտ լինեմ ես նորից կարող եմ հասկանալ քեզ և ես կարծում եմ, որ եթէ ես միացած լինէի այն եղերքներում, եթէ ես եղած լինէի մի յունական օրիորդ, որի վիճակն է սէրել և սիրուիլ, ես ինքս կարող կը լինէի դինել իմ սիրականիս ձեռքը մի ուրիշ Մարաթոնի կամ մի նոր Պլատէայի համար։ Այս, այն ձեռքը, որ այսօր վարդեր է հիւսում, ձիթենու դափնիներ պիտի հիւսէր քեզ համար։

«Եթէ այդպիսի մի օր երբ և իցէ դար», ասաց Գլոկուս բռնկելով կոյր թեսալուհու ոգեորութիւնից և կէս բարձրանալով իր տեղից.—«Բայց ո՛չ, արևը մտել է և պիչերը մեզ հրամայում է մոռանալ,—և մոռացութեան մէջ ուրախ լինել,—հիւսիր ծաղիկները»։

Բայց աթենացին բռնադատական զուարթութեան մի մելամաղձիկ ձայնով արտասանեց այդ վերջին բառերը և խորասուզուելով մի մռայլ մտածութեան մէջ նա միայն ուշքի եկաւ երբ մի քանի րոպէ լեռւ Նիդիան ցած ձայնով սկսեց երգել հետևեալ բառերը, որ Գլոկուսը սովորացրել էր նրան։

ՊԱՏՃԱՌԱՆԵՐ ԶՈՒԱՐՃԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Ո՞վ կը յանդգնի կըրկել այն դափնին
Որ հերոսների ճակատն է պճնել,
Դափնին նուիրուած Օրերի չիրմին,
Օրեր որ վաղուց սահել են անցել։
Ո՞վ կը յանդգնի խանդարել քաջին
Կամ մէկ տերևը նրա դամբանի,
Նրան է ձօնուած կանանչ սարդևնին
Մի զգլխը ծաղկին այդ սուրբ ցօղունի։
Սակայն ծաղկում է վարդը գալիսար
Թէ ազատ մարդու թէ գերու համար։

II

Եթէ պատնում է լիշողութիւնը
Դէպ մեռելների չքնեղ դամբարան,
Եթէ կորած է ազատութիւնը
Եւ նրա յոյսը չքուած յաւիտեան,

Դա մեզ տալիս է հզօր պատճառանք
Վայելքների մէջ անյոնելու մեր կեանք.
Եկ, հիւսիր պըսակ, հիւսիր վարդերը,
Դէթ գերութեան մէջ այս վարդն է մերը—
Մեր թոյլ սրտերին մեր արի նախնիք
Ծաղրածու պիծով թողած են ծաղիկ։

III

Ֆիլէի չքեղ բլուրի վրայ
Լուռ է քաջերի ոսկի սրտփիւնը,
Եւ կանգ է առած զարկը այն սրտի
Ուր բորբոքւում էր փառքի ափիւնը։
Բայց գեռ եղերքում կապոյտ վտակի
Փայլում են ոսկերն արծաթեայ երգի,
Եւ գեռ գիշերը զարթնում է սոխակ,
Նրա գայլայլով հրճւում է լուսնակ։
Այո, ընկած ենք սակայն չենք թշուառ
Եթէ ապրելու գեռ կայ մի պատճառ։
Սէրն անպրանիկն է մեր արարչութեան
Նա ամենից վերջ կ'իջնէ գերեզման։

IV

Հիւսիր, ուրեմըն, հիւսիր ինձ պըսակ,
Գեռ ԳԵՂԵՑԻԿՆ մեզ է պատկանում,
Մինչ փայլում երկինք, հոսում է առուակ,
Գեռ ԳԵՂԵՑԻԿՆ մեզ է պատկանում։
Ինչ որ փայլուն է, գիրգ և աննման,
Թէ լուսոյ գրկում և թէ մթութեան,
Մեզ յիշեցնում է Հելլադան չքնաղ,

Սոքում մեր վիշտն իր ձայնով խաղաղ։
Հիւսիր ինձ պսակ, մը չար վարդերի
—Բաղցր յիշատակներ իմ մատաղ կեանքից—
Եւ ես առնում եմ բոլորը իմ երկրի
Օտար ծաղկունքի անուշ չրթունքից։

Գլուխ Ը.

Նիկիան հանդիպում է Ջալիային։ Հեթանոս քրոջ և հաւատացեալ եղբօր տեսակցութիւնը։ Մի ամենացաւ գաղափարը քրիստոնէութեան մասին։

«Ի՛նչ երջանկութիւն Իօնէի համար. ինչ երանութիւն միշտ Գլոկուսի կողքին գտնուել, միշտ նրա ձայնը լսել։ Եւ Իօնէն կարող է տեսնել նրա երեսը»։

Այս էր կոյր աղջկայ մենախօսութիւնը, մինչդեռ երեկոյեան վերջալոյսի ժամանակ, նա վերադառնում էր իր նոր տիրուհու տունը, ուր Գլոկուսն արդէն գնացել էր։ Յանկարծ մի կանացի ձայն ընդմիջեց նրա սրտապին մտածութիւնները։

«Կոյր ծաղկավաճառ աղջիկ, ձեր ես գնում։ Զամբիւղ չը կայ քո թևի տակ. մթթէ վաճառել ես բոլոր քո ծաղիկները»։

Այն անձնաւորութիւնը, որ այս խօսքերն ուղղել էր Նիկիային, մի գեղեցիկ օրիորդ էր, բայց մի չանդուդն և անամօթխած դէմքով. դա Ջալիան էր՝ Պիտէդի աղջիկը։ Նա խօսելու ժամանակ կիսով չափ բարձրացրել էր իր քօղը. նրան ընկերացած էր ինքը Պիտէդ, և մի ծառայ առջևից առնում էր մի լապտեր. վաճառականը և իր աղջիկը վերադառնում էին իրանց դրացիներից մեկի տնից, ուր հրաւիրուած էին ընթրիքի։

«Ձեռ լիշում իմ ձայնը», չարունակեց Ջուլիան. «Ես հարուստ Պիտիդի աղջիկն եմ»։

«Ա՛հ, ներեցէք ինձ. այո, ես այժմ լիշում եմ ձեր ձայնը։ Ո՛չ, ազնիւ Ջուլիա, ես այլ ևս ծաղիկներ չեմ վաճառում»։

«Ես լսեցի, որ այն գեղեցիկ յոյնը—Գլոկուսը քեզ գնել է. այդպէս է, իմ սիրուն զերխա», հարցրեց Ջուլիան։

«Ես ծառայում եմ Նէապօլսեցի Իօնէլին«, պատասխանեց Նիզիան՝ խոյս տալով հարցից։

«Ա՛, ուրեմն ճչմարիտ է որ...»։

«Ե՛կ, ևկ», ընդմիջեց Պիտիդի, իր վերարկուն քաշած մինչև իր բերանը, «պիները ցրտում է, ես չեմ կարող ասասել ասասել, քանի որ դու ուզում ես չասասխոսել այդ կոյր աղջկայ հետ. ևկ և ասա, որ գալ տուն՝ եթէ ուզում ես խօսել նրա հետ»։

«Ե՛կ, վոքրիկ», ասաց Ջուլիան այնպիսի մի ձևով, որ սովոր չէր մերժում ստանալու. «ես չատ բան ունիմ հարցնելու քեզանից. ևկ»։

«Այս պիշեր չեմ կարող, արդէն ուշ է», պատասխանեց Նիզիան։ Ես պէտք է տուն վերադառնամ. լինչպէս պիտես, ազնիւ Ջուլիա, ես ազատ չեմ»։

«Ինչ, մթթէ հեզ Իօնէլն կը նախատէ քեզ, եթէ ուշանաս։ Ա՛, տարակոյս չը կայ, նա մի երկրորդ Թալէոսրիս է։ Լաւ, ուրեմն, վազը ևկ. չը մոռանաս, լիշիր որ ես քո հին բարեկամն եմ»։

«Ես կը կատարեմ ձեր հրամանը», պատասխանեց Նիզիա. և Պիտիդ նորից անհամբերութիւնով կանչեց իր աղջկան, որը սպասեցրեց հետևել իր հօրը՝ առանց հարցնելու իր կշռաւոր հարցը։

Այժմ վերադառնանք Իօնէլին։ Այդ օր, Գլոկուսի առաջին և երկրորդ այցելութիւնների մէջ եղած ժամանակը չատ ուրախութիւն չէր եղել նրա համար. նրա եղբայրը եկել էր նրան այցելութեան։ Այն գիշերուանից լսուել, որ նա Գլոկուսի հետ ազատել էր իր քրոջը եգիպտացու ձեռքից, Իօնէլն այլ ևս չէր տեսել նրան մինչև այդ օր։

Զբաղուած իր մաքերով, իր մտածութիւններով, որոնք այնքան լուրջ էին և այնքան խորին՝ երիտասարդ քահանան ժամանակ չէր ունեցել խորհելու իր քրոջ վրայ և իրօք այդպիսի անհանգիստ մաքերի տէր մարդիկ, որոնք մի անընդհատ տենչ ունին աչխարհից վեր բարձրանալ—չատ քիչ ընդունակ են աչխարհային զբաղմունք տեսնելու իրանց կրծքի մէջ։ Հետևաբար Ալեկիլիէս չատ ուշ մտաբերեց մաքերի այն վախճան և բարեկամական վերաբերմունքը և այն քաղցրիկ մտերմութիւնը, որով նա իր պատանի տարիքում կապուած էր եղել Իօնէլի հետ և որոնք այնքան բնական էին նրանց մէջ եղած տարբերութիւնից։

Ինչևիցէ, Իօնէլն տխուր էր այդ տարաբաղդութեան. նա վերապրում էր այդ, նրա խիտ պաչտօնի բազմաթիւ պարտականութիւններին։ Եւ չնայած իր վայելուչ յոյսերի և իր նշանածի սիրոյ վրայ խորհելու ժամանակ, երբ նա լիշում էր իր եղբօր վաղաժամ ախտացած ճակատը, նրա անժպիտ շրթունքը և կորացած իրանը, նա հատչում էր, որ ատտուածների ծառայութիւնը կարող էր այդքան մռայլ մի տաւեր ձգել այս աչխարհի վրայ, որը իրենք ատտուածներն էին տեղծել։

Բայց այսօր երբ Ալեկիլիէս այցելեց իր քրոջը, մի տարօրինակ անդորրութիւն կար նրա ճակատի վրայ և

մի ավելի խազաղ և լինքնատանձ արտայայտութիւն՝ նրա վոս ընկած աչքերի մէջ. այս անդորրութիւնը և խաղաղութիւնը տարիներ էր լինչ Իօնէն չէր տեսել նրա դէմքի վրայ։ Այս հարևանցի փոփոխութիւնը լոկ լոպէական էր, դա մի տեսա խազաղութիւն էր, որ ամենաչնչին զեփիւռից կարող էր խանգարուիլ։

«Ատուածները օրհնեն քեզ, եղբայրս», ասաց Իօնէն, գրկելով նրան։

«Ատուածները։ Մի խօսիր այդպէս անվայել ձևով. կարելի է միայն մէկ Ատուած կայ»։

«Եղբայր»։

«Ի՛նչ, եթէ Նազովրեցու վէհ հաւատքը ճշմարիտ լինի։ Ի՛նչ, եթէ Ատուած մի արքայ լինի, Մէկ, Անեղական, Միակ։ Ի՛նչ, եթէ այս անթիւ աստուածները, որոնց սեզաններով լցուած է մեր աշխարհը, միայն դևեր լինեն, որոնք ուզում են մեզ մոլորեցնել ճշմարիտ հաւատքից։ Սա կարող է այդպէս լինել, Իօնէ»։

»Աւաղ, կարելի է հաւատալ, կամ եթէ հաւատանք, արդեօք դա մի մեղամաղձիկ հաւատք չէր լինի», պատասխանեց Նէապօլեցին։ «Ի՛նչ, բոլոր այս չքնաղ աշխարհը լոկ մարդկային դարձնել. լեռը դիւթազուրկ անել իւր օրէպից, ջուրը իր նկարից. ուրանալ հաւատքի այն գեղեցիկ չռայլութիւնը, որ բաժանում է ամեն բան, որ նուիրագործում է ամեն մի վարդ, որ երկնային մրմունջներ է դնում զեփիւռի ամեն մի թռիլ շնչի մէջ, սրանց այս բոլորը և աշխարհը լոկ հող և փոշի դարձնել։ Ո՛չ Ալէկիդէս. մեր սրտերի ամենից վսեմ բաները մենք պարտական ենք այն դիւրահաւատութեան՝ որ ամբողջ ոգիները լցնում է աստուածներով»։

Իօնէն պատասխանում էր մի մարդու նման, որ

հաւատում է հին դիցաբանութեան բանաստեղծութեանը։ Այդ պատասխանից մենք կարող ենք հասկանալ թէ ինչքան դժուար և խիստ էր այն պատերազմը, որ քրիստոնէութիւնը պիտի մղեր հեթանոսութեան դէմ։ Շնորհաշուք Ալէքսրդապաշտութիւնը երբէք չէր լռում նրանց ամբողջ կեանքի մէջ, մինչև անգամ նրանց անպէսն ամենաչնչին գործերը հիւսուած էին դրա հետ,—դա կազմում էր կեանքի մի մասը ինչպէս ծաղիկները մի մասն են թիրսուսի։ Ամեն մի դէպքում նրանք լիչում էին մի աստուած, ամեն մի բաժակ գինի խմելուց առաջ նրանք կատարում էին մի պինեձօն. նոյն իսկ նրանց չէնքի ծաղկապսակները նուիրուած էին մի աստուածութեան. նրանց նախնիքները, սրբազնացած՝ նախապահում էին, որպէս Լարէները, նրանց օջախների և դանլիճների վրայ։ Հաւատքի այնպիսի մեծ առատութիւն կար նրանց մէջ, որ նրանց երկրից մինչև այսօր էլ կռապաշտութիւնը կատարելապէս արմատախիլ չէ եղել. դա միայն փոխել է իր պաշտօղութեան առարկան. դա այժմ դառնում է դէպի անթիւ սուրբեր, ուր մի օր երկրպագում էր աստուածութիւնների առջև. խումբ խումբ մարդիկ, թափառում են սուրբ Յանուարիուսի և սուրբ Ստեփաննոսի խորանները փոխանակ Խիսի և Ապոլլոնի տաճարները, և այնտեղ յարգանքով ականջ են դնում սրբերի խօսած դաբիրներին։

Բայց այս աւելորդապաշտութիւնները, նախնի քրիստոնեաների համար այնքան արհամարհանքի առարկայ չէին, որքան սարսափի։ Նրանք անհաւատ հեթանոս փիլիսոփայի նման չէին հաւատում, որ աստուածները լոկ քահանաների հնարած բաներն էին, ոչ էլ ռամիկ ամբոխի նման հաւատում էին թէ պատմութեան աղօտ

լոյսի համաճայն, նրանք մահկանացուներ էին եղել իրանց նման։ Նրանք երևակայում էին, որ հեթանոսական աստուածութիւնները չար ոգիներ էին,—նրանք Հնդկաստանի և Արևելքի մեալղեմ դևերին անզգամում էին Իսալիա և Յունաստան և Նումպիերի և Մարսի մէջ, նրանք սարսափով անուանում էին Մողոքին և Սատանային։

Ապէկիդէս դեռ պաշտօնապէս չէր ընդունել քրիստոնէութիւնը, բայց նա այդ անելու վրայ էր։ Նա արդէն հաւատում էր Օլինթոսի վարդապետութիւններին. նա արդէն երևակայում էր, որ հեթանոսութեան վատ երևակայութիւնը ներշնչուած էր մարդկութեան մեծ թշնամու կողմից։ Իօնէի անմեղ և պարզ պատասխանից նա մի սարսափ զգաց։ Նա չսպասեց բուռն կերպով ջրել նրա սաւը, բայց նրա պատասխանները այնքան չիմի էին, որ Իօնէն վախեցաւ թէ նրա բանականութիւնը խանգարուած էր։

«Ա՛հ, իմ սիրելի եղբայրս», ասաց նա, «այս դառն պարտականութիւնները վճռել են քո ուղեղին։ Ե՛կ ինձ մօտ, Ապէկիդէս, իմ եղբայրս, իմ սիրելի եղբայրս. սէր ինձ ձեռքդ, թող սէր ինձ սրտիդ այդ ցաւը քո ճակատից.—հիմա մի նախատիր ինձ, ես քեզ չեմ հասկանում. խորհիր միայն, որ Իօնէն չէր կարող վշտացնել քեզ»։

«Իօնէ», ասաց Ապէկիդէս, քաշելով նրան իր կրծքը և գորովալից կերպով նայելով նրա երեսին, «կարող եմ մոռանալ, որ այս դեղեցիկ կաղմուածքը, այս պիծակ սիրտը վիճակուած են յաւիտենական տանջանքի»։

«Dii meliora *). քաւ լիցի», ասաց Իօնէ, իր գարի

*) Աստուածները ոչ արասցեն։ Ծ. Թ.

սովորական բառերով, որոնցով նրա ժամանակակիցները կարծում էին կարելի է խափանել մի չարագուշակ նշանի ազդեցութիւնը։

Այդ բառերը և նրանց պարունակած նախապաշարումը, ծակեցին Ապէկիդէսի ականջը։ Նա վեր կացաւ, ինքն իրան մի բան մրմնջաց և դիմեց դէպի սենեակի դուռը. յետոյ կէս ճանապարհին կանգ առնելով, նա անձկութեամբ նայեց Իօնէին և իր թևերը բացաւ։

Իօնէն ուրախութեամբ նետուեցաւ նրա բազուկների մէջ. Ապէկիդէս գգուանքով համբուրեց նրան և յետոյ ասաց.

«Մնա՛ բարեաւ, իմ սիրելի քոյր։ Երբ մենք նորից հանդիպենք, կարելի է դու այլ ևս ոչինչ կը լինես ինձ համար. մոռ ուրեմն այս գգուանքը, որ դեռ լի է երեխայութեան վիշտակներով, այն տարիքի, երբ հաւատքը, յոյսը, դաւանութիւնները, սովորութիւնները, չահերը, նպատակները մի՛ևնոյնն էին մեզ համար։ Այժմ այդ կապը պիտի քակուի»։

Այս տարօրինակ խօսքերով նա դուրս եկաւ տնից։

Այս էր իսկապէս, նախնի քրիստոնեաների ամենից մեծ և ամենից խիստ առասպանքը. նրանց հաւատքը նրանց բաժանում էր իրանց ամենասիրելի ազգականներից։ Նրանք չէին կարողանում առնչութիւն ունենալ այնպիսի մարդկանց հետ, որոնց ամենից սովորական գործերը, ամենից սովորական խօսակցութեան ձևերը լի էին կռապաշտութեամբ։ Նրանք տարսափում էին, երբ լսում էին սիրոյ երանութիւնների մասին, որովհետև սիրոյ անունը նրանց ականջներին դպչում էր մի սատանայի անուան միջոցով։ Այս բանը, որ նրանց տարաբախտութիւնն էր, էր նաև նրանց զօրութիւնը։

Եթէ դա բաժանում էր նրանց աշխարհի մնացորդ մասից՝ դա, նրանց աւելի սերտ կապով կաշկանդում էր միմեանց հետ։ Երկաթեայ մարդիկ էին այդ մարդիկը, որ տարածում էին Աստուծոյ խօսքը. և նրանց միացնող հանգոյցները նոյնպէս երկաթեայ էին։

Երբ Գլոկուս տեսաւ Իօնէին, Իօնէին արտասուում էր. երիտասարդն արդէն ստացել էր մխիթարելու անույշ մենաշնորհը։ Նա Իօնէից լսեց նրա և նրա եղբօր տեսակցութեան պատմութիւնը։ Բայց նրա լեզուի չիմանալուց, մի լեզու, որ ինքն ըստ ինքեան այնքան չէր օտար է մի մարդու համար, որ պատրաստ չէ լսելու այդ, նա էլ Իօնէի պէս չը դիտեր ինչ մտածել Ապէկիդէսի նպատակի կամ նրա ապագայ մտադրութեան մասին։

«Արդեօք դու չգա՞ս բան ես լսել», հարցրեց Իօնէն, «նազովրեցիների այս նոր աղանդի մասին, որի վրա իմ եղբայրը խօսում էր»։

«Ես յաճախ շատ բան եմ լսել նրա հետևողների մասին», պատասխանեց Գլոկուս, «բայց նրա ճիշդ վարդապետութիւնների մասին ես մի բան չը գիտեմ, բացի այն, որ դրա մէջ մի ինչ որ բան կայ դերբնականապէս ցուրտ և մռայլ։ Նրանք իրենց համակիրներից հեռու են ապրում. մեր պահակների նոյն իսկ պարզ դործածութիւնը կարծես նրանց սարսափեցնում է. նրանք ոչ մի համակրութիւն չ'ունին կեանքի զուարճութիւնների համար. նրանք զարհուրելի սպառնալիքներ են կարդում մարդկութեան դլխին մի ապագայ կործանման վերաբերութեամբ. մէկ խօսքով, կարծես նրանք իրենց անժպիտ և մռայլ դաւանութիւնը դուրս են քերել Տրոֆոնիուսի քարանձաւից։ Սակայն», չարունակեց Գլոկուս, մի կարճ լռութիւնից յետոյ, «նրանց մէջ գտնուած են մեծ զօրութեան և հանճարի տէր մարդիկ, նրանք ունեցել են նորահաւատացներ նոյն իսկ Աթէնքի արիապագոսների միջից։ Ես լաւ լիշում եմ, որ իմ հայրը խօսում էր մի տարօրինակ այցելուի մասին, որ քանի տարի առաջ եկել էր Աթէնք. կարծեմ նրա անունը Պօղոս էր։ Իմ հայրս էլ գտնուած է եղել այն անագին ամբոխի մէջ, որ հաւաքուած է եղել մեր հնաոլիչատակ բլուրներից մէկի վրայ լսելու այդ Արեւելքի իմաստունի խօսքերը. այն լայնասփիւռ ժողովուրդի մէջ ոչ մի մրմունջ չէր լսում. այն աղաղակները և այն կատակները, որոնցով սովորաբար ընդունում էին մեր առեղտաբանները, նրա համար լռում են և երբ այս խորհրդաւոր այցելուն վանդնում է. այդ բլուրի ամենաբարձր գագաթի վրայ, մինչդեռ նրա ներքև տարածուած էր չնչարձակ ամբոխը, նրա կերպարանքը և նրա կեցուածքը ահ են տարածում բոլոր սրտերի վրայ նախ քան նա բաց էր անում իր բերանը։ Ինչպէս հայրս ասում էր, նա մի բարձրահասակ մարդ չէր, բայց նրա դէմքը շատ ազնիւ էր և տպաւորիչ. նրա դէմքատները սև էին և լայն. մայր մտնող արևը, պրովիդեան իրիկուն է եղած ժամանակը չեզ փայլում էր նրա հասակի վրայ, մինչդեռ նա կանդնած էր ուղիղ, անշարժ և հրամայական ձևով. նրա երեսը շատ մաչուած էր և կրում էր իր վրայ այնպիսի նշաններ, որոնք ցոյնում էին թէ մարդը դիմադրած էր դժբախտութեանց և դանազան կլիմաների ամենաթիւատ փոփոխութիւններին. բայց նրա աչքերը փայլում էին, դրեթէ մի չնաշխարհիկ բոցով. և երբ նա իր ձեռքը բարձրացնում է խօսելու, այդ չարժումը կրում էր իր մէջ մի

մարդու վեհափառութիւնը, որի վրայ իջած էր մի Աստուծոյ Հոգին։

«Ո՛վ աթենացի մարդիկ», նա այդպէս է սկսել, «ես տեսայ ձեր քաղաքում մի սեղան այս արձանագրութեամբ — ԱՆԾԱՆՕԹ ԱՍՏՈՒԾՈՅՆ։ Դուք չիմանալով պաշտում էք այն Աստուծոյն, որին ես ծառայում եմ։ Այն, որ մինչև հիմա ձեզ համար անծանօթ էր, ես այժմ եկել եմ ծանօթացնելու»։

«Ցեսոյ այդ զարմանալի մարդը յայտնում է թէ այս աշխարհի բոլոր բանների մեծ Արարիչը, որ մարդկանց համար որոշել է իրանց ազգութիւնները և իրանց գանազան երկիրները—այս երկրի և տիեզերական երկնքի տէրը չէ բնակւում ձեռքերով չինուած տաճարների մէջ. թէ Նրա ներկայութիւնը, Նրա Հոգին գտնւում են այն օդի մէջ, որ մենք շնչում ենք. թէ մեր կեանքը մեր գոյութիւնը բոլորը նրա ձեռքումն է։ «Կարծում էք դուք», դիմում է նա, որ Աներևոյթը նմանում է ձեր ոսկեայ և մարմարեայ արձաններին։ Կարծում էք դուք որ Նա զոհի պէտք ունի ձեղանից. Նա, որ երկինքը և երկիրը ստեղծեց»։ Ցեսոյ նա խօսում է մի սարսափելի ապագայի մասին, աշխարհի վերջի մասին, մի երկրորդ յարութեան մասին, որի վերաբերութեամբ արուած է մարդկութեան այն հզօր նկարի յարութեան միջոցով, որի կրօնքը նա եկել էր քարոզելու։

«Երբ նա այսպէս խօսեց, երկար զսպուած մրմունջը կոտրեց իր կապանքները և այն վիխիսոփանները, որ խառնուած էին ժողովուրդի մէջ, սկսեցին բարբառել իրանց խմաստալից արհամարհանքը. այնտեղ երևացին Սաուլիկի ցրտացուցիչ խոժոռ դէմքը և ցինիկի ծաղրածու ժպիտը և Եպիկուրեանը, որ չէ հաւատում նոյն իսկ մեր Ելիսէին, մի զուարճալից կատակ արեց և ծիծաղելով անցաւ ժողովուրդի մէջ. բայց ժողովուրդի խորին սիրտը զգացուած էր և թրթռում էր և նրանք զոռում էին թէև իրանք չը գիտէին պատճառը, որովհետև իրօք այդ օտարականը ունէր մի մարդու ձայնը և վառահեղութիւնը, որին անծանօթ Աստուածը կարծես յանձնած էր Իր կրօնքի ուսուցումը»։

Իօնէն ականջ էր դնում լարուած ուշադրութեամբ և պատմողի լուրջ և անձկալից ձևերը ցոյց էին տալիս այն տպաւորութիւնը, որ նա ինքը ստացել էր մի մարդուց, որ հեթանոս Մարսի բլուրի վրայ ներկայ էր գտնուած Քրիստոսի խօսքի ազատիլը լսելու։

Գլուխ Զ.

Գանապանը, ապխիկը և գլադիատորը։

Դիոմեդի տան դուռը բաց էր և Մէդոնը, ձեր գերին նստած էր այն սանդուխքների ստորոտին, որ առաջնորդում էր դէպի ապարանքը։ Պոմպէյի հարուստ վաճառականի այդ ճոխ ապարանքը այսօր էլ կարելի է տեսնել քաղաքի դրան մօտ, գերեզմանների փողոցի սկզբում. տան մերձակայքը չատ ուրախ էր՝ չը նայելով մեռելների դրացիութեանը։ Դիմացի կողմում, բայց մի քանի մետր աւելի մօտ քաղաքի դրանը, կար մի մեծ հիւրանոց, ուր յաճախ կենում էին այն մարդիկ, որոնք գործով կամ զուարճախրութեամբ գալիս էին Պոմպէյ։ Պանդոկի դրան առջևի բաց գետինը այժմ ծածկուած էր գորգերով, սալյակներով և կառքերով, որոնցից ոմանք նոր հասել էին և ոմանք էլ նոր հեռանում էին. այդտեղ սիրում էր բոլոր աղմուկը և ողևորութիւնը մի

հասարակաց ժողովրդական հիւրանոցի։ Դրան առջև մի քանի երկրագործներ նստած մի նստարանի վրայ և մի կոլորակ սեղանի մօտ՝ ըմպում էին իրանց առաւօտեան բաժակները և խօսակցում էին իրանց կոչման գործերի վրայ։ Դրան կողքին թարմ և փայլուն գոյներով նկարուած էր դամա խաղացողների *) մխանջնեական նշանը։ Պանդոկի կառքի կողքին չինուած էր մի պատշգամ, ուր տեսնում էին մի քանի կանայք վերոյիշեալ երկրագործների ամուսինները—որոնցից ոմանք նստած էին և ոմանք չինուած վանդակապատ վրայ խօսում էին իրանց ցածի բարեկամների հետ։ Մի քիչ հեռու, մի խոր անկիւնում, կար մի ծածկուած նստարան, որի վրայ նստած էին երկու երեք հոգի աւելի չքաւոր ճանապարհորդներ և թօթափում էին իրանց զգեստների փոշին։ Միւս կողմում տարածուած էր մի ընդարձակ դաշտ, որ նախապէս եղել էր Պոմպէյի ներկայ քաղաքացիներից մի աւելի հին ցեղի գերեզմանատունը, իսկ այժմ փոխարկուած էր մի Ռ ա տ ր ի ն ո ւ մ ի, կամ վայրի ուր այրում էին մեռեալներին։ Սրանցից հեռու բարձրանում էր մի գեղազուարթ ամարանոց՝ կիսով չափ թաղնուած ծառերի մէջ։ Տապանաքարերը իրանց բաղմազան և չնորհալի ձևերով, այն ծաղիկները և զարդարութիւնը, որով նրանք չրջապատուած էին, ոչ մի մելամաղձիկ աղդեցութիւն չէին գործում անցորդների վրայ։ Քաղաքի դրան չատ մօտ, մի փոքրիկ անկիւնում, լուռ կանգնած էր հռոմայեցի կիրթ պահակը. արևի ճառագայթի տակ փայլում էին նրա յղկուած խոյրը և այն նիզակը, որի վրայ նա յենուած էր։ Քաղաքի դուռը բաժանուած էր երկու

*) Մի ուրիշ հիւրանոց էլ կայ Պոմպէյի մէջ նոյն նկարով։

մասի, մէջտեղինը կառքերի համար և միւսները հետեւակների. և նրա երկու կողմում բարձրանում էին այն չաղի պարիսպները, որոնք չրջապատում էին քաղաքը։ Որոնք կառուցուած էին տարբեր ժամանակներում, նայած թէ պատերազմը, ժամանակը կամ երկրաչարժը լինչպէս էին չախչախել այդ ունայն պաշտպանութիւնը։ Պարիսպների մէջից չաճախ բարձրանում էին քառանկիւնի բերդեր, որոնց դաղաթները գեղատեսիլ անտարբերութեամբ խանդարում էին, որմի միակերպանի և կանոնաւոր գիծը. դա մի լաւ հակապատկեր էր կազմում այժմեան սպիտակ և հարթ հաւասար չինուածքներին։

Այն ոլորուն ուղին, որ քաղաքի այդ կողմից առաչնորդում էր դէպի Հերկուլանում, աչքից կորչում էր կախուած որթերի մէջ և որթերից վեր վեհափառ Վեզուվը խաժռուած էր իր սեգ կերպարանքը։

«Լսել ես նոր լուրը, ծեր Մեղոն», ասաց մի մանկամարդ կին, որի ձեռքում կար մի կուժ և որ կանգ առաւ Դիամիդի տան դրանը գերու հետ չտաղտկանալու, նախ քան երթալ մերձակայ պանդոկը և լցնելով իր կուժը՝ սիրաքաղիկ անկը ճանապարհորդների հետ։

«Նոր լուրը, ինչ լուր», ասաց գերին, բարձրացնելով իր աչքերը գետնից։

«Ինչպէս թէ ինչ լուր. այսօր առաւօտ քաղաքի դռնից ներս մտաւ այնպիսի մի այցելու... անպատճառ դու այդ ժամանակ գետ քնած էիր»։

«Ա՛», ասաց գերին անտարբեր եղանակով։

«Այո, մի ընծայ ազնիւ Պոմպոնիանուսի կողմից»։

«Մի ընծայ, դու նոր ասացիր մի այցելու»։

«Դա թէ այցելու է և թէ ընծայ։ Ոսկեմի խմացիր,

դու ախմար, որ դա մի վերին աստիճանի զգեցիկ և երիտասարդ վագր է, որ ուզարկուած է մեր մօտակայ խաղերի համար ամփիթեատրոնում։ Լսում ես, Մեղոն, ահ, ինչ զուարճութիւն։ Հաւատա, որ ես մի րոպէ չեմ քնի մինչև չը տեսնեմ. ասում են այնպէս մռնչում է որ...»։

«Խեղճ լիմար», ասաց Մեղոն ախուր և ցինիկ ձայնով։

«Այդ լիմարներդ քեզ համար պահիր, ծեր անպիտան։ Դա մի զգեցիկ բան է, մի վագր, մանաւանդ եթէ կարողանանք մեկին գտնել, որ նա ուտէ։ Մենք այժմ ունինք մի առիւծ և մի վագր. մի լաւ մտածիր, Մեղոն, և թէ չգոյէ երկու լաւ ոճրագործների, մենք կարելի է պիտի սախալենք տեսնել, որ նրանք միմեանց ուտեն։ Իմ կէսդ քո որդիդ զլադիատոր է, մի զգեցիկ և մի ուժեղ մարդ է, չես կարող համոզել նրան, որ կռուի վագրի հետ։ Այդպէս արա խնդրեմ, դու մեծապէս կը պարտաւորացնես ինձ. ահ, դու մի բարերար կը հանդիսանաս ամբողջ քաղաքին»։

«Վա՜հ, վա՜հ», ասաց գերին, մեծ խռովութեամբ. «դու մտածիր այն վտանգի մասին, որ քեզ է սպառնում նախ քան քո լեզուիդ թոյլ տաս այդպէս չարաչուք խօսքեր ասել եմ խեղճ տղայիս մահուան վրայ»։

«Իմ վտանգիս մասին», ասաց աղջիկը, երկիւղահար և արագ նայելով իւր շուրջը—«հեռո՛ւ ինձանից. խոսքերդ զլխիդ կատարուի՛ն»։ Եւ աղջիկը այդ ասելու ժամանակ դպաւ մի թալիսմանի, որ կախուած էր նրա վզի շուրջը. «վտա՛նգը». Ի՞նչ վտանգ է սպառնում ինձ»։

«Գանի օր առաջուայ երկրաշարժը ոչ մի ազդարարութիւն չունէր», ասաց Մեղոն։ «Ոչմի ձայն չունէր։

Արդեօք դա մեզ բոլորիս չէր ասում, «Պատրաստուեցէք մահուան համար. ամեն բանի վերջը մօտեցել է»։

«Բահ, լիմար խօսք», ասաց մանկամարդ կինը, վարդի դնելով իր պարեզօտի ծալքերը։ «Հիմա դու խօսում ես նազովրեցիների նման, կարծեմ դու էլ նրանցից ես։ Լաւ, սպիտակ ազռաւ, ես այլ ևս չեմ կարող խօսել քեզ հետ. դու աւելի և աւելի վատանում ես— Yale! Ով Հերկուլէս, ուզարկիր մեզ մի մարդ առիւծի համար և՝ մի ուրիշը վագրի։

Էօ, ինչ տեսարան ուրախ և պայծառ,
Ամեն մի չարքում տէղերի անտառ,
Աբի մարտիկներ ինչպէս Հերկուլէս,
Կռիւք կռիւքի տուած գալիս են հանդէս,
Անից լռում է մարդկանց չչնչիւն,
Երբ որ լսում են զէնքերի չաչիւն,
Թնդոտուտ քայլով գրոհում են անվախ,
Էօ, ինչ տեսարան պայծառ և ուրախ։

Երգելով այս կանացի տաղը մի արծաթահնչիւն և գեղարդ ձայնով և իր պարեզօտի քղանցքները վեր պահելով վազոցի փոշուց՝ երիտասարդ կինը թեթև քայլերով մտաւ բաղմամարդ պանդոկի մէջ։

«Իմ խեղճ որդիս», ասաց գերին կէս բարձրաձայն, «արդեօք այսպիսի բաների համար է, որ դու պիտի խաղաղասիրս։ Ո՛չ, Քրիստոսի հաւատքը, ես կարող էի պաշտել քեզ ամենայն անկեղծութեամբ լոկ այն զղուանքի համար, որ դու ներշնչում ես դէպի այս արիւնռուչ խաղերը»։

Ծերուկի գլուխը խոնարհուեցաւ նրա կրծքի վրայ։ Նա մնաց լուռ և մտայոյզ, բայց երբեմն-երբեմն նա

արբում էր իր աչքերը իր ղեկատի թևով։ Նրա սիրած իր որդու հետ էր. նա չը տեսաւ այն մարդուն, որ այժմ մերձենում էր քաղաքի դռնից արագ քայլերով և մի ինչ որ կատաղի և անհոգ կեցուածքով։ Նա չը բարձրացրեց իր աչքերը մինչև որ այն մարդը եկաւ կանգնեց նրա դիմաց և մի մեղմ ձայնով ասաց.

«Հայր»։

«Ջաւակս, իմ Վիտոնս, արդեօք այդ դու ես», ասաց Ծերունին ուրախ ձայնով։ «Ա՛հ, դու ներկայ էիր իմ մտքերի մէջ»։

«Ես չատ ուրախ եմ այդ լսելու, հայրիկ», ասաց դլադիատորը, յարգանքով համբուրելով ծերու ծնկերը և ծորուքը. «և երանի որ չուտով քեզ հետ լինէի, ոչ լոկ մտքով»։

«Այո՛, ջաւակս, բայց ոչ այս աշխարհում», պատասխանեց ծերին արտասուքներով։

«Այդպէս մի խօսիր, իմ սիրելի հայրիկս։ Աղաչում եմ, որովհետև ես էլ այդպէս եմ զգում. ես վստահ եմ, որ ես կը յաղթեմ և յետոյ իմ չատած ռակին կը գնէ քո ազատութիւնը։ Ո՛հ, հայր իմ, մի քանի օր առաջ մէկը ինձ նախատեց, ասելով որ ես արծաթասէր էի երբ նրանից հարցրի թէ ինչ դումար պիտի տուէր յաղթողին։ Ես չատ կուզէի այդ աթենացու զաղափարը փոխել իմ մասին, որովհետև նա աւելի ազնիւ է իր համակիրներից։ Աւաղ, նա չէ ճանաչում Վիտոնի հոգին։

«Ջաւակս, ջաւակս», ասաց ծեր ղերին և կամաց կամաց բարձրանալով սանդուխքներից, նա առաջնորդեց իր որդուն իր փոքրիկ սենեակը, որը բացւում էր մատաղի սրահի մէջ. այս սրահը այս ազարանքի մէջ սենեակն էր, և ոչ սարիւսը.—այսօր էլ կարելի է տեսնել

այդ, որ մանելուց երրորդ դուռն է ձախի վրայ։ Առաջին դուռը տանում է դէպի սանդուխքները, երկրորդը մի լոկ անկիւն է, ուր դրած էր մի բրոնզեայ արձան։

«Ինչքան էլ ազնիւ, անձնուէր և ծնողասէր լինին քո չարժաւորները», ասաց Մեդոն, երբ նրանք մտան սենեակը, ուր ոչ ոք չէր կարող լսել նրանց, «քո գործդ ինքն ըստ ինքեան մի յանցանք է. դու ուզում ես քո կեանքը վտանգի ենթարկել քո հօր ազատութեան համար—այդ կարող է ներուիլ. բայց քո յաղթութեան մրցանակը մի ուրիշի արեան գինն է։ Ո՛հ, այդ մի մահացու ոճիր է, ոչ մի նպատակ չէ կարող արդարացնել այդ գործը։ Մի անէր, մի անիր այդ գործը, ես կը գերադասեմ մի գերի մնալ՝ քան այդ պայմաններով ազատութիւն գնել»։

«Լաւիր, հայրիկ», պատասխանեց Վիտոն, մի քիչ անհամբերութեամբ. «այս նոր հաւատքիդ, որի մասին խնդրեմ ինձ հետ չը խօսես, որովհետև այն աստուածները, որ ինձ այժ ուշեցին, զլացան ինձ ամեն գիտութիւն և այդ քո բոլոր քարոզներից ես մի բան անդամ չեմ հասկանում. քո այս նոր հաւատքիդ կրկնում եմ, դու սովորել ես իրաւունքի և անիրաւութեան տարօրինակ ֆանտազիաներ։ Ներիր ինձ եթէ քեզ վշտացնում եմ, բայց մոռացիր։ Արդեօք ոմ հետ եմ կռւում ես։ Ո՛հ, եթէ միայն դու ճանաչէիր այդ թշտաւականներին, որոնց հետ քո խաթիր համար, ես ընկերակցում եմ, դու պիտի մոռանայիր, որ նրանցից մէկին սպանելով, ես աշխարհս մաքրում եմ։ Գազաններ են նրանք, որոնց չորքոտնքներից արիւն է կաթում. նրանք բոլորը վայրենի բաներ են, անսկզբունք նոյն իսկ իրանց քաջութեան մէջ. դրանք կատաղի են, անսիրտ, աղջամ և

ձեռնքի ոչ մի կապ չէ կարող կաշկանդել նրանց. նրանք չը գիտեն երկիւղն ինչ է, այդ ճշմարիտ է, բայց չը գիտեն նաև ինչ է երախտադիտութիւնը, ողորմութիւնը և սէրը. նրանք ստեղծուած են կարծես հէնց իրանց ապարէզի համար, նրանք չինուած են սպանելու առանց դաւթի և սպանուելու առանց վախի։ Արդեօք քո ատուածները, ով որ էլ լինին նրանք, կարող են բարկութեամբ նայել այսպիսի մի պայքարի վրայ, պայքար, մղուած այսպիսի մարդկանց դէմ և այսպիսի մի դասի համար։ Ոչ, իմ հայրիկս, երկնքի զօրութիւնները որ կողմ որ նայեն աշխարհի վրայ, նրանք ոչ մի տեղ չեն տեսնի մի պարտականութիւն այնքան սրբազան և այնքան սրբագնացուցիչ, որքան այն դէմը, որ մի երախտապարտ որդի մատուցանում է իր ծերացած ծնողին»։

Խոզճ ծեր գերին, ինքը նա զուրկ գիտութեան լոյսից և միայն մի կարճ ժամանակից ի վեր մտած քրիստոնէական հաւատքի մէջ, չը գիտեր ինչ տրամաբանութեամբ փարատել մի տպաւորութիւն այդքան խաւար՝ և սակայն այդքան զգեցիկ իր մոլութեան մէջ։ Նրա առաջին մղումը եղաւ նետուիլ իր որդու կրծքի վրայ— նրա երկրորդ մղումը՝ հեռու փախչել—և իր ձեռքերը կծկել. և մինչդեռ նա ուզում էր յանդիմանել իր որդուն, նրա բեկբեկուած ձայնը խեղդուեցաւ հեկեկանքների մէջ։

«Ներ եթէ», վերսկսեց Լիդոն,—«եթէ քո Աստուածը (կարծեմ միայն մէկ Աստուած ես ընդունում) իրօք լինի այն բարեգութ և ազօրմած Հօրութիւնը, որ դու ասում ես, նա պէտք է իմանայ, որ քո դէպի Իրեն ունեցած հաւատքն էր, որ իմ մէջ դրեց այս գործի միտքը, գործ՝ որ դու պարտաւում ես»։

«Ինչպէս, ինչ ես ուզում ասել», ասաց գերին։

«Ա՛յս եմ ասում. դու գիտես, որ ես գերութեան ծախուելով երեխայութեան ժամանակ, Հռոմում ստացայ իմ ազատութիւնը իմ տիրոջից, որին՝ ես բախտ ունեցայ հաճելի լինելու։ Ես ամասպարեցի գալ Պոմպէյ քեզ տեսնել—ես տեսայ, որ դու արդէն ծերացել և անկարողացել ես մի քանաճ և փքուած տիրոջ լուծի տակ. ես տեսայ, որ դու վերջերս ընդունել ես այս նոր կրօնքը, որի պատճառով քո գերութիւնը երկու անգամ աւելի անտանելի է քեզ համար. այդ կրօնքը հեռացրել էր քո գերութիւնից սովորութեան բոլոր այն փափկացուցիչ դիւթանքը, որ մեզ հաշտեցնում է ամենաթաթ կացութեան հետ անգամ։ Դու ինձ չէիր գանգատուում, որ քեզ սպիտում էին այնպիսի ծառայութիւններ անել, որոնք զզուելի չէին քեզ համար, որպէս մի գերու, իսկ մեզանից էին որպէս մի նազովրեցու։ Դու ինչ չէիր ասում, որ քո հոգին սոսկում էր խղճահարութեամբ, երբ դու պատիպտում էիր նոյն իսկ հայի մի փշուր դնել այն կաթիլների մօտ, որ հսկում են իմպլուվիումի վրայ, որ քո հոգին պատառուում էր մի անընդհատ մաքառումով։ Դու ինձ չէիր ասում, որ մինչև անգամ գինի թափելով չեմքի աչքն և արատասխելով մի յունական աստուծոյ անունը, դու վախենում էիր, որ քեզ ենթարկես աւելի վատ պատիժների քան Տանտալուսի պատահասները, որ դու քեզ ենթարկես յաւիտենական տանջանքների աւելի խիստ քան Տարտարեան դաշտերի սոսկանքները։ Դու ինձ չէիր ասում այս բոլորը։ Ես զարմանում էի, որ ես չէի կարողանում հասկանալ քեզ և ոչ էլ, Հերկուլէս վկայ, ես հիմա կարողանում եմ հասկանալ, բայց ես քո որդին էի և իմ գործս էր խղճալ քեզ վրայ և ա-

դառել քեզ։ Արդեօք կարող էի լսել քո հառաչանքները, կարող էի տեսնել քո խորհրդաւոր արտասուները, քո անընդհատ տառապանքը և անչարժ մնալ. Ո՛չ, անմահ աստուածները վկայ. այդ միտքը տանջում էր ինձ ինչպէս Ոլիմպոսից եկած մի փայլակ։ Ես դրամ չունէի. բայց ես ունէի ֆիզիքական ոյժ և երիտասարդութիւն. սրանք քո պարզևները էին և ես կարող էի վաճառել դրանց քո խաթեր համար։ Ես իմացայ որքան էր քո փրկանքիդ գումարը. ես իմացայ, որ մի գլադիատորի սովորական ընծան այդ գումարի երկապատիկն էր և գնացի գլադիատոր դարձայ. ես միացայ այդ անիծուած մարդկանց հետ, ծաղրելով նրանց, զզուելով նրանցից, մինչդեռ կենակցում էի նրանց հետ. ես սովորեցի նրանց արհեստը և օրհնեալ լինին այդ դասերը, որոնք ինձ պիտի սովորեցնեն ազատել իմ հօրը»։

«Ո՛հ, երանի թէ դու լսէիր Օլինթոսի քարոզները», հառաչեց Ներուկը, աւելի և աւելի զզածուած իր որդու առաքինութեամբ, բայց ոչ նուազ համոզուած նրա դիտաւորութեան մասին։

«Կուզես ամբողջ աշխարհի քարոզը կը լսեմ», պատասխանեց գլադիատորը, անհոգութեամբ. «բայց ոչ մինչև այն ժամանակ, որ դու ազատ լինես։ Քո յարկիդ տակ, իմ սիրելի հայրս, դու ամբողջ ցերեկը կարող ես չարչարել այս իմ բաւթ ուղեղը, այո և ամբողջ գիշերը, եթէ դա քեզ որ և է հաճոյք պատճառէ։ Ո՛հ, այն տեղը, որ ես պահել եմ քեզ համար. դա ծեր Յուվիա Ֆելիքսի ինձը հարիւր ինհսուն և ինհներորդ խանութներից մէկն է, քաղաքի արևակողմ մասերից մէկի մէջ, ուր դու կարող ես ամբողջ օրը նստել արևի տակ քո դրան առջև. և ես էլ իւղ և գինի կը ծախեմ քեզ համար և յետոյ եթէ

վճռաւը բարեհաճ է (համ թէ չը բարեհաճէ, քանի որ դու չես սիրում նրա անունը. ողջ մէկ է Լիդոնի համար). յետոյ ասում եմ, կարելի է դու կունենաս մի աղջիկ, քո ալևոր մազերդ խնամելու համար և կը լսես սուր ձայներ քո ծնկներիդ չուրջը, որոնք քեզ կը կոչեն «Լիդոնի հայրը»։ Ա՛հ, մենք այնքան երջանիկ կը լինենք. արևնալի մրցանակը կարող է այդ բոլորն էլ դնել։ Ուրախացիր, ուրախացիր, իմ հայրիկ։ Ես այժմ ես պէտք է հեռանամ, օրն անցնում է և լանիստան սպասում է ինձ։ Ե՛կ, օրհնիր ինձ»։

Լիդոնը, այսպէս խօսելու ժամանակ, արդէն դուրս էր եկել իր հօր մուխը սենեակից։ Նրանք անձկութեամբ փափաքում, այժմ կանգնած էին այնտեղ, ուր մենք առաջին անգամ ներկայացրինք գռնապանին նստած իր պաշտօնավայրում։

«Ո՛հ, օրհնեալ լինիս, օրհնեալ լինիս, իմ քաջ տղա», ասաց Մեդոն սրտի խորքից. «և այն մեծ Ջօրուպիտերը, որ կարդում է բոլոր սրտերը, թող տեսնէ քոնիդ ազնուութիւնը և ներէ նրա սխալը»։

Գլադիատորի բարձր հասակը արագութեամբ անհետացաւ. գերու աչքերը հետևեցին նրա թեթև բայց չնորհալի քայլերին, մինչև նա բոլորովին անհետացաւ. և յետոյ նորից նստելով իր տեղը՝ նրա աչքերը դամեցան գետնի հետ։ Նրա մարմինը լուռ էր և անչարժ որպէս թէ քարից չինուած լինէր։ Նրա սիրտը...—ո՞վ արդեօք, մեր երջանիկ դարում, կարող է մինչև անգամ երևակայել դրա մաքառումը, դրա յուզմունքը։

«Կարելի է մտնել», ասաց մի անուշ ձայն։ «Քո սիրուհի Ջուլիան տանն է»։

Գերին մեքենայաբար մի նշան արեց այցելուին

մանելու, բայց նրա խօսակիցը չէր կարող տեսնել այդ նշանը—նա կրկնեց իր հարցը երկչոտութեամբ, բայց աւելի բարձր ձայնով։

«Արդէն չասացի քեզ», ասաց վերին բարկացած ձեւով. «մոխիր»։

»Շնորհակալ եմ», ասաց խօսողը դիւրաճայն և վերին, որի ուշադրութիւնը գրաւուեցաւ այդ ձայնով, վեր նայելով ճանաչեց կոյր ծաղկավաճառ աղջկան։ Տխրութիւնը կարող է համակրել տառապանքի հետ։ Նա վեր կացաւ և նրան առաջնորդեց մինչև կից առնդուխքների պլուխը, որտեղից կարելի էր իջնել Ջուլիայի սենեակը և կանչելով մի վերուհի՝ կոյրին յանձնեց նրա առաջնորդութեան։

Գլուխ Ը.

Ա՛ի Պոմպէյոյի գեղեցկուհու արդուզարդի սենեակը։—Նշանաւոր խօսակցութիւն Ջուլիայի և Նիփիայի միջև։

Նազելի Ջուլիան նստած էր իր սենեակում, շրջապատուած իր վերուհիներով։ Սենեակը, իր յատակից կուբիկուլումի նման, փոքրիկ էր, բայց շատ աւելի մեծ սովորական ննջարաններից, որոնք այնքան մոտ էին, որ շատ քիչ չը տեսած մարդիկ կարող են մի գաղափար կազմել նոյն իսկ ամենամեծ տների այն աղաւնու բոյների մասին, որոնց մէջ, ըստ երեւոյթին, պոմպէյցիները շատ հաճելի էին գտնում անցկացնել իրանց գիշերները։ Բայց, իրօք, «անկողինը» նախնիների համար չէր այն լուրջ, կարեւոր և նշանաւոր մասը անցկեան խորհրդաւոր գաղտնիքների, ինչ որ է մեզ համար։ Մահ-

ճակալը նմանում էր մի չատ նեղ և փոքրիկ բազմոցի-դա այնքան թեթեւ էր, որ մինչև անգամ միայն մեկ մարդ դիւրութեամբ կարող էր տեղից տեղ փոխադրել։ և դա միշտ տարուում էր սենեակից սենեակ, նայելով տիրոջ քմահաճոյքին կամ եղանակի փոփոխութիւններին, որովհետև տան այն մասը, ուր այս ամիս բնակիչները ապրում էին, կարող էր մեւս ամիս բոլորովին դատարկ լինել։ Այդ ժամանակուայ իսալացիները նաև, մի տարօրինակ և չափազանց երկիւղ ունեին չատ լոյսից. նրանց մութ սենեակները, որոնք նախ մեզ երեւում են որպէս անտոգ ճարտարապետութեան հետեանք, իրօք արդիւնք են մի հմուտ և աշխատասէր ուսումնասիրութեան։ Իրանց պօրտիկօների մէջ նրանք նստում էին արեւի տակ, երբ որ այդ յարմարուում էր նրանց ճոխ ճաշակներին։ Իրանց տան ներսում, նրանք միայն որոնում էին տուները և զովութիւնը։

Ջուլիայի սենեակը տարուայ այդ եղանակին զբաղուում էր տան ցածի յարկում և բացուում էր պատէզի մէջ, որի հետ դա ունէր հաւասար յատակ։ Այն ապակեպատ դռնից միայն մտնում էին արեւի ճառագայթները. բայց և սակայն նրա աչքերը, մինչև մի տասիճան տուր մթութեան, բաւական տուր էին տեսնելու թէ ինչ գոյներ ամենից շատ սազ էին գալիս իր կերպարանքին, թէ փափուկ կարմրի որ երանգը աւելի փայլ էր տալիս իր սեւ նայուածքին և մանկամարդական թարմութիւնն իր թշերին։

Նրա առջեւի սեղանի վրայ դրուած էր մի փոքրիկ

*) «Ա՛ռ մահիճդ և գնա՛» (ինչպէս սըր Վ. Գեղ նկատում է) այլաբանօրէն տուած չէր։

և կոլորակ հայելի, ամենափայլուն և յղկուած պողովատից. հայելու չուրջը, ամենայն կարգաւորութեամբ չարուած էին կոամէտիքները, լուղերը, անուշահոտութիւնները և ներկերը, յետոյ գոհարեղէնները, սանրերը, ժապաւէնները և ոսկեայ գնդասեղները, որոնք, արուեստի աջակցութեամբ և մօդայի քմահաճ հրապոյրներով, պիտի աւելացնէին դեղեցկութեան բնական դրաւչութիւնը։ Աւենակի աղօտ լոյսի մէջից փայլում էին որմերի վառվռուն և բազմազան նկարները, որոնք գունաւորուած էին պոմպէյական ճաշակի բոլոր ակնախտիղ ֆրէսկօներով։ Զարդասեղանի առջև և Զուլիայի ոտքերի տակ փռուած էր արևելեան գործարաններից դուրս եկած մի գորգ։ Նրան մօտիկ և մի ուրիշ սեղանի վրայ, դրուած էր արծաթեայ լուացարան և ամենասքանչելի ճարտարութեամբ չինուած մի լամպ, որի մէջ արուեստաւորը ներկայացրել էր մի կուպիդոն, քնած մրտենու տարածուած ճիւղերի տակ. և մազաղաթի մի փոքրիկ պլան, որի մէջ դրուած էին Տիբուլլուսի ամենափափուկ ողբերգութիւնները։ Դրան առջև, որ բացուում էր կուբիկուլումի մէջ, կախուած էր ոսկեթել բանուած մի վարագոյր։ Այս տեսակ էր մի դեղեցկուհու հանդերձարանը առաւօտեան դար սրանից առաջ։

Դեղանի Զուլիան, հնչական կերպով չենուած էր դէպի չետ իր նստարանի մէջքի վրայ, մինչդեռ օրնատրիքոսը (վարսայարդարը) կամաց կամաց մէկը միւսի վրայ դարսում էր փոքրիկ գանգուրների մի կոյտ, որի մէջ կեղծը ճարտարութեամբ հիւսուած էր իսկականի հետ. նրա մազերի կոյտը վերջապէս հասաւ այն բարձրութեան, որ գլուխը փոխանակ մարդկային հասակի դադաթը լինելու՝ կարծես նրա կեզրոնը դարձաւ։

Նրա պարեգօտը մուխ դեղնագոյն էր և չատ լաւ յարմարում էր նրա սև մազերի և թուխ կերպարանքի հետ. դա լայն ծալքերով իջնում էր մինչև նրա ոտքերը. նա հագած էր մի զոյգ ծիրանեգոյն և մարգարտաչար հողաթափ. դա կապուած էր նրա գոգարիկ ճաներին չուրջը սպիտակ ժապաւէններով. և դրա ծայրը մի քիչ ծռուած էր դէպի վեր՝ ինչպէս այսօր սովորութիւն է տագիէների մէջ։ Մի պառաւ սարկուհի, որ երկար փորձառութեամբ, մեծ հմտութիւն ունէր զարդարանքի բոլոր պաշտնիքների մէջ, կանգնած էր վարսայարդարի մօտ, իր թևին ձգած իր սիկնոջ լայն և պալարակապ գօտին. նա ժամանակ առ ժամանակ հրահանգներ էր տալիս բարձրացող կոյտի սրմնապրին և իր հրահանգների մէջ չէր մոռանում խառնել սիկնոջ հասցէին ուղղուած չղոքրթութիւններ։

«Այդ գնդասեղը մի քիչ դէպի աջ զարկիր — աւելի ցած — լիմար։ Չես նկատում ինչքան հարթ են այդ գեղեցիկ չօնքերը։ Կարթիա Կորինեալի մազերը չինում լինես, որի երեսը կատարեալպէս միակողմանի է։ Հիմա ծաղիկները դիր — ինչ, տխմար — ոչ այդ ապուշ վարդագոյնը — դու պէտք է իմանաս, որ Ֆլորիսի սպրտնած երեսի համար չէ, որ վարդեր ես ջոկում. ամենից փայլուն ծաղիկները միայն կարող են յարմարուիլ մանկամարդ Զուլիայի թշերին։

«Կամաց», ասաց սիկինը, իր փոքրիկ ոտքը ուժով զարկելով գետին. «դու այնպէս քաշում ես իմ մազերս, որ կարծես խոտ քաղում լինէիր»։

«Ցխմար արարած», չարունակեց արարողութեանց տեսչուհին։ Չը գիտես ինչքան քնքոյշ է քո սիկինը.— այրի Ֆուլվիայի հատ ձիու մազերը չեն, որոնց հետ

դործ ունիս։ Այժմ ժապաւէնը. այդ լաւ է։ Ձգնադ Ջուլիա, այժմ նայիր հայելուն և ասա, թէ տեսել ես մի բան քեզանից աւելի գեղեցիկ։

Երբ, անթիւ բացատրութիւններից, դժուարութիւններից և յապաղումներից յետոյ, այդ բարդ աշտարակը կառուցուեցաւ, նրանք յետոյ սկսեցին ձեռնարկել այն դործին, որ Ջուլիայի աչքերին պիտի տար մի փոփոխ թմրադութիւն. այդ դործողութիւնը կատարւում էր մի ոսկի փոշու միջոցով, որ քաւում էր թարթիչներին և յօնքերին. մահիկի ձեւով կարուած մի փոքրիկ կեղծ պիտակ և ճարտարութեամբ դրուած նրա վարդագոյն շրթունքների մօտ՝ ուշադրութիւն էր դրաւում նրանց վառարակների վրայ և նրա առանձների՝ որոնց համար արդէն ամեն մի արուեստ և դործ էր դրուած՝ նրանց բնական վայլն աւելացնելու համար։

Մի ուրիշ գերուհու, որ մինչև այդ ժամանակ անդործ էր մնացած, այժմ յանձնուեցաւ գոնարեզէններից կարգի դնելու դործը. աղախինը սկսեց իրանց պատշաճ տեղերը ճգել նախ մարդարտեայ ականջապիներից (ամեն ականջին երկու հատ),—յետոյ զգուշ ոսկեայ ապարանջանները—ոսկեայ չղթան, որին կցուած էր մի բիւրեղաձև կտրուած թալիսման—ճախ ուսի չնորհագեղ ճարմանդը, որի մէջ բանուած էր Պսիքէի մի գեղեցիկ քամէ—ծիրանեզոյն ժապաւէնի գօտին, ճոխ ոսկեթել ասեղնադործութիւններով և ոլորուած օձերի մի ճարմանդով—և վերջապէս, զանազան մատանիները յարմարուած բոլոր նրա սպիտակ և նուրբ մատներին։ Այժմ նա զարդարուած էր Հռոմի վերջին մօդայի համեմատ։ Գեղանի Ջուլիան մի վերջին անդամ և մի ինքնահաճ ունայնամտութեամբ նայեց հայելուն և նորից յենուելով իր նաւարանի վրայ՝

թոյն ձեռք հրամայեց իր գերեվիներից ամենից մանկամարդին կարդալ Տիբուլլուսի սիրաբորբոք երկասողները։ Այս ընթերցման միջոցին էր, որ մի սպասուհի Նիպիային առաջնորդեց դէպի սիկնոջ ներկայութիւնը։

«Salve! Ջուլիա», ասաց ծաղկավաճառուհին, կանդնելով մի քանի քայլ հեռու Ջուլիայի նստած տեղից և իր թևերը ծալելով իր կրծքի վրայ։ «Ես կատարել եմ ձեր հրամանը»։

«Շատ լաւ ես արել, իմ ծաղկավաճառ», պատասխանեց օրիորդը։ Մօտեցիր—կարող ես նստել»։

Գերիներից մէկը մի նստարան դրեց Ջուլիայի կողքին և Նիպիան նստաւ։

Ջուլիան լարուած աչքերով մի քանի րոպէ նայում էր թեսսալուհուն, մինչդեռ սիրում էր մի չհոթիչ լռութիւն։ Նա յետոյ նշան արեց իր սպասուհիներին դուրս երթալ և դուռը դոցել։ Երբ այլ ևս մարդ չը մնաց նրա մօտ, նա ասաց, մեքենայաբար իր աչքերը դարձնելով Նիպիայից և մատանալով, որ իր խօսակցութիւնը պարկ էր աչքերի լոյսից.—

»Դու Նէապօլսեցի Իօնէի սպասուհին ես»։

«Այո՛ այժմ, այո՛», պատասխանեց Նիպիան։

«Նա այնքան գեղեցիկ է, որքան պատմում են»։

«Ես չը գիտեմ», պատասխանեց Նիպիան։ Ի՞նչ պէս կարող եմ իմանալ այդ բանը»։

«Ա՛հ, մոռացայ։ Բայց դու ականջ ունիս, եթէ աչք չունիս։ Քո վճռակիից գերիները չեն պատմում թէ նա գեղեցիկ է։ Գերիները երբ միմեանց հետ են խօսում, մոռանում են մինչև անդամ իրանց սիկնոջն էլ չողոքորթել»։

«Նրանք ասում են, որ նա գեղեցիկ է»։

«Հը՛մ։—Նրանք ասում են, որ բարձրահասակ է։

«Այո»։

«Լաւ, ես էլ եմ։ Սահմեր է»։

«Այդպէս են ասում»։

«Ես էլ եմ։ Եւ Գլոկուսը չնաշ է այցելում նրան»։

«Ամեն օր», պատասխանեց Նիպիան, կէս զսպուած մի հառաչով։

«Ամեն օր. իսկապէս։ Եւ նրան զեղեցիկ է դոնում»։

«Տարակոյս չը կայ, քանի որ չուտով պիտի ամուսնանան»։

«Ամուսնանան», գոչեց Ջուլիան, գունատուելով հակառակ իր թշերի կեղծ վարդերին և վեր թռչելով իր նստարանից։ Նիպիան անպատճառ չը տեսաւ իր պատճառած յուզմունքը։ Ջուլիան երկար լուռ մնաց. բայց նրա ուռած կուրծքը և կայծակնացայտ աչքերը պիտի յայտնէին մի մարդու, որ կարող լինէր տեսնել նրա մտապարծութեան ստացած վիրաւորանքը։

«Ես լսել եմ, որ դու Թեսսալացի ես», ասաց նա, կտրելով լռութիւնը։

«Ճշմարիտ է»։

«Թեսսալիան կախարդութեան և վհուկների երկիրն է. Թալիսմանների և սիրատեղերի աշխարհն է», ասաց Ջուլիան։

«Նա միշտ հռչակուած է եղել իր կախարդներով», պատասխանեց Նիպիան, երկչոտութեամբ։

«Ուրեմն պիտես դու, կոյր Թեսսալուհի, որ և է սիրային հմայք»։

«Ո՛չ», ասաց ծաղկավաճառը, կարմրելով, «Ո՛չ, ես ինչպէս կարող էի իմանալ։ Ո՛չ, ես չը պիտեմ»։

«Քեզ համար վատ. ես կարող էի քեզ այնքան ասել, որ դու Թեսսալացի ես, ես մտածեցի, որ կարելի է քո պա-

կի ասել, որ դու կարոզանալիր գնել քո ազատութիւնը, եթէ դու աւելի խելացի եղած լինէիր»։

«Բայց արդեօք ինչ բան», հարցրեց Նիպիան, «կարող է զեղեցիկ և հարուստ Ջուլիային առիթ տալ այդ հարցն անելու իր ազատնից։ Արդեօք նա դրամ չունի. երիտասարդ չէ, զեղանի չէ։ Արդեօք դ ր ա ն ք բաւական սիրահմայք չունեն կախարդութեան պէտք չունենալու համար։

«Ամեն մարդու համար բաւական են, բացի մէկն մէկ մարդու աշխարհիս մէջ», պատասխանեց Ջուլիան խրոխտութեամբ. «բայց կարծեմ քո կուրութիւնը տարօրինակ է և... Բայց ոչինչ»։

«Եւ այդ մէկ մարդը», հարցրեց Նիպիան անճկութեամբ։

«Գլոկուսը չէ», պատասխանեց Ջուլիան, իր սեռի սովորական խաբէութեամբ։ «Գլոկուսը—ո՛չ»։

Նիպիան աւելի ազատ չունչ առաւ և կարճ լռութիւնից յետոյ Ջուլիան վերսկսեց։

«Բայց խօսելով Գլոկուսի և նրա սիրոյ մասին դէպի այս նեղալուծութիւնը, ես լիշեցի սիրագեղերի ազդեցութիւնը, որ կարող է Գլոկուսի դէպքում գործ դրուած լինել, բայց այդ ինձ ինչ փոյթ։ Կոյր աղջիկ, ես սիրում եմ և ահ Ջուլիան պիտի կենդանի մնար այս խօսքն ասելու—վոխադարձաբար չեմ սիրում։ Այս բանը խոնարհեցնում է—ո՛չ, չէ խոնարհեցնում, այլ խայթում է իմ անձնասիրութիւնը։ Ես ուզում եմ այս ապերախտին տեսնել իմ առջևը, ոչ թէ նրան բարձրացնելու՝ այլ նրան ստքովս հրելու համար։ Եթէ ես լսեցի, որ դու Թեսսալացի ես, ես մտածեցի, որ կարելի է քո պա-

ասնի միտքը սովրած կը լինի քո կլխակի խառար դաշտնիքները։

«Աւոդ, ոչ», միմնջաց Նիփիան. «Երբեմն թէ սովրած լինիլ»։

«Շնորհակալ եմ, դէմ այն բարեկամական վախադիւղ համար», ասաց Զաւիան, անդիտակից թէ ինչ էր անցնում ծաղկավաճառի կրծքի մէջ։

«Բայց ասա ինձ,—դու որ լսում ես գերինների ծածուկ խօսակցութիւնները, որոնք միշտ պիտանաւոր են դէպի այսպիսի կախարդութիւններ և միշտ պատրաստ են դիմելու դրան իրենց սատրաքարշ սիրոյ համար. դու չես լսել, որ այս քաղաքում լինի որ և է արևելեան կախարդ։ Ոչ թէ մի լիմար ձեռնահմայ կամ հրապարակի ձեռնածու, այլ Հնդկաստանի կամ Եգիպտոսի մի տզօր կախարդ։

«Եղիպտացի, այո», ասաց Նիփիան մի սարսուռ զգալով։ Ո՞ր պոմպէյցին չէ լսել Արբակի մասին»։

«Արբակ, ճշմարիտ է», պատասխանեց Զաւիան, ամուր բռնելով այդ դաշափարը։ «Ասում են, որ նա վեր է ախմար խմաստակների բոլոր անսահ և սուտ խաբէութիւններից,— որ նա կատարելագոյն տիրապետում է աստղերի վիսուքիւնը և հին նոքսի գաշտնիքներին. ինչ պատճառ կայ, որ նա սովրած չը լինի սիրոյ գաշտնիքները։

«Եթէ մեզ տզի կենդանի կախարդ կայ, որի վիսուքիւնը բարձր է բոլոր ուրիշներից, նա այդ գարհուրելի մարդն է», պատասխանեց Նիփիան և խօսելու ժամանակ նա դաշտ իր թաղիսմանին։

«Նա չափազանց հարուստ է դրամի համար հմայե-

լու», չարունակեց Զաւիան, ծաղրածու երեսով։ «Արդեօք չեմ կարող այցելել նրան»։

«Նրա սունը մի չար սուն է, երիտասարդների և դեղեցիկների համար», պատասխանեց Նիփիան։ «Ես լսել եմ, որ նա ակար...»

«Մի չար սուն է», ասաց Զաւիան, ուշադրութիւն դարձնելով նրա խօսքերի լոկ առաջին մասի վրայ։ «Եւ ինչո՞ւ»։

«Նրա պիչերային խնջոյքները անմաքուր են և պիղծ—դէմ այսպէս են ասում ուրիշները»։

Աբէս, Պան և Կիբելէն վկայ, որ դու միայն գերը պատում ես իմ հետաքրքրութիւնը, փոխանակ երկիւղ ազդելու ինձ», պատասխանեց կամակոր և անապարծ պոմպէյցին։ «Ես կերթամ նրա մօտ և կը հարցնեմ նրանից նրա պիսուքիւան մասին։ Եթէ նրա խնջոյքների մէջ սիրը մատաք է գործում, ուրեմն աւելի հաւանական է, որ նա պիտի դրա գաշտնիքները»։

Նիփիան չը պատասխանեց։

«Ես կերթամ նրա մօտ հէնց այսօր», չարունակեց Զաւիան. «ա՛յ, հէնց այս ժամին»։

«Յերեկով և նրա ներկայ դրութեան մէջտեղին, անտարակոյս վախենալու նուազ պատճառ ունիս», պատասխանեց Նիփիան, տեղի տալով իր չանկարծական և դաշտնի վախապին, որով ուզում էր խմանալ թէ արդեօք եգիպտացին ունէր այնպիսի հմայքներ, որոնք կարողանային աչքը դարձնել մեկի վրայից և հաստատել մի ուրիշի վրայ, հմայքներ, որոնց մասին թեսսալուհին այնքան անգամ լսել էր։

«Եւ ով կը չանդգնի անպատուել Պիտիդէի հարսա

աղջկան», ասաց Ջուլիան խրախուսելով։ «Ես կերթամ»։

«Ինձ թույլ կը տաք ձեզ ալեկոծել և լսել թէ ինչ եղաւ ձեր տեսակցութեան հետևանքը», հարցրեց Նիպիան անձկութեամբ։

«Համբուրիր ինձ Ջուլիայի պատուի նկատմամբ, քո ցույց տուած նախանձախնդրութեան համար», պատասխանեց սիկինը։ «Այո, անտարակոյս։ Այս իրիկուն մենք դուրսը կընթրենք.—վաղը հէնց այս ժամին ևկ այստեղ և ամեն բան կվճռանաս. կարելի է քո ծառայութեանդ պէտք ունենամ. բայց առ այժմ այնքան բաւական է։ Սպասիր, առ այս ապարանջանը, վոխարէն այն գազափարին, որ դու տուիր ինձ. լիշիր, որ եթէ Ջուլիային որ և է ծառայութիւն մատուցանես, նա երախտապարտ է և առատաձեռն»։

«Ես չեմ կարող ընդունել ձեր պարգևը», ասաց Նիպիան, մի կողմ հրելով ապարանջանը. «բայց չը նայելով իմ երիտասարդութեանը՝ ես առանց վարձատրելու կարող եմ համակրել նրանց, որոնք սիրում են և սիրում են լսուր»։

«Այդպէս», պատասխանեց Ջուլիան։ «Դու խօսում ես մի ազատ կնոջ նման և դու պիտի ազատուես. հիմա բաւական»։

Գլուխ Ը.

Ջուլիան գնում է Արբակի մօտ։ Այդ տեսակցութեան արդիւնքը։

Արբակ նստած էր մի սեղնեակում, որ իր պարակի դիմաց բացուում էր մի տեսակ պատշգամի կամ պորտիկոի մէջ։ Նրա երեսը, իր կրած վերջին հիւանդութիւնից

գունատ էր և նիհար. բայց նրա երկաթեայ կազմուածքը արդէն կազդուրուել էր այն պատահարի հետևանքներից, որը լ՚երև էր հանել նրա չար դիտումները, հէնց նոյն իսկ յաղթութեան րոպէին։ Այն զգիխուռը, որ բերելով իր անուշահոտութիւնները՝ չիւում էր նրա ճակատին, վերակենդանացնում էր նրա թուլացած զգայարանքները և արիւնը աւելի ազատութեամբ էր կատարում իր շրջանը նրա ցամաքած երակների մէջ, քան թէ վերջին քանի օրուայ ընթացքում։

«Ախաէս ուրեմն», մտածում էր նա, «ճակատագրի փոթորիկը սրբեց և անցաւ այն չարիքը, որ իմ պիտութիւնը նախազուշակել էր, չարիք, որ սպառնում էր իմ կեանքիս, տեղի ունեցաւ—և դեռ ես ապրում եմ։ Ինչպէս այնպէս պատահեց ինչպէս աստղերը կանխագուշակեցին և այժմ այն երկար փայլուն և յաջող ապագան, որ պիտի հետևէ այդ աղէտին՝ ժպտում է իմ առջև. ես անցել եմ, ես յաղթել եմ իմ ճակատագրիս վերջին վտանգին։ Այժմ ես անվախ և ապահով պիտի ձգեմ իմ ապագայ բախտաւորութեան պարտէզների չտակագիծը։ Ուրեմն, նախ քան իմ զուարճասիրութիւնը, նախ քան նոյն իսկ սէրը, պիտի գայ վրէժխնդրութիւնը։ Այս աղան, այս չոլնը, որ արդելք է եղել իմ սիրոյն, որ լ՚երև է հանել իմ նպատակը, որ յաղթահարել է ինձ նոյն իսկ այն րոպէին, երբ գաշոյնը պիտի խմէր նրա անիծեալ արիւնը, մի երկրորդ անգամ չը պիտի ազատուի իմ ձեռքից։ Բայց ինչ ձևով լուծել այդ վրէժը։ Այդ մասին ես պէտք է լաւ մտածեմ։ Ո՛չ, Աոէ, եթէ դու իսկապէս մի աստուածուհի ես, դիր իմ մէջ քո ամենասոսկալի ներշնչումը»։ Եգիպտացին խորասուզուեցաւ իր մտածութեանց մէջ, որոնք մի որ և է պարզ և բաւա-

կանացուցիչ գաղափար չէին ներկայացնում նրան։ Նա անհամբերությամբ փոփոխում էր իր դիրքը, մինչդեռ հնարք հնարքի հետից պատում էին նրա դէմում և որոնք գալիս էին թէ չէ, հեռացնում էին որպէս անպիտան. նա քանի անգամ զարկեց իր կրծքին և բարձրաձայն հառաչեց իր վրէժխնդրութեան փափագից և իր անկարողութիւնից լուծելու այդ հոգը։ Մինչդեռ այսպէս մտատանջուած էր՝ մի գերի ազատ երկչոտութեամբ մատնեանակը։

Մի կին, որ իր զգեստներից և իր սպասուսար պերսից երեում էր թէ պատկանում է բարձր դասակարգին, սպասում էր ցածում և մի ունկնդրութիւն էր խնդրում Աբրահից։

«Մի կին». և նրա սիրտն սկսեց արագ արագ բաբախել։ «Երիտասարդ է»։

«Նրա երեսը ծածկուած է իր քօղով. բայց նրա կազմը նորբր է և կլոր, երիտասարդի կազմի նման»։

«Ներս քեր նրան», ասաց եղիպտացին, մի բոպէ երազելով իր անապատի սրտի մէջ՝ թէ օտարականը կարող էր Յոնէն լինել։

Երբ այցելուն ներս մտաւ, մէկ նայուածք Աբրահի կողմից բաւական եղաւ փարատելու նրա երևակայութեան սխալը։ Ճշմարիտ է, նա դրեթէ միևնոյն հասակն ունէր ինչ Յոնէն և կարելի է միևնոյն տարիքը – ճշմարիտ է, նրա մարմինը զեղեցկաձև էր և ձոխ—բայց ուր էր աննման հեզնեռանդ այն ծիծաղն և աննկարագրելի չնորհալիութիւնը, որ կապուած էր նրա ամեն մի չարժման հետ, նրա պարկեշտ և վայելուչ զգեստը, այնքան պարզութեամբ չակուած և զարդարուած, նրա յարդալից

սակայն ամաչկոտ քայլուածքը, նրա կանացի վեհափառութիւնը և համեստութիւնը։

«Ներեցէք ինձ եթէ ես դժուարութեամբ եմ բարձրանում իմ տեղից», ասաց Աբրահ նայելով օտարուհուն. «ես դեռ չեմ առոյգացել իմ վերջին հիւանդութիւնից»։

«Անհանգիստ մի լինիր, ով մեծ եղիպտացի», պատասխանեց Զուլիան, ուզելով թաղցնել իր արդէն զղացած երկիւղը չղոքրմութեան սովորական դիմակի տակ. «և ներիր մի տարաբախտ կնոջ, որ միխիթարութիւն է հայցում քո իմաստութիւնից»։

«Մօտեցիր չքնաղ օտարուհի», ասաց Աբրահ. «և խօսիր առանց երկիւղի և վերապահութեան»։

Զուլիան նստեց եղիպտացու կողքին մի նստարանի վրայ և զարմացմամբ նայեց այդ սենեակին, որի ճոխարուեստ և մեծագին զարդերի մօտ իր հօր պալատի մեծածախս պաճուճանքը լոկ ծաղրի առարկայ կարող էր լինել. նոյնպէս նրան երկիւղ էին պատճառում հիերոգլիֆական գրութիւնները—այն խորհրդաւոր արձանների երեսները, որ ամեն մի անկիւնից նայում էին նրա երեսին.— այն հոտառներն, որ դրուած էր նրանցից քիչ հեռու— և ամենից աւելի նրան սարսափ էր ազդում Աբրահի լուրջ և անսովոր կերպարանքը։ Մի երկար սպիտակ պատմուճան կիսով չափ թաղցրել էր նրա սաթի նման սև դիակները և իջնում էր մինչև նրա սրբերը. նրա դէմքը աւելի ազատորիչ էր դարձել իր նեղիկ գոնեատութեամբ և նրա սև ու խորաթափանց աչքերը կարծես անցնում էին նրա քօղից և կարդում էին նրա ունայնասէր և անկանացի հոգու գաղտնիքները։

«Արևօք ինչ բան», ասաց նա ցած և խոր ձայ-

նոյ, «բերել է քեզ, ով կոյս, արևելեան օտարականի տունը»։

«Նրա հռչակը», պատասխանեց Ջուլիան։

«Ի՞նչ բանի մէջ», հարցրեց Արբակ մի օտարոտի և աննկարագրելի ժպիտով։

«Արդեօք կարող ես հարցնել քո բանի մէջ, ով իմաստուն Արբակ։ Արդեօք քո գիտութիւնը Պտղոմէի հատարակ խօսակցութեան նման չէ»։

«Ես իրօք ամբարած ունիմ գիտութեան մի չնչին պաշար», պատասխանեց Արբակ. «բայց արդեօք ինչ կերպով այս լուրջ և չոր գազանիքները կարող են օգտակար լինել մի գեղեցկուհու ականջներին»։

«Աւա՛ղ», ասաց Ջուլիան, մի քիչ սիրտ առած նրա գովասանական բառերից. «արդեօք տառապանքը չի գիտեմ իմաստութեան հանգստութիւն գտնելու. և արդեօք տառապանքի մատնուած գոհերը չեն նրանք, որ սիրում են և փոխարինուած չեն»։

«Հա՛», ասաց Արբակ, «մինչ չը փոխարինուած սիրը կարող է լինել այնքան մի չքնաղ էակի վիճակը, որի գեղագիտ անդամների համեմատութիւնը տեսանելի է նոյն իսկ նրա չնորհաճալ զգեստի եռևից։ Բարեհաճիր, ով օրիորդ, բարձրացնել քո քո քողը, որպէս զի կարողանամ գէթ տեսնել թէ երեսն էլ համապատասխան է հրաշագեղ իրանին»։

Կարելի է ոչ ակամայ, փափագելով ցոյց տալ իր հրապոյրները, և մտածելով, որ նրանց միջոցով հնարաւոր է եղիպտացուն աւելի չահագրգռել ի նպաստ իր դաւին՝ Ջուլիան, մի թեթև վարանումից յետոյ, բարձրացրեց իր քողը և յայտնեց մի գեղեցկութիւն, որը

եթէ չը լինէր արուեստի կեղծիքը, հրապուրիչ պիտի թուար եղիպտացու յառած նայուածքին։

«Դու դալիս ես լինձ մօտ խորհուրդ հարցնելու պերճանիկ սիրոյ մասին», ասաց նա. «լաւ, դարձրու այդ երեսը դէպի քո ապերախտ սիրականը. ուրիշ ինչ սիրտնմայք կարող եմ տալ քեզ»։

«Ո՛հ, թող այդ քաղաքավարութիւնները», ասաց Ջուլիան. «իրօք եկել եմ մի սիրագէզ խնդրելու քո իմաստութիւնից»։

«Ձրնդող օտարուհի», պատասխանեց Արբակ, փոքր ինչ ծաղրական եղանակով, «սիրտնմայքները չեն գտնուում այն գազանիքների շարքում, որոնց սովորելու համար ես վատնել եմ կէս գիշերուայ ձէթը»։

«Իրօք այդպէս է։ Ուրեմն ներիր ինձ, մեծ Արբակ և մնաս բարեաւ»։

«Կա՛ց», ասաց Արբակ, որը, չը նայելով իր Իօնէի համար ունեցած սիրոյն՝ անզգայ չէր դէպի իր այցելուհու գեղեցկութիւնը և եթէ նա ունենար աւելի հաստատուն առաղջութեան կայտառութիւնը, կարելի է, գերբնական գիտութեանց տարրեր միջոցներով պիտի փորձէր մխիթարել գեղանի Ջուլիային։

«Կա՛ց. թէև ես խոստովանուում եմ, որ ես թողել եմ սիրագէզների կախարդութիւնը նրանց, որոնց արուեստը կայանում է այդ գիտութեան մէջ, այնուամենայնիւ ես ինքս այնքան անզգայ չեմ դէպի գեղեցկութիւնը, որ իմ երիտասարդական տարիքում գործ դրած չը լինեմ այդ գեղերը ի նպաստ իմ։ Ես գէթ կարող եմ քեզ խորհուրդ տալ, եթէ դու անկեղծ լինես լինձ հետ։ Ուրեմն նախ տուր լինձ, դու ամուսնացած չես, ինչպէս յայտնուում է քո զգեստներից»։

«Ո՛չ», ասաց Ջուլիան։

«Արդեօք զրկուած լինելով հարստութիւնից՝ դու ուզում ես քո թակարդի մէջ ձգել մի հարուստ մարդու»։

«Ես աւելի հարուստ եմ այն մարդուց, որ արհամարհում է ինձ։

«Զարմանալի և աւելի զարմանալի։ Եւ դու սիրում ես այդ մարդուն, որ քեզ չէ սիրում։

«Ես չը գիտեմ թէ սիրում եմ նրան», պատասխանեց Ջուլիան խրախուսութեամբ. «բայց գիտեմ, որ ուզում ես յաղթել մի հակառակորդուհու—ես ուզում եմ իմ հետ սիրահարուած տեսնել այն մարդուն, որ մերժել է ինձ —ես ուզում եմ արհամարհուած տեսնել այն կնոջ, որին նա զերազանցել է ինձանից»։

«Մի բնական և կանացի փառասիրութիւն», ասաց եղիպատացին, այնպիսի մի ձայնով, որ չափազանց լուրջ էր հեգնական լինելու համար»։ Բայց յառաջացիր, չքնաղ օրիորդ. կը՛ղես լինէ մանրամասն յայտնել քո սիրականիդ անունը։ Արդեօք նա Պոմպէյի է և արհամարհում է հարստութիւնը, նոյն իսկ եթէ կոյր է դէպի գեղեցկութիւնը»։

«Նա աթենացի է», պատասխանեց Ջուլիան, յօժ նայելով։

«Հմ», գոչեց եղիպատացին բառն կերպով և արիւնը զարկեց նրա թշերին. «Պոմպէյում միայն մէկ հոգի աթենացի կայ, որ երիտասարդ է և ազնուական։ Արդեօք Գլոկուան է քո ասած մարդը»։

«Ա՛, մի մտանիր լինէ—այդպէս են կոչում նրան»։

Եղիպատացին մէջքի վրայ ընկաւ իր բազմոցի մէջ. իր անուշադիր աչքերը զարձրած դէպի վառատակների աղջկայ կիսամերկ երեսը. այս խօսակցութիւնը, որի հետ

նա մինչև հիմա միայն խաղացել էր, զբաղեցնելով իր ալեկոծուած դիւրահաւատութեամբ և ունայնութեամբ— արդեօք չէր կարող մի մինչոյ լինել նրա վրէժխնդրութեանը։

«Ես տեսնում եմ, որ դու չես կարող օգնել ինձ», ասաց Ջուլիան, վշտանալով նրա անընդհատ լռութիւնից. «դէմ պահիր իմ զաղտնիքը։ Պարձեալ մնամ բարեաւ»։

«Օրիորդ», ասաց եղիպատացին, լուրջ և անձկալից ձայնով, «քո դաւը չարժէ է իմ սիրոը—ես կօգնեմ քեզ։ Լսիր լինէ. ես ինքս չեմ վատնել իմ ժամանակը այսպիսի հասարակ զաղտնիքներով, բայց ես ճանաչում եմ մէկին, որ արել է այդ բանը։ Վեզուվի ստորոտում, նուազ քան երեք մղոն քաղաքից հեռու, բնակւում է մի հզօր վհուկ. նորալուսնի պարարտ ցօղերի տակ, նա ժողովել է այն բոյսերը, որոնք զօրութիւն ունին սէրը կաշկանդելու յատկութեան կապանքներով։ Նրա տքնութիւնը կարող է քո սիրականիդ լերել քո ոտքերիդ առջև։ Գնա նրա մօտ և լսիր նրան Արբակի անունը. նա վախենում է այդ անունից և կը տայ քեզ իր ամենից զօրաւոր հեղուկը»։

«Աւաղ», պատասխանեց Ջուլիան, ես ոչ ճանապարհը գիտեմ և ոչ քո ասած կնոջ տունը։ Հեռաւորութիւնը որքան էլ կարճ լինի, նորից երկար է մի աղջկայ համար, որ առանց լուր տալու դուրս է գալիս իր տնից։ Արուարձանների ճանապարհը խճողուած է որթատունկով և վառնդատուր է իր ուղղահայեաց ճորերով։ Ես չեմ կարող վտահանալ օտարականների վրայ, նրանց ուղեցոյց վերցնելով ինձ հետ. իմ դասակարգի կանանց առնտուրը դիւրութեամբ են արտաւորւում. և թէև հոգս

չէ, որ մարդիկ լմնանան, որ ես սիրում եմ Գլոկուսին, բայց ես չեմ ուզիլ, որ ուրիշները այնպես կարծեն թէ ես կախարդութեան միջոցով եմ ձեռք բերել նրա սէրը»։

«Եթէ երեք օր էլ անցած լինէին իմ առողջութեանս վրայ», ասաց եգիպտացին, կանգնելով և քայլելով (որպէս թէ իր ոյժը փորձելու) բայց անհաստատ և թոյլ ոտքերով, «ես ինքս կը ներկայանայի քեզ հետ։ Լաւ, ուրեմն պէտք է սպասես»։

«Բայց Գլոկուսը չուտով պիտի ամուսնանայ այդ տաճկի Նէապօլսեցու հետ»։

«Ամուսնանայ»։

«Այո. հետևեալ ամսի առաջին օրերում»։

«Ո՛չդքան չուտով. հասանաս տեղեկութիւն ունիս այդ մասին։

«Ես լսել եմ նրա դերու չրթունքներից»։

«Այդ ամուսնութիւնը չը պէտք է տեղի ունենայ», ասաց եգիպտացին բուռն կերպով։ «Մի վախենար, Գլոկուսը անպատճառ քոնը է։ Բայց ինչպէս պիտի տաս նրան այդ հեղուկը՝ երբ որ ստանաս»։

«Իմ հայրը նրան, և կարծում եմ հելլենուհուն էլ վաղը չէ միւս օրը հրաւիրել է մեր տունը. այդ ժամանակ ես պատեհութիւն կունենամ նրան տալու սիրադեղը»։

«Շատ լաւ», ասաց եգիպտացին և նրա աչքերը փայլատակեցան այնպիսի կատաղի ցնծութեամբ, որ Ջուլիայի նայուածքը խոնարհուեցաւ նրանց առջև։ «Վաղը, երեկոեան, ուրեմն պատրաստել տուր քո պատզարակը.—պատզարակ ունիս»։

«Անպատճառ—այո», պատասխանեց դրպանապարծ Ջուլիան։

«Ուրեմն պատրաստել տուր քո պատզարակը, և քաղաքից երկու մղոն հեռու մի հիւրանոց կայ, որ իր քաղնիքների գերազանցութեամբ և իր պարտէզների գեղեցկութեամբ Պոմպէյի հարուստ դասակարգի յաճախատեղին է—այնտեղ, հիւանդ կամ մեռած, ես կը հանդիպեմ քեզ Սիլենուսի արձանի մօտ, որը գտնուում է պարտէզի չորսկայ ծառաստանի մէջ. յետոյ ես ինքս կառաջնորդեմ քեզ վհուկի մօտ։ Պէտք է սպասենք մինչև երեկոեան աստղը դուրս գայ և հովիւների այծերը դնացած լինեն հանգստանալու. այդ ժամանակ երեկոեան տատերները կը թագցնեն մեզ և ոչ ոք մեզ չի խանգարիլ։ Գնա տուն և ոչ մի բանից մի վախեցար։ «Հոգիների աչխարհով երգուում է Արբակ, եգիպտոսի կախարդը, որ Իօնէն չը պէտք է ամուսնանայ Գլոկուսի հետ»։

«Եւ այդ Գլոկուսը իմս կը լինի». աւելացրեց Ջուլիան, վերջացնելով կիսատ նախադասութիւնը։

«Դու ասացիր», պատասխանեց Արբակ. և Ջուլիան կէս սարսափած իր այդ անասելի ժամադրութիւնից՝ բայց դատաչ մղուած նախանձից և հակառակութեան ինքնասիրութիւնից աւելի քան սիրուց, վճռեց պահել իր խոստումը։

Երբ մէկ անգամ մնեակ մնաց, Արբակի կուրծքը պայթեց.—

«Ո՛վ պայծառ աստղեր, որ երբէք սուտ չէք խօսում, դուք արդէն սկսել էք գործադրել ձեր խոստումները. յաջողութիւն սիրոյ մէջ և յաղթութիւն իմ թշնամիներիս վրայ,—ահա թէ ինչ բախտաւորութիւն է սպասում ապագայում։ Հէնց այն ժամին երբ իմ մրքա ոչ մի միջոց չէր գտնում վրէժխնդրութեան մրցանակին հասնելու, դուք ուղարկեցիք ինձ այս սիրուն լիմարին որ-

պէս առաջնորդ։ Նա սուզուեցաւ իր մաքերի խորքը՝ «Այո՛», ասաց նա նորից, բայց աւելի խաղաղ ձայնով. «ես ինքս չէի կարող տալ նրան թոյնը, որը իրօք մի սիրագեղ պիտի լինի. յետոյ կարող են նրա սպանութեան հետքը բռնել և ինձ հասնել։ Բայց վհուկը... ա՛, այդ ահ է իմ նպատակների յարմար և բնական դրծիքը»։

Նա կոչեց իր զերինների մէկին, հրամայեց երթալ Ջուլիային եանից և խնդրալով նրա անունը և գիրքը՝ և գալ իրան տալ։ Սրանից յետոյ նա դուրս գնաց պորտիկոն։ Երկինքը խաղաղ էր և պարզ. բայց նա, որ մեծ հմտութիւն ունէր նրա փոփոխութիւնների բոլոր նշանների մէջ, հարիզոնի վրայ նշմարելով մի փոքրիկ կարմրամպ՝ որին հողմը սկսել էր կամաց կամաց շարժել, հասկացաւ, որ փոթորիկը մօտ էր։

«Դա նմանում է իմ վրէժխնդրութեանս», ասաց նա, նայելով. «երկինքը պարզ է, բայց ամպը առաջ է շարժւում»։

Գլուխ Թ.

Փոթորիկը հարատում։ Վհուկի անձնատը։

Օրուայ այն ժամանակ, երբ միջօրէի ստուերը աստիճանաբար չքանում էր երկրի երեսից, Գլոկուս և Խոնէն սովորաբար դուրս էին գնում վայելելու զով և թարմ օդը։ Այդ դարում զանազան տեսակ կառքեր գործածական էին հռոմայեցիների մէջ. մէկ տեսակը, որ հարուստ քաղաքացիները յաճախ նեծնում էին, երբ ոչ մի ընկեր չունէին իրանց հետ, կոչւում էր biga (բիգա) և արդէն նկարագրուած է այս աշխատութեան առաջին մասերում.

կանացի կառքերը կոչւում էին carpentum (կարպենտում *) և սովորաբար երկու անիւ ունէին. նախնիները ունէին նաև մի տեսակ պատգարակ, որ նմանում էր մեծ «սեդանական» աթոռների, բայց այս տարբերութեամբ միայն, որ նրանք աւելի հանգստաւէտ էին քան նորերը. նրանց մէջ մարդ կարող էր հանգիստ պառկել փոխանակ ուղղանայեաց կերպով նստելու և ցնցուելու **)։ Մի ուրիշ տեսակ կառք էլ կար, որ գործ էր ածւում ճանապարհորդութեան կամ քաղաքից դուրս չրջապտութեան ժամանակ. դա հանգիստ էր և դիւրութեամբ կարող էր երեք կամ չորս հոգի տեղաւորել. դա ունէր նաև մի ծածկոց, որ ուզած րոպէին կարելի էր իջեցնել. մէկ խօսքով, դա համապատասխանում էր հիմիկուայ բրիցկաներին, թէև դրանից չատ տարբերւում էր իր ձևով։ Այս տեսակի մի կառքի մէջ էր, որ սերտահարները այժմ գնում էին զբօսնելու իրենց հետ առած Խոնէի զերիներից մէկին։ Քաղաքից մօտաւորապէս տասը մղոն հեռու, այդ ժամանակ կար մի հին աւերակ, ըստ երեւոյթին մի յունական տաճարի փլատակը. և քանի որ յունական ամեն մի բան հետաքրքիր էր Գլոկուսի և Խոնէի համար, նրանք վճռել էին այցելել այս աւերակը և դէպի այդ տեղ էր, որ նրանք այժմ գնում էին։

Նրանց ճանապարհը ընկել էր որթի և ձիթենու պուրտաններն մէջից. աւելի և աւելի պատուելով դէպի Վեզուվի բարձրագոյն տարածը, ուղին քարքարոտ էր

*) Հասարակաց տօների և խաղերի ժամանակ, նրանք գործ էին ածում աւելի մանկապին և աւելի ճոխ մի քառանիւ կառք, որ կոչւում էր (pilentum (պիլենտում)։

**) Բայց նրանք ունէին նաև սելլան (sella) կամ սեդանականը, որի մէջ նրանք նստում էին, ինչպէս մենք նստում ենք։

դառնում. ջորիները առաջանում էին կամաց կամաց և դժուարությամբ. ծառաստանի ամեն մի ճեղքից երևում էին այն գորշ և ուղղաձիգ անձաւները, որոնք առաւմնաձև էին զարձրել չոր ժայռերը և որոնց Սարաթոն նկարագրել է. բայց ժամանակի զանազան յեղափոխությունները և հրաբուղիսը այժմ դրանցից ոչ մի հետք չեն թողել երան վրայ։ Արեգակը իջնելով դէպի իր մուտքը, ձգած էր երկար և մութ ստուերներ լերան վրայ։ Տեղ տեղ, հաճարների և վայրի կաղնիների մէջ, նրանք լսում էին հովուի զեղչկական եղէգի երաժշտությունը։ Երբեմն նրանք տեսնում էին մեռածքահեր և չնորհալի կապելլանին, որ իր պահակ եղջիւրով և փայլուն գորշ աչքերով արածում էր բլուրի կողքին. այդ սիրուն արարածները նոյն իսկ այսօր էլ աւտոնական երկնքի տակ մարդու յիշեցնում են Մարօի հովուերգությունները։ Խաղողները, որոնք արդէն ծիրանագոյն էին զարձել հասուն ամառուայ ժպիհների տակ, վայլում էին կամարաձև որթապահակներից, որոնք կախուած էին ծառից ծառ։ Նրանց զլխի վերև, նօսր ամպերը սաւառնում էին խաղաղ երկնքում և տանում էին այնքան կամաց հաստատութեան երեսին, որ նոցա չարժումը հազիւ տեսանելի էր։ Նրանց աջ կողմից երբեմն երբեմն երևում էր, անկոհակ ծովի այս կամ այն մասը, ուր մի թեթև նաւակ լողում էր դրա մակերևոյթի վրայ և արևի ճառագայթները տարածում էին անգունդի երեսին այն անթիւ և ամենափոփոխ երանգները, որոնք այնքան յատուկ են այդ անսուլ ծովին։

«Ի՛նչքան զեղեցիկ է այն զաղափարը», ասաց Գլոկուա, մի կիսաձրմանչ ձայնով, «որով մենք երկրին կոչում ենք մեր Մայրը։ Ինչքան մի մայրական զորովով նա թափում է իր օրհնութիւնները իր զաւակների վրայ

և աչխատում է չը զրկել իր ժպիհներից մինչև անգամ այն անբերրի վայրերը, որոնց բնութիւնը պատճել է որ և է զեղեցկութիւն. նկատիր այն ելակենիները և որթերը, որոնց նա պատճառ հիւսում է այն հանգած հրաբուղխի անբեր և այրեցեալ հողի վրայ։ Ա՜հ, այսպիսի մի ժամում և այսպիսի մի տեսարանի առջև ինչ դիւրին է երևակայել, որ Ֆաուստի ծիծաղկոտ երեսը նայում է մեզ այդ կանանչ պատկերի միջից կամ տեսնել լեռնային նիմֆային հետքերը ձորի ամենաթաւ լաբիւրինթոսի մէջ։ Բայց նիմֆաները այլ ևս գոյութիւն չունին այն օրուանից, որ դու ստեղծուեցար»։

Ոչ մի լեզու չը կայ այնքան չողոքորթ, որքան մի սիրահարի լեզուն. այնուամենայնիւ իր զգացմունքների չափազանցութեան մէջ, չողոքորթութիւնը նրան չատ սակաւ էր թուում Տարօրինակ և չսալ արտաղեղում, որ պատահում է յորդելով։

Նրանք հասան ափերակների մօտ. նրանք քննեցին այդ հնութեան նշխարները այն զորովով որով մենք քննում ենք մեր նախահայրերի արբանեակ հետքերը։ Նրանք մնացին այնտեղ մինչև Արսպերիոը երևաց վարդագոյն երկնքում և երևակայեցան վերջալոյսի ժամանակ սկսեցին վերադառնալ տուն. նրանք աւելի լաւ էին քան առաջ, որովհետև ստուերի մէջ և պատկերի տակ նրանք աւելի չօշափելի կերպով զգում էին իրանց փոխադարձ սէրը։

Այս ժամանակ էր, որ եկիպատացու նախատեսած փոթորիկը սկսեց տեսանելի կերպով հաւաքուել նրանց զլխի վերև։ Նախ մի խուլ և հեռաւոր որոտում նրանց ազդարարեց տարերքի մօտալուտ մաքառումը և յետոյ այդ դղրդիւնը արագ անցաւ սև ամպերի հոծ շարքերի

վրայից։ Այդ կլիմայի մէջ, վոթմորկի յանկարծահասուԹիւնը գրեԹէ մի զերբնական բան է, որի մէջ նախնիների աւելորդապաշտուԹիւնը դիւրուԹեամբ կարող էր երևակայել մի աստուածային միջամտուԹիւն։ Անձրևի մի քանի մեծ կաթիլներ ընկան այն ճիւղերի միջից, որոնք կլոսով չափ կախուած էին նրանց ճանապարհի վրայ և լեռոյ չեզ կայծակը սկսեց արագ ու արուանելի փայլունուԹեամբ չորալ նրանց աչքերի առջև և անհետանալ մթուԹեան մէջ։

«Աւելի արագ, իմ բարի Կարրուկարիուա», *) ասաց Գլոկուսը կառապանին. «վոթմորկը վրայ հասաւ»։

«Գերին քշեց ջորիներին, նրանք արագ գնում էին անհարթ ճանապարհի վրայ. ամպերը մթնեցին, որոտումը աւելի մերձեցաւ և անձրևը սկսեց արագ արագ թափուիլ։

«Վախենում եա», մրմնջաց Գլոկուս, որը վոթմորկի պատճառով պատահուԹիւն էր զոել աւելի մօտենալու Իօնէին։

«Ոչ, քանի որ քեզ հետ եմ», ասաց նա փափուկ ձայնով։

Այդ րոպէին, կառքը, որ դիւրաթեկ էր և վատ չինուած (ինչպէս, այդ ժամանակուայ շատ բաներն էին, չը նայելով նրանց գեղեցիկ ձեւին) խրուեցաւ մի փոսի մէջ, որի վրայ ձգուած էր մի գերան. կառապանը, հայհոյելով՝ աւելի զարկեց ջորիներին, որպէս զի կառքը դուրս քերեն այդ փոսից. բայց երբ ջորիները իրանց բոլոր ուժով քաշեցին, կառքի անիւը դուրս եկաւ և կառքը տակնուվրայ եղաւ։

*) Նշանակում է կառապան։ Ե. Թ.

Գլոկուս, չուռով ազատուելով կառքից՝ վազեց Իօնէին օգնելու, որը բարեբախտաբար անվնաս էր մնացել. բայական գժուարուԹեամբ նրանք բարձրացրին կառքը և տեսան, որ դա այլ ևս մինչև անգամ ապատան լինել չէր կարող նրանց համար. ծածկոցի երկաթները բոլորը կոտրուած էին և անձրևը հեղեղի նման թափուում էր ներս։

Այս անելանելի կացուԹեան մէջ, ինչ կարելի էր անել։ Նրանք բաւական հեռու էին քաղաքից—իսկ այդ մօտերքում ոչ տուն կար և ոչ օթնուԹիւն։

«Այստեղից մի մղոն հեռու», ասաց գերին, «մի երկաթագործ կայ. լաւ է որ ես գնամ նրան բերեմ, որպէս զի կարրուկալի անիւը նա ամրացնէ—բայց, Եուպիտէր, անձրևը ինչպէս թափուում է. տիկինը չուռ կը դառնայ մինչև ես վերադառնամ»։

«Վաղիր», ասաց Գլոկուս, իսկ մենք կաշխատենք գոնել ամենաւաս ապաստանը մինչև դու չես գայ»։

Ճանապարհը ծածկուած էր ծառերի ստուերներով. որանցից ամենամեծ ճիւղերի տակ Գլոկուսը տարաւ Իօնէին։ Նա հանեց իր վերարկուն և ձգելով Իօնէի վրայ, ուզեց նրան աւելի պաշտպանել անձրևից, բայց դա իջնում էր այնպիսի կատարուԹեամբ, որ դրա առջև չէին դիմանում այդ չնչին արգելքները։ Եւ յանկարծ մինչդեռ Գլոկուս խրախուսում էր իր գեղեցիկ ընկերուհուն, կայծակը խփեց նրանց մօտիկ ծառերից մէկին, որի կոճղը մի սոսկալի ճաթիւնով երկուսի բաժանուեցաւ։ Այս զարհուրելի պատահարից նրանք հազիացան իրանց ներկայ ապաստանի վտանգը և Գլոկուս սկսեց անձկուԹեամբ նայել իր չորս կողմը մի նուազ վտանգաւոր ապաստան գտնելու։ «Մենք այժմ», ասաց նա, գտնուում ենք վե-

զուվի բարձրութեան կէս ճանապարհին. անպատճառ որ և է անձաւ կամ խոռոչ պէտք է լինի այդ որթատեզեաց ժայռերի մէջ, որից նիմֆաները հեռանալով մի ապաստան պիտի թողած լինեն. եթէ կարողանայինք մի այդպիսի տեղ գտնել՝ լաւ կը լինէր»։ Այս ասելով՝ նա դարձեալ ծառերի տակից և ուշադրութեամբ նայելով վերան ամեն կողմը՝ թանձրացող աղջամուղջի միջից նկատեց մի կարմիր և դողդոջուն լոյս, որ իրանից շատ հեռու չէր գտնւում։ «Այդ լոյսը անպատճառ գալիս է մի որ և է հովուի կամ այգեպանի խարույկից», ասաց նա, «եթէ այդ լոյսը բռնենք գնանք, կարող ենք հասնել մի որ և է հիւրնկալ պաշտպանութեան։ Կը սպասեմ այստեղ մինչև ես... բայց ոչ, քեզ այստեղ մի վտանգ կարող է պատահել»։

«Ես ուրախութեամբ կերթամ քեզ հետ», ասաց Իօնէին։ Թէև ճանապարհը ծածկուած չէր, բայց աւելի լաւ է քան այս ճիւղերի տակ պաշտպանութիւնը»։

Կէս առաջնորդելով Իօնէին և կէս կրելով նրա ծանրութիւնը՝ Գլոկուս տանում էր նորան դէպի լոյսը, որ միշտ վայլում էր կարմիր և հաստատ բոցով. նրանց հետևում էր դողդոջուն ստուերն։ Ի վերջոյ նրանց ճանապարհը այլ ևս բաց չէր. վայրի որթերը փաթաթուում էին նրանց ոտքերին և ծածկում նրանցից, առաջնորդող լոյսը, որը և երբեմն երբեմն երևում էր նրանց։ Բայց աւելի և աւելի յորդութեամբ թափւում էր անձրևը և փայլակը սառնում էր իր ամենասահատուն և ամենատպաւորիչ կերպարանքը. նրանք, այնուամենայնիւ, սոխրուած էին միշտ առաջ գնալ, յուսալով, որ վերջ ի վերջոյ պիտի հասնեն մի որ և է հիւղի կամ բնական անձաւի։ Որթերը աւելի և աւելի խճճւում էին և

վերջապէս լոյսը կատարելապէս անհետացաւ նրանց աչքերից. նրանք այժմ գնում էին մի նեղ շաւղի ուղղութեամբ. առաջնորդուած լոկ կայծակի անընդհատ լոյսով՝ նրանք դժուարութեամբ գնում էին այդ ճանապարհով։ Անձրևը չանկարծ դադարեց. քարացած լաւայից գոյացած թեք և կոպիտ ժայռերը խոժոռելով իրանց դէմքերը՝ աւելի երկիւղալի էին դարձնում այդ մութ և վտանգաւոր տողը, որը լուսաւորւում էր կայծակով միայն։ Երբեմն փայլակը կանգ էր առնում երկաթագոյն դոշշ հրաբղխային կղզեզանգուածների վրայ, որոնք մասամբ ծածկուած էին հնացած մամուռով կամ փտած ծառերով. կարծես նա ի զուր որոնում էր երկրի մի աղնուագոյն արտադրութիւն, որ աւելի արժանի լինէր իր բարկութեան. և երբեմն տեսարանի ամբողջ այդ մասը մթութեան մէջ թողնելով՝ լայն և թերթացած կայծակը կախում էր իր կարմիր բոցերը ովկիանոսի վրայ, որը գլորւում էր նրա տակ մինչև նրա ալիքները կարծես կրակի նման բոցավառուում էին և այնքան սաստիկ էր լոյսը, որ ծովախորշի ամենահեռաւոր պատկանները պարզ երեւում էին սկսած յաւերժական Միսենումից իր բարձր ճակատով, մինչև չքնաղ Սօրրենտումը և նրա հեսի հրակայ բլուրները։

Մեր սիրահարները կանգ առան չուարած և տարակուսած։ Երբ այն մթութիւնը, որ իջնում էր կայծակի ամեն զարկի հետից, մէկ անգամ էլ չրջապատեց նրանց, նրանք տեսան իրանց գլխի վերև, բայց ոչ հեռու, մի խարխրպաւոր լոյս։ Մի ուրիշ բոց, որից երկինքը և երկիրը կարմիր ներկուեցան, նրանց ցոյց տուաւ բոլոր հետաւորութիւնը։ Ոչ մի տուն չը կար մերձակայքում, բայց ճիշդ հէնց այնտեղ, ուր լոյսը երևացել էր,

Նրանք մի անձավի խորքում կարծես նչմարեցին մի մարդկային կազմուածքի ուրուագիծը։ Խաւարը նորից վերադարձաւ. լոյսը վերսանալով իր գոյնը երկնքի բոցերի բացակատեանն մինչոյին նորից փայլեց. նրանք վճռեցին բարձրանալ այդ կրակի մօտ. նրանք ստիպուած էին ոլոր մոլոր պատրաներով բարձրանալ ժայռերի ահագին բեկորների միջից և տեղ տեղ էլ վայրի թուփերի արանքից. բայց նրանք աւելի և աւելի մերձենում էին լոյսին և վերջապէս նրանք հասան մի տեսակ անձաւի մուտքի դիմաց. այդ որջը ըստ երևոյթին կազմուած էր ժայռերի ահագին բեկորներից, որոնք թափուած էին միմեանց վրայ և նայելով մթութեան մէջ՝ նրանցից ամեն մէկը ահաւոր և մի տեսակ աւերտրպալական երկիւղով և սարսուռով չէր քաշուեցաւ։

Այդի հետաւոր խորքում վառուում էր մի խարոյկ և դրա վրայ դրուած էր մի փոքրիկ կաթսայ. պատի այն մասից, որի տակ վառուում էր կրակը, կախուած էին շատ բոյսերի և խոտերի զանազան չարքեր, որպէս թէ չորանալու համար։ Մի ալուէս, որ կուչ էր եկել կրակի մօտ, նայում էր օտարականներին պայծառ և կարմիր աչքերով. նրա մազերը կանդնել էին և մի ցածրաձայն մրմռոց լսուում էր նրա ատամների արանքից. քարայրի կեդրոնում կար մի հողեղէն երեք ղլխանի արձան, շատ ահաւորնակ և ֆանտաստիկ ձեով. դրա գլուխները չինուած էին մի չան, մի ձիու և մի վարազի իսկական գանգերից. մի կարճ եռոտանի դրուած էր ժողովրդական Հէկատէի այս վայրենաձև ներկայացուցչի առջև։

Բայց քարանձաւի այս յատկութիւնները և զարդերը չէին որ ապշեցնում էին զոզոնար նայողների աչքերը, այլ նրա բնակչի կերպարանքն էր։ Կրակի առջև նստած էր մի բաւական տարիքոտ կին և կրակի լոյսը ուղղակի փայլում էր նրա դէմքի վրայ։ Կարելի է ոչ մի երկրում չեն տեսնում այնքան պատառ կտոպէր, որքան խատչիայում. ոչ մի երկրում, տարիքը այնքան տարտափելի կերպով չէ փոխարկում դեղեցկութիւնը այդքան զզուելի և գարհուրելի անճոռնիութեան։ Բայց նրանց առջև նստած պառաւը մարդկային ծայրագոյն տգեղութեան այլ նմոյշներից չէր. ընդհակառակը, նրա դէմքը կրում էր նշանները մի կանոնաւոր բայց բարձր և արծուալին կերպարանքի. նրա քարացած աչքերը յառած էին օտարականների վրայ։ Նրա նայուածքը կարծես թովում էր նրանց. այդ տարտափելի երեսի մէջ նրանք տեսնում էին մի պիակի երեսի նմանութիւնը. նա ունէր նոյն տպակիացած և անփայլ նայուածքը, նոյն կապտոյտ և կնճռոտած շրթունքը, նոյն ցամաք և փոս ընկած թշերը, նոյն վախ, ծանրացած մազերը, որ անպոյն գոլ էին, նոյն կապոյտ, կանանչ և մեռելագոյն մարմինը, որ կարծես կրում էր գերեզմանի ներկը իր վրայ։

«Դա մի պիակ է», ասաց Գլոկուս։

»Ո՛չ, չարժուում է, դա մի ուրուական է կամ մի լարվա», կցկտուր բառերով մրմնջաց Խոնէն կպչելով աթենացու կրծքին։

«Ո՛հ, հեռանանք, հեռանանք», հառաչեց սարկուհին, «դա Վէդուվի վհուկն է»։

«Ո՛վ էք դուք», ասաց մի չոր և ուրուականական ձայն։ «Ես ինչ գործ ունիք այստեղ»։

Նրա տակալի և մեռելային ձայնը չարմարուում էր նրա կերպարանքին և աւելի նմանուում էր Սակիքսի ներքի մի անմարմին թափառականի հնչիւնին, քան մի որ և է կենդանի մահկանացուի ձայնին. Խոնէն ուզում

էր նորից վերադառնալ և կանգնել փոթորկի անզուգական ուժգնության տակ, բայց Գլոկուս, թէև ոչ առանց երկիւղի, նրան քաշեց անձաւի մէջ։

«Մենք փոթորկի բռնուած թափառականներ ենք այս մերձակայ քաղաքից», ասաց նա, «և այդ կրակի լոյսով այստեղ առաջնորդուեցանք. մենք խնդրում ենք քեզանից այս անձաւի պաշտպանութիւնը և քո կրակից օգնութիւնը»։

Նրա խօսելու ժամանակ ազուէսը վեր կացաւ գետնից և մօտենալով օտարականներին՝ ցոյց առաւ իր սպիտակ առաջները, ծայրից ծայր, և ապա նայեց մի մրմռոց հանեց իր կոկորդից։

«Պառկիր, սորմէ», ասաց վէոկը և նրա ձայնը լսեց թէ չէ, անասունը անմիջապէս պառկեց, ծածկելով իր երեսը իր բրդով, և միայն յառելով իր արագաշարժ և սուր աչքերը իր հանգիստը խանգարողների վրայ։ «Եթէ ուզում էք եկէք կրակի մօտ», ասաց նա դառնալով դէպի Գլոկուսը և նրա ընկերները։ «Ես ոչ մի կենդանի էակի համեցէք չեմ անում, բուից, ազուէսից, գորտից և իժից զատ, ուրեմն ձեզ էլ չեմ կարող համեցէք անել. բայց եկէք կրակի մօտ առանց համեցէքի. ինչու էք սպասում քաղաքավարութեան»։

Այն լեզուն, որով այդ քաւթառը խօսում էր՝ մի տարօրինակ և բարբարոսական լեզուներէն էր, խառն մի ուրիշ կոպիտ և հին բարբառի հետ։ Նա չը չարժուեցաւ իր տեղից. բայց քարացած աչքերով նայում էր նրանց՝ մինչդեռ Գլոկուս հանում էր Իօնէի վերարկուն և նրան նստեցնում էր մի փայտի կոճղի վրայ, որ միակ երկրորդ նստարանն էր այրի մէջ. նա փչեց կրակը և ուրիշ բոցավառեց նրան։ Սարիւսին էլ քաջալերուելով

իր մեծերի յանդգնութիւնից, հանեց իր երկար պալլան, և երկչոտութեամբ սղաց խարոյկի հակառակ կողմը։

«Ես վախենում եմ, որ մենք անհանգիստ ենք անում քեզ», ասաց Իօնէի արծաթահնչիւն ձայնը, ուղեղով հաչուել պառաւի հետ։

Վէոկը չը պատասխանեց. նա նմանում էր մի մեռեալի, որ մի բոպէ յարութիւն առած և նորից մտած լինի իր յաւիտենական քնի մէջ։

«Ասացէք ինձ», ասաց նա, յանկարծ և մի երկար լռութիւնից յետոյ, «դուք եղբայր և քոյր էք։

«Ո՛չ», ասաց Իօնէն չիկնելով։

«Ամուսնացած էք»։

«Ոչ դեռ», պատասխանեց Գլոկուս։

«Հմ, սիրահարներ էք, հա, հա, հա», և վէոկը այնպիսի բարձր ձայնով և այնքան երկար ծիծաղեց, որ անձաւները արձագանք տուին։

Իօնէի սիրտը կարծես այլ ևս չը բաբախեց երբ նա լսեց այդ տարօրինակ խնդութեան ձայները։ Գլոկուսը արագ արագ մրմնջաց մի ինչ որ հակահմայք այդ վատ նշանի դէմ և դերուէին այնպէս ուժգնութեամբ ինչպէս ինքը վէոկը։

«Ինչու ես ծիծաղում, պառաւ քաւթառ, ասաց Գլոկուս փոքր ինչ խիստ կերպով, երբ նա վերջացրեց իր հակակախարդական բառերը։

«Ծիծաղեցի», ասաց քաւթառը, մտացնոր մարդու եղանակով։

«Նա ձերութիւնից խելքը կորցրել է», մրմնջաց Գլոկուս. երբ նա ասաց այս բառերը, նա նկատեց, որ պառաւի աչքերը յառած էին իր վրայ մի չարաւետ վառ բոցով։

«Դու ասա ես խօսում», ասաց նա չդնկարծ։

«Դու անքաղաքավար հիւրընկալ ես», պատասխանեց Գլոկուս։

«Սուս, մի բարկացնիր նրան, իմ սիրելի Գլոկուս», մրմնջաց Իօնէին։

«Ես կասեմ քեզ թէ ինչու ես ծիծաղեցի, երբ լսեցի, որ դուք սիրահարներ էք», ասաց պառաւը։ «Ես ծիծաղեցի, որովհետև մի հաճոյք է ծերացած և չորացածների համար նայել ձեր նման երիտասարդ սրտերի վրայ և իմանալ, որ անպատճառ կը գայ մի ժամանակ, երբ դուք կը զղուէք... կը զղուէք... հա, հա, հա»։

Այժմ կարգը Իօնէինն էր ազօթել այդ անախորժ մարգարէութեան դէմ։

«Աստուածները չանէն», ասաց նա։ «Սակայն, խնդճկին, դու չես ճանաչում սէրը, ապա թէ ոչ կիմանայիր, որ դա երբէք չէ փոխւում»։

«Կարծում էք, որ ես մի ժամանակ երիտասարդ էի», պատասխանեց պառաւը, չուռով և այժմ ծեր եմ և տրէշանման և մեռելային։ Այս տեսակ է կաղմը, այս տեսակ է սիրտը»։ Այս խօսքերից յետոյ նա նորից թափուեցաւ մի լռութեան մէջ, որ այնքան խոր էր և սարսափելի՝ ինչպէս ինքը կեանքի դադարումը։

«Երկար ժամանակ է ինչ ընակւում ես այստեղ», ասաց Գլոկուսը, չաս անհանգիստ և նեղացած զգալով այդ անաբեկիչ լռութիւնից։

«Ա՛հ, երկար, այո»։

«Մի սոսկալի ընակարան է»։

«Հա, դու իրաւունք ունիս այդպէս ասելու. գժոխքը մեր ներքև է գտնւում», պատասխանեց պառաւը, իր ոսկրոտ մատը թեքելով դէպի գետինը։ «Ես քեզ մի

դաղտնիք կասեմ. տարի խաւարային բաները մի անէծք են պատրաստում ձեր, վերևը բնակուողներիդ, անհոգներիդ և գեղեցիկներիդ համար»։

«Դու մէյն չարագուշակ բառեր ես արտասանում, որոնք չարմար չեն հիւրասէր անձնաւորութեանդ», ասաց Գլոկուս. «և ապագայում ես փոխարինը կը գերադասեմ քո հիւրասիրութեանդ»։

«Դու չաս լաւ կանես։ Ոչ ոք չը պիտի գալ ինձ մօտ՝ թշուառներից զատ»։

«Եւ ինչու թշուառները», հարցրեց աթենացին։

«Ես լերան վհուկն եմ», պատասխանեց պառաւը, մի մեռելային ժպիտով. «իմ գործս է լոյս տալ անյոյսներին. սիրոյ մէջ դժբախտների համար ես ունիմ սիրագեղեր. ազահի համար ես ունիմ գանձերի խոստումներ. չարամիտների համար՝ վրէժխնդրութեան հեղուկներ. երջանիկների և բարիների համար ես ունիմ այն, ինչոր կեանքն ունի—անէծքներ։ Այլ ես անհանգիստ մի անէք ինձ»։

Այս խօսքերից յետոյ, անձաւի գաժան բնակչուհին նորից սուզուեցաւ մի այնպիսի կամակոր և գաժան լռութեան մէջ, որ Գլոկուսն իզուր փորձեց խօսեցնել նրան։ Նա, իր երեսի անչարժ և գժխեմ գծերով, մինչև անգամ չէր ցոյց տալիս, որ լսում է նրան։ Բարեբախտաբար, փոխարինը, որ նոյնչափ կարճատես էր, որչափ բառն, այժմ սկսեց մեղմանալ. անձրևն սկսեց աւելի և աւելի նուազել. և վերջապէս, երբ ամպերը բաժանուեցան, լուսինը դուրս նայեց երկնքի ծիրանի ձեղքից և իր պարզ ճառագայթները առատութեամբ թափեց այդ ամայի բնակարանի մէջ։ Կարելի է, երբէք նա չէր փայլել մի խումբի վրայ, որ աւելի արժան լինէր նկարչի

արուեստին։ Երիտասարդ և ամենաչքնաղ Իօնէն նստած այդ զեղչկական խարոյկի մօտ,—նրա սիրականը արդէն մոռանալով պառաւի ներկայութիւնը՝ ընկած նրա ոտքերի առջև, աչքերը չառած նրա երեսին և անուշ խօսքեր մրմնջալիս—դանդաղ և տառապահար ստիպուհին նստած մի քիչ հեռու—և մեռելային պառաւը իր մահացու աչքերը չառած նրանց վրայ. սակայն ըստ երևոյթին այնքան խաղաղ և անվախ էին այս զեղեցիկ էակները. այս արարածները, մի տարբեր աշխարհի այդ խաւար և անուրբ քարայրում, իր բոլոր դժպիհ և զարհուրելի պարագաներով. այն, այդքան մեծ զօրութիւն ունի սիրոյ ընկերակցութիւնը։ Ազուէսը իր անկիւնից, նայում էր նրանց իր սուր և կրակոտ աչքերով և Գլոկուս, երբ այս անդամ զարձաւ դէպի վհուկը, նա առաջին անդամը լինելով՝ նկատեց որ նրա նստարանի տակից երևում էր մի մեծ օձի փայլուն նայուածքը և կատարեալ պլուխը։ Հաւանականապար Իօնէի ուսերին ձգուած, աթենացու վերարկուն իր պայծառ գոյներով պրպտած էր սողունի ցասումը. նրա կատարը սկսեց փայլել և բարձրանալ և նա մի սպառնալից դիրք ստանալով կարծես պատրաստւում էր թռչելու հեղինուհու վրայ։ Գլոկուսը անմիջապէս վերցրեց խարոյկի կիսակէզ փայտերից մէկը և որպէս թէ բարկացած նրա այդ դարծից՝ օձը դարս եկաւ իր ապաստանարանից և բարձրաձայն սուլելով՝ կանդնեց իր պոչի վրայ մինչև նրա բարձրութիւնը մօտաւորապէս հասաւ Գլոկուսի պլխին։

«Վհուկ», դոչեց Գլոկուս», հրամայիր քո սողունիդ հանդիստ կենալ եթէ ոչ նրան ստիպած պիտի տեսնես».

«Նրա թոյնը առնուած է», ասաց վհուկը, ուշքի գալով նրա սպառնական խօսքերից. բայց նախ քան նա

վերջացնէր իր խօսքը, սողունը թռաւ Գլոկուսի վրայ. ճարպիկ լինը, արագաշարժ և զգոյշ, թեթևութեամբ մի կողմ ցատկեց և այնպիսի ուժով և լաւ նշան առած մի հարուած իջեցրեց օձի պլխին, որ դա զալարուելով ընկաւ կայծերի մէջ։

Քաւթառը վեր թռաւ իր տեղից և կանգնեց Գլոկուսի դիմաց այնպիսի մի երեսով, որ կարող էր յարմարուիլ ամենակատաղի Թուրիային. նրա արտայայտութիւնը վերին աստիճանի չարաչուք էր և զայրացած, բայց նոյն իսկ զարհուրանքի և մեռելութեան մէջ կրում է զեղեցկութեան հետքերը. դա բոլորովին ազատ էր այն կոպիտ ալլանդակութիւնից, որի մէջ հիւանի երեսակայութիւնները որոնել են սոսկանքի աղբիւրը։

«Դու», ասաց նա, մի կամաց և հաստատուն ձայնով, որ իւր խաղաղ և անզայրոյթ չեշտով ասում էր նրա կերպարանքի արտայայտութիւնը—«դու պաշտպանութիւն զտար իմ յարկի տակ և ջերմութիւն իմ օջախիս. «դու չարիք հատուցիր բարութեան փոխարէն. դու զարհուրելի և կարելի է ասել նեխած մի էակի, որ սիրում էր ինձ և ինձ էր պատկանում. ո՛չ, ես առաւել մի անասունի, որ նուիրուած է աստուածներին և յարգուած մարդկանցից *)։ Այժմ լսիր քո պատիժը։ Այն լուսնով, որ վհուկի պաշտպանն է, Օրկուսով, որ բարկութեան գանձապահն է, ես անիծում եմ քեզ և դու անիծեալ ես. թող քո սէրդ չորանայ, քո անունդ սևանայ, թող զժոխայինները քեզ հալածեն, թող քո սիրած

*) Համաձայիք, ինչպէս իրաք բոլոր հին ազգերը, մի յատուկ արբանութեամբ էին վերաբերում դէպի օձերը, որոնց ընտելացնում էին իրենց աներում և յաճախ կերակրում իրենց սեղաններից։

խորհրդաւոր դառնայ և խանգուի, և թող քո վերջին ժամուդ դու լինես Վեզուվի, Սոդոմի մարգարէական ձայնը։ Եւ դու», աւելացրեց նա, յանկարծ դառնալով դէպի Իօնէն և բարձրացնելով իր աջ թեը, բայց Գլոկուա անմիջապէս կարեց նրա խօսքը.

«Գարշելի քաւթառ», գոչեց նա, «լռիր։ Ինձ անիծեցիր և ես լինձ յանձնում եմ աստուածներին. ես ծաղրում եմ քեզ և քո խօսքերդ ոչնչի տեղ եմ դնում. բայց եթէ մէկ բառ արտասանես այս օրիորդի դէմ, ես քո անէծքդ մահուան հառաչանքի կը փոխարկեմ այդ պիղծ շրթունքներիդ վրայ։ Զգույշ կաց»։

«Ես արդէն անիծել եմ», պատասխանեց պառաւը, վայրենաբար ծիծաղելով. «որովհետև քո թշուառութեամբ նզովուած է նա, որ քեզ սիրում է։ Եւ այժմ որ ես քո շրթունքներից լսեցի քո անունը ես պիտեմ լինչ բառով քեզ յանձնեմ դևերին։ Գլոկուա, քո դատաստիքը կընքուած է»։ Այս ասելով վհուկը իր երեսը դարձրեց աթենացուց և չոքելով իր վիրաւորուած սիրելու կողքին, նրան դուրս բերեց կրակատեղից և այլ ևս չը նայեց նրանց։

«Ո՛հ, Գլոկուա», ասաց Իօնէն սաստիկ զարհուրած, «ինչ արեցինք։ Ե՛կ չուռով հեռանանք այստեղից, վիրաւորիկը դադարել է։ Բարի տիկին, ներիր նրան. լեռ կոչիր քո խօսքերը. նա ուղում էր լոկ պաշտպանուիլ։ Ընդունիր այս խաղաղութեան զոհը և քո սանձներդ մեզ». և Իօնէն ծռուելով դրեց իր քսակը պառաւի գոգի մէջ։

«Հեռացիր», ասաց նա, դառնութեամբ «հեռացիր։ Նզովքը երբ մէկ անգամ հիւսուեցաւ, Պարկանները միայն կարող են բանալ այդ։ Հեռացիր»։

«Ե՛կ, սիրելիս», ասաց Գլոկուա, անդամները թեամբ։ «Դու կարծում ես, որ մեր վերևի կամ ներքևի աստուածները կը լսեն խելակորոյս ծերուքեան անկարող զառանցանքը։ Ե՛կ»։

Երկար և բարձրաձայն հնչեցին անձաւի արձագանքները Սոդոմի անէզ ծիծաղի ձայնով—նա չը դիջանեց ուրիշ պատասխան տալ։

Սիրահարները աւելի ազատ չունչ առան երբ դուրս եկան բաց երկնքի տակ. բայց դեռ Իօնէն գտնում էր այդ տեսարանի և վհուկի խօսքերի և ծիծաղի առաւոր ազդեցութեան տակ. և նոյն իսկ Գլոկուա չէր կարողանում կատարեալապէս թօթափել նրանց թողած տպաւորութիւնը։ Փոթորիկը այժմ դադարել էր, միայն երբեմն երբեմն մի խուլ որոտ մրմնջում էր հեռաւոր սև ամպերի մէջ, կամ կայծակը բոպէական փայլով մրցում էր լուսնի լուսեղէն ալիքահոսութեան դէմ։ Բաւական ժամանակ թիւնից յետոյ նրանք գտան ճանապարհը, ուր նրանք տեսան, որ կառքը արդէն այնքան վերանորոգուել էր, որ նրանք կարող են ճանապարհ ընկնել և կարրուկա-ըիուսը (կառապանը) բարձրաձայն աղաղակում էր Հերկուլէսին, որ նրան յայտնէ թէ ուր են գնացել նրա տէրերը։

Գլոկուան լրուր աշխատեց դադարեցնել Իօնէի ուժասպառ ոգին և նորնչափ լրուր վերստանալ իր բնական ուրախասրտութիւնը և իր առաջուան տրամադրութիւնը։ Նրանք չուռով հասան քաղաքի դուռը. երբ որ դա բացուեցաւ նրանց համար, մի պատգարակ դրուած պերիներէի ուսերի վրայ փակեց նրանց ճանապարհը։

«Հիմա չափազանց ուշ է դուրս երթալու համար», պոչեց պահակը պատգարակի ներսը եղող մարդուն։

«Ոչ այդպէս», ասաց մի ձայն, որը սարսուռ ազդեց սիրահարներին. դա մի ձայն էր, որ նրանք չատ լաւ ճանաչում էին: «Ես գնում եմ Մարկուս Պոլիբիուսի ամարանոցը և չուտով կը վերադառնամ: Ես եղիսաբեի Արբակն եմ»:

Դռնապանի վարանմունքը չքացաւ և պատգարակը անցաւ սիրահարների կատքի կողմից:

«Արբակ, այս ժամին.—և հազիւ առողջացած իր հիւանդութիւնից—ու երթալու և ինչ բանի համար պէտք է թողնում լինի քաղաքը», ասաց Գլոկուս:

«Աւազ», պատասխանեց Իօնէն, արտասուելով, «իմ հոգիս աւելի և աւելի զգում է չարիքի նախազգացումը: Պաշտպանեցէք մեզ, ով աստուածներ, կամ ղէթ», և նա իր սրտում մրմնջաց, «պաշտպանեցէք իմ Գլոկուսին»:

Ժ.

Բացատրութիւն տեսարանի և նրա սարսուռի:—Ձակատագիրը գործում է իր մարգարէութիւնը կատարելու, բայց ո՞վ կարող է կարդալ այդ:

Արբակ սպասել էր մինչև միջոցը, որ նա դիւրանար մթութեան մէջ կարողանայ այցելել Վեզուվի Սպայլին: Պահած իր պատգարակի մէջ, որ ղրկած էր իր ամենահաւատարիմ ղերիներին ուղերին—ղերիներ, որոնց նա սովոր էր վստահել բոլոր իր գաղտնի պատգամները—նրա եռանդուն սիրտը խորասուզուած էր յափշտակ վրէժխնդրութեան և յաչող սիրոյ խոհումների մէջ: Տարուիները այսպիսի մի կարճ ճանապարհորդութեան մէջ, փայլում էին շատ քիչ աւելի կամաց քան ջորիների սովորական ընթացքը. և Արբակ չուտով

հասաւ մի նեղ չաւղի սկիզբը, որը սիրահարները բաւական լաւատես չէին եղած գնելու, բայց որը, խիտ որթերի եղերքով ուղղակի առաջնորդում էր դէպի վիռակի բնակարանը: Այստեղ նա կանգ առաւ. նա հրամայեց ղերիներին, պատգարակով միասին թաղնուել որթերի մէջ, որպէս զի ոչ մի պատահական անցորդ չը տեսնէր նրանց և ինքը մի երկար գաւազանի օգնութեամբ և դեռ տակաւ քայլերով սկսեց բարձրանալ բլուրի սռնակ և ցից գառիվերից:

Անձրևի ոչ մի կաթիլ չէր ընկնում խազազ երկնքից. բայց ջուրը տխուր ձայնով կաթկթում էր որթի ծանրացած ճիւղերից և ժայռոտ ճանապարհի խորչերի և փոսերի մէջ, տեղ տեղ կազմում էր փոքրիկ աւազաններ:

«Տարօրինակ կրքեր են այս կրքերը մի փխկխոփալի համար», մտածում էր Արբակ, «որ տիպում են ինձ նման մի մարդու, որ հազիւ վեր եմ կացել մահուան անկողնից և նոյն իսկ առողջութեան ժամանակ միչտ ննջել եմ զեղխութեան վարդերի մէջ, դիւրութեամբ այսպիսի ճանապարհներ երթալ: Բայց կիրքը և վրէժխնդրութիւնը երբ հանում են իրենց նպատակին, կարող են Տարտարոսը ևլիսէ դարձնել: «Բարձր և պայծառ լուսինը մի մեղմամղիկ լոյսով փայլում էր այդ մռայլ ուղևորի ճանապարհի վրայ. նա ցոլում էր ամեն մի լճակի մէջ, որ գտնում էր նրա առջև և նկրտում էր գառիվեր լերան տուրի տակ: Արբակ տեսաւ իր առջև մինուոյն լոյսը, որ առաջնորդել էր սիրահարներին. բայց քանի որ այլ ևս չը կային սև ամպերը, դա փայլում էր նուազ պայծառութեամբ:

Երբ որ մօտեցաւ քարանձաւի մուտքին, նա կանգ

առաւ չունչ առնելու և յետոյ իր սովորական ամփոփ և չքեղ ձեւով նա անցաւ անտառը չէմքից։

Աղուէսը վեր թռաւ իր տեղից, երբ այս այցելուն ներս մտաւ և մի երկար ոռնոց արձակելով յայտնեց իր սիրուհուն այս նորեկի գալուստը։

Վնուկը նորից նստել էր իր տեղը և վերսացել իր զբաղմանալին և խոժոռադէմ անդորրութիւնը։ Վիրաւորուած օձը պառկած էր նրա ոտքերի առջև չոր խոտից մի անկողնի վրայ, որը կիսով չափ ծածկում էր նրան. բայց եգիպտացու սրատես աչքը նկատեց նրա թեւերը, որ վայրում էին, երբեմն ոլորելով երբեմն երկարացնելով իրանց օղակները ցաւի և չը լսուեցած բարկութեան մէջ։

«Պառկիր տորուկ», ասաց վնուկը աղուէսին, ինչպէս առաջ. և առաջուայ նման անտառը ընկաւ դադարին—մանչ բայց զգոյշ։

«Ելիր, աղախինդ Նօքսի և Էրէբուսի», ասաց Արբակ, հրամայական եղանակով. «քեզանից վերաղնցը քո արուեստիդ մէջ, բարեւում է քեզ, ելիր և ընդունիր նրան»։

Լսելով այս խօսքերը պառաւը զարձրեց իր աչքերը եգիպտացու բարձր հասակի և թուխ գծերի վրայ։ Նա երկար անթարթ նայուածքով նայեց նրան, մինչդեռ Արբակ կանգնած էր նրա առջև իր արեւելեան զգեստներով, ծալած թեւերով և անշարժ և խրոխտ ձակատով։ »Ո՞վ ես դու», ասաց պառաւը վերջապէս, «որ քեզ արուեստի մէջ աւելի մեծ ես անուանում քան Ալբեցեալ Փաշաների Սպասին և Նորուբիական կորսուած ցեղի աղջկան»։

«Ես այն մարդն եմ», պատասխանեց Արբակ, «որի

առջև, բոլոր կախարդութեան մշակողները, արևելքից արևմուտք, հիւսիսից հարաւ, Գանգէսից և Նեղոսից մինչև Փեսսալիայի հովիտները և դեղին Տիբերի եզերքը, խոնարհած և սովրած են»։

«Միայն մեկ հոգի այդպիսի մարդ կայ այս կողմերում», պատասխանեց վնուկը, «որին դրսի աշխարհի մարդիկը, չը ճանաչելով նրա բարձրագոյն յատկութիւնները և աւելի գաղտնի հնչակը՝ կոչում են եգիպտացի Արբակ. մեր մէջ որ ճանաչում ենք նրա գերազանց քնութիւնը և խորին գիտութիւնը, նա կոչւում է իր իրաւացի անունով, այն է, Բոցավառ Գոտու Հերմէսը»։

«Նորից նայիր», պատասխանեց Արբակ. «ես եմ այդ մարդը»։

Եւ այս ասելով նա յետ քաշեց իր վերարկուն և յայտնուեց մի մէջկաղ, որ կրակի գոյն ունէր և կոճակուած էր ճարմանդով. ճարմանդի վրայ քանդակուած էր մի նշան, որը ըստ երևոյթին անհասկանալի և անորոշ բան էր, բայց ոչ Սպասի համար։ Այդ նշանը տեսաւ թէ չէ նա վեր կացաւ իր տեղից և ընկաւ Արբակի ոտքերի առջև։ «Ես տեսայ ուրեմն», ասաց նա, վերին աստիճանի մի խոնարհ ձայնով, «նրան որ Տէրն է Հզօր Գոտու— դիջանիր ընդունել իմ հպատակութիւնը»։

«Ելիր», ասաց եգիպտացին. «ես պէտք ունիմ քեզ»։

Այս ասելով, նա նոտաւ նոյն վայրի վրայ, ուր նստել էր Իօնէն և նշան արեց վնուկին նստելու իր տեղը»։

«Դու ասում ես», ասաց նա, երբ պառաւը նստեց, «որ դու գուսարն ես հին Նորուբիական ցեղերի. այդ ժայռակառոյց քաղաքների հզօր պարիսպները դեռ խոժռում են իրանց դէմքերը այն աւազակ ազգի վրայ,

որ տիրել է նրանց հին պետութեանը։ Մասամբ, այդ ցեղերը եկան Յունաստանից և մասամբ արտաքսուեցան մի ափէն ալրեցնալ և նախնի երկրից։ Որ և է դէպքում քո ծագումդ եգիպտական է, որովհետև նախապնակ սորուհների լոյն աչերն էլ Նեղոսի այն անհանգիստ զաւակներից էին, որոնց նա արտաքսեց իր կրծքից։ Ուրեմն, ով Սափա, դու իմել ես այնպիսի նախնիներից, որոնք հպատակութեան երդում են արել իմ նախահայրերին։ Ծագումով որպէս և դիտութեամբ դու Աբրակի հպատակն ես։ Լսիր ինձ, ուրեմն և հնազանդիր»։

Վհուկը դլուխ տուաւ։

«Ինչքան էլ մեծ լինի մեր դիտութիւնը կախարդութեան մէջ», չարունակեց Աբրակ, «մենք երբեմն ստիպւում ենք բնական միջոցներ գործ դնել՝ մեր նպատակին հասնելու համար։ Մասանին, բիբերը, աճիւնը և բոյսերը չեն տալիս անսխալ գուշակութիւններ. ոչ էլ լուսնի բարձրադոյն դաղանիքները չնորհում են նոյն իսկ գօտու տիրոջը այնպիսի մի առաւելութիւն, որով նա կարողանայ երբեմն պէտք զդալ մարդկային զորձիքների, մարդկային նպատակների հասնելու համար։ Ուշ դիր, ուրեմն. կարծեմ դու մեծ հմտութիւն ունիս մահացու բոյսերի դաղանիքների մէջ. դու ճանաչում ես այն խոտերը, որոնք կեանքը դադարեցնում են, որոնք այրում են հոգին և դուրս են վռնտում իր բնակարանից կամ երիտասարդ արիւնը այնպէս սառեցնում են իրանց անդքերի մէջ, որ ոչ մի արեզակ չէ կարող տաքել նրանց սառոյցը։ Արդեօք ես չափազանցում եմ քո հմտութիւնը։ Խօսիր և ճշմարտութիւնը խոստովանութիւր»։

«Ո՛վ մեծազօր Հերմէս, իրօք ես ունիմ այդ դիտութիւնը։ Չիչանիր նայել այս մեռելային և դիականման

կերպարանքներին. նրանք կորցրել են կեանքի երանդները, լոկ նայելով այն ժանտաթոյն բոյսերին, որոնք դիշեր ցերեկ եռում են այդ կաթսայի մէջ»։

Եգիպտացին հեռացրեց իր նռտարանը մի այդպիսի անուրը կամ վտտռողջ դրացութիւնից, որ վհուկը նկարագրում էր։

«Շատ լաւ», ասաց նա, «դու սովորել ես ամէն խորին դիտութեան այն ճչմարիտ սկզբունքը, որ ասում է, «Արհամարհիր մարմինդ, որպէս զի միտքդ իմաստուն դարձնես»։ Բայց դառնանք քո գործիդ։ Վաղը երեկոյ աստղերի լոյսով քո մօտ կը դայ մի ուռայնամիտ օրիորդ. նա քեզանից կը խնդրէ մի սիրադեղ, որով կարողանայ թովել իր սիրածին և հեռացնէ մի ուրիշից նրա աչքերը, որոնք միայն իր համար պիտի ունենան փայլակախարհուրդ նայուածքներ։ Փոխանակ քո սիրահեղուկների՝ դու կը տաս օրիորդին քո ամենազօրեղ թոյներից մէկը։ Թող սիրեկանը կատարէ իր ուխտերը Աստուածներին։

Վհուկը դլխից մինչև ոտք դողաց։

«Ո՛հ, ներիր, ներիր, ահեղ տէր», ասաց նա կըցկըտաւ բառերով, «բայց այդ բանը չեմ յանդգնի անել։ Օրէնքը այս քաղաքներում խիստ է և արիւնն. նրանք կը բռնեն, նրանք կը սպանեն ինձ»։

«Ուրեմն ինչ բանի համար են քո բոյսերը և քո հեղուկները, անպատրաստ Սափա», ասաց Աբրակ ծաղրածական եղանակով։

Վհուկը իր գաշտեղի երեսը ծածկեց իր ձեռքերով։

«Ո՛հ, տարիներ առաջ», ասաց նա, մի ձայնով, որ նման չէր իր սովորական հնչիւնին, այնքան տրտմալից

էր և այնքան վախուկ, «ես չէի՝ ինչ որ եմ այժմ։ Ես սիրում էի և ինձ սիրուած էի երևակայում»։

«Եւ ինչ կապ կայ, վէռկ, քո սիրոյ և իմ հրամանների մէջ», ասաց Արբակ անհամբերութեամբ։

«Համբերիր», վերսկսեց վէռկը. «համբերիր, աղաչում եմ։ Ես սիրում էի. մի ուրիշը և նուազ գեղեցիկ քան ես—այո Նեմէսիա վկայ. նուազ գեղեցիկ—հրապուրեց իմ ընտրեալիս և հեռացրեց ինձանից։ Ես պատկառում էի Եարուբիական այն մեայլ ցեղին, որոնց մեծ մասին, լայնքն են աւելի խաւար կախարդութիւնն գաղանիքները։ Իմ մայրս ինքը մի սագա էր. նա էլ մասնակից էր իր զաւակի ցաւին. նրա ձեռքից ես առացայ այն հեղուկը, որ պիտի ինձ յետ տար իմ սիրականի սէրը. նրա ձեռքից նոյնպէս առացայ այն թոյնը, որ պիտի վերջ դնէր իմ հակառակորդուհու կեանքին։ «Ո՛հ, ջախջախեցէք ինձ, սոսկալի պատեր, իմ դողդոջուն ձեռքերը սխալուեցան սրտակների մէջ. իմ սիրականս իրօք ընկաւ իմ ոտքերի առջև, բայց մեռած, մեռած։ Այն ժամանակուանից ի վեր ինչ է եղել կեանքը ինձ համար։ Ես չանկարծ ծերացայ. ես նուիրուեցայ իմ ցեղիս կախարդութիւններին. մինչև այսօր մի անդիմադրելի մղումով ես ինքս ինձ անիծում եմ մի ահաւոր քաւութեամբ. մինչև այսօր ես փնտռում եմ ամենաժանտ բոյսերը. մինչև այսօր ես բաղադրում եմ թոյները. մինչև այսօր ես երևակայում եմ, որ այդ թոյները պիտի խանգնեմ մի աւելի հակառակորդուհուն. մինչև այսօր ես ածում եմ դրանց սրտակների մէջ. մինչև այսօր ես խորհում եմ, որ դրանք պիտի խանձեն մոխիր դարձնեն նրա գեղեցկութիւնը. մինչև այսօր ես զարթնում եմ և տեսնում եմ Աւգուստի զալարուն մարմինը, փրփրած շրթունքները և ապակեացած աչքերը—սպանուած և ինձ ձեռքով»։

Վէռկի կմախք դարձած կազմուածքը դողում էր հզօր յոյզերով։

Արբակ նայում էր նրան մի հետաքրքիր թէև մի քամահրական աչքով։

«Եւ այս զարչ առարկան դեռ մարդկային զգացմունքներ ունի», մտածում էր նա. նա դեռ կուզէ եկել նոյն կրակի ճաիւնների վրայ, որը այրում է Արբակին։ Այսպէս ենք մենք բոլորս։ Խորհրդաւոր է մարդկային կրքերի այն հանգոյցը, որ միացնում է ամենամեծին և ամենափոքրին»։

Նա չը պատասխանեց մինչև վէռկը մի քիչ հանգստացաւ և նստեց իր նստարանի վրայ օրօրուելով այս և այն կողմ. նրա ապակեանման աչքերը յառած էին դիմացի կրակի վրայ և արտասուքի մեծ կաթիլներ գլորւում էին ցած՝ նրա թշերից։

«Իրօք մի ցաւալի պատմութիւն է քո պատմութիւնը», ասաց Արբակ։ «Բայց այս զգացմունքները լոկ չարժար են մեր երևակայութեան. տարիքը պէտք է խաւարցնէ մեր սրտերը դէպի ամեն ուրիշ բան, բացի մեզանից։ Ինչպէս ամեն մի տարի աւելացնում է մի խաւ թեւի վրայ, նոյնպէս պէտք է ամեն մի տարին մի նոր կեղեւով պատէ և բարձրացնէ մեր սրտերը։ Այլ ես մի մտածիր այդ ցնորքների վերայ։ Ես այժմ նորից եմ ինձ։ Այն վրէժխնդրութիւնը որ սիրելի էր քեզ, ես քեզ հրամայում եմ հնազանդիլ ինձ. վրէժխնդրութեան համար է, որ եկել եմ քեզ մօտ։ Այս երևակայողը, որին ես ուզում եմ ջնջել իմ ճանապարհից, խոչնդոտ է դարձել ինձ, չը նայելով իմ հմայքներիս. այն առարկան, որ բաղկացած է ծիրանուց և կերպասներից, ժպիտներից

և նպատակներից, առանց հոգու և առանց մարքի առանց որ և է դիրքորոշման, բացի զեղչկումից— անիծեալ լինի դա.—այն միջատը այն գլոկուզը, Օրկա և Նիմֆա վկայ—ասում եմ քեզ—որ պետք է մնանի»։

Եւ իր արտասանած ամեն մի բառի հետ, ավելի և ավելի զայրանալով եպիսկոպոսին, մոռացած իր ակարությունը, իր տարօրինակ ընկերուհուն, մոռացած ամեն ուրիշ բան բացի իր վրիժառուից բարկությունից մեծ և արագ քայլերով անց ու դարձ էր անում նեղ անձավի մեջ։

«Գլոկուզ ասացիր, ով մեծազոր վարպետ», ասաց վհուկը յանկարծ. և այդ անունը լսելուց նրա աղօտ աչքը փայլեց բոլոր այն կասաղի բարկությունն բոցով, որ այնքան սովորական է մենակեաց և խորշելի անձնասրտությանց մեջ, երբ նրանք լիշում են դէպի իրենց եղած փոքրիկ վիրաւորանքները։

«Այո, այդպէս են կոչում նրանց. բայց ինչ նշանակությունն ունի այդ։ Թող երեք օր սրանից լինայ այդ անունը այլ ևս կենդանիների մէջ չը լիշուի։

«Լսիր ինձ», ասաց վհուկը, ընդհատելով իր կարճ մտազրազումը, որի մէջ նա խորասուզուած էր եպիսկոպոսի վերջին պարկերությունից լետոյ։ «Լսիր ինձ, ես քո տարուկն եմ, և քո ամենատար ազախինը, խնայիր ինձ։ Եթէ ես քո ասած աղջկան տամ մի թոյն որ վերջ դնէ Գլոկուզի կեանքին, ես անպատճառ կը բռնուիմ. մեռածները միշտ գտնուում են վրիժառուները։ Ո՛չ, ասենք մարդ, եթէ կարողանան իմանալ, որ դու այցելել ես ինձ, եթէ իմանան, որ դու ատում ես Գլոկուզին, դու պետք կունենաս քո ամենամեծ կախարդությանն՝ քո կեանքը պաշտպանելու համար»։

«Չէ», ասաց Արբակ յանկարծ կանգ առնելով. և նրա ատամնաւորվին այն իրողությանն, որ կիրքը կուրացնում է ամենատարամիտ մարդկանց աչքերը, նա առաջին անգամը լինելով զգաց թէ ինչ վտանգի էր երթարկուած ինքը իր պճած վրէժխնդրությանն այս ձևի մէջ—նա, որ սովորաբար այնքան զգոյշ էր և չրջահայեաց։

«Բայց», չարունակեց վհուկը, «եթէ վախանակ այն բանին, որ սպանում է սիրտը, ես տամ այն, որ խորշակում է ուղեղը—որ խմողին անընդունակ է դարձնում կեանքի ասպարեզների համար—նրան չինում է մի տոր, զառանցող, մտախտոր առարկայ, որ նրան խելքը փոխարկում է խելագարությանն, երիտասարդությունը խելոք ծերությանն, արդեօք քո վրէժը հատատարապէս լուծուած չի լինի. քո նպատակը հատատարապէս իրագործուած չի լինի։

«Ով վհուկ, այլևս ոչ ազախին, այլ քոյր—Արբակի հատատարը—որքան ավելի պատճառ է կնոջ միտքը մերից, նոյն իսկ վրէժխնդրությանն մէջ, որքան ավելի զգացիկ է մտածանից այդպիսի մի ճատագիրը»։

«Ես», չարունակեց քաւթառը, ախորժելով իր զժոխային չատակագծից *), այս բանի մէջ քիչ վտանգ կայ. որովհետև ատոր հաղար պատճառներով, որոնց՝ մարդիկ չեն քննում, մեր զոհը կարող է խելացնորուած լինել. Նա կարող է որթերի մէջ եղած և մի նիմֆա տեսած լինել կամ որթը ինքը կարող է նոյն ազդեցությունն արած լինել նրա վրայ—հա, հա. մարդիկ չափազանց քծախնդրությամբ չեն քննում այն բաները, որոնց մէջ

*) Մի նիմֆա տեսնել, ըստ կլասիկական նախապաշարումների՝ նշանակում է խելագարել։

կարող է առուծածների մասը լինել։ Ամենավատ դէպքում, թող հասկացուի, որ դա մի սիրադեղի հետևանք է—ինչ կայ, խելագարութիւնը սիրահեղուկների սովորական արդիւնքն է. և մինչև անգամ այն չքնաղ «ուհին», որ առել է դեղը, կարող է ներում գտնել այդ պատճառաբանութեան մէջ։ Մեծազօր Հերմէս, արդեօք խորամանկութեամբ չեմ կատարել ձեր կամքը»։

«Ո՛ւ կեանքդ քանի տարի աւելի կերկարանայ այս ծառայութեան համար», պատասխանեց Արբակ։ «Ես քո ճակատագրիդ թուականը նորից կը գրեմ գունատ ատղերի երեսին։ Բոցավառ Փռոմ Տիրոջ մատուցած քո ծառայութիւնը ընդունայն չը պիտի լինի։ Եւ ահա, Սադա, այս ոսկեայ գործիքներով մի աւելի ջերմ անձաւ փորել առաջ այս անմխիթար այրի մէջ. լինէ արած մէկ ծառայութեանդ հատուցար պիտի լինի այս գեղջուկների համար քո մաղով ու մկրատով արած հաղար գուշակութիւններին»։ Այս ասելով նա ձգեց գետնի վրայ մի ծանր քսակ. դրա չէչկոցը աներաժշտական չը հնչեց վհուկի ականջին, որը սիրում էր մէջոցներ ունենալու գիտակցութիւնը—մէջոցներ, գնելու այն դիւրութիւնները, որոնց նա արհամարհում էր։ «Մնաս բարեաւ», ասաց Արբակ, «չը մոռանաս—հակիր առաղերը քո հեզուկը պատրաստելու ժամանակ. դու կարող ես իշխանութիւն բանայնել քո ընկուզենու քայլերի վրայ *), երբ դու նրանց ասես թէ եգիպտացի Հերմէսը քո պաշտպանն է

*) Բնեվվենաօում եղած վհուկների հռչակաւոր և անյիշելի ժամանակներից մնացած ժողովուրդներ Գրան կոչած թեատր օձը, որ երկար ժամանակ կապարշաութեան առարկայ էր այդ կողմերում, հատնականապես պրպտնացել էր եգիպտական աւելորդապաշտութեամբ։

և քո բարեկամը։ Վաղը գիշեր նորից կը հանդիպենք»։

Նա չը սպասեց լսելու վհուկի հրաժեշտի ողջոյնը կամ չնորհակալութիւնները. արագ քայլերով նա դուրս եկաւ լուսնի լոյսի տակ և բլուրից դէպի ցած դնաց։

Վհուկը, որ հետևել էր նրան մինչև քարայրի մուտքը, երկար կանգնեց այնտեղ, անշարժ նայելով հեռացող մարդուն. և մինչդեռ լուսնի ախուր ճառագայթները հոսում էին նրա սառևերանման կաղմի և մեռելային երեսի վրայ, որոնք դուրս էին եկել այդ խաւարամած ժայռերի միջից, այնպէս էր թուում թէ իրօք մեկը, օժտուած գերբնական հմայքի զօրութեամբ՝ փախել էր գարհուրելի Օրկուսից. այնպէս էր թուում թէ այդ ահաւոր վայրի ուրուական խմբերից առաջինը կանգնած էր նրա սև գնների մօտ, իզուր կոչելով միւսին, որ վերադառնայ կամ իզուր հառաչելով երթալու նրա մօտ։ Պառաւը նորից կամաց մտաւ անձաւը, հառաչելով վերցրեց ծանր քսակը, ճրագը վերցրեց իր տեղից և անցնելով իր խուղի ամենահեռաւոր անկիւնը մտաւ մի անցքի մէջ. այդ անցքի մուտքը ծածկուած լինելով դուրս ցցուած ժայռերով՝ լոկ տեսանելի էր երբ մարդ կատարելապէս մօտենում էր դրան. նա մի քանի մեռ առաջ գնաց այդ ականի մէջ, որը կամաց-կամաց թեքւում էր դէպի ցած, որպէս թէ դէպի երկրի երեկամուտքը. վերջապէս վերցնելով մի քար՝ նա գետեղեց իր դանձը մի ծակի մէջ, որը, երբ ճրագի լոյսը լայնանց նրա գաղնիքները, արդէն պարունակում էր զանազան արժէքի պրաժիներ, յափշտակուած նրա այցելուների դիւրահաւատութիւնից կամ երևակայարութիւնից։

«Ես սիրում եմ նայել ձեզ», ասաց նա, հնչեցնելով դրամները. «որովհետև երբ ես տեսնում եմ ձեզ, ես

ղղում եմ, որ իրօք զօրութիւն ունիմ։ Եւ ես պէտք է քանի տարի աւելի կեանք ունենամ ապացնելու ձեր քանակութիւնը. ով դու մեծ Հերմէս»։

Նա քարը դրեց իր տեղը և իր ճանապարհը շարունակեց մի քանի քայլ. յետոյ կանգ առաւ մի խոր և անկանոն ձեղքի առջև։ Այս ձեղքից երբ նա թեքուեցաւ, նա լսեց տարօրինակ, որոտումի խուլ և հեռաւոր ձայներ և երբեմն էլ լսւում էր մի բարձր խռխռոց. այդ խռխռոցը եթէ մեզ թոյլ արուի զօրծածել մի զուտիկ, բայց հաւատարիմ օրինակ, նմանուում էր այն ձայնին, որ պղպջաւոր հանուում է անիւների մէջ և ամեն անգամ երբ դա գալիս էր, դրա հետ նաև ձեղքից դուրս էր հոսում սև ծուխի ահագին չերտեր, որոնք ոլորուն օղակներով անցնում էին անձաւի մէջ։

«Սառներները աւելի ազմկալից են սովորականից», ասաց վհուկը, չարժելով իր գորշ մազերը. և նայելով ձեղքի մէջ, նա նկատեց չատ ցածում, լոյսի երկար շղթեր վերին աստիճանի կարմիր բայց սևախառն։ «Զարմանալի է», ասաց նա, յետ քաշուելով. «այս վերջին երկու օրն է, որ այդ մխախառն լոյսը երևում է — ինչ կարող է դուշակել դա»։

Աղուէսը, որ հետևել էր իր չար ակրուհուն, արձակեց մի չարագուժ ոռնոց և երկչոտութեամբ յետ փախաւ դէպի առաջին անձաւը. պառաւը լինքը մի ցուրտ դող զգաց անասունի ձայնից, որը, որքան էլ ըստ երևոյթին առանց պատճառի այդ ժամանակուայ աւելորդապաշտութիւնից նկատում էր որպէս վերին աստիճանի չարագուշակ մի նշան։ Նա մրմնջաց իր խաղաղացուցիչ հմայքները և յետ երերալով իր քարայրի մէջ, ուր չորջառուած իր բոյսերով և իր կախարդական իրեղէն-

ներով, նա պատրաստուեց գործադրել եղիպտացու դրամանը։

«Նա ինձ խելացնոր պառաւ ասաց», մրմնջաց նա, մինչդեռ ծուխը բարձրանում էր նրա խշշուն կաթսայի տակից. «երբ ծնօտները թուլանում են, առանները ընկնում են և սիրտը հազիւ բաբախում է, չատ խղճալի բան է պառաւ և խելացնոր լինել «բայց երբ», աւելացրեց նա, վայրենաբար և ցնծութեամբ բանալով իր առանները, «երիտասարդը, զեղեցիկը և ուժեղը յանկարծ խելացնորւում է — ան այդ է ասկալիոն։ Վառուիր բոց, եռա բոյս, գալարուիր գոլոր — ես անիծեցի նրան և նա պէտք է անիծուի»։

Հէնց այն պիշեր և հէնց այն ժամին, որ տեղի ունեցաւ Աբրակի և Սագալի անասրը և չարամիտ սեռակցութիւնը, Ագեկիդէս մրրատեցաւ։

ԺԱ.

Դէպքերի ասացողութիւնը։ Գատաստանը հաստատում է։ Գանձը հիւսում է, բայց անցնում է մի ուրիշի ձեռքը։

«Ես դու բաւական քաջութիւն ունիս երթալու վհուկի մօտ, այս երեկոյ և այն էլ այդ սարսափելի մարդու ընկերակցութեամբ, ասաց Նիդիան Զուլիային»։

«Ինչու Նիդիա», պատասխանեց Զուլիան երկչոտութեամբ. «իսկապէս դու կարծում ես, որ վախենալու որ և է աւելի կայ։ Այս պառաւ քաւթառները, իրանց դիւթուած հայելիներով, իրանց դողդոջուն մազերով, լուանի տակ հաւաքած բոյսերով, ըստ իս, լոկ խորամանկ խաբեբաներ են, որոնք կարելի է, ուրիշ սխին

չեն սովորել բացի այն հնազքից, որի համար ես այժմ դիմում եմ նրանց գիտութեանը և այդ էլ նրանք սաց-ցել են չնորհիւ այն ծանօթութեան, որ նրանք ունին դաշտի բոյսերի և բժշկական խոտերի հետ։ Ինչու պէտք է վախենամ։

«Դու չես վախենում քո ընկերից»։

«Ոմից, Աբրահից։ Գիտնեն վկայ, ես այդ կախարդին չափ մի քաղաքավարի սիրական չեմ տեսել։ Եւ եթէ նա այդ տարիքին թուին չը լինէր, նա միևնոյն անգամ դեղեցիկ կը լինէր»։

Չը նայելով իր կուրութեանը՝ Նիփեան բաւական սրամտութիւն ունէր հասկանալու, որ Զուլիային տղին չէր սարսափում Աբրահի սիրահարական ձևերից և խօսքերից։ Նա այլ ևս չը փորձեց համոզել նրան և իր բորբոքուած սրտում մի վայրենի և յարաճուն փափագ ունէր խանգարել թէ արդեօք կախարդութիւնը իրօք զօրութիւն ունէր սէրը սիրոյ հետ կապելու։

Թող ես էլ գամ քեզ հետ, աղնիւ Զուլիա», ասաց նա վերջապէս. «իմ ներկայութիւնս ոչ մի պաշտպանութիւն չէ կարող լինել քեզ համար, այնուամենայնիւ ես կուզէի միևնոյն վերջը քեզ հետ լինել»։

«Քո առաջարկդ ինձ մեծ հաճութիւն է պատճառում», պատասխանեց Գիտիէդի աղջիկը։ Բայց դու ինչպէս ես կարող անել այդ բանը։ Մենք կարելի է չաստ կուշտանանք և քո բացակայութիւնը նկատելի կը լինի ձեր տանը»։

«Իօնէն ներողամիտ է», պատասխանեց Նիփեան։ Եթէ դու ինձ թոյլ տաս քնել ձեր տանը՝ ես կասեմ, որ դու, իմ նախկին պաշտպանութիւններից և չարեկամներից մեկը, ինձ հրաւիրել ես, որ ամբողջ օրը

քեզ մօտանցկացնեմ և քեզ համար երգեմ իմ թեսսալական երգերից. նրա քաղաքավարութիւնը դիւրութեամբ կանէ ձեզ այդպիսի մի չնչին չնորհ»։

«Ոչ, քեզ համար խնդրիր», ասաց խրոխտ Զուլիան»։ «Ես չեմ պիջանիր որ և է չնորհ խնդրել նազրէթացուց»։

«Շատ լաւ, այդպէս լինի։ Ես հիմա կ'երթամ արտօնութիւն կը խնդրեմ, որը գիտեմ առանց դժուարութեան կը տրուի և չուտով կը վերադառնամ»։

«Այդպէս արա. և քո անկողինն էլ իմ սենեակում պատրաստել կը տամ»։

Այդ խօսքերով Նիփեան դուրս եկաւ չքնաղ Զուլիայի մօտից։

Այն ինչ նա գնում էր Իօնէի տունը, ճանապարհին նրան հանդիպեց Գլոկուսի կառքը, որի կրակոտ և ճալթիեն ձիերի վրայ լարուած էր փողոցի բոլոր բազմութեան նայուածքը։

Նա բարեսրտաբար կանգ առաւ մի րոպէ խօսելու ծաղկավաճառ աղջկայ հետ։

«Չքնաղ էիչպէս քո վարդերը, իմ քնքոյշ Նիփեա, էիչպէս է քո դէզանի սիրուհին. յոյս ունիմ կազդուրուած է վտիտրկի հետևանքներից»։

«Ես նրան չեմ տեսել այս առաւօտ», պատասխանեց Նիփեան, բայց...»։

«Բայց էիչ. վատ քաշուիր. ձիերը չատ մօտիկ են քեզ»։

«Բայց կարծում եմ, որ Իօնէն ինձ թոյլ կը տայ այս օրը Զուլիայի մօտ անցկացնել։ Նա ուզել է ինձ և նա չատ բարեսիրտ էր դէպի ինձ, երբ ես բարեկամներ չունէի»։

«Աստուածներն օրհնեն քո երախտագէտ սիրտը,

ես եմ պատասխանատու Իննէի թուլութեան համար»։

«Ուրեմն ես կարող եմ դիւցերը այնտեղ մնալ և վաղն առաւօտ վերադառնալ», ասաց Նիփեան, խղճահարուելով այն զոլհատից, որին ինքը արժանի չէր։

«Ինչպէս դուն կ՚ընդունիս Զուլիան կամենաք։ Իմ յարգանքներս նուիրիր նրան և ասա ինչ եմ ասում, Նիդհա, երբ որ դուն լսում ես նրա խօսելը լաւ ուշադրութիւն դարձրու, ասա ինչ մեծ տարբերութիւն կայ նրա լաւ ձայնը և Իննէ արծաթահնչիւն ձայնի մէջ։—Vai'e»։

Նրա հոգեկան տագնապութիւնը թոթովին ազատուած երեկ դիւցերուայ վատ ազդեցութիւնից, նրա գնդապետները ծածանուելով օդի մէջ, նրա ցնծալից և աստուածական սիրտը ցանկալով նրա պարթեւական ձիերու ամէն մի թռիչքի հետ, ինչպէս կատարեալ նախասիրը իր երկրի աստուծոյ, լի երիտասարդութեամբ և սիրով, Գլոկուսը արագ սլանում էր դէպի իր սիրուհու տունը։

Վայելիր ներկան քանի կարող ես—ով կարող է կարդալ ապագան։

Երբ որ մօտեցաւ, Զուլիան մեզ ընկնելով իր պատգարակի մէջ, որը բաւական մեծ էր նրան և նրա կոյր ընկերուհուն ևս անդ տալու՝ ճանապարհ ընկաւ դէպի Աբրակի նշանակած գեղջկական բաղնիքները։ Նրա բնաւորութիւնը բնականապէս այնքան մեխիկ էր, որ նրա ներկայ ձեռնարկը նուազ ան էր ազդում նրան քան զուարճալի գրգիռ. ամէնից աւելի նա հրճւում էր մտածելով, որ ինքը չուտով յաղթութիւն պիտի տանէ աւելի նապոլիտանուհու վրայ։

Մի փոքրիկ բայց ուրախ խումբ հաւաքուած էր ամարանոցի դրան առջև երբ Զուլիայի պատգարակը

անցաւ նրա մօտից գնալով դէպի բաղնիքների առանձին մուտքը, որ յատկացուած էր կանանց։

«Կարծեմ», ասաց խմբից մէկը, «այս աղօտ լոյսով, ես ճանաչում եմ Գիամէդի գերինները»։

«Ճշմարիտ է, Կլոդիուս», ասաց Սալուստ, հաւանականապէս նրա աղջիկ Զուլիայի պատգարակն է։ Նա հարուստ է, բարեկամս. ինչու չես խնդրում նրա ձեռքը»։

«Ես մի ժամանակ յոյս ունէի, որ Գլոկուսը կամուտանաար նրա հետ։ Օրիորդը չէ թագցնում իր սէրը. և յետոյ քանի որ Գլոկուսը խաղում է, և չատ բախտաւոր էլ չէ խաղի մէջ»։

«Աեսաերանները պիտի անցնէին քո գրպանը խնդայի Կլոդիուս»։ Կինը լաւ բան է—բայց երբ ուրիշինն է»։

«Բայց», շարունակեց Կլոդիուս, «քանի որ Գլոկուս ինչպէս լսում եմ, պիտի ամուսնանալ նապոլիտանի հետ, ես մտածում եմ, որ ես պէտք է փորձեմ իմ բախտը սրտաբեկ աղջկայ հետ։ Ինչ էլ պատահի, ամուսնութեան ջահը ոսկեզօծ պիտի լինի և ծրագի ոսկին կարող է մարդու հաչանցնել ծուխի գարշահոտութեան հետ։ Ես լսել եմ բողոքեմ Գիամէդի դէմ եթէ նա կամենայ քեզ հաւասարմատար կարգել իր աղջկայ հարստութեան *)։

«Հա, հա, եկ ներս երթանք իմ կոմիսատար. գինին և պտակները սպասում են մեզ»։

---

*) Հռոմայեցիք մի հին օրէնք ունէին, որով ոչ մի մարդ իրաւունք չունէր մի կնոջ իր ժառանգը կարգել։ Այդ օրէնքից ձնողները խոյս էին տալիս իրանց հարստութիւնը չանձնելով մի բարեկամի իրենց աղջկայ համար, բայց այդ հաւասարմատարը եթէ կամենար կարող էր բոլոր հարստութիւնը իրեն պահել։ Սակայն այդ օրէնքը, արդէն այս պատմութեան ժամանակից սկսած այլ ևս չէր գործածուում։

Իր զբոսնելուն ուղարկելով տան այն մասը, որ բաժակացած էր նրանց՝ Ջուլիան Նիպիալի հետ մտաբաղնիքները և մերժելով սպասաւորների առաջարկած ծառայութիւնները՝ մի զաղտնի դռնով անցաւ եռանի պարտէզը։

«Անպատճառ ժամադիր է եղել», ասաց զբօսնողից մէկը։

«Քեզ ինչ», ասաց մի վերակացու, խոժոռած երեսով. «նա վճարում է բաղնիքների համար և չէ վատնում քրքումը։ Այսպիսի ժամադրութիւնները մեր գործի ամենալաւ մասն են։ Չնա լսում, այրի Ֆուլվիան իր ձեռքերը իրար է զարկում։ Վաղիր, վաղիր»։

Ջուլիան և նիպիան, խոյս տալով պարտէզի աւելի ցաճախուած մասից, հասան այնտեղ, ուր եպիսկոպոսին նշանակել էր։ Մի վոքրիկ կոլոնակ և խոռոչածակ գետնի մէջտեղ դրուած էր Սելենուսի արձանը, որի վրայ վայելում էին ասպղերը։ Ուրախ առուակը յենուած էր մի ժայռի բեկորի վրայ, բաքոսի քաւթառը (lynx) նրա ոտքերի առջև. իր բերնի վերև, բարձրացրած բազուկով նա բռնած էր խաղողի մի ողկոյզ և կարծես ծիծաղելով հրճուում էր այդ սիրեցեալ պտուղը կլանելուց առաջ։

«Ես չեմ սեանուում կախարդին», ասաց Ջուլիան նայելով իր շուրջը. և նա խօսեց թէ չէ, եղիսկոպոսին կամաց-կամաց դուրս եկաւ մօտակայ ծառերի մէջից և ազօտ լոյսը ընկաւ նրա երկար զգեստների վրայ։

«Salve. անկչ օրիորդ, բայց հա. այդ ով է այդտեղ. մենք ընկերներ չը պէտք է ունենանք»։

«Դա կոյր ծաղկավաճառ աղջիկն է, ով խնասուն կախարդ», պատասխանեց Ջուլիան. «ինքն էլ թեսսալուհի է»։

«Օ՛հ, Նիպիան է», ասաց եպիսկոպոսին. «ես նրան շատ եմ ճանաչում»։

Նիպիան լեա քաշուեցաւ և ասրսաց։

«Դու եղել ես իմ տանս կարծեմ», ասաց նա՝ իր բերանը մօտեցնելով Նիպիալի ականջին, «դու գիտես երդումը. լուսթիան և պաղտնապահութիւնը, այժմ ինչպէս այն ժամանակ, ապա թէ ոչ, դու գիտես»։

«Սակայն», աւելացրեց նա, խորհելով ինքն իր մտքում, «ինչու վատահել աւելի մարդկանց քան հարկաւոր է։ Ջուլիա, դու կարող ես վատահել ինձ, ինձ հետ միայնակ երթալու։ Հաւատացնում եմ քեզ, որ կախարդը նուազ երկիւղալի է քան երևում է»։

Եւ խօսելու մէջտեղին նա Ջուլիային կամաց մի կողմ քաշեց։

«Վհուկը չէ սիրում, որ մինչդեռ ժամանակ չատ մարդիկ երթան նրա մօտ», ասաց նա, «Նիպիալին թող այստեղ մնայ քո վերապարծը. նա ոչ մի օգնութիւն չէ կարող լինել մեզ. և պաշտպանութեան համար էլ քո դեղեցկութիւնը բաւական է—քո դեղեցկութիւնը և քո դիրքը. այո, Ջուլիա, ես լիառիտ քո անունը և քո հօր անունը։ Ե՛կ, վատահացիր ինձ, չքնաղ մրցակիցդ ամենաչքնաղ յաւերժահարսների»։

Սնապարծ Ջուլիան, ինչպէս տեսանք, դիւրութեամբ վախեցողներից չէր. Արրակի չողոքորթութիւնը ազդեց նրա սրտին և նա չտեսով ընդունեց Նիպիալին այնտեղ թողնել մինչև իր վերապարծը. ոչ էլ Նիպիան չատ պընդեց, որ երթայ նրանց հետ։ Նիպիալոսցու ձայնը լսեց թէ չէ, բոլոր այն սարսափը, որ զգում էր այդ մարդուց վերպարծաւ. կոյր աղջկան հաճելի եղաւ լսել, որ չը պիտի ճանապարհորդէ նրա հետ։

Նա լեա զարձաւ բազնիքները և առանձնասենեակներից մէկի մէջ սպասեց նրանց վերադարձին։ Բազմաթիւ և զառն էին այն մտածութիւնները, որ անցան այս վայրենի աղջկայ գլխից մինչդեռ նա նստած էր այնտեղ իր յափխանական մխիթարեան մէջ։ Նա խորհում էր իր թշուառ վիճակի վրայ, հեռու իր բնիկ երկրից, հեռու այն փափուկ հոգածութիւններից, որոնք երբեմն ամբողջ էին նրա մանկութեան Ապրիլի առաւոտեանները։ Նա զրկուած էր ցերեկուայ լոյսից. նա ոչ օրի չունէր առաջնորդելու իր քայլերը օտարականներից զատ. նա նզովուած էր իր սրտի միակ փափուկ զգացման մէջ։ Նա սիրում էր. բայց նրա աչքը լուսատու էր. յուսոյ միակ ճաղատ և անտուրը ճառագայթը այն էր, որ այժմ չորում էր նրա մազի մէջ, մինչդեռ նրա թիւրատական երևակայութիւնը այժմ հեռաքրքրուած էր հմայքների զօրութեամբ և կախարդութեան գերբնական ձիրքերով։

Բնութիւնը ցանել էր այս խնդձ աղջկայ սրտի մէջ առաքինութեան սերմեր, որոնց համար երբէք վիճակուած չէր հասունանալ։ Դժբախտութեան տուած դասերը միշտ առաջապար չեն լինում—երբեմն նրանք մեղմացնում և բարելաւում են, բայց նոյնչափ յաճախ նրանք խստացնում և կամակոր են դարձնում։ Երբ մենք կարծում ենք թէ ճակատագիրը աւելի խստութեամբ է վարուում մեզ հետ քան մեզ չրջապատողների և մեր գործերի մէջ չենք տեսնում որ և է պատճառ, որ կարողանայ արդարացնել այդ խստութիւնը, մենք ուժգնապէս հակուած ենք լինում մտածելու, որ աչխարհը մեր թշնամին է, կեզրտանալու մեր մէջ ընդդէմ ամբողջ մարդկութեան, մարտնչելու մեր աւելի փափուկ էութեան հետ, և անուցանելու այն ոգի կրքերը, որոնք

այնքան դիւրութեամբ ծնուում են անարդարութիւն կրելու գիտակցութիւնից։ Մանաւանդ տարիքում ծախուելով երբև երբէ՝ վիճակուած լինելով մի ազատ սիրոջ սարուկը լինել՝ լեալ փոխելով իր դրութիւնը և ընկնելով մի աւելի դառն կացութեան մէջ՝ այն բարեսրտութեան զգացումները, որոնք առաջ էին Նիղիայի կրծքի մէջ, վազուզամ թառամել և խամրել էին։ Նրա ուղեղի մէջ արդարութիւնը անարդարութիւնից տարբերելու դատողութիւնը չփոթուել էր այն կրքի չնորհիւ, որին նա այնպիսի խելագարութեամբ անձնատուր էր եղել։ Նոյն հզօր և եղերական զգացումները, որ մենք կարդում ենք կլասիկական դարի կանանց մէջ—զոր օրինակ մի Մերոհալի, մի Մեդէայի մէջ—նոյն բուռն զգացումները, որոնք, երբ մէկ անգամ անձնատուր էին լինում սիրոյ, ամբողջ սրտում էին ամբողջ հոգին—սիրում և ատելութիւնը ծնում էին նրա կուրծքը։

Ժամանակն անցաւ. մի թեթև ամպ մտաւ այն սենեակը, ուր Նիղիան դեռ խորասուզուած էր իր խաւար մտածութիւնների մէջ։

«Ո՛հ, վանք անհոգ առաւօտներին», ասաց Զուլիա, «ես վերադարձայ. ես դարս եկայ այդ սոսկալի անձից. ահ, Նիղիա, ահ իսկոյն հեռանանք»։

Երբ որ նստեցին պատգարակի մէջ, Զուլիան նորից խօսեց։

«Ո՛հ», ասաց նա, զզզզալով. «ինչ տհաճ, ինչ զարհուրելի թուխութիւններ և վնասի մեռելային երեսը. բայց այլ ևս չը խօսենք դրա մասին։ Ես ձեռք եմ բերել հեղուկը—դրա ազդեցութիւնը անտարակուսելի է։ Իմ հակառակորդուհիս յանկարծ կը կորցնէ իր դաշնակութիւնը։

ֆիլմը նրա մասն է, և ես, ես միայն կը լինեմ Գլոկուսի վրեժը։

«Գլոկուս», գոչեց Նիլիան։

«Ա՛, ես նախ ասացի քեզ, աղջիկ, որ աթենացի չէր իմ սիրեկանը. բայց այժմ տեսնում եմ, որ կարող եմ կատարելապես վստահել քեզ վրայ—այս, դեղեցիկ յոյնն է այն մարդը, որին ես սիրում եմ»։

Ի՞նչ էին այդ ժամանակ Նիլիայի զգացումները. նա օժանդակած էր մի դաւադրութիւն, որ Գլոկուսին պիտի բաժանէր Իօնէից, բայց նրա սէրը պիտի հաստատէր կախարդութեան լոյոր զօրութեամբ և անպառնալի կերպով մի ուրիշի վրայ։ Նրա սիրտը ուռեց, կարծես պիտի խեղդուէր, նրա չունչը կտրւում էր. պատգարակի մթութեան մէջ Զուլիան չը նկատեց իր ընկերուհու յուզմունքը. նա չարաճճիաբար էր չաստախօսել իր հեղուկի խոստացած հետևանքների և իր յաղթութեան մասին, որ չուտով պիտի տանէր Իօնէի վրայ. երբեմն էլ չեղուելով իր նիւթից՝ նա մի քանի խօսք էր ասում իր թողած տեսարանի սարսափների վերաբերութեամբ, Արբակի անչարժ կերպարանքի և նրա այն իշխանութեան վերաբերութեամբ, որ զօրծ էր դնում սարսափելի Սապալի վրայ։

Նոյն միջոցին Նիլիան վերստացել էր իր անզորրութիւնը. մի մութ կսկծակի տպաւորութեամբ անցաւ նրա մտքից. նա քնելու էր Զուլիայի սենեակում—նա վարող էր ձեռք բերել այդ հեղուկը։

Նրանք հասան Պիտիդի տունը և մտան Զուլիայի սենեակը, ուր գիշերուայ կերակուրը սպասում էր նրանց։

«Խմիր, Նիլիա, դու մրսել ես. օդը պաղ էր այս գիշեր. իսկ ինչ վերաբերում է ինձ, իմ երակները դեռ տաքած են»։

Եւ Զուլիան առանց վարանուելու խմեց համեմատած գինու մի բաժակներ։

«Հեղուկը քո՞ մօտ է», ասաց Նիլիան. թող առնեմ ձեռքս։ Ի՛նչ փոքր է սրուակը. ինչ դոյն ունի դեղը»։

«Պարզ է ինչպես բիւրեղ», պատասխանեց Զուլիան, մինչ յետ էր առնում չիչը. ջրից չէ կարելի զանազանել։ Վհուկն ինձ հաւատացնում էր, որ համ էլ չունի։ Թէև փոքր է սրուակը բայց բաւական է ապահովացնելու մի ամբողջ կեանքի հաւատարմութիւն. դա պէտք է ածուի որ և է ուրիշ հեղուկի մէջ, և Գլոկուս միայն դրա հետևանքից կիմանայ թէ ինչ է խմել։

«Ձիշդ ջրի նման է դրա գոյնը»։

«Այո, պապդուն և անգոյն ինչպես ջուր։ Ինչպէս պատժաւ է երևում, կարծես լուսնկայ ցօղերի հիմքը վերցրած է երևում, կարծես լուսնկայ ցօղերի հիմքը վերցրած են։ Շողշողուն առարկայ, ինչպես դու փայլում ես իմ ցոլերի վրայ, քո բիւրեղեայ սրուակի միջից»։

«Ինչպէս է կնքուած»։

«Մի փոքրիկ խցանով. նոր հանեցի. դա ոչ մի հոտ չունի։ Զարմանալի է, այն բանը, որ զգայարանքների ոչ մէկի հետ չէ խօսում, այդպէս կարողանում է հրամայել բոլորին»։

«Աղդեցութիւնը անմիջական է»։

«Սովորաբար.—բայց երբեմն դա մի քանի ժամ ձգում է նիրհուն դրութեան մէջ։

«Ո՞հ, ինչ քաղցր է այս անուշահոտութիւնը», ասաց Նիլիան, յանկարծ առնելով մի փոքրիկ սրուակ վհուկի վրայից, և քիթը մօտեցնելով նրա բուրվառից պարուսակութեանը։

«Ապրելս ես մտածում, որ ակի վրայ գոհարներ կան բանուած, որոնք մի արժէք ունին։ Երէկ դու չգիտէիր սահնակ ապարանջանը. այժմ կուզես առնել ակը»։

«Լոկ այսպիսի անուշահոտութիւններ, ինձ նման մի կոյրի, կարող են յիշեցնել առաւտաձեռն Զուլիային։ Եթէ ակը չափազանց թանկագին չը լինի...»։

«Օ՛հ, ես հազար տարի դրանից աւելի թանկագինն ունեմ, վեր ա՛ռ, զաւակ»։

Նիզհան զլուխ առաւ չնորհակալութեամբ, և ակը դրեց իր ծոցը։

«Եւ հեզուկը նոյն ազդեցութիւնը կունենայ, ով որ խմցնի այդ»։

Եթէ աչխարհիս ամենագարշ քաւթառը խմցնի, այնպէս է նրա զօրութիւնը, վճռակի ասելով, որ Գլուկաւը նրան գեղեցիկ կը կարծէ, և նրանից զատ ոչ ոքի»։

Զուլիան, գինով ապքացած, և իր արամագրութեան հակազդեցութեամբ այժմ գլխից մինչև ոտ ուրախութիւն և ցնծութիւն էր դարձել. նա բարձր ձայնով ծիծաղում էր, և խօսում էր հարիւր ու մէկ նեխթերի վրայ։ Երբ գիշերը բաւական մօտեցաւ առաւօտեան, նա կանչեց իր ազախիններին և հանուեցաւ։

Երբ սարկաւհինները հեռացան, նա ասաց Նիզհային։ Ես թոյլ չեմ տալ, որ այս տարի հեզուկը բաժանուի իմ ներկայութիւնից մինչև դրա զօրծածութեան ժամը։ Պառկիր իմ բարձիս տակ, փայլուն չոքի, և տուր ինձ երջանիկ երազներ»։

Այս ասելով, նա դրեց հեզուկը իր բարձի տակ։ Նիզհայի սիրտը բաւական կերպով բաբախում էր։

«Ինչու՞ ես խմում այդ պարզ ջուրը, Նիզհա»։ գինի էլ մնա դրա տեղ»։

«Ես տաք եմ զգում», պատասխանեց կոյր աղջիկը, «և ջուրը զովացնում է ինձ։ Ես այս ջրի տարօրինակ իմ անկողնի մօտ, դա կազդարարում է մարդու այս տաք գիշերները երբ քնի ցօղերը չեն կաթում մեր չրթունքների վրայ։ Զքնած Զուլիա ես չատ կանուխ պիտի տեռանամ քեզանից—Իօնէն այդպէս է հրամայել—կարելի է նախ քան դու զարթնես. սրեմն այժմ ընդունիր իմ չնորհակալութիւնները։

«Ճնարհակալ եմ. երբ նորից հանդիպենք, դու կարելի է կը գտնես Գլուկաւին իմ տաքերի առջև»։

Ամէն մէկը մտաւ իր անկողինը, և Զուլիան, յոգնած այդ օրուայ յուզմունքներից՝ չուտով քնեց։ Բայց նա ոչ երկար մնաց անձկալից և ալարոտ մտածութիւններ զառնում էին արթնութեան թեատրոնու գլխի մէջ։ Նա ակնջ էր դնում Զուլիային. և նրա ականջը, որ սովորել էր ճանչել ամենափոքրիկ տարբերութիւններին, չուտով զգաստացրեց նրան մէ իր ընկերուհին գտնուում էր խոր քնի մէջ։

«Այժմ օգնիր ինձ, ով Վենուս», ասաց նա մեղմ ձայնով։

Նա կանգ վեր կացաւ, և Զուլիայի ընծայած սրուակի անուշահոտութիւնը թափեց մարմարեայ լուսամի վրայ. նա մի քանի անգամ լաւ ոդոդեց այդ իր տակի վրայ. նա մի քանի անգամ լաւ ոդոդեց այդ իր մօտ դրուած ջրով, և լեռուց գիւրութեամբ գտնելով Զուլիայի անկողինը (որովհետև գիշերը նրա համար ցերեկուայ նման էր), նա իր դողդոջուն ձեռքը խրեց բարձի տակ և բռնեց չիչը։ Զուլիան չէր չարժուում. նրա չունչը կանոնաւորապէս հալանարում էր կոյր աղջկայ մուրը։

Նիպիան, լեռուլ բանալով սրուակը՝ դրա պարունակութիւնը ածեց իր ամանի մէջ. և լեռուլ լցնելով հեղուկի նախկին սրուակը այն վճիտ ջրով, որին, ըստ Զուլիայի աստուհան, այդ սիրագեղը այնքան նմանուում էր, նա նորից լեռ դրեց բարձի տակ։ Նա լեռուլ կամայ դնաց իր անկողինը և ապառնց—բայց ինչ մաքերով—մինչև արշալոյս։

Արեը ծագել էր։ Զուլիան դեռ քնած էր. Նիպիան անձայն հագաւ իր զգեստները. իր դանձը զեռեղեց իր ծոցում, առաւ իր գաւազանը և չտապեց անից դուրս երթալ։

Դռնապան Մեդոնը հաճելի կերպով բարեւեց նրան մինչդեռ նա իջնում էր այն սանդուխքներից, որ առաջնորդում էր դէպի դուռը. Նիպիան չը լսեց նրա ձայնը. նրա ուշադրութիւնը չխոթուած և կորուած էր ազնիւ մտածութիւնների մրրիկի մէջ, մտածութիւններ, որոնց ամեն մէկը մի կիւրք էր։ Նա զգաց առաւօտեան մաքուր օդը իր թշերի վրայ, բայց դա չկարողացաւ զովացնել նրա կիզող երակները։

«Գլաւկոս», մրմնջաց նա, «բոլոր սիրահմայքը ամենավայրենի կախարդութեան չէր կարող ինձ այնքան սիրելի դարձնել քեզ, որքան դու սիրելի ես ինձ։ Իմնէ ան, հեռու, վարանմունք. հեռու, խղճահարութիւն, Գլաւկոս, իմ ճակատագիրս կայանում է քո ժպիտի մէջ. և քոնդ, ո՜հ յոյս, ո՜հ, ցնծութիւն, ո՜հ, ծայրագոյն երջանկութիւն, քո ճակատագիրը պահում է այս ձեռքերի մէջ»։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Գլուխ Ա.

Մտածութիւններ նախնի քրիստոնեականների ջերմեռանդութեան վրայ։ Երկու հոգի կայացնում են մի վճռագրաւոր վճիռ։ Պատերը ականջներ ունին—Մահառանդ սրբազան պատերը։

Ով որ նայէ քրիստոնէութեան նախնի պատմութեան վրայ, կը տեսնէ, որ ինչքան հարկաւոր էր նրա գաղի յաղթութեան համար նախանձախնդրութեան այն կատաղի ոգին, որ չէր վախենում ոչ մի վտանգից, չէր ընդունում ոչ մի համաձայնութիւն, որ ներչնչում էր իր ախոյեաններին, և զօրացնում իր մարտիրոսների սրտերը։ Մի սիրապետող եկեղեցու մէջ, նեղմտութիւնը պատերը։ Մի սիրապետող եկեղեցու մէջ, նեղմտութիւնը վնասում է նրա գաղին.—մի սակաւ և հալածուած եկեղեցու մէջ նոյն ոգին պիտաւոր պատճառն է նրա առաջադիմութեան։ Անհրաժեշտ է ծագրել ուրիշ մարդկանց գաղափարութիւնները, հեռանալ զզուել նրանցից, որպէս զի կարելի լինէր պիմադրել նրանց վարձութիւններին։ Անհրաժեշտ էր բոլոր սրտով հաւատալ Աւետարանին, ոչ թէ լոկ իբրև ճշմարիտ կրօնքի, այլ իբրև միակ ճշմարիտ կրօնքի, որը կարող էր փրկել. այս հաւատքը կարող էր իր վարդապետութեան խստութեան համեմատ ամրացնել աշակերտի չգները, կարող էր քաջալերել նրան իր սրբազան և վտանգաւոր կոչման մէջ, այն է՝

հաւատացեալ դարձնել բազմաստուածեանին և հեթանոսին. Այն ազանդական նեղմտութեանը, որ երկինքը և առաքինութիւնը սահմանափակում էր մի քանի ընտրեալների մէջ, որ դևերի կարգն էր դասում ուրիշ աստուածներին, և լոկ դժոխքի պատիժն էր սեեռում ուրիշ կրօնքների մէջ, բնականաբար հաւատացեալի մէջ ներշնչում էր մի տենչ՝ հաւատացեալ դարձնելու բոլոր նրանց, որոնց հետ նա կապուած էր մարդկային սիրոյ հանգոյցներով. և այն չքնաղը, որ այսպէս կազմւում էր մարդասիրութեամբ, աւելի և աւելի լայնանում էր՝ Աստուծոյ վառքը տարածելու փափագով: Քրիստոնէական հաւատքի պատուի համար էր, որ քրիստոնեան իր վարդապետութիւնները դրեթէ բռնի քարոզում էր անհաւատին, ղղուզին, արհամարհող փիլիսոփային և տարտափառար բարեպաշտ ժողովրդին. նրա նոյն իսկ նեղմտութիւնը նրա յաջողութեան ամենատարմար գործիքն էր. և փաթիամիա հեթանոսը վերջ ի վերջոյ սկսում էր հրեակատել, որ անպատճառ մի արդութիւն պէտք է լինի այդ ջերմեռանդութեան մէջ, որը բոլորովին մի նորութիւն էր նրա համար, որը կանդ չէր առնում ոչ մի արդելքի առջև, որը չէր վախենում ոչ մի վտանգից, որը, նոյն իսկ չարչարանքի մէջ կամ կախաղանի վրայ Յաւիտենական Աբբային դասաւոր էր կարգում իր վէճին, որ այնքան տարբեր էր վերացական փիլիսոփայութեան մի վէճ լինելուց:

Ահա այսպէս էր, որ նոյն ջերմեռանդութիւնը, որ մինչին դարի եկեղեցականին դարձնում էր մի անողոք կրօնամոլ, նախնի քրիստոնէին դարձնում էր մի աներևակայ հերոս:

Այս կրակոտ, յանդուգն և եռանդուն բնաւորու-

թեան տէր մարդկանց մէջ ոչ մի աննշան տեղ չէր բռնում Օլինթոսը: Հէնց որ Ապէկիդէս միրտութեան արատը տարածութեամբ ընդունեցաւ եկեղեցու դիրքը, նաղորդեցին իսկոյն նրան հասկացրեց թէ անկարելի էր նրա համար պահել իր քահանայութեան ղեկտները և պաշտօնը: Նա անտարակոյս չէր կարող Աստուած պաշտել, և միևնոյն ժամանակ նոյն իսկ արտաքուստ, պատուել դևի կատարչական սեղանները:

Ոչ էլ այս էր բոլորը, Օլինթոսի աչխոյժ և անզուսպ միտքը Ապէկիդէսի մէջ տեսնում էր մի միջոց որով կարող էր մոլորուած հատարակութեան առաջ բարձրացնել դարիրախօս Խսխի խարդախ միստէրները: Նա մտածում էր, որ Երկինքն էր ուղարկել այս գործիքը իր ձեռքը, որ Երկինքն էր ուղարկել այս գործիքը իր նպատակներն ի գլուխ հանելու, բանալու կուրացած ժողովրդի աչքերը և կարելի է, այսպիսով հարթելու մի ամբողջ քաղաքի հատատախոսութեան չաւիղը: Նա, հետևաբար, ոչ մի վարանմունք չունեցաւ զրգռելու Ապէկիդէսի բոլոր նորաթորթոք ոգևորութիւնը, աւելացնելու նրա քաջութիւնը, և վառելու նրա ջերմեռանդութիւնը: Ապէկիդէսի միրտութեան հետևեալ իրիկունը, նրանք մի տեսակցութիւն ունեցան Պիբէլէի ծառաստանում, որը մենք արդէն նկարագրել ենք:

«Երբ մեզ անպատ ժողովուրդը կը զայ դարերից խորտուբոյ հարցնելու», ասաց Օլինթոսը, առաջ մղուելով իր ջերմ խօսակցութեան մէջ, «դու առաջ եկ վանդակապատ մօտ, և բարձր ձայնով յայտնիր ժողովրդին այն խարէութիւնը, որով Խսխի քահանաները մոլորեցնում են մարդկանց. հրաւիրիր նրանց ներս մտնել և իրենց աչքերով տեսնել քո նկարագրած խարդախութեան մեքենայութիւնները: Մի վախենար. այն Աստուածները, որ ամէն մարդկանց մէջ ոչ մի աննշան տեղ չէր բռնում Օլինթոսը: Հէնց որ Ապէկիդէս միրտութեան արատը տարածութեամբ ընդունեցաւ եկեղեցու դիրքը, նաղորդեցին իսկոյն նրան հասկացրեց թէ անկարելի էր նրա համար պահել իր քահանայութեան ղեկտները և պաշտօնը: Նա անտարակոյս չէր կարող Աստուած պաշտել, և միևնոյն ժամանակ նոյն իսկ արտաքուստ, պատուել դևի կատարչական սեղանները:

Ոչ էլ այս էր բոլորը, Օլինթոսի աչխոյժ և անզուսպ միտքը Ապէկիդէսի մէջ տեսնում էր մի միջոց որով կարող էր մոլորուած հատարակութեան առաջ բարձրացնել դարիրախօս Խսխի խարդախ միստէրները: Նա մտածում էր, որ Երկինքն էր ուղարկել այս գործիքը իր ձեռքը, որ Երկինքն էր ուղարկել այս գործիքը իր նպատակներն ի գլուխ հանելու, բանալու կուրացած ժողովրդի աչքերը և կարելի է, այսպիսով հարթելու մի ամբողջ քաղաքի հատատախոսութեան չաւիղը: Նա, հետևաբար, ոչ մի վարանմունք չունեցաւ զրգռելու Ապէկիդէսի բոլոր նորաթորթոք ոգևորութիւնը, աւելացնելու նրա քաջութիւնը, և վառելու նրա ջերմեռանդութիւնը: Ապէկիդէսի միրտութեան հետևեալ իրիկունը, նրանք մի տեսակցութիւն ունեցան Պիբէլէի ծառաստանում, որը մենք արդէն նկարագրել ենք:

«Երբ մեզ անպատ ժողովուրդը կը զայ դարերից խորտուբոյ հարցնելու», ասաց Օլինթոսը, առաջ մղուելով իր ջերմ խօսակցութեան մէջ, «դու առաջ եկ վանդակապատ մօտ, և բարձր ձայնով յայտնիր ժողովրդին այն խարէութիւնը, որով Խսխի քահանաները մոլորեցնում են մարդկանց. հրաւիրիր նրանց ներս մտնել և իրենց աչքերով տեսնել քո նկարագրած խարդախութեան մեքենայութիւնները: Մի վախենար. այն Աստուածները, որ

տուածը, որ Դանիէլին պաշտպանեց, քեզ էլ կը պաշտպանէ. մենք քրիստոնեաներս էլ հաստատակամութեան մէջ կը լինենք. մենք կը փարատենք ժողովրդի վարանումները. և նրանց բարկութեան և ամօթի առաջին րոպէում, ես ինքս այդ սեղանների վրայ կը տնկեմ այն արմաւենու ճիւղը, որ Աւետարանի նշանն է. իմ լեզուիս վրայ կիջնէ կենդանի Աստուծոյ յորդառատ Հոգին։

Այս խորհուրդը անհաճոյ չը թուաց Ապէկիդէսի տպաւորութեան և բորբոքմանը։ Նա ուրախանում էր, որ այսքան կանուխ պատեհութիւն կունենայ յոյց տալու իր անկեղծ եռանդը իր նոր հաւատակիցներին. նրա աչքի սուրը զգացումների վրայ նաև բարերում էր իր կրած խարէութեան վրիժառնիչ ղաւանքը, և մի վայրագ լուծելու այդ ոխը։ Այդ անխոհեմ և առածգական թռիչքի մէջ, որ նրանք ուզում էին գործել, չը նայելով բոլոր դժուարութիւններին, (յանդգնութիւն որ հարկաւոր է ամեն այն մարդկանց, որոնք ձեռնարկում են դժուար և մեծ գործերի), ոչ Օլինթուս և ոչ նորահաւատը չէին կարողանում տեսնել իրանց յաւտակագծի յաջողութիւնը արգելող խոչնդոտները. խոչնդոտներ, որոնք կարող էին զսպուել ժողովրդի պաշտող աւելորդապաշտութեան մէջ. հաստատակամութիւնը կանդնած եղիպտական մեծ աստուածուհու սեղանների առջև՝ կարող էր չը հաւատալ նոյն իսկ նրա քահանայի վկայութեանը, ընդդէմ նրա զօրութեան։

Սակայն Ապէկիդէս ընդունեց այս առաջարկը մի այնպիսի յօժարութեամբ, որ Օլինթուսին մեծ հաճութիւն պատճառեց։ Ներանք բաժանուեցան միմեանցից այն համաձայնութեամբ, որ Օլինթուս տեսակցէր իր աւելի նշանաւոր քրիստոնեայ եղբայրների հետ, առաջ նրանց խորհուրդը և նրանց աջակցութեան խոստումը այդ մեծ օրուայ համար։ Դիպուածով, Խախի տօնելից մէկը տեղի պիտի ունենար այս խօսակցութիւնից երկու օր յետոյ։ Այդ տօնը մի շատ յարմար պատեհութիւն էր նրանց նպատակը գործադրելու համար։ Ներանք որոշեցին, որ հետևեալ երեկոն էլ նորից հանդիպէին միևնոյն տեղում, և վերջնականապէս կարգադրեն հետևեալ օրուայ գործողութեան մանրամասնութիւնները։

Այնպէս պատահեց, որ այս խօսակցութեան վերջին մասը տեղի ունեցաւ սեհեկլումի, կամ այն փոքրիկ մեհեանի մօտ, որը ես նկարագրել եմ այս գրքի առաջին մասերում. և հէնց որ քրիստոնեան և քահանան անբևեթացան ծառաստանի միջից, մի թուխ և հակակրական կերպարանք դուրս եկաւ մեհեանի ետևից։

«Ես քո հետքը լաւ չը բռնեցի, իմ եղբայր քահանայ», մենախօսում էր ականջ դնողը. «դու Խախի մի սակցում ես այս մռայլադէմ քրիստոնէի հետ։ Ախտս որ ես չը լսեցի բոլոր ձեր այդ մեծ դաւադրութիւնը. բաւական է, դէթ գիտեմ, որ դուք ուզում էք վերցնել սրբազան դաղտնիքների քօղը, և որ վաղը գալու էք այստեղ կարպադրելու թէ ինչպէս կամ երբ գործադրէք այդ դաւադրութիւնը։ Թող Օսիրիսը սրբէ իմ ականջները, որպէսզի և ես կարողամ լսել ձեր անլուր յանդգնութեան բոլոր գաղտնիքները։ Երբ աւելի տեղեկութիւններ հաւաքեմ, այն ժամանակ անմիջապէս կը խորհրդակցեմ Աբրակիդ հետ։ Մենք կը խափանենք ձեր խորհուրդը, որքան էլ դուք ձեզ խորամանկ կարծէք։ Ա՛ւ այժմ իմ կուրծքը մի կողպուած դանձարան է ձեր գաղտնիքի համար»։

Այսպէս մրմնջալով, Կալենուս, (որովհետև նա էր այդ մարդը), իր դէմքը փաթաթեց իր շուրջը, և մահը դարձաւ քայլեց դէպի առաջ։

Գլուխ Բ.

Մի կրօնական հիւրընկալ, խոհարար և խոհանոց։ Ապիկիոս ուսանում է Խնկի հետ։ Նրանց խօսակցութիւնը։

Այդ՝ այն օրն էր, որ Վիտելլ մի խնջոյք պիտի տար իր բարեկամների ամենից ընտրեալներին։ Շնորհաշատ Պլոկուսը, հրաշագէտ Խնկին, պաշտօնական Պանսան, ազնուազարմ Կլոդիուսը, անմահ Ֆաբիլիուսը, քնքշակամ Լենտիուսը, եղիւրեան Սալլուստը, մինակ անձնաւորութիւններն էին, որ պիտի պատուէին նրա հայկերոյթը։ Նա ակնկալում էր, նաև մի հիւանդ սենատոր, որ եկել էր Հռոմից և չատ սիրելի էր պալատում, և մի մեծ զօրապետի, Հերկուլանուսից. այս զօրապետը Տիտոսի հրամանատարութեան ներքոյ կռւել էր հրեաների դէմ, և անպին հարստութիւն դիզելով պատերազմների մէջ՝ միշտ իր բարեկամների կողմից հաչակւում էր որպէս մի մարդ, որի անչահասէր ծառայութիւններին հայրենիքը յաւիտեան չնորհապարտ էր։ Բայց հրաւիրեալների թիւը աւելի մեծ էր քան այդ։ Ընդունելով, որ մի ժամանակ, քննադատապէս խօսելով, հռոմայեցիների մէջ անճաշակ բան էր կարծւում իրանց խնջոյքների մէջ հիւրընկալել նուազ քան երեք և աւելի քան իննը հոգի, սակայն ցուցամոլները դիւրութեամբ բնակւում էին այդ կանոնը։ Եւ իրօք, մենք կարդում ենք պատմութեան մէջ, որ այս ամենափառատենչ հիւրընկալներից մէկը, սովորաբար հրաւիրում էր իր հայկերոյթներին երեք հարիւր հոգի ընտրեալ բարեկամների մի խումբ։ Վիտելլ, որ աւելի համեստ էր, քաւարարուեցաւ մուսանների թիւը կրկնապատկելով։ Նրա հրաւիրեալները սակն և ութը հոգի էին, – մի թիւ, որ այսօր էլ մօդայից դուրս չէ։

Վիտելլի հիւրընկալութեան առաւօտն էր. և Վիտելլ թէև մեծ յաւակնութիւն ունէր մի ազնուական և մի պրպէտ լինելու, սակայն բոլորովին ձեռքից չէր առել իր վաճառականական փորձառութիւնը. նա գիտէր, որ սիրոյ հակողութիւնը պատրաստակամութիւն է ներշնչում ծառայի մէջ։ Հետևաբար իր անգօսի պարտքերը հագին, իր թոյլ հողաթափները ոտքերին, մի փոքրիկ գաւազան ձեռքին նա անցնում էր սենեակից սենեակ իր հոյակապ ամարանոցի մէջ, և իր փայտով երբեմն հրաւիրում էր այս կամ այն ծառայի ուշադրութիւնը այս կամ մանաւանդ բանի վրայ, և երբեմն էլ ոտքացնում էր մի ուրիշ սորուկի պատռած թիկունքը։

Նա մինչև անգամ ղիջանեց այցելել այն սրբազան սենեակը, ուր խնջոյքի քահանաները պատրաստում էին պտերը։ Մանելով խոհանոցը՝ նրա ականջները խլացան պնակների, կաթսաների, հաչոյանքների և հրամանների հաճելի ազմուկով։ Ընդունելով այս անհրաժեշտ սենեակի փոքրութիւնը Պոմպէյի բոլոր տների մէջ՝ դա սովորաբար ունենում էր պիտանի առարկաների մի զարմանալի քանակութիւն – վառարաններ, ամաններ, կաթսաներ, տաներ, դանակներ, կաղապարներ—առանց օրոնց մի խելացի խոհարար, հին լինի թէ նոր, կատարելապէս անկարելի է համարում ձեզ տալ ուտելու որ և է բան։ Եւ քանի որ վաեելիքը, այն ժամանակ ինչպէս և

այժմ, թանգ էր և հազուագիւտ. այդ կողմերում մեծ ճարպկութիւն էր հարկաւոր, որքան կարելի է չատ բաներ պատրաստել, որքան կարելի է քիչ կլակուլ։ Այս տեսակի մի սքանչելի գործիք այժմ էլ կարելի է տեսնել Նապոլիի թանգարանում. դա մի տեղափոխելի օջախ է մի մեծաձալ գրքի մեծութեամբ, ունի վառարաններ չորս կաթսաների համար և մի ուրիշ տեղ չուր կամ ուրիշ ըմպելիներ տաքացնելու։

Փոքրիկ խոհանոցի մէջ անցուդարձ էին անում զանազան կերպարանքներ, որոնք առանձրոջ սուր աչքի համար անծանօթ էին։

«Օհ, օհ», մրմնջում նա, «այդ անիծեալ Կոնդրիոն խոհարարների մի ամբողջ լեգէոն է հրաւիրել իրեն օգնելու։ Նրանք ոչ մի բանի պէտք չեն դալ, և սա էլ մի ուրիշ դուման է, որ բարկացում է իմ այսօրուայ ծախքերի վրայ։ Բաքոս վկայ, ես չատ բախտաւոր կը լինեմ եթէ այդ թշուառականները բաժակներից մի քանիսը չանհետացնեն. պատրաստ են, ասղ, նրանց ձեռքերը, և լայն նրանց պարեզօտները։ Me miserum!»։

Խոհարարները, ինչ և լինէ, գործում էին, ըստ երևոյթին անառարակ Պիտմէդի ներկայութիւնից։

«Հօ, Եուբլիո, քո հաւկիթների տապակը. ինչ, սա է ամենից մեծը, դա միայն երեսուն երեք հաւկիթ է տանում. այն տանը, ուր ես սովորաբար ծառայում եմ, ամենափոքրիկ տապակը տանում է վեսուն հաւկիթ, եթէ հարկ լինի»։

«Անիրաւ թշուառականը», մտածեց Պիտմէդ. «նա այնպէս է խօսում հաւկիթների մասին, որպէս թէ հարիւրը մէկ սեստէրս արժէք ունենալին»։

«Հերմէս վկայ», գոչեց մի համարձակ փոքրիկ խոհանոցի աշակերտ, որ դեռ նոր էր սկսել իր արհեստը. «ով է տեսել այսպիսի հին կաղապարներ քաղցրեղէնի համար։ Անկարելի է որ մարդ այսպիսի կոպիտ գործիքներով կարողանայ ցոյց տալ իր արհեստը։ Սալլուստի ամենահասարակ կաղապարները ներկայացնում են Տրավատյի ամբողջ պաշարումը—Հեկտորը, Պարիսը, Հելենը—փոքրիկ Աստիանաքսը և փայտէ ձին էլ վերան»։

«Լաւ», յիմար ասաց Կոնդրիոն, ատն խոհարարը, որ կարծես պատերազմի մեծագոյն մասը թողնում էր իր դաշնակիցներին. «Իմ աչքը չէ նմանում այդ չռայլ անպիտաններին, որոնք անպատճառ ուզում են ունենալ վերջին մօտան, ինչ արժէքով կուզի լինի»։

«Դու ստա ես խօսում, ատոր գերի», գոչեց Պիտմէդ, բարկացած,—«և դու այնքան դրամ ես մսխել տալիս ինձ, որ բաւական էր Լուկուլլոսին անանկացնելու։ Դուրս ելի քո տրջից, ուզում եմ խօսել քեզ հետ»։

Սարուկը, աչքի մի խորամանկ նշան անելով իր գործակիցներին, կատարեց նրա հրամանը։

«Երեք տատոյի մարդ *), ասաց Պիտմէդ, իր լուրջ և բարկացած երեսով. «ինչպէս չանդրնեցիր այդ բոլոր աւազակներին բերել իմ տունը։ Ես տեսնում եմ դող քառը պրուած նրանց երեսների տակն գծի մէջ»։

«Իսկ ես սէր իմ, ես ձեզ հաւատացնում եմ, որ նրանք բոլորն էլ չատ պատուաւոր բնաւորութեան տէր մարդիկ են, և քաղաքի ամենալաւ խոհարարները. մի մեծ գործ է նրանց ձեռք բերել։ Եթէ իմ խաթեր համար չը լիներ...»

*) Սովորական արաբական հայհոյանքը, առնուած էր Երեք տատոյի «քոռ» բառից, որ նշանակում է »զող»։

«Ձո խաթեր, Թշուառական Կոնդրիօ», ընդմիջեց Դիոմէդ. «և ինչ ինձանից չարթուած զրաւներով, ինչ բաղարի գողութիւններով, ինչ ձրագումն հանուած և քաղաքի արուարձաններում վաճառուած մսերով, ինչ սուտ փչացած բրոնզեղէնների վնասով, ինչ սուտ կոտրուած ամանների արժէքներով է, որ դու կարողացել ես ապահովել նրանց ծառայութիւնը քո խաթեր համար»։

«Ո՛չ, տէր իմ, մի ամբաստանէք իմ հաւատարմութիւնը։ Թող աստուածները պատուհասեն ինձ եթէ...»։

«Մի երդուիր», նորից ընդմիջեց զայրացած Դիոմէդը. «որովհետև աստուածները կը պատուհասեն քեզ քո սուտ երդման համար և ես հիւրընկալութեան օրը կը կորցնեմ իմ խոհարարին։ Բայց բաւական է հիմա. լաւ հակիր քո այդ չարագէմ օձնականների վրայ և վազը մի գայ ինձ ասելու թէ ամանները կոտրուեցան կամ բաժակները գերբնական կերպով անհետացան, ապա թէ ոչ ամբողջ մէջքդ մի կատ սև ածուխ կը դառնայ։ Լսիր ինձ, դու գիտես, որ ինձանից այնքան դրամ ես կորզել այս փախչիկական աստաղէններին *) համար, որ, Հերկուլէս վկայ, բաւական է մէկ լուրջ մարդու ամբողջ մէկ տարուայ ծախքը լինելու. զգույշ կաց, որ մի երկվայրկեան աւելի չը տապակուին։ Վերջին անգամ երբ ես հրաւիրել էի իմ բարեկամներիս, և երբ քո մնապարծութիւնը այնքան չանդգնութեամբ տանձնեց մի միւսական կուռնկ պատրաստել, դու գիտես, որ երբ այդ թռչունը բերուեցաւ սեղանի վրայ նա նմանում էր նա-

*) Փախչիկալի կամ Խոնալի աստաղէնները շատ սիրուած էին հռոմայեցիների կողմից, նրանք մի քիչ աւելի մեծ էին քան սովորական կաքաւները։

նայից դուրս եկած մի քարի. կարծես Ֆլեգեթոնի ամբողջ կրակները հաւաքուել էին և նրան չորացրել։ Այս անգամ համեստ եղիր, Կոնդրիօ—զգույշ և համեստ։ Համեստութիւնը մեծ գործերի գայլակն է. և ամեն ուրիշ բանի մէջ ինչպէս և այս մէկի, եթէ չես խնայում միջոցդ քսակին, դէթ ուշադրութիւն դարձրու նրա պատուհին»։

«Այնպէս կը պատրաստեմ կուռնկը, որ Հերակլէսի օրուանից մինչև հիմա այդպիսի բան տեսնուած չը լինի Պոմպէյի մէջ»։

«Կամաց, կամաց, նորից այդ քո անլիծել պարծենկոտութիւնը, բայց ինձ նայիր Կոնդրիօ, այդ մարդուկը—այդ թզուկը, որ յարձակւում է իմ կուռնկների վրայ—այդ քահանայի լեզուանի աչակերտը, արդեօք ընդունակ չէր նրա կողմից այդպէս անարգանքով խօսել իմ քաղցրեղէնների կաղապարների վրայ։ Գիտես Կոնդրիօ, ես չէի ուզի յետ մնալ մօդալից»։

«Մեր խոհարարների սովորութիւնն է», առաց Կոնդրիօ, լրջութեամբ, «վատ ցույց տալ մեր գործիքները, որպէս զի մեր արուեստները աւելի մեծ ազդեցութիւն գործէ։ Կաղապարը շատ գեղեցիկ և լաւ է, բայց ես խորհուրդ կը տալի իմ տիրոջ, առաջին պատեհութեամբ գնել մի քանի...»։

«Բաւական է», գոչեց Դիոմէդ, որ կարծես վճռել էր երբեք թոյլ չը տալ իր սարկին վերջացնել իր պարբերութիւնները։ «Այժմ վերադարձիր գործիդ, վայլիր, ջանք արա։ Թող Դիոմէդի խոհարարը ամեն մարդու նախանձի առարկան դառնայ. թող Պոմպէյի գերբնները քեզ կոչեն մեծն Կոնդրիօ։ Գնա, բայց կաց. դու չես մոռանալ բոլոր այն դրամները, որ տուի քեզ բազարի համար»։

«Բոլորը, աւազ, սխալկների լեզուները, տոմարագուլան *), բրիտանական ատրճները և շատ ուրիշ բաներ, որոնց անուններն հիմա չէ կարելի համրել, դեռ վճարուած չեն։ Բայց ինչ նշանակութիւն ունի այդ, սրանց մարդ վատահում է տարուստ Դիոմեդի ապրիմապիրուսին» **)։

«Ո՛հ, անխիղճ չռայլ, ինչ վատնում, ինչ ատատութիւն, ես կը մնանկանամ։ Բայց դնա, չռապիր, տըգկիր, ճաշակիր, կատարիր ինքդ քեզ զերազանցիր։ Թող հռոմայեցի սենատորը չը քամահրէ աղքատ պոմպէյոսին։ Հեռացիր սարսափ և լիչիր փոխգիական ատատպէնները»։

Խոհարարապետը անհետացաւ իր բնական պետութեան մէջ, և Դիոմեդ լսա զլորեց իր պատկառելի ներկայութիւնը դէպի աւելի չքեզ սենեակները։ Ամեն բան իր ուզածի պէս էր. ծաղիկները թարմ էին, շատրուանները աշխոյժ պարում էին, մոզայիք յատակները հայելու նման հարթ էին։

«Ո՞ւր է իմ աղջիկ Ջուլիան», հարցրեց նա։

«Բաղնիք է գնացել»։

«Ա՛, լաւ լիչեցի, ժամանակն անցնում է, ես էլ պէտք է բաղնիք գնամ»։

Մեր պատմութիւնը այժմ պատնում է Ապէկիդէսին։ Երիտասարդ քահանան զարհնեց մի բեկբեկուած և սենդային քնից. դա հետեւել առաւօտն էր այն օրուայ, երբ նա ընդունել էր մի հատատ այնքան որոշ և խիստ կերպով տարբեր իր երիտասարդութեան կրօնքից. նա հաղիւ կարողանում էր զղալ, որ դեռ ինքը չէ նրազում. նա անցել էր մանացու գետից. նրա անցեալն այլ ևս ոչ մի համակրութիւն չէր կարող ունենալ նրա ապագայի հետ. երկու աշխարհները որոշ էին և տարբեր—այն որ եղել էր, այն բանից, որ պիտի լինէր։ Ինչ մի յանդուգն և վատնդաւոր ձեռնարկի նա նախրել էր իր կեանքը։ Նա տատանել էր պատռել այն զգեստները քօղը, որոնց ինքը մահակցել էր—սրբապղծել այն սեղանները, որոնց ինքը ծառայել էր—ուրանալ այն աստուածուհուն, որի պաշտօնական զգեստները ինքը հագել էր։ Բիչ քիչ նրա վրայ եկաւ գիտակցութիւնը այն բոլոր առելութեան և զզուանքի, որ ինքը պիտի զգար իր դէմ՝ բարեպաշտների մէջ, նոյն իսկ եթէ յաջող անցնէր նրա յանդուգն ձեռնարկը. իսկ եթէ ոչ, ինչ պատասխանների նա չը պիտի ենթարկուէր մի ալսպիսի յարդ չը լսած յանցանքի համար, յանցանքի, որի համար դեռ փորձառութիւնը չէր սահմել մի որոշ օրէնք պատրաստել։ Հէնց այդ պատճառի համար, անդրդուելի և մռայլած օրէնադրութեան զինադարանից դուրս կը բերուէին նախընթաց օրինակներ, որոնց համեմատ պիտի պատժուէր նրա սրբապղծութիւնը։ Արդեօք նա կարող էր արդարութիւն սպասել իր բարեկամներից, իր մանկութեան քրոջից իսկ, թէև նրանք պիտի խղճային նրան։ Այս քայլ և հերոսական գործը նրանց հեթանոսական աչքի առջև կերևար մի գարշելի հաւատուրացութիւն. ամենալաւ դէպքում դա կը վերագրուէր մի խղճալի խենթութեան։

Նա քայլութիւն ունէր ուրանալու ամեն բան այս աշխարհի վրայ, այն չոյսով, որ ապահովէ հանդերձեալ աշխարհի յաւիտենականութիւնը, որ այնքան յանկարծ

*) Մի տեսակ ճոխ և համեղ ուտեստ։

**) Արշիմագիրուս դիտաւոր խոհարարի մեծահռչակ տիտղոսն էր։

յայտնուել էր նրան։ Մինչդեռ մեկ կողմից այս մտածութիւնները յարձակուում էին նրա կրծքի վրայ, միւս կողմից նրա ինքնասիրութիւնը, նրա քաջութիւնը և նրա առաքինութիւնը խառնուած նրա խարէութեան համար ունեցած վրէժխնդրութեան ենթին, խարդախութեան համար մնուցած զայրացած զգուանքին, զօրացնում էին նրա սիրտը, և քաջալերում էին նրան.

Մաքառումը խիստ էր և ուժգին. բայց նրա նոր զգացմունքները յաղթանակեցին հներին. և այդ խեղճ քահանայի տարած յաղթութիւնը մի հզօր ապացոյց է և նորատ ամեն մաքառման ընդդէմ հին դաշխարհների արդարութեան, և հնատանդ ժէտերի։ Եթէ նախնի քրիստոնեաները աւելի ենթարկուած լինէին «սովորութեան» ազդեցութեանը – եթէ նուազ դիմակրաններ լինէին, այդ ազատագրած բանի ամենաթարմ և ամենամաքուր նշանակութեամբ, քրիստոնէութիւնը պիտի ոչնչանար իր օրօրոցի մէջ։

Թանի որ ամեն քահանայ հերթով մի քանի դիշեր քնում էր տաճարի սենեակների մէջ, Ապէկիդէսի հերթը դեռ չէր վերջացել. նա վեր կացաւ իր անկողնից, հագաւ իր սովորական զգեստները, դուրս եկաւ իր նեղ սենեակից և հասաւ տաճարի սեղանների առջև։

Ուժասպառ եղած իր վերջին զգացմունքներից՝ նա չատ ուշ էր զարթնել. և ուղղահայեաց արեգակը արդէն սիում էր իր ջերմ ճառագայթները սրբազան տաճարի վրայ։

«Salve, Ապէկիդէս», ասաց մի ձայն, որի բնական դաժանութիւնը կեղծաւորութեամբ, երկար ժամանակ հարթացել և տասկել էր մի ահաճելի փափկութիւն։

«Դու չատ ուշ ես գալիս եկել արդեօք աստուածների ախորժակի մէջ յայտնուել ես քեզ»։

«Եթէ նա կարողանար իր իսկական էութիւնը յայտնել ժողովրդին, Կալենուս, ինչպէս առանց խռնդի պիտի ճանաչին այս սեղանները»։

«Այդ», պատասխանեց Կալենուս, «կարող է ճշմարիտ լինել. բայց աստուածութիւնը բաւական խելացի է իր քահանաներից զատ ուրիշի հետ չը բանակցելու»։

«Ժամանակ կը գայ երբ նրա քօղը կը պատառուի առանց նրա հաւանութեան։

«Հաւանական չէ. անթիւ դարեր է ինչ նա յաղթանակում է։ Եւ այն բանը, որ այսքան ժամանակ դիմացել է ժամանակի փորձերին հաղիւ թէ տեղի տայ նորութեան ոյժի առջև։ Բայց լսիր երիտասարդ եղբայրս, այս խօսքերը անխոհեմ են»։

«Ես գործդ չէ լռեցնել այդ խօսքերը», պատասխանեց Ապէկիդէս երիտասարդին։

«Այդքան աւաք.—բայց ես չեմ վիճի քեզ հետ։ Ինչ կայ, իմ Ապէկիդէս, հզիպացին քեզ չէ հաւատալ, որ մեզ անհրաժեշտ է միութեամբ գործել։ Քեզ չէ հաւատալ թէ ինչ խելացի բան է մոլորեցնել ժողովրդին և վայելել մեր զուարճութիւնները։ Եթէ ոչ, նա չէ այն մեծ կախարդը, որ մարդիկ կարծում են նրան»։

«Ուրեմն դու մասնակցել ես նրա գաղերին», ասաց Ապէկիդէս, մի քամահրական ժպիտով։

«Այո, բայց ես այնքան պէտք չունեի նրանց։ Քնութիւնը արդէն պարգևել էր ինձ զուարճութեան սէրը, և իշխանութեան և չահի փափագը։ Երկար է այն ճանապարհը, որ զուարճասէրին առնում է դէպի ժուժկալութիւն. բայց միայն մեկ քայլ է հաճելի մեղապար-

ծուխիւնից մինչև պաշտպանող կեղծաւորութիւնը։ Զգուշացիր աստուածուհու վրէժխնդրութիւնից եթէ այդ քայլի կարճութիւնը յայտնուի»։

«Զգուշացիր, ինքդ, այն ժամից երբ վերելքդ կը պատռուի և նրա փտածութիւնը երևան կը գայ», պատասխանեց Ապէկիպէս, հանդիսապէս։ «Vale»։

Այս բառերով նա քուրմին թողեց իր մտածութեան մէջ։ Երբ նա մի քանի քայլ հեռացաւ տաճարից, նա դարձաւ յետ նայելու։ Կալենուսը արդէն անհետացել էր քահանաների նախասենեակում, որովհետև այժմ մօտենում էր այն կերակուրի ժամանակը, որը նախնիքներից կոչւում էր պրանդիում և համապատասխանում է մեր նախաճաշիկին։ Ձերմակ և չնորհագեղ մեհեանը փայլում էր արևի ճառագայթների տակ։ Դրա առջևի սեղաններից բարձրանում էր անուշահոտ ծուխը, և ժպտում էին պահակները։ Քահանան երկար և անձկութեամբ նայեց այդ տեսարանին. դա վերջին անգամն էր, որ նա տեսաւ այդ տաճարը։

Նա յետոյ դարձաւ և կամաց կամաց չարունակեց իր ճանապարհը դէպի Իօնէի տունը. նախ քան, կարելի է, կարուէր այն վերջին կապը, որ միանում էր նրանց— նախ քան վազուհան անհետանար վանդի մէջ նետուելը, նա ուզում էր տեսնել իր վերջին ազգակցուհուն, իր ամենասիրելի, որպէս և իր ամենահին բարեկամին։

Նա հասաւ նրա տունը, և դուռ Իօնէին պարտիզում Նիդիայի հետ միասին։

«Այդ մի բարեպատութիւն էր քո կողմից, Ապէկիդէս», ասաց Իօնէն, ուրախացած. «և ինչ անձկութեամբ ես փափագել եմ քեզ տեսնել. ինչ չնորհակալութիւն ես պարտական չեմ քեզ։ Ի՛նչ մի խաղաղութիւն քո

կողմից իմ դամակներիս ոչ մէկին չը պատասխանել և այստեղ չը գալ լսելու իմ երախտագիտութեան արտայայտութիւնը։ Ո՛հ, դու ազատել ես քո քրոջը անպատուութիւնից։ Նա ինչ կարող է ասել քեզանից չնորհակալ լինելու համար, և այժմ դու եկար վերջապէս»։

«Իմ քաղցրիկ Իօնէ, դու ինձ ոչ մի չնորհակալութիւն պարտական չես, որովհետև քո դատը իմ դատն է։ Թող խոյս տանք այդ նիւթից, թող չը լինենք այդ ամբարիշտ մարդու անունը, որ երկուքիս էլ այդքան ատելի է։ Կարելի է ես չուտով պատեհութիւն կունենամ աչխարհին հասկացնելու նրա կարծեցեալ խմաստութեան ամբողջ չափը և նրա կեղծ խոհականութիւնը։ Բայց եկ նստենք, քոյր իմ. ես յոգնել եմ արևի ջերմութիւնից. եկ նստենք այն չուաքի տակ և մի քիչ ժամանակ էլ լինենք միասին համար այն, ինչ որ էինք։

Սօսի սաղարթաչատ ծառի տակ, խիտ կիսաոնները և ելակենիները նրանց չորս կողմը, ջրի կենդանի աղբիւրը նրանց առջև, փափուկ խոտը նրանց տակ, այսպիսի մի տեղում, այսպիսի մի տեսարանում նստած էին քոյր և եղբայր վերջին անգամ իրանց կեանքի մէջ։ Զուարթ մարախը, որ երբեմն այնքան սիրելի էր Աթէնքում, ուրախ ուրախ ոստոստում էր խոտերի մէջ. թիթեռնիկը—հոգու դեղեցիկ օրինակը, որ նուիրուած է Պսիքէին, և որ սիկիլիական երկինքներից իր առած վառվռուն գոյներով չարունակում է դեռ փոխանակութիւններ հայթհայթել քրիստոնեայ բանաստեղծին, թիւնները թռչկոտում էր ծաղիկից ծաղիկ—ինքն էլ մի թեռուր ծաղիկ։ Դու կարող ես հէնց այսօր քայլել մեհենյն տեղում. բայց պարտէզը այլ ևս չը կայ, սիւները քանդուած են, և աղբիւրը չորացած է։ Թող ճանապարհորդը

փնտռէ Իօնէլի տունը Պոմպէլի ափերակներէն մէջ։ Նրա բնակիչները դեռ յայտնի են. բայց ես չեմ մատնի դրանց հասարակ անհասկացող ճանապարհորդի աչքերին։ Նա որ ափէլի զգայնութիւն ունի քան ոսկիկը դիւրութեամբ կը գտնի այդ տունը և երբ գտնէ թող պահէ գաղտնիքը։

Նրանք նստեցին միասին, և Նիղիան, ուրախ լինելով, որ մենակ մնաց, քաշուեցաւ պարտիզի հեռաւոր անկիւնը։

«Իօնէ, իմ քոյր», ասաց երիտասարդ հաւատացեալը, «ձեռքդ դիր իմ ճակատիս թող զգամ նրա զով հպումը։ Իօսիր ինձ հետ, որովհետև քո մեզմ ձայնը նմանում է մի զեփիւռի, որ թէ թարմութիւն ունի և թէ երաժշտութիւն։ Իօսիր ինձ հետ, բայց չ'օրհնես ինձ։ Մի արտասանիր այն իօսքերից մէկը, որոնց մեր երեխայութեան ժամանակ, մենք սրբազան էինք համարում»։

«Աւաղ, ուրեմն ինչ ասեմ։ Մեր սիրոյ լեզուն հիւսուած է բարեպաշտական լեզուի հետ. իմ իօսքերը կը պաղեն և չոր կը դառնան եթէ ես նրանց միջից արտաքսեմ մեր աստուածների անուններըե

»Մ ե ր ա ս տ ո ւ ա ծ ն ե ր ի՛», մրմնջաց Ապէկիդէս մի սարսուռ զգալով. «դու արդէն ուշադրութիւն չես դարձնում իմ խնդիրքին»։

«Ուրեմն միայն Խսխից իօսեմ քեզ հետ»։

«Զար հոգուց, ասա». ոչ, ափէլի լաւ կանես եթէ յայտնեան համր մնաս, եթէ ոչ... Բայց հեռու, հեռու այս իօսակցութիւնը. հիմա չեմ ուզում վիճել կամ հաւաստել. հիմա չեմ ուզում խաղութեամբ զաւել ուրիշներին։ Դու նկատում ես ինձ որպէս մի ուրացող և ես ամաչում եմ և ախրում քեզ համար, որպէս մի կռապաշտ։ Ոչ, իմ սիրելի քոյր, թող խոյս տանք այսպիսի

նիւթերից և մտքերից։ Քո քաղցր ներկայութեամբ մի անդորրութիւն է գալիս իմ հոգու վրայ։ Մի կարճ միջոց ես մոռանում եմ ամէն բան։ Մինչդեռ այսպէս իմ քունքերը դրել եմ քո կրծքի վրայ, մինչդեռ այսպէս զգում եմ, որ քո քնքոյշ թևը գրկել է ինձ, ես կարծում եմ, որ մենք նորից երեխաներ ենք, և երկինքը երկուսիս վրայ էլ հաւասարապէս ժպտում է։ Որովհետև, ո՛հ, եթէ ես ապաստամ, (հոգ չէ թէ ինչ վտանգից). և ես կարողանամ քեզ հետ խօսել մի սուրբ և անաւար նիւթի մասին. եթէ գտնեմ, որ քո ականջը խուլ է և քո սիրտը քարացած, այն ժամանակ ինչ յոյս կարող է հակակշռել այն յուսահատութիւնը, որ պիտի ունենամ քո մասին։ Քո մէջ, իմ անուշիկ քոյր, ես տեսնում եմ իմ նմանութիւնը՝ բայց ազնուացած և զեղեցկացած։ Արդեօք հայելին պէտք է մնայ յաւիտեան և խակաին կաղամուածքը չախչախուի ինչպէս բրուտի կաւը։ Ա՛հ, ո՛չ, ո՛չ կը գալ ժամանակը երբ դու կը լսես ինձ։ Ցիշում ես ինչպէս Բաքէլի մօտ մենք ձեռք ձեռքի տուած գնում էինք պաշտօնը դարձան ծաղիկներ քաղելու։ Հէնց այդպէս մենք ձեռք ձեռքի տուած կը մտնենք յաւիտենական պարտէզը, և մեր գլխին կը դնենք անթառամ ասֆոդելների պսակներ»։

Զարմացած և ապշած այս բառերից, որոնց նշանակութիւնը լիովին չէր հասկանում, որոնց սխալ ընդհանրութիւնը մինչև անգամ չարժում էր նրա արտասուքը, Իօնէն ակնոջ էր գնում մի լցուած և ճնշուած սրտի արտաղեղումներին։ Իրօք, Ապէկիդէսի տրամաղրութիւնն էլ չատ փոփոխել էր սովորականից. նա արտաքսուած և ընդհանրապէս մեռած էր թուում կամ անզուսպ։ Ամենաազնիւ վախտներում նախանձոտ են լինում. նրանք լցուն-

նում, կլանում են ամբողջ հոգին, և մեքանաղձային տրամադրութիւնները թողնում են լճացած, և մակերեսոյթի վրայ անխնամ։ Ուշադրութիւն չը դարձնելով մեզ շրջապատող փոքրիկ բաներին՝ մենք երևում ենք մռայլ. չը կարողանալով տանել՝ որ աչխարհային բաները ընդմիջեն մեր աւելի երկնային երազները, մենք թուում ենք բարկացկոտ և դաժան։ Որովհետև ինչպէս չը կայ մի ցնորք աւելի ուռնային քան այն յոյսը թէ մեկ մարդկային սիրտ կարող է համակրութիւն գտնել մի ուրիշի մէջ, այնպէս էլ ոչ ոք չէ կարողանում արդարութեամբ թարգմանել մեզ և ոչ ոք, ա՛յ, ոչ իսկ մեր ամենաօծիկ և ամենասիրելի կապերը ներողամտութեամբ են վերաբերում դէպի մեր զգացումները։ Երբ մենք մեռնում ենք և զղջումը գալիս է բայց ուշ, այն ժամանակ թէ բարեկամ և թէ թշնամի զարմանում են մտածելով թէ ինչքան քեզ մեղանչել էինք։

«Ուրեմն ես կը խօսեմ քեզ հետ մեր նախկին տարիների վրայ», ասաց Իօնէն։ Կռուեց այն կոյր աղջիկը երդէ քեզ համար մանկական օրերի վրայ։ Նրա ձայնը քաղցր է և երաժշտական և նա մի երդ գիտէ այդ նիւթի մասին, որի մէջ չը կան այն ակնարկութիւնները, որոնք քեզ ցաւ են պատճառում»։

«Ցիշում ես բաները, քոյրիկս», ասաց Ապէկիդէս։

«Կարծեմ, այո, որովհետև եղանակը, որ պարզ է, դրոշմել է նրանց իմ մտքի վրայ։

«Ուրեմն դու ինքդ երգիր ինձ համար։ Իմ ականջս չէ սիրում անծանօթ ձայներ. և քոնդ, Իօնէ, ի ընտանեկան յիշողութիւններով, միշտ ինձ շատ աւելի քաղցր է թուացել քան Լիդիայի կամ Պրէտէի բոլոր վարձկան եղանակները։ Երգիր ինձ համար»։

Իօնէն նչան արեց մի սարկուհու, որ կանգնած էր պորտիկոում, բերելու իր տաւիղը. երբ որ բերուեց, մի մեղմ և պարզ եղանակով, Իօնէն երգեց հետեւեալ տաները։

ԱՓՍՈՍԱՆՔ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Չէ թէ մանկութեան պայծառ երկինքը
Երբէք չեն պատում Ապրիլի ամպեր,
Կամ մատաղ սրտին տրուած են ծաղկունք
Որոնց տրանքում քնած չեն քարեր.
Ո՛չ, ամեն տերեւ
Ի վշտի մի էջ,
Որ բախտն հիւսած է մեր պըսակի մէջ։

Թէև տարիքով երիտասարդ ենք,
Մեր ներկան ախուր, անցեալն է տրտում,
Բայց փայլում է յոյսն ամեն բանի վրայ
Որ սպասում է մեզ ապագայում,
Ջերթ փայլուն հովիտ
Մթագոյն տուներ,
Որ փոխ է առնում վարդի երանգներ։

Չէ թէ մեր կեանքի վերջին օրերը
Ցաւերից բացի ուրիշ բան չունին,
Այլ վէրքն աւելի կամաց է բուժւում,
Եւ չուտ չէ վանում ժպիտը լացին.
Եւ մեր սգաւոր
Ցիշողութիւնը
Անասուրբ է պտում մեծ ցնծութիւնը։

Զբացաւ ընդ միշտ այն ծիածանը,
Որ մեզ ժպտաւմ էր ամպերից մթին.
Թէ մրրիկ լինի աւելի մութ է
Մեր առջև բացուել սոսկալի ուղին.
Եւ խաղերի հետ
Անհոգ մարդկութեան,
Թողինք և՛ ցուլը մեր անմեղութեան։

Խմաստութեամբ և փափկանկատութեամբ էր ընտրել այդ երգը Իօնէին, չը նայելով, որ դրա յանկերգը աներազդեցիկ էր. որովհետև երբ մենք տխուր ենք ղղում, աւելի քան որ և է ձայն, մեր ականջը ծակում է ուրախութեան հնչիւնը։ Ամենից յարմար դիւթանքը այն է, որ մենք վախ ենք առնում մելամաղձութիւնից, որովհետև երբ չէ կարելի զուարթացնել վշտահար մրցքերը, կարելի է մեղմացնել. և այդպիսով նրանք կորցնում են իրանց սրոշ և խոր սահմանագծերը, և նրանց գոյները հալւում, իջեալական են դառնում։ Ինչպէս տղրուկը ներսի վերքը դարմանելու համար առաջ է բերում մի արտաքին բորբոքում. ինչպէս մի աւելի մեզմ վերքով, նա քաշում է աւելի մահացու վերքի թոյնը, այսպէս էլ մեր մտքերի նեխուած թարախները լժշկելու համար մենք պիտի աշխատենք մի արտաքին և աւելի մեզմ տխրութեան փոխարկել այն ցաւը, որ կրծոտում է ներքին սիրտը։ Նոյնը եղաւ և Ապէվիլէի դէպքում։ Անձնատուր լինելով այդ արծաթահնչիւն ձայնի ազդեցութեան, ձայն, որ նրան յիշեցնում էր անցեալը, և պատմում էր ներկայի միայն կէս վիշտը, նա մոռացաւ իր անձկալից խորհուրդների աւելի անմիջական և աւելի կրակոտ ազբիւրները։ Նա ամբողջ ժամեր անց-

կացրեց Իօնէին երգել տալով, և խօսակցելով նրա հետ. և երբ վեր կացաւ Թողնելու նրան, նրա միտքը անդորր էր և ամոքուած։

«Իօնէ», ասաց նա, սեղմելով նրա ձեռքը, «եթէ լսես որ իմ անունը սևացած է և բամբասուած, դու կը հաւատաս այդ դրպարտութեանը»։

«Երբէք, եղբայրս, երբէք»։

«Դու չես կարծում, որ դաւանութեանդ համաձայն, որ չարագործը պէտք է պատժուի հանդերձեալում և բարեգործը վարձատրուի»։

«Մեծ կարող ես կասկածել»։

«Ուրեմն դու մտածում ես, թէ նա, որ խակապէս բարի է, պէտք է զոհէ ամեն անձնական շահ իր առաքինութեան եռանդի համար»։

«Նա որ այդպէս է անում հաւասար է սատանայութեան»։

«Եւ դու հաւատում ես, որ նրա գործերի քաջութեան և անարատութեան համեմատ կը լինի նրա անդրգերեզմանային երանութեան բաժինը»։

«Մենք այդպէս ենք սովորած յուսալ»։

«Համբերիր լինձ, քոյրս։ Մէկ տարի էլ։ Դու կամուսնանաս Գլոկուսի հետ. կարելի է այդ ամուսնութիւնը մեզ աւելի անյոյս կերպով կը բաժանէ. բայց այժմ այս մասին չեմ ուզում խօսել. դու պէտք է ամուսնանաս Գլոկուսի հետ—սիրում ես նրան։ Ո՛չ, քոյրիկս, բառերով պատասխանիր»։

«Ա՛յո», մրմնջաց Իօնէն չիկնելով։

«Դու զգում ես, որ նրա խաթէր համար կարող ես Թողնել հպարտութիւնը. անպատուութիւն յանձն առնել և մահուան մասնակից։ Ես լսել եմ, որ երբ կանայք խա-

կապէս սիրում են, նրանց սէրը հասնում է մինչև այդ չափազանցութեան»։

«Եղբայր իմ, ես այդ բոլորը կարող էի անել Գլուխի համար, և չզղալ, որ դա մի զոհողութիւն է։ Զոհողութիւն չը կայ նրանց համար, որոնք սիրում են. զոհողութիւն չը կայ այն բոլոր չարիքների մէջ, որ մենք կրում ենք սիրուածի համար»։

«Բաւական է, կինը այդպէս է զգում մարդու համար, արդեօք մարդը դրանից նուազ պաշտպանութիւն պիտի զգայ Աստուծոյ համար»։

Նա այլ ևս չը խօսեց։ Նրա ամբողջ կերպարանքը կարծես վառուած և նեղչնչուած էր մի երկնային կրակով. նրա կուրծքը հպարտութեամբ ուռչել էր. նրա աչքերը փայլում էին. նրա ճակատի վրայ բազմել էր վեհափառութիւնը մի մարդու, որ կարող է ամէն վտանգի մէջ մտնել ազնիւ լինելու համար։ Նրա աչքերը դարձան հանդիպելու Իօնէի աչքերին—անձկալից և երկչոտ։ Նա ջերմ սիրով համբուրեց իր քրոջը, նրան ամուր սեղմեց իր կրծքին, և մի րոպէից յետոյ դուրս եկաւ անտից։

Երկար ժամանակ Իօնէն մնաց մինակն սեղում. նա լուռ էր և մտախոհ։ Նաժիշտները կրկին և կրկին եկան նրան լիչեցնելու, որ կէսօրը անցել էր և նա հրաւիրուած էր Դիոմէդի տունը։ Վերջ ի վերջոյ նա սթափուեցաւ իր մտազմայլումից, և պատրաստուեցաւ,—ոչ թէ մի զուարճական հաւարոյթի համար, այլ անհոգ և մեղմ ժպիտով կերպով—խնջոյքին երթալու։ Մէկ միտք միայն նրան հաչտեցնում էր այդ հանդէսի հետ—նա կարող էր տեսնել Գլոկուսին—նա կարող էր վստահել նրան իր երկիւղները և անհանգստութիւնները իր եղբօր վերաբերութեամբ։

Գլուխ Դ.

Ա ի ա լա մօղ ընթրիք, և հանդիսականների մի ընտիր խումբ։

Նոյն միջոցին Սալլուստ և Գլոկուս կամաց կամաց դնում էին դէպի Դիոմէդի տունը։ Ըընդելով նրա սովորութիւններին՝ Սալլուստ զուրկ չէր շատ դնահատելի յատկութիւններից։ Նա կարող էր լինել մի աշխոյժ բարեկամ, մի պիտանի քաղաքացի, մէկ խօսքով, մի սքանչելի մարդ, եթէ նրա գլուխը մտած չը լինէր փիլիսոփայ դառնալու մտքը։ Դաստիարակուելով այն ուսումնարանների մէջ, ուր հռոմէական բանապողութիւնը երկրպագութիւն էր անում յունական իմաստութեան արձագանքի առջև՝ նա սոպորուել էր այն վարդապետութիւններով, որոնք վերջին հեթանոսների ժամանակ ապականել էին իրանց մեծ վարդապետի պարզ ճշմարտութիւնները։ Նա ինքն իրան կատարելապէս նուիրել էր զուարճութեան, և կարծում էր, որ ոչ մի մարդ չը կայ աշխարհում այնքան խմաստուն, որքան մի զուարճասէր բարեկամ։ Այնուամենայնիւ նա ունէր բաւական չափով կրթութիւն, սրամտութիւն և բարեսրտութիւն և նրա մոլութիւնների անկեղծ պարզութիւնը առաքինութիւն էին թուում Կլոդիուսի կատարեալ ապականութեան և Լեպիդուսի ամենատարր կանացկութեան առջև. և այդ պատճառով Գլոկուս, նրան աւելի էր սիրում իր միւս ընկերներից. և նա էլ փոխադարձաբար, գնահատելով աթենացու ազնիւ յատկութիւնները՝ սիրում էր նրան նոյնչափ՝ որչափ մի պաղ մարդկանայ կամ մի բարեկամ ամենալաւ փաղերնիական գինի։

«Մի զուարճ մարդ է այդ Դիոմէդը», ասաց Սալ-

լուսա. «բայց նա մի քանի լաւ յատկութիւններ ունի— իր մառանի մէջ»։

«Եւ մի քանի դիւթիչ յատկութիւններ—իր աղջկայ մէջ»։

«Ճշմարիտ է, Գլոկուս. բայց այդ դիւթութիւնները կարծեմ ալ ևս չեն ազդում քեզ վրայ։ Եւ կարծեմ Կլոպիուսը փափագում է յաջորդել քեզ»։

«Յաջողութիւն եմ մաղթում նրան։ Ջուլիայի դիզեկութեան խնջոյքի մէջ, վատահեցէք, որ ոչ մի հիւր մուակա *) չը պիտի նկատուի»։

Խիստ էր այդ նկատողութիւնը. բայց իրօք նա կորնթականից մի մաս ունի իր մէջ... Վերջ ի վերջոյ նրանք յարմար զոյգ են։ Ինչ բարեբարոյ մարդիկ ենք մենք, որ այդ անպիտան խաղամոլի հետ ընկերակցութիւն ենք պահում»։

«Ջուարճասիրութիւնը միացնում է զանազան տեսակ մարդիկ», պատասխանեց Գլոկուս։ Նա զուարճացնում է ինձ...

«Եւ չորքոտնում է, բայց լեռով լաւ է վճարում դրա համար։ Նա իր գովեստներին զարկում է ոսկու փոշի»։

«Դուք յաճախ ակնարկութիւններ ըք արել թէ նա խարդախ է խաղի մէջ—իսկապէս այդպէս էք մտածում»։

«Իմ սիրելի Գլոկուս, մի հռոմայեցի ազնուական պէտք է պահէ իր անունը։ Անուն պահելն էլ չատ թանկ է նստում։ Ալդիուսը պէտք է խաբէ մի սրիկայի նման, որպէս զի կարողանայ ապրել մի ազնուականի նման»։

*) Ձը սիրուած և անկոչ հիւրերը կոչւում էին մուսիէ (muscae) կամ ճանճեր։

«Հա, հա, ես վերջերս թողել եմ զառերը։ Ո՛չ, Սալլուստ, երբ ամուսնանամ Իօնէի հետ, յոյս ունիմ, որ իմ երիտասարդութեան յիմարութիւնների փոխարէնը կը կատարեմ։ Մենք երկուքս ծնուած ենք աւելի բարձր բաների համար, քան այն, որին հասկրում ենք այսօր— ծնուած ենք մեր պաշտամանքը աւելի ազնիւ տաճարների մէջ կատարելու, քան Նպիկուրի փիներբուքի խընջոյքներում»։

«Աւաղ», պատասխանեց Սալլուստ, մի մելամազձիկ ձայնով, «ինչ պիտենք աւելի քան այս, որ կեանքը կարճ է, փերեզմանի միւս կողմը բոլորը մխիթարիչ է։ Մի աւելի խնամուտն խօսք չը կայ քան այն, որ ասում է վայելելը»։

«Բաքոս վկայ, ես տարակոյս ունիմ թէ մենք խնկասպէս վայելում ենք ամեն ինչ, որ կեանքը կարող է պարգևել»։

«Ես չափաւոր մարդ եմ», պատասխանեց Սալլուստ, «և չեմ ուզում ամեն ինչ»։ Մենք նմանում ենք յանցապարտների, և հարկում ենք պինիով և կնդրուկով, մինչդեռ կանգնած ենք մահուան դրի եզերքին. բայց եթէ այդպէս չանէինք, անդունդը սարսափելի կերպով անսուրժ պիտի թուար։ Ես խոստովանում եմ, որ նախ քան սովորի հարբել, ես հակուած էի դէպի սխրութիւն. արբեցութիւնը մի նոր կեանք է, իմ Գլոկուս»։

«Այո, բայց դա միւս առաւօտ մեզ բերում է մի նոր մահ»։

«Չեմ ուրանում, որ հետևեալ առաւօտը անախորժ բան է. բայց լեռով, եթէ այդպէս չը լինէր, մարդ երբէք ժամանակ չէր ունենալ կարդալու։ Ես երբեմն ուսումնասիրութիւններ եմ անում, որովհետև, առաւօտները

վկայ, մինչև կէսօր ուրիշ ոչ մի բան չեմ կարողանում անել»։

«Փուհ, սկիւթացի»։

«Պէնթիուսի նման լինի, ով որ ուրանում է Բաքքոսին»։

«Լաւ, Սալլուստ, քո բոլոր թերութիւններով հանդերձ՝ դու ամենաչալածն ես, որ ես երբ և իցէ տեսել եմ. և իսկապէս եթէ իմ կեանքը վտանգի մէջ լինէր, դու միակ անձնաւորութիւնն ես ամբողջ Իտալիայի մէջ, որ քո մասը կը ձգես ինձ փրկելու։

«Կարելի է ես էլ այդ բանը չէի անի, եթէ ընթրիքի ժամանակ լինէր։ Բայց իրօք մենք խաղացիներս տարտափելի կերպով անձնասէր ենք»։

«Ինչպէս ամէն մի մարդ, որ ազատ չէ», ասաց Գլոկուս, հառաչելով։ Լոկ ազատութիւնն է, որ մարդկանց մէջ դնում է փոխադարձ զոհողութիւնների սէրը»։

«Ուրեմն ազատութիւնը մի շատ յոգնեցուցիչ բան պիտի լինի եպիկուրեանի համար», պատասխանեց Սալլուստ։ «Բայց ահա հասանք մեր հիւրընկալի տունը»։

Քանի որ Դիոմէդի ամարանոցը, Պոմպէյում գտնուածների մէջ ամենից նշանաւորն է մեծութեան կողմից, և քանի որ դա կառուցուած է հռոմայեցիների արուարձանական ամարանոցների մասնաւոր ճարտարապետութեան ձևով, անհետաքրքիր չէր լինի մի քանի բառով նկարագրել այն սենեակների յատակագիծը, որոնց միջոցով մեր այցելուներն անցան։

Նրանք մտան միևնոյն վէստիբիւլը, ուր մենք նախ տեսել ենք ծերուկ Մեղոնին, և այնտեղից անմիջապէս անցան մի սիւնաշարի մէջ, որ կոչւում էր պէրիստիլ. դիմացը տարբերութիւնը մի արուարձանական ամարանոցի և մի քաղաքի տան մէջ այն էր, որ առաջինների մէջ, սիւնաշարը կառուցւում էր ճիշդ այն տեղում ուր, քաղաքի տների մէջ գտնւում էր ատրիումը։ Պէրիստիլի կեդրոնում կար մի բաց գաւիթ, որ պարունակում էր իմպլուվիումը (աւազանը)։

Պէրիստիլից մի անդունդ առաջնորդում էր ցած դէպի ծառաների բնակարանը, խոհանոցը և մի ուրիշ դեպի անցք դիմացի կողմում առաջնորդում էր դէպի պարտէզը. գտնւում էին սենեակներ չինուած էին սիւնաշարի չորս կողմում, որոնք հատկանշաբար յատկացուած էին ամարանոցի այցելուներին։ Ձախ կողմից ուրիշ դուռ բացւում էր մի փոքրիկ եռանկիւնաձև պորտիկոի մէջ, որը պատկանում էր բաղնիքներին, եռևի կողմում գտնւում էր հանդերձարանը, ուր պահւում էին զգեստները և կարելի է, տան տիրոջ ոտնի զգեստները։ Տան և եօթը դար յետոյ գտնուեցան այդ հնութեան ճմրթուած և վոչնչացած պաճուճանքի բեկորները. ուսմունք աւելի էին դիմացել, քան լինչ նրանց բարեկեցիկ տէրը կարողացել էր նախատեսել։

Դառնանք պէրիստիլը և աչխատենք մի ակնարկ ձգել սենեակների այն ամբողջ չարքի վրայ, որ անմիջապէս բացւում է այցելուների աչքին։

Թող ընթերցողը, նախ և առաջ երևակայէ պորտիկոյի սիւները, որոնցից կախուած են ծաղկեայ պսակներ. սիւների ցածի մասը կարմիր է ներկուած, և չբրնջացող պատերը փայլում են գտնաղան ֆրէսկոներով։ Նայելով մի երեք քառորդով յետ քաշուած վարագոյրի ետև՝ մարդ տեսնում է տաբլինումը (կամ սալոնը). տաբլինումը սովորաբար փակւում է ապակեպատ դռներով, որոնք այժմ մնուած են պատի մէջ։ Այս տաբլի-

նաւմի ամեն կողմում կայ մի փոքրիկ սենեակ, որոնցից մէկը մի տեսակ գոնարկղենների սենեակ է. այս սենեակները ինչպէս նաև տալիսնումը բացւում են մի երկար պատշգամի մէջ, որի ամեն մի ծայրում կայ մի հարթ դարաւանի. դարաւանիների և պատշգամի մէջտեղ բացւում կայ մի դահլիճ, որի մէջ պատրաստուած էր խնջոյքը։ Բոլոր այս սենեակները թէև միևնոյն մակերեսոյթի վրայ էին որ փողոցը, մէկ յարկ բարձր էին պատերից. դարաւանները, որոնք հազարդակցում էին պատշգամի հետ, չորանոցներով դառնում էին նրանցքներ, որոնք կառուցուած էին սիւների գլխին. իսկ այդ սիւները ամեն կողմից շրջապատել էին պարտէզը։

Ներքնում և պարտէզի մակերեսոյթի վրայ չէին մնացած էին այն սենեակները, որոնք գլխաւորապէս պատկանում էին Ջուլիային և որոնց՝ մենք արդէն նկարագրել ենք։

Այն պատշգամի մէջ, որ նոր լիշեցինք, Վիտմէդ ընդունեց իր հիւրերին։

Վաճառականը մեծ յատկութիւն ունէր, որպէս մի պրական մարդ, և հետևաբար մեծ սէր էր ցոյց տալիս դէպի ամեն ինչ, որ յունական էր. նա մանաւանդ ուշադրութիւն դարձրեց Վլկոսսի վրայ։

«Դուք կը տեսնէք, իմ սիրելի բարեկամս», ասաց նա, ձեռքի շարժումով, «որ ես մի քիչ կլասիկական միջնադարի մէջ եմ ապրում այստեղ—մի քիչ Վիկտորիական—այնպէս չէ»։ Այն դահլիճը, որի մէջ պիտի ընթրենք, փոխ է առնուած յոյներից։ Դա մի էկսա Վիկէնդէն է։ Ազնիւ Սալլուստ, ինչպէս լսում եմ այսպիսի սենեակ չը կայ Հռոմում»։

«Օ», պատասխանեց Սալլուստ, մի կէս ժպտալով

«դուք պոմպէյցիներդ միացնում էք, ինչ որ դովելի է Յունաստանում և Հռոմում. երանի թէ դուք միացնէիք կերակուրները՝ ինչպէս միացրել էք ճարտարապետութիւնը»։

«Պիտի տեսնէք, պիտի դատէք, իմ բարեկամ Սալլուստ», պատասխանեց վաճառականը։ «Մենք պոմպէյցիներս ճաշակ ունինք և դրամ էլ ունինք»։

«Երկու աքանչելի բաներ են դրանք», պատասխանեց Սալլուստ։ «Բայց, ասա, օրիորդ Ջուլիան»։

Ինչպէս առաջ էլ նկատել եմ, աղջնակների և հասակակիցների ընկերութիւնն գլխաւոր տարբերութիւնը այն բանի մէջ էր, որ աղջնակի պարկեշտ կանայք երբէք չէին մասնակցում խնջոյքներին, կամ շատ քիչ անգամ էին մասնակցում. այն ինչ հասակակիցների մէջ կանայք հանդիսների սովորական զարդերն էին. բայց երբ նրանք ներկայ էին լինում որ և է խնջոյքի, դա շատով էր վերջանում։

Գեղանի Ջուլիան մատս անենակը. հագել մի փառաւոր սպիտակ զգեստ, որ բանուած էր մարգարիտներով և ակնեղէներով։

Հաղիւ նա ընդունել էր երկու հիւրի ողջոյնները, երբ Պանտան և իր կինը, Աթալիտսը, Կլոդիուսը, և հասակակից անուանները, գրեթէ միևնոյն ժամանակ ներս մտան. չեսու Եկաւ այրի Ֆուլվիան, չեսու բանաստեղծ Ֆուլվիուսը, որ նմանում էր այրուն անուանով երբէք ոչ ուրիշ բանով. չեսու ներս ձեռից Հերկուլանէումից եկած ռազմիկը իր սաւերով հանդերձ. չեսու եկան նուազողները հիւրերը։ Խօնէն դեռ ուշանում էր։

Բազաքաւոր հասկնիների մէջ մօտ էր չորքորդել երբ որ կարելի լինէր այդ. հետևաբար անքազա-

քավարութեան մի նշան էր համարւում հիւրընկալը տունը մտնելուց յետոյ անմիջապէս նստել։ Ողջոյնները փոխանակելուց յետոյ, որոնք սովորաբար կատարւում էին աջ ձեռքերի նոյն սրտառուչ սեղմումով ինչպէս մեր մէջ, և երբեմն էլ ամբողջ մաերմական գրկախառնութեամբ, հիւրերը մի քանի րոպէ անց էին կացնում նայելով սենեակի ամէն կողմը, և աքանչանալով բրոնզէ ղէմների, պատկերների կամ կարասների վրայ. մի մօտ, որ մեծ անքաղաքավարութիւն է մեր անգլիայներիս կատարելագործուած գաղափարների համար, որոնք բարեկրթութիւնը զետեղում են անտարբերութեան մէջ։ Եթէ ամբողջ աշխարհը մեզ տալին, մենք չէինք կամենայ յայտնել մեր աքանչացումը մի ուրիշի տան համար, վախենալով մի գուցէ մարդիկ կարծեն, որ մենք այդպիսի լաւ բան առաջ չէինք տեսել։

«Շատ գեղեցիկ է այս բաքոսի արձանը», ասաց հռոմայեցի սենատորը։

«Չնչին բան է», պատասխանեց Գլոմէդ։

«Ի՛նչ դիւթիչ նկարներ», գոչեց Ֆուլվիան։

«Չնչին բաներ են», պատասխանեց տէրը։

«Հիանալի աշտանակներ», գոչեց ռազմիկը»։

«Հիանալի», արձագանք տուեց տուները։

«Չնչին բաներ, չնչին բաներ». կրկնեց վաճառականը։

Նոյն միջոցին Գլոկուսը կանգնել էր պատչամբի պատուհաններից մէկի առջև, որ բացւում էր դարբասների վրայ. գեղանի Ջուլիան էլ նրա կողքին էր։

«Արդեօք աթենական առաքինութիւն է, Գլոկո՛ւս», ասաց վաճառականի աղջիկը. «խոյս տալ նրանցից, որոնց ընկերութիւնը մենք մի ժամանակ փնտռում էինք»։

«Ձգնաղ Ջուլիա—ո՛չ»։

«Բայց կարծեմ դա Գլոկուսի յատկութիւններից մէկն է»։

Գլոկուս երբէք խոյս չէ տալիս մի բ ա բ ե կ ա մ ի ց», պատասխանեց ձայնը՝ չնչահեղով վերջին բառը։

«Արդեօք Ջուլիան իրաւունք ունի նրա բարեկամներին մէջ դասելու»։

«Այդքան չգնահատ էակի բարեկամութիւնը մի կայսեր համար կարող էր պատուաբեր լինել»։

«Դուք խոյս էք տալիս իմ հարցից», պատասխանեց սիրահարուած Ջուլիան։ «Բայց ասացէք լինճ, ճշմարիտ է, որ դուք նեապօլսեցի Իօնէի աքանչացողներից էք։

«Արդեօք զեղեցկութիւնը չէ բռնադատում մեր աքանչացումը»։

«Ա՛, ճարպիկ լուն, դուք միշտ խոյս էք տալիս իմ հասքերին նշանակութիւնից։ Բայց ասացէք, իսկապէս Ջուլիային ընդունում էք իբրև բարեկամ»։

«Եթէ նա կը հաճենայ այդ չնորհն անել ինձ, օրհնեալ լինին աստուածները. այն օրը, որ ես կարժանանամ այդ պատուին սպիտակով պիտի նշան արուի»։

Եւ մինչդեռ դուք խօսում էք, ձեր աչքը անհանգիստ է և ձեր գոյնը փոփոխւում է. դուք ակամայ չարժւում էք դէպի լեռ. դուք անհամբեր էք երթալու Իօնէի մօտ։

Որովհետև Իօնէն այդ րոպէին մտել էր և Գլոկուս իրօք մտանել էր այդ նշանները, որոնք չէին խուսափել նախանձոտ զեղեցկուհու աչքերից։

«Կարծէք է դէպի մէկ կին իմ ունեցած աքանչացումը լինճ անարժան զարձնել մի ուրիշ կնոջ բարեկամու-

թեանը։ Մի վաւերացնէք այդպէս, ով Ջուլիա, այն պարտաւորները, որ բանաստեղծները ուղղել են ձեր սեռի հասցէին»։

«Լաւ, դուք իրաւունք ունիք — կամ ես կը սովրեմ այդպէս մաածել։ Գլոկուս, մէկ րոպէ էլ։ Դուք ամուսնանալու էք Իօնէի հետ, այնպէս չէ»։

«Եթէ պարկանները թոյլ տան, այդպէս է իմ օրհնեալ լոյսս»։

«Ուրեմն ընդունեցէք իմ կողմից, ի նշան մեր նոր բարեկամութեան, մի ընծայ ձեր հարսի համար։ Ոչ, բարեկամների սովորութիւնն է, գիտէք, որ միշտ հարսին և փեսային մի այդպիսի ընծին բան են տալիս ի նշան իրանց յարգանքի և բարեմաղթութեանց»։

«Ջուլիա, ես չեմ կարող մերժել բարեկամութեան որ և է նշան ձեզ նման մի անձնաւորութիւնից։ Ես կընդունեմ ձեր պարգևը որպէս մի բարի նշան բախտից»։

«Ուրեմն, խնջոյքից յետոյ, երբ հիւրերը կը քաշուին, դուք ինձ հետ կիջնէք իմ սենեակը, և իմ ձեռքից կառնաք պարգևը։ Յիշեցէք», ասաց Ջուլիան երթալով Պանսային կնոջ մօտ և թողնելով, որ Գլոկուսն երթայ գտնէ Իօնէին։

Ալբի Ֆուլվիան և Եղիւի կինը զբաղուած էին բարձր և լուրջ վիճաբանութեամբ։

«Օ՛, Ֆուլվիա, ես հաւատացնում եմ ձեզ, որ Հռոմից եկած վերջին սեղեկութեան համեմատ մազերի գնդապաճեն չորպարումը հնանում է. այժմ մի բերդի ձեով բարձրացնում են ինչպէս Ջուլիայինը, կամ մի սազաւարտի ձեով կապում են ինչպէս իմը, որ գալերիական մօտն է. չատ լաւ տպաւորութիւն է թողնում կարծեմ։ Ձեզ հաւատացնում եմ, որ Վեսպասիանոսը (Վեսպասիանոսի հերոսի անունն էր) չատ է հաւանում։

Եւ ոչ ոք իր մազերը չէ կապում այդ նէապօլսեցու նման — յունական ձեով»։

«Ինչպէս, դիմացիդ բաժանուած և ետևը կտոր չինած։ Ոհ ոչ. ինչ ծաղրալի է. դա ինձ չիչեցնում է Փիանալի արձանը։ Բայց այս Իօնէն գեղեցիկ է, այնպէս չէ»։

«Ցզամարդիկն այդպէս են ասում. բայց և հարուստ է. նա պիտի ամուսնանայ աթենացու հետ։ Յնծութիւն եմ մաղթում հարսին։ Իր սիրեկանը երկար հաւատարիմ չի մնայ. այս օտարականները չատ անհաւատարիմ են»։

«Ո՛հ, Ջուլիա, ասաց Ֆուլվիան, երբ վաճառականի աղջիկը մօտեցաւ նրանց. «դու տեսել ես վազրին»։

«Ո՛չ»։

«Ինչպէս ոչ, բոլոր տիկինները գնացել են տեսնելու։ Նա այնքան գեղեցիկ է որ...

«Յայտ անիմ, որ մի որ և է ոճրագործ կը գտնենք նրա և տուժի համար», պատասխանեց Ջուլիան։ «Ո՞ տմուտինը» (գտնելով դէպի Պանսալի կինը) այնքան աչառու չէ այս խնդրում, որքան որ պէտք է լինի»։

«Ի՞նչ տրած, օրէնքները չափազանց մեղմ են», պատասխանեց սպասաւորի տիկինը։ «Այնքան քիչ ոճիրներ կան, որոնց համար կարելի է արհնալի պատիժը որոշել. և յետոյ պլպիատորներն էլ կանացի են գտնում. ամենից ուժեղ գազանամարտները (bestiarü) կամենում են կտրել մի վարազի կամ մի ցուլի հետ. բայց երբ խնդիրը գալիս է մի վագրի կամ մի տուժի, նրանք կարծում են, որ խաղը չափազանց լուրջ կերպարանք է ստանում»։

Ներանք արժանի են խոլրի *), պատասխանեց Ջուլիան, արհամարհական ձևով։

«Ո՛հ, տեսել էք Ֆուլվիուսի—այդ սիրելի բանաստեղծի նոր տունը», ասաց Պանսայի կինը։

«Ո՛չ. զեղեցիկ է»։

«Շատ. այնպիսի լաւ ճաշակով չինուած։ Բայց ասում են, սիրելիս, որ այնպիսի անողորմելիչա նկարներ ունի։ Կանանց դոյց չէ տալիս. ինչ անքաղաքավարութիւն»։

«Այդ բանաստեղծները միշտ օտարոտի մարդիկ են», ասաց ալրին։ «Բայց նա մի շատ հետաքրքիր մարդ է. ինչ զեղեցիկ ոտանաւորներ է գրում։ Մենք մեծ յառաջադիմութիւն ենք անում բանաստեղծութեան մէջ. էլ անկարելի է հին գրուածները կարդալ»։

«Ես էլ ձեզ զաղափարակից եմ», պատասխանեց սաղաւարտի սիկինը։ Այնքան աւելի ոյժ և աչխոյժ կաց նոր զլրոցի մէջ։

Ռազմիկը ճեմեց դէպի սիկիննները։

«Ես հաշտուում եմ խաղաղութեան հետ», ասաց նա «երբ այսպիսի երեսներ եմ տեսնում»։

«Ո՛հ, դուք հերոսներդ միշտ չորքոտնիներ էք», պատասխանեց Ֆուլվիան, աճապարելով մատնատրատել իրան յատկացնել այդ կոմպլիմենտը։

«Վկայ է այս չղթան, որ ես առաջուց կասկած իր ձեռքից», պատասխանեց մարտիկը, խաղալով մի կարճ չղթայի հետ, որ մի վզկապի նման կախուած էր նրա վզի շուրջը՝ փոխանակ իջնելու կրծքի վրայ, խաղաղ

*) Տղամարդիկ երբեմն խոլրեր էին դնում, և դա կարծուում էր կանացիութեան մի մեծ նշան։

սէրների սովորութեան համեմատ—«վկայ է այս չղթան, դուք անխրատում էք ինձ։ Ես մի կոպիտ մարդ եմ—պիտուրը այդպէս պիտի լինի»։

«Ինչպէս էք գտնում Պոմպէյի սիկիննների ընդհանրապէս», ասաց Ջուլիան։

«Վերնում վկայ, գերազանց զեղեցիկ. ճշմարիտ է, նրանք չնորհ ունին ինձ վրայ, և այդ կրկնապատկում է նրանց դիւթութիւնը իմ աչքում։

«Մենք սիրում ենք գինուորականներին», ասաց Պանսայի կինը։

«Այդ յայտնի է ինձ. Հերկուլէս վկայ, մինչև անդամ անախորժ է այս քաղաքներում չափազանց հաչախասէր լինել։

Հերկուլանումի մէջ մարդիկ գնում են խմասրխումի կատարը, որպէս զի կոմպլուվիումից տեսնեն ինձ. մի մարդու քաղաքացիների սքանչացումը սկզբում հաճելի է, բայց վերջը անտանելի է դառնում»։

«Ճշմարիտ է, ճշմարիտ է, ով Վեսպիուս», գոչեց բանաստեղծը, մօտենալով խմբին. «ես էլ այդպէս եմ գտնում»։

«Դուք», ասաց չքեղակազմ ռազմիկը, չափելով բանաստեղծի փոքրիկ հասակը անասելի քամահրանքով։ «Դուք ձեր լեզուների մէջ էք ծառայել»։

«Դուք կարող էք տեսնել իմ կոզոպատները, փորսումի իմ մէջ», պատասխանեց բանաստեղծը մի խորհրդաւոր ակնարկ ձգելով կանանց կողմը։ «Ես եղել եմ մեծ մտատանջութ վրանի ընկերներից մէկը—նրա կռնատաբերնալը»։

«Ես մտատանջուն ոչ մի զօրապետ չեմ ճանաչում»,

ասաց վինուօրականը լուրջ կերպարանքով։ «Ի՞նչ պատերազմի մէջ էք եղել»։

«Հելվիկոնի»։

«Ես դրա անունը չեմ լսել»։

«Ո՛չ, Վ.եսպիուս, նա կառավարչ է անուամբ», ասաց Ջուլիան, ծիծաղելով։

«Կառավարչ, Արէս վկայ, ես կառավարիչ մարդ եմ»։

«Այո՛. Արէս ինքը սիրահարուած էր կառավարիչների մօր հետ», ասաց բանասաւեղծը մի քիչ երկիւղածար։ «Խնայիր, ուրեմն, ով Վ.եսպիուս, որ ես բանասաւեղծ Ֆուլվիուսն եմ։ Ես եմ որ քաջերին անմահ եմ դարձնում»։

«Աստուածները չանեն», մրմնջաց Սալուստ Ջուլիոսի ականջին։ Եթէ Վ.եսպիուս անմահանար, ինչ մի ձանձրացուցիչ պարծենկոտի տիպը մենք թողած կը լինէինք ապագայ սերունդին»։

Զինուորականը ապշած մնաց. երբ յայտնեցով թէ ընթրիքը պատրաստ է, նրան և նրա ընկերներին առաջնորդեն իրանց ճակիկ դրութիւնից։

Քանի որ արդէն Վլոկուսի տանը տեսել ենք պրոպէկտների հիւրընկալութեան սովորական ձևը, ընթերցողին կը խնայենք կերակուրներին և նրանց ներս բերելու մի երկրորդ մանրամասնութիւնը։

Վեսպէզ, որ հակուած էր դէպի ծիսակատարութիւնը, նշանակել էր մի նոմէնկլատոր, կամ հիւրերի տեղ որոշող։

Ընթերցողը գիտէ, որ տագկերութեան սեղանը բաղկացած էր երեք սեղանից. մէկը մէջ տեղ և միւս երկուսը նրա այս ու այն ծայրերում։ Այս վերջին երկու սեղանների առջև էր, որ հիւրերը թեք ընկան իրանց բազմոցների վրայ. մէջտեղինը թողուած էր ծառաների ազատ անցուդարձի համար։ Կողքերի սեղաններից մէկի վերջին ծայրը յատկացուած էր Ջուլիային՝ որպէս խընջոյքի տիկնոջ. նրա կողքին նստած էր Վեսպէզ։ Մէջ տեղի սեղանի մէկ ծայրում նստած էր Էդիլը, և հակառակ ծայրում հռոմայեցի սենատորը—սրանք պատուոյ տեղերն էին։ Միւս հիւրերի տեղերն էլ այնպէս կարգադրուած էր, որ երիտասարդները (պարոն կամ տիկին) միմեանց կողքի նստեն, և աւելի հասակաւորները միմեանց։ Մի չատ հաճելի կարգադրութիւն էր այս, բայց յաճախ պէտք է վչտացրած լինի այնպիսի անհատների, որոնք երիտասարդ չը լինելով հանդերձ ուզում են երիտասարդ նկատուիլ։

Խօսքի աթոռը դրուած էր Վլոկուսի բազմոցի կողքին *)։ Նստարանների վրայի երեսին քաշուած էր կրիայի խեցեմորթը, և նրանց ձգուած էին վերտուրներով լցուած, թանկագին և աւելորդութիւններով զարդարուած օմոցներ։ Մեր այժմեան չքնաղութիների վրայ հանակ դրուած էին աստուածների բրոնզեայ, վղղակրեայ արձանները։ Արբազան ազամանը և ընտանեկան լարէները էլ մոռացուած չէին։ Սեղանի և բազմոցների վերև, առաստաղից կախուած էր մի ճոխ ամպհովանի։ Սեղանի ամէն մի անկիւնում դրուած էր մի զարդ աստանակ, որովհետև թէև կէսօր էր, սակայն սենեակը մթացուած էր. և սենեակի զանազան կողմերում դրուած եռոտանիներից կնարուկի և զմուռսի անուշահոտութիւնը

*) Պաշտօնական հիւրընկալութիւնների ժամանակ կանայք նստում էին աթոռների վրայ, իսկ մարդիկ թեք էին ընկնում։ Այդ ընտանեկան շրջանի մէջ, որ նոյն ազատութիւնը երկու սեռին էլ հաւասարապէս տալիս էր—պատճառը շատ յայտնի է։

բարձրանում և լցնում էր սենեակի օդը։ Աբակուսի *) վրայ չարուած էին մեծ վաղեր և արծաթեայ զանազան զարդեր, ճիշդ նոյն ցուցամոլութեամբ (բայց աւելի լաւ ճաշակով) ինչ որ մենք տեսնում ենք այսօրուայ խըմ-ջոյքներում։

Այս օրուայ մեր աղօթքի վոխանակ, նրանք անընդհատաբար կատարում էին աստուածների պինեճօնը. և Վեստան որպէս թագուհին ընտանեկան աստուածներն, սովորաբար ամենից առաջ ընդունում էր այդ չնորհալի պաշտօնութիւնը։

Այս ծիսակատարութիւնը վերջանալուց յետոյ, սորուկները ծաղիկներ էին տեղում բազմոցների և յատակի վրայ, և ամեն մի ծաղկեայ պսակ, որ հիւսուած էր լինում ժապաւէններով և կապուած սիլիա ծառի կեղեւով. ամեն մի պսակի մէջ հիւսուած էր լինում բազէղ և ամեթովս, որոնք կարծւում էին թէ զօրութիւն ունին գինու աղդեցութիւնը կտրելու. սիկինների պսակները չէին կրում այս տերևները, որովհետև նրանք սովորութիւն չունէին հանդէսներում խմել։ Այդ ժամանակ նախագահը, Դիոմէդ, մտածեց որ պէտք է մի բասիլիուս (basilius) կամ խնջոյքի կառավարիչ ընտրել. մի նշանաւոր պաշտօն էր դա, որ երբեմն ընտրւում էր վիճակ ձգելով և երբեմն էլ, ինչպէս այս դէպքում, տանտիրոջ կամքով։

Դիոմէդ քիչ չփոթուած չէր թէ ում ընտրէր։ Հիւանդոտ սենատորը չափազանց լուրջ և չափազանց տխուր էր իր պաշտօնը լաւ կատարելու. էդիլ Պանտան չատ յարմար էր այդ դործին. բայց յետոյ, աստիճանի կոչ-

*) Մի սեղան, որ սրում էր սենեակի մի անկիւնը։ Ե. Թ.

մից մի երկրորդ մարդու ընտրութիւնը կարող էր մի անարդանք համարուիլ սենատորի համար։ Մինչդեռ խորհում էր միւսների չատկութիւնների վրայ, նրա աչքը հանդիպեց Սալլուստի գուարթ նայուածքին, և որպէս թէ մի չանկարծական ներչնչութեամբ ուրախ Եպիկարին կառավարիչ կամ արբիտեր բիբենդի նշանակեց։

Սալլուստ ընդունեց իր պաշտօնը վայելուչ խոնարհութեամբ։

«Ես մի աղօրմած արքայ կը լինեմ նրանց համար», ասաց նա, «որոնք լաւ կը խմեն. մերժողին, Մենոս ինքը նուազ անգութ կարող է լինել։ Զգոյշ»։

Գերիները սեղանակիցների առջև պահելին անուշահոտ ջրերով լի ամաններ, և լուացուելուց յետոյ հացկերոյթը սկսուեցաւ և այժմ սեղանը հաւաչում է նախնական կերակուրների ծանրութեան տակ։

Խօսակցութիւնը, որ առաջ անկապ էր և ոչ մի օրոշ նիւթ չունէր, միջոց տուաւ Խոնէին և Գլոկուսին այնպիսի քաղցր փոխօցների վոխանակել, որոնք արժէն ամբողջ աշխարհի պերճախօսութեանը։ Զուլիան նայում էր նրանց կայծակնացայտ աչքերով։

«Ո՛նչպէս չուտ Խոնէի տեղը իմ պիտի լինի», մտածում էր նա։

Բայց Կլոդիուս, որ նստած էր մէջտեղի տեղանքի առջև, որպէս զի լաւ կարողանայ տեսնել Զուլիային երեսը, դուշակեց նրա նախանձոտութիւնը, և վճռեց օգուտ քաղել դրանից։ Նա սեղանի այս ծայրից կոմպլիմենտների կոկիկ խօսքեր էր ուղղում նրան. և քանի որ նա բարձր ծպտումով և զեղեցկադէմ մի մարդ էր,

ունայնասէր Զուլիան այնքան սիրահարուած չէր, որպէսզի անզգայ դառնայ դէպի նրա ուշադրութիւնը։

Արթուն Սալլուստը զերիներին միշտ զբաղուած էր պահում, և այնպիսի արագութեամբ բաժակը բաժակի ետևից լցնել էր տալիս, որ կարծես վճռել էր ապառել այն մեծ մառանները, որոնց, ընթերցողը այժմ էլ կարող է տեսնել Դիոմեդի տան ներքևում։ Ադնիս վաճառականը սկսեց զղջալ իր ընտրութեան վրայ, երբ տեսաւ, որ ամֆորները մխիթարից ետևից ծածկուեցան։ Գերիները, ըստ էն էլ դեռ չը հասած առնութեան տարիքին, (ամենից փոքրերը տասը տարեկան էին և լցնում էին գինին. նրանցից հինգ տարով մեծերը ջուր էին խառնում գինու հետ) կարծես մասնակցում էին Սալլուստի եռանդին. և Դիոմեդի երեսը սկսեց վառուել, երբ տեսաւ թէ ինչ զայրացուցիչ պատրաստակամութեամբ նրանք աջակցում էին խնջոյքի արքային ջանքերին։

«Ներեցէք ինձ, ով տէնտատոր», ասաց Սալլուստ. «ես նկատում եմ, որ դուք խուսափելու նշաններ էք ցոյց տալիս. ձեր ծիրանի քղանցքը չէ կարող փրկել ձեզ— խմեցէք»։

«Աստուածները գիտեն», ասաց տէնտատորը, հազալով, «իմ թոքերս արդէն այրուում են. դուք այնպիսի արագութեամբ էք առաջանում, որ Ֆաթոնն էլ ոչինչ էր ձեր մօտ։ Ես ահաւ եմ, ով բարեսիրտ Սալլուստ. դուք պէտք է խղճաք ինձ»։

«Ե՞ս, ոչ։ Վաստան վկայ։ Ես մի անկոտրնակալ թագաւոր եմ—խմեցէք»։

Խեղճ տէնտատորը չը կարողանալով դուրս գալ տեղանի օրէնքներից՝ սպասեցաւ հնազանդել։ Ամէն ա-

մեն մի բաժակ նրան աւելի և աւելի մօտեցնում էր Սալքսի ափերին։

«Կամաց, կամաց, ով արքայ», հառաչեց Դիոմեդ. «մենք արդէն սկսում ենք...»։

«Դատաճանութիւն», ընդմիջեց Սալլուստ, «մենք ոչ մի խիստ Բրուտոս չենք ուզում այստեղ. ոչ մի միջամտութիւն արքայական կամքին»։

«Բայց մեր տիկին հիւրերը...»։

«Սիրում են հարբածներին։ Արդեօք Արիադնէն խնդութեամբ չէր Բաքոսի համար»։

«Խնջոյքը չարունակւում էր. հիւրերը աւելի իւօսուն ու աւելի ազմկալից էին դառնում. ազանդերը, կամ կերակուրի վերջին կարգը, արդէն սեղանի վրայ էր. և գերիները պատրաստում էին զմուռսով և զովացրով անուշահոտուած ջուրը, որպէս զի հիւրերը վերջին անգամ լուացուէին։ Նոյն միջոցին մի փոքրիկ կոլորակ սեղան, որ զբաղած էր հիւրերի հանդէպ, յանկարծ, և կարծես կախարդութեամբ բացուեցաւ մէջ տեղից, և մի անուշաբոյր տարափ սեղան և հիւրերի վրայ։ Երբ դա դադարեց, նրանց վերեի ամպհովանին փոս քաշուեցաւ, և հիւրերը տեսան, որ մի պարան քաշուած էր առաստաղի մէկ ղլխից միւս ղլուխը, և այն ճարպիկ լարախաղացներից մէկը, որոնց համար այնքան հռչակուած էր Պոմպէյը, և որոնց սերունդները այսօր այնքան չնորհալից մի դիմաշնք են տալիս Աստէյի կամ Վաքսհալի հանդէսներին, այժմ ուղղակի նրանց ղլխի վերև պարացնում էր իր օդային և չափաւոր քայլերը։

Լարախաղացը, որ լոկ մի պարանով բաժանուած էր հիւրերի գլուխներից, և որ ամենաուժգին թռիչքներ էր գործում, ըստ երեւոյթին իջնելու համար դան-

գալին սահմաններուն վրայ, կարող էր սարսափ ազդել Մէդիէրի մի խումբ հանդիսատեսներին. բայց մեր պոմպէյեցի զուարճասէրները կարծես հրճուալից հետաքրքրութեամբ էին նայում այդ տեսարանին, և նոյն համեմատութեամբ, որ լարախաղացը ամենից մեծ դժուարութեան մէջ էր գտնւում, որ չընկնի իր ընտրած հիւրի գլխին, նոյն համեմատութեամբ հանդիսատեսները ծափահարում էին։ Նա սենատորին իջաք, մի մանուսոր կոմպլիմէնտ արեց ձեացնելով, որ պարանից վայր է ընկնում, և նորից բռնելով այն, ճիշդ այն վայրկեանին, երբ բոլոր խումբը մտածում էր, որ հետևյեցու գանդը նոյնպէս ջախջախուելու վտանգի մէջ էր գտնւում, որչափ այն բանաստեղծինը, որին արծիւը կրկայ էր կարծել։ Վերջապէս ի մեծ հանգստութիւն, դէթ Իօնէի, որ շատ սովոր չէր այդպիսի խաղերի, մարդը յանկարծ կանգ առաւ երբ դրսից լսուեցաւ մի երաժշտութեան ձայն։ Նա զարձեալ պարեց և աւելի ոգևորութեամբ. եղանակը փոխուեցաւ և պարողը նորից դադարեց. ա՛չ, այդ երաժշտութիւնը չը կարողացաւ փարատել այն հմայքը, որ կարծւում էր թէ տիրել է նրա վրայ։ Նա ներկայացնում էր մի մարդ, որը սարօրինակ մոլային հիւանդութեամբ տառապած էր պարել, և որին միայն մի մասնաւոր եղանակ կարող էր առողջացնել *)։ Վերջապէս կարծես երաժիշտը կարողացաւ չօչափել պահանջուած լարը. պարողը մէկ թռիչք գործեց, կախուեցաւ պարանից, իջաւ յատակի վրայ և աներևութացաւ։ Մէկ ապրուեստը այժմ տեղի տուաւ մի ուրիշի աւելի. և երաժիշտները, որոնք նստած էին դուրսը դարաստափի վրայ

*) Մի պար, որ այժմ էլ կայ Կամպանիայում։

այժմ սկսեցին նուագել մի փափուկ և մեղմ եղանակ. միևնոյն ժամանակ երգուեցան հետևեալ բառերը, որոնք մուղիկալի վերին աստիճանի մեղմութեան, և այն պատուարի պատճառով, որ գտնւում էր նրանց միջև, գրեթէ անորոշ էին։

ԽՆՋՈՑԻ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՄԵՂՄ ԼԻՆԻ

Յուշ, մեր մուղիկը ծագկունքի միջից լղում է բարև,
Պէպի ձեր սրտներ, ուրկից Բաքոսը վանած է արև.
Երբ որ հանդիպեց մատաղ աստուածը իր նիմֆ սիրուհուն,

Նա սովորացրեց Պանի սրբինդին այս երգը սահուն։
Եւ փափուկ ինչպէս գինու թարմ յօղեր,
Որոնք իջնում են խնջոյքի պիչեր
Զայնի երկնային և չինչ աղբիւրից, ով յարգի քընար,
Այժմ Թող հեղուի ճոխ գինեձօնը Վենուսի համար։

Թնդում է չեմորն երբ, գոռ չարքերը ի մարտ են պրոհում
Ոաղմին է վայել երաժշտութեան վսեմ որոտում.
Բայց վարդերի մէջ կամաց փսփսող քնքուշիկ չունչը
Իրենի նման գիւթիչ է գտնում հեղիկ մրմունջը։
Յամրաքայլ սահիր, ով իմ մեղմ մուղիկ,
Ինչպէս մի կընոջ չշունջն անուշիկ.
Թող ամեն լսող զգայ, որ դու ես այն ձայնն հեչտալից
Որ նա լսում է իր սիրած կնոջ գողարիկ չրմունքից։

Երգի վերջին մասին Իօնէի թշերը աւելի չիկնած

էին քան առաջ, և Գլոկուս կարողացել էր սեղանի տակից գողանալ նրա ձեռքը։

«Գեղեցիկ երգ է», ասաց Ֆաուլֆուսս պատրոնական եղանակով։

«Ա՛հ. եթէ դուք բարեհաճէիք մեզ պարտաւորացնել», մրմնջաց Պանուալի կինը։

«Կամենում էք, որ Ֆաուլֆուսս երգ է», հարցրեց խնջոյքի արքան, որ հէնց նոր հրամայել էր խմբին ամէն մի տաւի համար մէկ բաժակ։

«Կարծղ էք դեռ հարցնել», ասաց տիկինը մի կոմպլիմենտական նայուածք ձգելով բանաստեղծի կողմը։

Սալլուստ ճիակացրեց իր մատերը, և փոխանց այն տարուկի ականջին, որ մօտեցել էր նրա հրամանը լսելու. վերին անհետացաւ և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ, իր հետ բերելով մի քնար մի ճեպքում և միւսում մի մրտենու ճիւղ։

Վերին մօտեցաւ բանաստեղծին և խոր պլուխ տալով մօտեցրեց նրան քնարը։

«Աւձղ, ես չեմ կարող նուագել», ասաց բանաստեղծը։

«Ուրեմն դու պէտք է երգես մրտենու ճիւղով։ Դա մի յունական սովորութիւն է. Վիտիդ սիրում է յոյներին, ես սիրում եմ յոյներին, դու սիրում ես յոյներին, մենք բոլորս սիրում ենք յոյներին, և խօսքը մեր մէջ մնայ սա միակ սովորութիւնը չէ, որ մենք գողացել ենք նրանցից։ Ինչ և իցէ, ես ներմուծում եմ այս սովորութիւնը — ես, Թագաւորս. երգիր, հպատակ, երգիր»։

*) Այս երգը հայերէնի մէջ անթարգմանելի լինելու համար, չը թարգմանուեցաւ։

Ե. Թ.

Բանաստեղծը մի ամաչկոտութեամբ ժպտալով առաւ մրտենու ճիւղը, և մի կարճ նախերգանքից յետոյ երգեց հետեւեալը մի ախորժելի և մշակուած ձայնով։

(Ախտեղ երգուեցաւ մի երգ *)

Այս երգը, որ չատ յարմարուում էր պոմպէյցիների ուրախ և աչխոյժ երեւակայութեանը, ընդունուեցաւ մեծ ծափահարութեամբ, և այնին պնդեց, որ իր անուանակցին պակին այն մրտենու ճիւղով, որին ուղղուած էր նրա երգը։ Նրանք դիւրութեամբ ոլորեցին այդ ասը, և անմահ Ֆաուլֆուսը պսակուեցաւ ծափահարութեան, և Do triumphe-ների աղաղակների մէջ։ Երգը և քնարը այժմ պատեցին խմբի մէջ. մի նոր մրտենու ճիւղ տրուեցաւ, որը պտտելով կանգ էր առնում ամէն այն անձնաւորութեան ձեռքում, որին կարողանում էին հանգչել երգելու։

Արեգակը սկսեց թեքուել դէպի արեմուտք, թէև հանդիսականները չէին նկատում այդ, իրանց մտքի անեակում։ Աւետաւորը, որ լռնել էր, և ռազմիկը, որ պիտի վերադառնար Հերկուլանում, այժմ վեր կացան հեռանալու, և տալին հիւրերին ցրուելու նշանը։ «Մի րոպէ էլ համբերեցէք, իմ բարեկամներ», ասաց Վիտիդ. «եթէ ուզում էք այսքան չտուող հեռանալ, պէտք մատնակցեցէք, խնդրեմ, մեր վերջին խաղին»։

Այս ասելով նա մօտ կանչեց ծառաներից մէկին, և նրա ականջին մի բան ասաց. ծառան դուրս գնաց, և

*) Ըստ պլուտարքի, այնպէս է երեւում, որ մրտենու ճիւղը կամ պսակը կարգով չէր պատում, այլ անցնում էր մէկ բազմոցի առաջին մարդուց միւսի առաջին մարդուն, և յետոյ մէկ բազմոցի երկրորդ մարդուց միւսի երկրորդին և այլն։

չուռով վերադարձաւ բերելով մի փոքրիկ բաժակ, որ պարունակում էր առմներ, ուշադրութեամբ կնքուած և ըստ երևոյթին բոլորն էլ միանման։ Հիւրերից ամեն մէկը պիտի գնէր սրանցից մէկ հատ, վճարելով ամենափոքրիկ արծաթեայ դրամը. այս վճռակատաղի հաճոյքը (որ Օգոստոսի հնարածը և նրա գլխաւոր զուարճութիւնն էր) կատարում էր պարզևների անհատասարութեան և երբեմն էլ անյարմարութեան մէջ։ Այդ պարգևների արագութիւնը և քանակութիւնը նշանակուած էին առմների մէջ։ Բանաստեղծը թթուած երեսով քաշեց իր բանաստեղծութիւններից մի կոտր (ոչ մի բժիշկ նուազ չօժարութեամբ չէ ամել իր դեղը). մարդիկը քաշեց մի առուտ գաշոյն, որը առիթ եղաւ նոր սրախօսութիւնների, Հերկուլէսի և նրա աղեկատ չարաբերութեամբ. այրի Ֆուլվիան առաջաւ մի մեծ բաժակ. Ջուլիան մի ազամարդու ճարմանդ, և Լեպիդուս կանացի կեղծ պիտակների մի տուփ։ Ամենից չարմար վիճակը ընկաւ խազամոլ Կլոդիուսին, որը բարկութիւնից կարմրեց, երբ նրան ներկայացրին մի զույգ չինծու զառ, որոնցով խաղացողը ուզած թիւը կարող էր ձգել *)։ Բայց այս զանազան վիճակների դրած ուրախութեան վրայ մի տեսակ պաղութիւն եկաւ մի չարագուշակ նկատուած պատահարի պատճառով. Գլոկուս քաշեց ընծաների ամենից թանկագինը, որը յունական քանդակագործութեամբ բախտի մի փոքրիկ մարմարեայ արձան էր. երբ պերին տարաւ այդ յանձնելու նրան, անզգուշութեամբ վայր ձգեց, և արձանը փշրուեցաւ։

*) Չինծու զարդեր գտնում էին Պոմպէյում։ Առաքինութիւններից մի քանիսը կարող են նոր լինել. բայց տարակոյս չը կայ, որ բոլոր մոլութիւնները հին են։

Մի տարուս անցաւ ամբողջ խմբի միջից, և բոլորը միատեղ աղաղակեցին, որ առուածները հեռացնեն այդ չարագուշակ դէպքի ազդեցութիւնը։

Գլոկուս միայն, թէև նոյնչափ նախապաշարուած, որչափ միւսները, անհոգ էր երևում։

«Քազդրիկ նապոլիտանուհիս», փսփսաց նա Իօնէի ականջին, որը առաջել էր կտարուած մարմարի գոյնը, «ես ընդունում եմ նշանը։ Դա նշանակում է, որ չնորհելով քեզ լինճ, բախտը այլ ևս մի բան չունի լինճ տալու. նա կտարում է իր պատկերը, երբ նա լինճ արդէն օրհնել է քո պատկերով»։

Ի նկատի ունենալով հիւրերի լուսամտութիւնը, այդ պատահարի գործածած վատ տպաւորութիւնը զարմանալի կերպով աւելորդապաշտական պիտի թուար մեզ, եթէ այսօր էլ մենք չտեսնէինք, որ մի ափկին մելամազձոտ է գտնում խնջոյքի մէջ, երբ սեղանակից դուրս գալու ժամանակ տատանուելիս է լինում։ Սալլուստ փարատելու համար այդ մռայլը, պատկեց իր բաժակը ծաղիկներով և առաջարկեց իրանց հիւրընկալի կենացը։ Դրան հետևեց կայսեր կենացը. և յետոյ մի վերջին պինեճոն կատարելով և պատիւ Հերմէսի, որպես զի ախորժելի երազներ ուղարկէ նրանց, խումբը ցրուեց։

Պոմպէյի մէջ կառքեր և պատգարակներ շատ քիչ գործածական էին, մասամբ փողոցների անչափ նեղութեան, և մասամբ էլ քաղաքի պատշաճաւոր փոքրութեան պատճառով։ Հիւրերի մեծ մասը հագնելով իրանց առնդակները, որ նրանք հանել էին խնջոյքի սենեակի մէջ, և առնելով վերարկուները ոտքով դուրս եկան տնից. և նրանց հետևեցին իրանց գերիները։

Նույն միջոցին Գլոկուս տեսնելով որ Իօնէն հեռացաւ, պատեց դէպի այն ամրոցքի կողմը, որ առաջնորդում էր դէպի Ջուլիայի սենեակը. մի գերի նրան տարաւ մի սենեակ, որ նա դուռ վառառականի աղջկան արդէն նատած։

«Գլոկուս», ասաց նա, ցած նայելով, «ես տեսնում եմ, որ դու իրօք սիրում ես Իօնէին. նա իսկապէս գեղեցիկ է»։

«Ջուլիան բաւական գիւթիչ է արդար լինելու համար» պատասխանեց յոյնը։ «Այո, ես սիրում եմ Իօնէին և քեզ մաղթում եմ մէկ հոգի ինձ նման անկեղծ երկրպագու, քեզ պաշտող բոլոր երիտասարդների մէջ»։

«Ես առաւածներից խնդրում եմ այդ բանը։ Տես, Գլոկուս, այս մարգարիտները են այն ընծան, որ ես ուզում եմ տալ քո հարսին. Հերան առաղջութիւն պարգեւէ նրան, որպէս զի առաղջութեամբ գործածէ այդ»։

Այս ասելով, նա դրեց նրա ձեռքի մէջ մի տուփ, որի մէջ կար մի շարան բաւական խոշոր և թանկագին մարգարիտ։ Այնքան սովորական էր ամուսնացողների համար առանձ այն ընծաները, որ Գլոկուս մեծ վարանմունք չէր կարող ունենալ ընդունելու այդ մանեակը, թէև հպարտ սիրտը վճռեց իր մէջ, որ դրա փոխարէն եռապատիկ գնով մի ընծայ գարձնէ նրան։ Ջուլիան կարճ կարելով նրա չնորհակալութիւնները, գինի լցրեց մի վարդի բաժակի մէջ։

«Դուք չատ կենացներ խմեցիք իմ հօր տեսո», ասաց նա ժպտալով—«այժմ մէկն էլ ինձ տես խմեցէք։ Առողջութիւն և բարեբախտութիւն ձեր հարսին»։

Նա իր շրթունքները դպցրեց բաժակին և տուաւ Գլոկուսին։ Սովորական քաղաքավարութիւնը պահան-

ջում էր, որ Գլոկուս խմէ բոլոր դրա բովանդակութիւնը և նա այդպէս արեց, Ջուլիան չիմանալով թէ Նիդիան ինչ խարդախութիւն էր գործ դրել, պապղուն աչքերով նայում էր Գլոկուսին մինչդեռ նա պարպում էր բաժակը. թէև վհուկը ասել էր նրան, որ հետևանքը կարող էր անմիջական չը լինել, այնու ամենայնիւ նա բոլոր սրտով փափագում էր, որ վայրկենապար առաջ գար փոխոխութիւնը, և նպատա իր հրապոյրներին։ Նա յուսահատեցաւ երբ տեսաւ, որ Գլոկուս պաղութեամբ ցած դրեց բաժակը և խօսակցեց նրա հետ նոյն անցուդ բայց մեղմ եղանակով ինչպէս առաջ։ Եւ թէև, նա ուշացրեց նրան, որքան որ պատշաճութեամբ կարող էր անել, բայց ոչ մի տարբերութիւն չը տեսնուեցաւ նրա ձևի մէջ։

«Բայց վաղը», մտածեց Ջուլիան, դուրս գալով իր յուսահատութիւնից և վերստանալով իր զուարթութիւնը, —«վաղը, ասող Գլոկուսին»։

Իսկապէս որ ասող նրան։

Գլուխ Դ.

«Պատմութիւնը մի լոպէ կանգ է առնում մի միջանկեալ դէպքի առջև։

Անհանդիստ և անձկալից, Ապէկիդէս անցկացրեց օրուայ մեծ մասը քաղաքի մերձակայքի ամենից առանձնացած ուղիների մէջ։ Սրեգակը կամաց կամաց մայր էր մտնում, երբ նա կանգ առաւ Սարնուսի մի մենաւոր տուն, նախ քան մանելը վերլուծեան և կարողութեան այն լիշատակարանների մէջ։ Միայն անտառի և որթերի ճիւղերի արանքից կարելի էր լինում տեսնել ապիտակ և վայելուն քաղաքը, որից մինչև այդ հեռաւորութիւնը

չէր դալիս ոչ մի ձայն, կամ «մարդկանց զրաղմունքի մասնչը»։ Դալար ափերի վրայ սողում էին մողէսը և մարախը, և տեղ տեղ թփերի միջից յանկարծ լսում էր մի մենաւոր թռչունի երգը, որը նոյնչափ յանկարծ լռում էր։ Մի խոր լռութիւն էր տիրում ամեն կողմ, բայց դա չէր գիշերուայ լռութիւնը. օդի մէջ կար ցերեկուայ թարմութեան և կենդանութեան չունչը. խաղը չարժւում էր միջատների անց ու դարձով. և դիմացի ելերքի վրայ սլանակ և չնորհալեզ կապելլան արածելով անցնում էր խոտերի միջից, և կանգ էր առնում ջրի մօտ իր ծարաւը յագեցնելու։

Մինչդեռ Ալէկիդէս մտախոհ կանգնած նայում էր ջրերին, նա լսեց իրանից ոչ հեռու մի չան ցած հաչոցը։

«Լռիր, խեղճ բարեկամ», ասաց մերձակայ մի ձայն. «օտարականի քայլերը վտանգ չեն բերում քո տիրոջ համար»։ Նորահաւատը ճանաչեց այդ ձայնը, և յետ դառնալով նա ճանաչեց այն ծեր խորհրդատու մարդուն, որին տեսել էր նազովրեցիների ժողովում։

Ծերունին նստած էր քարի մի բեկորի վրայ ծածկուած հնացած մանուռով. նրա կողքին դրուած էին նրա գաւազանը և պարկը. նրա ոտքերի մօտ պառկած էր մի փոքրիկ ըղդում չուն,—նրա բազմաթիւ վտանգաւոր և տաբօրինակ ճանապարհորդութիւնների ընկերակիցը։

Ծերունու երեսը ապեղանու աղեցութիւն դործել նորահաւատի վրդովուած հոդու վրայ. նա մօտեցաւ, և հայցելով նրա օրհնութիւնը՝ նստեց նրա մօտ։

«Դու այնպէս պատրաստուած ես, որպէս թէ ուզում լինէիր ճանապարհորդել, հայրիկ», ասաց նա. «ուզում ես թողնել մեզ»։

«Որդիս», պատասխանեց ծերունին, «իմ աշխարհային օրերը վախճանուած են. ես այդ օրերը անց եմ կացնում այնպէս, ինչպէս վայել է ինձ, այսինքն ճանապարհորդելով մի տեղից միւսը, մխիթարելով նրանց, որոնց Աստուած հաւաքել է իր անունով, և յայտարարելով Նրա Որդու փառքը ինչպէս վկայուած է Նրա ծառայների։

«Ես լսել եմ, որ դու տեսել ես Ջրհատոսի երեսը»։

«Եւ այդ երեսը ինձ կենդանութիւն պարգևեց։ Իմացիր, երիտասարդ հաւատացեալ, որ ես եմ այն մարդը, որի մասին դու կարդում ես առաքեալի պատմութեան մէջ։ Հեռաւոր Իւլատատնում և Նային քաղաքում ապրում էր մի այրի կին, հոգով խոնարհ և արտաք. արտվհան կեանքի բոլոր կապերից մի որդի միայն մնացել էր նրան։ Եւ նա սիրում էր իր որդուն մի մեծ մաղձիկ սիրով, որովհետև այդ զաւակը կրում էր սիրուած մեհեալի նմանութիւնը։ Եւ որդին մեռաւ։ Այն եղկելը, որի վրայ լինուած էր այրին, կոտրուեցաւ, և իւղը ցամաքեց նրա կժի մէջ։ Ննջեցեալին տանում էին իր գաղաղի վրայ, և քաղաքի դրան մօտ, ուր ամբոխը հաւաքուած էր, սուգի ձայները լսեցին, որովհետև Աստուծոյ որդին անցնում էր։ Մեռեալի մայրը, որ հետևում էր գաղաղին, լալիս էր, բայց ոչ աղմկալից ձայներով, սակայն ով որ նայում էր նրան, տեսնում էր, որ նրա սիրտը ջախջախուած էր։ Եւ Տէրը խղճայ նրա վրայ, և դիպչելով գաղաղին ասաց, «ԱՍՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ԵԼԻՐ»։ Եւ մեռած մարդը վերկացաւ և նայեց Տիրոջ երեսին։ Ո՜հ, այդ անդորը և մեծափառ ձակատը, այդ անապատելի ժպիտը, այդ հոգեմաշ և արտասուից երեսը, լուսաւորուած Աստուծոյ գթասրտութեամբ, հալածեց դեղեցկութեան տատերները։ Ես վեր կացայ, ես խօսեցի, ես կենդանի էի և իմ մօր որդին եմ, ես եմ վերակեն-

օրերը վտբրաթիւ են. ես այդ օրերը անց եմ կացնում այնպէս, ինչպէս վայել է ինձ, այսինքն ճանապարհորդելով մի տեղից միւսը, մխիթարելով նրանց, որոնց Աստուած հաւաքել է իր անունով, և յայտարարելով Նրա Որդու փառքը ինչպէս վկայուած է Նրա ծառայների։

«Ես լսել եմ, որ դու տեսել ես Ջրհատոսի երեսը»։

«Եւ այդ երեսը ինձ կենդանութիւն պարգևեց։ Իմացիր, երիտասարդ հաւատացեալ, որ ես եմ այն մարդը, որի մասին դու կարդում ես առաքեալի պատմութեան մէջ։ Հեռաւոր Իւլատատնում և Նային քաղաքում ապրում էր մի այրի կին, հոգով խոնարհ և արտաք. արտվհան կեանքի բոլոր կապերից մի որդի միայն մնացել էր նրան։ Եւ նա սիրում էր իր որդուն մի մեծ մաղձիկ սիրով, որովհետև այդ զաւակը կրում էր սիրուած մեհեալի նմանութիւնը։ Եւ որդին մեռաւ։ Այն եղկելը, որի վրայ լինուած էր այրին, կոտրուեցաւ, և իւղը ցամաքեց նրա կժի մէջ։ Ննջեցեալին տանում էին իր գաղաղի վրայ, և քաղաքի դրան մօտ, ուր ամբոխը հաւաքուած էր, սուգի ձայները լսեցին, որովհետև Աստուծոյ որդին անցնում էր։ Մեռեալի մայրը, որ հետևում էր գաղաղին, լալիս էր, բայց ոչ աղմկալից ձայներով, սակայն ով որ նայում էր նրան, տեսնում էր, որ նրա սիրտը ջախջախուած էր։ Եւ Տէրը խղճայ նրա վրայ, և դիպչելով գաղաղին ասաց, «ԱՍՈՒՄ ԵՄ ՔԵԶ, ԵԼԻՐ»։ Եւ մեռած մարդը վերկացաւ և նայեց Տիրոջ երեսին։ Ո՜հ, այդ անդորը և մեծափառ ձակատը, այդ անապատելի ժպիտը, այդ հոգեմաշ և արտասուից երեսը, լուսաւորուած Աստուծոյ գթասրտութեամբ, հալածեց դեղեցկութեան տատերները։ Ես վեր կացայ, ես խօսեցի, ես կենդանի էի և իմ մօր որդին եմ, ես եմ վերակեն-

պանացած մեռելը։ Ժողովուրդը ազաղակում էր, դամբանական եղջիւրները ցնծութեամբ հնչեցին. և լուեցաւ մի ազաղակ, «Աստուած այցելել է իր ժողովրդին»։ Ես չէի լսում նրանց, ես ոչինչ չէի ղրում, չէի տեսնում փրկչի երեսից զատ»։

Ծերունին լռեց, մեծապէս յուզուած. և երկաւարդը զգաց, որ իր արիւնը սաղում է և իր մազերը ցցւում են։ Նա գտնւում էր մի մարդու առջև, որ տեսել էր մահուան գաղտնիքը։

«Մինչև այդ ժամանակ», վերսկսեց այրու որդին, «ես էլ ուրիշի նման էի եղել. անհոգ, բայց ոչ մոլի. անուշապիր, միայն ոչ աշխարհի և սիրով վերաբերութեամբ. ոչ, ես մինչև անգամ հակուած էի դէպի աշխարհասէր սաղուկեցիների հաւատքը։ Բայց յարութիւն առնելով մեռելներից, անաւոր և ամպի երազներից, որոնց այս լեզուն երբէք չը պիտի յանդգնի լայնանել, վերակոչուելով աշխարհ պատմելու Երկնից զօրութիւնը, նորից մահկանացու դառնալով իբրև վկայ անմահութեան՝ ես մի նոր զոյութիւն սուացայ մերկութիւնից։ Ո՛հ կործանուած, ո՛հ չքացած Երուսաղէմ. նրան, որից սաացել էի իմ կեանքը, ես տեսայ դատապարտուած սոսկալի և չարաչար մահուան։ Հեռու, հեռու ամբոխի միջից ես տեսայ այն լոյսը, որ իջել և չոզում էր նրա խաչի վերև. ես զառանցում էի, ես սպառնում էի, բայց ոչ ոք ինձ ականջ չէր դնում. ես կորսուեցայ հազարաւորների յորձանքի և մռնչիւնի մէջ։ Բայց մինչև անգամ այդ ժամանակ, ինձ այնպէս թուաց, որ Որդուն Մարդոյ լայնալուռ աչքը գուռ էր ինձ. նրա չրթունքը ժպտաց, ինչպէս այն րոպէում երբ նա յաղթեց մահուան. դա անդորրութիւն պարգեւեց ինձ և ես հանգստացայ։ Նա որ փչրել

էր գերեզմանը մի ուրիշի համար, արդեօք ինչ էր գերեզմանը նրա համար։ Աւետակը չէր փայլեց նրա գուռնաու և տղոր դիմագծերի վրայ և չետոյ անհետացաւ։ Խաւարը պատեց աշխարհը. թէ որքան տեւեց այդ խաւարը ես չը գիտեմ։ Մի լարձրաձայն աղաղակ լսուեցաւ մթութեան միջից—մի սար և դառն աղաղակ—և ամեն բան լռեց։

Բայց ով կարող է պատմել այդ դիշերուայ սարսափները։ Ես չորսում էի քաղաքի մէջ. երկիրը օրօրուեցաւ և տները դողացին մինչև իրանց հիմքը. կենդանիները փախել էին փողոցներից բայց ոչ մեռելները. ես տեսնում էի, սահում անցնում էին խաւարի միջից աղօտ և մեռելագէմ ուրուականները, գերեզմանի պատանների մէջ. զարհուրանք և թշուառութիւն և ազգաբարութիւն կար դրոշմուած նրանց անշարժ չրթունքների և անլոյս աչքերի մէջ. նրանք արագացնում էին իմ կողմից, մինչդեռ ես գնում էի, և նրանք լսում էին իրանց նախատածքը իմ վրայ—ես եղել էի նրանց եղբայրը. և նրանք խոնարհեցրին իրանց գլուխները ճանաչելով ինձ. նրանք չարութիւն էին տեսել կենդանիներին ասելու, որ մեռածները կարող են չարութիւն տեսնել։

Դարձեալ ծերունին լռեց, և երբ նորից վերսկսեց նրա ձայնը՝ տեսիլի խաղաղ էր։

Այդ դիշերուանից ես Թողեցի աշխարհի մէջ ամեն բան նրա ծառայութիւնից զատ։ Մի քարոզիչ և մի ուխտաւոր դարձած՝ ես անցել եմ աշխարհի ամենահեռաւոր ծայրերից հրատարակելով նրա Աստուածութիւնը և նորահաւատներ ժողովելով նրա փարախի մէջ։ Ես գալիս եմ քամու պէս, և քամու պէս հեռանում, չանելով, ինչպէս չանում է քամին, այն սերմերը, որոնք հարստացնում են աշխարհը։

«Որդիս, այս աշխարհի վրայ մենք այլ ևս չենք տեսնուի։ Մի մոռանար այս ժամը, – ինչ են աշխարհիս պատարճուքիւնները և փառքը։ Ինչպէս չորանում է ծրագը, նոյնպէս փայլում է կեանքը, լոկ մի ժամ. բայց հոգու լոյսը այն ասպղն է, որ վառւում է յաւիտեան յաւիտենից անապատման տարածութեան սրտի մէջ»։

Այդ ժամանակ նրանց խօսակցութիւնը դարձաւ անմահութեան ընդհանուր և վեհ վարդապետութիւնների վրայ. այդ խօսակցութիւնը ամրացնում էր երիտասարդի հոգին, որը դեռ կրում էր իր վրայ սուեերները և խոնաւութիւնը այն կրծնական վիրապի, որից նա դեռ նոր էր հեռացել. դա նմանում էր երկնքի մաքուր օդին, որ վերջապէս զգում է աղատուած բանտարկեալի երեսին։ Մի զօրեղ և որոշ տարբերութիւն կար ծերունու և Օլինթուսի քրիստոնէութեան մէջ. առաջինինը ունէր մեղմ, ունէր փափուկ, ունէր ասուածային էր։ Օլինթուսի բերած հերետութիւնը մի բան ունէր իր մէջ, որ կատաղի էր և նեղմիտ. դա անհրաժեշտ էր այն դերին, որ նա որոշել էր խաղալու. դրա մէջ կար ունէր մի մարդկային անվեհերութիւնը քան մի սուրբի բարեպաշտութիւնը։ Դա զրգում էր, դա բորբոքում էր, դա ամրացնում էր ունէր քան մեղմացնում և յաղթահարում։ Բայց այդ աստուածային ծերունու ամբողջ սիրտը ողողուած էր սիրոյ մէջ. Աստուածութեան ժպիտը այրել տարել էր նրա բնաւորութեանց աչխարհասիրութեան և կոպիտ կրքերի խմորը, և հերոսի էնէրգիայի հետ նրա մէջ թողել էր մի երեխայի ամբողջ հեղութիւնը։

«Եւ այժմ», ասաց նա, վերկենալով վերջապէս, երբ արևի վերջին ճառագայթները անհետացան արևմտա-

քում». այժմ երևոյթան զով վերջնալոյսի ժամանակ, ես կը չարունակեմ իմ ճանապարհը դէպի կայսերական Հռոմ։ Այնտեղ ապրում են մի քանի սուրբ մարդիկ, որոնք ինձ նման տեսել են Քրիստոսի երեսը. ես ուզում եմ տեսնել նրանց նախ քան մեռնելս»։

«Բայց դիշերը ցուրտ է չէր ծերացած ոսկորների համար, ճանապարհը հեռու է և աւազակներով լի, հայր իմ. հանգստացէք մինչև վաղը»։

«Բարեկիրթ զաւակ, ինչ կայ այս պարկի մէջ, որ վարոզանայ փորձել աւազակին։ Իսկ գալով դիշերուան և միայնակութեան, դրանք են այն սանդուխքը, որի չորքը հաւաքուած են հրեշտակները, և որի սորև իմ հոգիս կարող է երազել Աստուծոյ վրայ։ Ո՛հ, ոչ ոք չէ կարող հասկանալ թէ ինչ է զգում ուխտաւորը մինչդեռ նա քայլում է իր սրբազան ճանապարհով։ Ազատ ամեն երկիւղից և անվախ ամեն վտանգից —որովհետև Աստուած նրա հետ է. նա լսում է, որ քամին աւետիս է մրմնջում նրա ականջին. անտառները մրմնջում են Ամենակարողի թեների հովանու տակ. աստղերը երկնքի զրուած պատգամներն են, սիրոյ նշանները, և անմահութեան վկանները։ Գիշերը ուխտաւորի ցերեկն է»։ Այս խօսքերով ծերունին Ապէկիդէսին սեղմեց իր կրծքին, և առնելով իր պարկը և գաւազանը, կամաց քայլերով և ցած ձգուած աչքերով նա չարունակեց իր ճանապարհը. և չունը ուրախ ուրախ թռչկոտում էր նրա առաջ։

Նրա հաւատը կանգնեց և նայեց նրա կորացած կազմին, մինչև ծառերը ծածկեցին նրան իր աչքերից. և լուռ, երբ աստղերը դուրս եկան նա մի սարսուռ զգալով ուշքի եկաւ իր մտատոչ զրութիւնից և լիշեց Օլինթուսի հետ արած իր ժամադրութիւնը։

Գլուխ 7.

Սիրագեղը։ Նրա ազգակցությունը։

Երբ Գլոկուս հասաւ իր տունը, նա տեսաւ, որ Նիպիան նստած է պարսիկի պորտիկոյի տակ։ Իրօք, կոյր աղջիկը եկել էր նրա տունը այն յոյսով, որ կարելի է նա չուտով վերադառնայ տուն. անձկալից, երկիւղալից և կանխազգաց՝ նա վճռեց առաջին պատեհութիւնը ձեռքից չը տալ սիրագեղը նրան խմցնելու համար և միևնոյն ժամանակ նա պրեթէ վախագում էր, որ այդ պատեհութիւնը ուշանար։

Այդ սարսափելի կերպով ալրուող կացութեան մէջ, բաբախող սրտով և կարմրաւառ թշերով՝ Նիպիան սպասում էր, որ կարելի է Գլոկուս դիշերուանից առաջ վերադառնայ։ Նա մտաւ պորտիկոյից ձիշդ այն րոպէին, երբ առաջին ասողը սկսեց երևալ, և երկինքը վերևում հագել էր իր ծիրանի զգեստը։

«Հօ, զաւակս, ինձ ես սպասում»։

«Ոչ, ես ծաղիկները ջրեցի, և այնտեղ մի քիչ նստեցի յոգնութիւնս առնելու»։

«Շատ է», ասաց Գլոկուս նստելով սենեակի տակ մի նստարանի վրայ։

«Նստ»։

«Խնդրեմ կանչիր Պաւլոսին։ Խմածս գինին չորացնում է ինձ, և ես մի զովացուցիչ բան եմ ուզում խմելու»։

Ահա լանկարծ և անսպասելի կերպով Նիպիայի սրտում պատեհութիւնը ներկայացաւ. Գլոկուս ինքը, իր ազատ կամքով, նրան տալիս էր առիթը։ Նիպիան սկսեց չունչ առնել— «Ես ինքս կը պատրաստեմ ձեզ համար»։

ասաց նա, այն ամառուայ ըմպելին, որ Իօնէն սիրում է—մեղրը և թոյլ գինին ձիւնի մէջ պաղացրած»։

«Շնորհակալ եմ», ասաց Գլոկուս։ «Եթէ Իօնէն սիրում է այդ, բաւական է. թոյն էլ լինի՝ ես հաճութեամբ կը խմեմ»։

Նիպիան խոժռեց իր կերպարանքը, և յետոյ ժըպտաց. նա հեռացաւ, և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ իր ձեռքում բռնած մի լի բաժակ։ Արդեօք ինչ չէր տայ Նիպիան, մեկ ժամուայ չափ աչքի լոյս ունենալու համար, որպէս զի կարողանայ տեսնել, որ իր յոյսերը հաստատում և արդիւնք են ունենում.—որպէս զի կարողանար տեսնել երևակայուած սիրոյ արշալոյսը. որպէս զի կարողանար երկրպագել ահեղ քան պարսկական պաշտօղութեան այն արեգակի ծագումը, որը, նրա դիւրահաւատ հոգու կարծիքով պիտի փարատէր նրա սարսափելի դիշերը։ Շատ սարքեր էին կոյր աղջիկ յուզմունքները, մինչդեռ նա կանգնած էր այդ ժամին և այդտեղ ունայնամիտ պոմպէյցի կոյր յուզմունքներից, մի նոյնանման անորոշութեան րոպէում։ Վերջինիս մէջ ինչ խեղճ և անուշ կրքեր էին հաւաքուած, և այն յանդուգն ամբողջութիւնը կազմած. ինչ վսեմորոգի նահանձ, ինչ սեռի վրէժխնդրութիւն, ինչ չնչին յաղթութեան ակնկալութիւններ հալածհալածել էին սարերքը այն զգացմունքի, որին նա պատուել էր սէր անունով։ Բայց Թեսալուհու վայրենի սրտի մէջ ամենը մաքուր, անզուսպ, անխոխոջ կրքք էր.—թէև սխալական, անկանացի, խելագար, բայց չը կեղտոտուած որ և է սորնաքարշ զգացման սարրով։ Ալ սիրով, նոյնպէս ինչպէս կեանքով՝ ինչպէս կարող էր նա ձեռքից տալ մի պատահութիւն, որ նրան խոստանում էր փոխադարձ սէր»։

Նա յիշուեցաւ պատին, որպէս ղի վայր չընկնէ, և նրա երեսը, որ նախ այնքան չիկնած էր, այժմ սպիտակ էր ինչպէս ձիւն, իր քնքոյշ ձեռքերը ջղաձգապէս կծկած մխիթարից, իր շրթունքները լեռ բացած, իր աչքերը գետին ճգած, նա սպասում էր Գլոկուսի առելիք բառերին։

Գլոկուս բաժակը դրել էր իր շրթունքներին, նա հաղիւ լսել էր դրա պարունակութիւնն մի չորրորդ մասը, երբ նրա աչքերը յանկարծ ընկան Նիպիայի երեսին. այնպիսի ուժով նրա ուշադրութիւնը գրաւուեցաւ այդ դէմքի վոխոխութեամբ, նրա բուռն տառապալից և տարօրինակ արտայայտութեամբ, որ նա խոյն կանգ առաւ և դեռ բաժակը պահելով իր շրթունքների մօտ, գոչեց.—

«Ի՞նչ կայ Նիպիա, Նիպիա, դու հիւանդ ես կամ մի ցաւ ունես։ Ոչ, քո երեսդ խօսում է քո վոխարէն։ Ի՞նչ է պատահել իմ խեղճ զաւակիս»։ Մինչդեռ նա խօսում էր, նա ցած դրեց բաժակը և վերկացաւ մօտենալու նրան, երբ մի յանկարծակի ցաւ սառուցեալ նետի նման ծակեց նրա սիրտը, և դրան հետևեց ուղեղի մի վայրենի և պատուղ չիմաթութիւն։ Գետինը կարծես վախչում էր նրա տակից, նրա ոտքերը կարծես օդի մէջ էին. մի հզօր և չնաչխարհիկ ուրախութիւն իջաւ նրա հոգու վրայ, նա չափազանց երջանիկ էր զգում այս աշխարհում ծնելու համար. նա անհնչում էր մի զոյգ թևեր ունենալ, ա՛յ, նա իր նեբկալ զրութեան անհուն հրճուանքի մէջ երևակայում էր, որ արդէն ունի այդ թևերը։ Նրա կոկորդից ակամայ պոկեց մի բարձրաձայն և թրթռուն ծիծաղ։ Նա իր ձեռքերով ծափ էր զարկում, թռչկոտում էր. նա նմանում էր մի նեբշնչուած էգ պլեթոնի։ Նոյն-

պէս յանկարծ անհետացաւ, թէև մասամբ, այս զերբնական ցնծութիւնը, ինչպէս եկել էր։ Նա այժմ զգաց, որ արիւնը բարձր աղմուկով և արագութեամբ վազում էր իր երակների մէջ. դա կարծես ուշչում էր, ցնծում էր, ոստոստում էր ինչպէս մի հոսանք, որ կտրել է իր ամբարտակները և նետուում է դէպի ովկիանոս։ Դա բարախում էր նրա ականջների մէջ մի որոտուն աղմուկով. դա բարձրանում էր նրա ճակատը. և նա զգում էր, որ իր քունքերի երակները երկարանում և ուշչում են որպէս թէ այլ ևս չեն կարողանում պարունակել իրանց մէջ այդ ուժգին և յորգացած հոսանքը։ Յետոյ մի սաստիկ մթութիւն պատեց նրա աչքերը. մթութիւն, բայց ոչ կատարեալ. որովհետև ազօտ առուերների միջից նա տեսնում էր դիմացի պատը, որը կարծես վազում էր, և նրա վրայ նկարուած պատկերները կարծես ուրուականների նման սողում և չարժուում էին։ Ինչ որ ամենից աւելի զարմանալի էր, նա չէր զգում, որ ինքը հիւանդ է. նա չէր տարտամում կամ ընկճուում այդ անհաւատալի խելագարութեան ներքև, որ հատաքուում էր նրա գլխին։ Այդ զգացման նորութիւնը պարզ և վայելուն էր թուում. նա այնպէս էր զգում թէ մի աւելի երկտասարդ աւազութիւն մտել էր նրա կազմուածքի մէջ։ Նա սառնում էր դէպի խելագարութիւն և ինքն էլ չէր զգում այդ բանը։

Նիպիան չէր պատասխանել նրա առաջին հարցին. նա չէր կարողացել պատասխանել. բայց Գլոկուսի վայրենի և տարտամելի ծիծաղը հանել էր նրան այդ անձկալից սպասողական դրութիւնից. նա չէր կարողանում տեսնել Գլոկուսի կատաղի չարժումները. նա չէր կարողանում նկատել նրա անհատատ և դղրդոջուն քայլերը,

մինչեւ լոյնը անդիսակցաբար այս ու այն կողմն էր գնում. բայց նա լսում էր այն անկապ, անմիտ և խելագարութեան խօսքերը, որը դուրս էին թափւում նրա շրթունքներից։ Նիփիան սարսափեց և ահաբեկուեցաւ. նա վազեց Գլոկուսի մօտ և խարխափելով գտաւ նրա ծնկները. և լուռ գետնին ընկնելով նա գրկեց նրա ոտքերը և ահից ու յուզմունքից սկսեց արտասուել։

«Ո՛հ, խօսիր ինձ հետ, խօսիր, արդեօք չե՞ս ատում ինձ խօսիր, խօսիր»։

«Վախ է պատճառ տուողին, ինչ չքնաղ երկիր է այս Սիպրոսը։ Հե, ինչպէս նրանք լցնում են մեզ գինիով փախարէն արեան. այժմ նրանք բանում են այն փառէնի երակները ցոյց տալու, թէ ինչպէս նեղսիր հոսանքը պղպջում և պսպղում է։ Ախտեղ եկ, դու զուարթ հին աստուած, դու հեծնում ես ձիթի վրայ, հա. ինչ երկար մեռաքանչ մազեր ունի նա. նա արժէ բոլոր պարթեւների ձիերին։ Բայց մէկ խօսք, խնդրեմ, այս գինով չափազանց ուժեղ է մեր մահկանացուներիս համար։ Ո՛հ, զեղեցիկ. ճիւղերը անչարժ են. անտառի դալար ալիքները բռնել են Զեփիւռին և խեղդել են նրան։ Ոչ մի չունչ չէ չարժում տերեւները. ես տեսնում եմ, որ Երազները ծալած թեւերով նիրհել են անչարժ կնճռոտ վրայ. և ես նայում եմ ամէն հեռուն, և ես տեսնում եմ մի կապոյտ վսակ վայրում է լուռ լուսնի մէջ. մի աղբիւր—մի աղբիւր է դա, որ այդպէս ցասկում է օդի մէջ։ Ա՛հ, իմ աղբիւր, դու չես կարող հանգցնել իմ յուհական արեգակի ճառագայթները, որքան էլ դու աչխատես քո ճապուկ և արծաթանման թեւերով։ Եւ այժմ, այն ինչ կնոջ պատկեր է, որ սահում է ճիւղերի միջից. նա սահում է լուսնի ճառագայթի նման. նորա գլխին դրուած է կաղնու ճիւղերից հիւսուած մի պսակ։ Նրա ձեռքում կայ մի վազ, որից թափւում է վարդագոյն փոքրիկ խեցիներ և չոչոչուն ջուր։ Ո՛հ, նայիր այդ երեսին։ Դրա նմանը երբէք սրանից առաջ տեսնուած չէ։ Տե՛ս, այժմ մենք միայնակ ենք. միայն նա և ես այս լայնատարած անտառում։ Ոչ մի ժպիտ չը կայ նրա շրթունքների վրայ. նա չարժւում է. նա լուրջ է և քաղցրապէս տրտում։ Հա. փախիր դա մի նենգիայ է. դա վայրենի լուռնահարանների մէկն է. ով որ տեսնէ նրան կը խենթանայ—փախիր։ Տե՛ս, նա դուռ ինձ»։

«Ո՛հ, Գլոկուս, Գլոկուս, ասաց Նիփիան, ինձ չես ճանաչում։ Մի զառանցիր այդպէս եթէ ոչ դու կը սպանես ինձ մէկ բառով»։

Այժմ կարծես մի նոր փափխափթիւն եկաւ տարտարախա աթենացու խանդարուած և անհերքելի մարքի վրայ։ Նա իր ձեռքը գրեց Նիփիայի մեռաքանման մազերի վրայ. նա չոլեց նրա պիտակները. նա մտապրուժամբ նայեց նրա երեսին, և լսուղ, քանի որ նրա մազերի կտրտուած չղթայի մէջ դեռ կային մի երկու չը բաժանուած օղակներ, Նիփիայի կերպարանքը նրան վերադարձրեց Իօնէին. և այդ վերադարձիւնը աւելի այժ տուաւ նրա խելայեղութեանը, որը այժմ գտնուում էր կրկի իշխանութեան տակ և կրում էր նրա գոյնը։ Նորից անկապ բառերը դուրս թափուեցան նրա բերանից։

Երդւում եմ Վենուսով, Դիանայով և Հերայով, որ թէև այժմ ես կրում եմ ամբողջ աշխարհը իմ ուսերի վրայ, ինչպէս իմ հայրենակից Հերկուլեսը (ա՛հ, ախմաթ Հեռմ, ով որ իսկապէս մեծ է, նա յաւետեսութիւնից է դուրս եկել. վա՛հ, դուք աստուած չէիք ունենայ, եթէ մենք

չը լինէինք)—կրկնում եմ, ինչպէս իմ հայրենակից Հերկուլէսը կրում էր լինճանից առաջ, բայց ես այդ աշխարհը կը ձգեմ քաոսի մէջ Իօնէի մէկ ժպիտի համար։ Ո՛չ, չքնաղ—պաշտելի», և նա աւելացրեց անմիարապրելի մի խանդակաթ և տխուր ձայնով, «դու լինճ չես սիրում։ Դու քաղցրութեամբ չես վարուում լինճ հետ։ Եգիպտացին զրպարտել է լինճ քեզ մօտ. դու չը պիտես լինչ ժամեր եմ անց կացրել քո պատուհանի տակ. դու չը պիտես լինչպէս ես հսկել եմ աստղերի վրայ, մտածելով որ դու, իմ արեգակս, կը ծագես վերջապէս,—և դու լինճ չես սիրում, դու լքանում ես լինճ։ Ո՛չ, դեռ մի թողնիր լինճ։ Ես զգում եմ, որ իմ կեանքը երկար չի լինի. դեռ մօտ տուր լինճ մինչև վերջը նայել քո երեսին։ Ես գալիս եմ քո հայրերի չքնաղ երկրից. իմ ոտքս դիպել է Ֆիլէի բարձունքներին. ես ժողովել եմ յակինթ և վարդ Իլիսոսի ձիթենիների մէջ։ Դու չը պէտք է լքանես լինճ, որովհետև քո հայրերը եղբայրներ էին իմ հայրերի հետ։ Ես լինճ ասում են, որ այս երկիրը չքնաղ է, և այս կլիմաները անդորր, բայց ես քեզ կը տանեմ լինճ հետ—Հօ, ան՛ արարած, ինչու՞ ես ամպն նման բարձրանում իմ և իմ սեփականութեան միջև։ Մահը անդորր սարսափով նայել է քո ճակատի վրայ. քո չրթունքի վրայ կայ այն ժպիտը, որ սպասնում է։ Քո անունը Օքտա է. բայց աշխարհի վրայ մարդիկ քեզ կոչում են Արբակ։ Տես, ես ճանաչում եմ քեզ. վախիր, մեռի տուեր, քո կախարդութիւնները ազդեցութիւն չունին»։

«Վլոկնա, Վլոկնա», մրմնջաց Նիլէիան, բայց թողնելով նրա ծնկները և իր սարսափի անչափութեան, խղճահարութեան և ցաւի մէջ ուշաթափ ընկաւ գետնի վրայ։

«Ո՞վ է կոչում լինճ», ասաց նա բարձրաձայն։ Իօնէէ է, նա է. տանում են նրան. մենք կազատենք նրան. ձեր է իմ դաշոյնը։ Չա. այստեղ է. գալիս եմ, Իօնէ, քեզ ազատելու, գալիս եմ գալիս եմ»։

Այսպէս ասելով, աթենացին մէկ թռիչք տրծնց և դուրս ելաւ պարտիկօլից. նա անցաւ տան միջից. և դուրս վազեց արագ բայց երերուն քայլերով. և աստղերի լոյսով լուսաւորուած փողոցներից երթալիս նա բարձրաձայն խօսում էր ինքն իրան։ Ժանտ հեզուկը կրակի նման վառւում էր նրա երակների մէջ. նրա ապրեցութիւնը, կարելի է, աւելի չնչաւորական էր եղել այն դիտու պատճառով, որ նա խմել էր առաջուց։ Դիչերուայ հարբեցողների անկարգութիւնները տեսնելու սովոր քաղաքացիք, ժպիտներով և աչքի նշաններով ճանապարհ էին բանում նրա դեղնկոտ քայլերի առջև. նրանք բնականաբար կարծում էին, որ նա գտնւում է Բրօմիական աստուծոյ ապրեցութեան տակ, որին զուր տեղ չէին երկրպագում Պոմպէյի մէջ. բայց նրանք որ երկու անգամ նայում էին նրա երեսին ցնցւում էին մի անանուն երկիւղով, և ժպիտը թոռոմում էր նրանց չրթունքների վրայ։ Նա անցաւ աւելի բազմամարդ փողոցներով, և մեքենայաբար չարունակելով իր ճանապարհը դէպի Իօնէի տունը նա անցաւ մի աւելի դասարկ փողոցից, և այժմ մտաւ Կիրէէի այն թաղուրը անտառը, ուր Ապէկիդէս տեսակցել էր Օլինթուսի հետ։

Զ.

Զանազան դերակատարներ համախմբուում են։ Այն գեաերը, որ քսա երևոյթին, հոսում էին իրարից հեռու, այժմ թափուում են մեկնայն վիհի մէջ։

Անհամբեր լինելով լսելու թէ արդեօք Զուլիան ուսած էր չարաթոյն հեղուկը Գլոկուսին, և թէ ինչ էր եղել դրա հետևանքը, Արբակ իրիկունը վճռեց գնալ Վիոմէդի տունը և բաւարարութիւն տալ իր մտաւոր անհանգստութեանը։ Ինչպէս առաջ ասել եմ, այդ ժամանակուայ մարդկանց մէջ սովորութիւն էր իրանց գօտու մէջ կրել յուշատետր և սոխլուս. տանը դրանք գօտու հետ բացուում և մի կողմ էին գրուում։ Իրօք գեան գործիքի երևոյթի տակ, հետազննիք կրում էին մի չատ սուր և վտանգաւոր դէնք։ Այս սոխլուսով *) էր, որ Կատիուս հարուածեց Կեսարին սենատի մէջ։ Առնելով ուրնին իր գօտին և վերարկուն՝ Արբակ դուրս եկաւ տնից։ Զը նայելով որ յոյսը և վրէժխնդրութիւնը միացած նրա խոր բժշկական գիտութեան հետ մեծապէս օգնել էին նրա բնական ոյժը վերականգնելու՝ այնուամենայնիւ դեռ նրա ոտքերը փոքր ինչ տկար էին. հետևաբար Արբակ վերցնելով իր երկար գաւազանը՝ ճանապարհ բռնաւ դէպի Վիոմէդի ամարանոցը։

Եւ դեղեցիկ է հարաւի լուսնկան։ Այդ կլիմաներում գիշերը այնպիսի արագութեամբ վոխուում է ցերեկուայ, որ աղջամուղջը հազիւ մի կամարջ է կազմում նրանց միջև։ Մէկ րոպէ միայն մի ասեղի մուխ ծխրանի պոյն պատում է երկինքը, հազարաւոր վարդի գոյներ թափանցում են ջրի մէջ, ստուերները մի կէս յաղթութիւն են ցոյց տալիս ցերեկուայ վրայ. և յետոյ անմիջապէս դուրս են թափուում անթիւ աստղերը, լուսինը բարձրանում է, և գիշերը վերսկսում է իր իշխանութիւնը։

Պայծառութեամբ, և մի փափուկ պայծառութեամբ լուսի ճառագայթները թափուում էին Միրելէյին նուիրուած հին ծառաստանի վրայ. չքեղ ծառերը, որոնց թուականը աւելի հետու էր գնում ստանդութիւնից, ձգում էին իրանց երկար ստուերները հողի վրայ, մինչդեռ նրանց ճիւղերի արանքից վայրում էին աստղերը, խաղաղ և բաղմաթիւ։ Փոքրիկ մեհեանի սպիտակութիւնը, որ կառուցուած էր ծառաստանի կեդրոնում և մթին տերևների մէջտեղ, մի ինչ որ յանկարծ աչքի զարկող և ցնցող բան ունէր իր մէջ, որ անմիջապէս մարդու լիշեցնում էր այն նպատակը, որին նուիրուած էր ծառաստանը, և նրա սրբութիւնը և պատկառելիութիւնը։

Արագ և զաղտնապղտի քայլերով, Կալենուս, առնում էր ծառերի ստուերի ներքև, մինչև հասաւ մեհեանի մօտ. նա կանգ չառ քաշեց այն ճիւղերը, որոնք կատարելապէս չծածկում էին չինուածքի եռևի կողմը և կուչեկաւ իր թաքուստի մէջ. մի թաքուստ ծածկուած մեհեանի չինութեամբ մի կողմից և ծառերով միւս կողմից, և այնքան կատարեալ, որ ոչ մի անկասկած անցորդ չէր կարող գտնել այդ։ Բայց դրանից, ամէն քան այնքան լուռ և անձայն էր ծառաստանի մէջ։ Հեռուից միայն չատ թոյլ կերպով գալիս էին մի քանի հարբեցողների աղմուկները, կամ երաժշտութեան ձայնը,

*) Խոսքայինների սոխլեատս բառը հատանակաւորապէս առնուած է այս սոխլուսից։

որ ուրախ ուրախ հնչում էր ի լուր այն խումբ խումբ ամբոխի, որ այն ժամանակ, ինչպէս նաև հիմա այդ երկրում, դիշերը թափառում է փողոցներում, և թարմ օդի մէջ վայելում է հեզուկանման լուսնկան, որ մի աւելի մեղմ ցերեկ է։

Այն բարձրութիւնից, որի վրայ կանգնած էր ծառաստանը, ծառերի արանքից կարելի էր տեսնել լայնատարած և ծիրանագոյն ծովը, որ փրփրում էր հեռուում, Սառբիէի ապառակ ամարանոցները, աղեղնաձև ծովեզրի վրայ, և Լևկոթաբիական լեռները, խառնուած երկնքի անույշ կապոյտին հետ։ Արբակի բարձր հասակը մինչդեռ գնում էր Դիամէդի տունը, այդ րոպէին, մեռաւ ծառաստանի մէկ ծայրից, և նոյն միջոցին, Ապէկիդէս, երթալով դէպի իր ժամադրատեղին անցաւ եղիպտացու առջևից։

«Հէմ, Ապէկիդէս», ասաց Արբակ, անմիջապէս ճանաչելով քահանային. «երբ վերջին անգամ մենք հանդիպեցինք, դու իմ թշնամին էիր։ Ես այն ժամանակուանից ի վեր կամեցել եմ քեզ տեսնել, որովհետև ես վախտում եմ, որ դու նորից լինես իմ բարեկամը և իմ աշակերտը»։

Ապէկիդէս ցնցուեցաւ եղիպտացու ձայնը լսելով. և չանկարծ կանգ առնելով՝ նայեց նրա երեսին մի զէմքով, մաքառող, զառն և ծաղրալից զգացմունքներով լցուած։

«Սրիկայ և խաբեբայ», ասաց նա վերջապէս. «դու ուրեմն ազատուել ես գերեզմանի ժանիքներից. բայց մի մտածիր, որ դու կարող ես նորից հիասել իմ չուրջը քո ամբարիշտ ցանցը։ Retiarius, ես պինուած եմ քո դէմ»։

«Ասա», ասաց Արբակ, մի չատ ցած ձայնով. բայց

նրա տպարտութիւնը, որ մեծ էր այդ արքայազուն մարդու մէջ, նրա չրթունքի զղզղալով և նրա թուխ երեսի կարմրութեամբ, յայտնում էր թէ ինչ մեծ վերք է առացել նա քահանայի անարգական բառերից։ «Ասա, ցած ձայնով խօսիր, քեզ կարող են լսել և եթէ իմ ականջներից զատ, ուրիշի ականջներն էլ լսած լինեն այդ խօսքերը... ուրեմն...»։

«Սպառնում ես. ինչ հոգ եթէ ամբողջ աշխարհը լսած լինէր»։

«Իմ նախահայրերիս առաւաձագեալ առաւերները ինձ թոյլ չէ պիտի տալին ներել քեզ։ Բայց լաւ և ականջ դիր ինձ։ Դու զայրացած ես, որովհետև ուզում էի բանաբարել քո քրոջը։—Ոչ, լաւ, լաւ, լակ մի րոպէ խնդրում եմ։ Դու իրաւունք ունես. դա սիրոյ և նախանձի խնդիրն էր։ Ես չատ դառն կերպով ապաշխարել եմ իմ այդ խելագարութիւնը։ Ներիր ինձ, ես որ կենդանի մարդուց ներողութիւն չեմ խնդրել իմ կեանքի մէջ, աղերսում եմ քեզ, ներիր ինձ։ Ո՛չ, ես կը քաւեմ իմ անարգական վարմունքը։ Ես խնդրում եմ քո քրոջ ձեռքը. մի ցնցուիր, խորհիր. ինչ բան է այն զարդարուն լոյնի ազգակցութիւնը իմ ազգակցութեան մօտ։ Հարստութիւն անասնական—ծագում որ իր նախապատմական հնութեամբ քո լուսական և հռոմէական առնուններդ երեկուայ առարկներ է դարձնում—գիտութիւն... Բայց այդ դու գիտես։ Տուր ինձ քո քրոջը և իմ ամբողջ կեանքս պիտի քաւէ մի րոպէի սխալը»։

«Եղիպտացի, եթէ ես էլ հաւասարուելու լինէի, իմ քոյրս պղտում է նոյն իսկ քո արտաշնչած օդից. բայց ես դեռ ինձ եղած անիրաւութիւններն ունիմ ներելու։ Կարելի է ես կարողանամ ներել քեզ, որ ինձ չվնասիր

քո խաբէութիւնների գործիքը. բայց երբէք չեմ կարող ներել, որ ինձ հրապուրեցիր քո մոլութիւնների մասնակիցը լինելու – մի պիղծ և երկնազանց մարդ լինելու: Դոզա, հէնց այս րոպէին ես պատրաստում եմ այն ժամի համար, որը պիտի պատառէ քո և քո սուտ աստուածների քօղը: Ես լիրը և կլորիէական կեանքը պիտի բերեմ լուսոյ առջև. քո դիմակաւոր դաշինների դաղտնիքը պիտի ընկնի ջրի երես. Խափ մեհեանը մի առած և մի ծաղր պիտի դառնայ և Արլակի անունը մի դարչանք և ծանակ: Դոզա»:

Եգիպտացու ճակատի կարմրութիւնը հետևեց մի մռայլային դունաթափութիւն: Նա նայեց իր չորս կողմը վատահ լինելու թէ արդեօք մէկը լսում էր. և յետոյ բևեռեց իր սև և լայնացող աչքերը քահանայի վրայ, այնպիսի մի կատաղած և սպառնացող նայուածքով, որ մի ուրիշը, նուաղ զինուած քան Ապէկիդէսը երկնային ջերմեռանդութեան անվեհերութեամբ, չէր կարող անզգաղգուեմբ նայել այդ փոթորկալից դէմքին: Երիտասարդ նորահաւատը, ինչևիցէ չընկրկեց այդ նայուածքի առջև, այլ դիմադրեց նրան մի հպարտ և անվախ նայուածքով:

«Ապէկիդէս», ասաց եգիպտացին մի դղրդջուն և զսպուած ձայնով, «զգույշ կաց: Ի՞նչ ես մտածում անել: Խօսում ես – մտածիր. սպասիր նախ քան պատասխանելդ. արդեօք բարկութեան աղեղնաթիւնից է ասածդ և ոչ մի որոշ դիտում չունի, թէ մի վճռուած նպատակի»:

«Ես խօսում եմ ճշմարիտ Աստուծոյ ներշնչմամբ, որի ծառան եմ ես», պատասխանեց քրիստոնեան քաջութեամբ. «ես խօսում եմ այն դիտութեամբ, որ նրա չնաշխարհ մարդկային քաջութիւնը արդէն որոշել է քո կեղծաւորութեան և դեպազտութեան թուականը. նախ քան երեք անգամ արևը ծագէ, դու ամեն բան կիմանաս. ա՛յ կախարդ. Դոզա, և մնաս բարեաւ»:

Բոլոր այն կատաղի և չար կրքերը, որ նա ժառանգել էր իր ազգից և իր կլիմայից, և որոնք ամեն ժամանակ հաղիւ ծածկուած էին խաբեպալի փափկութեան և փիլիսոփայի պազութեան ներքև, այժմ մէկ անգամից բաց ընկան նրա եգիպտական կրծքի մէջ: Արագ արագ մէկ միւսը հալածում էր միւսին: Նա տեսաւ իր առջև կանգնած մի անյաղթելի արգելք իր մինչև անգամ օրինաւոր ամուսնութեանը Խոնէի հետ—Պրոկուլի դինակիցը այն մաքառման մէջ, որ ի դերև էր հանել նրա նպատակը—իր անուան անարգիչը—սպասնացող սրբապղծիչը այն աստուածուհու, որին ինքը չը հաւատալով հանդերձ ծառայում էր—իր խարէութիւնների և մոլութիւնների ախտակալ և փութաջան հրապարակիչը: Իր սէրը, իր հոչակը, ա՛յն, նոյն իսկ նրա կեանքը կարող են վտանգի մէջ լինել. օրը և ժամը կարծես որոշուած է իր դէմ կատարուելիք մի մեքենայութեան համար: Նա Ապէկիդէսի խօսքերից հասկացաւ, որ նա ընդունել էր քրիստոնէական հաւատքը. նա ճանաչում էր այն անպարտելի եռանդը, որով տոգորուած էին այդ ազանդի նորահաւատները: Այսպիսի մարդ էր նրա թշնամին. նա բռնեց իր սակրաւը,—այդ թշնամին իր զօրութեան մէջ էր. նրանք այժմ գնում էին տաճարի դիմաց. մէկ արագ նայուածք էլ նա ձգեց իր չուրջը. նա ոչ ոքի չը տեսաւ,—լռութիւնը և առանձնութիւնը նոյնպէս փորձում էին նրան:

«Մեռիր, ուրեմն քո անխոհեմութեամբ», մրմնջաց նա, «ի բաց արգելք իմ յաղթական ապագայի»:

Եւ ճիշդ այն րոպէին, որ երիտասարդ քրիստոնեան դարձել էր հեռանալու, Աբրակ բարձրացրեց իր ձեռքը նրա ձախ ուսի վրայ և իր սուր ղէնքը երկու անգամ խրեց նրա կրծքի մէջ։

Ալէկիլդէս փռռւեցաւ սրանից վիրաւորուած. նա ընկաւ ճիշդ սրբազան տաճարի սահրոսում անձայն, առանց նոյն իսկ մի հառաչանքի։

Աբրակ մի րոպէ նայեց նրան այն կատաղի ցնծութեամբ, որ մի գազան նայում է իր պարտեալ ոսոխին, քանց չուտ չանցաւ, որ նրա մտքի մէջ ցոլած ամբողջ դիտակցութիւնը, որին նա ենթարկուած էր. նա սրբեց իր ղէնքը երկար խոտով և լուաց իր ձեռի ղեկտաներով. իր վերարկուն փաթաթեց իր չուրջը, և հէնց ուզում էր հեռանալ, որ տեսաւ ճանապարհի վրայ իր դիմաց մի երիտասարդ, որ դիտական քայլերով և երեսալով գալիս էր դէպի նրան. լուսնի խաղաղ լոյսը կատարելապէս լուսաւորել էր նրա դէմքը, որը, այդ սպիտակացուցիչ լոյսով մարմարիոնի պէս ժժգոյն էր երեսում։ Եգիպտացին ճանաչեց Գլոկուսի երեսը և կաղմուածքը։ Տարաբախտ և մտամոլոր լոյներդում էր մի անկապ և խելագարի երդ, որը բաղկացած էր կրօնական երդերի և բանաստեղծութիւնների կտորներից, բոլորը անհերդաշնակ կերպով հիւսուած միմեանց հետ։

«Հա», մտածեց եգիպտացին անմիջապէս զուշակելով նրա կացութիւնը և դրա սարսափելի պատճառը». այդպէս, ուրեմն դժոխային հեղուկը գործում է, և ճակատագիրը քեզ ուղարկել է այստեղ իմ «երկու թշնամուն մէկ անգամից ջախջախելու»։

Արագ, նոյն իսկ նախ քան այս միտքը անցնէր նրա գլխից, նա քաշուել էր տաճարի մէկ կողմը և թաղնուել ճիւղերի մէջ. այդ թաքուստից նա սպասում էր ինչպէս մի վագր այս իր երկրորդ զոհի մօտենալուն։ Նա նկատեց այն թափառական և անհանգիստ կրակը, որ ցոլում էր լոյնի փայլուն և գեղեցիկ աչքերի մէջ. այն ցնցումները, որ ծանրում էին նրա արձանանման գծերը և գալարում էին նրա անզոյն շրթունքները։ Նա տեսաւ որ լոյնը կատարելապէս զրկուած էր բանականութիւնից, այնուամենայնիւ երբ Գլոկուս եկաւ հասաւ Ալէկիլդէսի դիակին, որից կարմիր և սև արիւնը հոսում էր կանանչ խոտի վրայ, այսպիսի մի տարօրինակ և մեռելային մի տեսարան չէր կարող չը գրաւել նրա ուշադրութիւնը, որքան էլ մոլորեցուցիչ և խաւարած լինէր նրա տեսութեան զգայարանքը։ Նա կանգ առաւ, ձեռքը դրեց ճակատին որպէս թէ հաւաքելու իր յիշողութիւնները, և լուաց ասաց.—

«Հօ, լինչպէս, Էնդիմիոն, արդեօք այդքան խոր քնի մէջ ևս։ Ինչ է ասել լուսինը քեզ։ Ես նախանձում եմ քեզ. ժամանակ է զարթնելու». նա ծռուեցաւ դիակը բարձրացնելու մտքով։

Մոռանալով, չզգալով իր իսկական ակարութիւնը՝ եգիպտացին առաջ թռաւ իր թաքուստից, և մինչդեռ լոյնը ծռուած էր, զարկեց և ձգեց նրան քրիստոնէի դիակի վրայ. լուաց բարձրացնելով իր հզօր ձայնը մինչև իր ամենաբարձր հոսը՝ նա աղաղակեց.—

«Հօ, քաղաքացիք, ահ, օգնեցէք ինձ. այստեղ վազեցէք, այստեղ։ Սպանութիւն, սպանութիւն, ձեր տաճարի առջև։ Օգնեցէք եթէ ոչ մարդասպանը կը փախչի։ «Այդ աղաղակների մէջտեղին նա իր ոտքը դրել էր Գլոկուսի կրծքին. մի ուռնչուն և աւելորդ նախազգուշութիւն. որովհետև հեղուկը գործակցելով նրա անկման

հետ յոյնին ձգել է ցած անչարժ և անզգայ. երբեմն երբեմն լոկ նրա չրթունքներից թռչում էին առանց նչանակութեան զառանցանքներ։

Մինչդեռ այնտեղ կանգնած էր և սպասում էր այն մարդկանց գալստեանը, որոնց իր ձայնը չարաչնակում էր հրաւիրել, կարելի է մի որ և է խղճահարութիւն, մի որ և ապաշաւանք այցելեց եպիսկոպոս կուրծքը, որովհետև չը նայելով նրա ոճիրներին, նա մարդ էր. Գլոկուսի անպաշտպան դրութիւնը, նրա անկապ խօսքերը, նրա ջախջախուած բանականութիւնը աւելի ազդում էին նրա վրայ քան նոյն իսկ Ապեկիդէսի մահը և նա կէս լաւի ձայնով մրմնջում էր։

«Խեղճ կաս, խեղճ մարդկային բանականութիւն. ո՛ւր է այժմ հոգին։ Ես կարող էի խնայել քեզ, ով իմ հակառակորդ—այլ ևս ոչ հակառակորդ։ Բայց ճակատագիրը պէտք է կատարուի. իմ ապահովութիւնս պահանջում է, որ դու զոհուիս»։ Այդ խօսքերից յետոյ, որպէս թէ խեղդելու համար խղճի ձայնը, նա աւելի բարձր ձայնով գոչեց. և քաշելով Գլոկուսի գօտուց նրա սուլուսը նա թաթախեց այդ արեան մէջ և դրեց դիակի կողքին։

Եւ այժմ արագ և շնչասպառ, մի քանի քաղաքացիք վազեցին դէպի այդ տեղը, ամանք լուսնով իրանց հետ ջահեր, որոնք լուսին լոյսի մօտ անհարկաւոր էին դառնում, բայց կարմիր բոցերով վառւում էին անտառի մթութեան դէմ. նրանք չը նչմարեցին այդ տեղը։

«Վերցրէ՛ք այդ դիակը», ասաց եպիսկոպոսին, «և լաւ պահեցէ՛ք մարդասպանին»։

Նրանք վերցրին դիակը և մեծ էր նրանց սարսափը և սրբազան ցասումը, երբ այդ անկենդան կաւի մէջ նրանք տեսան պաչուելի և յարգելի Խսխի քահանայապետ մէկին. բայց կարելի է աւելի մեծ էր նրանց զարմանքը, երբ տեսան որ ամբաստանուածը փայլուն և գեղեցիկ աթենացին էր։

«Գլոկուս», ասաց նրանցից մէկը «հաւատալի բան է»

«Ես աւելի չուտ կը կասկածէի եպիսկոպոս վրայ», մրմնջաց մի մարդ գրացու ականջին»։

Այսպէս մի հարիւրապետ իշխանական ձևերով մտաւ հաւաքուած ամբոխի մէջ։

«Ինչպէս, արդեն է թափուած, ով է մարդասպանը»։

Կանգնողները ցոյց տուին Գլոկուսին։

«Նա, Արէսը վկայ, նա ինքը զոհն է երևում։ Ո՛վ է ամբաստանում նրան»։

«Ես», ասաց Արբակ, խրոխտութեամբ բարձրացնելով իր հասակը, և այն զոհարները, որ պճնած էին նրա զգեստները փայլելով վինուսի աչքում՝ անմիջապէս համոզեցին այդ արժանահաւատ ազգմիկին թէ վկան պատուաւոր մարդ էր։

«Ներեցէ՛ք ինձ—ձեր անունը», ասաց նա։

«Արբակ. կարծեմ այդ անունը լաւ ճանաչուած է Պոմպէյում, Ծառաստանի միջով անցնելիս, ես տեսայ, որ յոյնը և Ապեկիդէս ջերմ ջերմ խօսակցում էին։ Իմ աչքիս զարկեց առաջինի դեղնկատ կացութիւնը. բուռն չարժումները, և ձայնի բարձրութիւնը. նա թւում էր ինձ հարբած կամ խելագար։ Յանկարծ տեսայ, որ նա բարձրացրեց իր սուլուսը—ես առաջ թռայ—բայց չափազանց ուշ՝ հարուածը արդելելու։ Նա երկու անգամ վիրաւորեց իր զոհին, և ծռուած նայում էր նրան, երբ ես սարսափած և բարկացած մարդասպանին զարկեցի գետին գլորեցի։ Նա ընկաւ առանց մաքառելու, մի դէպք, որ ինձ աւելի հաստատում է այն կարծիքի մէջ, թէ նրա

խելքը գլխին չէր՝ երբ այդ ոճիրը կատարուեցաւ. չատ ժամանակ չէ ինչ որ ես առողջացել եմ հիւանդութիւնից և իմ հարուածը ուժգին չէր կարող եղած լինել, և Գլուկոսի կողմը ինչպէս տեսնում էք, ուժեղ է և երիտասարդ»։

«Նրա աչքերը այժմ բաց են, նրա շրթունքները չարժուում են», ասաց վինուորը։ «Խօսիր բանտարկեալ, ինչ ես ասում այդ ամբաստանութեան»։

«Ամբաստանութիւնը... հա, հա, շատ ուրախութեամբ կատարուեցաւ. երբ որ այն պառաւ քաւթառը իր օձը ձգել էր իմ վրայ, և Հէկատը կանգնած ծիծաղում էր ականջից ականջ—ինչ կարող էի անել։ Բայց ես հիւանդ եմ... ես ուշաթափուում եմ... օձի կրակոտ լեզուն խայթել է ինձ։ Տարէք ինձ անկողին և բերէք ձեր բժիշկը. ձեր էակուլապիուս ինքը կը հոգայ ինձ եթէ նրան ասէք, որ ես յոյն եմ։ Ոհ, ողորմեցէք, ես այրուում եմ. բոլոր ուղ և ծուծս այրուում է»։

Եւ, մի սիրտ ծակող և մի կատաղի հառաչանքով աթենացին ընկաւ կանգնողների բազուկների մէջ։

«Նա զառանցում է», ասաց պաշտօնեան, դիմաբերաբար. «և իր զառանցման մէջ նա զարկել է քահանային։ Ներկայ եղողներից որ և է մէկը տեսել է նրան այսօր»։

«Ես», ասաց հանդիսատեսներից մէկը, «տեսայ նրան այս առաւօտ։ Նա անցաւ իմ խանութի մօտից։ Նա նոյնչափ առողջ և խելօք էր երևում, որչափ մեզանից ամենաառողջը»։

«Եւ ես տեսայ նրան կէս ժամ առաջ», ասաց մի ուրիշը, «մինչդեռ նա անցնում էր վողոցից, ինքն իրան

խօսելով և տարօրինակ չարժուձևեր անելով, և ճիշդ այնպէս ինչպէս եգիպտացին նկարագրել է»։

«Վկայութիւնը հաստատուեցաւ. դա պէտք է ճըշմարիտ լինի։ Ամեն դէպքում նա պիտի տարուի պրէտորի մօտ. ախոռ, այդքան երիտասարդ և այդքան հարուստ։ Բայց ոճիրը զարհուրելի է. Խափի մի քահանայ իր ղեկտուները հագին, և այն էլ մեր ամենահին տաճարի առջև»։

Այս խօսքերը, աւելի ուժեղ կերպով քան ինչ ամբոխը կարողացել էր ղրլման և հետաքրքրութեան առաջին վայրկեանում, նրան լիշեցրեցին սրբապղծութեան զարչելիութիւնը։ Մարդիկ ցնցուեցան մի բարեպաշտական սարսուռ զգալով։

«Ի՞նչ զարմանք, որ երկիրը դողդողաց», ասաց մէկը, «մինչդեռ նա իր վրայ կրում էր այսպիսի մի հրէշ»։

«Տարէք նրան բանտը—տարէք», գոչեցին բոլորը միաբերան։

Եւ մի սուր ձայն ուրախ և սուր չէչտերով լսուեցաւ բոլորի միջից։

«Գաղտնները այժմ դլադիատոր կունենան։

«Հօ, ինչ տեսարան ուրախ և պայծառ»։

Դա այն մանկամարդ կնոջ ձայնն էր, որի խօսակցութիւնը Մեզոնի հետ արդէն նկարագրուած է։

«Ճշմարիտ է, ճշմարիտ է, լաւ ժամանակին պատահեց այդ դէպքը խաղերի համար», գոչեցին մի քանի ձայներ. և երբ այդ միտքը ծագեց ամեն դէմ ամբաստանուածի համար անհետացաւ։ Նրա երիտասարդութիւնը, նրա գեղեցկութիւնը նրան աւելի յարմար էին դարձնում արենալի համար։

«Այսուհետ բերէք մի քանի տախտակներ—կամ, եթէ

կայ, մի պատգարակ, որ սպանուածին տանենք», ասաց Աբրակ. «մի Խոխի քահանան չը պէտք է տարուի իր տաճարը ոտքերի ձեռքով, որպէս մի մարթուած գլադիատոր»։

Այս լսելով կանգնողները չարպանքով մէջքի վրայ ցած դրին Ապէկիդէսի դիակը. և ոմանք գնացին մի չարմար բան գտնելու մարմինը տանելու համար, որպէս զի պիղծ մարդիկ չը դպչին նրան։

Ձիշդ այդ րոպէին էր, որ ամբոխը տեղի տուաւ մի հուժկու մարդու առջև, որ մարդկանց այս և այն կողմ հրելով եկաւ կանգնեց եղիպտացու դիմաց։ Նորեկը քրիստոնեայ Օլինթուան էր. նախ նրա աչքերը անարտայայտելի արտմութեամբ սեւեռուեցան մեռածի արիւնոտ կողքի և երեսի վրայ, ուր դեռ նստել էր չարաչար մահուան անհուն ցաւի արտայայտութիւնը։

«Սպանուեցար», ասաց նա, «արդեօք քո չնչին անպատրութիւնն է, որ քեզ հասցրել է այստեղ։ Արդեօք հասկացար քո աղնիւ դիտաւորութիւնը և քո մահառաջ ծածկեցին իրանց ամօթը»։

Նա յանկարծ գլուխը դարձրեց իր գլուխը և նրա աչքերը ընկան եղիպտացու հանդիսաւոր կերպարանքի վրայ։

Մինչդեռ նա այդպէս նայում էր, կարելի էր տեսնել նրա երեսի վրայ, և նոյն իսկ նրա մարմնի թեթև ցնցման մէջ, այն զզուանքը և հակակրութիւնը, որ քրիստոնեան զգում էր դէպի մի մարդ, որի այդքան վատնդաւոր և ոճրագործ լինելը գիտէր։ Դա իրօք թռչունի նայուածքն էր բասիլիկի վրայ—այնքան լուռ էր դա և այնքան երկար։ Բայց թօթափելով այն յարկարծական սարսուռը, որ եկել էր իր վրայ՝ Օլինթուա իր աջ բա-

զուկը երկարացրեց դէպի Աբրակ, և ասաց, մի խոր և բարձր ձայնով.

«Սպանուել է այս մարդը։ Ո՞ւր է մարդասպանը։ Առաջ կանգնիր եղիպտացի։ Ինչպէս որ կենդանի է Տէրը, ես հաւատում եմ, որ դու ես մարդասպանը»։

Մի անձկալից և չփոթուած փոփոխութիւն մի ակընթարթի չափ կարելի էր նկատել եղիպտացու թուխ կերպարանքի վրայ. բայց դա տեղի տուաւ յաւտան և արհամարհանքի խոժոռուած արտայայտութեան առջև, երբ, ահաբեկուած և ուշադրաւ այդ ամբաստանութեան ուժգնութիւնից՝ հանդիսատեսները աւելի և աւելի մօտեցան երկու նշանաւոր դերակատարներին։

«Ես դիտեմ», ասաց Աբրակ, հպարտութեամբ, «ով է իմ ամբաստանողը, և ես զուշակում եմ թէ ինչու նա այդպէս զրպարտում է ինձ։ Մարդիկ և քաղաքացիք, լսեցէք, որ այս մարդը ամենից զաժանը, նազովրեցիներից մէկն է, ինչ զարմանք, որ նա իր չարակամութեամբ չդադրում է նոյն իսկ մի եղիպտացու ամբաստանել մի եղիպտական քահանայի սպանութեամբ»։

«Ես ճանաչում եմ նրան. ես ճանաչում եմ այդ չանը». գոչեցին զանազան ձայներ։ «Դա քրիստոնեայ, կամ աւելի լաւ ասած անաստուած Օլինթուան է. նա ուրանում է աստուածներին»։

«Լռեցէք, եղբայրներ», ասաց Օլինթուա պատկառելի եղանակով, «և լսեցէք ինձ. Խոխի այս սպանուած քահանան իր մահից առաջ ընդունեց քրիստոնէութեան հաւատքը. նա յայտնեց ինձ այդ եղիպտացու սև մեղքերը և կախարդութիւնները, և Խոխի մեհեանի ձեռնածութիւնները և մոլորութիւնները։ Նա ուզում էր այդ բանն անել հրապարակաւ։ Նա, որ մի առիթաս օ-

տարական է, առանց Թշնամիների. ով արդեօք կարող է նրա արիւնը թափած լինել, եթէ ոչ այն մարդկանց մէկը, որոնք վախենում էին նրա վկայութիւնից։ Ո՞վ կարող է աւելից չատ վախենալ նրա վկայութիւնից.— եղիպտացի Աբրահամը։

«Լսում էք», ասաց Աբրահամ, «լսում էք, նա հայհոյում է. հարցրէք նրանից թէ հաւատում է Խսխին»։

«Ե՞ս հաւատամ մի չար դևի», պատասխանեց Օլինթոսս, քաջութեամբ։

Մի հառաչանք և մի սարսուռ անցաւ ամբոխի միջից։ Բոլորովին աներկիւղ, ամեն ժամանակ պատրաստ լինելով վտանգի համար՝ Օլինթոսս, իր ներկայ ոգևորութեան մէջ կորցնելով ամեն խոհեմութիւն՝ չարաշահեց.

«Հեռո՛ւ, կռապաշտներ. այս կաբը ձեր ուսերն է և սրիդծ ծէսերի համար չէ—մեզ է պահանջում, մեզ, Քրիստոսի հաւատացողներիս, մի քրիստոնեայի վերջին պաշտամունքը։ Ես պահանջում եմ այս կաբը յանուն այն մեծ Աբարչի, որ յետ է կոչել հոգին»։

Քրիստոնեան, այնպիսի մի հանդիսաւոր և հրամայական ձայնով և կերպարանքով ասաց այս բառերը, որ նոյն իսկ ամբոխը չը յանդգնեց բարձր ձայնով արտասանել երկիւղի և աստուածեան նզովքը, որ նա սրսկում էր իր սրտում։ Եւ կարելի է այն օրուանից յետոյ, որ Սատանան մաքառում էր հրեշտակապետի դէմ հզօր օրհնողի մարմնի համար, երբէք չէ եղել մի աւելի աչքի զարկող առարկայ նկարչի հանճարի համար, քան այս տեսարանը։ Մութ ծառերը, չքնաղ մեհեանը, լուսինը, որ կատարեալ լուսաւորում է մեռեալի դիակը, ջահերը, որ վայրենաբար այս և այն կողմն են չարժւում եռեսուն խառնիճաղանճ ամբոխի զանազան երեսները,

աթենացու անզգայ կերպարանքը և կազմը, որ պահուած էր հեռուում, և մանաւանդ բոլորի առջև կանգնած Աբրահամի և քրիստոնեայի պատկերները. առաջինը բարձր պահած իր երկար հասակը, և չատ աւելի բարձր քան չրջապատող խուժանը. նրա բազուկները ծալուած էին, նրա ճակատը խոժոռուած, նրա աչքերը սևեռած և նրա չրթունքը թեթև կերպով լետ ոլորուած՝ ի նշան արհամարհանքի և անվախութեան։ Վերջինը մի մաշուած և ակօսուած ճակատի վրայ կրում էր հրամայական ձևի մի նոյնչափ վեհախառնութիւն. նրա դիմագծերը խիտ էին, բայց անկեղծ, նրա երևոյթը յանդուգն էր, սակայն սրբատաշաց. նրա ամբողջ կազմուածքի անդորր արժանապատուութիւնը դրոշմուած էր մի աննկարագրելի եռանդով. եռանդ, որ կարծես լռել էր ի համակրութիւն իր իսկ տարածած անին։ Նրա ձախ ձեռքը ուղղուած էր դէպի դիակը, և նրա աջ ձեռքը բարձրացած դէպի երկինք։

Հարիւրապետը նորից առաջ եկաւ։

«Նախ և առաջ դու՛ Օլինթոս, կամ ինչ որ լինէք դուք անունը, ունիս որ և է ապացոյց Աբրահամի դէմ՝ բացի քո անորոշ կասկածներից»։

Օլինթոսս լուռ մնաց—եղիպտացին արհամարհական մի ծիծաղ արձակեց։

«Աբրահամ դու պահանջում ես Խսխի մի քահանայի դիակը որպէս մի նազովրեցու կամ քրիստոնեայի մարմին»։

«Այո, պահանջում եմ»։

«Երդուիր ուրեմն այդ մեհեանով, Կիբելէի այն արձանով, Պոմպէյի ամենահին սեկելումով, որ մեռեալը ընդունես ձեր կրօնքը»։

«Ամենայամբիւ մարդ, ես ուրանում եմ ձեր կուռ-

քերը, ես արհամարհում եմ ձեր առաջարկները։ Ուրեմն ինչպե՞ս եմ կարող երդվել Կիրիլլովի։

«Հեռացրէ՛ք, հեռացրէ՛ք այդ անասունաձին, հեռացրէ՛ք դրան, եթէ ոչ երկիրը կը կլանէ մեզ, եթէ մենք թոյլ տանք այս հայհոյութիւններուն տեղի ունենան մի սրբազան ծառատունում. հեռացրէ՛ք դրան և մատնեցէ՛ք ի մահ»։

«Գազանները իրեն», աւելացրեց մի կանացի ձայն ամբոխի կեդրոնից. «Մենք այժմ առիւծի և վագրի համար, իւրաքանչիւրին մէկ մարդ ունինք»։

«Եթէ, ով նազովրեցի, դու չես հաւատում Կիրիլլին, մեր աստուածներից որ մէկին ես հաւատում, ուրեմն», չարունակեց պինուորը, չենթարկուելով իր շուրջ կողմից եկած աղաղակների ազդեցութեանը։

«Ոչ մէկին»։

«Լսեցէ՛ք ինչ է ասում. լսեցէ՛ք», գոչեց ամբոխը։

«Ո՛վ մահառաւաներ, և կոյրեր», չարունակեց քրիստոնեան, բարձրացնելով իր ձայնը. «արդեօք կարող էք դուք հաւատալ քարեայ և փայտեայ պատկերներին։ Արդեօք կարող էք երևակայել, որ նրանք աչքեր ունին տեսնելու, ականջներ ունին լսելու, կամ ձեռքեր՝ ձեզ օգնելու։ Արդեօք այդ համր առարկան, որ քանդակուած է մարդու արուեստով, մի աստուածո՞ւհի է։ Արդեօք դա է ստեղծել մարդկութիւնը։ Ա՛հա, մարդկութիւնն է ստեղծել դրան։ Ա՛հա համոզուեցէ՛ք, որ դա ոչինչ է, համոզուեցէ՛ք, որ ձեր կրօնքը չիմաստութիւն է»։

Եւ այս ասելով՝ նա քայլեց դէպի մեհեանը, և նախ քան հանդիսատեսներից մէկը կարողանար դուշակել նրա նպատակը, նա, կամ գիտութեամբ չարժուած և

կամ եռանդով՝ զարկեց փայտեայ արձանին, և վայր ձգեց իր պատուանդանի վրայից։

«Տեսէ՛ք», գոչեց նա, «ձեր աստուածուհին չէ կարողանում իր վրէժը լուծել։ Արդեօք սա պաշտելու արժանի բան է»։

Այլ ևս նրան թոյլ չը տուեցաւ խօսել. ամպիսի մի կապիա և յանդուգն սրբապղծութիւն, այն էր երկրպագութեան տեղերի ամենից սրբազան մէջ—նոյն իսկ ամենից գաղջերին լցրեց զայրացմամբ և սարսափով։ Մէկ անգամից ամբողջ ամբոխը յարձակուեցաւ նրա վրայ, բռնեց նրան, և եթէ հարիւրապետը միջամտած չը լինէր, նա կտոր կտոր պիտի դառնար։

«Հանգիստ», ասաց պինուորը իշխանաբար, մենք այս լիրբ հայհոյչին կը յանձնենք հարկ եղած դատաստանատունը — ժամանակն արդէն շատ վատնուեցաւ։ Մենք յանցապարտների երկուքին էլ կը տանենք դատաւորների առջև. քահանայի մարմինը դրէ՛ք պատգարակի վրայ և տարէ՛ք իր տունը»։

Այս րոպէին Իսիսի քահանան առաջ եկաւ։ «Ես պահանջում եմ այս մարմինը քահանայութեան սովորութեան համեմատ»։

«Քահանան ինչպէս ասում է, այնպէս արէ՛ք», ասաց հարիւրապետը։ «Ո՞նչպէս է մարդասպանը»։

«Անդղայ, կամ քնած»։

«Եթէ նրա գործած ոճիրը աւելի փոքր լինէր, ես կարող էի ների՛լ նրան։ Յառա՛ջ»։

Արբակ զառնալով՝ տեսաւ Իսիսի այդ քուրմի աչքը. դա Կալենուսի աչքն էր. և մի ինչ որ բան կար այդ նայուածքի մէջ, այնքան նշանակութեամբ լի և այնքան չարագուշակ, որ եգիպտացին մրմնջաց.

«Արդեօք նա տեսել է անցածը։

Մի աղջիկ դուրս թռաւ ամբոխի միջից և յառած աչքերով նայեց Օլինթուսի երեսին։ «Ա ր ա մ ա զ դ վ կ ա յ, մի ուժեղ սրիկայ է, հիմա մէկ մարդ էլ վարձի համար ուղինք, իրաքանչիւր զազանին մէկ մարդ»։

«Հո», գոչեց ամբոխը, «մէկ մարդ առիւծի համար, և մէկ ուրիշը վագրի։ Ի՛նչ բախտաւորութիւն։ Do Paean!»։

Գլուխ Ը.

Գլոկուսի վիճակը։ Բարեկամութիւնը փորձւում է։ Թշնամութիւնը մեղմանում է։ Սէրը անխոտոր է մնում, որովհետև սիրողը կոյր է։

Գիշերից բաւական անցել էր, և Պոմպէյի զուարճութեան յաճախատեղիները դեռ խռնուած էին։ Զանազան դասակարգաշրջիկների երեսին կարելի էր տեսնել սովորականից մի աւելի անձկալից սրտատրոփութիւն։ Նրանք մեծ մեծ խմբերի բաժանուած՝ խօսակցում էին, կարծես նրանք ուզում էին իրանց թռուերով բաժանել այն կէս ցաւալի և կէս զուարճալի անձկութիւնը, որ պատահում էր նրանց խօսակցութեան նիւթին.—դա կեանքի և մահուան մի նիւթ էր։

Մի երիտասարդ արագ անցաւ բախտի տաճարի չքեղ պորտիկոյի առջևից. և իրօք այնքան արագ, որ ոչ աննման թափով զարկուեցաւ մեր պատուաւոր վաճառական Պիոմէդի սիրուն դնդաձև կազմուածքին, մինչդեռ այս պարոնը վերադառնում էր դէպի իր արուարձանի ամարանոցը։

«Օհո», հառաչեց հաստափոր քաղաքացին, բաւական ժժաւարութեամբ վերստանալով իր հաւասարակշռութիւնը. «աչքեր չունիս, կամ կարծում ես, որ ես ղպացմունք չունեմ։ Արամազդ վկայ. մօտ էր որ իմ երկնային մասը դուրս քչկիր իմ միջից. մէկ էլ այսպիսի ընդհարում և իմ հոգիս արդէն հոգիների աշխարհում կը լինի»։

«Ա՜հ, Պիոմէդ, այդ դո՞ւք էք. ներեցէք իմ անզգուշութեանս։ Ես բոլորովին խորասուզուած էի, մտածելով կեանքի փոփոխութիւնների մասին։ Մեր խնդճ բարեկամ, Գլոկուսը. ո՞վ կարող էր դուշակել այդ բանը։

«Լա՛ւ, բայց ասա ինձ, Կլոդիուս, արդեօք նա սենատի մէջ պիտի դատուի»։

«Այս. ասում են ոճիրը այնքան տարօրինակ է, որ սենատը ինքը պիտի վճռէ այդ. հետևաբար լիկտորները *) պէտք է նրան պաշտօնապէս ներս տանեն։

«Ուրեմն նա հրապարակա՞ւ ամբաստանուել է»։

«Անպատճառ. դուք որտե՞ղ էիք, որ չէք լսել այդ լուրը»։

«Ես նոր եմ վերադառնում Նապոլիից, ուր եւս գնացի գործով այդ ազանութեան հետևեալ առաւօտը. ինչ տարտափելի է, և հէնց իմ տանն էր նոյն գիշերը»։

«Տարակոյս չը կայ թէ նա յանցապարտ է», ասաց Կլոդիուս, ցնցելով իր ուսերը. «և քանի որ այս տեսակ ոճիրները առաջ են դառնում բոլոր անարգ թևերև յանցանքներից, սենատը պիտի չտապէ դատավճիռը կայացնել խաղերից առաջ»։

---

*) Լիկտորները բացի դատաստանակրի պաշտօնից (ինչպէս ասուից առաջ բացատրուած է) նաև բռնում և պատժում էին ոճրագործներին։ Ծ. Թ.

«Խաղերը, ով սատանաներ», պատասխանեց Դիոմէդ, մի թեթև ցնցումով. «կարելի է, որ նրան դասապարտեն զազանների առջև ճգուելու. այդքան երիտասարդ, այդքան հարուստ»:

«Ճշմարիտ է. բայց յետոյ նա մի լոյն է: Եթէ հռոմայեցի լինէր հազար ախոռ կը լինէր: Այս օտարականներին միայն կարելի է հանդուրժել յաջողութեան ժամանակ. բայց նրանց ձախողութեան ժամանակ մենք չը պէտք է մոռանանք, որ նրանք սարսափներ են: Ինչ և իցէ, մենք, բարձր դասակարգի մարդիկ, փափկասիրտ ենք. և անտարակոյս նրա բանը վատ չէր լինի եթէ մեզ թողուէր գործը. որովհետև, խօսքը մեր մէջ մնայ, ինչ նշանակութիւն ունի Խախի մի չնչին քահանան— ինչ նշանակութիւն ունի ինքը Խախը: Բայց հասարակ ժողովուրդը նախապաշարուած է, և մի մեծ ազմուկ է բարձրացնում արքապղծութիւն գործողի արեան համար: Վատնզաւոր է տեղի չը տալ հասարակութեան գազափարի առջև»:

«Եւ հայհոյիչը—քրիստոնեան, նազովրեցին կամ ինչ որ լինի նրա անունը»:

«Օ՛, այդ խնդիր լինելը, եթէ նա ընդունի զոհ մատուցանել Կիբէլէին, կամ Խախին, նա կը ներուի. եթէ ոչ՝ վագրի բաժինը կը դառնայ: Գէթ ես այդպէս եմ ենթադրում. բայց դատարանը կը վճռէ այդ բանը: Մենք խօսում ենք, մինչդեռ անհնականալը դատարկ է: Եւ լոյնը դեռ կարող է ազատուիլ սոսկալի Մ *) տառից: Բայց այնպէս բաւական է այս անախորժ նիւթից: Ինչպէս է դեղանի Ջուլիան»:

*) Մ—սկզբնատառը «Մահ» բառի: Յոյների մէջ Օնէը դատապարտիչ տառը, ինչպէս հռոմայեցիների մէջ C տառը:

«Լաւ է»:

«Իմ յարգանքներս լիչիր նրան: Բայց լսիր, այն դէպքը ճանճում է. դա պրէտորի (քաղաքագլուխ կամ դատաւոր) առնն է: Ո՞վ է դուրս դալիս: Պոլլիւքս վկայ. եղիսաբեցին է: Արդեօք ինչ գործ ունի մեր պաշտօնական բարեկամի հետ»:

«Անտարակոյս այդ սպանութեան մասին մի խորհրդակցութիւն կը լինի», պատասխանեց Դիոմէդ. «բայց ինչ են կարծում, ինչն է եղել այդ սպանութեան պատճառը: Գլոկուս պիտի ամուսնանար այդ քահանայի քրոջ հետ»:

«Այո. ամենք ասում են, որ Ապէկիդէս իր հաւանութիւնը չէր տալիս այդ ամուսնութեան: Կարող է նաև մի չանկարծակիան կռիւ եղած լինել: Գլոկուս ըստ ամենն երևոյթի հարբած է եղել.—ոչ, նա այնքան հարբած է եղել, որ ձերբակալուելու ժամանակ նա բոլորովին անզգայ է եղել, և ինչպէս լսում եմ, մինչև հիմա էլ զառանցում է—արդեօք դինին է եղել պատճառը, սարսափը, խղճահարութիւնը, ֆարիսեները կամ բաքոսաօնները, ես չեմ կարող ասել»:

«Խնդիր մարդ. լաւ օրէնսդէտ ունի իրան պաշտպանելու համար»:

«Ամենալաւը—Կախուս Պոլլիոն, որ բաւական պերճախօսութեամբ մարդ է: Պոլլիոն վարձել է բոլոր Պոմպէյի ազգատոհմ և չտալ ապստամբներին, որ կեղտոտ դրեհներ հաղորդելով մանուկ ժողովրդի մէջ երդուելով թէ իրանք Գլոկուսի բարեկամներն են, (իրաւունքի վրայ ոտք չը դնենք, Գլոկուսը մեկ բառ չէր խօսի այդպիսի մարդկանց հետ. նոյն իսկ կայսր լինելու համար նա մի կատարեալ ջենտլմէն էր իր բարեկամների ընտրութեան

մէջ) և աչխատեն քաղաքացիների քարեզէն սրտերի մէջ պուճ ներչնչել։ Բայց այդ էլ չի յաջողուի. Խոխը չափազանց ժողովրդական է ճիշդ այս րոպէին»։

«Ես, ի դէպ ես էլ ապրանք ունիմ Ազէքսանդրիայում։ Այն, Խոխը պէտք է պաչպանուի»։

«Ճչմարիտ է. այսպէս ուրեմն միատ բարով, ծերուն պարոն. մենք չուտով կը տեսնուինք. մենք պէտք է մի բարեկամական գրաւ կապենք ամիսիթատրոնում։ Բոլոր իմ հաչիւները խանգարուեցան այս Գլոկուսի անիծեալ տարաբախտութեամբ։ Նա գրաւ էր եկել Լիզան պլաղիատորի վրայ. ես պէտք է իմ յուչատետրս նորից կարդի բերեմ։ Vale»։

Թողնելով նուազ աչխոյժ Դիամէդին, վերադառնալ իր ամարանոցը, Կլոդիուս առաջացաւ, իր քթի տակից երգելով մի յունական եղանակ և հոտուէտ դարձնելով դիչերը այն անուչահոտութիւններով, որ հոտում էին նրա ճիւնափայլ երկար զգեստներից և արճակ պիսակներից։

«Եթէ», մտածում էր նա, «Գլոկուսը տուիճի կերակուր դառնայ, Ջուլիան այլ ևս ինձանից լաւ ոչ ոքի չի ունենալ սիրելու. նա անտարակոյս ինձ կը սիրի. և հետևաբար ես էլ կամուսնանամ։ Աստուածները վկայ, տաճներկու դէները սկսում են անօգուտ դառնալ. մարդիկ կասկածով նայում են իմ ձեռքին երբ ես չիչկայնում եմ զառերը։ Այդ դժոխային Սալլուստը բոլորին հասկացնում է թէ ես խաբում եմ, և եթէ յայտնուի, որ փղոսկրը չինծու է, հրաժեչտի ողջոյնը պէտք է տալ փափուկ ընթրիքներին և անուչահոտ տոմսակներին. Կլոդիուսի գործը վերջացած է։ Ուրեմն աւելի լաւ է ամուսնանալ, քանի որ դեռ կարելի է այդ, բայց թողնել

ինաղը, և առաջ քչել իմ բախտը (չքնաղ Ջուլիայի հարբուտութեամբ) կայսերական արքունիքում»։

Այսպէս դծելով իր փառասիրութեան պլանները, եթէ կարելի լինի այդ մեծ անունը տալ Կլոդիուսի ծրագիրներին, խաղամոլը լսեց մի բարեի ձայն. նա դարձաւ և տեսաւ Արքակի թուխ կերպարանքը։

«Ողջոյն, ազնիւ Կլոդիուս, ներիր ինձ այս ընդհատման համար, և ասա ինձ խնդրեմ, որն է Սալլուստի տունը։

«Այստեղից մի քանի մէտր հեռու, իմաստուն Արքակ։ Բայց մթթէ Սալլուստ հիւրընկալութիւն ունի այս դիչեր»։

«Չը գիտեմ», պատասխանեց եգիպտացին. «ոչ էլ ես նրանցից եմ, որոնց նա պիտի հրաւիրէր, որպէս իր մտերիմ բարեկամին։ Բայց դու գիտես, որ Գլոկուս մարդասպանը նրա տանն է»։

«Ո՛հ, բարեսիրտ եգիպտուհանը հատատում է յոյնի անմեղութեանը։ Դուք ինձ լիչեցնում էք, որ նրա երաչխաւորն է դարձել. և հետևաբար մինչև դատաստանը կատարուի պարտաւոր է նրան ներկայացնել դատարանում*)։ Լաւ, Սալլուստի տունը աւելի լաւ տեղ է քան քանաը, մանաւանդ փորում այդ սոսկալի ծակը։ Բայց դուք ինչ պատճառի համար գնում էք Գլոկուսի մօտ։

«Ազնիւ Կլոդիուս, եթէ կարողանանք ազատել նրան մահից, վատ չի լինի։ Հարուստ մարդկանց դատապարտութիւնը մի հարուած է ընկերութեան համար։

---

*) Եթէ ամբաստանեալը կարողանար երաչխաւոր գտնել (որը մեծ ոճիրների դէպքում կոչւում էր vades) նա ստիպուած չէր քանաը մտնել դատաճխից առաջ։

ես կուզէի խօսել նրա հետ — որովհետև ինչպէս լսում եմ նրա խելքը տեղն է եկել — և հասկանալ թէ ինչ է եղել նրա ոճիրի չարժառիթը. դա կարող է այնքան թեթևացուցիչ լինել, որ պիւրացնէ նրա պաշտպանութիւնը։

«Դուք բարեսիրտ էք, Աբրակ»։

«Բարեսրտութիւնը մի պարտականութիւն է նրա համար, որ ուզում է իմաստուն լինել», պատասխանեց եգիպտացին համեստութեամբ։ «Ո՞ր կողմն է Սալլուստի տունը»։

Ես ձեզ ցոյց կը տամ», ասաց Կլոդիուս, «եթէ ինձ թոյլ տաք մի քանի քայլ ընկերակցեմ ձեզ հետ։ Բայց ասացէք խնդրեմ, ինչ է եղել այն խեղճ աղջիկը, որ պիտի ամուսնանար աթենացու հետ — ազնուական քահանայի քոյրը»։

«Աւաղ, մօտ է խելագարութեան։ Երբեմն նա անիծում է սպանողին. լեռոյ յանկարծ լռում է. լեռոյ զոչում է, բայց ի՜նչ ու անիծեմ։ Ո՛հ եղբայրս, Գլոկուսը չէր քեզ սպանողը — երբէք չեմ հաւատայ»։ Յետոյ նա նորից սկսում է և նորից կանգ առնում, և ինքն իրան մըրմնջում սարսափահար ձայնով. «բայց եթէ իրօք այդպէս լինէր»։

«Տարաբախտ Իօնէ»։

«Բայց լաւ է, որ կրօնքի հրամայած հանդիսաւոր ծիսակատարութիւնները մեռելի համար, ցայժմ նրա ուշադրութիւնը հեռացրել են իրանից և Գլոկուսից. և զգացմունքի մշուշի մէջ նա հաշիւ թէ պիտէ, որ Գլոկուսը բռնուած է և չուտով պիտի դատուի։ Երբ Ապէկիդէսի դամբանական արարողութիւնները վերջանան, նրա գիտակցութիւնը նորից կը վերադառնայ. և այն ժամանակ ես չատ վախենում եմ, որ նրա բարեկամները

կը զգուշանան տեսնելով, որ նա վազում է օգնելու իր եղբօր սպանողին»։

«Աթոպիսի մի խստասրտութեան առաջը պէտք է առնել»։

«Ես էլ հէնց նախազգուշութիւններ եմ ձեռք առել դրա համար։ Ես եմ նրա օրինական խնամակալը, և թոյլտուութիւն եմ տացել նրան տանել իմ տունը Ապէկիդէսի թաղման հանդիսից յետոյ. այնտեղ, եթէ տատանմունքը կամենան, նա ազատ կը լինի»։

«Դուք չատ լաւ էք արել, իմաստուն Աբրակ։ Եւ այժմ այն է Սալլուստի տունը։ Ատտուածները պահպանեն ձեզ։ Սակայն լսեցէք ինձ, Աբրակ. դուք ինչու այդքան մեռել էք և անընկերական։ Մարդիկ ասում են, որ դուք կարող էք զուարճանալ. ինչու՞ ինձ թոյլ չէք տալիս, որ ձեզ ծանօթացնեմ Պոմպէյի զուարճութիւնների հետ. ես վստահ եմ, որ ոչ ոք ինձանից աւելի լաւ չը պիտէ այդ զուարճութիւնների տեղը»։

«Շնորհակալ եմ, ազնիւ Կլոդիուս. ձեր առաջնորդութեամբ կարծեմ կարող եմ անվախ հաղնել Փիլիպեան. բայց իմ տարիքի մի մարդը չատ ձախլիկ աչակերտ կը լինի»։

«Օ, մի վախենաք. ես հօթանասուն տարեկաններից նորատեսաւ եմ չինել։ Բայլ դրանից հարուստները երբէք չեն ծերանում»։

«Դուք չոգնքորթում էք ինձ։ Ապագայում կարելի է կը լիշեցնեմ ձեզ ձեր խոստումը»։

«Մարկուս Կլոդիուսը միշտ պատրաստ է ձեր հրամաններին կատարելու.—առայժմ, vale».

«Աբրակ», ասաց եգիպտացին մնաթոսկելով, «ես զուր տեղ մարդկանց արիւն թափել չեմ ուզում. ես յօժարու-

Թեամբ կազատէի այս լոյնին, եթէ, խոստովանելով այս մեղքը, նա յաւիտեան հեռանայ Իօնէից, և յաւիտեան ինձ ազատէ յայտնուելու կարելիութիւնից. ես կարող եմ ազատել նրան համոզելով Ջուլիային խոստովանել սիրապղծի գաղտնիքը, որով կարելի է արդարացնել նրան։ Բայց եթէ նա չուզէ ընդունել յանցանքը, այն ժամանակ Ջուլիան պիտի ամաչէ խոստովանուիլ, և նա պէտք է մեռնի—մեռնի, որ մի ուրիշ կենդանի մնայուն իմ հակառակորդս դառնայ—մեռնի, որպէս դի մեռելների մէջ ինձ փոխանորդէ. արդեօք կը խոստովանի՞. չէ կարելի նրան համոզել, որ իր զառանցական դրութեան մէջ նա զարկեց հարուածը։ Ինձ համար դա աւելի մեծ ապահովութիւն կը լինէր քան նրա մահը։ Հը՛մ, պէտք է փորձենք այս ձևը»։

Արբակ անցաւ նեղ փողոցներից և մօտեցաւ Սալուստի տանը, այդ բոպէին տեսաւ, որ մի սև բան փաթաթուած մի վերարկուի մէջ ամբողջ երկարութեամբ պառկած էր Սալուստի տան չէմքին։

Այնքան անչարժ էր այդ մարմինը և այնքան սև էին նրա չրջագծերը, որ որևէ ուրիշը, Արբակի տեղ, կարող էր աւելորդապաշտական մի երկիւղ զգալ, կարծելով, որ մի զուտ տեսնում է այն զարհուրելի ուրուականներից մէկը, որոնք սիրում էին այցելել իրանց նախկին բնակութեան չէմքերը։ Սակայն Արբակի համար չէին այդ երազները։

«Վ՚ևը կաց», ասաց նա իր ոտքի ծայրովը դպչելով քնացողին. «դու բռնել ես իմ ճանապարհը»։

«Հա՛, ով ես դու», զոչեց պառկածը մի սուր ձայնով. և երբ նա վեր կացաւ գետնից, աստղերի լոյսը ընկաւ Թեսալացի Նիփիայի դէմքատ երեսի և յառած

դայլ անլոյս աչքերի վրայ։ «Ո՞վ ես դու. քո ձայնը ինձ ծանօթ է դալիս։

«Մոլր աղջիկ, ինչ ես անում այստեղ այս ժամին։ Ամօթ, վայել է այս գործը քո սեռին և տարիքին։ Տուն գնա, աղջիկ»։

«Ես ճանաչում եմ քեզ», ասաց Նիփիան ցած ձայնով, «դու եգիպտացի Արբակն ես». յետոյ որպէս թէ ներշնչուած մի յանկարծական մղումից, նա ընկաւ Արբակի ոտքերը և գրկեց նրա ծնկները, դոչելով մի վայրենի և կրքոտ լի ձայնով. «Ո՛վ սոսկալի և հզօր մարդ, ազատիր նրան, ազատիր նրան։ Նա յանցաւոր չէ. ես եմ յանցաւորը։ Նա պատկած է ներքումը, հիւանդ, մահամերձ, և ես, ես եմ տեղի պատճառը։ Ինձ թոյլ չեն տալիս գնալ նրա մօտ, նրանք վռնտում են կոյր աղջկան տրանից։ Ո՛հ, առողջացրու նրան, դու ճանաչում ես արևէ բոյս, հմայք, կամ հակահմայք, որովհետև մի հեզուկ պատճառ է եղել նրա խելագարութեանը»։

«Սուս, աղջիկս, ես բոլորը գիտեմ. դու մոռանում ես, որ ես ընկերացայ Ջուլիային սպասի տանը։ Անտարակոյս Ջուլիան է տուել այդ հեզուկը. բայց նրա անունը պահանջում է, որ դու լռես։ Ինքդ քեզ մի մեղադրիր. ինչ որ պէտք է լինի, կը լինի. իսկ այժմ ես գնում եմ յանցաւորի մօտ. գուցե կարելի է նրան ազատել։ Հեռացիր»։

Այս ասելով, Արբակ դուրս եկաւ յուսահատ թեսալուհու ձեռքից, և ուժով զարկեց դուռը։

Մի քանի րոպէ յետոյ մեծ ձողերը յետ քաշուեցան, և պռնապանը կիսով չափ բանալով դուռը, հարցրեց թէ ով էր։

«Արբակ։ Գլոկուսի վերաբերութեամբ հարկաւոր

գործ ունիմ Սալլուստի հետ։ Պրէտորի մօտից եմ գալիս»։

Դանապանը, կէս յօրանջելով, կէս հառաչելով նետս թողեց եգիպտացու բարձր հասակը։ Նիլիան առաջ թռաւ։ «Ինչպէս է նա», զոչեց նա. «ասա ինձ, ասա ինձ»։

«Հօ, խենթ աղջիկ, էլի գու ես, ամօթ է։ Ասում են խելքը տեղն է եկել»։

«Փառք աստուածներին. և գու նորից ինձ թոյլ չ'ու տալ նետս մտնեմ։ Ա'հ, աղերսում եմ...»։

«Քեզ նետս թողնեմ. ոչ։ Մի գեղեցիկ վաղաքչանք կը պատրաստեմ այս ուսերի համար եթէ քեզ պէս բանների թոյլ տամ նետս մտնել։ Դնա տուն»։

Դուռը փակուեցաւ և Նիլիան մի խոր հառաչ քաշելով նորից պառկեց պաղ քարերի վրայ և փաթաթելով իր վերարկուն իր երեսին, վերսկսեց իր տաղտուկ հոգումը։

Նոյն միջոցին Արբակ հասել էր արիկլինեումը, ուր Սալլուստ, իր սիրելի ազատագրուած գերու հետ, բաւական ուշ սեղան էր նստել։

«Ի'նչ. Արբակ և այս ժամին, ընդունիր այս բաժակը»։

«Ո'չ, աղնիւ Սալլուստ. գործի հաւար է և ոչ զուարճութեան, որ ես յանգստնում եմ անհանգիստ անել ձեզ։ Ինչպէս է Գլոկուսը, քաղաքում ասում են, որ ուշքը տեղն է եկել։

«Աւաղ, ճշմարիտ է», պատասխանեց բարեսիրտ բայց անհոգ Սալլուստը, սրբելով արցունքը իր աչքերից. «բայց այնպէս խորտակուած են նրա ջղերը և կազմուածքը, որ ես դժուարութեամբ եմ ճանաչում իմ նախկին փայլուն և զուարթ ղուարճասէրին։ Բայց և այնպէս, զարմանալի է, որ նա չէ կարողանում բացատրել իր յանկարծական խելացնորումը. նա հպիտ մի աղօտ գիտակցութիւն ունի թէ ինչ է անցել. և չը նայելով քո վկայութեանը՝ խմատուն եգիպտացի, նա պընդում է թէ ինքը անպատճառ է Ապեկիդէսի սպանութիւնից։

«Սալլուստ», ասաց Արբակ լրջօրէն, «չատ բան կայ քո բարեկամի դէպքում, որ արժանի է մանաւանդ ներողամտութեան. և եթէ կարողանայինք նրա չրթունքներից լսել նրա գործած յանցանքի խոստովանութիւնը և պատճառը, չատ բան կարող էինք յուսալ սենատի ողորմածութիւնից. որովհետև սենատը, ինչպէս գիտես, իշխանութիւն ունի մեղմացնելու կամ խստացնելու օրէնքի ոյժը։ Այդ պատճառով է որ ես խօսել եմ քաղաքի ամենապարզ իշխանութեան հետ, և նրանից թոյլտուութիւն եմ առել, որ այս գիշեր մի գաղտնի տեսակցութիւն ունենամ աթենացու հետ։ Վաղը ինչպէս գիտէք դատաստանը սկսուելու է։

«Լաւ», ասաց Սալլուստ, «գու արժանի կը լինես քո արևելեան անունին և հռչակին՝ եթէ կարողանաս որ և է բան հասկանալ նրանից. բայց կարող ես փորձել։ Խնդճ Գլոկուս, և նա ինչ սքանչելի ախորժակ ունէր։ Նա այժմ ոչինչ չէ ուտում»։

Բարեսիրտ եպիկուրեանը չատ յուզուած էր այս մտքով։ Նա հառաչեց և հրամայեց իր գերուն նորից լցնել իր բաժակը։

Սալլուստ գլխով հաւանութեան նշան արեց, և Արբակին առաջնորդեց մի փոքրիկ սենեակ, որի դրան մօտ երկու նիրհուն գերիներ պահակ էին կանգնած։ Դուռը բացուեցաւ. և եգիպտացու խնդրանօք Սալլուստ յետ քաշուեցաւ։ Եգիպտացին միայնակ էր Գլոկուսի հետ։

Այն բարձր և չնորհաձև աչառնականերից մեկը,

(որոնք դործածական էին մինչև այդ ժամանակ) պահելով իր վրայ մի մեծ ճրագ, վառում էր նեղ մահճակալի կողքին։ Դրա աղօտ ճառագայթները ընկել էին աթենացու երեսին, և Արբակի սիրտը չարժուեցաւ, տեսնելով թէ ինչ զղալի կերպով փոխուել էր այդ կերպարանքը։ Նրա ճակատը դոյնը թռել էր, թշերը փոս էին ընկել, շրթունքները դունաթափուել էին և կրում էին իրանց վրայ բուռն ցնցումների նշաններ. կառաղի էին եղել բանականութեան կեանքի և մահուան միջև եղած պատերազմը։ Գլոկուսի երիտասարդութիւնը և ոյժը չպաթանական էին. բայց արեան և հոդու թարմութիւնը—կեանքի կեանքը—նրա փառքը և նրա անունը յաւիտեան անհետացել էին։

Եպիսկոպոսին հանդարտ նստեց մահճակալի կողքին. Գլոկուս պառկած էր անշարժ և անդիտակից նրա ներկայութեան վերաբերութեամբ։ Վերջապէս, բաւական լռութիւնից յետոյ, Արբակ այսպէս ասաց.

«Գլոկուս մենք թշնամիներ ենք եղել։ Ես այժմ եկել եմ քեզ մօտ մխայնակ և դիշերուայ լռութեան միջոցին—ես եկել եմ որպէս քո բարեկամը և կարելի է քո փրկիչը»։

Ինչպէս նժոյգը յետ է թռչում վագրի ճանապարհից, նոյնպէս Գլոկուս, վեր թռաւ անչունչ հևալով, և սարսափահար իր թշնամու չարկարծական երևոյթից։ Նրանց աչքերը հանդիպեցին, և նրանցից ոչ մէկը, մի քանի րոպէ զօրութիւն չունէր դարձնելու իր նայուածքը։ Արիւնը գնում գալիս էր աթենացու երեսի վրայ և եպիսկոպոսու բռնազօսն երեսը մի սուսերով ահեղի դուռնատեցաւ։ Ի վերջոյ, մի խորին հառաչանքով, Գլոկուս

դարձաւ, ձեռքը քաշեց իր ճակատին, ընկաւ իր անկողնի վրայ, և մրմնջաց.

«Արդեօք դեռ երազում եմ»։

«Ոչ, Գլոկուս, դու զարթուն ես։ Երդւում եմ աջ ձեռքով և իմ հօրս դլխով, որ քեզ հետ խօսողը կարող է փրկել քո կեանքը։ Լսիր, ես դիտեմ դու ինչ ես արել, բայց ես դիտեմ դրան արդարացնելու պատճառը, որից դու տեղեկութիւն չունես։ Դու սպանութիւն ես դործել, ճշմարիտ է, մի սրբապիղծ սպանութիւն. մի խոժոռ կերպարանքդ. մի ցնցուիր. այս աչքերովս տեսայ։ Բայց ես կարող եմ փրկել քեզ. ես կարող եմ հաստատել թէ դու ինչպէս զրկուել էիր բանականութիւնից և չէիր մի ազատ մտածող և ազատ գործող մարդ։ Բայց որպէս դի կարողանաս ազատուել, դու պիտի խոստովանես քո մեղքը։ Սատրագրիր այս թուղթը, ընդունելով քո չանցագարտութիւնը Ալէկիդէսի մահուան խնդրում և դու դեռ կարող ես ազատուել մահացու ամիսնակալից։

«Դրանք ինչ խօսքեր են։ Սպանութիւն և Ալէկիդէս. մինչ չը տեսայ նրան դիակ դարձած և արիւնաթաւալ փռուած դետնի վրայ. և դու ուզում ես ինձ համոզել, որ ես սպանեցի նրան։ Այ մարդ, դու սուտ ես խօսում։ Հեռացիր»։

«Անխոհեմ մի լինիր, Գլոկուս. չատպամբ մի պատասխանիր. քո ոճիրը հաստատուած է։ Ե՛կ, եկ քեզ կարելի է ներել, որ չես լիշում քո խելացնորութեան մէջոցին արած գործդ. մի գործ, որից խելքդ տեղը եղած ժամանակ պիտի խորչէիր մտածել անգամ։ Բայց Թող օգնեմ քո սպառուած և յոգնած լիշողութեանդ։ Դու դիտես, որ դու քալլում էիր քահանայի հետ միասին վիճելով

նրա քրոջ վրայ. դու դիտես, որ նա նեղմիտ էր և կէս հաղովրեցի, և նա աչքառում էր քեզ հատատախտ անել. և ձեր վէճը տաքացաւ. և նա յանդիմանեց քեզ քո վարած կեանքիդ համար, և երդուեց, որ իր քրոջը չըպիտի տայ քեզ. և լեռոյ քո բարկութեան և խելացնորութեան մէջ դու յանկարծ զարկեցիր այդ հարուածը։ Ե՛կ, ես. դու կարող ես լինել այսքանը։ Կարգա՛ այս մագաղաթը, դրա պարունակութիւնը իմ ասածիս համաձայն է. ատրագրիր այդ և դու կը փրկուես»։

«Բարբարոս, տուր ինձ այդ դրուած առւտը, որ պատառեմ դրան։ Ե՞ս Իօնէի եղբօր ապանիչը։ Ե՞ս խոստովանուիմ, որ մէկ մաղն անգամ վնասած լինեմ այն մարդուս, որին Իօնէն սիրում էր։ Հաղար անգամ մահը վերադասելի է»։

«Զգուշ կաց», ասաց Արբակ մի ցած և օձալին չընչչնուով. «լոկ մէկ ընտրութիւն կայ – խոստովանութիւնը և քո ատրագրութիւնը, կամ ամիսիթատրոնը և առիւծի ժանիքները»։

Մինչդեռ եղիպատցին անեղել էր իր նպատակը հնարելի երեսին, նա ուրախութեամբ ողջունեց յայտնի ղգայմունքի այն նշաններըը, որոնք իր վերջին բառերից լեռոյ սկսեցին երևալ Գլոկուսի երեսին։ Մի թեթև ցնցում անցաւ աթենացու մարմնից. նրա շրթունքը կախ ընկաւ. յանկարծական երկիւղի և զարմացման մի արտայայտութիւն յայտնուեցաւ նրա ճակատի և աչքի մէջ։

«Մեծ աստուածներ», ասաց նա ցած ձայնով, «այս ինչ փափխութիւն է։ Կարծես մի կարճ օր չէ անցել այն ժամանակուանից, որ կեանքը ծիծաղում էր ինձ վարդերի մէջից. Իօնէն իմ էր. երիտասարդութիւնը, առողջութիւնը, սէրը տեղում էին իմ վրայ իրանց բա-

րիքները. և այժմ, դու, խելագարութիւն, ամօթ, մահ։ Ես ինչո՞. ինչ եմ արել ես. ո՛հ, միթէ դու խելագա՞ր ես»։

«Ատրագրիր և փրկուիր», ասաց եղիպատացու փափուկ քաղցր ձայնը։

«Փորձիչ, երբէք», պատեց Գլոկուս, հակադարձ կատաղութեամբ։ Դու ինձ չես ճանաչում. դու չես ճանաչում մի աթենացու խրոխտ հոգին։ Մահի երեսը յանկարծ երևալով կարող է մի րոպէ վախացնել ինձ, բայց այդ երկիւղը վաղանց է։ Անպատուութիւնը յաւիտեան սարսափեցնում է։ Ո՞վ կը ատրացնէ իր անունը իր վնասնքը փրկելու համար, ո՛վ կը փոխէ պարզ մտքերը խելագարութեան օրերի հետ. ո՛վ ինքը երան սուտ կը հանէ ամօթով լինելու համար. և սևանալու փառքի և սիրոյ առջև։ Եթէ մի քանի օր պիղծ կեանք չահելու համար գտնուի այդպիսի մի ստոր վատասիրտ՝ մի մատծիր, ո՛վ Եգիպտոսի տիրամայր բարբարոս, այդ մարդուն գտնել մէկի մէջ, որ կախած է Հարմոդիուսի կոխած հողը և չնչել է Սոկրատէսի չնչած օդը։ Գնա և թո՛ղ ապրիմ աստանց խղճահարութեան, կամ մեռնիմ առանց երկիւղի»։

«Լաւ խորհիր, առիւծի ժանիքները, անտանգած ամբոխի ծաղրածական աղաղակները. ասիկների նայուածքը քո մահուան տառապանքի և քո անջատուած անդամների վրայ. քո անունը անարգուած քո պիակը չը թաղուած. այն ամօթը, որից դու կազատուես լինուելով քո վրայ յաւիտեան»։

«Դու զառանցում ես. գո՛ւ ես խելագարը. ամօթը այն չէ, որ մենք կորցնենք ուրիշների յարգանքը, այլ այն, որ կորցնենք մեր յարգանքը։ Չե՞ս հեռանում. իմ աչքերը զարշում են քո ներկայութիւնից. միշտ առելով՝ ես այժմ արհամարհում եմ քեզ»։

«Ես գնում եմ», ասաց Աբրակ, խալթուած ու յուսահատուած, բայց ոչ առանց մի խղճացող սքանչացման իր գոհի վրայ,—«ես գնում եմ. երկու անգամ նորից կը հանդիպենք—մէկ անգամ դատարանում, մէկ էլ մահուան րոպէին։ Մնաս բարեաւ»։

Եգիպտացին կամաց բարձրացաւ, իր զգեստները հաւաքեց իր շուրջը, և դուրս եկաւ սենեակից։ Նա մի րոպէ գնաց Սալլուստի մօտ, որի աչքերը արդէն սկսել էին թմրել բաժակի ազդեցութեան տակ. նա զեռ անզգայ էր, կամ յամառ. լոյս չը կայ նրա համար»։

«Մի ասիր այդպէս», պատասխանեց Սալլուստ, որը մեծ յարգանք չէր զգում ամբաստանողի դէմ, որովհետև նրա առաքինութիւնը չատ խստապահանջ տեսակներից չէր. և ամէն նա արտաշարժուած էր իր բարեկամի տարաբախտութեամբ, քան համոզուած նրա անմեղութեան մասին. «այդպէս մի ասիլ, իմ եղիպտացիա, այդքան լաւ խմորը պէտք է փրկուի, եթէ կարելի է։ Բաքոսը Խոխի դէմ»։

«Կը տեսնենք», ասաց եղիպտացին։

Յանկարծ փականքները քաչուեցան. դուռը բացուեցաւ և Աբրակ դուրս եկաւ բաց օդի մէջ. և խնդճ Նեղիան նորից վեր թռաւ իր երկար սպասումից յետոյ։

«Կը փրկես նրան». գոչեց նա, կցելով իր ձեռքերը։

«Աղջիկս, եկ լինճ հետ տուն. ես ուզում եմ խօսել քեզ հետ. Գլոկուսի համար է, որ քեզ ուզում եմ»։

«Ես դու կը փրկես նրան»։

Ոչ մի պատասխան չեկաւ կոյր աղջկայ ծարաւ ականջներին։ Աբրակ արդէն բաւական առաջացել էր փողոցի մէջ. աղջիկը մի րոպէ վարանուեցաւ, և յետոյ լուռ հետևեց նրա քայլերին։

«Ես պէտք է ապաշով տեղ պահեմ այս աղջկան», ասաց Աբրակ, մտախոհ եղանակով. «մի գուցէ նա վկայութիւն տայ հեղուկի մասին. գալով ունտիտամիա Զուլվայինն, նա ինքն իրան չի մատնի»։

Գլուխ Հ.

Պրակիական թաղում։

Մինչդեռ Աբրակ այս գործերով զբաղուած էր, Վիչտը և Մահը տարածել էին իրանց չարագուշակ թեւերը Խոնէի տան վրայ։ Այն գիշեր, որի հետևեալ առաւօտը թագման հանդիսաւոր արարողութիւնները պիտի կատարուէին սպանուած Ապիկիդէսի վրայ, նրա մարմինը Խոխի տաճարից տեղափոխուեցաւ ամենամօտիկ աղգականի տունը։ Խոնէն միևնոյն չնչով լսել էր թէ իր եղբօր մահը և թէ իր նշանածի ամբաստանութիւնը։ Յաւիտենական ուժգնութիւնը, որ բժշկուում է զգացումը ամեն ուրիշ բանի համար, բացի իր և նրա զերծնների լուսթիւնը, նրան թոյլ չէր տուել մանրամասնաբար լսել իր սիրեկանի վիճակի հանգամանքները։ Խոնէն չը գիտէր նրա հիւանդութեան, նրա խելագարութեան և նրա մօտալուտ դատուելու լուրը։ Նա լոկ լսել էր նրա դէմ բերուած ամբաստանութիւնը, և անմիջապէս ամենայն զայրոյթով հերքել էլ այդ. ոչ, այլ լսելով, որ Աբրակն է ամբաստանողը՝ նա կատարեալապէս և առանց կասկածի հաւատացած էր թէ Աբրակը ինքն է ոճրագործը, այնպէս որ նա այլ ևս ոչ մի ապացոյցի կարօտութիւն չունէր հաստատուելու իր զգաստարի մէջ։ Բայց այն անգին և ուշագրաւ նշանակութիւնը, որ նախնիները տալիս էին իրանց աղգականների թաղման

ամեն մի արարողութեանը, ցարդ սահմանափակել էր նրա վիշտը և նրա համոզումները ննջեցեալի սենեակի մէջ։ Աւաղ, նրան չը տրուեցաւ կատարել այն փափուկ և սրտաչարժ պաշտօնը, որ սովորութիւն էր ամենամօտիկ աղգականներին աչխատել ներկայ լինել իրանց սիրեցեալի վերջին շունչի և հոգու հեռացման ժամանակ։ Բայց նրան տրուեցաւ փակել իր եղբօր լայնացած թարթիչները և ծռմռուած շրթունքները, հսկել նրա սրբազնացած կաւի մօտ, մինչդեռ դա նոր լուացուած, օծուած և իր ամենապերճ զգեստների մէջ, պարզուած էր փղոսկրեայ մահճակալի վրայ. ծածկել նրա անկողինը ուռկաններով և ծաղիկներով, և փոխոխել սենեակի դրան կլուպարիսի ճիւղը։ Եւ զբաղուած է այս տխուր պաշտօններով, ողբալով և աղօթելով Խնէն լինքն իրան մոռացաւ։ Նախնիների ամենասիրելի սովորութիւններից մէկն այն էր, որ երիտասարդներին թաղում էին առաւօտեան արշալոյսի ժամանակ. որովհետև ինչպէս նրանք աչխատում էին ամենափափուկ մեկնութիւնը տալ մահուան, նոյնպէս նրանք բանաստեղծարար երևակայում էին թէ Արշալոյսը, որ սիրում էր դեռատիներին, գողացել էր նրանց և տարել էր իր ղիրկը. և թէև սպասուած քահանայի դէպքում, այս առասպելաբանութիւնը չէր կարող առանց անպատշաճութեան խաթել մարդու երևակայութիւնը, դարձեալ ընդհանուր սովորութիւնը պահպանւում էր *)։

*) Սա աւելի մի յունական սովորութիւն էր, քան հռոմէական. բայց ընթերցողը կը նկատէ, որ Մեծն Յունաստանի քաղաքներում սովորութիւնները և աւելորդապաշտութիւնները շատ խառն էին հռոմէականի հետ։

Ատաղերը մի ըստ մէոջէ անհետանում էին զորչ երկնքի երեսից, և դիչերը կամաց կամաց նահանջում էր մերձեցող այգի առջև, երբ մի սև խումբ անչարժ կանգնեց Խնէի դրան առաջ։ Երկար և բարակ ջահեր, դունատուած գեռ ոտաս արշալոյսից ձգում էին իրանց լոյսը զանազան կերպարանքների վրայ, որոնք այդ բոպէին կրում էին մլինոյն լուռ հանդիսաւոր և ուշադիր արտայայտութիւնը։ Եւ այժմ լուռեցաւ մի դանդաղ և դամբանական երաժչտութիւն, որ իր տխուր նուաերով յարմարւում էր այդ արարողութեան հետ, և տարածւում էր հեռու դատարկ և լքանուած փողոցների մէջ. մլինչդեռ կանացի ձայների մի յանդերգ (պրէֆիկէն, praeficae, որ այնքան լիչեցել է հռոմայեցի բանաստեղծների կողմից) մլուցած տիբիկեան և մլուխական արլինդին, երգեց հետևեալ բառերը.

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՈՂԲԸ

Այն տխուր չէմքից, ուր նոճի ճիւղեր վարդի վոխարէն,
Քո տանըդ դուռը սուգի նչանով այժմ պճնում են,
Ո՛վ ուղևորդ ամիքսեան ափի, դուրս եկ և մնկնիր
Քո այս աչխարհի վերջին ուղիով դէպ մահուան երկիր։
Յաւով կոչում ենք, և արտասուելով հրաւիրում ենք քեզ.
Մահն է հիւրընկալ—քեզ սպասում է նրա ժանտ հանդէս,
Դիչերուայ տան մէջ արդէն կախուած է քո ծաղիկ պսակ,
Եւ լոկ սև գետից պլսակ լետ այսու լեցուի քո բաժակ։
Էլ այսուհետև չը կան քեզ համար ծիծաղ և երգեր.
Յաւիտեան անցան ցերեկուայ փառքը և ուրախ պիչեր։
Դուրս եկ, ապաւր, էլ մի ուչանար, մեռածի ոդին
Անթաղների մէջ անչուշտ է մտնել իր հանգիստ վերջին։

Անհամբեր լոյսով վառուում է մեր ջահ և բացում դեռևկ Թոբա եկ սգաւոր, մեռեալի ողին ասում է քեզ «Եկ»։

Երբ երդի ձայնը լռեց, խռմբը երկուսի բաժանուեցաւ. յետոյ Ալեկկիդէսի դիակը դրուած մի դաղաղի վրայ, և ծածկուած մի ծիրանեզոյն երեսակալով դուրս ելուեցաւ, ոտքերը դէպի առաջ բռնուած։ Վերակացուն կամ այդ դամբանական հանդէսի կարգադրիչը, չրջապատուած իր սեռազեստ ջահակիրներով, նշան արեց և թափորը չարժուեցաւ իր ահաւոր երևոյթով։

Ամենից առաջ գնում էին երաժիշտները նուագելով մի դանդաղ քայլերգ—մեղմաձայն նուագարանների հանդիսաւորութիւնը երբեմն խանգարում էր դամբանական չափորների աւելի բարձրաձայն և աւելի վայրենի թնդիւնով. երաժիշտներին հետևում էին վարձուած ողբացողներ, եղանակելով իրանց կոծերը. և կանացի ձայներ խառնուած էին տղայոց ձայներին, որոնց մատաղ տարիքը աւելի աչքի զարկող էր դարձնում կեանքի և մահուան—զառամած և թարմ աերևի հակադրութիւնը։ Բայց խազացողները, խեղկատակները և արքիմիմուսները *), որոնք ընդհանրապէս ներկայ էին լինում տավարական թաղումներին, արտաքսուած էին այս հանդիսից, որը չրջապատուած էր այնքան տխուր հանդամանքներով։

Յետոյ գալիս էին Խոխի քահանաները, ոտնաբաց, ձիւնասիալ զգեստներով և ցորենի որաններով. մինչդեռ դագաղի առջևից տարուում էին մեռեալի և նորա բազմաթիւ աւենական նախնիների պատկերները։ Դիակի հետևից գնում էր մեռեալի միակ կենդանի ազգականը,

*) Սրանց պարտականութիւնն էր մասնացնել մեռեալին,

չրջապատուած իր նաժիշտներով. նրա գլուխը բաց էր և մազերը արձակ. նրա երեսի աւելի գունատ էր քան մարմարիոնը, բայց հանդարտ էր և ամփոփ. երբեմն երբեմն երբ մի սրատաչարժ միտք, երաժշտութեան ազդեցութեամբ, ցոլում էր նրա խորին ցաւի թմրութեան մէջ. նա ծածկում էր իր երեսը իր ձեռքերով և թաքուն հեկեկում էր. որովհետև նրա վիշտը չէր այն աղմկալից արտահայտութիւնը, այն սրաձայն ողբը, այն անզուսպ չարժումները, որոնք բնորոշ են մեռեալին նուագ յարգողների մէջ։ Այդ դարում ինչպէս ամեն դարերում խորին վիշտը հաստատ էր հանդարտ և անձայն։

Եւ այսպէս թափորն անցաւ փողոցներից, անցաւ քաղաքի դռնից և հասաւ անպարիսպ գերեզմանատունը, որը ճանապարհորդն այժմ էլ կարող է տեսնել։

Ըր լցուած չոքի փայտերից, և սեզանի ձևով չինուած էր խարույկը, որի արանքներում դրուած էին դիւթական նիւթեր. նրա չուրջը չարուած էին պլխիկոր և թխագոյն կիւպարիսներ, որոնք երդով նուիրուած էին գերեզմանին։

Երբ որ դագաղը դրուեցաւ փայտակոյտի վրայ, ծառաները քաչուեցան այս և այն կողմ, Խոնէն մօտեցաւ իր եղբօր դիակին և մի քանի րոպէ լուռ և անչարժ կանգնեց այդ անդիտակից կաւի առջև։ Բռնի մահուան ատելի առաջին արտայայտութիւնը չքացել էր և մեռեալի երեսը աւելի հաւաքուել էր. յուխտեան խամրել էին սարսափը և կասկածը, կրքերի պայքարը, կլօնքի ահը, ներկայի և անցեալի մաքառումը, ապագայի չոյսը և սոսկումը։ Բոլոր այն բաներից, որոնք կործանում և աւերակ էին գարձնում այդ երխտասարդի կուրծքը, որ միչտ ձգտում էր դէպի լինչ որ սուրբ է կեանքի մէջ,

այժմ ինչ տեսանելի հեռաք է ծնացել այդ անթափանց ճակատի և անչունչ չրթունքի ահասոր անդորրութեան մէջ։ Քոլըը նայում էր, և ոչ մի ձայն դուրս չէր գալիս ամբոխից. մի ինչ որ սարսափեցուցիչ, բայց և նոյն ժամանակ ջոցին փափկացուցիչ բան կար այդ լռութեան մէջ. և երբ որ խանգարուեցաւ այդ լռութիւնը, դա խանգարուեցաւ յանկարծ և անսպասելի կերպով—դա խանգարուեցաւ մի բարձրաձայն և սրտաոզդ գոչիւնով—ինչպէս ճայթուած երկար խեղդուած յուսահատութեան։

«Եղբայրս, եղբայրս, ազատակից իմ որբը ընկնելով գազազի վրայ. «դու, որից քո ճանապարհի մրջիւնը չէր վախենում, արդեօք ինչ թշնամի կարող էիր ունենալ։ Ո՛հ, իրօք, այսպէս է։ Չարթնիր, զարթնիր։ Մենք միասին մնծացանք. մենք այսպէս պիտի պատսուխնք միմեանցից։ Դու մեռած չես—դու քնած ես։ Չարթնիր, զարթնիր»։

Նրա սրտաճմլիկ ձայնը զրգռեց ողբացողների համակրութիւնը և նրանց միջից լսուեցաւ մի բարձրաձայն և կսկիծ ողբ։ Այս ձայնը ցնցեց և ուշքի բերեց Իօնէին. նա վեր նայեց սրտագ և չփոթուած, կարծես առաջին անգամը լինելով նա տեսակցաւ միւսների ներկայութիւնը։

«Ա՛հ», միանգամ նա սարսռալով, «ուրեմն մենք միայնակ չենք»։

Այդ ասելով նա վեր կացաւ. և նրա գունատ և վշտակիզ կերպարանքը նորից ամփոփուեցաւ և ամբացաւ Գարավագոլի և դողդոջուն ձեռքերով նա բացաւ մեռելի թարթիչները. բայց երբ մահացեալի ապուշ և ապակիացած աչքը, որ ալ ևս չէր փայլում սիրով և կեանքով, հանդիպեց նրա աչքին, նա այնպիսի մի ճիչ արձակեց, որպէս թէ մի ոգի տեսած լինէր։ Գարձեալ ուշքը հաւաքելով՝ նա նորից համբուրեց իր եղբօր թարթիչները, չրթունքները և ճակատը. և մեքենական և անգիտակից ձեռքով սասյաւ գամբանական ջահը՝ իր եղբօր սառարի քահանայապետից։

Երաժշտութեան յանկարծական ճայթիւնը, ողբացողների անակնկալ երգը յայտնեցին սրբազնացուցիչ կրակի ծնունդը։

ԵՐԳ ԱՌ ՀՈՂՄԸ

Էլ բաւ է նոջիս ամպոզէն մահճում,
Զարթնիր ով Քամի, սրբազան և հեզ.
Ով որ էլ վինի քեզ ծնող հայրը
Հեզ և սրբազան կը կոչենք մենք քեզ։
Այո, դու նոյնչափ քաղցր ես մեզ համար
Որչափ Զեփիւռը, որ ծաղկապըսակ
Վազում է գիրկը իր չքնաղ հարսին,
Մեղմանուշ այգի ցօղի ժամանակ։

II

Ահա արծաթեայ մեր անօթներից
Շնչում են բոյրեր դէպ ի քո ուղին,
Եւ ցարդ չեն ծփած քաղցրագոյն հոտեր
Կիպրեան լուսնկայ ծովի երեսին։
Եւ ահա նարտի հոտաւէտ ծովում
Քեզ հրաւէր կարդում, ճօճում է բուրվառ.
Կասիան և զմուռս լցնում են օդը
Արծաթաառնդակ ոտքերիդ համար։

III

Աղբիւրդ անապատ չնչաւոր կեանքի,
Ո՛վ Օդ վտառանեղ և յաւերժական,
Ա՛ռ այս համր կաւից, պրտած քո առջև,
Կեանքի սերմերը, որ տուիր նրան։
Զարթնիր քո քնից, ոլորվայրի Քամի,
Եկիր, բարձրացիր, ով Բոց լուսավառ,
Ցնծա առ նրանից քո մասըդ, ով Օդ,
Ո՛վ հոգի վեհապանծ ինչ տուիր չնա առ։

IV

Քամին լսելով մեր աղաչանքը
Ոտում է գոռծում գալիս էր, ահա,
Եւ ճարճատում է թռչում սլանում
Հուրը արբազան խարույկի վրայ։
Դա բարձրանում է և իր թևերը
Խառնում հիւսում է բոցի թևերին.
Նոքա հանդիպում և պատանջում են
Իւրաքանչիւրը իր տուած բաժինն։

V

Ձըգեցէք բուրվառ, ճօճեցէք արագ,
Թող լարից հնչէ մի մեղմ եղանակ.
Այն բանակից, ուր քեզ փակած էր կաւը,
Ղրկեցից որ քեզ կրնաճ էր ցաւը,
Բոցի ձեռքերը քեզ ազատեցին
Եւ այժմ ազատ ես, հոգիդ մարդկային
Ինչպէս օդերի ծովի երեսով

Ազատ սահում են հոգիներ անդադար,
Կարող ես թռչել տարածութեան մէջ,
Այլ նրա փականք չը կայ քեզ համար։
Այլ նրա դու չես աշխարհի գերին
Ով հոգի ազատ—ազատ ես—իսկ մենք,
Ա՛հ, երբ վերջանան պիտի մեր օրեր,
Որ դանք թռչելով և քո մօտ հանդչենք։

Եւ այժմ բարձր և հեռու սլացան անուշահոտ բոցերը դէպի այդպատիւռ երկինքը. նրանց լեզուակները տեղի վեր ցոլացին քան միրճակալ քաղաքի տաստակառոյց պարիսպները. և կանուխ ծովը գնացող ձկնորսը ցնցուղացաւ տեսնելով, որ այդ հուրը կարմրացրել էր առտուկոզ ծովի ալիքները։

Բայց Խոնէն նստել էր հեռու և առանձին, և իր երեսը լինած էր իր ձեռքերի վրայ. նա չէր տեսնում բոցը, ոչ էլ լսում էր երաժշտութեան ոլորը. նա միմիայն զգում էր իր մխայնակութիւնը, նա դեռ չէր հասել մխրութեան այն աստիճանին, երբ մխիթարութեան մի արբացուցիչ զգացումով մենք գիտենք, որ միայնակ չենք— որ մեռածները մեր հետ են։

Չեխիւռը արագութեամբ օգնեց դիւրավառ նիւթերին, որ պրտած էին խարույկի մէջ։ Աստիճանաբար բոցը երերուեցաւ, իջաւ, նսեմացաւ և կամաց կամաց, մերթ ընդ մերթ ցոլալով և նսեմելով՝ հանգաւ—ինչպէս իրենք կեանքը. ուր քիչ առաջ ամեն բան անհանգստութիւն էր և բոց, այժմ կար մի բուռ ծխաւն և ապուշ մոխիր։

Ծառաները հանգցրին վերջին կայծերը և հաւաքեցին աճիւնները։ Յետոյ թաղախելով ամենահազուա-

գիւտ գինու և ամենաթանկագին անուշահոտութիւններով մէջ, այդ մսխիրը դրին մի արծաթեայ աճիւնակալի մէջ, որը հանդիսաւոր կերպով զետեղուեցաւ ճանապարհի կողքի դամբաններից մէկում։ Նրանք նոյնպէս դրին այնտեղ արտասուքով լի սրուակը և դրամը, որը բանտաւորութիւնը դեռ նուիրում էր ժամն նաւավարին *)։ Յետոյ նրանք դամբարանը ծածկեցին ծաղիկներով և պսակներով, սեղանի վրայ կնդրուկ վառեցին, և գերեզմանի շուրջը կանգնեցին բազմաթիւ ճրագներ։

Բայց հետևեալ օրը, երբ քահանան վերադարձաւ գերեզմանի մօտ բերելով նոր նուէրներ, նա տեսաւ, որ հեթանոսական աւելորդապաշտութեան նշանների մօտ, մի անծանօթ ձեռք աւելացրել էր մի կանանչ արմաւի ճիւղ։ Նա թոյլ տուեց այդ ճիւղին մնալ այնտեղ չխմանալով, որ դա քրիստոնէութեան դամբանական նշանն էր։

Երբ վերոյիշեալ արարողութիւնները վերջացան, պրէֆիկէնեներից մէկը երեք անգամ սրակեց սգաւորների վրայ դարնու մաքրագործիչ ճիւղից արտասանելով վերջին բառը «Llices!» —Հեռացէք— և արարողութիւնը վերջացաւ։

Բայց նախ նրանք արտասուաթոր աչքերով կանգ առան կրկին ու կրկին արտասանելու սրտաչարժ մնաք բարևը, «Salve Eternum!» Եւ քանի որ Իօնէն դեռ չէր հեռանում, երաժիշտները զարկեցին հրաժեշտի լարին։

ՍԱԼՎԷ ԷՏԷՐՆՈՒՄ (մնաս բարեաւ յաւիտեան)։

Մընաս բարեաւ, հոգիդ հեռացած,
Մընաս բարեաւ, սրբազան սափոր,

*) Սակքոի Փարոն նաւավարը։ Ր. Թ.

Ակռ գառնում են քո սգաւորները
Անմխիթար և արտակոսոր։
Դու գնացիր մեզանից առաջ
Դէպի այն մութ և մըռայլ երկիր,
Ուր մեզ ժամերն առաջնորդում են,
Եւ կարճ միջոց դու մեզ կանխեցիր,
Սալվէ, սալվէ
Ալրեալ սափոր, անուսոր անձաւ,
Ձեւ մռնչ աճիւն, մընացէք բարեաւ։
Սալվէ, սալվէ։

II

Իլևէա—Իրէ լևէա—

Իզուր փորձում ենք քեզնից բաժանուիլ
Մեր սիրուղ սրաերն են քո գերեզման.
Ո՞վ կը պատասէ քեզ մեր սրաերից։
Այնտեղ կը կըրնք մենք քեզ յաւիտեան։
Ի զուր մեր վրայ մենք սրակում ենք
Սրբագործիչ կաթիլներ ջուրի.
Իզուր մեր աչքն, իրանց չորերով
Յաւակում են բոցերն այն քաւիչ հուրի։
Ախիւօք ինչ հնարք կարող է վանել
Փեղ քո սուրը անկոյ և սիրանուէր.
Մեր վիշտը մեծ է քո քահանան,
Քո թագման հանդէս են մեր խոր վէրք։
Սալվէ - սալվէ։

III

Իլիսէա—Իլէ լիսէա—
Կայծը օջախից թռչում գնում է
Ուր որ տանում են օդը և քամին.
Տարերքն առնում են իրանց տուածը
Եւ տուերները առնում քո հոգին։
Մինչդեռ տանում ես մութ գետի վրայ
Պիտի սփոփես երբ զգաս մեր վիշտ.
Թէ վաղանցիկ է սէրը կեանքի մէջ
Դա մահուան երկրում հաստատ է ընդ միշտ։
Սալվէ—սալվէ—
Մեր խնջոյքների պերճ դահլիճի մէջ
Վարդը բուրում է, բայց միայն մի ժամ.
Իսկ մեռեալների գերեզմաններըը
Պճնում է նոճին, յաւէրժ անթառամ։
Սալվէ—սալվէ։—

Գլուխ Թ.

Մի գեղք պատահում է Խոնէին։

Մինչդեռ մի քանիսը լեռ մնացին քահանաների հետ, մահանալից լինելու համար հոգու հացին, Խոնէն և իր ազատեցները իրանց մերամազիկ քայլերը դարձրին դէպի տուն։ Եւ այժմ, երբ կատարուեցան նրա վերջին պարտականութիւնները դէպի իր եղբայրը, նրա միտքը զարթնեց իր քնից և նա մտածեց իր նշանածի և այն սոսկալի ամբաստանութեան վրայ, որ բերուած էր նրա դէմ։ Մի ակնթարթ անգամ—ինչպէս ասել ենք—չը հաւատալով այդ անբնական ամբաստանութիւնը, և ամե-

նաև կասկածներն ուշենալով Արթակի դէմ՝ նա զգաց, որ արդարութիւնը թէ իր սիրեկանի և թէ իր ազատուած ազգականի համար պահանջում էր, որ նա գնայ պրէտորի մօտ և նրան յայտնէ իր համոզմունքը, որքան էլ որ առանց վատահ լինեը դա։ Հարց ու փորձ անելով իր ազատիններից, որոնք ցայժմ—ինչպէս ասուեցաւ—ողորմածաբար չէին ուզել Գլոկուսի խնդրան մասին նրան տեղեկութիւն տալ, Խոնէն լսեց, որ յոյնը վաճառատոր կերպով հիւանդ էր եղել. որ պահուած էր որպէս բանտարկեալ Սալլուստի յարկի տակ. որ նրան դատելու օրը որոշուած էր։

«Ո՛վ չարիքը դարձնող աստուածներ» գոչեց նա. «և մենք այսքան ժամանակ մոռացել ենք նրան։ Արդիօք այնպէս է թուացել, որ ես խոյս եմ տալիս նրանից։ Ո՛չ, թող աճապարեմ արդարութիւն անելու նրան—ցոյց տալու որ ես, ազատուածի ամենամօտիկ ազգականը նրան անմեղ եմ կարծում այդ ամբաստանութիւնից։ Շուտ, չուտ, եկէք թռչենք։ Թող ամբողջ նրա վիշտը, խնամեմ նրան, քաջալերեմ նրան. և եթէ չը հաւատան ինձ. եթէ չընդունեն իմ համոզմունքը. եթէ նրան դատապարտեն աքսորի կամ մահուան, թող ես էլ մասնակից լինեմ նրա դատապարտութեան»։

Բնազդումից մղուած նա արագացրեց իր քայլերը. չխոհուած և չուարած՝ նա հաւատ պիտեր թէ ուր է գնում. մերթ վճռում էր նախ երթալ պրէտորի մօտ, և մերթ վազել դէպի Գլոկուսի սենեակը։ Նա արագ արագ առաջանում էր—նա անցաւ քաղաքի դռնից—նա դիտում էր այն երկար փողոցում, որ առաջնորդում էր դէպի քաղաքի կեդրոնը։ Տների դռները բացուած էին, բայց դեռ ոչ ոք չէր շարժւում փողոցներում. քաղաքի

հետևքը դեռ չէր զարթնել—երբ ահա. նա յանկարծ դէմ եկաւ մի ծածկուած պատգարակի և մի խումբ մարդկանց որ կանդնել էին դրա չուրջը։ Մի բարձրահասակ մարդ դուրս եկաւ նրանց միջից և Իօնէն բարձրաձայն մի ճիչ արձակեց տեսնելով Արբակին։

«Ջենով Իօնէ», ասաց նա քաղցրութեամբ, և ցոյց տալով որպէս թէ չը նկատեց նրա երկիւղը. «իմ սիրոյ, իմ աչակերտուհիս, ներիր ինձ, եթէ ես խանգարում եմ քո բարեպաշտ վիշտդ։ Բայց պրէտորը, ուզելով քո պատիւը, մտածելով, որ չը լինի թէ դու անխոհեմաբար խառնուես դալիք դատարանական գործերին, խնամելով քո տարօրինակ դրութեան չխոթեցուցիչ պարագաները, հասկանալով, որ դու բնականաբար արդարութիւն պիտի պահանջես քո եղբօր սրեան համար, իսկ պիտի սոսկաս քո նշանածին պատժի ենթարկուած տեսնել. համակրելով քո անպաշտպան և անբարեկամ դրութեան հետ, և չափազանց խիստ համարելով քո վճռակը, որի մէջ դու պէտք է գործես առանց առաջնորդի և ողբաս առանց ընկերի—հայրաբար և խնամատարութեամբ քեզ յանձնած է քո օրինաւոր խնամակալին։ Ահա այն դրութիւնը, որով դու դրւում ես իմ խնամքի ներքոյ»։

«Ա՛հ՛ եգիպտացի», գոչեց Իօնէն, հպարտութեամբ յետ քաշուելով. «կորիր։ Դու ես պահանջ իմ եղբօրը։ Ես արդեօք քո ձեռքին, որից բարձրանում է իմ եղբօր սրեան գոլորշին, պիտի յանձնեն նաև քրոջը։ Հա. դու դատաւոր ես, քո խորհդը խայթում է քեզ. դու դողում ես վրէժխնդիր աստուծոյ չանթերից։ Հեռացիր, և միայնակ թող լինի իմ ցաւիս մէջ»։

«Քո վիշտը խանգարել է քո դատողութիւնը. Իօնէ», ասաց Արբակ, իզուր փորձելով վերստանալ իր ձայնի

սովորական անդորրութիւնը։ «Ես ներում եմ քեզ։ Դու այս դէպքում, ինչպէս միշտ լինձ պիտի գտնես քո ամենահաւատարիմ բարեկամը։ Բայց հասարակաց փողոցները յարմար վայր չեն մեր խօսակցութեան համար—լինձ համար, քեզ մխիթարելու։ Մօտեցէք տղաքներ։ Ահ իմ քաղցրիկ սանուհիս. պատգարակը սպասում է»։

Զարմացած և սարսափահար աղախիններն հետևում էին Իօնէի չուրջը, և դրկեցին նրա ծնկները։

«Արբակ», ասաց աղախիններին աւագը, «անտարակոյս սա չէ օրէնքը։ Մինչև իննը օր թաղումից յետոյ, արդեօք դրուած չէ, որ մեռելի աղգականներին չը պիտի որ և է նեղութիւն տալ իրանց տների մէջ, կամ խանգարել նրանց մենաւոր վշտակրութիւնը»։

«Կրնն», պատասխանեց Արբակ, արքայաբար շարժելով իր ձեռքը, «մի սանուհու տանել իր խնամակալի տունը հակառակ չէ թաղման օրէնքներին։ Ես ասում եմ քեզ, որ ես ունիմ պրէտորի հրամանագիրը։ Այս յապաղումը անպատճառ է։ Թրէք նրան պատգարակի մէջ»։

Այս ասելով՝ նա իր բազուկը ամուր կերպով ձգեց Իօնէի խառատիլ իրանի չուրջը։ Իօնէն յետ քաշուեցաւ, իր անձկալից աչքերը յառեց նրա երեսին և լեռոյ մի հիսթերական ծիծաղ արձակեց.—

«Հա, հա, սա չատ լաւ է—չատ լաւ։ Աքանչելի խնամակալ—հայրական օրէնք։ Հա, հա»։ Եւ, ինքը ցընցուելով այդ սուր և խելացնոր ծիծաղի սոսկալի արձագանքից մեռելի նման, անկենդան ընկաւ գետնի վրայ... Մի րոպէ յետոյ Արբակ բարձրացրեց նրան և դրեց պատգարակի մէջ։ Մարդիկը արագ-արագ առաջ չարժուեցան, և տարտախտ Իօնէն չտեսով հետացուեցաւ իր արտասուող աղախինների աչքի առջևից։

Ժ.

Ինչ է պատահում Նիպսալին Արբակի տանը։—Եպիսկոպոսը գաղիր շարժւում է Գլոկուսի համար։—Գաղիը յաճախ մի շատ անպէտ այցելու է յանցաւորի համար։

Ընթերցողը լիշում է որ, Արբակի հրամանով, Նիպհան հետեւեց եպիսկոպոսին մինչև նրա տունը, ուր խոստակցելով կայր աղջկայ հետ, Արբակ նրա յուսահատութիւնից և խղճահարութիւնից կարողացաւ դուրս քաշել նրա գաղտնիքը, և հասկացաւ որ նա, և ոչ Ջուլիան, խմցրած էր Գլոկուսին ժանտ հեղուկը։ Մի ուրիշ ժամանակ եպիսկոպոսին կարելի է մի փիլիսոփայական հետազբօսութիւն պիտի զգար չափելով այդ տարօրինակ և ամենայաղթ կրքի խորքը և ծագումը, կիրք, որ կուրութեան և տարկուսութեան մէջ, այս տարօրինակ աղջիկը յանգցնել էր մտացանել. բայց այս րոպէին նա բացի իրենից ուրիշ բանի վրայ ժամանակ չունէր մտածելու։ Մինչդեռ, իր խոստովանութիւնից յետոյ, խեղճ Նիպհան ընկած էր ծնկների վրայ նրա առջև, և աղաղակում էր նրան, առաջնորդել Գլոկուսին, և փրկել նրա կեանքը—որովհետև իր պատասխանութեան և ապիրատութեան մէջ, նա երեակայում էր թէ սև կախարդը ամենակարող էր թէ այս և թէ այն աշխարհում։—Արբակ, անուշադիր ականջներով, մտածում էր թէ ինչքան անհրաժեշտ էր Նիպհալին բանտարկել մինչև Գլոկուս դառնէր և նրա դատավճիռը կնքուէր։ Բանդի, եթէ նա զգացել էր, որ իր վրէժխնդրութեան կատարեալ յաջողութեան համար անյարմար էր Նիպհալին աղատ թողնել, և այդ մի ժամանակ, երբ նա աղջկան Ջուլիայի լուր յանգակիցն էր կարծում հեղուկը ձեռք բերելու խնդրում—կրկնում եմ եթէ նա անհնազանդ էր համարել իր դատին, որ Նիպհան երեայ որպէս մի վկայ—յայտնէ թէ ինչպէս Գլոկուսի խելքը գնորուել էր և այդպիսով մեղմացնէ նրա զործած ոճրի պատիժը—որքան աւելի հատնական էր, որ նա, այժմ երբ ինքն էր խմցրել հեղուկը. կամաց առաջ գար իր վկայութիւնը տալու. սիրով ներշնչուած՝ նա որ և է ամօթ չունէր պիտի առնէր և պիտի աշխատէր ոչնչացնել իր զործած սխալի վատ հետեանքը և վերկել իր սիրեցեալին։ Բացի դրանից, ինչքան անարժան էր Արբակի առաքինանին և հոչակին անարդ կասկածութեամբ պղտորուած լինել Ջուլիայի սիրային խնդիրների մէջ, և մասնակցած լինել Վեսուվի Սագալի անասելի վհատութիւններին։ Իրօք, ոչ մի բան նուազ նշանաւոր քան նրա փափագը Գլոկուսին խոստովանել տալ Ապեկիդեսի սպանութիւնը—մի քաղաքականութիւն, որ ամենից նպատակաւոր էր նրա մչանջնաւոր ապահովութեանը և նրա սիրասարութեան յաջողութեանը—երբ և իցէ չէր կարող նրան հանդարտել խորհելու Ջուլիայի խոստովանութեան վրայ։

Գալով Նիպհալին, որը իր կատարեամբ բնականաբար պղտուած էր զործնական կեանքի տեղեկութիւնների մեծ մասից, և որը, որպէս մի տարուկ և մի օտարական, հարկաւ անպիտանում էր հասկական օրինքի վտանգների մասին, նա աւելի խորհում էր աթենացու հիւանդութեան և խելագարութեան վրայ, քան այն յանցանքի, որի վերաբերութեամբ նա մի անորոշ բան էր լսել, կամ այն մօտալուտ դատաքննութեան հատնական հետեանքների վրայ։ Տարտարեան Թշուառը, որի հետ ոչ ոք չէր խոսում, որի վրայ ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում, ինչ պիտէր անհատի կամ դատավճռի մասին—օրինքի վտանգի—ժողովրդի կատաղութեան – արհնալի

և առնծի որջի մասին։ Նա լավ սովորել էր Գլոկուսի վերաբերմունքը կյանքի հանդեպ և վճռել էր՝ նա չէր կարողանում երևակայել, որ որևէ վտանգ, բացի իր սիրուց խենթությունից, կարող էր սպառնալ այդ արքայական զույգին։ Նրան այնպես էր թվում, որ Գլոկուսը ընտրված էր լավ կյանքի օրենքները վայելելու համար։ Ինքը միայն խանգարել էր նրա երանության ընթացքը. նա չէր երազում, որ այն վտակը, երբեմն այնքան վճիտ, նեղուցում էր դեպի մթությունն ու մահ։ Հետևաբար նա պահպանում էր մեծ եղերապատու օրենքները, որ նա բաժին էր ուղիղը, որ ինքը կորցրել էր, փրկել այն կյանքը, որ ինքը վտանգել էր։

«Աղջիկ», ասաց Արբակ, դուրս գալով իր մտածմունքից, «պետք է ճիշտ այսօր. պատճառ չէ քեզ համար փողոցների մեջ թափառել և գերիների կողմից ոտքերով դուրս հրվել չեմքերից։ Ես խոստացի քո անմեղ ճակատի վրայ — և ամեն բան կանեմ մի ճար անելու համար։ Մի քանի օր համբերությամբ սպասիր այստեղ և Գլոկուս կատաղյանայ»։ Այս ասելով, և առանց սպասելու նրա պատասխանին, նա դուրս գնաց սենյակից, փականքը քաշեց, և իր բանտարկյալին չանճանց այն գերու խնամքին, որի հոգածության տակ էր գտնվում սպարանքի այդ մասը։

Յետոյ միայնակ, և մտախոհ, նա սպասեց մինչև արշալույս, երբ, ինչպես սեռանք, նա գնաց Իսնէի անձնատրությունը ձերբակալելու։

Նրա առաջին նպատակը տարտարախտ հեղինեանն կալանավորելու մեջ, այն էր ինչ նա իրաւք ասել էր Գլոկուսին, այսինքն թույլ չտալ նրան գործնականապես խառնվել Գլոկուսի պատերազմության գործի մեջ։ Սրանից զատ նա ուզում էր արգելքներ դնել Իսնէի առջև, որպես զի նա չը կարողանայ ամբաստանել իր խնամակալին (մի բան, որ նա անտարակույս պիտի աներ) նրա գործած նախկին բռնության և անօրինաբարության համար դեպի իր անունին — որ նա չը կարողանայ լուր աչխարհ դուրս բերել այն պատճառները, որ եղիպատցին ուներ Գլոկուսին տանելու համար — որ նա չը կարողանայ քօղազուրկ անել նրա բռնաւորության կեղծաւորությունը և որ և է կասկած ձգել նրա վկայության ճշմարտության վրայ։ Մինչև այն առաւօտ, որ նա հանդիպեց Իսնէին - մինչև այն րոպէն, որ նա լսեց նրա ամբաստանությունը հրապարակաւ — նա տեղեկություն չունէր, որ ինքը տեղիք ունի վախենալու մի ուրիշ վտանգից — վտանգ, որ կայանում էր Իսնէի կասկածի մէջ թէ ինքը Արբակն է գործել այդ ոճիրը։ Արբակ հրճուում էր մտածելով, որ իր բոլոր նպատակները իրագործած էին — որ իր սիրոյ և երկիւղի առարկան գտնում էր իր ձեռքում։ Նա աւելի քան երբէք հաստատում էր աստղերի չաղոտորթ խոստումներին. և երբ նա գնաց Իսնէի մօտ իր խորհրդաւոր ապարանքի ամենանեղքին մասերը, ուր նա բանտարկել էր նրան — երբ նա գտաւ նրան ուժասպառ հիւանդության հարուածների տակ — անդունդից ուշաթափությունից ուշաթափության, ուժգնագին թմրությունից հիւանդագին բոլոր վախճանություններով — նա աւելի մտածում էր այն գեղեցկության վրայ, որը ոչ մի ուշաթափությունից չէր նուազում, քան այն թշուառության, որ ինքը բերած էր նրա գլխին։ Այն բանն անպարծանելիորեն, որ վտանգ է այն մարդկանց մէջ, որոնք իրանց կեանքի ամբողջ ընթացքում յաջողություն են ունեցել թէ բռնու-

ան և իմ սիրոյ մէջ, նա ինքն իրեն մխիթարում էր իմ երբ Վլոկուա մնանէր — երբ նրա անունը հանդիսաւոր կերպով սեանար դատաստանատան վճռով — երբ նա յաւիտեան կորցնէր իր իրաւունքը Իօնէի սիրոյ մէջ, նրա եղբօր սպանութեան համար մահուան դատապարտուելով — Իօնէի սէրը Վլոկուայի համար պիտի փոխարկուէր զղջանքի։ Յետոյ ինքը, իր փափկութիւններով, իր սիրով և իր բոլոր այն արուեստներով, որոնցով գիտէր չլացնել կանանց երեսկայութիւնը, կարող էր բաղմել նրա սրտի գահի վրայ, որից իր հակառակորդը այնքան սոսկալի կերպով արտաքսուած էր։ Այս էր նրա յոյսը. բայց երբէք չը յաջողուէր այդ, նրա անուսուրբ և հրատապ կիրքը մրմնջում էր, «Ամենայայտ դէպքում, այժմ նա գանուում է քո ձեռքում»։

Սակայն, այդուհանդերձ, նա զգում էր ըմբռնելու այն անհանգստութիւնը և երկիւղը, որոնք միշտ այցելում են սքրագործին, նայն իսկ երբ նա անպակաս է դէպի խղճի ձայնը — նա զգում էր իր եղեռնագործութեան հետևանքների մասին այն անորոշ սարսափը, որը յաճախ ընդունում է ապաշաւանքի տեղ։ Կամպանիայի զուարթ օդը սոսկալի կերպով ծանրանում էր նրա կրծքի վրայ. նա իր փախուստով փախչում էր հետևակ մի տեսարանից, ուր վտանգը կարող էր ընդ միշտ ննջած չը լինել ննջեցեալին հետ. և Իօնէին այժմ ունենալով իր ձեռքում նա իր սրտի մէջ վճռեց թէ հէնց որ տեղի ունենայ իր հակառակորդի վերջին ատգնապը, պիտի վերցնէ իր հարստութիւնը և նրան, որ ամենաթանկագին գոնարն էր բոլորի, և երթայ դէպի մի հետաւոր երկիր։

«Այո», ասաց նա, քալելով իր առանձին սենեակի մէջ — «այո, այն օրինքը, որ տուաւ ինձ իմ տանուտու-

անձնատուրութիւնը, տուաւ ինձ նաև իմ տարսխ։ Հետու, հետու լայնատարած ովկիանի երեսին մենք կը սլանանք դէպի նոր զեղխութիւններ և չը ճաշակուած զուարճութիւններ։ Քաջալերուած իմ ատաղերով և լինուած իմ հոգուս բարեգուշակ նշաններով վրայ մենք կը թափանցինք այն անհուն և փառաւոր աշխարհների մէջ, որոնք — իմ գիտութիւնս ինձ ասում է — տարածուած են չըջապատող ծովի խորքերում իրանց կուսական անարատութեամբ։ Այնտեղ, այս սիրտը, որ այժմ կաշկանդուած է սիրով, կարող է մէկ անգամ ևս բորբոքուել փառասիրութեամբ — այնտեղ, այն ազգերի մէջ, որոնք դեռ ճնշուած չեն հռոմէական լուծի տակ, և որոնց ականջին Հռոմի անունը դեռ չէ հասած, ես կարող եմ հաստատել մի նոր կայսերութիւն, և տարածել իմ նախահայրերի կրօնքը. վերականգնել Թեսալան պետութիւնը իր աճիւններից. չարունակել աւելի փառահեղ սահմաններում իմ թագակիր հայրերիս տոհմային հարստութիւնը, և զարմացնել Իօնէի աղնիւ սրտի մէջ մի երախտապարտութիւն դէպի այն դիտակցութիւնը, թէ ինքը մասնակցում է մի մարդու վիճակին, որը, բոլորովին հետու է այս սարկական լուսաւորութեան փառաւորութիւնից, — որը իր մէջ կրում է մեծութեան ամենանշանաւոր սաղերքը, և մէկ հզօր հոգու մէջ միացնում է թէ մարդասէրի և թէ արքայի յատկութիւնները»։

Այս հրճուալից մտածութեանց մէջ էր Արբակ երբ նրան յայտնեցին, որ գնալ ներկայ գտնուելու Վլոկուայի դատաքննութեան։

Իր զոհի հիւսուած և անզոյն թշերը այնչափ չէին չարժում եղիպտացու սիրտը, որքան նրա ջղերի սամրութիւնը և անվեհեր ձակատը. որովհետև նա այն մարդ-

կանցից էր, որոնք քիչ գումթ ունէին տարաբախտութեան վրայ. բայց մի տղոր համակրութիւն են դգում ինչ բանի համար, որ չանդուդն է։ Այն որակցութիւնը, որ կապում է մեզ ուրիշների հետ միշտ բղխում է մեր յատկութիւնների նոյնութիւնից։ Հերոսը այնքան չէ սղրում իր թշնամու տարաբախտութիւնը, որքան այն քաջութիւնը, որով նա կրում է այդ։ Բոլորս էլ մարդ ենք, և Արբակ, չը նայելով որ մի եղեռնագործ էր, ունէր իր մասը մեր ընդհանուր զգացումների և մեր մայր տողի։ Եթէ նա միայն առացած լինէր Վլոկուսից այդ ոճրի դրատուր խոստովանութիւնը, որը, աւելի լաւ քան ուրիշների դատաւճիռը, պիտի զրկէր նրան Իօնէի սիրուց, և ազատվէր Արբակին ամեն ազատալ չայտնութեան վտանգից, եղիսաբեան ամեն ճիգ պիտի թափէր ազատելու իր հակառակորդին։ Նոյն իսկ այժմ նրա առելութիւնը վերջացած էր—նրա վրէժխնդրութեան պատակը չտեսել էր. նա չանչանում էր իր զոհին, ոչ թէ թշնամաբար, այլ որպէս մի խոչնդոտ իր ճանապարհի վրայ։ Այնուամենայնիւ նա նուազ խորամանկ և նուազ չարաչար չէր իր բռնած ընթացքի մէջ. նրա վճիռը նուազ հաստատուն չէր փչրելու մի անձնաւորութիւն, որի կործանումը անհրաժեշտ էր եղել նրա նպատակների իրագործման համար. և մինչդեռ, նա առերես դժկամակութեամբ և խղճալով տալիս էր Վլոկուսի դէմ իր վկայութիւնը, որով աթենացին դատապարտում էր, Արբակ ձեռքի տակից, և քահանայութեան միջոցով բորբոքում էր ժողովրդի ցասումը, ցասում, որ ազդեցիկ արդելք էր սենատի դիտաւորութեանը։ Նա դնացել էր Ջուլիայի մօտ. նա չայտնել էր նրան Նիգիալի խոստովանութիւնը. և նա դիւրութեամբ քնացրել էր նրա մէջ որ և է խղճա-

հարութիւն, որ կարող էր զրդել աղջկան մեղմացնելու Վլոկուսի պատիժը, չայտնելով իր մեղսակցութիւնը չոչնի խեղացնորութեան խնդրում. և այդ գործը նոյնչափ աւելի դիւրին էր եղել եղիսաբեան համար, որքան Ջուլիայի ծանրասէր սիրտը սիրել էր Վլոկուսի հռչակը և չաջողութիւնը և ոչ Վլոկուսին իրեն. նա մի սէր չէր զգում դէպի մի անպատիւ եղած մարդ—ոչ, նա միևնոյն անգամ ուրախանում էր տեսնելով այն անարգանքը և ստորնացումը, որոնց ենթարկուել էր աւելի Իօնէն։ Եթէ Վլոկուս չէր կարող լինել Ջուլիայի ստրուկը, նաև նոյնպէս չէր կարող լինել իր հակառակորդի պաշտողը։ Այս մէկը բաւական մխիթարութիւն էր վանելու որ և է ափսոսանք չոչնի զժբախտութեան համար։ Ցեղեզուկ և փոփոխամիտ, նա նորից սկսեց զգաճուել Կլոդիուսի չանկարծական և եռանդուն ուչադրութեամբ, և չէր կամենում վտանգել իր հաւանական ամուսնութիւնը այս ստորացողի բայց մեծատոհմիկ ազնուականի հետ, հրաժարակելով իր անցեալ թուլութիւնը և անպարկեշտ սէրը դէպի մի ուրիշը։ Ամեն բան, ուրեմն, ժպտում էր Արբակի համար.—ամեն բան պատռնում էր աթենացուն։

Գլուխ ԺԱ.

Նիգիան վհուկ է ձևանում։

Երբ թեսալուհին տեսաւ, որ Արբակ այլ ևս չը վերադարձաւ—երբ նա ժամ ժամի ետևից թողուեցաւ թշուառ երկմտութեան բոլոր չարչարանքների մէջ, որոնք կրկնապատիկ անտանելի էին նրա կուրութեան պատճառով, նա, իր թևերը տարածած, սկսեց չօչափել

իր բանաի չոր կողմը. և վախճանի ճանապարհ որոնել. երբ տեսաւ, որ միակ ելքը փակուած էր, նա բարձրաձայն ազաղակից և մի բնականաբար բուռն բնաւորութեան ուժգնութեամբ, որը աւելի սաստկացել էր տառապանքի անհամբերութեան պատճառով։

«Հօ, աղջիկ», ասաց գերին, որին չանճնուած էին ապարանքի այդ մասերը, բանալով դուռը, կարիճը խայթեց քեզ, թէ կարծում ես, որ մենք լուսինից մեռնում ենք այստեղ, և մեր գոլութիւնը պիտի պահպանուի մի հարայ հրոցով ինչպէս մանուկ Աբրամազդինը»։

«Ո՞ւր է քո տէրը, ինձ ինչու է վանդակել այստեղ։ Ես օդ եմ ուզում, ես ազատութիւն եմ ուզում. թող դուրս գնամ»։

«Աւաղ, փոքրիկս, արդեօք բաւական չես ճանաչում Աբրակին խնայելու համար, որ կամքը կայսերական է։ Նա հրամայել է, որ դու վանդակուիս, և դու վանդակուել ես, և ես էլ քո պահակն եմ։ Դու չես կարող ունենալ օդ և ազատութիւն, բայց դու կարող ես ունենալ ինչ որ շատ աւելի լաւ բաներ են—կերակուր և գինի»։

«Ո՛վ Աբրամազդ», գոչեց աղջիկը ճմռթելով իր ձեռքերը, «և ինչու համար ես այսպէս բանտարկուած եմ։ Արդեօք մեծ Աբրակը ինչ պէտք ունի ինձ նման մի խեղճ արարածի։

«Այդ ես չը գիտեմ, կարելի է քեզ պահել էր, որ ապաստարկես քո նոր ալիկնոջը, որը այսօր բերուած է այստեղ»։

«Ո՞նչ. Խօնէն այստեղ է»։

«Այո, խեղճ օրիորդ. վախենում եմ, որ նրա ճակատագիրն շատ յարմար չէ այս անդափոխութիւնը։ Այնու

ամենայնիւ, Կատորի տաճարը վկայ, Աբրակ շատ հաճոյակատար է գէպի կանանց։ Քո ալիկինը ինչպէս գիտես նրա սանուհին է։

«Ինձ կը տանին նրա մօտ։

«Նա հիւանդ է—ուշաթափուել է կատազութիւնից և տանելութիւնից։ Բացի դրանից, ես հրաման չունիմ այդպէս անելու. և ես ինքս ազատ կամք չունիմ։ Երբ Աբրակ ինձ այս սենեակների գերին *) կարգեց, նա ասաց «Ես միայն մէկ գաս ունիմ քեզ տալու.—քանի որ իմ ծառայութեան մէջ ես գտնւում, դու ոչ պէտք է աչքեր ունենաս, ոչ ականջներ, և ոչ էլ մտածելու ընդունակութիւն. դու միայն մէկ յատկութիւն պիտի ունենաս— հնազանդութիւն»։

«Բայց ինչ վնաս կայ, որ ես տեսնեմ Խօնէին»։

«Այդ ես չը գիտեմ. բայց եթէ ընկեր ես ուզում, ես պատրաստ եմ խօսակցելու քեզ հետ, իմ քոյրիկս, որովհետև ես էլ շատ միայնակ եմ իմ լուռ կուբիկուլումի մէջ։ Ես, ի դէպ դու էլ թեասալուէի ես—արդեօք ժամանակ անցկացնելու համար չը գիտես մի որ և է դանակի և մկրատի զուարճութիւն, դուչակութեան մի սիրուն փոքրիկ խաղ, ինչպէս քո հայրենակիցներից շատերը գիտեն։

«Սուտ, տարմակ, ճայնդ կարիր, կամ եթէ ուզում ես խօսել, ասա ինչ ես լսել Գլոկուսի դրութեան մասին»։

«Հա, իմ տէրս գնացել է աթենացու զատաստանին. Գլոկուսին շատ աժան չի նստի նրա ներկայութիւնը»։

---

*) Այդ մարդկանց աներամ, սենեակների ամէն մի խումբը փոր մասնաւոր գերին ունէր։

«Ի՞նչպէս, ինչ բանի համար»։

«Քահանայ Ապէկիպէսի սպանութեան համար»։

«Հա՛», ասաց Նիպիան, ձեռքը սեղմելով իր ճակատին. «ես լրօք մի բան լսեցի այս մասին, բայց չը հասկացայ։ Բայց ո՛վ կը չանդգնի նրա գլխի մի մազին անգամ ձեռք դպցնել»։

«Վախենում եմ, որ այդ չանդգնողը աւելիը կը լինի։

«Զարախաիմն աստուածներ, այդ ինչ անօրինութիւն ես ծամում»։

«Ինչպէս, ես ասում եմ, որ եթէ չանգյաղարա գըլանուն, աւելիը, կամ կարելի է վազրը կը լինի նրա դահիճը»։

«Նիպիան ցասկից իր տեղից սրպէս թէ մի նետ խրուած լինէր նրա սրտի մէջ. նա արձակեց մի սիրտ ճակող ճիչ. յետոյ, ընկնելով գերու առքերի առջև, ազատակեց մի ճայնով, որը հալեց նոյն իսկ նրա կոպիտ սիրտը,—

«Ա՛հ, ասա՛ ինձ, որ դու կատակ ես անում—որ դու ճշմարիտ չես խօսում—խօսիր, խօսիր»։

«Վա՛հ, հանգստացիր. կոյր ապրիլ, ես օրինքից տեղեկութիւն չունիմ. կարելի է նրա բանը այդքան վատ չը լինի. Բայց Արբակ նրա ամբաստանիչն է, և ժողովուրդը մի գոհ է ուզում արենալի համար։ Խրախուսիր։ Բայց աթենացու դատաւճիռը ինչ գործ ունի քեզ հետ»։

«Ոչինչ, ոչինչ—նա բարեսիրտ է գտնուել դէպի ինձ. ուրեմն դու չը պիտես թէ ինչ կանեն։ Արբակ նրա ամբաստանիչը։ Ո՛վ ճակատագիր։ Ժողովուրդը—ժողովուրդը։ Ա՛հ, նրանք կարող են տեսնել նրա երեսը—ոչ

կարող է անգամ լինել դէպի աթենացին—Բայց սէրը, նոյն իսկ սէրը մի՞թէ անգամ չեզաւ դէպի նա»։

Այս ասելով նրա գլուխը ընկաւ իր կրծքի վրայ. նա լուեց. այրող կաթիլները սկսեցին յանկարծ գլորուիլ նրա թշերից. և գերու բոլոր բարեկամական ձիրը՝ միխիթարելու նրան կամ դուրս բերելու նրան իր մտատանջ դրութիւնից՝ ապարդիւն անցաւ։

Երբ առաւօտը, իր անալին գործերի պատճառով, տիպասեցաւ դուրս երթալ տնեակից, Նիպիան սկսեց ամփոփել իր մտքերը։ Արբակ Գլոկուսի ամբաստանիչն էր. Արբակ բանտարկել էր նրան այնտեղ. այդքօք դատաւորն ապացոյց չէր, որ իր ազատութիւնը կարող էր օգտակար լինել Գլոկուսի համար։ Այո, նա ընկել էր մի որ և է սրտոպատի մէջ. նա, իր ներկայ կացութեան մէջ, գործակցում էր իր սիրեցեալի կործանիչներին հետ։ Ո՛չ, ինչպէ՞ս նա պատրաստ էր ազատութեան համար։ Բարերախտաբար նրա ատամանքի բոլոր զգացումը ընկղմուեցաւ փախուստի վտիտպի մէջ. և երբ նա սկսեց իր գլխի մէջ պատրաստել իր ազատութեան կարելիութիւնը, նրա սիրտը անդորրացաւ և ինքը մտախոհ դարձաւ։ Նա ունէր իր սեռի խորամանկութիւնից մի մեծ մաս, որը աւելացել էր նրա վաղաժամ տարիական վիճակի չնորհիւ։ Ո՞ր տարուկը երբ և լսէ զուարճ է եղել խորամանկութիւնից։ Նա վճռեց խաղալ իր պահակին. և յանկարծ յիշելով նրա աւելորդապաշտական հարցը իր թեստական արուեստի մասին՝ նրա մէջ մի յոյս ծագեց, որ այդ միջոցով կարող է ձեռք բերել իր ազատութիւնը։ Այս կատածները գլուխը նրա միտքը օրուայ ամբողջ մնացորդ մասը և դիշերասանից էլ երկար ժամեր։ Հետևեալ առաւօտը երբ Սոսիան այցելեց նրան, Նի-

դիան չտապեց նրա չտաճախասութիւնը դարձնել այն կողմը, դէպի ուր դա առաջին անգամը մի բնական հանգամ էր ցոյց տալել։

Նա, ինչ և իցէ, գիտէր որ իր վախճանի միակ ժամանակը գիշերն էր. և հետևաբար նա սպասում էր մի դաշն վշտով, իր փորձը չտաճգել մինչև այդ ժամանակ։

«Գիշերը», ասաց նա. «միակ ժամանակն է, երբ մենք գիւրութեամբ կարող ենք կարդալ ճակատագրի վճիռները — այն ժամանակ դու կը դաս ինձ մօտ։ Բայց ինչ ես ուզում իմանալ»։

«Գոլգոթա վկայ, ես ուզէի այնչափ իմանալ, որչափ իմ սէրը. բայց այդ չէ կարելի սպասել։ Ուրեմն ասա ինձ դէթ, արդեօք ես կարող եմ այնքան դրամ հաւաքել, որ իմ ազատութիւնը գնեմ, կամ այս եղիպտացին ինքը կը տայ ինձ իմ ազատութիւնը։ Նա երբեմն այդպիսի առատաձեռնութիւններ անում է։ Յետոյ, ենթադրելով, որ այդ այդպէս լինի, արդեօք ես կարող եմ ձեռք բերել այդ վաքրիկ սիրուն տաբերնան, որ գտնում է Միրոպօլիայում *) և որ վաղուց ես աչքի առջև եմ ունեցել։ Անուշահոտութիւն վաճառելը մի ազնիւ գործ է, և յարմար մի գործից քաշուած գերու, որը ազնուականութիւնից մի բան ունի իր մէջ»։

«Ա՛հ, ուրեմն դու ճիշդ պատասխաններ ես ուզում այդ հարցերիդ — դանազան ձևեր կան քեզ գոհացում տալու։ Կայ Ախիմանահէիան, կամ խօսող քարը, որը պատասխանում էր քո աղօթքին մի երեխայի ձայնով. բայց յետոյ այդ մանուկ քարը չունինք այսօր. դա չատ

*) Նշանակում է անուշահոտութիւնների խանութները։

թանկագին է և հազուագիւտ։ Յետոյ կայ Գաստրոմանտիան, որով դեռ ժժգոյն և մեռելային պատկերներ է ձգում ջրի վրայ, որոնք բոլորն էլ մարգարէական նշաններ են կրում իրանց մէջ։ Բայց այս արուեստն էլ պահանջում է մանուկ ձեռ չինուած ապակիներ սրբազան հեղուկի համար, որը չունինք։ Ես մտածում եմ, որ ամենապարզ ձևը գոհացում տալու քո փափագին Օդի Հմայքն է»։

«Այս ունիմ», ասաց Սասիան, դողդողալով, «որ սարսափեցուցիչ ոչ մի բան չը կայ այդ գործողութեան մէջ։ Ես չեմ սիրում ուրուականներ տեսնել»։

«Մի վախենար. դու ոչինչ չես տեսնի. դու լոկ ջրի պղպջալուց կը լսես թէ քո փափագը կը կատարուի թէ ոչ։ Նախ և առաջ, երեկոյեան աստղը դուրս գալու ժամանակ պարսիկի դուռը մի քիչ բաց թող, այնպէս որ դեռ զգայ թէ իրան հրաւիրում են ներս գալ. յետոյ ջուր և պատուղ դիր դրան մօտ, որպէս թէ նչան հիւրասիրութեան, յետոյ երեք ժամ վերջնալուսից յետոյ, ևկ պատեղ, բերելով քեզ հետ մի բաժակ ամենապարզ և ամենապարզ ջուր, և դու կիմանաս ամեն բան այն թեսսալական գիտութեան համեմատ, որ մայրս սովրեցրել է ինձ։ Բայց մի՛ մոռանար պարսիկի դուռը — ամեն բան կախուած է դրանից. դա պէտք է բաց լինի երբ դու ներս ես գալիս, և երեք ժամ էլ նրանից առաջ»։

«Անհոգ եղիր», պատասխանեց չը կասկածող Սոսիան. «ես լաւ գիտեմ ինչ է մի ձկնորսինի զգացումը, երբ նա դուռը փակուած է գտնում իր երեսին, ինչպէս չատ անգամ իմ օրով խոնարհի խանութի դուռը փակուած է եղել իմ երեսին, և ես նոյնպէս գիտեմ, որ մի

պատասխան անձնասիրութիւնն, որպիսին անպատճառ-
ութիւն է—որքան հաճոյք է կը զգայ քաղաքավարական մի
վիրաբոյկ ցոյցից։ Նոյն մէջոցին, իմ քաղցրիկս, ահա քո
առաւօտեան կերակուրը»։

«Բայց ինչ ես լսել դատաստանի մասին»։

«Օ՛հ, օրէնսգէտները զբաղուած են դրանով—խո-
սում են, խօսում են—մինչև վաղը կը վերջանայ»։

«Վաղը—վատճահ ես»։

«Այդպէս լսեցի»։

«Եւ Իօնէին»։

Բաւքոը վկայ, պէտք է բաւական առողջացած լի-
նի, որովհետև նա բաւական ուժ է ունեցել իմ սիրօջս
դուրս ուղարկելու իր սենեակից այնպիսի մի դրութեան
մէջ, որ նա ոտքը դեռևս էր զարկում և չըմտնքը
կծում էր։ Այս առաւօտ սիրօջս ճակատը, նրա մօտից
դուրս գալուց յետոյ, վոհմորկալից երկնքի էր նմանում»։

«Իօնէի սենեակը մօտիկ է այս տեղից»։

«Ո՛չ—նա վերի սենեակներումն է գտնւում։ Բայց չը
պէտք է մնամ այստեղ և երկար չառաջօսեմ։—Vale՛»։

ԺԲ.

Մի իշամեղու չանդրնում է մանել սարդի ոստայնի մէջ։

«Դատաստանի երկրորդ դիշերն էր և մօտաւորա-
պէս այն ժամին, որ Սոսկան պէտք է չարաբաստութեան
մէջ մանէր սուկալի Անծանօթի հետ, երբ մտան նոյն
պարտիզի դռնից, որ դեռևս բաց էր թողած—ոչ մէկ
երկրի և օդի խորհրդաւոր ոգիներից մէկը, այլ Կալէնուս-
սի, Իսկի քահանայի մանձր և ամենամարդկային
կողմը։ Նա հազիւ նկատեց այն չնչին զոհաբերութիւնը

*բաղկացած հասարակ պտուղից և աւելի հասարակ դի-
նուց, որոնք Սոսկայի հաշուով բաւական լաւ էին հրա-
պուրելու աներևոյթ օտարականին։ «Մի նուէր կը լինի»,
մոմածեց նա, «պարտէզի աստուածոյ համար։ Իմ հօրս գլուխը
վկայ, եթէ նորին աստուածութիւնը որևիցէ լաւ նուէր-
ներ չէ ստանում, նա աւելի լաւ կանի եթէ բաց թող-
նէ իր աստուածութեան արհեստը։ Ա՛հ, եթէ մենք քա-
հանաներս չը լինէնք, Աստուածների բանը չատ վատ
կը լինէր։ Եւ այժմ դանք Արբակին—ես քալւում եմ
վատնզաւոր ուղղի վրայ, բայց դրա տակ մի հանք
պէտք է ծածկուած լինի։ Եգիպտացու կեանքը իմ ձեռ-
քումն է տեսնելով որքան արժէք կը տայ դրան»։

Մինչդեռ այսպէս մենախօսում էր, նա բակից ան-
ցաւ պերիստիլը, ուր տեղ տեղ մի քանի լամպ խան-
գարում էին աստեղազարդ դիշերուայ մթութիւնը։ Ար-
բակ դուրս գալով սիմնաշարի կողքի սենեակների մէկից,
յանկարծ հանդիպեց Կալէնուսին։

«Հօ, Կալէնուս, ինչ ես ուզում», ասաց եգիպտա-
ցին. և մի քիչ չվոհմութիւն կար նրա ձայնի մէջ։

«Այո, իմաստուն Արբակ—յոյս ունիմ, որ իմ այցե-
լութիւնը անժամանակ չէ»։

«Ո՛չ, հէնց այս րոպէին իմ ազատագրուած ստրուկ—
Կալլիուս երեք անգամ փոխդատաց իմ աչ կողմում. ես
խնայեայ, որ մի բարիք կար պահուած ինձ համար—և
ահա աստուածները ինձ ուղարկեցին Կուլէնուսին։

«Կուզես երթանք քո սենեակը, Արբակ»։

«Ինչպէս կուզես. բայց դիշերը պարզ է և բուբա-
լից—իմ վերջին հիւանդութիւնից դեռ մի տեսակ թու-
լութիւն մնացել է իմ վրայ—օդը կաղդուրում է ինձ—

ևկ քալենք պարտիզում—մենք նույնչափ միայնակ կը լինենք այնտեղ»։

«Բոլոր սրտով», պատասխանեց քահանան. և երկու բ ա ր և կ ա՛մ ն ե ր ը կամաց կամաց անցան այն բազմաթիւ ծառուղիներից մէկի մէջ, որոնք ամէն կողմից կարում էին պարտէզը, և որոնց եզերքին չարուած էին մարմարեայ վազեր՝ նիրհած ծաղիկներով։

«Ա՛քանչելի դիշեր է», ասաց Արբակ—«կապոյտ և զեղեցիկ լինչպէս այն դիշերը, որ քսան տարի առաջ առաջին անգամ բացուեցաւ իմ առջև երբ ես ոտքս դրեցի Իտալիայի ափերի վրայ։ Իմ սիրելի Կալենուս, տարիքը սկսում է իր ազդեցութիւնը գործ դնել մեր վրայ—դէթ մեզ զգանք, որ ապրել ենք»։

«Դէթ դու կարող ես պարծենալ դրանով», ասաց Կալենուս, որպէս թէ մի պատեհութիւն վնտռտելով յայտնելու այն զաղանիքը, որ ծանրացած էր նրա կրծքի վրայ. նա այդ դիշեր սովորականից աւելի էր զգում Արբակի ահը, նրա հանդարտ և պատկառելի դիմաղծական ձևից—«դէթ դու կարող ես պարծենալ դրանով։ Դու ունեցել ես անհամար հարստութիւն—մի կազմուածք, որի ամուր և խիտ հիւսուած նեարդերի մէջ հիւանդութիւնը ոչ մի տեղ չէ կարող դանել ներս մանելու—յաղող սէր—անսպառ զուարճութիւն—և ճիշդ այս բոպէին, յաղթական վրէժխնդրութիւն»։

«Դու ակնարկում ես աթենացու վրայ։ Ա՛հ, վաղն առաւօտ նրա մահուան դատավճիռը կը տպագրուի։ Անտառը անողոք է։ Բայց դու սխալւում ես, նրա մահը ուրիշ ոչ մի գոհացում չէ տալիս ինձ բացի նրանից, որ դա ազատում է ինձ մի հակառակորդից խօնէի սիրոյ

մէջ։ Ես ուրիշ ոչ մի օգս չունիմ այդ տարաբախտ մարդասպանի դէմ»։

«Մարդասպա՛ն», կրկնեց Կալենուս հանդարտ և խորհրդաւոր ձայնով. և այդ բառն արտասանելու ժամանակ նա լռեց և իր աչքերը յառեց Արբակի երեսին։ Աստղերը ձգել էին իրանց աղօտ և անդորր լոյսը իրանց մարդարէի երեսին, բայց այնտեղ ոչ մի փոփոխութիւն դոյց չը տուին. Կալենուսի աչքերը դած ընկան յուսահատած և ամօթահար։ Նա չեռոյ արագ չարունակեց—«Մարդասպա՛ն, չատ լաւ է նրան ամբաստանել այդ ոճրով. բայց դու, ասելի քան որ և է մարդ, դիտես, որ նա անմեղ է»։

«Բացատրիր միտքդ», ասաց Արբակ, պաղատելամբ. որովհետև նա արդէն պատրաստուած էր այդ յայտնութեան համար, որը նախապատրաստել էին նրա գաղտնի երկիւղները։

«Արբա՛կ», պատասխանեց Կալենուս, իր ձայնը մրմնջիւնի իջեցնելով, «ես գտնուում էի սրբազան ծառաստանում, թաքնուած տաճարով և չրջապատող ծառերով։ Ես լսեցի—ես տեսայ ամէն բան։ Ես տեսայ, որ քո ղէնքը ճեղքեց Ապէկկիդէսի սիրտը։ Ես չեմ մեղադրում այդ գործը—որովհետև դա մեռցրեց մի թշնամու և մի ուրացողի»։

«Դու բոլորը տեսար», ասաց Արբակ չոր եղանակով. «ես էլ այդպէս էի երևակայում—դու միայնակ էիր»։

«Միայնակ», պատասխանեց Կալենուս, զարմանալով եգիպտացու անդորրութեան վրայ»։

«Եւ դու լինչու՞ էիր թաքնուել տաճարի հետև այդ ժամին»։

«Որովհետև ես գիտէի, որ Ապէկկիդէս քրիստոնեայ

է դարձել—որովհետև գիտէին, որ հէնց այդտեղ նա պիտի հանդիպէր կառապան Օլինթոսին—որովհետև նրանք պիտի հանդիպէին խորհրդակցելու թէ ինչպէս մեր առաջադրանքները յայտնեն ժողովրդին—և նա գնացել էլ այնտեղ նորանոր գաղանիքները իմանալու և նրանց գիտաւորութիւնը խափանելու համար»։

«Եւ դու որևէ մարդու ասել ես, ինչ որ անսար այնտեղ»։

«Ո՛չ, տէր իմ. գաղանիքը կողպուած է ծաւալիպ կրծքի մէջ»։

«Ի՞նչ, նոյն իսկ քո ազգական Բարլօն ոչինչ չըգիտէ այդ մասին։ Ե՛կ, ճշմարտութիւնը»։

«Աստուածները վկայ...»։

«Սուտ։ Մենք ճանաչում ենք միմեանց—ինչ են աստուածները մեզ համար»։

«Ոչինչ քո վրէժխնդրութեան երկիւղով երդուում եմ—ոչ»։

«Եւ ինչու դու մինչև հիմա թաքցրել ես ինձանից այս գաղանիքը։ Ինչու դու ապաստել ես մինչև ամենադու գաղտապահութեան պիչերը և հիմա ես ինձ ասում թէ Աբրակ մարդապան է։ Եւ այսքան երկար ապաստել ինչու հիմա յայտնում ես քո անասէր»։

«Որովհետև... որովհետև...» թոթովեց Կալենուս, կարմրելով և չկռթուած»։

«Որովհետև», ընդմիջեց Աբրակ, մի քաղցր ժպիտով, և գարկելով քահանայի ուսին մի մանրմասն և փաղաքշական չարժումով—«որովհետև իմ սիրելի Կալենուս (անս այժմ ես կը կարդամ քո սիրտը, և կը բացատրեմ դրա չարժառիթները)—որովհետև, դու ուզում էիր, որ ես կատարելագոյն խառնուրդ գտնեմ դատաստանի մէջ

որպէս զի փախչելու ճանապարհ չունենամ. որպէս զի ես անդառնալի կերպով երեք ոճիրների մէջ բռնուեմ այն է, սուտ երդում չարիք և մարդասպանութիւն. որպէս զի ես ինքս սրած լինելով ժողովրդի սիրտը ինձ համար ոչ մի հարստութիւն, ոչ մի զօրութիւն չը կարողանայ փրկել ինձ նրանց ձիրաններից. և այժմ դու ինձ ասում ես այդ գաղանիքը, նախ քան դատաստանի վերջանալը, և անմեղի դատապարտուելը, որպէս զի գոյց տաս թէ վաղը քո խօսքով ինչ մի չարութեան ցանց կարող է պատրաստել. որպէս զի այս իններորդ ժամին թանգացնես քո լռութեան արժէքը. որպէս զի գոյց տաս թէ իմ լարած թակարդները բորբոքելով ժողովրդի ցասումը, քո խօսքով ինձ պիտի բռնեն իրանց մէջ. և որ, եթէ ոչ Գլոկուսի, դէթ ինձ համար պիտի բացուին ամիսի ժանիքները։ Այդպէս չէ»։

«Աբրակ», պատասխանեց Կալենուս, կորցնելով իր բնաւորութեան բոլոր սառը յանդգնութիւնը. «իսկապէս մի մոգ ես. դու կարդում ես մարդու սիրտը՝ որպէս թէ դա մի մաղաղաթ լինէր»։

«Դա իմ կոչումն է», պատասխանեց եգիպտացին, քաղցրութեամբ ծիծաղելով։ «Լաւ, ուրեմն դու լուր. և երբ ամեն բան վերջանայ ես կը տարաձայնեմ քեզ»։

«Ներիր ինձ», ասաց քահանան, երբ ազատութիւնը, որ նրա սիրասիրող կիրքն էր, նրան տրամադրեց յոյս չը դնել սրանից աստուածներուն վրայ. «ներիր ինձ. դու ճշմարիտ ասացիր—մենք միմեանց ճանաչում ենք։ Եթէ դու ուզում ես, որ ես լուռ կինամ, պէտք է ինձ մի բան կանխիկ վճարես, որպէս նախ Հարպակրատէսին *։ Եթէ վարդը, խոհեմութեան այդ

*) Լռութեան աստուածը։

քաղցրիկ նշանը պիտի ամրապէս արմատանայ, ուրնմն այս դիչեր ոսկու հոսանքով չջրիր դրան»։

«Շատ սրախօս և բանաստեղծական», պատասխանեց Արբակ, միչտ այն փափուկ ձայնով, որ չոլում և քաջալերում էր, երբ պէտք է սարսափացնէր և զսպէր իր ազատ ընկերոջը»։ Չես ազատ մինչև առաւօտ»։

«Ինչու համար է այս յետաձգումը։ Կարելի էր, երբ ես այլ ևս չը կարողանամ տալ իմ վկայութիւնը առանց ամաչելու. կարելի է անմեղ մարդու դատապարտելուց ձեռք, երբ ես այլ ևս չը լանդգնեմ նրա անարատութիւնը ապացուցանել, այն ժամանակ դու կը մոռանաս իմ իրաւունքը. և իրօք, քո ներկայ վարմունքը մի վատ նչան է քո ապագայ երախտագիտութեան։

«Լաւ, ուրնմն Կալենուս, ինչքան կուզես վճարիր քեզ»։

»Ես կանդգ չատ թանկագին է, և դու չատ հարստահաս ես», պատասխանեց քահանան բանալով իր առաւմները։

«Աւելի և աւելի սրախօս։ Բայց խօսքը—ինչ դուռմար ես պահանջում»։

«Արբակ, ես լսել եմ, որ քո զաղանի դանձարանում, այդ Օսկեան կամարների ներքև, որոնք պահում են քո հոյակապ դահլիճները դու ունիս ոսկու, գոհարների և վազերի ամբողջ կոյտեր, որոնք կարող են մըրցել աստուածացեալ Ներոնի հարստութեան հետ. դու միկ անգամ էլ կայցելես գանձարանը։ Արդեօք անկեղծութեամբ և բարեկամաբար չեմ խօսում»։

«Ո՛հ, ամենաամբիծ և լաւագոյնդ մարդկանց», գոչեց Կալենուս, զրեթէ արտասուելով ցնծութիւնից», արդեօք

ձարթող ես դու ներել իմ անարգիչ կասկածները քո արդարութեան, քո առատաձեռնութեան մասին»,

«Սուս, մեկ անգամ էլ դառնանք և կիջնենք Օսիրեան կամարների տակ»։

Գլուխ ԺԹ.

Գերին հարցնում է գաբիրի պատգամը։—Նրանց, որոնք կուրանում են կոյրերը կարող են խաբել։—Երկու նոր բանտարկեալներ մեկ գիշերում։

Անհամբերութեամբ Նիզիան ոտքատում էր ոչ նուազ անհամբեր Սոսիայի գալստեանը։ Ամրապնդելով իր քաջութիւնը առատապէս խմելով մի լաւագոյն հեզուկ քան այն, որ պատրաստուած էր գևի համար՝ գիւրահաւատ ոտքատուորը գաղտնագողի մոտաւ կոյր աղջկայ սենեակը։

«Լաւ, Սոսիա, պատրաստ ես։ Բերեցիր մի բաժակ մաքուր ջուր»։

«Այո, բերեցի. բայց մի քիչ դողում եմ. դու վըստահ ես, որ ես չեմ սեռնի գևին։ Ես լսել եմ, որ այդ պարոններդ չատ զեղեցիկ կերպարանքի և չատ քաղաքավար ձևերի տէր անձնաւորութիւններ չեն»։

«Միամիտ եղիր։ Ես պարտիզի դուռը մի քիչ բաց եմ թողել»։

«Այո. մի քիչ էլ զեղեցիկ ընկոյզ և խնձոր եմ դրել դրան մոտ և քո սեղանի վրայ»։

«Շատ լաւ։ Ես դուռը այժմ բաց է, այնպէս որ գևը կարող է ներս մանել»։

«Անտարակոյս բաց է»։

«Շատ լաւ, հիմա բաց այս դուռը. այդպէս բաց թող։ Ես այժմ Սոսիա, տուր ինձ ձրագը։

«Ի՞նչ. ճրագը հո չես հանպցնի»։

«Ո՛չ, բայց ես պետք է փչեմ իմ հմայքները նրա լոյսի վրայ։ Կրակի մէջ էլ մի ոգի կայ։ Նաոմը»։

«Գերին հնազանդուեցաւ. և Նիպիան մի քանի րոպէ լուռ թեքուելով ճրագի վրայ՝ վեր կացաւ, և մի ցած ձայնով երգեց հետևեալ կոպիտ

ՀՐԱՒԷՐԸ ԱՌ ՕԳԻ ՈԳԻՆ.

Օգին սիրելի, և ջրից սիրուած,
Այո՛, եղել է միշտ թեսալուհին.
Մեղ, ոլիմպական դաւերից աւրուած են
Հմայք, որ վերից կը քաշեն լուսնին։
Ինչ որ Եգիպտոս գիտութիւն ունի,
Ինչ հընարած են պարսիկ մոգերը.
Ինչ գիւտ որ գիտենք երգից կամ ծաղկից,
Կամ դեղ ասել է, մերինն են, մերը։

II

Ո՛վ աներևոյթ օդի ուրուական,
Լսիր աղօթքը թեսալիոյ դաւեր.
Քեզ երկրպագով երգում եմ տալիս
Որ կեանք էր բաշխում ու կեանք վախճել էր։
Երգում Կողքիսի ահեղ թովչութեամբ
Երբ նրա գլխից գուբս եկաւ Յասոն,
Փչիր ջրալից բաժակի վրայ,
Եւ հիմայրուց գողտուր հոգուն
Այն ստուերային բաները որ կան
Ապագայի մէջ անյայտ և մթին.

Եւ պատասխանիր, ով վայրի ոգի,
Քո կոյր ագահնիդ այս աղաչանքին,
Արի, ահ, արի։

III

Եւ ոչ արևի պայծառ թագուոր,
Եւ ոչ մի աստուած երկրի կամ երկնի,
Եւ ոչ էլ ինքը ահեղ Շանթարկուն
Քեզնից աւելի օրհնեալ կը լինի։
Արի, ահ, արի։

«Ոգին անտարակոյս գալիս է», ասաց Սոսիան։ Եւ զգում եմ, որ նա վազում է իմ մազերիս մէջ»։

«Ջրիդ բաժակը դիր գետին։ Այժմ տուր ինձ քո թաչկինակը, և թող կապեմ երեսդ և աչքերդ»։

«Ա, այդ է սովորութիւնը այս հմայքների։ Ոչ այդքան պինդ. կամաց-կամաց»։

«Ահա, դու չես կարողանում տեսնել»։

«Տեսնել, Եապիտէր վկայ ոչ, ոչինչ բացի մթութիւն»։

«Ուզիր ոգուն, ինչ որ ուզում ես հարցնել մի ցած մրմնջիւնով, երեք անգամ։ Եթէ քո հարցիդ աստրատական պատասխան տրուի, այն ժամանակ դու կը լսես ջրի եռալու և պղպջալու ձայնը, նախ քան դեը փչէ դրա վրայ. եթէ բացասական պատասխան տրուի՝ այն ժամանակ ջուրը բոլորովին լուռ կը լինի։

«Բայց դու չը պետք է մի խաղ խաղաս ջրի պլխին»։

«Թող բաժակը դնեմ քո ոտքերիդ մօտ—այսպէս։ Այժմ դու վստահ ես, որ ես չեմ կարող ձեռք պպցնել բաժակին՝ առանց քո գիտութեան»։

«Շատ զեղեցիկ։ Այժմ ով Բաքոս, օդնիր ինձ։ Դու պիտես որ ես միշտ քեզ աւելի եմ սիրել, քան բոլոր մեւս աստուածներին, և ես կը նուիրեմ քեզ այն արծաթեայ բաժակը, որ ես անցեալ տարի զողացայ հաստատուր կարպատրից (տակառապետ) եթէ դու օգնես ինձ այս ջրասէր զեի զէպքում։ Եւ դու, ով ոգի, ականջ դիր և լսիր ինձ։ Արդեօք ես կարող կը լինեմ գնել իմ ազատութիւնը եկող տարի։ Դու գիտես. որովհետև քանի որ դու օդի մէջ ես ապրում, թռչուններըն *) անտարակոյս քեզ ասած կը լինեն այս ամէն բոլոր դաղտնիքները,— դու գիտես որ ես վերջին երեք տարուայ ընթացքում, դրսանել և զողացել եմ ինչ որ հաւատարմութեամբ— այսինքն ապահովութեամբ—իմ ձեռքն է անցել, և դեռ երկու հազար սեաներս էլ մնում է գումարը լրացնելու համար։ Արդեօք կարող կը լինեմ, ով բարի ոգի, պահատը այս տարի չտեսնել։ Խօսիր—Հա, ջուրը շարժուեմ է։ Ոչ. ամէն բան զերեզմանի նման լուռ է։ Լաւ, ուրեմն եթէ ոչ այս տարի, երկու տարուց յետոյ—Ա՛հ,—մի բան լսում եմ. դեղ գուռը ճռնկթում է. նա հէնց հիմա այստեղ կը լինի—երկու տարուց յետոյ, իմ բարեկամս. լաւ, լաւ երկու. երկու տարին չատ բանաւոր է։ Ինչ, էլի լռութիւն։ Երկու տարի ու կէս—երեք—չորս։ Գրողը տանի երեսդ, բարեկամ դու։ Դու սիկին չես, այդ մէկը պարզ է, եթէ ոչ՝ այդքան երկար լուռ չէիր մնայ։ Հինդ—վեց—վաթսուն տարի, Պլուտոնը տանի քեզ, այլ ևս չեմ

*) Որոնց համար կարծում էր թէ ամէն գազանիք գիտէն. նոյն նախապաշարմունքը տարածուած է և արևելքում, և առանց օրինակի չէ մեր հիւսիսային առասպելաբանութիւններում։

հարցնէի»։ Եւ Սոսիան բարկութիւնից տաքով զարկեց ջրի բաժակին և դլորեց դած։ Յետոյ չատ ազատանքով և աւելի չատ հայհոյանքով նա կարողացաւ իր դլուխը դուրս բերել այն թաչկինակից, որ կատարելապէս փաթաթուել էր նրա դլխի չուրջը, և նայելով իր չորս կողմը՝ տեսաւ որ մթութեան մէջ է գտնուում։

Հո, Նիպիա. լսմդը չը կայ։ Ա՛հ, դաւաճանուհի. և դու էլ չը կաս. բայց ես կը բռնեմ քեզ—դու պիտի ղղջաս այս խաչիդ համար»։

Վերին խարխափելով հասաւ դրան մօտ. դա էլ կողպուած էր դրսից. նա ինքն էր մի բանտարկեալ Նիդիալի փոխարէն։ Ի՞նչ կարող էր անել։ Նա չէր յանդգնում դուռը զարկել կամ աղաղակել, մի գուցէ Արբակ լսէ նրա ձայնը և տեսնէ թէ նա ինչպէս խարուած է. և Նիպիան, նոյն միջոցին, հաւանականապար արդէն հասած էր պարսիղի դուռը, և արագ արագ փախչում էր։

«Բայց», մտածեց նա, «նա կերթայ տուն, կամ մի որևէ ուրիչ տեղ քաղաքի մէջ։ Վաղը, արշալոյսին, երբ դերիները դան գործելու պերիստիլի մէջ, ես նրանց ուշադրութիւնը կը դրաւեմ, և յետոյ ես կարող եմ երթալ գտնել նրան և յետ բերել նախ քան Արբակ մի բառ անդամ լսէ այդ մասին։ Ա՛հ, այդ ամենից լաւ ձևն է։ Փոքրիկ դատաճանուհի, իմ մատերս քոր են գալիս քեզ համար. մտածելու որ լոկ մի բաժակ ջուր ես թողել ինձ համար։ Եթէ դինի լինէր, այդ էլ մի մխիթարութիւն էր։

Մինչդեռ Սոսիան, ապակէ թակարդի մէջ ընկած՝ ողբում էր իր վիճակը, և հնարքներ էր մտածում Նիդիալին նորից կալանաւորելու, կույր աղջիկը, չարժման այն մտանաւոր վճռողականութեամբ և ճարպկութեամբ,

որ ինչպէս առաջ նկատել ենք, յաճախ էր նրան, թեթեւ քայլերով անցել էր պերիստիլից, պատուել դիմացի անցքից, որ առաջնորդում էր դէպի պարտէզը, և բարախօսն սրտով, ուզում էր առաջանալ դէպի դուռը, երբ նա յանկարծ լսեց մերձեցող քայլերի ձայները, և ճանաչեց Արբակի զարհուրեցուցիչ ձայնը: Նա մի րոպէ կանգ առաւ սարսափի և կասկածի մէջ. լսում յանկարծ նրա մտքից անցաւ թէ մի ուրիշ անցք կայ, որը չատ քիչ զործածուած էր և լոկ պահուած էր եղիպատացու թագուհի խնջոյքների չքնաղ մասնակցուհիների համար: Մի ուրիշ անցք այդտեղից և հակառակ ապարանքի ցածի կողքով առաջնորդում էր դէպի մի դուռ, որը նորից բացւում էր պարտիզի մէջ: Բարեբախտաբար դա կարող էր բաց լինել: Այս միտքը լցացաւ թէ չէ, չտասմամբ վերադարձաւ, ցած իջաւ աջ կողմի նեղ սանդուխքներից, և չտաւղ հասաւ անցքի մուտքին: Աւազ. մուտքի դուռը փակ էր և կողպուած: Մինչդեռ նա փորձում էր տեսնել թէ իսկապէս դուռը կողպուած էր, նա իր եռևից լսեց Կալենուսի ձայնը և մի րոպէ յետոյ Արբակի ցածաձայն մրմունջը, որ նրան պատասխանում էր: Նա չէր կարող կենալ այլևս. հատնակատարար նրանք գալիս էին հէնց այդ դրան մօտ: Նա առաջ թռաւ և զգաց, որ գտնւում է անծանօթ դետնի վրայ: Օդը խոնաւ էր և պաղ. այս բանը խրախուսեց նրան: Նա մտածեց, որ կարելի է լինը ընկել է այդ ճոխ ապարանքի գետնափորներից մէկի մէջ, կամ, գէթ մի այնպիսի լետ ընկած ծակ, ուր հատնակատարն չէր, որ ապարանքի խորհուրդ աչերը իր տեսքը կտեսնէր. այս մտածութեան մէջ՝ նա նորից լսեց քայլերի և խօսակցութեան ձայն: Յառաջ, յառաջ, վազեց նա, պարզած իր

բազուկները, որոնք յաճախ հանդիպում էին սիւների և թանձր ու անպէտ մարմինների: Մի ճարպկութեամբ, որ երկպառիկ զարձած երկիւղի առատութիւնից, նա ազատուեցաւ այս վտանգներից, և չարունակեց իր ճանապարհը. օդը աւելի և աւելի խոնաւ էր դառնում քանի նա յառաջանում էր. այնուամենայնիւ, երբ որ նա կանգ էր առնում չունչ քաշելու, նա լսում էր առաջացող քայլերի ձայնը և խօսակցութեան անորոշ մրմունջը: Վերջապէս մի պատ, որ կարծես նրա ճանապարհի վախճանը լինէր, կանգնեցրեց նրան: Արդեօք մի տեղ չը կար ուր նա կարողանար թագնուիլ: Չը կար մի ճեղք, մի փոս: Ոչինչ չը կար: Նա կանգնեց և յուսահատութիւնից ձեռքերը ճմռթեց. լսեալ նորից սիրտ առնելով՝ երբ ձայները մօտեցան, նա յառաջացաւ պատի կողքով. և յանկարծ դպչելով այն սուր մալթերից մէկին, որ տեղ տեղ դուրս էին ցցուած որմից՝ նա ընկաւ գետին: Թէև չատ վիրաւորուած՝ նա չուշաթափուեցաւ. նա ձայն չը հանեց. ուշ, նա մինչև անգամ ուրախացաւ, որ այդ դէպքը նրան մի տեսակ ապաստանարան էր տուել. նա տեղաց մտաւ եռանկիւնի մէջ, որ մալթը կազմած էր պատի հետ միասին, այնպէս որ գէթ մէկ կողմից նա թագնուել էր. նա հատաքեց իր փոքրիկ քնքոյշ մարմինը և կարելի եղածին չափ մի փոքրիկ կծիկ կազմելով չնչատալաս սպասեց զործի վախճանին: Նոյն միջոցին Արբակ և քահանան չարունակում էին իրանց ճանապարհը դէպի այն գազանի չափարաններըը, որոնց պարտականութեան մասին եղիպտացին այնքան պարծեցել էր: Նրանք գտնւում էին մի անպէտ գետնափոր տարածութեան կամ սրահի մէջ. ցած առաստաղը ծանրացած էր կարճ և հաստ սիւների վրայ, որոնք պատկանում

էին շատ աւելի հին ճարտարապետութեան, քան այդ շքայլ դարի յունական չնորհալի արուեստը։ Միակ և աղօտ լամպը, որ գտնւում էր Արբակի ձեռքում մի շատ նսեմ լոյս էր ձգում մերկ և խորտ ու բորտ պատերի վրայ, որոնց անշաղախ ահագին սարերը զարմանալի և կոպիտ կերպով հազցրուած էին միմեանց մէջ։ Սողոմոնները, որոնց հանգստութիւնը խանգարուած էր, դանդաղ աչքերով նայում էին այս ինքնակոչ նորեկներին, և յետոյ մտնում պատերի արանքը։

Կալենուս մի սարսուռ զգաց, երբ նա նայեց իւր շուրջ և չնչեց խոնաւ, վատառողջ օդը։

«Այնուամենայնիւ», ասաց Արբակ ժպտալով, երբ նկատեց նրա սարսուռը, «այս կոպիտ բնակարաններն են, որ մատակարարում են վերի դահլիճների զեղուութիւնը։ Նոքա նմանում են աշխարհի դործաւորներին,— մենք քամահրում ենք նրանց կոպտութիւնը, բայց և այնպէս նրանք կերակրում են հէնց այն հպարտութիւնը, որ արհամարհում է նրանց»։

«Ես ուր է տանում ձախ կողմի այն մութ նրբանցքը», հարցրեց Կալենուս. այս մթութեան մէջ, կարծես դա վերջ չունի և գնում է մինչև Հադէս»։

«Ընդհակառակը, դա առաջնորդում է դէպի վերի սենեակները», պատասխանեց Արբակ, անհոդութեամբ. «մենք այ կողմից ենք գնում դէպի մեր նպատակատեղին»։

Այդ սրահը, ինչպէս շատ ուրիշները Պոմպէյի աւելի բնակելի մասերում, ծայրումը երկու անցքերի կամ թեւերի էր բաժանւում, որոնց երկարութիւնը, որ իրօք շատ չէր, չափազանց մեծ էր երևում աչքին, այն թանձր խաւարի պատճառով, որի դէմ լամպը շատ թոյլ պայ-

քար էր մղում։ Այս անցքերի այ կողմինը ընտրեցին ընկերները, և շարունակեցին իրանց ճանապարհը։

«Ջուարճասէր Գլաւկուսը վաղը կը դրուի սրանից ոչ աւելի չոր բնակարանի մէջ, և շատ աւելի քիչ ընդարձակ քան այս», ասաց Կալենուս, մինչդեռ նրանք անցան ճիշդ հէնց այնտեղից, ուր կուչ էր եկել թեսսալուհին, կատարեալ ծածկուած մալթի լայն ցցուածքի ետև։

«Ա՛, բայց հետևեալ օրը նրա տեղը բաւական չոր և բաւական ընդարձակ կը լինի արենայի վրայ։ Եւ մտածել», շարունակեց Արբակ ծանր և մտնաւոր չեչտերով, մտածել որ քո մէկ բառը կարող էր ազատել նրան և Արբակին դնել նրա տեղը»։

«Այդ բառը երբէք չի արտասանուի,» ասաց Կալենուս։

«Իրաւունք ունես, իմ Կալենուս, դա երբէք չի արտասանուի», պատասխանեց Արբակ, մեերմաբար իր թևը լենելով քահանայի ուսին. «և այժմ, կանգնիր— մենք հասանք դրանը»։

Դողդոջուն լոյսը ընկաւ մի փոքրիկ դրան վրայ, որ շատ խոր բանուած էր պատի մէջ, և երկաթի բազմաթիւ ձողերով և թերթերով ապահովուած էր։ Արբակ իր գօտուց հանեց մի փոքրիկ օղակ, որի մէջ կար երեք կամ չորս կարճ, բայց հաստ բանալիներ։ Ոհ, ինչպէս բաբախում էր Կալենուսի զգուշ սիրտը, մինչդեռ նա լսում էր ժանգոտած վականքների մրմռոցը. կարծես նրանք չէին ուզում ոչ ոքի թոյլ տալ մտնել այն գանձերի մօտ, որոնց իրանք պահպանում էին։

«Մտիր բարեկամ իմ», ասաց Արբակ, մինչդեռ նա

ձրագը պահել եմ վեր, որպէս զի դու կարողանաս պարարել քո աչքերը դէպին կոյսերով»։

Անհամբեր Կալենուսը չսպասեց մի երկրորդ հրաւէրի. նա չտապեց դէպի դուռը։

Հազիւ անցել էր չեմքից երբ Արրակի ուժեղ ձեռքը նրան առաջ հրեց։

«Այդ բառը երբէք չի արտասանուի», ասաց եպիսկոպոսին, մի բարձրաձայն և ցնծալից ծիծաղով, և դուռը փակեց քահանայի երեսին։

Կալենուս մի քանի սանդուխքներից ընկել էր գած, բայց այդ րոպէին չը զգալով իր ընկնելու ցաւը՝ նա թռաւ դէպի դուռը, և կատաղութեամբ բաղխելով այդ իր կծկուած բռունցքով՝ ազաղակում էր այնպիսի մի բարձր ձայնով, որ ամէն անասունի առնակին էր նմանում քան մարդկային հնչիւնին, այնքան սուր էր նրա վիշտը և յուսահատութիւնը. «ո՛հ. ազատիր ինձ, ազատիր ինձ, ես ոսկի չեմ ուզում»։

Բառերը անորոշ կերպով լսւում էին այդ հատ գրան ետևից, և Արրակ նորից ծիծաղեց։ Յետոյ իր ոտքը ուժով զարկելով գետնին, պատասխանեց որպէս թէ դուրս թափելու իր երկար զսպած կրքերը,—

«Բոլոր Պալմարիայի ոսկին», գոչեց նա, «հապի մի փշուր չէ կարող դնել այդտեղ։ Սովամահ եղիր, թշուառ, քո մահուան հառաչանքներդ չեն կարող մինչև անգամ զարթնացնել այս անգին սրահների արձագանքը. և մինչդեռ դու քո յուսահատ անօթութեան մէջ կրծում ես քո միսը և բաժանում քո ոսկորից, օդն անգամ չի յայտնի, որ այսպէս է սատակում այն մարդը, որ սպառնաց և կարող էր կործանել Արրակին։ Մնաս բարեաւ»։

«Ո՛հ դուք —ողորմութիւն, քարասիրտ գազան սրա համար էր...»։

Պարբերութեան մնացորդ մասը չը գալաւ Արրակի ականջին, մինչդեռ նա յետ էր գառնում խաւար սրահի միջով։ Մի խոշոր և ուռած գորտ նստած էր նրա ճանապարհի վրայ. լամպի ճառագայթները ընկան նրա ապեղ զազրելութեան և նրա կարմիր դէպի վեր դարձած աչքերի վրայ։ Արրակ իր ճանապարհը ծռեց, որպէս զի չը վնասէ նրան։

«Դու պիղծ ես և զարչելի», մրմնջաց նա. «բայց դու չես կարող վնասել ինձ. հետևաբար դու ապահով ես իմ ճանապարհի վրայ»։

Կալենուսի ազաղակները թէև խամրած և խեղդուած նրան բանտարկող արգելքի միջոցով, այնու ամենայնիւ չատ թոյլ հնչիւններով հասնում էին Արրակի ականջին։ Նա կանգ առաւ և ուշադրութեամբ ականջ դրեց։

«Այս մէկը մի տարաբախտութիւն է», մոմածեց նա. «որովհետև ես չեմ կարող նաև մտնել՝ մինչև այդ ձայնը բոլորովին լռէ։ Իմ դանձերը, ճշմարիտ է չեն գտնուում այդ բանտի մէջ՝ այլ հակառակ կողմում։ Իմ սարուկները, դանձերը տեղափոխելիս չը պիտի լսեն այդ ձայնը։ Բայց ինչ երկիւղ պատնից։ Երեք օրից յետոյ եթէ նա կենդանի լինի, նրա ձայնը, իմ հնար մօրաքը վկայ. չատ թոյլ պիտի լինի այն ժամանակ. ոչ, դա չէ կարող դուրս թափանցել նրա դերեզմանից։ Խոհ վկայ, ցաւրա է.— ես անչափ տենչում եմ մի լի բաժակ համեմատած փառերնիան։

Այս ասելով անգութ եպիսկոպոսին իր վերարկուն փաթաթեց իր չուրջը և գնաց դէպի պրոի օդը։

Գլուխ ԺԴ.

Նիփիան հանդիպում է Կալենուսին։

Ի՛նչ սարսափելի, բայց և լուսոյ խօսքեր էր լսել Նիփիան։ Հետևեալ օրը Գլոկուս պիտի դատապարտուէր. բայց մէկ հոգի կար, որ նրան կարող էր ազատել, և Արրակին դատապարտել նրա պատժին, և այդ մէկը չնչում էր մի քանի քայլ նրա թաքուստից հեռու։ Նա լսում էր Կալենուսի ճիչերը, աղաղակները—նրա անէծքները—նրա աղաչանքները, թէև բառերը խեղդուած և անորոշ էին հասնում նրա ականջին։ Նա բռնաբարուած էր, բայց Նիփիան գիտէր նրա բռնաի դաղանիքը. եթէ միայն նա կարողանար փախչել—եթէ միայն նա կարողանար տեսնել պրէտորին, ղեռ կարելի էր ժամանակին ազատել այդ մարդուն և փրկել աթենացու կեանքը։ Նիփիայի զգացմունքները դրեթէ խեղդում էին նրան. նրա ուղեղը պատում էր—նա այնպէս էր զգում, որպէս թէ ուշաթափւում է—բայց մի բուռն ճիգ գործ դնելով, նա կարողացաւ ինքն իր վրայ իշխել. մի քանի րոպէ անձկութեամբ ականջ դնելուց յետոյ, երբ նա համոզուեցաւ, որ Արրակ հեռացել էր, և այդ ընդարձակ սրահը թողել էր մենութեան և Նիփիային, նա, առաջնորդուած իր ականջով սողոսկաց մինչև ճիշդ այն դրան մօտ, որ փակուել էր Կալենուսի վրայ։ Այստեղ Նիփիան աւելի պարզ լսում էր նրա ահռելի և յուսահատութեան չէչաները։ Երեք անգամ Նիփիան փորձեց խօսել և երեք անգամ նրա ձայնը չհնացաւ հասնել դրան ծակերից։ Վերջապէս գտնելով բանալու ծակը՝ նա իր շրթունքները դրեց այդ փոքրիկ ծակին, և բռնաբարեալը պարզ լսեց, որ մի փափուկ ձայն արտասանում էր իր անունը։

Նրա արիւնը լերպացաւ—նրա մազերը կանգնեցին։ Ի՞նչ խորհրդաւոր և գերբնական էակ կարող էր մուտք գործել այդ անաւոր մենութեան մէջ։ «Այդ ոչ էւ». դոչեց նա, նոր սարսափով. «ինչ ոգի է—ինչ սոսկալի լարւա է, որ կոչում է կորուսած Կալենուսին»։

«Ներեցէք», պատասխանեց թեսալուհին, «առանց Արրակի գիտութեան, և առաւելապէսի թոյլատրութեամբ ես ակամայից եմ եղել նրա դատապարտութեան։ Եթէ ես ինքս կարողանամ ազատուել այս տրմերի միջից, ես կարող եմ փրկել քեզ։ Բայց դո ձայնդ լսելի արա ինձ այս նեղ ծակով և պատասխանիր իմ հարցերիս»։

«Ո՛վ օրհնեալ ոգի», ասաց քահանան ծայրագոյն հրճուանքով, և հնազանդելով Նիփիայի առաջ խորհրդին, «փրկիր ինձ, և ես կը վաճառեմ սեզանի բոլոր քաժակները դո գիտութիւնդ վոխարինելու համար»։

«Ես չեմ ուզում դո ոսկին—ես ուզում եմ դո գաղանիքը։ Արդեօք ճիշտ էր իմ լսածը—կարող ես դու փրկել աթենացի Գլոկուսին այն ամբաստանութիւնից, որ բերուած է նրա կեանքի դէմ»։

«Կարող եմ—կարող եմ, և հէնց այդ պատճառով (ֆուրիաները խորչակեն այդ չարագործ եղիսաբացուն) Արրակը ինձ այսպէս թակարդի մէջ է ձգել և ինձ թողել է այստեղ սովամահ լինել և հանել»։

«Աթենացուն ամբաստանում են թէ մարդասպանութիւն է գործել. կարող ես դու հաստատել, որ այդ այդպէս չէ»։

«Դու ինձ ազատիր միայն և Պամպէլի ամենահզօր դլուխը աւելի ազատով չէ, քան նրանը։ Ես ականատես էի սպանութեան գործին—ես տեսայ, որ Արրակ զարկեց հարուածը. ես կարող եմ դատապարտել տալ ձգնա-

քիտ մարդասպանին և անվնաս արձակել տալ անմեղին. բայց եթէ ես փչանամ նա էլ կը մեռնի։ Թո՛ւ որևէ չար ճշնիս աթենացու ազատութեան մէջ։ Ով օրենսդիր օտարական, իմ սրտիս մէջ է գտնւում այն ամբիծականը, որ կարող է պատասխանել կամ ազատ արձակել նրան»։

«Ես դու կատարեալ վկայութիւն կը տաս քո պետեցած բոլոր բաների»։

«Կը տամ—ո՛հ եթէ ժողովքը բացուած լինէր իմ տաբերիս առջև—այո՛. վրէժ այդ կեղծ եղիպտացուց. վրէժ —վրէժ—վրէժ»։

Մինչդեռ Կալինաւս իր տասմների կոճիռներով հանդերձ ճչում էր այս բառերը, Նիպիան զգաց, որ նրա ամենավատ կրքերի մէջ էր կայանում իր վստահութիւնը, եթէ նա արդարութեամբ պիտի վարուէր դէպի ամենացին։ Նիպիայի սիրտը բաբախում էր. արդիօք կույր աղջիկը բախտ պիտի ունենար իր պաշտելուն, իր տասուցայեալին վրիժելու պահածալի վիճակին արժանանալ։ «Բաւական է», ասաց նա, «այն դատաստանները, որ ինձ տաջնորդեցին մինչև այստեղ, հէնց նոյն դատաստանները պիտի դարձ տանեն ինձ ամեն վտանգից։ Այո, ես զգում եմ, որ կարող եմ ազատել քեզ։ Ազատիր հանգստութեամբ և լոյս ունեցիր»։

«Բայց դուն եղիր, խոհեմ եղիր, իմ քաղցրիկ օտարական։ Մի փորձիր պահել Արբակին—նա մարմարիոն է։ Գնա պրէտորի մօտ—յայտնիր ինչ որ պիտես—նրանից խուզարկութեան մի դրաստար հրաման տասցիր. պինդ տարներ և ճարպիկ երկաթագործներ բեր—այս վանդակները տարտարեան կերպով տամր են։ Ժամանակը թռչում է—ես կարող եմ տովտանի լինել—տովտանի եթէ դու ուշանաս. գնա-գնա։ Բայց ազատիր տակալն քան է

միարնակ լինել։ Օդը մի վերեզմանի է նմանում—և կարիճները—հա. և ժժգոյն լարվանները. ո՛հ, կա՛յ, կա՛յ»։

«Ո՛չ», ասաց Նիպիան, տարտափառ եղած քահանալի տարտափից, և տենչալով միարնակ մնալ իր մտածումների հետ,—«Ոչ, քո խաթեր համար ես պէտք է հեռանամ։ Ա՛ռ լոյսը քեզ ընկեր—մնա՛ս բարեաս»։

Այս ասելով նա հեռացաւ, և տարտաճած բազուկներով խարխափեց այդ սիւնալից տրահի միջով մինչև հասաւ տրահի միւս ծայրը և այն անցքի բերանը, որ առաջնորդում էր դէպի դրսի օդը։ Բայց այնտեղ նա կանգ առաւ. նա զգաց, որ ասելի ազատով կը լինէր մի քիչ սպասել, մինչև որ պիշերը այնքան մտաենար առաւօտուան, որ ամբողջ տան եղեալները թմզուկին քնի մէջ, և այդպիսով, առանց աեանուելու նա կարողանար դուրս երթալ անից։ Հետևաբար նա մնչ անգամ ևս պատկեց և համրեց տազատի րոպէները։ Նրա եռանդուն տրտի մէջ ցնծութիւնն էր տիրապետող զգացմունքը։ Դևսկաս տարտափելի վտանգի մէջ էր. բայց ինքը կարող էր ազատել նրան։

ԺԲ.

Աբրակ և Խանէն։—Նիպիան հաստում է պարտկը Արգևօք կը վա՞խչի նա, և կազա՞տ աթենացան։

Երբ Արբակ տաքացրեց իր երակները՝ խմելով մի բաժակներ այն համեմուած և անուշահոտ գինուց, որ այնքան գնահատած էր զեղմ մարդկանց կողմից, նա, իր մէջ տովրականից ասելի ամրապատանութիւն և արտի հրճուանք զգաց։ Մի հոգեբանութիւն կայ լաղմական նրբամտութեան մէջ, որը, կարելի է, նուազ չէ

զգաճում այն պատճառով, որ նպատակը եղեռնական է։ Մեր ունայնասէր մարդկային բնաւորութիւնը, մի հաճոյք է զգում իր գերազանց խորամանկութեան և իր շահած յաջողութեան գիտակցութեան մէջ—լեռոյ գալիս է ապաշաւանքի սովալի հակազդեցութիւնը։

Բայց ապաշաւանքը չէր այն զգացումը, որ Աբրահ երբևիցէ հաւանականապար կարող էր ունենալ սուր Կալենուսի մահուան առիթով։ Նա վանեց իր միջոցութիւնից քահանայի ստնջանքները և նրա դանդաղ մահուան միտքը։ Նա լոկ զգում էր, որ մի մեծ վտանգ անցել էր, և մի հաւանական թշնամի լռեցուել. ինչ որ նրան այժմ հետաքրքրում էր անել այն էր, որ նա հաչիւ սար մուս քահանաներին, Կալենուսի աներեւութացման մասին. և այդ քանը նա մտածում էր, որ չատ դժուար չըզիսի լինել իր համար։ Կալենուսին նա յաճախ խուզարկել էր չըրջակայ քաղաքները կրօնական պաշտօնով։ Նա կարող էր ասել, որ այդպիսի մի պատգամով նրան նաւերներ է տուել և ուղարկել Հերկուլանումի և Նապոլիի մէջ եղած Իսիսի տաճարները, որպէս զի հաչտութեան դոհ մատուցանէ աստուածուհուն, նրա քահանայ Ապոլլիոսի տպաւորութեան առիթով։ Երբ Կալենուս մեռնէր, նրա մարմինը, նախ քան եզիպտացու մեհենքը, կարելի էր ձգել Սարնուսի մէջ. և երբ գտնուէր, կտակը հաւանականապար կընդունէր նպատակի անտաստածների վրայ, որպէս վրէժխնդրական մի գործ, վտանգին Օլիմպուսի մատուռն, արձակի վրայ։ Մի արագ ակնարկ ձգելով այն գաղտակցների վրայ, որ նա չօրինում էր ինքն իրեն պաշտպանելու համար՝ Աբրահ խոյն հեռացրեց իր մտքից թշնամի քահանայի ամբողջ չիշատակը. և ոգեւորուած այն յաջողութեամբ, որ վերջերը պատած էր նրա

առնն մի ձեռնարկը. նա իր մտքերը դարձրեց Իսնէի վրայ։ Վերջին անգամ երբ տեսել էր նրան, հելլենուհին նրան զրել էր իր ներկայութիւնից այնպիսի մի անարգական և դառն ծաղրածութեամբ, որը, նրա խրոխտ բնաւորութիւնը չէր կարող տանել։ Նա այժմ բաւական յանդգնութիւն էր զգում մեկ տեսակցութիւն էլ ունենալ Իսնէի հետ, որովհետև նրա ունեցած սէրը դէպի օրիորդը նմանուում էր ուրիշ մարդկանց համանման զգացմունքներին—դա նրան տալիս էր մի անհանգիստ տենչ իր սիրուհու ներկայութեանը, չը նայելով, որ այդ ներկայութիւնը յուսահատեցնում և խռնարհեցնում էր նրան։ Իսնէի սրի համար իր ունեցած վախկանկատութեամբ նա չէր հանել իր սև և հասարակ զգեստները, բայց, տեսնելի անուշահոտելով իր ազատի գոյն սև գիսակները և տալով իր պարեզօտին ամենավայելուչ ծալքեր, նա դնաց նապոլիտանի սենեակը։ Հանդիպելով սպասաւոր տարեկին, նա հարցրեց թէ արդեօք Իսնէն քաչուել էր քնելու թէ ոչ. և իմանալով որ նա դեռ քնած չէ, և արտասովոր կերպով հանդարտ և կաղդուրուած՝ նա համարձակուեցաւ ներս մտնել։

Նա գտաւ իր զեղեցիկ սանուհուն նստած մի վարդրկի սեղանի առջև և իր երեսը լինած իր երկու ձեռքերին մի խոհուն կեցուածքով։ Բայց նրա երեսը չէր կրում իր սովորական փայլուն պսպղչանման, և քաղցր խմացականութեան արտայայտութիւնը. նրա չրթունքները բաժանուած էին—աչքերը պաղ և անուշադիր. և նրա երկար սև մազերը անխնամ և արձակ թափուած նրա վզի վրայ, այդ հակադրութեամբ աւելս էին տալիս տխրութեան նրա թշերին, որոնք արդէն կորցրել էին իրանց չրջապտերի բոլորակութիւնը։

Արբակ մի րոպէ նայեց նրան նախ քան մօտենալը։ Իօնէն էլ իր աչքերը յառեցրեց. և երբ տեսաւ թէ ով էր ներս մտնողը նորից դարձաւ՝ յաւէտ մի արտայայտութեամբ՝ բայց չը շարժուեցաւ։

«Ա՛հ», ասաց Արբակ մի ցածաձայն և անձկալից առնով և յարգանքով, և մինչև իսկ խոնարհութեամբ մօտեցաւ և նստեց սեղանից քիչ հեռու—«Ա՛հ, երանի թէ ես մահուամբ կարողանայի վերջ դնել քո տանջութեանը, այն ժամանակ ինչ ուրախութեամբ պիտի մեռնէի։ Դու անիրաւում ես ինձ, Իօնէ. բայց ես կը կրեմ այդ անիրաւութիւնը առանց արտնջելու, ինձ թոյլ տուր միայն, որ երբեմն երբեմն քեզ տեսնեմ։ Մեղադրիր ինձ, յանդիմանիր ինձ, ծաղրիր ինձ, եթէ ուզում ես—ես կը սովորեմ հանդուրժել այդ բոլորին։ Եւ քո ամենատան խօսքերը միթէ տէրտէր չեն ինձ համար, քան ամենաքաղցր սրինգի երաժշտութեան լարթրռաձայն արուեստը։ Երբ դու լռում ես, կարծես ամբողջ աշխարհը կանգ է առնում—մի լճացում մակարդւում է երկրի երակների մէջ—երկիր չը կայ, կեանք չը կայ առանց քո երեսիդ լոյսին և քո ձայնիդ մեղեդուն»։

«Ցետ տուր ինձ իմ եղբօրը և իմ նշանածիս», ասաց Իօնէն հանդարտ և աղերսական ձայնով, և մի քանի մեծ չիթեր սկսեցին անդադար կերպով ցած գլորուիլ նրա թշերից։

«Երանի թէ ես կարողանայի վերակենդանացնել մէկին և ազատել միւսին», պատասխանեց Արբակ, ակներև զգայմունքով։ «Այո. քեզ երջանիկ դարձնելու համար ես կը ձգէի իմ տարաբախտ սէրը, և ուրախութեամբ կը մահանայի քո ձեռքը աթենացու ձեռքի հետ։ Կարելի է որ նա դեռ անվտանգ դուրս կը գայ իր դատաստանից

(Արբակ նրան թոյլ չէր տալել խմանալ թէ դատաստանը արդէն սկսուած է). եթէ այդպէս լինի դու ազատ ես լինելդ դատելու կամ դատապարտելու նրան։ Եւ մի մտածիր, ով Իօնէ, որ ես սրանից աւելի կը հետեմ քեզ իմ սիրոյ աղերսներով։ Ես գիտեմ, որ դա ունայն է։ Թոյլ տուր միայն ինձ միայն արտասուել—սրալ քեզ հետ։ Ներիր մի բանաւթեան, որ կատարելապէս ազատխարուել է, և որ այլ ևս դալթակղութեան պատճառ չը պիտի դառնայ։ Թոյլ տուր ինձ լինել քեզ համար ինչ որ երբեմն էի—մի բարեկամ, մի հայր, մի պաշտպան։ Ա՛հ, Իօնէ խնայիր ինձ և ներիր»։

«Ես ներում եմ քեզ։ Փրկիր միայն Գլոկուսին և ես ձեռք կը վերցնեմ նրանից։ Ո՛վ հզօր Արբակ, դու գուրատր ես թէ չարիք և թէ բարիք անելու մէջ. փրկիր աթենացուն, և խոստ Իօնէն այլ ևս չը պիտի նայէ նրա երեսին»։ Այս ասելով նա վեր կացաւ իր տեղից տակաւ և դողդողուն մարմնով, և ընկնելով Արբակի ոտքը, գըրկեց նրա ծնկները. «Ո՛հ, եթէ դու իսկապէս սիրում ես ինձ եթէ դու մարդկային սիրտ ունես—լիշիր իմ հօրս ամիսը, լիշիր իմ երեխայութիւնը, լիշիր այն բոլոր ժամերը, որ մենք երջանկութեամբ անց ենք կացրել միմեանց հետ, և փրկիր իմ Գլոկուսին»։

Տաղօրինակ ցնցումներ անցան եղիսաբեաց ամբողջ կաղմուածքից. նրա դիմագծերը սարսափելի կերպով ծռմռուեցան—նա դարձրեց իր երեսը, և ասաց մի խուլ ձայնով, «եթէ կարողանայի փրկել նրան, հէնց հիմա, կանչի այդ բանը. բայց հռոմէական օրէնքը խիստ է և կորուած։ Բայց եթէ ես կարողանայի յաջողցնել—եթէ ես կարողանայի փրկել նրան մահից և ազատել բանտից—դու կը խոստանայիր իմս լինել—իմ հարսը»։

«Քո՛նդ», կրկնեց Իօնէն, վերկենալով. «քո՛նդ—քո հաբաը։ Իմ եղբօրս արեան վրէժը չէ առնուած. ոչ սպանեց նրան։ Ո՛վ Նէմէսիս, կարող եմ ես արդեօք, նոյն իսկ ի գին Գլոկուսի կեանքի վաճառել քո խոստ պահանջը։ Արթակ—քո՛ն ո՛ւ Երբէք»։

«Իօնէ՛, Իօնէ՛», գոչեց Արթակ, իր սրտի խորքից, «ինչո՞ւ այս խորհրդաւոր բառերը—ինչո՞ւ ես դու կցում իմ անունը քո եղբօրդ սպանման հետ»։

«Իմ երազներս են կցում այդ—և երազները գալիս են աստուածներից»։

«Ունայն գնորքներ են բոլորը։ Արդեօք մի երազի համար դու ուզում ես անլիրաւել անմեղին, և վատնել մեկ մէջսից՝ քո սիրականիդ կեանքը փրկելու»։

«Լսի՛ր ինձ», ասաց Իօնէն, խօսելով հաստատ, արագ և հանդիսաւոր ձայնով. «եթէ Գլոկուս փրկուի քո միջոցով, ես երբէք չեմ երթայ նրա տունը որպէս հարս։ Բայց ես չեմ կարող լաղթել ուրիշ արարողութեանց զղուանքը—ես չեմ կարող ամուսնանալ քեզ հետ։ Մի քնդմիջիր ինձ. այլ լսիր Արթակ.—եթէ Գլոկուս մեռնի, մինուոյն օրը ես կը խափանեմ քո բոլոր մեքենայութիւնները, և քո սիրոյդ համար կը թողնեմ լոկ իմ աճիւնը։ Ա՛խ,—դու կարող ես ինձանից հեռացնել գաշոյնը և թոյնը, դու կարող ես բանտարկել—դու կարող ես չղթայել ինձ, բայց քաջ հոգին երբ վճռում է փախչել երբէք միջոցները նրան չեն պակասում։ Այս ձեռքերը, թէև մերկ և անզէն, կարող են կարել կեանքի հանդոյցները։ Չղթայիր այդ ձեռքերը և չրթունքներս չը պիտի ծծեն օդը։ Դու վիատն ես—դու կարպացել ես թէ ինչպէս կանայք դերադասել են մեռնել քան անպատուութեան ենթարկուիլ։ Եթէ Գլոկուս սպանուի, ես անար-

ժանաբար չեմ ուզում։ Երդուում եմ բոլոր երկնքի աստուածներով, և ովկիանոսով և երկրով, որ ես կը սպանեմ ինձ։ Ահա ասացի»։

Ուղիղ, հպարտ, ձգելով իր ամբողջ հասակը և մի ներչնչուածի նման, Իօնէի կեցուածքը և ձայնը մի ահ ձգեցին իր ունկնդրի սիրտը։

«Քաջ սիրտ», ասաց նա, մի կարճ լռութիւնից յետոյ. «դու իրօք արժանի ես իմս լինելու։ Ո՛հ, ինչպէս ես երազում էի մի այսպիսի կենակից մասին իմ բարձր նպատակներիս համար, և երբէք չը զաղ, եթէ ոչ քո մէջ, ով Իօնէ»։ Նա չարունակեց աւելի արագ, «արդեօք չեմ տեսնում, որ մենք ծնուած ենք միմեանց համար։ Արդեօք քո էներգիայի, քո քաջութեան նման մի բան չեմ տեսնում իմ վեհ և ինքնակալ հոգու մէջ։ Մենք ստեղծուած ենք միացնելու մեր համակրութիւնները—ստեղծուած ենք փչելու մի նոր ոգի այն սառ վարձկան և ըիրա աշխարհի մէջ—ստեղծուած ենք այն հզօր նպատակների համար, որոնց իմ հոգին, ոտատնելով անցնելով ժամանակի մթութեան վրայից, նախատեսում է մի մարգարէի թափանցիկ աչքով։ Մի հաստատամտութեամբ հաստատ քոնիդ, ես վճռում եմ քեզ թողլ չը տալ անարգ անձնասպանութիւն գործել։ Ես ողջունում եմ քեզ, որպէս իմը. թագուհիդ այն կլիմաների, որոնք չեն խաւարած արծուի թևերի սուսերով, որոնք չեն յաշտուած նրա մագիլներով, ես երկրպագում եմ քո առջև հպատակութեամբ և ահով—բայց երկրպագութեան և սիրոյ մէջ հայցում եմ քո անձնատուրութիւնը։ Միասին մենք կտնցնենք ովկիանից—միասին մենք կը հիմնենք մեր պետութիւնը. և հեռաւոր ապագայի սերունդները գլուխ պիտի ծռեն արքաների այն երկար ցեղի առջև, որ

ծնուել է Աբրահամի և Իսահակի ամուսնական առագաստից»։

«Դու զառանցում ես։ Այս խորհրդաւոր ճոռոմաբանութիւնները աւելի յարմար են մի որ և է խեզանդամ պառաւի, որ հմայքներ է վաճառում հրապարակի վրայ քան իմաստուն Աբրահիմին։ Դու լսեցիր իմ վճիռը— դա անփոփոխ է ինչպէս իրենք պարկանները։ Օրհնա լսեց իմ ուխտը, և դա պրսեցաւ անմոռանալի Հագէմի (հոգիների աշխարհը) դրքում։ Քաւիր, ուրեմն, ամ Աբրահամ—քաւիր քո անցեալը. փոխիր առելութիւնը դէպի յարգանք — վրէժխնդրութիւնը դէպի երախտապիտութիւն. ազատիր մեկին, որ ալ ես քո հակառակորդը չը պիտի լինի։ Սրանք այնպիսի գործեր են, որ յարմարւում են քո նախասիրած բնաւորութիւնդ, բնաւորութիւն, որից երբեմն թաչում են վհոհ և ազնիւ կոյծեր։ Սրանք գրւում են Մահուան Աբքանների հշոի մէջ, և կարող են ծանրացնել նժարը ի նպաստ քեզ՝ երբ անմարմին հոգին, զողդոջուն և սարսափահար, կանգնում է Տարտարոսի և Ելիսէի մէջ տեղ. նրանք ուրախացնում են մարդուս սիրտը կեանքի մէջ աւելի չատ և աւելի երկար, քան կրքի վայրկենական յագուրդը։ Ա՛հ, Աբրահամ, լսիր ինձ և կատարիր իմ խնդիրքը»։

«Բաւական է Իսահակ։ Ինչ որ ես կարող եմ անել Գլոկուսի համար, անպատճառ կանուխ. բայց մի մեզադրիր ինձ եթէ ես յաջողութիւն չունենամ։ Հարցրու իմ թշնամիներից, եթէ ես չեմ փորձել, եթէ ես չեմ փորձում հեռացնել դատաւճիռը նրա գլխից, և դրա համեմատ դատիր ինձ։ Քնիր ուրեմն, ամ Իսահակ։ Գիշերը անցնում է. ես թողնում եմ քեզ հանգստանալ—և երանի թէ դու աւելի նպաստաւոր երազներ տեսնես մի մար-

դու վերարերութեամբ, որը կեանք չունի եթէ ոչ քո գրութեան մէջ»։

Առանց ապասելու մի պատասխանի Աբրահամ չտապով հեռացաւ. կարելի է, վախենում էր ականջ դնել Իսահակի արտաչարժ աղաչանքներին, որոնք ստիպում էին նրան նահանջով, նոյն իսկ երբ չարժում էին նրա զօրքը։ Բայց զօրքը ինքը չափազանց ուշ եկաւ։ Եթէ Իսահակ մինչև անգամ խոստանար նրան իր ձեռքը, նա չէր կարող, այժմ—իր վհատութիւնը տալուց լսուել—ժողովրդի զրպարտուց լսուել—վերկել աթենացուն։ Այնուամենայնիվ իր մարքի էներգիայի ոյժով լուսուց և լուսուց էր զարձել. նա մոռացում էր ազատել հասարակութիւնների վրայ, և հասասում էր թէ դեռ կարող է չպիտանակել մի կնոջ, որը այդպէս գրաւել և կաշկանդել էր նրա կրքերը։

Մինչդեռ նրա ազատարները օգնում էին նրան իր զգեստները հանելու, Նիկիան անցաւ նրա մարքից։ Նա զգայ թէ հարկաւոր էր, որ Իսահակ երբէք չը լսեր իր սիրականի ցնորամտութիւնը, մի գուցէ այդ բանը մեղմացնէր նրա աչքում Գլոկուսին վերագրուած յանցանքը. և կարելի էր, որ Իսահակի սարսափները նրան լուր տային թէ Նիկիան գտնում է Աբրահի չարկի տակ, և Իսահակ ցանկանար նրան տեսնել։ Երբ այս միտքը անցաւ նրա գլխից, նա գարձաւ իր ազատագրուած գերիներից մեկին,—

«Վալիտա, դնա», ասաց նա, «Սուխալի մօտ, և ասա նրան որ որևէ պատճառով կոյր Նիկիային դուրս չը թողնէ իր տեղեակից։ Բայց, ազատիր—նախ դնա իմ տանուտէր ազատարկող ստրուկների մօտ, և զգուշացրու

նրանց, որ օրիորդին չը յայտնեն թէ կայր աղջիկը իմ յարկիս տակ է։ Գնա—չուտով»։

«Ազատագրուած գերին չտատակեց նրա հրամանը կատարելու։ Իր պատգամը Խոնչի ծառաներին յանձնելուց յետոյ նա գնաց արժանապատիւ Սոսիայի մօտ։ Նա չը գտաւ նրան իր ամէնօրեայ սենեակում. նա բարձրաձայն կանչեց նրա անունը և Նիդիայի սենեակից լսեց նրա ձայնը,—

«Ո՛հ. Կալլենիուս, այդ դու ես—փառք աստուածներին. բայց այս դուռը խնդրում եմ»։

Կալլիաս բացաւ դուռը և Սոսիայի ազդրմելի կերպարանքը խոյնի, դուրս եկաւ։

«Ի՛նչ, սենեակի մէջ փակուած այդ երիտասարդ աղջկայ հետ, Սոսիա, Proh pudor! Բաւական հասած պատճառներ չը կան պատի վրայ, որ դու պէտք է գնաս այդ տեղս կանանչ...»։

«Անունը մի տալ այդ փոքրիկ վհուկի». ընդմիջեց Սոսիան, անհամբերութեամբ. «նա իմ կարծանմանս պատճառը կը դառնայ»։ Եւ նա խոյնի յայտնեց Կալլիասին Օպալին Վեի պատմութիւնը, և թեսալուհու փոխուածը։

«Գնա կախուիր, ուրեմն, տարաբախտ Սոսիա։ Ես հէնց այս րոպէին մի պատուէր եմ ընդել քեզ Արքակի կողմից, որ ոչ մի պատճառով թոյլ չը տաս, նոյն իսկ մէկ րոպէ, որ նա դուրս երթայ իր սենեակից»։

«Me miserum!» գոչեց տարուկը։ «Ի՞նչ անեմ—մինչև հիմա նա Պոմպէի կէսը ոսկի տուած կը լինի։ Բայց վաղը ես անպատճառ կը բռնեմ նրան իր հին յաճախատեղիներում։ Իմ գաղանիքը պահիր խնդրեմ, իմ սիրելի Կալլենուս։

«Ես ինչ որ կարող եմ բարեկամաբար կանեմ քեզ

համար, բայց միայն չը վտանգելով իմ ապահովութիւնը։ Բայց դու վստահ ես, որ նա դուրս է գնացել այս տնից—նա կարելի է դեռ թաքնուած է այստեղ»։

«Ինչպէս կարելի է։ Նա դիւրութեամբ կարող էր երթալ պարտէզը, և դուռը ինչպէս ասացի քեզ, բաց էր»։

«Ոչ, այդպէս չէ. որովհետև քո ասած ժամին, Արբակ պարտիզի մէջ էր քահանայ Կալենուսի հետ։ Ես գնացի այնտեղ մի քանի բոյսեր քաղելու իմ տիրոջ բաղնիքի համար։ Ես տեսայ դրան մօտ դրուած սեղանը. բայց դուռը տարակոյս չունիմ, որ փակ էր. կասկած չը կայ, որ Կալենուս պարտիզի գնով մտաւ, բնականաբար փակել է դուռը իր ետևից»։

«Բայց կողպուած չէր»։

«Այո. որովհետև ես ինքս բարկացած մի անհոգութեան վրայ, որ պերիստիլի բրոնզները կարող էր գնել որևէ գողի տրամադրութեան տակ, կողպեցի, բանալին վերցրի, և—քանի որ չը տեսայ գնդապետին, որի գբելին մի լաւ լաւի պիտի թափէի—ահա այստեղ է, ձեռ իմ գօտուս մէջ»։

«Ո՛հ, ազդրմած Բաքոս, ի զուր չէր, որ ես ազազակեցի քեզ։ Մի րոպէ չը պէտք է կորցնել։ Ե՛կ անմիջապէս երթանք պարտէզը—կարելի է դեռ նա այնտեղ է»։

Բարեբնոյթ Կալլիասը չօժարուեցաւ օգնել տարուկին. և մօտի սենեակները և պերիստիլի ծակերը ի զուր փնտռելուց յետոյ, նրանք մտան պարտէզը։

Մօտաւորապէս այս ժամին էր, որ Նիդիան վճռեց դուրս գալ իր թաքստոցից և չարունակել իր ճանապարհը։

Դողդողալով—իր չունչը զսպելով, որը երբեմն ցնցելով նրա կերպարանքը դուրս էր գալիս նրա բերանից,—թեթեւութեամբ սահելով պատգաղարդ պե-

քիսաչիլի սիւների կողմից—մթացնելով լուսնի խաղաղ լոյսը, որ ընկել էր պերիսաչիլի ազիւսաձև կեղտոնի վրայ—այժմ դէպի վեր երթալով պարսիպի ճեմելիքից—սահելով մութ և անշուշտ ծառերի պատնէշից, նա հասաւ չարաբաստ դրան մօտ և անտառ որ կոպտաձայ է։ Մենք բոլորս անտեղ ենք ցաւի, երկրպագութեան, երկիւղի այն արտայայտութիւնը, որ յուսահատութեան մի նշումը, եթէ կարելի լինի այդպէս ասել, ձգում է կոյրի երեսի վրայ։ Բայց ինչ բառեր կարող են նկարել այն անսահմանելի ցաւը, այն սրտի բուռն անդիմադրը, որ այս րոպէին տեսնում էր Թեսալոնեու դէմքի վրայ։ Կրկին և կրկին նրա փոքրիկ դողդոջուն ձեռքը թափահարեց անողորմ դրան այս և այն կողմը։ Խեղճ արարած, դուբ էր քո բոլոր ազնիւ քաջութիւնը, քո անմեղ խորամանկութիւնը, քո արագ զարկերը և պատյանները ազատուելու բարակից և սրտրդներից։ Միայն մի քանի մէտր քեզանից հեռու, ծիծաղելով քո վորձերից—քո յուսահատութեան վրայ—իմանալով որ այժմ դու իրանց ես պատկանում—և անողորմ համբերութեամբ սպասելով այն րոպէին, որ պիտի բանեն իրանց որսին՝ կանգնած են քո հալածիչները։ Եւ երջանիկ դու, որ չես կարողանում տեսնել նրանց։

«Սուս, Կալլիսա—լծիր երթայ։ Թող տեսնենք, ինչ դանի երբ համոզուի, որ դուռը հաստատուած է»։

«Տես, նա բարձրացնում է իր երեսը դէպի երկինք—նա մրմնջում է—նա վայր է ընկնում վհատութիւնից։ Ա՛յ, Պոլլուքս վկայ նա մի նոր հնարք է գտել. նա չէ ուզում գլխից հանել փախչելու միտքը։ Նապիտէր վկայ, մի տոկուն հոգի է։ Տես, նա վերև է թռչում—նա յետ է գառնում—նա մոտծում է մի ուրիշ վորձի վրայ։—

Ես խորհուրդ կը տամ քեզ Սոսիա, որ այլ ևս չուշանաս. բանիր նրան նախ քան նա դուրս երթայ պարսիպից—այժմ»։

«Ա՛, փախստական, բանեցի քեզ վերջը—հա». ասաց Սոսիան բանելով ապերջանիկ Նիկիասին։

Նապաստակի վերջին մարդկային աղաղակի նման, երբ չների ժանիքները մտնում են նրա մսի մէջ—մի քնաչրջիկի սարսափահար սուր ձայնի նման, երբ նրան յանկարծ զարթնացնում են—թռաւ կոյր աղջըկայ ճիչը նրա կակորդից, երբ նա զգաց իր բանտապանի բիրտ ձեռքը իր ուսի վրայ։ Այդ ճիչը բղխում էր այնպիսի մի ծայրահեղ ցաւից, այնպիսի մի անսահման յուսահատութիւնից, որ կարող էր մի ամբողջ կեանքի ընթացքում հնչել մարդու ականջների մէջ։ Նա այնպէս զգաց որպէս թէ փրկութեան վերջին կտոր տախտակը կորզուեցաւ խեղդուող Գլոկուսի ձեռքից։ Դա մի պայքար էր եղել կեանքի և մահուան մէջ. և մահը այժմ տարել էր յաղթանակը։

«Աստուածներ իմ, այդ ձայնը ամբողջ տունը ոտքի կը հանէ։ Արբակ շատ թեթև քուն ունի։ Խղճիր նրա բերանը», գոչեց Կալլիսա։

«Ա՛հ, տես այն թաշկինակը, որով փոքրիկ վհուկը իմ խելքը կախարդեց առաւ իմ ձեռքից։ Ե՛կ, այդ լաւ է. այժմ դու համր ես ինչպէս և կոյր»։

Եւ վերցնելով նրա թեթև մարմինը իր թևերի մէջ, Սոսիան չուռուղ հասաւ այն սենեակը, որտեղից Նիկիան վախել էր։ Այնտեղ բանալով թաշկինակը, նա թողեց Նիկիային այնպիսի մի զարհուրելի մենութեան մէջ, որ հոգիների աշխարհից դուրս ոչ մի տեղ դրանից աւելի սարսափելի չէր կարող լինել։

Գլուխ ԺԶ.

Վերադառնալ ընկերներուն վշտակցութիւնը մեր ապաբախտութեան ժամանակ։—Բանտը և բանտարկեալները։

Երրորդ և վերջին օրն էր Գլոկուսի և Օլինթուսի դատաստանին. ժամանակը բաւական ուշ էր։ Մի քանի ժամ դատարանի վակուելուց, և դատավճիռը տրուելուց յետոյ, մի փոքրիկ խումբ Պոմպէյի ալամօդ երիտասարդներից հաւաքուել էին սեթևեթ Լեպիդուսի սեղանի շուրջը։

«Այսպէս ուրեմն Գլոկուս մինչև վերջը ուրանում է իր մեղքը», ասաց Կլոդիուս։

«Այո. բայց Արբակի վկայութիւնը համոզիչ էր. նա հարուածը տեսել է իր աչքով», պատասխանեց Լեպիդուս։

«Ի՞նչ կարող է եղած լինել դրա պատճառը»։

«Քահանան մի թեթուած և մի խոժոռադէմ մարդ էր, նա հաւանականաբար մի լաւ լուացել էր Գլոկուսին իր զուարճասէր կեանքի և իր խաղամոլ սովորութիւններին համար, և վերջ ի վերջոյ երդուել է, իր հաւատուելիքը չը պիտի տայ իր քրոջ ամուսնութեանը նրա հետ։ Վիճաբանութիւնը տաքացել է, անարդիւնք բառեր են փոխանակուել Գլոկուս, ըստ երևոյթին, լցուած է եղել բարկացկոտ աստուծոյ ներչնչմամբ, և մի վայրկենական յուսահատութիւնից դրդուած զարկել է։ Դինու բորբոքը, յանկարծական խղճահարութեան վհատութիւնը առաջ են բերել այն զառանցումը, որից նա մի քանի օր հիւանդացաւ. և ես դիւրութեամբ կարող եմ երևակայել, խեղճ մարդ, թէ դեռ չմոռացած լինելով այդ ուշադրութեան ապրեցութեան տակ, նա մինչև հիմա էլ իր գործած ոճրի գիտակցութիւնը չունի։ Դէթ այսպէս է Արբակի նրբամիտ բացատրութիւնը, որը վերին աստիճանի բարեսիրտ և խնայող է եղել իր վկայութեան մէջ»։

«Այո. նա մեծ ժողովրդականութիւն է չահել դրանով։ Բայց ի նկատի առնելով այս մեղմացուցիչ հանդամանքները, սենատը պէտք է թեթևացրած լինէր դատավճիռը։

«Եւ սենատն էլ այդպէս կանէր եթէ ժողովուրդը չը լինէր. բայց ամբոխը կատաղել էր։ Քահանաները ոչ մի բան չէին խնայել նրանց գրգռելու. և նրանք էլ կարծելով—այդ արիւնարբու դաղանները—թէ որովհետև Գլոկուս մի հարուստ մարդ է և մի ազնուական պիտի խոյս տար օրէնքի խստութիւնից՝ անողոք էին նրա դէպքում, և երկու անգամ աւելի խիստ նրա դատապարտութեան խնդրում։ Այնպէս է թւում, որ մի կամ մի ուրիշ պատճառով, նա երբէք պաշտօնապէս Հռոմի քաղաքացի չէ դրուած. և դրա համար սենատը զրկւում է իր իշխանութիւնից ժողովրդի կամքին հակառակելուց, թէև, վերջ ի վերջոյ լոկ երեք հոգու մեծամասնութիւնը կար նրա դէմ։ Հմ. Բիանը»։

«Սա սարսափելի կերպով կերպարանափոխուել է. բայց ինչպէս անդորր էր և անվախ»։

«Ա՛, պիտի տեսնենք թէ վաղն էլ կունենայ այդ սրտի ամրութիւնը։ Բայց ինչ արժանիք կայ քաջութեան մէջ, երբ այդ անատուած չունը, Օլինթուս, միևնոյն բանը կարող է անել»։

«Հայհոյիչը։ Այո՛», ասաց Լեպիդուս, բարեպաշտական ցասումով. «ինչ զարմանք, որ երկու օր առաջ տասնապետներից մէկը կայծակնահար եղաւ, մինչդեռ եր-

կինքը պարզ էր *)։ Աստուածները վրէժխնդրութիւն են պզտում Պոմպէյի դէմ, քանի որ այդ ատոր արբանիզքը դեռ կենդանի է այս քաղաքի պատերի մէջ»։

«Այնու ամենայնիւ սենատը այնքան մեղմ էր, որ եթէ նա լոկ յայտնած լինէր թէ ապաչխարում է և մի քանի կաթ կնդրուկ ձգած լինէր Կիբելէի սեղանի վրայ, ազատ կարձակուէր։ Ես տարակոյս ունիմ, թէ այս նազովրեցիները—եթէ պետական կրօնքն ունենային—նոյնչափ ազատամտութեամբ պիտի վարուէին դէպի մեզ, եթէ մենք ատքով զարկած վայր ձգած լինէինք նրանց Աստուծոյ պատկերը, հայհոյած լինէինք նրանց կրօնքը, և ոտքախաթած լինէինք նրանց հաւատքը»։

«Ի նկատի ունենալով հանգամանքները, Վլոկուսին արդար է ազատութեան մէկ միջոց. նրանք թոյլ են տալիս նրան առիւծի դէմ գործ դնել նոյն առիւծը, որով նա սպանել է քահանային»։

«Ես տեսել եմ առիւծին. ես նայել եմ նրա աչուների և ժանիքների վրայ, և այդ բանը միջոց մ'ես անուանում։ Սուրը և աստարը եղէգի և պապիրուսի նման բաներ են այդ հզօր գազանի յարձակման առջև. այդ, ես կարծում եմ ճշմարիտ ողորմութիւնը այն բանի մէջ է եղել, որ նրանք երկար ժամանակ նրան չեն թողել երկրպագութեան մէջ. և Վլոկուս լախտասար էր այն քանի մէջ, որ մեր ողորմած օրէնքները դանդաղ են արտասանելու և արագ գործադրելու մէջ. նաև այն քանի, որ ամփիթատրոնի խաղերը, մի տեսակ նախա-

*) Պլինին ասում է, որ անմիջապէս նախ քան Վեզուվի պայթումը, քաղաքի վարչութեան տասնապետներից մէկը կայծակով զարկուեցաւ և մեռաւ, չը նայելով որ երկինքը պարզ էր և ոչ մի ամպ չը կար։

խնամութեամբ, երկար ժամանակուանից ի վեր որոշուած էին վաղուայ համար։ Նա որ ապաստամ է մահուան՝ երկու անգամ է մեռնում»։

«Գալով անաստուածին», ասաց Կլոդիուս, «նա պէտք է կռուէ այդ ժամու վագրի հետ բոլորովին անզէն։ Այս կռիւները դրաւի առմամբներից դուրս են։ Ո՞վ կուզի դրաւ գալ։

Բոլորը մէկ անգամից սկսեցին ծիծաղել ցոյց տալով այդ առաջարկի ծաղրելիութիւնը։

«Թեզէ Կլոդիուս», ասաց Հիւբրընկալը. «կորցնել մի բարեկամ, այդ մէկ ցաւ է. բայց ոչ ոքի չը դանել, որ քեզ հետ դրաւ կապէ այդ բարեկամի ազատուելու հաւանականութեան վրայ այդ չատ աւելի վատ տարաբախտութիւն է քեզ համար։

«Մարդու զայրացնում է. մի միխիթարութիւն կը լինէր թէ նրա և թէ ինձ համար մտածել, որ նա միևնոյն վերջին վայրկեանը պիտանի է եղել»։

«Ժողովուրդը», ասաց լուրջ Պանսան, «վատաբեալ հրճուանքի մէջ է այդ հեռանկարով։ Մարդիկ այնքան վախենում էին, որ ամփիթատրոնի խաղերի ժամանակ ոչ մի ոճրագործ չէր գտնուի գազանների համար. և այժմ երկու այսպիսի ոճրագործներ ունենալ մի իսկական երջանկութիւն է խեղճերի համար։ Իրանք չատ պրծնում են և պէտք է մի զուարճութիւն ունենան»։

«Ահա խօսում է ժողովրդական Պանսան, որը երբէք չէ չարժուում տեղից առանց մի չարք կլիէնտների, այնքան երկար, որքան մի հնդկական յաղթանակ։ Նա միշտ խօսում է ժողովրդի մասին։ Աստուածները իմ, նա վերջը Վրաքուս կը դառնայ»։

«Տարակոյս չը կայ, որ ես մի դառը պատրիկ չեմ», ասաց Պանսան, մի աղատականի եղանակով։

«Լաւ», նկատեց Լեվիդուս, «անտարակոյս վտանգաւոր պիտի լինէր աղջիկ երևալ մի դաշնամարտի նախընթաց գիշերը։ Սակայն եթէ երբևիցէ, ես, որ մի ծնուած ու մնուած հռոմայեցի եմ, դատապարտուիմ, աղօթեցէք Նեպտիւնին, որ դաշնակներ չը լինեն վիճակագրութեան (կենդանանուագում) կամ չատ ոճրագործներ լինեն բանտում»։

«Ես ասացէք խնդրեմ», ասաց խմբից մէկը, «ինչ է պատահել այն խելօք աղջկան, որ պիտի ամուսնանար Գլոկուսի հետ։ Մի այրի առանց հարս լինելու—այդ գառն է»։

«Օ՛», պատասխանեց Կլոդիուս, «նա ապահով է իր խնամակալի, Արբակի պաշտպանութեան տակ։ Բնական էր, որ նա կերթար նրա մօտ իր եղբօրը և նշանածին կորցնելուց յետոյ»։

«Վկայ է քաղցրիկ Վենուսը, որ Գլոկուսը բախտաւոր էր կանանց կողմից։ Ասում են հարուստ Ջուլիան պիրտահարուած էր նրա հետ»։

«Լոկ առասպել է պա, իմ բարեկամ», ասաց Կլոդիուս, կատակաբանելով. «ես այսօր Ջուլիայի մօտ էի։ Եթէ նա երբևիցէ այդպիսի զղացում ունեցել է, ես ինքս ինձ չզգացրեցի եմ, որ նրան մխիթարել եմ Գլոկուսին կորցնելու ցաւից»։

«Հանգիստ, պարոններ», ասաց Պանսան. «դուք չը գիտէք, որ Կլոդիուս Դիոմիդի տանը զրաղուած է հրաւիրելով ջահը։ Դա սկսում է վառուիլ, և չատով պայծառ պիտի փայլէ Հիմէնի *) տաճարում»։

*) Ամուսնութիւն։

«Իրօք այդպէս է», ասաց Լեվիդուս։ Կլոդիուս ամուսնացած մարդ է դառնում—Փուհ»։

«Մի վախենար», պատասխանեց Կլոդիուս. «ծերուկ Դիոմիդը հրաժարում է մտածելուց, որ իր աղջկան պիտի ամուսնացնէ մի ազնուականի հետ, և իր քսակի բերանը չայն կը բանայ։ Դուք կը տեսնէք որ ես նրա սեստերսները չեմ կորցրի ամրումի մնուածի մէջ։ Կլոդիուսի ամուսնութիւնը մի ժառանգուհու հետ՝ ձերմակ օր պիտի լինի նրա ուրախ ընկերների համար։

«Այդպէս», գոչեց Լեվիդուս. «ուրեմն մի լի բաժակ չքնաղ Ջուլիայի կենացը»։

Մինչդեռ այս նիւթի վրայ էր դառնում նրանց խօսակցութիւնը—մի խօսակցութիւն, որ անհերքաչնակ չէր այն ժամանակուայ չատ զատարկ մէջ ալրող մարքի ընդհանուր ուղղութեան հետ և որը, կարելի է մի դար առաջ արձագանք կարող էր գտնել Փարիզի թոյլ շրջանների մէջ—Մինչդեռ, ասում եմ, այս ձևի էր խօսակցութիւնը Լեվիդուսի պայծառ արիկլինեումի մէջ, չատ տարբեր էր այն սպառնալից տեսարանը, որ բացւում էր երիտասարդ աթենացու առջև։

Պատահարութիւնից յետոյ, Գլոկուսին այլ ևս թոյլ չը տուեցաւ մնալ Սալուստի—նրա զժբախտութեան միակ բարեկամի—սիրալիր պաշտպանութեան տակ։ Նա տարուեցաւ Փարսալի միջով, մինչև պահակները կանգ առան Նեպտիւնի տաճարի մօտ մի վոքրիկ գրան առջև։ Դուք այսօր էլ կարող էք տեսնել այդ տեղը։ Դուռը քայքայում էր մէջտեղից մի տարօրինակ ճեղք, պատուելով իր ծխնիների վրայ. դա մինչև մի տասիճան նմանում էր այժմեան գռնակներին, այնպէս որ միևնոյն ժամանակ մուտքի լոկ կէսն էր բաց թողնում։ Այս նեղ բա-

ցուած.քից ներա էին մղում բանտարկեալին, դնում էին նրա մօտ մի կտոր հաց և մի կուժ ջուր, և թողնում էին նրան կատարեալ մթութեան, և իր կարծիքով կատարեալ մենութեան մէջ։ Այնքան չնկարագրեալ էր եղել բանտի փոփոխութիւնը, որով նա ընկել էր երիտասարդական զուարճութիւնների և լայնող սիրոյ պատկառդ բարձունքներից անուանարկութեան ամենախոր վիհը և մի արիւնռուչա մահատան սարսափների մէջ, որ նա չէր կարողանում համոզուել թէ ինքը իրաւունք չէր մի սոսկալի երազի ցանցերի մէջ։ Նրա առաձգական և վառաւոր կազմը չդիմացաւ էր տարել մի հեղուկի վրայ, որի մեծագոյն մասը նա բարեբախտաբար չէր խմած։ Նա վերստացել էր իր մտքի առողջութիւնը, և գիտակցութիւնը, բայց և այնպէս մի ազօտ և մշուշանման ճնշում պատել էր նրա ջղերը և նսեմացնում էր նրա միտքը։ Նրա բնական քաջութիւնը և յուսնական հպարտութեան ազնուութիւնը նրան կարողութիւն էր տուել չդիմելու ամեն անպատշաճ երկիւղ, և դատարանում կանգնել իր զարհուրելի վիճակի հետ երես առ երես, անթարթ աչքով և խաղաղ կերպարանքով։ Բայց անմեղութեան գիտակցութիւնը բաւական ուժեղ զօրավիգ չէր նրա համար, երբ մարդկանց նայուածքը ալ ևս չէր դրդում նրա խրոխտ արիութիւնը, և նա թողուած էր առանձնութեան լռութեան մէջ։ Նա զգաց, որ բանտի խոնաւութիւնը թափանցում էր նրա ակարացած կազմուածքի մէջ և մրսեցնում էր նրան։ Նա—պերճասէրը, զեղխակեացը, նրբաճաշակը—նա, որ մինչև հիմա չէր ենթարկուել որևէ նեղութեան և չէր ճանաչել որ և է տառապանք։ Զբնաղ թռչուն, ինչու թողից նա իր հեռաւոր և արևափայլ կլիման—իր մայրենի լուսնկերթ

ձիթենու ծառաստանները—յաւերժալիշատակ աղբիւրների երաժշտութիւնը։ Ինչու նա ազատ և անխոհեմ կերպով թռչկոտել էր իր վայելուն թևերով և եկել ընկել էր այդ կոպիտ անհամակիր օտարականների մէջ, չլացնելով նրանց աչքերը իր վառաւոր գոյներով, դիւթելով նրանց ականջները իր խնդագին երգով. ինչու էր եկել, որպէս զի այդպէս յանկարծ բռնում էր—վանդակուէր մթութեան մէջ—մի որս և մի զոհ դառնար—նրա ուրախ զուարթ թռիչքները դադարէին—նրա ցնծութեան երգերը ընդմիշտ լռէին։ Խնդճ աթենացի։ Նրա նոյն իսկ թերութիւնները արտաղաղում էին մի մեղմ և զուարթ բնաւորութեան. նրա անցեալ կենցաղը ինչքան քիչ էր օժանդակել նրան պատրաստելու համար այն փորձութիւններին, որոնց միջից նա պիտի անցնէր, ճակատագրի հրամանով։ Ամբոխի ծաղրական ազազակը—ամբոխի, որի գովեստների միջից նա յաճախ քշել էր իր չնորհազեղ կառքը և ոստոստուն ձիերը վեհ ծակում էր նրա ականջները։ Իր նախկին բարեկամների (իր խնջոյքների ընկերների) պաղ և ապատաժպիտ երեսները դեռ պատկերանում էին նրա աչքի առջև։ Նրանցից ոչ մեկը այժմ այնտեղ չէր ամոքելու, քաջալերելու համար զովատանուած և ամենի ուշադրացման առարկայ օտարականին։ Այո պատերը պիտի բացուէին սոսկալի արենալի վրայ, պիտի բացուէին դէպի մի բառն և ամօթալի մահ։ Եւ Իօնէն. նրանից էլ նա ոչինչ չէր լսել, ոչ մի քաջալերիչ խօսք, ոչ մի քաղցր պատգամ. արդեօք նա էլ մոռացել էր Գլոկուսին. նա էլ նրան յանցապարտ էր համարում—և ինչ մեղքի մէջ—նրա եղբօր սպանութեան։ Նա կրճտեց իր ատամները—նա բարձրաձայն հառաչեց—և մերթ ընդ մերթ մի երկիւղ

Նեաի նման ճեղքում էր նրա ամբողջ մարմինը։ Այն չափաւոր և մելեգին խեղաթիւրութեան մէջ, որը այդպիսի անբացատրելի կերպով բնացել էր նրա հոգուվրայ, որը այնպէս տակնուվրայ էր արել և աւերել էր նրա ուղեղը, արդեօք չէր կարելի, որ նա իրօք, անդիտակցաբար, գործած լինէր այդ եղեռնը, որով ամբաստանուում էր։ Սակայն նա անմիջապէս զգում էր այդ միտքը. որովհետև բոլոր անցեալի մթութեան մէջ, նա պարզ լիշում էր Կիրէէլի մռայլ անտառը, անդոյն մեռեալի դէմքի վեր դարձած երեսը, այն րոպէն, որ նա կանգ էր առել դիակի մօտ և չանկարծ հարուածը, որ նրան զեաին էր խորտակել։ Նա համոզուել էր, որ ինքը անմեղ է. և սակայն ոմն, մինչև վերջին ժամանակները, այն օրից յետոյ, որ նրա լչտուած անդամները կը տարրալուծուէին և կը մանէին տարերքի մէջ, կը հատաւոր նրա անմեղութեան կամ կը պաշտպանէր նրա անունը։ Եւ մինչդեռ նա անց էր կացնում իր լիշողութեան աչքից, իր տեսակցութիւնը Արբակի հետ, և վրէժխնդրութեան այն առիթները, որ ներմանուել էին այդ մռայլ և անհաւոր մարդու սրտում, նա չէր կարողանում չը հաւատալ, որ ինքը զոհ էր դնացել մի հնարագիտութեամբ լարուած և մի խորհրդաւոր որոգայթի— որոգայթ, որի լանալին, որի գործադրութեան ձևը նա գտնել չէր կարողանում. և Իսնէն—Արբակ սիրում էր նրանց—արդեօք իր հակառակորդի յաջողութիւնը չը պիտի հիմնուէր ամենացաւ անկման վերատակնդի վրայ։ Այս միտքը բոլորից աւելի խոր էր ծակում նրա ծուծը. և նրա ամենու սիրտը աւելի խռովում էր նախանձից քան անհանգիստ երկիւղից։ Նորից նա բարձրաձայն ճառաչեց։

Մի ձայն մթութեան խորքից պատասխանեց այդ վշտի պոռթկունին։ «Ո՛վ է», ասաց այդ ձայնը, «իմ ընկերը այս անտառը ժամում։ Ամենացէր Աստուած, արդեօք դու ես»։

«Իրօք այդ անունով էին կոչում ինձ իմ բախտաւորութեան ժամում. այժմ կարելի է մարդիկ ուրիչ անուններ են հնարել ինձ համար։ Իսկ քո անունը. ով օտարական»։

«Ովհնթուս է, քո ընկերակիցը բանտի մէջ, որպէս և դատաստանի»։

«Ի՞նչ, նա որին կոչում են անատառած։ Արդեօք մարդկանց անիրաւութիւնն է եղած այն դատաստանը, որ քեզ տովորացրել է ուրանալ աստուածների նախախնամութիւնը»։

«Աւաղ», պատասխանեց Օվինթուս. «զուր ես ճչմարիտ անատառածը, և ոչ ես, որովհետև զուր ուրանում ես միակ ճչմարիտ Աստծուն, այն Անծանօթին—ի պատիս. Որի քո նախահայրերը մի սեղան կառուցին։ Այս ժամին է, որ ես ճանաչում եմ իմ Աստծուն։ Նա ինձ հետ է բանտի մէջ. նրա ժպիտը թափանցում է խաւարի մէջ. մահուան նախանշնմաց երեկոն իմ սիրտը ինձ մրմնջում է անմահութիւն, և աչքարէը հեռանում է ինձանից բայց իմ լոկնած հոգին միայն աւելի մօտեցնելու համար երկնքին։

«Աահ ինձ», ասաց Գլոկուս, չանկարծ, «արդեօք ես չը լսեցի քո անունը Ալեկիպէսի անուան հետ միասին։ Դու հաւատում ես, որ ես չանցապարտ եմ»։

«Միայն Աստուած կարող է կարդալ սրտերը. բայց իմ կատկածը ուրիչ մարդու վրայ է»։

«Ո՞ւմ վրայ»։

«Ինձ ամբաստանող Արբակի»։

«Հա, դու ուրախացնում ես ինձ. և ինչու»։

«Որովհետև ես ճանաչում եմ այդ մարդու չար սիրտը, և նա առիթ ունէր վախենալու նրանից, որ այժմ մեռած է»։

Այս ասելով, Օլինթոս սկսեց անդրադառնալ Գլաւկոսին այն մանրամասնութիւնների մասին, որոնք արդէն ծանօթ են ընթերցողին—Ապէկիդէսի հաւատամխաւութիւնը, այն յաւակատիճը, որ նրանք քաշել էին բանալու եղիպտական քահանայութեան խարէութիւնները, և այն մոլորութիւնները, որ Արբակ դրծ էր դրել նորահաւատի պատանեկութեան թուլութեան վրայ։ «Այդ պատճառով», շարունակեց Օլինթոս. «հանդուցեալը հանդիպել էր Արբակին, սասիկ յանդիմանել էր նրան իր դաւաճանութեան համար և սպառնացել էր պատառել քօղը նրա խարդախութեան երեսից. սերը և ժամը կարող են նպաստաւոր եղած լինել եղիպտացու խարկութեան համար և կիրքը և խորամանկութիւնը միասին գինած նրա ձեռքը այդ չարանենգ հարուածը զարկելու համար»։

«Այդպէս պէտք է եղած լինի», գոչեց Գլաւկոս, յանձնութեամբ։ «Ես երջանիկ եմ»։

«Բայց այժմ, ով տարաբախտ, ինչ օգուտ քեզ այդ յայտնութիւնը։ Դու դատապարտուած ես. և քո անմեղութեամբ դու պիտի մեռնես»։

«Բայց ես ինքս իմ կեանքի մօտ անպարտ եմ. և իմ անբացատրելի խելագարութեան մէջ ես սակայն, թէև վայրկենական կասկածներ ունէի։ Բայց ասա ինձ, ով օտար աղանդի հաւատացեալ, արդեօք դու կարծում ես, որ փոքրիկ սխալների համար, կամ նախահայրերի գործած մեղքի համար, մենք ընդ միշտ պիտի

կեանքանք և անիծանք վերին գօրութիւնների կողմից, ինչ անուններով կուզես կոչիր նրանց»։

«Աստուած արդար է, և չէ կեանում իր արարածներին լոկ նրանց մարդկային սխարութիւնների համար։ Աստուած ողորմած է և չէ նզովում եթէ ոչ նրանց, որոնք չար են և չեն ապաշխարում»։

Եւ սակայն ինձ այնպէս է թուում, որ երկնային բարկութիւնը ինձ պատժեց մի չանկարծակեան խելագարութեամբ, մի գերբնական և անաւոր մտացնորութեամբ, որը մարդկային միջոցներով չէր կատարուած։

«Գնենք կան այս աշխարհի վրայ», պատասխանեց նազովրեցին, սարսափած, «Ինչպէս Աստուած և Իր Որդին կան երկնքում. և քանի որ դու չես հաւատում ճշմարիտ Աստծուն, այդ չար ոգիները կարող են իշխանութիւն գործ դրած լինել քեզ վրայ»։

Գլաւկոս չը պատասխանեց, և մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին։ Ի վերջոյ ամենայնին ասաց մի վոխուած, վախուած, և կէս վարանուած ձայնով «Ո՛վ քրիստոնեայ, դու հաւատում ես, կրօնքիդ վարդապետութիւնների համաձայն, որ մեռելները նորից յարութիւն կառնեն, որ նրանք, որոնք այսօրեղ սիրել են միմեանց, հանդերձեալում միանում են—որ երեզմանի միւս կողմում մեր բարի անունը վայելում է մաքրուած այն մարդկային աչքերից որոնք անարդարաբար նեղմացնում են պրան այս թանձրաւոր աշխարհում—և որ այն վտակները, որոնք բաժանուում են ժայռերով և անապատով հանդիպում են անաւոր Հայէոսում (հոգիների աշխարհում) և նորից կազմում են միայն մի հոսանք»։

«Ո՛վ ամենայնի, հաւատում եմ ես դրան։ Ո՛չ, չեմ հաւատում—այլ գիտեմ. և հէնց այդ պեղեցիկ և օրհ-

նեալ վաստահութիւն է, որի վրայ ես այժմ լենուամ համ-
Ո՛վ Պիլէնէ», չարունակեց Օլինթոս սրտագին ձայնով.
«իմ սրտիս հարսը, որ խլուեցար լինճանից մեր ամուս-
նութեան առաջին ամսում, արդեօք քեզ չեմ սեռնելու
մի քանի կարճ օրերից յետոյ։ Քաղցր է բիւր անգամ,
քաղցր է մահը, որ լինճ պէտք է առաջնորդէ դէպի եր-
կինք և քեզ մօտ»։

Մի ինչ որ բան կար մարդկային սիրոյ այս յան-
կարծական պայթիւնի մէջ, որ չօչափեց Գլոկուսի հոգու
մէջ մի համակրութիւն ասելի մեծ քան ինչ որ առաստանքը կարող էր արտադրել։ Նա
ասելի մօտեցաւ Օլինթոսին. սրովհետև Խաղացիները,
որոնք անդամ էին մի քանի կէսերում՝ ի զուր անգ
անդամութիւններ չէին անում ուրիշ կէսերում. նրանք
խնայում էին իրանց բանտարկեալներին զատ զատ բան-
տերի և ասելորդ չդիանների տանջանքը, և արհնացի զո-
հերին թոյլ էին տալիս ունենալ այնպիսի ազատութեան
և այնպիսի ընկերակցութեան սիրելից մխիթարու-
թիւնը, որ բանտը կարող էր հայթհայթել։

«Այո՛», չարունակեց քրիստոնեան սուրբ ջերմե-
ռանդութեամբ, «հոգու անմահութիւնը—յարութիւնը—
մեռեալների վերամիացումը—մեր աղանդի ամենամեծ
սկզբունքներն են—մեծ ճշմարտութիւններ են, որոնց՝
մի Աստուած մեռաւ ապացուցանելու և յայտարարելու
համար։ Առաքելական Եկեղեցի—բանաստեղծական Օր-
կուսը չէ դա—այլ երկնքի մի պարզ և փայլուն ժառան-
գութիւնն է, որ պիտի լինի բարիների բաժինը։

«Պատմիր լինճ քո վարդապետութիւնները, և բա-
ցատրիր լինճ քո յոյսերը», ասաց Գլոկուս անձկութեամբ։

Օլինթոս դժկամակ չէր կատարելու այդ խնդիրքը,
և այնուհետ—ինչպէս յաճախ պատահում էր քրիստոնէու-
թեան նախնական դարերում—այդ բանտի մթութեան
մէջ, և մահուան սերձեցման րոպէին Աւետարանի ար-
չալոյսը թափում էր իր փափուկ և սրբազնացուցիչ ճա-
ռագայթները։

Գլուխ ԺԸ.

Մի փոխոխութիւն ի նպաստ Գլոկուսի։

Ժամերը կարծես յամրաքայլ տանջանք լինէին
Նիղիալի համար այն րոպէից ի վեր, որ նա վերստին
դրուել էր իւր բանտի մէջ։

Սոսիան, կարծես վախենալով, որ մի դուցէ կոյր
աղջիկը նորից խաբէ նրան, չը գնաց նրա սենեակը
մինչև հետևեալ առաւօտը բաւական ուշ, և այն ժամա-
նակ էլ նա միայն սենեակի դռնից ներս ձգեց սովորա-
կան կերակուրի և գինու զամբիւղը, և չոտով դուռը
փակեց։ Այդ օրը անցաւ, և Նիղիան ինքն իրան զգում
էր վանդակուած—փակուած—անողորմ կերպով բան-
տարկուած, երբ այդ օրը Գլոկուսի զատուելու օրն էր,
և երբ իր ազատութիւնը կարող էր փրկել նրան։ Ա-
նուշ ամենայնիւ, խնամալով որ Գլոկուսի կեանքի միակ
միջոցը իրենից կախում ունէր՝ որքան էլ անկարելի
թուար իր փախուստը, այս դեռատի աղջիկը—այս թոյլ
սիրահար, և վերին աստիճանի զգայուն մանկամարդը,
վճռեց տեղի չը տալ մի յուսահատութեան առջև, որը
նրան անկարող պիտի դարձնէր օգուտ քաղել որ և է
հանգամանական պատեհութիւնից։ Նա իր միտքը բռնի ամ-
փոփ էր պահում, երբ որ անտանելի մտածութեանց ուժ-

դին պառկած տակ, դա երերում և դողդողում էր. ո՛չ, նա կերակուր կերաւ և գինի խմեց, որպէս զի պահպանէ իր ոյժը—որպէս զի պատրաստ գտնուի։

Հնար հնարի եանից անցաւ նրա գլխով, և տեսնելով որ գրանք անօգուտ էին գլուխ բերելու իր միտքը՝ նա բոլորն էլ դուրս քշեց իր գլխից։ Սոսիան էր նրա միակ լոյսը, միակ զորձիքը, որի հետ կարող էր մորճեր անել։ Այդ գերին իր աւելորդապաշտական հարցով ուզեցել էր խմանալ թէ արդեօք վերջ ի վերջոյ կարող է գնել իր ազատութիւնը։ Արհնեալ աստուածներ, արդեօք չէր կարելի կաշառել նրան իր ազատութեան գնով. մինչ Նիպիան արդէն այնքան հարուստ չէր, որ կարողանար վճարել այդ գումարը։ Նրա գողարիկ թևերը ծածկուել էին Իօնեի ընծայուած ապարանջաններով. և իր վզից դեռ կախուած էր նոյն չղթան, որը, ինչպէս կարելի է յիշել, պատճառել էր նրա նախանձոտ լեզուակռիւը Վլոկուսի հետ, և որը նա յետոյ լուռ խոստացել էր յաւիտեան կրել։ Նա այրուելով սպասում էր մինչև Սոսիան նորից յայտնուէր. բայց երբ ժամ ժամի հանից անցաւ, և նա չերևաց, Նիպիան ամէն անհամբեր դարձաւ։ Նրա աչքն մի ջիղը բաբախում էր տենդով. նա այլ ևս չէր կարողանում հանդուրժել այդ մենութեան—նա հառաչում էր, նա բարձրաձայն ճչում էր—նա գարկուում էր գրան։ Նրա աղաղակները արձագանք էին տալիս սրահի մէջ, և Սոսիան, բարկացած՝ վազեց տեսնելու—թէ ինչ էր պատահել, և լռեցնելու իր բանտարկեալին՝ եթէ կարելի է։

«Հո՛, հո՛, այս ինչ է», ասաց նա, խոժոռ դէմքով։ «Երեսասպրդ գերի, եթէ այսպէս աղմուկ հանես, մենք կը ստիպուինք խցել քո բերանը։ Եթէ իմ աչերը լսէ քո

ձայնը, իմ ուսերիս պատասխանատուութիւնը չատ ծանր կը լինի»։

«Բարի Սոսիա, մի չանդիմանիր ինձ—ես չեմ կարողանում այդքան երկար դիմանալ այս առանձնութեանը», պատասխանեց Նիպիան. «մինչնակութիւնը սարսափեցնում է ինձ։ Նաեր ինձ մօտ խնդրում եմ։ Ոչ. մի վախենար. ես չեմ փախչի. քո նստարանդ դիր դրան մօտ։ Աչքդ իմ վրայից մի հեռացնիր—ես այստեղից չեմ շարժուի»։

Սոսիան, որ ինքը մեծ չատախօս էր, զգածուեցաւ այս խօսքերից։ Նա խղճաց այն աղջկան, որ ոչ ոք չունէր նրա հետ խօսելու—իր դէպքն էլ հէնց այդպէս էր. նա խղճաց—և վճռեց սիրել իր ընկերքազուրկ կացութիւնը։ Նա լսեց Նիպիային, մի նստարան դրեց դրան մօտ իր մէջքը դարկեց դրանը և ասաց,—

Տարակոյս չը կայ, որ ես չեմ ուզում կռիւ լինել. և մի բարեկամական խօսակցութեան համար ես ոչ մի ընդդիմութիւն չունիմ։ Բայց զգոյշ կաց, խաղեր չը խաղաս գլխս—կախարդութիւններ չանես այլ ևս»։

«Ո՛չ, ո՛չ. ասա՛ ինձ, սիրելի Սոսիա, ժամը քանի՞ն է»։

«Արդէն լուսկաս է—այծերը գնում են տուն»։

«Ով աստուածներ. և ինչպէս անցաւ գատաստանը։

«Երկուսն էլ գատապարտուեցան»։

Նիպիան զսպեց իր ճիչը։ «Լաւ-լաւ, ես էլ մտածում էի որ այդպէս կը լինի։ Ե՛րբ պիտի պատժուին»։

«Վաղը, ամիսիթատրոնում։ Եթէ քո պատճառով չը լինէր, փոքրիկ Թշուառական, ինձ էլ թոյլ կը տրուէր միւսների հետ երթալ տեսնել խաղերը»։

Նիպիան մի քանի րոպէ իր մէջքը լինեց նստա-

քանին։ Բնութիւնը դրանից աւելի չէր կարող տանել— նա ուշաթափուեցաւ։ Բայց Սոսիան չը նկատեց այդ բանը, որովհետև երեկոյեան աղջամուղջը պատել էր, և նրա միտքը լի էր իր անձնական դրկանքներով։ Նա չարունակից տրված այսպիսի մի հաճելի տեսարանի կոթուածը, և մեղադրել Արբակի անարդարութիւնը, որ, բոլորի միջից հէնց նրան էր ընտրել *բանտապահ լինելու. և նաև քան նա վերջացնէր իր պատմութեան կէսը, Նիպիան, մի խոր հառաչ արձակելով, նորից ուշքի եկաւ։

«Դու հառաչում ես, կոյր աղջիկ, իմ կորուսեալ հանար։ Լաւ, դա էլ մի մխիթարութիւն է։ Քանի որ դու ինքդ հասկանում ես թէ դու որքան թանգ ես նըստում ինձ, ես կաշխատեմ չը տրտնջալ։ Ժուռաւ բան է երբ մարդու հետ վատ են վարւում և նրան չեն խղճում»։

«Սոսիա, որքան դրամ է հարկաւոր քեզ՝ քո ազատութիւնը գնելու համար»։

«Որքան։ Մօտ երկու հազար սիտեռա»։

«Փառք աստուածներին։ Ո՛չ աւելի։ Տեսնում ես այս ապարանջանները և այս չղթան։ Նրանք երկու այդ արժէքն ունին։ Ես այս բոլորը կը տամ քեզ եթէ...»

«Մի վտարիր ինձ. ես չեմ կարող քեզ ազատել։ Արբակ մի խիստ և անաւոր տէր է։ Ո՞վ գիտէ որ ես չեմ գնայ Սարնատի ձեռքերին կերակուր լինելու։ Աւելի, աշխարհի բոլոր տեսարանները չէին կարող ինձ նորից կեանք տալ։ Աւելի լաւ է մի կենդանի չուն քան մի մեռած առիւծ»։

«Սոսիա, քո ազատութիւնը։ Լաւ մտածիր։ Եթէ դու ինձ թողնես միայն մէկ ժամ դուրս երթամ—ինձ կէս գիշերին բաց թող—վաղն առաւօտ արշալոյսից ա-

ռաջ կը վերադառնամ. ոչ, եթէ ուզում ես, դու էլ ինձ հետ եկ»։

«Ո՛չ», պատասխանեց Սոսիան, վճռական կերպով, «մի գերի մէկ անգամ անհնազանդութիւն գործեց Արբակին, և այլ ես ոչինչ չը լսուեցաւ նրա վրայ»։

«Բայց օրէնքը մի սիրոյ իրաւունք չէ տալիս իր տարեկի կեանքի վրայ»։

«Օրէնքը չատ պարտաւորեցուցիչ է, բայց աւելի բազաբաւար քան ազդու։ Ես գիտեմ, որ Արբակ միշտ կարողանում է օրէնքը իր կողմը քաշել։ Բացի դրանից, եթէ ես մէկ անգամ մեռնեմ, ինչ օրէնք կարող է նորից ինձ կեանք տալ։

Նիպիան ճամփեց իւր ձեռքերը։ «Աբեմն ոչ մի յոյս չը կայ», ասաց նա յուսահատով։

«Յոյս չը կայ փախչելու մտնէն Արբակը չասէ»։

«Լաւ ասեմն», ասաց Նիպիան, չուռաով, «դու դէթ չես մերժի մի նամակ տանել ինձանից. քո տէրը քեզ չէ կարող սպանել մի նամակի համար։

«Ո՞ւմ տանեմ նամակը»։

«Պրէտորին»։

«Դատաւորին։ Ո՛չ—ես ոչ։ Ցետոյ ինձ պիտի տանեն և դատարանում բոլոր պատեցածիս համար վկայութիւն պահանջեն. և՝ գերիների հարցաքննութիւնը պիտես չարչարանք է»։

«Ներողութիւն. ես չէի ուզում ասել պրէտորին— այլ քոյրը բերնիցս թռաւ. ես մի ուրիշ մարդու էի ուզում տալ—Սալլուստոսին»։

«Ո՛հ, և նրա հետ ինչ գործ ունիս»։

«Վլոկուս իմ տէրն էր. նա գնաց ինձ մի անգութ տիրոջից։ Նա միայն բարեսիրտ է գտնուել դէպի ինձ։

Նա այժմ պիտի մնռնի։ Ես երբէք չեմ կարող հանդիսատպրել եթէ փորձութեան և տարաբախտութեան այդ ժամուն չը կարողանամ նրան հասկացնել թէ մէկ սիրտ կայ, որ երախտապարտ է դէպի նրան։ Սալլուստը նրա բարեկամն է և նրան կը յանձնէ իմ պատգամը»։

«Ես վստահ եմ, որ նա այդպիսի բան չի անի։ Գլոկուս հիմիկուանից մինչև վաղն առաւօտ չափազանց շատ բան կունենայ իր գլուխը տանջելու, և ժամանակ չի ունենայ մտածելու մի կոյր աղջկայ մասին»։

«Մարդ», ասաց Նիպիան, վեր կենալով, «ուզում եմ ազատուիլ։ Ահա առաջարկը քո ձեռքումն է. վաղը այլ ևս չափազանց ուշ կը լինի։ Երբէք մի ազատութիւն այսքան աժան գնով գնուած։ Դու շատ դիւրութեամբ կարող ես դուրս գալ տնից, այնպէս, որ ոչ ոք չը նկատէ քո բացակայութիւնը. կէս ժամ չի տևի քո գնալ վերադառնալը։ Եւ այսպիսի մի չնչին բանի համար դու մերժում ես ազատութիւնը»։

Սոսիան շատ յուզուեցաւ։ Ճշմարիտ է, աղջկայ խնդիրքը վերին աստիճանի յիմար էր. բայց այդ նրան ինչ։ Եւ որքան յիմար այնքան լաւ։ Նա կարող էր կոդպել դուռը Նիպիայի վրայ և երթալ, և եթէ Արբակ լսէր նրա բացակայութեան մասին, յանցանքը շատ չնչին էր և լոկ մի յանդիմանութեան կարժանանար։ Սակայն եթէ Նիպիայի նամակը պարունակէր աւելի քան նրա ասածը —եթէ յայտնէր նրա բանտարկութիւնը — ինչպէս նա սրամտութեամբ ենթադրում էր թէ այդպէս պիտի լինի— կեաց ինչ։ Հարկաւոր չէր որ Արբակ իմանար թէ ինքն է տարել նամակը։ Ամենավատ դէպքում կաշառքը շատ մեծ էր—վտանգը չնչին—և փորձութիւնը անդիմադրելի։ Նա այլ ևս չը վարանուեցաւ—նա ընդունեց առաջարկը։

«Ծուռ լինճ այդ չնչին բաները, և ես կը տանեմ նամակը։ Բայց ապահիր—դու մի դերի ես—դու իրաւունք չունես այս զարդերն ունենալու—նրանք պատկանում են քո տիրոջը»։

«Դրանք Գլոկուսի ընծաներն են. նա է իմ տէրը։ Ինչ պատեհութիւն կունենայ նա լետ պահանջելու իր տուած բաները։ Եւ նրանից բացի այլ ևս ոմ կարող է իմանալ, որ դրանք իմ մօտ են։

«Բաւական է—ես կը բերեմ քեզ մի կտոր պապիրուս»։

«Ոչ. պապիրուս չեմ ուզում—մի կտոր տախակ մեղրամոմ և մի տիլուս»։

Նիպիան, ինչպէս ընթերցողը նկատած կը լինի, աղնուական ծնողների զաւակ էր։ Նրանք ամեն բան արել էին թեթևացնելու համար, նրա տարաբախտութեան վիշտը, և նրա սուր միտքը օժանդակել էր նրանց ճիդերին։ Զը նայելով նրա կուրութեանը՝ նա երեխայութեան ժամանակ սովորել էր, թէև անկատար կերպով, մեղրամոմի վրայ գրել սուր տիլուսով,—գրութեան մի ձև, որի մէջ նրա չօչափելիքի սուր զգայարանքը օգնում էր նրան։ Երբ մեղրամոմը բերուեցաւ, նա դժուարութեամբ նրա վրայ նկատեց մի քանի յունական բառեր. յունարէնը նրա մանկական լեզուն էր և ամեն մի բարձր դասակարգի իտալացի կարծում էր, որ պիտի գիտենայ այդ լեզուն։ Նա ուշադրութեամբ վաթսթեց դրա շուրջը պաշտպանող թելը և նրա կապը ծածկեց մեղրամոմով. և նախ քան այդ նամակը դնէր Սոսիայի ձեռքը, նրան ուղղեց այս բառերը.

«Սոսիա, ես կոյր եմ և քանսի մէջ։ Դու կարող ես կարդալ ինձ—դու կարող ես այնպէս ցոյց տալ, որպէս

թէ նամակը տարել ես Սալլուստին տալ—դու կարող ես չը կատարել քո յանձնառութիւնը. բայց այստեղ ես աստուածների առաւր ներկայութեամբ վրէժխնդրութիւն եմ կարգում քո գլխի վրայ, քո հոգին յանձնում դժոխքի զօրութիւններին, եթէ դու չարագործես քո վրայ դրած վստահութիւնը. և ես պահանջում եմ քեզանից, որ քո հաւատարմութեան աչ ձեռքը դնես իմ աչ ձեռքի վրայ և իմ եռանից կրկնես այս բառերը.— Այն երկրով, որի վրայ կանգնած ենք—այն տարերքով, որոնք կեանք են պարունակում և կարող են կեանքը մի անչէջ դարձնել—ամենավրէժխնդիր Օրկուսով—ամենատես ալիմպիական Արամազդով—ես երդւում եմ, որ ամենայն հաւատարմութեամբ կը կատարեմ իմ յանձնառութիւնը, և այս նամակը անսնդրութեամբ կը յանձնեմ Սալլուստի ձեռքը: Եւ եթէ ես բեկանեմ այս երդումը, թող երկնքի և դժոխքի նզովքները թափուին իմ գլխոս: Բաւական է,—ես վստահանում եմ քեզ—մոռ քո վարձատրութիւնը: Արդէն մութ է—անմիջապէս հեռացիր:»

«Դու մի տարօրինակ աղջիկ ես, և տարտափելի կերպով ինձ վախացրիր. բայց այդ ըոլորը շատ բնական է. և եթէ Սալլուստ գտնուի, ես այս նամակը կը տամ նրան՝ ինչպէս երդուել եմ: Հաւատքս վկայ ես ունիմ իմ փոքրիկ գողութիւնները. բայց երդմնազանցութիւն—երբէք: Ես այդ մէկը թողնում եմ ինձանից լաւերին»:

Այս ասելով Սոսիան քաշուեցաւ, ուշադրութեամբ ձգելով Նիփիայի դրան մեծ ձողը—ուշադրութեամբ կոզպելով այդ. կախելով բանալին իր գօտուց՝ նա քաշուեցաւ իր բոյնը, իրան գլխից մինչև ոտք վախահեց մե-

ծ վերարկուի մէջ, և դուրս սլրծեց եռևի գնից առանց աեսնուելու և առանց խանդարուելու:

Փողոցները դատարկ էին: Նա չուտով հասաւ Սալլուստի տունը: Դռնապանը ասաց նրան, որ թողնէ իր նամակը և երթայ. որովհետև Սալլուստ այնքան վշտացած էր Գլոկուսի դատապարտութեան լրոյ, որ ոչ մի կերպով չէր կարելի խանդարել նրան:

«Այնու ամենայնիւ ես երդուել եմ, որ այս նամակը յանձնեմ իր ձեռքը և այդպէս պէտք է անեմ»: Եւ Սոսիան, փորձառութեամբ շատ լաւ իմանալով, որ Կերբերոսին մի լակ հարկաւոր է, մի քանի սեռաերս դրեց դռնապանի բուռը»:

«Լաւ, լաւ», ասաց վերջինը փոխելով իր ձևը, «դու կարող ես մտնել եթէ ուզում ես. բայց եթէ ճշմարիտն ես ուզում իմանալ, Սալլուստ ուզում է խմիչքի մէջ խնդրել իր վիշտը: Այդ է նրա սովորութիւնը, երբ որևէ բան նրան ցաւ է պատճառում: Նա հրամայում է որ մի շատ լաւ ընթրիք պատրաստեն, և բերել է տալիս ամենալաւ գինին, և ձեռք չէ վերցնում սեղանից՝ մինչև գինուց գատ ամեն բան թաչում է նրա գլխից»:

«Մի սքանչելի սովորութիւն—սքանչելի: Ա՛հ, թէ ինչ է նշանակում հարուստ լինել: Եթէ ես լինէի Սալլուստի տեղ, ամեն օր մէկ կամ մի ուրիշ ցաւ կը ճարէի ինձ համար: Բայց խնդրեմ մի երկու բառով յանձնարարիր ինձ տարիէնսիսին (տարիւսի մի ծառայեն)—տնա, գալիս է»:

Սալլուստ չափազանց ախոյր լինելով հիւրեր չունէր իր մօտ. նա, նաև չափազանց ախոյր էր միայնակ խմելու համար. հետևաբար, իր սովորութեան համեմատ, նա իր սիրելի ազատագրուած գերուն միայն թոյլ տուեց

մտանակցելու ընթրիքին, և դրանից մի աւելի տարօրինակ ընթրիք, կարելի է, երբէ՛ք չէ եղել։ Որովհետև շատ շատ, բարեսիրտ եպիկուրը հառաչում էր, փղձկում էր, արտասուում էր, և յետոյ երկայնաձիգ եռանդով դառնում դէպի մի նոր կերակուր, կամ իր վերտակն լցուած քաժակը։

«Իմ բարի ընկեր», ասում էր նա իր սեղանակցին «դա մի ամենատարօրինակ դատաստան էր—հէյնօ,—այդ ուղը վատ չէ, հա, խեղճ սիրելի Գլոկուս.—և ինչ երանելի ունի այդ առիւծը. ահ, ահ, ահ»։

Եւ Սալլուստ բարձրաձայն հեկեկում էր—հեկեկանքին հետևում էր հեծկլտանքը։

«Մի քաժակ գինի խմեցէ՛ք», ասաց ազատագրուած գերին։

«Մի քիչ պաղ է. բայց Գլոկուսի համար ինչքան ցուրտ պիտի լինի։ Փակիր դռները վաղը—գերիներից ոչո՛ք չը պիտի դուրս երթայ—իմ մարդկանցից ոչ մէկը չը պէտք է պատուէն այդ անիծեալ արևտան—Ո՛չ, ո՛չ»։

«Ձաշակեցէ՛ք Ֆալերնիանից—ձեր ցաւը կնորեցնում է ձեզ։ Ատուածները վկայ. այո՛,—մի կաթ այդ պանրի կարկանդակից»։

Այս բարեպատեհ րոպէին էր, որ Սոսիան ներս լեցուեցաւ այս վշտակիր արքեցողի ներկայութիւնը։

«Հօ—ինչ ես դու»։

«Սոսկ մի պատգամաւոր ուղարկուած Սալլուստի մօտ։ Այս նամակը տալիս եմ ձեզ մի երիտասարդ կնոջ հոգւից։ Որքան ես գիտեմ պատասխան չունի։ Կարդ եմ երթալ»։

Այսպէս ասաց խոհեմ Սոսիան, իր երեսը ծածկած պահելով իր վերարկուի մէջ, և ձայնը կեղծելով, այնպէս, որ այնուհետև չը ճանաչուի։

«Ատուածները վկայ, կատա է։ Անզգայ թշուառական—չես տեսնում իմ վիշտը։ Դնա—և թող քեզ ընկերակցեն Պանդարի անէծքները։

Սոսիան մի վայրկեան չը կորցրեց և անմիջապէս հեռացաւ։

«Կը կարդա՛ք նամակը, Սալլուստ», ասաց ազատագրուած գերին։

«Նամա՛կ,—ինչ նամակ», ասաց եպիկուրը երեւրուելով, որովհետև սկսեց զոյգ տեսնել։ Անիծուին այս թշուառականները, ասում եմ ես։ Ես այն մարդն եմ, որ մոռանամ—(հեծկլտանք)—զուարճութեան վրայ, երբ... երբ... իմ բարեկամը չուտով պիտի ուտուի»։

«Մէկ հատ էլ քաղցրեղէն կերէ՛ք»։

«Ո՛չ, ո՛չ։ Իմ ցաւը խեղդում է ինձ»։

«Ցարէ՛ք նրան անկողին», ասաց ազատագրուած գերին. և քանի որ Սալլուստի գլուխը այժմ ընկել էր նրա կրծքի վրայ, գերիները բռնեցին տարան նրան իր վուբիկուլումը, ուր դեռ նա ողբեր էր մրմնջում Գլոկուսի համար, և անէծքներ զուարճութեան սիկիլիների անզգայ առաջարկներին։

Նոյն միջոցին Սոսիա բարկացած և չտապով չէր դառնում տուն։ «Կատա՛, այո՛», մրմնջալով մենախոսում էր նա։ «Կատա՛. մի համակերպե՛ մարդ է այդ Սալլուստը։ Եթէ դող կամ ուաղակ կոչէր ինձ ես կարող էի ներել նրան. բայց կատա՛, թուֆ. մի ինչ որ բան կայ այդ բառի մէջ, որ աչխարհիս ամենից ուժեղ սառմանքը չէ կարող մարսել։ Մի սրիկան մի սրիկայ է իր զուարճութեան համար, և մի գողը մի գող է իր չանի համար.

և մի ինչ որ պատուաւոր և փիլիսոփայական բան կայ սառնակ լինելու մէջ, երբ մարդ սառնակ է ի հաշիւ խոր. այդ նշանակում է դործել սկզբունքի երեսից—նշանակում է մեծ գործով զբաղուիլ։ Բայց կատաղը մի մարդ է, որ ինքն իրան պղծում է մի ուրիշի համար—մի կամաայ է, որ զբաղում է կրակի վրայ մի ուրիշի կերակուրի համար. մի անձեռնոց է, որով ամէն մի հիւր սրբում է իր ձեռքը և խոհանոցի ազան էլ ասում է ձեր թոյլտուութեամբ։ Կատա՛ր. ես կը գերադասէի, որ ինձ կոչէին հալբասպան. բայց մարդը հարբած էր, և չէր հասկանում ինչ էր ասում. և բացի դրանից ես ծպտուած էի։ Եթէ տեսնէր, որ Սոսիան է իր հետ խօսողը, նա անտարակոյս պիտի ասէր «հատատարիմ Սոսիա» և արժանաւոր մարդ։ Ինչևիցէ զարդերը չատ դիւրութեամբ չհանուեցան, և այդ մի մխիթարութիւն էր, և ով աստուածուհի Ֆեբոնիա, ես չատով մի ազատ մարդ կը լինեմ և այն ժամանակ ուզում եմ տեսնել ով կը համարձակուի ինձ կատաղ ասել—եթէ ոչ, անպատճառ, մէկը որ ինձ լաւ վճարէ դրա համար։

Մինչդեռ Սոսիան մենախօսում էր այս բարձր և ազնիւ ոճով, նա հասել էր մի տեղ, ուր նրա ճանապարհը ընկած էր մի նեղ փողոցով, որը առաջնորդում էր դէպի ամիթիատրոնը և նրա կից պալատները։ Յանկարծ երբ նա զարձաւ մի անկիւնից, նա ինքն իրան դտաւ մի ամբոխի մէջ։ Մարդիկ, կանայք, երեխաք, բոլորը աճապարում էին կամ ծլծաղում, խօսում, ձեռքերով չարժումներ անում. և նախ քան կարողանար հասկանալ, մեր մեծարժան Սոսիան, ինքն էլ քշուեցաւ տարուեցաւ այդ ազմկալից հոսանքով։

«Ի՞նչ կայ», հարցրեց նա իր ամենամօտ դրացուց»

որ մի երիտասարդ արհեստաւոր էր։ «Ի՞նչ կայ։ Ո՞չ են դիմում այս բոլոր աղնիւ մարդիկը։ Միթէ որևէ հարուստ պատրոն ողբմութիւն կամ մրս է բաշխում այս գիշեր»։

«Ո՛չ, ոչ մարդ—դրանից աւելի լաւ», պատասխանեց արհեստաւորը։ «Ազնիւ Պանսան—ժողովրդի բարեկամը—հատատարկութիւնը իրաւունք է չնորհել տեսնել զաղանները անտառանոցում։ Հերկուլէս վիսէ, որ վաղը մի երկու տոզի նոյնչափ ապահովութեամբ չը պիտի տեսնեն նրանց»։

«Մի գեղեցիկ տեսարան է», ասաց գերին, քչուելով ամբոխի հոսանքով, «և քանի որ վաղը չեմ կարող ներկայ գտնուիլ խաղերին, վատ չի լինիլ, որ այս գիշեր մի նայուածք ձգեմ գազանների վրայ։

«Լաւ կանես», պատասխանեց նրա նոր ծանօթը, «մի առիւծ և մի վագր ամեն օր չեն տեսնուում Պոմպէյի մէջ»։

Ամբոխը այժմ մտել էր մի լայն և անտարմ տարածութեան մէջ, և քանի որ այդ տարածութիւնը չատ աղօտ կերպով և հեռուից միայն լուսաւորուած էր, ճընշումը վտանգաւոր դարձաւ այն անզգամների և ուսերի համար, որոնք բաւական ուժեղ չէին խուժանի հրումին դիմանալու։ Այնու ամենայնիւ, կանայք մանաւանդ—որոնցից չատերը երեխաներ ունէին իրանց թևերի, կամ մինչև անգամ իրանց կրծքերի վրայ—ամենից աւելի չանգստն էին իրանց ճանապարհը ուժով բանալու մէջ. և նրանց սուր բացականչութիւնները, արտունչները կամ հայհոյանքները լսում էին աւելի բարձր, քան առնացի և դուարթ ձայները։ Բայց նրանց մէջ կար մի երիտասարդ և աղջկայ նման ձայն, որ կարծես չափազանց

Երջանիկ էր իր ոգևորութեամբ, ուշադրութիւն դարձնելու ամբոխի անախորժ սեղմումին։

«Ահա», դոչեց մանկամարդը, իր ընկերներից մի քանիսին. «ես միշտ ասացի, որ մենք մի մարդ կունենանք առիւծի համար. և հիմա մէկ ուրիշն էլ վագրի համար ունինք։ Երանի թէ վաղը արդէն հասած լինէր»։

Հո, ինչ տեսարան ուրախ և պայծառ,
Ամէն մի չարքում տէդերի անտառ,
Արի մարտիկներ ինչպէս Հերկուլէս
Կողք կողքի տուած գալիս են հանդէս.
Ահից լռում է մարդկանց չչնչիւն,
Երբ որ լսում են ղէնքերի չաչիւն։
Թնդորոտ քայլով գրոհում են անվախ,
Հօ ինչ տեսարան պայծառ և ուրախ։

«Մի ուրախ աղջիկ է». ասաց Սոսիան։

«Այո», պատասխանեց երիտասարդ արհեստաւորը, որ մի գանգրահեր դեղեցիկ պատանի էր։ «Այո», պատասխանեց նա նախանձոտութեամբ. «կանայք սիրում են զլադիատորներին։ Եթէ ես մի դերի լինէի, ես յոժարութեամբ կերթայի աշակերտելու լանիստայի մօտ»։

«Իրօք այդպէս կանէիր», ասաց Սոսիան, ծաղրածական ձևով։ «Մարդկանց գաղափարները տարբեր են»։

Ամբոխը այժմ հասաւ անասնանոցին. բայց քանի որ այն ծակը, որի մէջ վայրենի գաղանները դրուած էին, չափազանց փոքր և նեղ էր, ներս մտնել ուզողների հրումը այժմ տատն անգամ աւելի ուժգին դարձաւ քան առաջ։ Ամֆիթեատրոնի երկու պաշտօնեաները կանգնած էին մուտքի այս և այն կողմը, և մեծ խստութեամբ առնում էին չարիքի առաջը լոկ առաջիններին բաշխելով չափաւոր թիւով առմամկներ, և նրանցից զատ այլ ևս ոչ ոքի թոյլ չէին տալիս ներս մտնել, մինչև որ առաջինները լցրեցնում էին իրանց հետաքրքրութիւնը։ Սոսիան, որ բաւական հուժկու մարդ էր, և ոչ էլ զրկուած բարեկրթութեան կամ անճնապատասխանութեան մեծ վարանմունքներով, կարողացաւ առաջին մուտք գործողներից լինել։

Բաժանուելով իր արհեստաւոր բարեկամից՝ Սոսիան չուտով ինքն իրան գտաւ մի նեղ զետնափոր սենեակի մէջ, որի օդը և ջերմութիւնը շատ խեղդիչ էին, և որը լուսաւորուած էր մի քանի գարշահոտ և բոցավառ ջահերով։

Գաղաններըը, որոնք սովորաբար պահում էին տարբեր որջերում, այժմ, ժողովրդի դիւրութեան համար դրուած էին, միևնոյն վիվարիումի մէջ. բայց նրանց վանդակները նոյնպէս բաժանուած էին միմեանցից երկաթեայ ճաղերով։

Այնտեղ էին նրանք, անասպատ այդ դիշատիչ և ահարկու թափառողները, որոնք այժմ դարձել են այս պատմութեան գլխաւոր դերակատարները։ Առիւծին, որ, բնաւորութեամբ աւելի մեղմ էր կարծւում քան իր ընկեր գաղանը, աւելի զրգռել էին կատաղութեան անօթութեամբ. նա անհանգստութեամբ և կատաղութեամբ ճեմում էր իր նեղ չրջափակի մէջ. նրա աչքերը կապտել էին մոլեգնութիւնից և սուից. և երբ որ նա մերթ ընդ մերթ կանգ էր առնում և իր բոցավառ աչքերը ձգում իր չորս կողմը, հանդիսատեսները սարսափով լուռ էին քաշւում և սկսում էին աւելի արագ չունչ քաշել։ Բայց վագրը հանդարտ և իր ամբողջ եր-

կարութեամբ պահած էր իր վանդակի մէջ, և երբեմն պէշ մի չարժուամով, կամ մի երկար անհամբեր յօրանջուամով, յայտնում էր որ և է պիտակցութիւն իր բանտարկութեան մասին, կամ այն ամբոխի ներկայութեան, որը պատռել էր նրան իր այգեկութեամբ։

«Ես այդ առիւծից աւելի վայրագ գազան նոյն իսկ Հռոմում չեմ տեսել», ասաց մի վիճակարի և միանուա մարդ, որ կանգնած էր Սոսխայի աչ կողմում։

«Ես ինձ խոնարհուած եմ զգում, երբ նայում եմ նրա անդամներին», պատասխանեց մի ուրիշ բարակ և երիտասարդ մարդ, որ կանգնել էր Սոսխայի ձախ կողմում և իր թևերը ծալել էր իր կրծքի վրայ։

Սարուկը նախ նայեց մէկին և յետոյ միւսին։ «Virtus in medio — մէջտեղը բարի է», մրմնջաց նա. «ի աքանչելի դրացութիւն է քեզ համար, Սոսխա—առիւծ կողմիդ մի գլադիատոր»։

«Շատ լաւ ասացիր, Լիդոն», պատասխանեց աւելի մեծ գլադիատորը. «ես էլ նոյն բանն եմ զգում»։

«Ես մտածել», նկատեց Լիդոն խորասէս յուզուած մի ձայնով, «մտածել, որ այն ազնիւ յոյնը, նա, որին մէկ կամ երկու օր առաջ տեսանք, այնքան լի երիտասարդութեամբ, առողջութեամբ և ուրախութեամբ, պիտի կերակուր դառնայ այդ հրէշին»։

«Ինչու՞ չէ», մրմռաց Նիգերը վայրագաբար. «քանի՞ քանի ազնիւ գլադիատորների կայսրը սպանել է նոյն կուռին—և ինչու՞ մի հարուստ մարդասպան, որ դատապարտուած է օրէնքի երեսով նոյն բանը չը պիտի անէ»։

Լիդոն հառաչեց, ցնցեց իր ուսերը, և լուռ մնաց։ Նոյն մէջոցին սովորական հանդիսաւորները սկսան գնում յառած աչքերով և բաժանուած չրթունքներով.

գլադիատորները նոյնպէս հետաքրքրութեան առարկաներ էին ինչպէս գազանները — նոքա միևնոյն կեղի գազաններ էին. ամբոխը նայում էր մէկից միւսը — մարդից գազանը. — մրմնջալով իրանց մեկնաբանութիւնները և կանխակալ վաղաւան օրին։

«Լաւ», ասաց Լիդոն չնա գառնալով, «ես չնորհակալ եմ աստուածներից, որ ոչ այդ առիւծի հետ է և ոչ վագրի, որ ես պիտի մաքառեմ, նոյն իսկ դու, Նիգեր, նուաղ ահարկու հակառակորդ ես քան նրանք»։

«Բայց նոյնչափ վտանգաւոր», ասաց գլադիատորը, մի վայրագ ծիծաղով. և լուրջ կանգնածները սքանչացնալով նրա ահագին անդամների և կատաղի կերպարանքի վրայ, նոյնպէս ծիծաղեցին։

«Այդ պէտք է տեսնել», պատասխանեց Լիդոն, անհոգութեամբ, և ձեղքելով խուժանը դուրս եկաւ։

«Ես լաւ կանեմ եթէ օգուտ քաղեմ նրա ուսերից», մտածեց խոհեմ Սոսխան, չտալով հետևել նրան. «ամբոխը միշտ ճանապարհ է տալիս մի գլադիատորի, ուրեմն ես էլ անմիջապէս նրա ետևից կերթամ, որպէս զի նրա վայելած ուշադրութիւնից մի մասն էլ ինձ հասնի։

Սեդոնի որդին մեծ քայլերով անցաւ հոծ բազմութեան միջից, ուր չատեր ճանաչում էին նրա դէմքը և արհեստը։

«Դա երիտասարդ Լիդոնն է. քաջ տղայ է. նա վաղը կռուելու է», ասաց մէկը։

«Ա՛հ, ես մի գրաւ ունիմ կտրած նրա վրայ», ասաց միւսը, «ես ինչպէս ամուր քայլում է»։

«Բախտ եմ տալիս քեզ, Լիդոն», ասաց երրորդը։

«Լիդոն, իմ բարեմաղթութիւններս», կիսաձայն մրմնջաց մի չորրորդը, ժպտալով (դա միջին դասակար-

դի, մի սիրուն կին էր)—«եթէ չահես նորից լուր կը ստանաս ինձանից»։

«Վճռածը վկայ լինչ զեղեցիկ տղամարդ է», բացականչեց մի հինգերորդ, որ դեռ առաջ մի աղջիկ էր։

«Շնորհակալ եմ», պատասխանեց Սոսիան, լրացնելով այդ կոմպլիմենտը։

Որքան էլ ուժեղ լինէին Լիդոնի աւելի մաքուր չարժառիթները, և որքան էլ անտարակուսելի լինէր այն ճշմարտութիւնը, թէ նա երբէք չը պիտի մտնէր այսպիսի մի արիւնռուչ կռւման մէջ, եթէ իր հօր ազատութիւնը գնելու յոյսը չը լինէր, նորից նա կատարելապէս անզգայ չէր դէպի իր զրաւած նշանակութիւնը։ Նա մռռանում էր, որ այսօրուայ գովասանող ձայները կարող էին վաղը ազաղակներ բառնալ նրա օրհասական ատենապետների վրայ։ Բնութեամբ կատաղի և անհոգ, որպէս նաև աղնիւ և վախկոտութ, նա արդէն ատզորուած էր այն արհեստի հպարտութեամբ, որին ինքը կարծում էր թէ արհամարհում է, և ենթարկուած էր այն ընկերակցութեան ազդեցութեանը, որից ինքը զզւում էր։ Նա տեսնում էր, որ այժմ ինքը մի նշանաւոր մարդ է դարձել. նրա քայլը աւելի թեթեւանում էր և նրա կազմուածքը աւելի ուռչում։

«Նիզէր», ասաց նա, յանկարծ լինա նայելով, երբ արդէն դուրս էր եկել ամբոխի միջից. «մենք չաճախ կռուել ենք. մենք վաղը միմեանց հետ չը պիտի մըրցենք, բայց մեզանից մէկը, դէթ, կարող է լինել, որ կընկնի—ահւր ինձ ձեռքդ»։

«Ամենայն յօժարութեամբ», ասաց Սոսիան պարզելով իր ձեռքը։

«Հա, այս որ լիմաքն է։ Ես կարծեցի Նիզէրն էր գալիս իմ եանից»։

«Ներում եմ ձեր այդ սխալը», պատասխանեց Սոսիան, զիջողաբար. «նշանակութիւն չունի. դիւրին էր սխալուիլ—ես և Նիզէրը գրեթէ նոյն կազմն ունինք»։

«Հա, հա, սքանչելի է. Նիզէրը քո գլուխը կը թռցընէր հիմայ, եթէ այդ ասածդ լսէր»։

«Դուք, արենացի պարոններդ, խօսելու մի շատ անախորժ ձև ունիք», ասաց Սոսիան. «սխալենք մեր խօսակցութեան նիւթը»։

«Վա՜հ, վա՜հ», ասաց Լիդոն անհամբերութեամբ. «ես ոչ մի կերպով պատմագրուած չեմ քեզ հետ խօսելու»։

«Իսկապէս որ», պատասխանեց գերին, «դուք անպատճառ շատ լուրջ մտքեր ունիք, որոնք կարող են ձեր ուղեղը զբաղեցնել. վաղը կարծեմ ձեր առաջին փորձն է արենայի վրայ։ Լաւ, ես վստահ եմ, որ դուք քաջութեամբ պիտի մեռնէք»։

«Խօսքդ զլխիդ կատարուի», ասաց Լիդոն նախապաշարումով, որովհետև նա ոչ մի կերպով չախորժեց Սոսիայի օրհնութիւնից։ «Մեռնել. ոչ—յոյս ունիմ որ իմ ժամը դեռ հասած չէ»։

«Նա որ զառ է խաղում մահուան հետ, պէտք է ակնկալէ չան թիւը», պատասխանեց Սոսիան՝ չարակամութեամբ։ «Բայց դու ուժեղ մարդ ես, և ես ցանկանում եմ քեզ ամէն երևակայելի բախտ. և այսպէս, val'e»։

Այդ ասելով գերին զարձաւ, և իր ճանապարհը շարունակեց դէպի տուն։

«Յոյս ունիմ, որ այդ թշուառականի բառերը մի գուշակութիւն չեն պարունակում», ասաց Լիդոն խորհելով։ «Հօրս ազատութեան համար ունեցած իմ եռանդի

մէջ, և իմ ջղերիս և մկանունքիս վրայ ունեցած իմ վատահութեան մէջ ես երբէք չեմ մտածել մահուան կարելիութեան վրայ։ Իմ խնդիրս հայր, ես նրա միակ զաւակն եմ —եթէ ես մեռնէի...»։

Երբ այս միտքը մտաւ նրա գլուխը, Վլադիմաորը սկսեց աւելի մեծ, արագ և անհանգիստ քայլերով գնալ իր ճանապարհը, երբ յանկարծ, դիմացի փողոցում նա տեսաւ իր մտածութեանց առարկան։ Յենուած իր փայտի վրայ, նրա հասակը կորացած հոգսով և տարիքով, նրա աչքերը ցած ձգուած, քայլերը դողդոջուն՝ ճերմակահեր Մելոնը կամաց կամաց մօտենում էր գլադիատորին։ Վերջն մի րոպէ կանգ առաւ. նա անմիջապէս զգաց թէ ինչ էր պատճառը, որով ծերութիւը այդ ուշ ժամին դուրս էր եկել տնից։

«Վատահ եմ, որ ինձ է որոնում», մտածեց նա. «նա բոլորովին տարտափառ է եղել Օլինթուսի դատապարտութիւնը լսելով—նա աւելի քան երբէք յարգում է այդ աւելի մարդուն և արհնալի ոճրագործին— նա գալիս է նորից ինձ համոզելու, որ չեմ կենամ կռուից։ Ես պէտք է խոյս տամ նրանից—ես չեմ կարողանում դիմանալ նրա աղաչանքներին—նրա արտասուքներին»։

Այս մտքերը, որոնց նկարագրութիւնը այսքան ժամանակ առաւ, կայծակի նման անցան երիտասարդի գլխից։ Նա յանկարծ յետ դարձաւ և սկսեց արագ փախչել հակառակ ուղղութեամբ։ Նա կանգ չառաւ մինչև, դրեթէ յոգնած և չնչասպառ՝ նա հասաւ մի փոքրիկ քարձրութեան գագաթը, որտեղից կարելի էր ցած նայել այդ մանրանկար քաղաքի ամենից չքեղ և սիրուն մասի վրայ. և մինչդեռ այնտեղ կանգնել և նայում էր

դէպ փողոցների մէջ, որոնք փայլում էին լուսնի ճառագայթներով, որը նոր բարձրացել էր և լուսաւորել ամիսիմաարանի չորրջը հաւաքուած բազմութեան մէջ մասը, և նրան տուել էր մի նկարագրել տեսարանը ազդեց նրա բնութեան վրայ չը նայելով, որ նա հոգիա էր և երևակայութիւնից զուրկ, նա նստեց մի պորտիկոյի աստիճանի վրայ, ուր ուրիշ ոչոք չը կար, և զգաց, որ այդ րոպէի անդորրութիւնը կազդուրում էր նրան։ Դիմացում, և ոչ հեռու, լոյսերը փայլում էին մի պալատից, ուր դրա տէրը խնջոյք էր տալիս։ Դռները բացուել էին զովութեան համար, և գլադիատորը տեսնում էր բազմաթիւ հիւրերին, որոնք չարուած էին տարիտմի *) սեղանների չորրջը. մինչդեռ նրանց միւս կողմը, գոցելով լուսաւորուած բազմաթիւ սենեակների հեռանկարը՝ հեռաւոր չաւրուանը չողչողում էր լուսնի ճառագայթների տակ։ Այնտեղ պատկերը հիւսուած էին արտի սիւների չորրջը—այնտեղ, փայլում էր հանդարտ մարմարիայ արձանը—այնտեղ զուարթ ծիծաղների կատարեալ մի որոտի միջից լսում էր երաժշտութիւնը և երգը։

ԵՊԻԿՈՒՐԵԱՆ ԵՐԳ.

Թող Տարտարոսիդ այդ պատմութիւնը,
Որ քուրմն է դարբնել մեզ վախացնելու։
Մեր համար ծաղր են քո երեք կոյսեր,
Քո Պարկաները, քո Սախքսը չինծու։

---

*) Ինչպէս մի ուրիշ տեղ ասել եմ, սովորականից աւելի մեծ թաւ հիւրեր ընդունում էին տարիումի մէջ։

Եթէ հաւատանք քո առասպելին,
Շատ դառն է կեանքը խեղճ Եւպիտէրի.
Գոցել ականջը իր կնոջ ձայնին
Եւ իր ուշքը տալ մարդկանց գործերի։

Օրհնեա՛լ Եպիկուր, որ մեզ դաս տուիր
Հաւատա չընծայել այս պատմութեանը
Մեզ ուզում էին քաշ տալ Տարտարոս,
Քո ձեռքը կարեց անել պարանը։

Եթէ կայ ուրեմն Փիսա կամ Յունոն,
Նրանք վոլթ չունին մեզ համար, ան՛ մարդ։
Եթէ ունին էլ, դու և ես պիտանք,
Որ այս կեանքն առած ենք յարմար, ան՛ մարդ։

Մեթէ աստուածներն հաճոյք են զգում
Լրտես դառնալով մարդկութեան գլխին,
Հաշուելով բոլոր մեր հանցանքները,
Կամ ընթրիքի մէջ, մեր խմած գինին։

Կեցցէն այն չքմեղանք, որ մեզ սիրում են,
Այս քէֆը, գինին և նազագարան,
Հոգ չունինք թէ կան վերև աստուածներ,
Գէթ այս աշխարհում պիտանք, որ չը կան։

Մինչդեռ Լիդոնի բարեպաշտութիւնը, (որը որքան էլ կարողանար համակերպուիլ հանգամանքների հետ, նրից քիչ զգեցուած չէր այս երգից, որ մասնաւորում էր օրուայ մօդայի վիւլիսոփայութիւնը) սկսեց կամաց վերակազդուրուիլ իր սաստած ցնցումից. մի խումբ միջին դասակարգի մարդիկ, հասարակ զգեստներ հագած

անցան նրա մօտից։ Նրանք ջերմ ջերմ խօսակցում էին, և կարծես չը նկատեցին զգդիատորին նրա առջևից անցած ժամանակ։

«Ո՜հ, սոսկանք սոսկանքների», ասաց մէկը։ Օլինթոս խլուեցաւ մեզանից, մեր աչ թևը կտրուեցաւ։ Բրիտոս երբ կիջնէ պաշտպանելու իրենները»։

«Արդեօք մարդկային անխրատութիւնը կարո՞ղ է անցնել այս սահմանից», ասաց միւսը, «երբ մի անմեղ մարդ դատապարտւում է նոյն արհնալին, ինչ որ մի մարդասպան. բայց Թող չը յուսահատուինք. Սինալի որսորդ դեռ կարող է լսել և Տէրը կարող է պաշտպանել իր սուրբին։ Անդրայն ասաց, ի սրտի խրոխտ թէ ոչ դոյ Աստուած»։

Այդ բոպէին նորից թնդաց լուսաւորուած պալատի միջից դինարրաններն երգի յանկերգը.

Հոգ չունինք թէ կան վերև աստուածներ,
Գէթ այս աշխարհում պիտանք որ չը կան։

Նախ քան այդ բառերը լռեցին, նազովրեցիք, պրպտուած չարկարծական բարկութեամբ, պատասխանեցին դրա արձագանքին, և իրանց սիրելի բառերով զարմացան աղաղակեցին։—

ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐԻ ԱԶԴԱՐԱՐ ԵՐԴԸ.

Քո չարչ, քո վերև, և քեզ մերձակայ մչտնջապէս,
Աստուած, մեր Տէրը լսում է քո խօսք, և դիտում է քեզ։
Ահա գալիս է, բաղմած մրրկի թևերի վրայ.
Մո՛վ բարձրեալ երկինք գլուխ խոնարհիր, ով անդունդ, դողա։

Վայ գոռոզ մարդուն, որ բորբոքում է նրա բարկութիւնը,
Վայ երազողին, որ ուրանում է նրա զոյութիւնն։

Վայ չարերին, վայ։

Հըպարտ աստղերը պիտի ցած թափուին,
Գունատուի արև և մթնի լուսին,
Երկինք կնճռոտի ինչպէս մի մաշեան,
Պիտի մերկացնէ գժոխքի ովկեան
Իւր ժանտ անդունդը յուսահատութեան.
Մի անմահ հոգի է մէն մի էակ.
Չի միակ բանը բոլոր աշխարհի
Որ այնուհետև չը պիտի ապրի
Է ԺԱՄԱՆԱԿԻ վիթխարի պիակ։
Լսիր փողերի որոտ թնդալից.
Ահա երկիրը ճեղքուեցաւ մինչից.
Նա հրեշտակային իր գոհի վրայ
Գալիս է վանել խաւարն անաւար,
Որ մեռեալներին լինի դատաւոր,
Հաւատացեալին երկինքը բանայ։
Բերկրութիւն վշտին, և վայ չարերին,
Իսկ նրա որդիք պիտի ազատուին։
Վայ գոռոզ մարդուն, որ բորբոքում է նրա բարկութիւնը։
Վայ երազողին, որ ուրանում է նրա զոյութիւնն։

Վայ չարերին, վայ։

Մի յանկարծական լռութիւն տիրեց խնջոյքի դահլիճի մէջ այս չարագուշակ բառերից յետոյ. քրիստոնեաները յուսաջացան և շուտով թաքնուեցան դլադիատորի աչքերից։ Լիտոն, քրիստոնեաների այդ անէծքից ան-

րեկուած, բայց չմանալով թէ ինչու, այժմ վեր կացաւ և դարձաւ դէպի տունն։

Նրա առջև, ինչ անդորրութեամբ նիրհում էր աստղերի լոյսը այդ չքնաղ քաղաքի վրայ։ Ինչպիսի անչընչութեամբ ննջում էին նրա սիւնազարդ փողոցները իրանց ապահովութեան մէջ—ինչ վարիկութեամբ ծիւում էին սև կանանչ ալիքները հեռուում, ինչպիսի անամպութեամբ տարածուած էր բարձունքներում Կամպանիայի կապոյտ և երազուն երկինքը։ Այնուամենայնիւ այս գիշերը վերջին գիշերն էր ուրախ Պոմպէյի համար—ալեզարդ քաղդէացու գաղթականութեան—Հերկուլէս առասպելական քաղաքի—հեշտասէր հռոմէացու զուարճութեան համար։ Վար դարի հանից թաւալուել էր նրա դլխի վրայից, առանց վնասելու, առանց ուշադրութիւն դրաւելու և այժմ վերջին ճառագայթը դողդողում է նրա արևացոյցի ճակատագրական չրջանի վրայ։ Գլադիատորը հանից լսեց մի թեթև քայլի ձայն—մի խումբ կանայք վերադառնում էին տուն ամփիթատրոնից։ Երբ նա յետ նայեց, նրա աչքին հանդիպեց մի տարօրինակ և յանկարծական երևոյթ։ Վեղուվի դագաթից, որ հեռուից հաղիւ նշմարելի էր մթութեան մէջ, չորաց մի գունատ, մէտէօրական և կապտագոյն լոյս—դա մի բոպէ դողդողաց և անհետացաւ։ Եւ հէնց նոյն բոպէին որ նա տեսաւ այդ, մանկամարդ կանանցից մէկը սկսեց ցնծագին և սաւր ձայնով երգել։

Թնդորաս քայլով գրոհում են անվախ,
Հօ, ինչ տեսարան պայծառ և ուրախ։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գլուխ Ա.

Արքայի երազը։ Եգիպտացու այցելուն և նրա առացած ապրանքաթուխինը։

Ամիլխատարոնի կառավարչական նախընթաց անեղ գիշերը առավոտեան անցաւ, և ծագեց ՊՈՄՊէյի ՎԵՐՋԻՆ ՕՐՈՒԱՅ գոր՛ չարչարելը։ Օդը արտասովոր կերպով խաղաղ էր և չոգ—մի նօսր ու գանդաղ մշուշ հաւաքուած էր Կամպանիայի լայն դաշտերի ձորերի և խուռնիների վրայ։ Սակայն ձկնորսները զարմացմամբ նկատեցին, որ հակառակ օդի կատարեալ անդորրութեան, ծովը ալեկոծուած էր և նրա կոհակները կարծես չփոթուած փախչում լինէին եղերքից. կապոյտ և չքեղ Սարնուսից, որի աւազանի հին լայնութիւնը այժմ ճանապարհորդը զուր է որոնում տեսնել, կարծես սողում էր մի կերկերուած և գաժան սրտունչ, այն ինչ գետը հոսում էր ծիծաղկոտ դաշտերի և հարուստ քաղաքացիների փայլուն ամարանոցների կողմից։ Ծանրացած մշուշի վերևից պարզ երևում էին ժամանակից մաշուած աշտարակները, յաւերժաշէշտաւոր քաղաքի կարմիր կղմինտրով ծածկուած կտուրները, փայլուն փողոցները, չքեղ սիները բաղմաթիւ տաճարների, և յաղթական կամարը, և Ֆորումի արձանապատակ դռները։ Հեռուում, չրջակայ բլուրների գագաթները սաւառնում էին վեր քան չոգինները, և խառնուում էին առաւօտեան երկնքի փոփոխուող գոյների հետ։ Այն ամպը, որ այդքան ժամանակ հանդչած էր Վեզուվի գագաթի վրայ, յանկարծ աներևութացել էր և նրա ժայռոտ ու խորխոտ ճակատը անխոժոռ նայում էր նեղքևի դեղեցիկ տեսարանների վրայ։

Չը նայելով, որ առաւօտը դեռ չատ կանուխ էր, քաղաքի դռները արդէն բացուել էին։ Չխաւոր ճիւղերի նետից, կառք կառքի նետից արագ թափւում էին քաղաքի մէջ. և ճանապարհը բաղմաթիւ հետևակ խմբերի, հազած իրանց ոտնի զգեստները, բարձրաձայն հնչում էին ցնծալից և զրգռուած ուրախութեամբ. փողոցները խանուած էին քաղաքացիներով և օտարականներով, որոնք եկել էին Պոմպէյի բազմամարդ մերձակայքից. և ամենայն ազմուկով—արագութեամբ—և չփոթութեամբ ամենայն տեսարանի վայրը։

Չը նայելով ամիլխատարոնի ահագին տարածութեան որը, ըստ երևոյթին, համեմատաբար այնքան աւելի մեծ էր քաղաքից, և կարող էր տեղաւորել Պոմպէյի բոլոր բնակիչներին,—չը նայելով այս անհամեմատութեանը, երկինում եմ, զարձեալ բացառիկ դէպքերում այնքան օտարականներ էին թափւում Կամպանիայի ամեն կողմերից, որ անհնար մարդիկ, որոնք մանաւանդ և որոշ դատարաններ չունէին, ժամեր առաջ գալիս և բռնում էին առջևի տեղերը։ Երկու նշանաւոր ոճրագործների դատապարտութիւնը և դրա յարուցած սուր հետաքրքրութիւնը այնքան բազմապատկել էր այսօրուայ ամբոխի թիւը, որ դրանից առաջ երբէք այդպիսի բան տեսնուած չէր։

Մինչդեռ հասարակ ժողովուրդը, իր Կամպանիական արիւնի բոլոր բուռն աչխոյժով, այսպէս արտայայտում, հրեում և հասում էր դէպի առաջ—և սակայն իր բոլոր անձկութեան մէջ պահպանելով մի զարմանալի կարգ և անկուասեր արամադրութիւն, ինչպէս նաև այսօր կարելի է տեսնել Իտալիայում այդպիսի հանդիսութիւնների ժամանակ—մի տարօրինակ այգևլու դիմում էր դէպի Աբբակի մենաւոր ապարանքը։ Անցորդները, տեսնելով նրա օտարոտի և նախադարեան դղեակները—հրա վայրենի կեցուածքը և չարժումները—միմեանց նչան էին անում և ժպտում. բայց երբ նրանց աչքը ընկնում էր նրա դէմքին, նրանց խնդութիւնը անմիջապէս խամրում էր, որովհետև այդ երեսը նմանում էր մի մեռեալի երեսին. օտարոտու մեռելատիպ դիմագծերը և տարագից ընկած հագուստները, մարդկանց այնպէս էին կարծել տալիս, որ այդ մի կին է, որ երկար ժամանակից ի վեր պէտք է թաղուած լինի և այժմ նորից դուրս եկել իր գերեզմանից, և մտել կենդանիների մէջ։ Լռութեամբ և ահով ամեն մի խումբ ճանապարհ էր բանում նրա համար, որ անցնի, և նա չուռում հասաւ եգիպտացու պալատի լայն դաւթին։

Սև դռնապանը, ինչպէս Պոմպէյի բոլոր միւս բնակիչները, զարթնած լինելով մի արտասովոր կանուխ ժամի՝ ցնցուեցաւ երբ դուռը բացաւ այդ այցելուի համար։

Եգիպտացու քունը, սովորականից դուրս խոր էր եղել ամբողջ գիշերը. բայց երբ արշալոյսը մտնցաւ օտարոտի և անհանգիստ երազներ սկսեցին խանգարել նրա նիստը, երազներ, որոնք աւելի մեծ ապաւորութիւն գործեցին նրա վրայ, որովհետև կրում էին նրա դաւանած մասնաւոր փիլիսոփայութեան գոյները։

Նա երազում էր, որ ինքը տարուեցաւ երկրի ենթակամուն քների մէջ, և որ միայնակ կանգնած էր մի հսկայական անձաւում. անձաւի առաստաղը կենդանի էր կապիա և նախադարեան ժայռերից կառուցուած սիւների վրայ, որոնք բարձրանալով կորչում էին մի տուների անհունութեան մէջ, տուներ, որի յատակները տարրից չէր թափանցել դեռևս ոչ մի ճառագայթ։ Եւ այս սիւների միջև դրուած էին անագին անիւներ, որոնք պատում էին անդադար՝ յորդահոս ջրերի մըրընչիւն արձակելով։ Ոտ անձաւի աջ և ձախ ճայրերում սիւների արանքները դատարկ էին, այդ դատարկութիւնների դիմաց բացուում էին երկար դալլերիաներ. այդ դալլերիաները բոլորովին մութ չէին, այլ ազատ կերպով լուսաւորուած էին թափառուն և չեզ լոյսերով, որոնք մէկ օրնների նման տարած էին անդարթ և սև հողի վրայ ինչպէս տարած է օձը. և մերթ այդ լոյսերը վայրենարար թռչում էին այս և այն կողմ. դղեակում էին ամեն մի մութեան մէջ կատաղի ատումներ գործելով. նրանք յանկարծ անհետանում էին և նորից յանկարծ պայծառ էին տատնատատիկ փայլուն թեամբ և զօրութեամբ։ Եւ մինչդեռ նա զարմացմամբ նայում էր ձախ կողմի դալլերիային, նայր, մշուշանման և օդային ձևեր կամաց կամաց մերձենում էին և երբ հասնում էին սրահին, կարծես նրանք բարձրանում էին, և անհետանում անատնման բարձունքների մէջ, ինչպէս անհետանում է ծուխը։

Նա, տարտափած իր աչքերը դարձրեց դէպի հակառակ կողմը—և ահա նա տեսաւ, որ վերի մթութենից դալիս էին համանման տուներներ, որոնք ամենայն արընթացութեամբ արբում տարում էին աչ կողմի դալ—

ջերիան. կարծես մի անհերևոյթ հոսանք քշում էր նրանց հակառակ իրանց կամքին. և այս ուրուականների դէմքերը աւելի որոշ էին քան նրանց, որոնք դուրս էին գալիս դիմացի անցքից. նրանցից ոմանք ուրախ էին և ոմանք տխուր, ոմանց կերպարանքի վրայ պարզ կարելի էր կարդալ ակնկալութիւն և յոյս, իսկ ուրիշների դէմքերի վրայ ահ և սարսափի աննկարագրելի վհատութիւն։ Նոյնպէս նրանք անցնում էին արագ և չարունակ, այնքան որ նայողի աչքերը շլանում էին և մեզով ծածկւում այդ յարափոփոխ տեսարանի արագընթաց պատկերից։

Աբրակ զարձաւ և սրահի մի անկիւնում նա տեսաւ վիմխարի կապիկ մի հակառուհու, որը նստած էր գետնի մի կոյտի վրայ, և իր ձեռքերով պրպտած էր մի տաւերանման թեզանի տակերի հետ. և նա տեսաւ, որ թեզանի թեւերը կապած էին անթիւ անիւներին, կարծես դրանցից կախուած լինէր նրանց մեքենաների չարժումը։ Նա կարծեց, որ իր ոտքերը մի ինչ որ գաղտնի զօրութեամբ քշում էին դէպի այդ կինը, և նա տատրտաց առաջ մինչև կանգնեց նրա առջև երես առ երես։ Հսկայուհու կերպարանքը հանդիսաւոր էր և լուռ և դեղեցկապէս անդորր։ Նա նմանում էր Աբրակի հայրենական սֆինքսների վիմխարի արձանների երեսներից մէկին։ Ոչ մի կիրք —ոչ մի մարդկային զգացմունք չէր խանգարում նրա խորախորհուրդ և անկնճիռ ճակատը. այնտեղ ոչ տխրութիւն կար, ոչ ցնծութիւն, ոչ լիշողութիւն, ոչ յոյս. սա ազատ էր բոլոր այն բաներից, որոնց հետ մարդկային սիրտը կարող է համակրել։ Մխաէրների միտքերը հանդչում էր նրա դեղեցկութեան վրայ —դա ահ էր ազդում, բայց չէր սարսափեցնում. դա մարմնացումն էր վեհութեան։ Եւ Աբրակ զգաց, որ իր

ճակատը դուրս եկաւ իր չրթունքներից, առանց իր սեպհական կամքի կողմից մղման, և ճակատը հարցրեց.—

«Ո՞վ ես դու և ինչ է քո գործը»։

«Ես այն եմ, որին դու հաւատացել ես», պատասխանեց ամեհի ուրուականը, առանց դադարացնելու իր գործը։ «Իմ անունս է ԲՆՈՒԹԻՒՆ։ Սրանք աշխարհի անիւներն են և իմ ձեռքը պատճառում է դրանց ի կենդանութիւն ամեն րոպէ»։

«Եւ ինչ են», ասաց Աբրակի ճակատը, «այս գալէրիաները, որոնք սարօրինակ և յարմար ձևով լուսաւորուած, ամեն կողմից դնում են մինչև մթութեան անդունդի մէջ»։

«Այն», պատասխանեց Հսկայ-Մայրը», որ դու տեսնում ես ճախ կողմում Զը ծնուածների գալէրիան է։ Այն սաւերները, որ ցոլանում են դէպի առաջ և դէպի վեր այս աշխարհի մէջ, այն հոգիներն են, որոնք անցնում են գոյութեան յաւերժականութիւնից դէպի իրանց ճակատագրական պանդխտութիւնը այս երկրագնդի վրայ։ Այն որ դու տեսնում ես քո աջ կողմում, ուր սաւերները իջնելով վերից՝ սլանում են նոյնչափ անձանօթ և ազօտ՝ «Մեռելների գալէրիան է»։

«Եւ ինչու համար են», ասաց Աբրակի ճակատը, «այն չրջմոլիկ լոյսերը, որոնք այդպիսի վայրենութեամբ խանգարում են մթութիւնը, բայց լոկ խանդարում են, չեն լուսաւորում»։

«Ո՛վ խաւարամիտ վհատող մարդկային գիտութիւններ, ով երազող աստղերի, դու որ ուզում ես իմարկել իրերի սիրտը և ազիւրը, այդ լոյսերը լոկ ցոլացումներն են այնպիսի գիտութեան, որ չնորհուած է բնութեան իր ճանապարհը տեսնելու համար—որ տրուած

Ի նրան այնքան սեղեկութիւն ունենալու անցանելից և ապագայից, որով կարողանայ նախապատրաստել իր նպատակները։ Դասիր, ուրեմն, ոմ անմիտ, թէ ինչ լոյսեր կան պահուած քեզ համար։

Արբակ զարհուրեալ նորից հարցրեց, «Ի՞նչ է պատճառը, որ ես այսպէս եմ»։

Սա քո հոգուս նախատուներն է—կանխազգացումը քո ապագայ կոյծանման—քո վախճանիդ չարքը, որ իջնելով աչխարհիդ երկարանում է դեպի յաւիտենականութիւն»։

Նախ քան Արբակ կարողացաւ պատասխանել, նա զգաց, որ անձաւի մէջ փչեց մի բուռն ՀՈՂՄ, ինչպէս մրրիկը մի հսկայ առուծոյ։ Խարխրանալով այդ քամու հզօր չունչով, և օդի մէջ պատուելով ինչպէս մի տերև՝ աչնան վախճրիկներից, նա ինքն իրան գտաւ մեռելների ուրուականների մէջ, ուր նրանց պէս քչտում էր դեպի խաւարը։ Մինչդեռ նա ունայն և անկարող լուսատատութեամբ մաքառում էր այդ անէզ զօրութեան դէմ, նա կարծեց որ ՀՈՂՄԸ մի ձև սառյաւ—նա տեսաւ մի արծուի թևերի և ճիրանների արուականային չրջագծերը. նրա անդամները կարծես անորոչ կերպով ծածանուում էին օդի մէջ հեռուստ. պարզ և սրաչ տեսնըւում էին լոկ նրա աչքերը, որոնք քարացած, անողորմաբար չառած էին Արբակի աչքերի մէջ։

Ի՞նչ ես դու», ասաց նորից եղիպատցու ձայնը։

«Ես այն եմ, որին դու հաւատացել ես», և ուրուականը բարձրաձայն ծիծաղեց—«և իմ անունը ՀԱՐԿ է»։

«Դէպի ո՞ր ես տանում ինձ»։

«Դէպի անծանօթը»։

«Դէպի երջանկութիւն, թէ ապերջանկութիւն»։

«Ինչ որ ցանել ես այն պիտի հնձես»։

«Առակալի էակ, ո՛չ այդպէս։ Եթէ դու ես կեանքի իշխանը, ուրեմն քո նդ են իմ չանցանքները և ոչ իմը»։

«Ես լոկ Աստուծոյ չունչն եմ», պատասխանեց մեծազօր ՀՈՂՄԸ։

«Ուրեմն իմ խնամատութիւնը ունայն է»։ հառաչեց երազողը։

Հոգազօրը չէ մեղապրում ճակատագրին երբ տատակ ցանելով նա ցորեն չէ հնձում։ Դու ցանել ես ոչխարհան, մի մեղապրիր ճակատագրին եթէ դու առաքինութեան հունձք չես հնձում»։

Տեսարանը չանկարծ փոխուեցաւ։ Արբակ գտնուում էր մի տեղում, ուր լցուած էր մարդկային ոսկորներով. և ահա նրանց մէջ կար մի գանդ, և գանդը, պահպանելով հանդերձ իր անմիտ խոռոչները երազի անհամապատասխանութեան մէջ, սառյաւ Ալեկիզէսի կերպարանքը. և նրա չարաժպիտ երակների միջից գուրս սողաց մի փոքրիկ օրդ և մերձեցաւ Արբակի ոտքերին։ Նա փորձեց իր ոտքով չախչախել նրան, բայց դա աւելի երկարացաւ և աւելի մեծացաւ։ Դա ուռեց, դա հառաչաց մինչև մի անապին վիշապ դարձաւ։ Դա ոլորուեցաւ Արբակի չուրջը, փչրեց նրա ոսկորները, բարձրացրեց իր բոցավառ աչքերը և թռչնալից երեսը նրա երեսի դիմաց։ Ի զուր Արբակ գալարուում էր. նա չորացաւ—նա չնչասպառ եղաւ—այդ խորչակիչ չունչի ազդեցութեան տակ, նա զգաց, որ ինքը խորչակահար է լինում և մեռնում է։ Եւ այն ժամանակ մի ձայն գուրս եկաւ օձից, որը գեռ կրում էր Ալեկիզէսի երեսը, և այդ ձայնը հնչեց նրա անզգայ ականջներին—

«ՔՈ ՉՈՀԸ ՔՈ ԴԱՏԱՒՈՐՆ Է. ԱՅՆ ՈՐԴԸ, ՈՐԻՆ

ԴՈՒ ՈՒԶՈՒՄ ԷԻՐ ՋԱԽՋԱԽԵԼ ԴԱՒՆՈՒՄ Է ԱՅՆ ՕԶԸ, ՈՐ ԿԼԱՆՈՒՄ Է ՓԵՋ»։

Կատաղութեան, թշուառութեան և յուսահատութեան մի ճիչ արձակելով Աբրակ զարթնեց. նրա մաղերը կանգնած էին—նրա ճակատը ցօղի մէջ ողողած, նրա աչքերը ապակեացած և յառած—նրա հոգի կաղմը մի երեխայի կազմի պէս դողում էր այդ երազի անսահման ազդեցութեան տակ։ Նա զարթնեց—նա ամփոփեց իր ընչաղութիւնը—նա վառք առաւ իր չը գաւանած աստուածներին, որ այդ միայն մի երազ էր.—նա իր աչքերը գարձրեց այս և այն կողմ—նա տեսաւ արշալոյսը, որ ներս էր հասում նեղ բայց բարձր լուսամուտից—նա գանւում էր ցերեկուայ չէմքի վրայ—նա ցնծայ—նա ժպտաց—նրա աչքերը լիքան, և նրա դիմաց տեսան վիզուվի վհուկի մեռելային կերպարանքը, անկեանք աչքը, և կապոյտ շրթունքները։

«Հմ», գոչեց նա, գնելով իր ձեռքը իր աչքերի առջև, որպէս թէ վանելու համար այդ գժխեմ տեսիլը, «գեռ էլի երազում եմ։ Դեռ էլի մեռելների մօտ եմ»։

«Մեծապօր Հերմէս—ա՛յ։ Դու գանւում ես մէկի մօտ որ մեռելանման է, բայց ոչ մեռեալ։ Ձանազիր գա բարեկամին և սարսափին»։

Երկար ժամանակ լռութիւն տիրեց։ Կամաց կամաց եգիպտացու մարմնի ցնցումները մէկը միւսին հալածեցին, և աւելի և աւելի նուազելով չքացան. և նա նորից ինքը եղաւ։

«Ուրեմն մի երազ էր», ասաց նա, «լաւ—մոռ այլևս երազ չը տեսնեմ, եթէ ոչ ցերեկը չէ կարող փոխարինութիւն անել գիշերուայ տպաւորութիւններին։ Կին, ինչպէս եկար այստեղ և ինչու։

«Ես եկայ քեզ զգուշացնելու», պատասխանեց Սապալ գերեզմանոցին ձայնը։

Ինձ զգուշացնես։ Ուրեմն երազը սուտ չէր խոսում։ Ի՞նչ վտանգից»։

«Լսիր ինձ։ Ինչ որ մի չարիք կախուած է այս դատապարտուած քաղաքի գլխին։ Փախիր քանի, որ դեռ ժամանակ կայ։ Դու գիտես որ ես ընակուում եմ այն ընտան վերայ, որի ներսում, ինչպէս հին աւանդութիւնն ասում է, վառւում են Ֆլեգեթոնի գետի կրակները։ Իմ անձաւիս մէջ կայ մի ատպին վիհ, և այդ վհի մէջ ես վերջերս նկատել իմ, որ մի կարմիր և գանդաղ հոսանք կամաց կամաց աւազանում է. և լսել եմ, որ բաղմաթիւ և տզօր ձայներ սուլում և մռնչում են մթութեան մէջ։ Բայց երեկ գիշեր երբ ես նայեցի, այդ հոսանքը այլևս գանդաղ չէր, այլ սոսկալի և կատաղի կերպով լուսավառ. և մինչդեռ նայում էի, այն անասունը, որ ինձ հետ ապրում էր, և կուչ էր եկել իմ կողքին մի սուր ոռնոց արձակեց, և վայր ընկաւ սատակած, *) և թութք և փըրփուր կար հալաքուած նրա շրթունքների շուրջը։ Ես լսեա սոզացի իմ բոյնիս մէջ. բայց ամբողջ գիշերը ես պարզ լսում էի ինչպէս բլուրը չարժուում և դողում էր. և թէև օդը ծանր էր ու հանդարտ, գետնի սակից գալիս էր բանտարկուած հոգիների սուլոցը և անէների դղրդիւնը։ Երբ այսօր շատ կանուխ վեր կացայ, ես նորից նայեցի վհի մէջ, և ես տեսայ քարերի ատպին սև կտորներ, որոնք ծածանւում ծփում էին կապտագոյն հոսանքի երեսին և ինքը հոսանքը աւելի լայն, աւելի կատաղի

*) Մենք կարող ենք ենթադրել, որ այսաբութեամբ նոյն ազդեցութիւնն է ունեցել ինչ որ Գրօսա Դէլ Կանէինը։

և ամէն կարմիր էր քան նախընթաց գիշերը։ Ձեռայ ես դուրս եկայ և բարձրացայ բլուրի ծայրը, և նրա գագաթում երեսց մի անապին խորշ, որ ես երբեմնէ չէի տեսել առաջ. այդ խորշից ծխալին պատանեքով դուրս էր գալիս մի նօսր և նսեմ ծուխ. և այդ չոլին մահացու էր. իմ չունչս կտրուեցաւ, սիրտս խառնեց, և գրեթէ սեռայ։ Ես վերադարձայ իմ անձաւը։ Ես վերցրի իմ սակրն և պեղերը, և թողնելի իմ բազմամեայ բնակարանը. որովհետև լիշեցի Եարուբիական մեծ մարգարէութիւնը, որ ասում է թէ, «Երբ լեռը բացուի, քաղաքը պիտի կործանուի— երբ ծուխը պակէ այրիացնել Դաշտերի բլուրը, լայն և ոզրի ձայն պիտի լսուի ամիկանի զաւակների օջախներից։ Անմեռոր տէր, նախ քան հեռանամ այս պատերից և որոնեմ մի աւելի հեռաւոր բնակարան, ես եկայ քեզ մօտ։ Ինչպէս պիտեմ, որ դու կենդանի ես, նոյնպէս պիտեմ իմ սրտի մէջ թէ այն երկաշարժը, որ տապնեվից առաջ ցնցեց այս քաղաքը միևնոյն նրա ամուր հիմերը, լոկ մի առաջընթացն էր մի աւելի մահացու վախճանի։ Պոմպէլի պարիսպները կառուցած են Մեռեալների պաշտերի և անբուն Վեսուվի պետերի վրայ։ Ջրաշարժը և վախիր»։

«Վհուկ, ես չեարհակալ եմ քեզանից այդ հոգածութեանդ համար և ես ապերախտ չեմ գտնուի դէպի քեզ։ Այն սեղանի վրայ դրուած է մի ոսկեայ բաժակ. վեր առ, քեզ իմ տալիս այդ։ Ես չէի երազում, որ Խալդի քահանաներից զատ մէկը կարէ, որ կուզեր վրկել Աբրահիմն կործանումից։ Այդ նշանները, որ դու տեսել ես հանգած հրաբուխի երիկամունքի մէջ», չարունակեց Աբրահ, խոհուն եզանակով, «անտարակոյս դուշակում են որևէ վտանգ, որ սպառնում է այս քաղաքին. կարելի

է մի ուրիշ երկրաշարժ տեղի ունենար վերջինից աւելի սաստիկ։ Ինչ որ կուզէ թող լինի, այդ էլ մի նոր պատճառ է, որ ես դուրս չտապեմ այս քաղաքից։ Վազուանից ես կը պատրաստուեմ հեռանալ։ Թեւատր Եորուբիային, ուր ես գնում այժմ։

Այսօր կանգնեմ Հերկուլանում, և այնտեղից ծովեզերքը կը բռնեմ կերթամ մինչև մի նոր տուն գտնեմ։ Ես ոչ մի բարեկամ չունիմ. իմ երկու ընկերները, ազուէսը և օձը, սատակեցին։ Մեծդ Հերմէս, դու ինձ քանի տարի աւելորդ կեանք ես խոստացել»։

«Այո», ասաց եգիպտացին, «ես խոստացել եմ քեզ։ «Բայց կին», աւելացրեց նա, բարձրանալով իր թևի վրայ, և հեռաքրքրութեամբ նայելով կնոջ երեսին, «սատ ինձ, խնդրեմ, ինչ բանի համար ես փափագում ապրել։ Ի՞նչ քաղցրութիւն ես գտնում գոյութեան մէջ»։

«Կեանքը չէ որ քաղցր է, այլ մահն է, որ սոսկալի է, պատասխանեց պառաւը մի սար ապաւորիչ ձայնով, որը ուժգին կերպով ազդեց աստղագուշակի ունայնասէր սրտին։ Նա հետաքրքրութեան մի նշան արեց այդ պատասխանի ճշմարտութեան մասին. և այլևս չը կամենալով երկարել մի այդպիսի այցելուի անհրապոյր ընկերակցութիւնը, նա ասաց, «ժամանակն անցնում է. և ես պէտք է պատրաստուեմ այսօրուայ հանդիսաւոր խաղերի համար։ Գնա, մնաս բարեաւ. վայելիր քո ժամանակը որքան կարող ես կեանքի աճիւնների վրայ»։

Պառաւը, որ Աբրահի թանկագին ընծան դրել էր իր զգեստների մէջ, այժմ վերկացաւ հեռանալու։ Երբ նա հասաւ դրան մօտ, նա կանգ առաւ, յետ նայեց, և ասաց. «Այս կարող է վերջին անգամը լինել, որ մենք հանդիպում ենք աշխարհում. բայց ոչ է

թռչում բոցը երբ նա հեռանում է մոխրից։— Թափառելով այս և այն կողմ, վեր և ցած, ինչպէս ճանճի արատչումը, բոցը կարող է տեսնուիլ տորին լճի ճանիճների մէջ. և վհուկը և մոզը, աչակերտը և վարպետը, մեծը և անիծեալը, կարող են նորից հանդիպել։ Մնաս բարեաւ»։

«Դուրս կորիր, բուն» մրմնջաց Արբակ. մինչդեռ դուռը փակւում էր պառաւի ցնցոտիների ետևից. և չը կարողանալով հանդուրժել իր մոքերին, որոնք գեռ բոլորովին չէին թօթափել անցեալ երազի ազդեցութիւնը, եղիպտացին չուռով կոչեց իր տորուկներին։

Սովորութիւն էր ներկայանալ ամիխիթատրոնի խաղերին ոճնային զգեստներով և Արբակ այդ օրը զարդարուեցաւ աւելի քան սովորական խնամքով։ Նրա պարեզօտը ամենատպաւորական գոյնից էր. նրա բազմաթիւ ճարմանդները չինուած էին ամենաթանկագին ակունքից. նրա պարեզօտի վրայից իջնում էր արծակ ծալքերով մի արևելեան հագուստ կէս պատմուճան և կէս վերարկու, որ վառւում էր ութերեսեան ներկերի ամենաճոխ գոյներով. սանդալները, որ բարձրանում էին մինչև ծնկների կէսը, բանուած էին գոհարներով և ոսկեթելով։ Այն չարլատանութեամբ, որ պատկանում էր նրա քահանայական պաշտօնին, Արբակ, մեծ դէպքերում, երբէք չէր մոռանում այն արուեստները, որոնք խոտորեցնում և շլացնում են ամբոխին և այսօր որ Գլուկաի գոհունելով մէկ անգամ ընդմիշտ նա պիտի ազատուէր մի հակառակորդի երկիւղից և յայտնուելու հաւանականութիւնից, նա զգաց որպէս թէ զարդարւում լինէր մի յաղթանակի կամ մի հարսանիքի հանդիսի համար։

Բարձրաստիճան մարդկանց համար սովորական էր ամիխիթատրոն երթալիս, իրանց հետ տանել իրանց

տորուկներին և ազատագրուած գերիներին. և Արբակի «ընտանիքի» երկար չարքը արդէն կարգով կանգնած սպասում էր իր տիրոջ պատգարակին։

Լոկ Իօնէին սպասաւորող գերիները, և մեծարժան Սոսիան, որպէս Նիղիայի բանտապահը ի մեծ վիշտ իրանց, ստիպուած էին տանը մնալ։

«Կալլիաս», ասաց Արբակ իր ազատագրուած գերուն, որը կոճակում էր նրա գօտին, «ես ճանճրացել եմ Պոմպէյից. ես միտք ունիմ հեռանալ այստեղից երեք օր յետոյ, եթէ քաղին յաջողակ լինի։ Դու ճանաչում ես այն նաւը, որ կանգնած է նաւահանգստում, և որ պատկանում էր Ալէքսանդրիայի Նաբսէսին. ես գնել ժամ այդ նրանից։ Վաղը չէ միւս օրը մենք կը սկսենք տեղափոխել իմ ամբարները»։

«Ա՛յսքան չուռով. լաւ է։ Արբակի հրամանը կը կատարուի.—Իսկ նրա տանուհին, Իօնէն»։

«Ընկերանում է ինձ հետ։ Բաւական է.—առաւօտը գեղեցիկ է»։

«Աղօտ և ճնշիչ. հաւանականաբար կէսօր չեղած չափազանց չոգ կը լինի։

Խեղճ գլադիատորներ, և աւելի թշուառ ոճրագործներ. իմիր ցած տեսնելու թէ գերիները կարգով կանգնած են»։

Միայնակ մնալով Արբակ գնաց իր աշխատութեան տեղեակը և այնտեղից դրսի պորտիկօն։ Նա տեսաւ մարդկանց հոծ բազմութիւնը թափւում էր ամիխիթատրոնի մէջ և լսեց օդնականների գոչիւնը, պարանների վրնռոցը, մինչդեռ մարդիկ բարձրացնում էին առագին վրանները, որոնց տակ քաղաքացիք անախորժ ճառագայթներից ապահով իրանց գեղ հանգստութեամբ պի-

մի հանդիսաւոր լինէին իրանց համանման արարածներուն չարչարանքին։ Յանկարծ մի վայրկեան, տարօրինակ ձայն հնչեց, և նոյնպէս յանկարծ լռեց—դա առիւծի մռնչիւնն էր։ Մի լռութիւն տիրեց հեռաւոր ամբոխի վրայ. բայց այդ լռութեան հետևեց ցնծալից ծիծաղը—նրանք ուրախանում էին՝ լսելով արքայական դազանի անհամբեր անօթութեան մռունչը։

«Դազաններ», մրմնջաց արհամարհոտ Աբրակը, «արդեօք դուք նո՛ւազ մարդասպաններ էք քան ես։ Ես սպանում եմ անճնասպաշտպանութեան համար—դուք սպանութիւնը զուարճութիւն էք դարձել»։

Նա դարձրեց մի անհանգիստ և հետաքրքիր նայուածք դէպի վեղուվը։ Ծղնեցկապէս վայրում էին կանանչ այգեստանները նրա կրծքի չուրջը, և հակայ լերան ձևը ննջում էր անդորր, ինչպէս յաւիտենականութիւն չնչառպաւ երկնքի կրծքում։

«Մենք դեռ ժամանակ ունենք, եթէ երկրաշարժը անուսմ է,» մտածեց Աբրակ. և նա լետ դարձաւ այդ տեսիլից։ Նա անցաւ այն սեղանի մօտից, որի վրայ դրուած էին իր խորհրդաւոր փաթոթները և քաղդէական հաշիւները։

«Վերնապատի արուեստ», մտածեց նա, «այն օրուանից լետոյ, որ ես անցայ քո նախապաշարմունքից, ես չեմ փորձել քո վճիռները կարդալ։ Ի՞նչ փոյթ, ես պիտեմ, որ այսուհետև իմ ուղիս վայրկեան է և հարթ։ Աբրեօք դէպքերը մինչև հիմա չեն ապացուցած այդ։ Հեռու, կատաղի, հեռու, դէպի՛։ Ո՛վ իմ սիրտը, ապագայում լոկ երկու պատկեր թող անդրադարձուին քո մէջ—կայսերութիւն և Իսմէ։

Գլուխ Բ.

Ամփիթատրոնը։

Սոսկալի պատմութիւնը, երբ այդ տարօրակը վերադարձաւ տուն, միամտացրեց Նիկոլային. գոհ լինելով, որ իր նամակը հասել էր Սալլուստի ձեռքը՝ մկ անդամ ևս նա ինքնիրան չանձնեց յուսալ թեներին։ Սալլուստ անուսումնական ժամանակ չէր կորցնի երթալու պրէտորի մօտ—գալու եղիպտացու տունը—նրան ազատելու—կատարելու Կալհունսի բանաը։ Աւազ, գիչերն անցաւ—արշալոյսը ծագեց. նա ոչինչ չը լսեց բացի գերիների չռռացող քայլերի ձայնը սրահից և պերիստիլից, և նրանց խօսքերը, մինչդեռ զրաղուած էին պատրաստուելով հանդիսի համար։ Փիչ լետոյ, Աբրակի հրամայական ձայնը հնչեց նրա ականջներին—երաժշտութեան մի ձայն թնդաց օդի մէջ ցնծագին նուագով. եվ կարծ ժամուց սկսած էր դէպի ամփիթատրոնը իր աչքերը պատուելու ցոյնի մեհեանն ուղղուած։

Աբրակի թափորը կամաց կամաց և մեծ չքեղութեամբ առաջացաւ, մինչև հասնելով այնտեղ, ուր կառքով կամ պատպարակով եկողները պիտի իջնէին՝ Աբրակ ցած եկաւ իր մարդատարշ կառքից և առաջացաւ դէպի այն մուտքը, որտեղից ամենանշանաւոր հանդիսաւորները մտնում էին։ Նրա վերին երը խառնուեցան աւելի սաստիկ դասակարգի ամբոխի հետ. լետոյ ամփիթատրոնի պաշտօնեաները տեղերով նրանց տոմսակները՝ (ոչ շատ անհաման մեր այսօրուայ օպերային տոմսակներին) տեղատուելին նրանց պատպարտությունը (այն նստարանները, որոնք յատկացուած էին տոմսիկներին)։ Եւ այժմ

այնտեղից ուր Աբրակ նստած էր, նրա աչքերը դիտեցին այն անապին և անհամբեր ամբոխը, որ լցրած էր լայնածաւալ թատրոնը։

Վերի չարքում (բայց բաժանուած արտական սեռի հանդիսաւորներից) նստած էին կանայք. նրանց զուարթ դէմքերը նմանում էին մի բազմագոյն ծաղկանոցի. հարկ չը կայ աւելացնել, որ նրանց ամբողջ խմբի մէջ ամենից չատախօս մանր էին կազմում և բազմաթիւ էին այն նայուածքները, որոնք ուղղուած էին նրանց կողմը, մանաւանդ երիտասարդների և չամուսնացածների չարքերից։ Յածի նստարանների վրայ, արենայի չուրջը նստած էին բարձրաստիճ և հարուստ այցելուները—դատաւորները և նրանք, որոնք սենատորական կամ ասպետական (* աստիճան ունէին. այն անցքերը որոնք, ազգ և ձախ կողմի պատչգամներով, ճուտաձև արենային ամեն մի ծայրից, առաջնորդում էին դէպի այս նստարանները նոյնպէս ծառայում էին, որպէս մուտք պետիատորների համար։ Այս անցքերի մօտ ամուր ցանկապատեր կային չինուած, որոնք արգելում էին որև է անախորժ կատակներ գաղանների կողմից, և նրանց տանում էին լոկ իրանց գոնով չատանալ։ Այն պատի վրայ, որ քաչուած էր արենային չուրջը, և որից նստարանները աստիճանաբար բարձրանում էին, կային զբաղիատորական արձանագրութիւններ, և ֆրէսկօ նկարներ, բնորոչ այն հանդիսաններին, որոնց համար այդ տեղը նչանակուած էր։ Ամբողջ չինուածքի միջից պարզուում էին անտեսանելի խողովակներ, որոնց միջից երբ

(* Ասպետները նստում էին անմիջապէս սենատորների հետ։

արևը բարձրանում էր, զովացուցիչ և հոտաւէտ տարափներ չաղ էին տալիս հանդիսատեսների վրայ։ Ամփիթատրոնի պաչտօնեաները դեռ զբաղուած էին բարձրացնելով առագին հովանոցը կամ վէլարիան, որ ծածկում էր ըոլորին, կամպանիացիք պարծենում էին թէ իրանք են եղել այդ դիւրաւէտ վրանի հնարիչները. դա գործուած էր ամենատպիտակ ապուլիական բուրդից, լայն կարմիր չերտերով։ Կամ գործատուների անփորձութեան և կամ մեքենաների թերութեան պատճառով, այդ օր, վրանը այնպէս լաւ չը քաչուեցաւ, որպէս միչտ. և իրօք չը չքացաւ առագին մեծութեան պատճառով, դա մի դժուար և արուեստագիտական գործ էր—այնքան դժուար, որ քամի եղած ժամանակ չէր կարելի բարձրացնել այդ վիթխարի հովանոցը։ Բայց այս հանգէսը այնքան նչանաւոր էր, որ ժողովուրդը կարծես չէր կարողանում նկատել արհեստաւորների ճախրիկութիւնը և երբ մի մեծ բացուածք նկատուեցաւ հովանոցի հետևի կողմում, որովհետև վէլարիայի մէկ մասը կատարելապէս մերժում էր միւսների հետ միանալ, դժգոհութեան աղաղակունչը բարձրաձայն էր և ընդհանուր։

Էմիլ Պանսան, որի ծախքով այս ներկայացումը տրուում էր, մասնաւորապէս բարկացած էր այս թերութեան վրայ և դառն վրէժխնդրութիւն էր ուխտում իր սրտի մէջ ամփիթատրոնի ղեկաւար պաչտօնեայի դէմ, որը բարկացած, վհչալիս, քրտնած, զբաղուած էր ուր հրամաններ և անօգուտ ապառնալիքներ տեղալով։

Մրմունջը չանկարծ զադարեց—գործատուները կանգնան—ամբոխը լուեց—որովհետև չեփորների մի բարձրաձայն և ռազմային հնչումով զլադիատորների չարքը հանդիսաւոր թափորով մտաւ արենայի մէջ։ Նոքա կա-

մաց և դանդաղ քայլերով պառկեցին արևոտալի չուրջը, որպէս զի հանդիսատեսները լի ու լի ժամանակ ունենան աքանչանալու նրանց դէմքերի խոստ անդորրութեան, նրանց արևատ անդամների և զանազան գենքերի վրայ, և նաև կապել ամենալի դրուագներ, որոնք կարող էին թելադրուել բոլէի ողևորութիւնից։

«Օ՛հ «գոչեց այրի Ֆաուվիան Պանտալի կնոջը, մինչդեռ նրանք յենուած էին դէպի ցած իրանց բարձր նստարաններից, «տեսնում էք այդ վիթխարի պլպիատարին. ինչ տարօրինակ ձևով նա հագնուած է»։

«Այո» ասաց Լդիվի կինը, դիջնանդ նչանակութեամբ, որովհետև նա դիտէր ամէն մի մարտիկի անունը և յատկութիւնները, նա ռէտիարիուս է (կամ ցանցով կռուող). նա լոկ գենուած է ինչպէս տեսնում էք մի եռաժանի նիզակով և մի ցանցով. նա զրահաւորուած չէ, նա հագել է լոկ ցանցակերպ մի շապիկ և պարեգօտ։ Նա մի հսկայ մարդ է և պիտի կռուի Սպօրտուսի հետ։ տես, այն հաստաբազուկ պլպիատորը, որ կրում է մի կլորակ վահան և մի մերկ սուր, բայց նոյնպէս առանց զրահի. նա այժմ չէ գրկել իր սաղաւարտը, որպէս զի մարդիկ կարողանան տեսնել նրա երեսը—ինչպէս անվախ է նա—կռուելուց նա կը կապէ իր գլխակը։

«Բայց անսարակոյս մի ցանց և մի նիզակ շատ չնչին գենքեր են մի վահանի և մի սրի դէմ»։

«Այդ ցոյց է տալիս թէ դուք ինչքան անմեղ էք իմ սիրելի Ֆաուվիա. ռէտարիուսը (ցանցով կռուողը), սովորաբար յաղթում է»։

«Բայց ոմ է այն գեղեցիկ պլպիատորը, գրեթէ մերկ—դա անպատշաճ չէ՞ Ո՛վ Վէնուս. բայց նրա անդամները ինչ գեղեցիկ ձև ունին»։

«Դա Լիդոնն է, մի երիտասարդ անփորձ մարդ, որ բաւական անխոհեմ է գնուած այն մեծ գլադիատորի հետ, որը նոյն ձևով հագուած է, կամ աւելի լաւ է ասել մերկ է – Տէտրիտէսի հետ։ Նրանք նախ պիտի կռուեն յունական կեստուսով. յետոյ նրանք կը զրահաւորուին և կը փորձեն սուրը և ասպարը»։

«Մի անթերի մարդ է, այս Լիդոնը. և կանայք, տարակոյս չունեմ, նրա կողմն են»։

«Բայց այդպէս չեն մեզանից աւելի փորձառուները. Կլոդիուս մէկին երեք է առաջարկում նրա դէմ»։

Ո՛հ, Ագրիպպդ, ինչ գեղեցիկ է, գոչեց այրին, երբ երկու գլադիատորներ, ոտքից գլուխ զինուած, թեթևաքայլ և ոտոստուն ձիերի վրայ նստած մատն արհնալի մէջ։ Մեծապէս նման միջին գարի նիզակամարտներին, նրանք կրում էին սէգեր և գեղեցիկ բանուած վահաններ. նրանց զրահը հիւսուած էր երկաթեայ թելերից, բայց միայն ծածկում էր ազդրերը և աջ թեւը, կարճ վերարկուներ, իջնելով մինչև թամբերը, տալիս էին մի նկարագեղ և չնորհալի ձև նրանց չեստերին. նրանց սրունքները մերկ էին, սանդալների բացառութեամբ, որոնք կապուած էին ճաներից մի քիչ վեր։ «Ո՛հ, ինչ գեղեցիկ է, ոմ են սրանք» հարցրեց այրին։

Մէկի անունը Բէրբիքս է—նա սաններիս կուսակցական է դառնում. միւսը կրում է Նորիլիոր պարծենկոտ անունը։ Նրանք երկուքն էլ գալիլացիներ են»։

Մինչդեռ այսպէս խօսակցում էին, հանդէսի առաջին ձևականութիւնները վերջացան։ Այս ձևականութիւններին յաջորդեց մի կեղծ կռիւ փայտեայ սրերով զանազան պլպիատորների մէջ, որոնք որուչուած էին միմեանց հետ մաքառելու։ Այս պայքարում

ամենից շատ ազդեցում պատճառեց երկու հռոմայեցի զլադիատորների հմտությունը, որոնք վարձուած էին այս առիթով և նրանցից յետոյ ամենից չնորհալի կռուողը Լիդոնն էր։ Այս կեղծ պայքարը ուելի մեկ ժամ չը տևեց և ոչ էլ մեծ ոգևորութիւն պատճառեց եթէ ոչ նրանց մէջ, որոնք հմուտ լինելով արհեստի հետ արուեստը գերազանում էին կոպիտ յուզմունքից. հանդիսատեսների մեծ մասը ուրախացաւ երբ տեսարանի այս կտորը վերջացաւ և հետաքրքրութիւնը սարսափի փոխարկուեցաւ։ Մարտիկները այժմ զոյգերի բաժանուեցան ինչպէս նախապէս որոշուած էր. նրանց զէնքերը քննուեցան. և օրուայ լուրջ խաղերը սկսուեցան ամենախորին լռութեան մէջ—լռութիւն, որ լոկ խանդարուած էր պատերազմական երաժշտութեան զրդռիչ և նախնական հնչիւններով։

Յաճախ սովորութիւն էր սկսել այդ խաղերը, ներկայացնելով ամենից անողորմ տեսակը, որևիցէ բեստիարիուս (գազանամարտ) կամ զլադիատոր, որ որոշուած էր գազանների համար, ամենից առաջ սպանուում էր, որպէս մի նախատանք։ Բայց ներկայ դէպքում վորձառու Պանսան մտածում էր, որ աւելի լաւ է, որ արիւնռուչտ դրաման երթայով աւելացնէ հետաքրքրութիւնը և ոչ թէ նուազեցնէ. և հետևաբար Օլինթուսի և Վլոկուսի սպանութիւնը թողուեցաւ վերջին։ Այնպէս կարգադրուած էր, որ նախ երկու ձիաւորները մտնեն արենայի մէջ. յետոյ հետևակ զլադիատորները զոյգ զոյգ բայց թողուին բեմի վրայ, որ Վլոկուս և առիւծը յետոյ կատարեն իրանց մասը այդ արիւնռուչտ տեսարանի մէջ, և վարդը և նաղովրեցին կազմեն չքեղաւարտը։ Պոմպէի տեսարանների մէջ, հռոմէական պատմութեան ընթեր-

ցողը պիտի սահմանափակէ իր երևակայութիւնը, և չը պիտի ակնկալէ գտնել այն վիթխարի սպանութիւնների զարհուրելի ներկայացումը, որով մի Ներոն կամ Կալիգուլա զուարճացնում էին կայսերական քաղաքի բնակիչներին։ Հռոմի ամփիթեատրոնները, որոնք կլանում էին աւելի հռչակաւոր զլադիատորներին և օտար երկրներից բերուած գազանների զլխաւոր մասը, հէնց իրանք էին պատճառը, որ կայսրութեան աւելի փոքրիկ քաղաքներում ամփիթեատրոնի խաղերը համեմատաբար աւելի հազուագիւտ և նուազ անգութ էին, և այս բանի մէջ ինչպէս ամեն բաների, Պոմպէյը Հռոմի մի մանրանկարն էր։ Այնուամենայնիւ դա մի ահաւոր և պատկառելի տեսարան էր, որի հետ, ներկայ ժամանակները, բարերախտաբար համեմատելու ոչ մի բան չունին.—մի ահագին թատրոն, չարք չարքի հանից բարձրանալով, և լցուած տասնուհինգից մինչև տասնևութը հազար մարդկային էակներով, որոնք անձկութեամբ նայում էին ոչ թէ մի երևակայական ներկայացումի—ոչ թէ մի բեմական ողբերգութեան—այլ իսկական չարչարութեան և պարտութեան վրայ—ցնծալից կեանքի և արիւնաթաւալ մահուան այն բոլորի, անհատապէս և հաւաքապէս, որոնք մտնում էին արենայի մէջ։

Երկու ձիաւորները այժմ կանգնած էին արենայի երկու ծայրերում. Պանսան մի նշան արեց և նրանք միևնոյն ժամանակ չարժուեցան և ամենայն արագութեամբ ձիերը քշեցին այնպէս, որ կարծես պիտի բաղխուէին իրար դէմ. նրանցից ամեն մէկը բռնած էր վահանը իր ղիմաց և բարձրացրած էր իր թեթև բայց ամուր դէմքը. բայց երեք քայլ մնացած իր հակառակորդին, Բէրբիքսի ձին յանկարծ կանգ առաւ, պատուե-

ցաւ, և մինչդեռ Նոբիլիոր իր սրընթաց թափով տարուում էր դէպի առաջ՝ նրա թշնամին հասաւ նրա հանից։ Նոբիլիոր, արագութեամբ և հմտութեամբ երկարացնելով իր վահանը նրա վրայ, ստացաւ մի հարուած, որը հաւասար դէպքում կարող էր մահացու լինել։

«Ինչպես Նոբիլիոր», գոչեց պրէտորը, տալով առաջին նշանը ժողովուրդի յուզմունքի։

«Քաջութեամբ զարկեցիր, իմ Բէրրիքա», պատասխանեց Կլոդիուս իր նստարանից։

Եւ վայրենի մրմունջը խառնուած բաղմաթիւ աղաղակների հետ, արձագանք տուաւ մէկ կողմից միւսը։

Երկու ձիաւորների երեսն էլ կատարելապէս պիտակուած էին (ինչպէս լեռապատ ժամանակների սովորութիւնն էր), բայց և այնպէս գլուխն էր յարձակման մասնաւոր կէտը։ Նոբիլիոր, որ պատեց իր երիվարը, ոչ նուազ ճարպկութեամբ քան իր հակառակորդը, իր նիզակն ուղղեց դէպի իր թշնամու սաղաւարտը. Բէրրիքա բարձրացրեց իր ասպարը պաշտպանելու, բայց նրա արագաձիս ասպետը յանկարծ իջեցրեց իր զէնքը և ծակեց նրա կուրծքը։ Բէրրիքա երերուեցաւ և ընկաւ։

«Նոբիլիոր, Նոբիլիոր», գոչեց ամբոխը։

«Ես կորցրի տասը սեստերտիուս», *) ասաց Կլոդիուս իր առաջների մէջ։

«Հաբէ՜ա—կերաւ» ասաց Պանսան, ծանր արտասանութեամբ։

Հաւասարակութիւնը, որի սիրտը դեռ չէր քարացել, անողորմ դարձել, տուաւ զինուորական նշանը, բայց երբ արենային գործաւորները մօտեցան, նրանք գտան, որ

*) Փիչ աւելի քան ութսուն անգլիական ռակլի։

այդ բարեսրտութիւնը չափազանց ուշ էր հասել.—գալլիացու սիրտը ծակուած և նրա աչքերը մահուամբ քաշուած էին։ Նրա սրտի արիւնն էր, որ այնպիսի սեւ գոյնով վազում էր արենային աւազի և սղոցուքի վրայ։

«Ափսո՜ս, որ այսպէս շուտ վերջացաւ—մարդու նեղութիւնը վարձատրելու չափ չը տևեց», ասաց այրի Ֆուլվիան։

«Այո—եա տաճ չունիմ» Բէրրիքայի համար։ Ով որ լինեը կարող էր տեսնել, որ Նոբիլիորը կեղծում էր։ Տես, նրանք կարիք զարկում են նրա մարմնին և քարշ տալիս դէպի սպոլիարքսամբ—նոր աւազ են չաղ տալիս նեմի վրայ։ Ոչ մի բան այնքան չէ վշտացնում Պանսային, որքան այն, որ ինքը բաւական հարուստ չէ, որ կարողանայ արենային վրայ բորակ և կինաբար ածել, ինչպէս Ներոն սովոր էր անել»։

«Լաւ, եթէ պալքարը կարճ տևեց, դէթ մի մխիթարութիւն է, որ շատ չը սպասեցինք յաջորդ խաղերին։ Տես իմ զեղեցիկ Լիդոնը արենային վրայ—այո, և այն ցանցաւորը, և սուսերաւորը։ Օ՛հ, ինչ դիւթիչ է»։

Այժմ արենային վրայ վեց հոգի մարտիկներ կային. Նիպերի ցանցը, ընդդէմ Սպարտակի վահանին և կարճ սրին. Լիդոն և Տէտարիդէս, որոնք մերկ էին և լոկ մի զօտի ունէին կապած իրենց մէջքին. նրանցից ամեն մէկն ունէր մի ծանր յունական կեստուս—Հռոմից եկած գլադիատորները, որոնք, կատարելապէս ծածկուած էին պղնձով. նոքա հաւասարապէս ունէին ոտպին ապարներ և սրածայր թրեր։

Քանի որ Տէտարիդէսի և Լիդոնի կռիւը նուազ մահացու էր քան միւսներինը, հէնց որ նրանք հասան արենային կեդրոնը, կարծես միահամուռ հաւանութեամբ

մխա պլաղիատորները լեա քաչուեցան, տեսնելու թէ նրանց մաքառումը ինչպէս էր վերջանում և ապասելու մինչև աւելի մահառիթ զէնքեր բռնէին կեստուսի տեղը։ Նրանք կանդնեցին միմեանցից հեռու, լենուելով իրենց զէնքերի վրայ և նայելով այդ երկուսի կռուին, որը թէև ոչ բաւական արիւնռուչա ժողովուրդին կատարեալ սէս հաճելի լինելու համար, սակայն դարձեալ զբաւում էր ամբոխի համակրութիւնը նրա համար, որ պատկանում էր նրանց յունական նախահայրերին։

Ոչ մի զոյգ, առաջին նայուածքում այնքան համեմատ ոյժերով ընտրուած չէին երևում, որքան այս երկու հակառակորդները։ Տէտրախէս, թէև ոչ աւելի բարձրահասակ քան Լիդոն, շատ աւելի ծանր էր մարմնով. նրա մկանունքի բնական հաստութիւնը շատ աւելի մեծ էր երևում ամրկնների աչքում, նրա մեծ ամուր կոյտերի պատճառով. որովհետև քանի որ ընդհանուր ակրող զաղափարն այն էր, որ կեստուսի կռիւը միշտ յաջող ելք է ունենում այն անձի համար, որ աւելի մանկն է, Տէտրախէս իր բոլոր ճիգը գործ էր դրել քաջալերելու իր ժառանգական հակումը դէպի հաստութիւն։ Նրա ուսերը անգին էին և նրա ոտքերը հաստ, թեթև կերպով հակուած դէպի դուրս և այնպիսի կազմութեամբ, որ այնքան առնում էր գետնկութիւնից և տալիս ոյժին։ Բայց Լիդոն, չը նայելով, որ բարակիկ էր, մինչև անգամ կարելի է ասել նիհար, բայց նրբութեան և գեղեցկութեան կատարեալ համեմատութիւն ունէր. մի հմուտ մարդ կարող էր տեսնել, որ նրա մկանունքը, թէև նուազ հաստ քան իր ոսկրինը, աւելի ամուր և երկաթեայ էին։ Իսկ ինչ որ նրան պակասում էր մեծ կողմից, նա հատանակատարար ունէր ճարպկութեան

մէջ. մի քամահրական ժպիտ նրա վճռական երեսի վրայ, որը մի աչքի զարկող հակապատկեր էր կազմում իր թշնամու դէմքի ամուր ծանրութեանը, վստահութիւն էր ներշնչում հանդիսատեսների մէջ, և յոյսը միացնում էր ափսոսանքի հետ, այնպէս որ, չը նայելով նրանց ոյժերի առերևոյթ անհամեմատութեանը, ամբոխի համակիր ազդակը մեռ նոյնչափ բարձր էր Լիդոնի համար, որչափ Տէտրախէսի։

Ով որ ծանօթ է այսօրուայ բռնցամարտի հետ—ով որ տեսել է այն ծանր և ջախջախիչ հարուածները, որոնց մարդկային բռունցքը, հմտութեամբ ուղղուած ժամանակ կարող է տալ—դիւրութեամբ կարող է հասկանալ թէ այդ հարուածների խեղդացուցիչ ազդեցութիւնը մինչև ինչ աստիճան կարող է աւելանալ, երբ ձեռքին կապուի նաև մի ամուր զէնք կաշեայ թելերով ամրացած արմունկի հետ, և սարսափելի կերպով ուժեղացած մի երկաթեայ կամ մի կապարեայ գունդով, որ դրուում էր մատների մէջտեղի ծոցերի վրայ։ Բայց այս երկաթի կտորը, որ կապուած էր, աւելի պակասացնում էր կռուի հետաքրքրութիւնը, որովհետև դա կարճացնում էր տեսարանի տևողութիւնը։ Մի քանի հարուած, յաջողութեամբ և արուեստագիտութեամբ ուղղուած, կարող էին վերջ դնել պայքարին. և կռիւը հետևաբար, կատարեալ տպարէզ չէր տալիս այն էներգիային, դիմացկանութեան և յամառ յարատևութեան, որ մենք տեխնիկապար կոչում ենք տոկունութիւն, որը ոչ քիչ անգամ չանում է կռիւը աւելի բարձր հմտութեան դէմ, և որը այնպիսի մի վշտալից հրճուանքի է հասցնում մեր հետաքրքրութիւնը դէպի կռիւը և մեր համակրութիւնը դէպի քաջը։

Պաշտպանուհիր՝ մրմռաց Տէտրախիէս աւելի և աւելի մերձենալով իր թշնամուն, որը աւելի պատրաստ էր նրա շուրջը քան յետ դնում։

Լիդոն չը պատասխանեց. նա լոկ մի արհամարհական նայուածք ձգեց իր արագ, զգույշ աչքերից։ Տէտրախիէս գարկեց — դա նմանում էր մի երկաթագործի հարուածին. Լիդոն յանկարծ ընկաւ մէկ ծնկի վրայ — հարուածը անցաւ նրա գլխի վրայից։ Նոյնչափ անվնաս չէր Լիդոնի փոխարինութիւնը. նա անմիջապէս ոտքի կանգնեց և իր կեստուսը ուղղեց հակառակորդի կրծքին։ Տէտրախիէս երերաց — բաղմութիւնը մի աղաղակ արձակեց։

«Դու տարաբախտ ես այսօր», ասաց Լեպիդուս Կլոդիուսին. «դու արդէն կորցրել ես մէկ դրաւ — միւսն էլ կը կորցնես»։

«Աստուածները գիտեն, որ իմ բրոնզները կերթան աճուրդի, եթէ այդպէս լինի։ Ես ոչ նուազ քան հարիւր սիստերտիում*) ունիմ Տէտրախիէսի վրայ կապած։ Հա, հա, տես ինչպէս հաւաքւում է։ Այդ մէկը մահացու հարուած էր. նա ճեղքեց Լիդոնի ուսը։ Կեցցէ Տէտրախիէս կեցցէ Տէտրախիէս»։

«Բայց Լիդոն յուսահատուած չէ։ Պոլլուքս վկայ. ինչպէս պաղարիւնութեամբ կանում է նա։ Տես ինչ ճարպկութեամբ նա խոյս է տալիս այդ մրճանման ձեռքերից — մերթ այստեղ է թռչում, մերթ այնտեղ — չուրջ և չուրջ պատում է։ Ա՛հ, խեղճ, Լիդոն նորից սայթաքեց»։

Երեք մէկի դէմ նորից Տէտրախիէսի վրայ. ինչ ես ասում Լեպիդուս»։

«Լաւ, ինձը սիստերտիում երեքի դէմ — ընդունում

*) Աւելի քան ութ հարիւր անգլիական ոսկի։

եմ։ Ինչ, նորից Լիդոն։ Նա կանգ է առնում — նա չնչասպառ է եղել։ Աստուածներ, ընկաւ։ Ոչ — նորից բարձրացաւ։ Բաջ Լիդոն։ Տէտրախիէս քաջալերուեցաւ — նա բարձրաձայն ծիծաղում է — նա յարձակւում է նրա վրայ»։

Յիմար — յաջողութիւնը կուրացրել է նրան — նա պէտք է զգույշ լինի։ Լիդոնի աչքը քաւթարի աչքին է նմանում», ասաց Կլոդիուս, իր ատամները կրճտելով։

«Հա, Կլոդիուս տեսար այդ մէկը։ Ինչ մարդը երերւում է, մի ուրիշ հարուած — նա ընկնում է — նա ընկնում է»։

«Ուրեմն երկիրը նրան նորից կեանք է տալիս։ Նա դարձեալ բարձրացաւ. բայց արիւնը վազում է նրա երեսից»։

«Շանթարկուն վկայ. Լիդոնը չահում է։ Տես ինչպէս յարձակւում է նրա վրայ. քունքին զարկուած այդ հարուածը կարող էր մի եզ ջախջախել. և դա ջախջախել է Տէտրախիէսին։ Նա նորից ընկնում է — չէ կարողանում շարժուել — Հ ա բ է ա — Հ ա բ է ա»։

«Հաբէա», կրկնեց Պանսան։ «Ինչ տարբեր, և տուէք նրանց ղրահ և սուր»։

«Ազնիւ էդիտոր», ասացին պաշտօնեաները, «մենք վախենում ենք, որ Տէտրախիէս ժամանակին ուշքի չը գայ նորից կռուելու. ինչ և իցէ մենք կը փորձենք»։

«Փորձեցէ՛ք»։

Բանի բոպէից յետոյ, այն պաշտօնեաները, որոնք ուշաթափ և անզգայ պլադիատորին քարշ էին տուել դուրս, վերադարձան տխուր դէմքերով։ Նրանք վախենում էին, որ նա չի ապրի. նա կատարեալապէս անպիտանացել էր արենային համար։

«Այդ դէպքում», ասաց Պանուան, «Լիդոնին պահեցէք որպէս մի սուբդիտիտուս *). և երբ առաջին պատերազմը յաղթուի, թող Լիդոն բռնէ նրա տեղը յաղթականի դէմ»։

Ժողովուրդը մի ազազակով յայտնեց իր հաւանութիւնը այդ հրամանի մասին. լուռ նորից տիրեց խորհրդին լռութիւն։ Փողը բարձրաձայն հնչեց։ Ջոր հակառակորդները կանգնեցին միմեանց դիմաց պատրաստ և մարտական դիրքով։

«Դու ճանաչում ես հռոմայեցիներին, իմ Կլոդիուս. նրանք հաչակաւոր պատերազմներ են մէջ հասարակ»։

Եւմոլպուս մի երկրորդ կարգի սուսերամարտ է, իմ սիրելի Լեպիդուս։ Նէպլիմասին, որ ամէն մարդն է, առաջ երբէք չեմ տեսել. բայց նա կայսերական ֆիսկալէների **) մէկի որդին է, և մի լաւ կրթութիւն է ստացել իր վարժութիւնը. անտարակոյս նրանք մեծ զուարճութիւն պիտի պատճառեն, բայց ես այլ ևս սիրտ չունեմ խաղերի համար. ես չեմ կարող չահել եմ պրաւինները—ես տնանկացայ։ Անէծք այդ Լիդոնի պլխին, ով կարող էր մտածել, որ նա այդքան ճարպիկ է կամ այդքան բախտաւոր»։

«Լաւ, Կլոդիուս, կռուիս խզճայ քեզ վրայ և քո պատմաններդ ընդունեմ այս հռոմայեցիների մասին»։

«Ուրեմն հաւատար ասած սիստերտիում Եւմոլպուսի վրայ»։

«Ի՞նչ, երբ Նէպլիմասը անմիտ է։ Ոչ, ոչ, այդ չատ վատ է»։

---

*) Ուրիշի տեղը կռուող։ Ե. Թ.

**) Կայսեր պահած մանուսաը պատերազմներ։

«Լաւ—տասը ոսթի դէմ»։

«Ընդունեցի»։

Մինչդեռ մաքառումը այսպէս սկսուել էր ամփիթեատրոնում, մէկ հոգի կար ամենից վերի նստարաններում, որի համար տեսարանը ստացել էր իրօք մի սուր, մի խեղդիչ հետաքրքրութիւն։ Լիդոնի ծերունի հայրը, հակառակ իր քրիստոնէական զգուանքին, որ ունէր այդ տեսարանի դէմ, իր որդու համար ունեցած անձկութեամբ, չէր կարողացել պիտարրել իր ճակատագրին հանդիսատես լինելու փորձութեանը։ Միակ մարդն էր ծերունի կատաղի օտարականների—ժողովրդի ամենատարրին խաժամուժի մէջ, որ ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում բացի իր քաջ որդու կերպարանքը և ներկայութիւնը։ Ոչ մի ձայն դուրս չը թռաւ նրա շրթունքից, երբ նա երկու անգամ տեսաւ, որ իր որդին ընկաւ գետին—միայն նա աւելի գունատուեցաւ, և նրա անդամները դողացին։ Բայց երբ տեսաւ, որ իր որդին յաղթեց՝ նա արձակեց մի մեղմ գոչիւն։ Աւաղ. նա տեղեկութիւն չունէր այն աւելի սարսափելի կռուի մասին, որի համար այդ յաղթութիւնը միայն մի նախադրան էր։

«Իմ քաջ զաւակ», ասաց նա և սրբեց աչքերը։

Նա քո որդին է, ասաց մի պարարտ մարդ նազովրեցու աջ կողմից. նա լաւ կռուեց. տեսնենք լուռ ինչ կանի։ Լաւ, նա պիտի կռուի առաջին յաղթականի հետ։ Այժմ, ծերուկ, ազօթիր աստուածներին, որ այդ յաղթողը ոչ հռոմայեցիներից մէկը լինի և ոչ էլ այդ հսկայ Նիպէրը»։

Ծերունին նորից նստեց և ծածկեց իր երեսը։ Պայքարը այդ րոպէին ոչ մի նշանակութիւն չունէր

նրա համար, որովհետև Լիդոնը կառավարներից չէր։ Սահման—սակայն—նա մտածեց—այդ կախիը մահու և կեանքի մի հետաքրքրութիւն ունէր—առաջին ընկնողը պիտի տեղ բանար Լիդոնի համար. նա ցնցուեցաւ և ծռուեցաւ ցած՝ անձկալից նայուացքով. և իր ձեռքերը ճմլելով՝ նայում էր նոր տեսարանին։

Ժողովրդի առաջին ուշադրութիւնը հրաւիրուեցաւ Նիգէրի և Սպորուսի կռուի վրայ. որովհետև այդ ձևի մաքառումը, իր սովորաբար ունեցած մահացու հետևանքի, և այն մեծ հմտութեան պատճառով, որ իւրաքանչիւր հակառակորդը պիտի ունենար, մասնաւոր հրապոյր ունէր հանդիսականների համար։

Նրանք կանգնած էին միմեանցից բաւական հեռու։ Սպորուսի կրած տարօրինակ սաղաւարտը, որի դիմակը իջեցրած էր, ծածկում էր նրա երեսը. բայց Նիգէրի դիմագծերը գրաւում էին մի ընդհանուր և տակալի հետաքրքրութիւն, իրենց սեղմուած և արիւն կարոտութեան պատճառով։ Այսպէս նրանք կանգնած էին մի քանի րոպէ» մէկը միւսին աչքից չը թողնելով, մինչև Սպորուս սկսեց կամաց կամաց և մեծ զգուշութեամբ առաջանալ, բռնելով իր սուրը ուղղուած դէպի իր թշնամու կուրծքը, ինչպէս այսօրուայ մեր սուսերամարտիկները անում են։ Որքան իր թշնամին առաջանում էր, Նիգէր չնա էր քաշւում, հաւաքելով իր ցանցը իր աջ ձեռքով և երբէք իր փոքրիկ պղպեղն աչքը չը վերցնելով մարտիկի չարժումների վրայից։ Յանկարծ, երբ մի թեի երկարութիւն մնաց որ Սպորուս հասնէ նրան, ոչխարիուսը առաջ թռաւ և ձգեց իր վարմը։ Գլադիատորը մարմնի մի արագաշարժ ծռումով աղատուեցաւ այդ մահացու որոգայթից. նա ցնծութեան

և ուրախութեան մի սուր գոչիւն հանեց, և յարձակուեցաւ Նիգէրի վրայ. բայց Նիգէր արդէն հաւաքել էր իր ցանցը, ձգել էր իր ուսին և փախչում էր արենային չուրջը այնպիսի մի արագութեամբ որին սէկուտորը (* դուր էր աշխատում հասնել։ Ժողովուրդը ծիծաղում և բարձրաձայն աղաղակում էր տեսնելով լայնալանջ գլադիատորի ունայն ճիգերը հասնելու փախչող հակալի հասից. այդ րոպէին նրանց ուշադրութիւնը դարձաւ երկու հռոմայեցի մարտիկների վրայ։

Կռուի սկզբում նրանք կանգնել էին երես առ երես, միմեանցից այնչափ հեռու, որչափ այսօրուայ սուսերամարտիկները սովոր են կանգնելու. բայց այն չափազանց զգուշութիւնը, որ երկուսն էլ ցոյց էին տուել մենամարտութիւնը սկսելու ժամանակ հանդիսատեսներին ժամանակ էր տուած հետաքրքրելու Սպորուսի և նրա ոսոխի կռուի մէջ։ Բայց հռոմայեցիները այժմ տաքացել էին և գտնում էին մենամարտութեան ամենակատաղի վայրկեանում, նրանք հրում էին—վերադառնում էին—առաջանում էին—նահանջում էին, բոլոր այն սուր բայց հաղիւ նկատելի զգուշութեամբ, որ բնորոշ է լաւ, կիրթ և հաւասարապէս զուգուած մարզիկանց մէջ։ Բայց այս րոպէին Եւմոլպուս, մեծազոյն գլադիատորը, մի ճարպիկ յետնահարուածով, որի առաջն առնել այնքան դժուար բան էր կարծում արենային մէջ, վիրաւորեց Նէպհմուսի կողքը։ Ժողովուրդը աղաղակեց. Լևպիդուս գունատուեցաւ։

---

*) Սէկուտոր կոչւում էին այն գլադիատորները, որոնք հետևում էին թշնամուն այն րոպէին, երբ ցանցը ձգում էր, որպեսզի զարկին նրան նախ քան նա կարողանայ հաւաքել այդ։

«Հո» գոչեց Կլոպիուս, «խաղը դրեթէ վերջացել է»։ Եթէ Եամոլպուս այժմ հանդարտ կռուի միւսը կամաց կամաց արիւնաքամ կըլինի»։

«Բայց փառք աստուածներին նա չէ կռւում հանդարտութեամբ և պաշտպանողաբար։ Տես—նա յարձակւում է Նէպհիմուսի վրայ։ Ո՛վ Արէս, բայց Նէպհիմուս լաւ կերպրեց նրան. նրա աղաւաղրաը նորից հնչեց—Կլոպիուս ես կը չահեմ»։

«Ինձ ոչ է պատւում զառերից բացի ուրիշ բանի վրայ դրաւ կապեմ, հառաչեց Կլոպիուս իր սրտում.—«ինչո՞ւ կարելի չէ չինծու դլադիատորներ ունենալ»։

«Սպորտա, Սպորտա», գոչում էր ժողովուրդը, երբ Նիգէր յանկարծ կանգ առնելով, նորից ձգել էր իր ցանցը, և նորից անյաջող ելքով։ Նա այս անդամ չէր կարողացել փախչել բաւական ճարպկութեամբ—Սպորտուսի սուրը մի մեծ վէրք էր բացել նրա աջ ոտքի վրայ և այժմ փախչելու անընդունակ դառնալով նա չատ նեղն էր ընկել կատաղի սուսերամարտի ձեռքին։ Նրա ահագին բարձրութիւնը և նրա թևերի երկարութիւնը չարունակում էին մեծ օգնութիւն տալ նրան. նա իր եռաժանին միշտ բռնելով իր թշնամու դիմաց՝ կարողացաւ նրան յետ պահել մի քանի րոպէ։ Սպորտուս այժմ փորձեց, մի արագ պտոյտ գործելով դառնալ իր թշնամու չուրջը, որը իր վէրքի պատճառով դժուարութեամբ էր շարժւում։ Այս անելու միջոցին նա կորցրեց իր զգուշութիւնը—նա չափազանց մօտ գնաց հակառակին—քարձրացրեց իր թևը, որ զարկէ, և մահացու նիզակի երեք ծայրերը սուցաւ ուղղակի իր կրծքի մէջ. նա ընկաւ իր ծնկի վրայ։ Մի րոպէ չանցաւ, մահաւէտ ցանցը ընկաւ նրա վրայ, և նա խղուր մաքառում էր դրա դէմ. նորից, նորից և նորից նա անճարն զալարուելուց առաջանու հարուածներից—նրա արիւնը հոսեց ցանցի արանքից և վազեց աւազի վրայ, նա ցած դրեց իր զէնքերը՝ ի նշան պարտութեան։

Յաղթական ռէտիարիուսը յետ քաշեց իր ցանցը և յենուելով իր նիզակի վրայ նայեց հանդիսականներին նրանց վճիռը իմանալու։ Նոյն րոպէին նաև յաղթուած դլադիատորը իր աջով և յուսահատ աչքը կամաց պատեցրեց թատրոնի չուրջը։ Շարքից շարք, նստարանից նստարան միայն անողորմ և անգութ աչքեր էին հանդիպում նրա աչքերին։

Լուռ էր մռնչիւնը—մրմունջը. լռութիւնը անեզ էր, որովհետև դրա մէջ ոչ մի համակրութիւն չը կար. ոչ մի ձեռք—ոչ, ոչ իսկ մի կնոջ ձեռք—չը տուաւ մարդասիրութեան և կեանքի նշանը. Սպորտուս երբևիցէ ժողովրդապետութիւն չէր ունեցել արենալի վրայ. և այս վերջին դէպքում էլ կռւի հետաքրքրութիւնը բորբոքած էր ի նպաստ վիրաւորուած Նիգէրի։ Ժողովուրդը տաքացել էր արիւնով—կ ե ղ ծ կռիւը այլևս նրան չէր դիւթում. հետաքրքրութիւնը այժմ այնքան չերմացել էր, որ դարձել էր զոհ ունենալու մի փափագ, արեան մի ծարաւ։

Գլադիատորը զգաց, որ իր դատավճիռը կնքուած էր. նա չարտասանեց ոչ մի աղերս, ոչ մի հառաչանք։ Ժողովուրդը տուել էր մահուան նշանը. յամառ բայց տպաւնապալից հնազանդութեամբ, նա ծռեց իր վիզը ստանալու մահացու հարուածը։ Եւ, որովհետև Նիգէրի նիզակը այնպիսի մի զէնք չէր, որ կարողանար անմիջապէս և մէկ հարուածով սպանել նրան, ներս ճեմից

արենային մէջ մի դժնդակ մարդ պատերազմելով իր կարճ, փայլուն սուրը. նրա դէմքը կատաղութիւն ծածկուած էր նրա դիմակի տակ։ Դանդաղ և չափուած քայլերով այս դաժան դահիճը մերձեցաւ ղլադիատորին, որը դեռ չ'ընկել էր—ձեռքը դրեց նրա խոնարհած գլխի վրայ—իր սրի բերանը քաշեց նրա վզին և յետ դարձաւ դէպի ժողովուրդը, մի դուցէ այդ վերջին րոպէին նրանց դուխը չարժուած լինի. դժնեմ նչանը միևնոյնն էր. սուրը չորաց օդի մէջ—ընկաւ—և ղլադիատորը թաւալուեցաւ աւազի վրայ. նրա անդամները դողդողացին—անչարժացան—նա մի դիակ էր։

Նրա մարմինը անմիջապէս քաշուեցաւ և մահուան դռնից դուրս տարուելով նետուեցաւ այն մութ ծակի մէջ, որ կոչւում էր ս պ ո լ ի ա ր ի ու մ։ Եւ առաջ քան դա, հասաւ իր որոշուած տեղը, մնացորդ կառուղների մաքառումն էլ վերջացաւ։ Եւմոլպուսի սուրը զարկել էր մահացու մի վերք նուազ վտրճառու ղլադիատորին։ Եւ մի նոր զոհ ևս աւելացաւ սպանուածների վրայ։

Այդ հակայ ժողովի մէջ այժմ մի ընդհանուր չարժուում տեղի ունեցաւ. ժողովուրդը սկսեց աւելի աղաղ չունչ առնել և նորից հառաչուել իր նստարանների վրայ։ Մի զովացուցիչ տարափ այժմ թափուեցաւ ամֆիթ մի չարքի վրայ թաքնուած խողովակներից։ Պաղարիւն և զգուշաւոր զուարճութեամբ նրանք խօսակցում էին վերջին արիւնաուչտ տեսարանի վրայ։ Եւմոլպուս վերցրեց իր սաղաւարտը և սրբեց իր ճակատը. նրա կարճ դանդուրները և կարճ մօրուքը, նրա հռոմէական աղնիւ դիմագծերը և փայլուն աչքը ընդհանուր սքանչացում պատճառեցին։ Նա թարմ էր անվէրք և անխոնջ։

Էդիտորը մի քիչ ժամանակ լուռ մնաց, և յետոյ

զարձր ձայնով յայտարարեց, թէ քանի որ Նիգերի վերքը նրան թոյլ չէր տալիս նորից մտնել արենային մէջ, Լիդոնը պիտի լինէր սպանուած Նէպիմուսի յաջորդը, և Եւմոլպուսի հակառակորդը։

«Եւ սակայն, Լիդոն», աւելացրեց նա, «եթէ դու կ'ուզես խոյս տալ կռուելուց մի մարդու հետ, որ այնքան քաջ է և փորձուած, դու կատարեալ ազատութիւն ունես այդ բանն անելու։ Եւմոլպուսը քո համար առաջին անգամ որոշուած հակառակորդը չէր։ Դու ինքդ լաւ գիտես թէ մինչև ինչ աստիճան քեզ կը յաջողուի կռուել նրա հետ։ Եթէ պարտութիւն կրես՝ քո վախճանը պատուաւոր մահ է. եթէ յաղթես ևս իմ քսակից կը կրկնապատկեմ որուշուած ընծան»։

Ժողովուրդը հաւանութեան մի գոչիւն արձակեց։ Լիդոն կանգնած էր արենային մէջ. նա նայեց իր չորս կողմը, վերի չարքերումը նա տեսաւ իր հօր գունատ երեսը և անձկալից աչքերը։ Նա դարձրեց իր աչքերը և մի րոպէ կորցրեց իր վճռականութիւնը։ Ո'չ, կեսուսի յաղթանակը բաւական չէր—նա դեռ չէր չահել յաղթութեան պարգևը—նրա հայրը դեռ մի գերի էր։

«Ազնիւ Էդիլ» պատասխանեց նա, մի հատատուն և խոր ոտնով, «ես չեմ վախենում այս կռուից։ Պոմպէի պատուի համար ես ուզում եմ, որ նրա մեծանձնաչակ լանիստայի մօտ սովորած մի մարդ մաքառէ այդ հռոմայեցու հետ»։

Ժողովուրդը գոչեց աւելի բարձր՝ քան առաջ։

«Ձորս մէկի դէմ, ընդդէմ Լիդոնի», ասաց Կլոդիուս Էպիդուսին։

«Ես քսանի դէմ մէկ չէի ընդունի. Եւմոլպուսը միայն պատերազմել Աքիլլէս է և այդ խնդիրը հազիւ մի տիրոջ է»։

Եւմոլպոս ուշագրութեամբ նայեց Լիդոնի երեսին նա ժպտաց. բայց այդ ժպտին հետևեց մի թեթև, հազիւ լսելի հառաչանք – բարեսրտութեան զգացմունքի մի չող էր դա, որը սրտին դպաւ թէ չէ, անմիջապէս յաղթուեցաւ սովորութիւնից։ Եւ այժմ պլխից մինչև ոտք սպառազինուած, սրերը քաշած, դիմակները ցած ձգած, արենալի երկու վերջին հակառակորդները (դէմ նախ քան մարդ և գազան զուգուէին) կանդնեցին միմեանց հանդէպ։

Ձիշտ հէնց այս ժամանակ էր, որ արենալի ծառաներից մէկը մի նամակ տուաւ պրէտորին. նա բացեց, մի նայուացք ձգեց դրան վրայ—նրա կերպարանքը յայտնեց զարմանք և չիսթուխիւն։ Նա նորից կարդաց նամակը, և յետոյ մրմնջաց,—«Փուհ, անկարելի է. այդ մարդը նոյն իսկ առաւօտը պէտք է հարբած լինի այսպիսի վիճարութիւններ երազելու համար». Նա նամակը մի կողմ ձգեց և նորից լրջութեամբ նստեց իր տեղը և ուշադրութիւնը դարձրեց դէպի խաղերը։

Հասարակութեան հետաքրքրութիւնը վերին աստիճանի լարուած էր։ Եւմոլպոս սկզբում չհանել էլ նրանց համակրութիւնը. բայց Լիդոնի քաջութիւնը և նրա ժամանակին արած նկատողութիւնը Պոմպէյի լանիստայի պատուի մասին, ժողովրդի աչքում այս վերջինին դերասանի էր դարձրել առաջինից։

«Հոլա, իմ ծերուկ» ասաց Մեդոնի դրացին, քո որդիդ չատ վատ հակառակորդ ունի. բայց մի վախենայ, էդիտորը թոյլ չի տայ, որ նա սպանուի—և ոչ էլ ժողովուրդը. նա չատ քաջութիւն է ցոյց տուել։ Հապա մի մահաւէտ հարուած էր. և Պոլլուքս վկայ քաւ դէմն առնուեցաւ. նորից. Լիդոն, տեսնեմ քեզ.—

նրանք կանգնում են չունչ առնելու. Այդ ինչ ես մըրմնջում, ծերուկ»։

»Աղօթք», պատասխանեց Մեդոն, աւելի խաղաղ և լուսաւոր եղանակով, քան երբ և իցէ ունեցած էր ամբողջ խաղի ընթացքում։

«Աղօթք.— լիմար բան։ Այն ժամանակն անցել է երբ աստուածները մարդու ամպով խլում բարձրացնում էին։ Հա. Եուպիտէր, ինչ հարուած. կողքդ, կողքդ, պաշտպանիր, Լիդոն»։

Մի ցնցիչ դող անցաւ ամբոխի միջից։

Եւմոլպոս մի սարսափելի հարուած էր ուղղել Լիդոնի պլխին և նրան ծնկի վրայ բերել։

«Հաբէտ.—կերաւ», գոչեց մի սաստ կանացի ձայն. «կերաւ»։

Դա այն կնոջ ձայնն էր, որ այնքան անձկութեամբ ցանկացել էր, որ մի ճշմարիտ գոհուի գազանների։

«Լաւ, աղջիկ», ասաց Պանսալի կինը խրոխտութեամբ։ Նոն հաբէտ.—վիրաւորուած չէ»։

«Երանի թէ լինէր, լսկ այդ թեթուած ծեր Մեդոնի ջլերու», մրմնջաց աղջիկը։

Նոյն միջոցին, Լիդոն, որ մինչև հիմա մեծ ճարպկութեամբ և քաջութեամբ պաշտպանուում էր, սկսեց տեղի տալ կիրթ հռոմայեցու բուռն յարձակումների առջև. նրա թևը յոգնեց. նրա աչքերը մթնեցին, նա դժուարութեամբ էր չունչ քաշում։ Մաքառողները նորից կանգ առան չունչ առնելու։

«Երիտասարդ», ասաց Եւմոլպոս ցած ձայնով, «բաւական է. հա քեզ մի թեթև վէրք կը տամ – յետոյ դէնքերդ ցած դիր. դու չհանել հա էդիտորի և ժողովրդի

համակրութիւնը և դու պատուաւոր կերպով կը վերկուիս»։

«Եւ իմ հայրս դեռ դերի մնաց», հառաչեց Լիդոն ինքնիրեն։ «Ո՛չ, կամ մահ կամ նրա ազատութիւնը»։

Այս մտածելով և տեսնելով, որ իր ոյժը հաւասար չէ հռոմայեցու տոկունութեանը, նա խորհեց, որ ամեն քան կախուած էր մի յանկարծական և յուսահատ ճիգից. նա իր ամբողջ ոյժով յարձակուեցաւ հռոմայեցու վրայ. հռոմայեցին զգուշութեամբ նահանջեց—Լիդոն նորից խոթեց իր սուրը—նեմոզոսս մի կողմ քաշուեցաւ բայց սուրը դիպաւ նրա լանջապանին—Լիդոնի կուրծքը անպաշտպան էր—հռոմայեցին խրեց իր սուրը զրահի արանքից, սակայն չուզելով մի խոր վէրք տալ նրան. բայց Լիդոն, չնչասպառ և թուլացած, երեսի վրայ ընկաւ, և սուրը ուղղակի մտաւ նրա կրծքի մէջ և մինչև մէջքը հասաւ։

Նեմոզոսս դուրս քաշեց իր սուրը. Լիդոն նորից մի ճիգ գործեց ոտքի կանգնելու—նրա սուրը դուրս թռաւ նրա ձեռքից—և նա մեքենաբար իր մերկ ձեռքով զարկից գլադիատորին և երեսի վրայ ընկաւ արենային մէջ։ Էդիտորը և ժողովուրդը միաձայն տուին դիմութեան նշանը—արենայի պաշտօնեաները մերձեցան և վերցրին պարտեալի սպառազարդը։ Նա դեռ չունչ ունէր. նրա աչքերը կատաղաբար պտտում էին թշնամու վրայ. այն վայրագութիւնը, որ նա ստացել էր իր կոչումից վաղուց էր նրա նայուածքի մէջ և խառնում էր մի ճակատի վրայ, որը արդէն մթնել էր մահուան ստուերով. յետոյ մի ջղաձգական հառաչով, և մի կէս ցնցումով նա իր աչքերը բարձրացրեց դէպի վեր։ Այդ աչքերը չէին որոնում ոչ էդիտորին և ոչ էլ իր դիմաւորող դատաւորների խղճացող ճակատները։ Նա չէր

տեսնում նրանց. այդ ահագին տարածութիւնը կարծես դատարկ էր նրա համար և մերկ. միմիայն անդոյն տափաստանից երես կար, որին նա ճանաչեց—միայն մէկ աղաղակ կար կատաղած սրտի, որ ամբողջ ժողովրդի աղմուկի և մրմունջի միջից հասաւ նրա ականջին։ Վայրագութիւնը անհետացաւ նրա ճակատից. մի վախուկ, տառապած արտայայտութիւն, որպիսին սրբազնացուցիչ քայլ յուսահատ սիրոյ, խաղաց նրա դիմագծերի վրայ—խաղաց—խամրեց—խաւարեց. նրա երեսը յանկարծ չորացաւ, ամրացաւ, և վերստացաւ իր նախկին կատաղութիւնը։ Նա ընկաւ գետնի վրայ։

Նայեցէք նրան», ասաց էդիլը, «նա կատարել է իր պարտականութիւնը»։

Պաշտօնեաները նրան քարշ տուին դէպի սպոլիարիումը։

«Մի ճչմարիտ տիպ փառքի և նրա վախճանի». մրմնջաց Արբակ. և նրա աչքը պտտելով ամփիթատրոնի չուրջը, յայտնում էր, այնքան արհամարհանք և ծաղր, որով որ տեսնում էր այդ, զգում էր թէ իր չունչը յանկարծ կանգ է առնում, և իր զգացմունքները սառչում և մէկ կտոր սառնացում և ահ են դառնում։

Նորից անուշահոտութիւններ սրսկուեցան թատրոնի չուրջը. ծառաները նոր աւազ ցրուեցին արենայի վրայ։

«Դուրս բերեցէք աթենացի Գլոկուսին և առաջին», ասաց էդիտորը։

Եւ չափազանց յարուցած հետաքրքրութեան բուռն (սակայն, զարմանալի է, ոչ հաճելի) տարափի մի խորին և չնչարգել ընդհանուր տիրեց ամբողջ ժողովրդի վրայ, ինչպես մի տարափելի և ահաւոր երազ։

Գլուխ Գ.

Սալլուստ և Նիպսալի նամակը։

Երեք անգամ Սալուստ այդ առաւօտ զարթնել էր, և երեք անգամ, չիշելով, որ իր բարեկամը պիտի սպասնէր այդ օր, մի խոր հառաչ քաշելով կամեցել էր նորից մոռացութեան մէջ ընկղմուիլ։ Նրա միակ նպատակը կեանքի մէջ այն էր, որ խոյս տայ ցաւից. և երբ որ չէր կարող խոյս տալ, դէմ մոռանալ դրան։

Ի վերջոյ, չը կարողանալով այլ ևս քնի մէջ թաղել իր դիտակցութիւնը՝ նա վեր կացաւ իր ծանրացած դրութիւնից, և գաւաթ իր սիրելի ազատագրուած գերուն, ըստ սովորութեան նստած իր անկողնի կողքին. որովհետև Սալլուստ, ինչպէս ասացի, մի ազնուականի ճաշակ ունէր գրականութեան մէջ և սովոր էր առաւօտները մէկ ժամի չափ մէկին կարդացնել իր համար, նախ քան անկողնից վեր կենալը։

«Ոչ մի գիրք չեմ ուզում այսօր. ոչ մի Տիբուլլուս. ոչ մի Պինդար. Պինդար, ասում, ասում, դրա հէնց անունը մարդու լիշեցնում է այդ խաղերը, որոնց վայրագ յաջորդն է մեր արենան։ Սկսուել է—ամիսիթատրոնը։ Զևակատարութիւնները սկսուել են։

«Վազուց, ով Սալլուստ։ Ձը լսեցիք փողերի և տրոփիւնի ձայները»։

«Գլադիատորները չատ ժամանակ է, որ արենայի վրայ են»։

«Թշուառականները. իմ մարդկանցից հօ ոչ ոք չէ դնացել»։

«Անպատճառ ոչ. ձեր պատուէրը չափազանց խիստ էր այդ մասին»։

«Այդ չատ լաւ է—երանի թէ օրը վերջացած լինէր. ինչ նամակ է այդ, սեզանի վրայ»։

«Ա՛յդ. մի նամակ է, որ երեկ դիշեր բերին ձեզ երբ դուք չափազանց... չափազանց...»

«Հարբած էի կարծեմ։ Վնաս չունի, դա չէ կարող չատ մեծ նշանակութիւն ունենալ»։

«Կուզէք բանամ ձեզ համար, Սալլուստ»։

«Բայց. մի բան որ իմ մտքերս պրպտեցնէ, խնդմ Գլոկուս»։

Գերին բացաւ նամակը։ «Ինչ. չունարէն», ասաց նա, «անտարակոյս մի ուսեալ ստիկին է»։ Նա մի ակնարկ ձգեց նամակի վրայ, և մի քանի րոպէ կոյր ազդկայ անկանոն գծերը չփոթեցին նրան։ Յանկարծ, ինչպիսի, նրա կերպարանքի վրայ երևաց, յուզմունք և զարմանք։ «Աստուածներ բարի, ազնիւ Սալլուստ, ինչ ենք գործել մենք աւելի չուտ ուշադրութիւն չը դարձնելով այս նամակին։ Լսեցէք կարդամ»։

«Նիպիա սարկաւագ Սալլուստին, Գլոկուսի բարեկամին։ Ես բանտարկուած եմ Արբակի տանը։ Շտապեցէք պրէտորի տունը, առէք իմ ազատութեան հրամանը և մենք դեռ կարող ենք փրկել Գլոկուսին առիւծից։ Մի ուրիշ բանտարկեալ կայ այս պատերի մէջ, որի վկայութիւնը կարող է անմեղ հանել աթենացուն նորա դէմ բերուած այդ ամբաստանութիւնից, մի մարդ որ տեսել է ոճրագործութիւնը—որ կարող է ապացուցանել թէ ոճրագործը մի սրիկայ է որ մինչև այժմ կասկածի չէ, ենթարկուած։ Վազեցէք, աճապարեցէք. չուտ, չուտ, բերեցէք ձեզ հետ պինուած մարդին, մի դուրս դիմադրութեան հանդիպէք, բերեցէք ձեր հետ նաև մի ճարպիկ երկաթագործ, որովհետև իմ բանտակցի բանտի

դուռը հասած է և ամուր։ Ոչ, ի սէր ձեր աջ ձեռքին, ի սէր ձեր հօր աճիւններուն, մի բոլէ անդամ մի ուշանաք»։

«Մեծդ Եուպիտէր», բացականչեց Սալլուստ, վերթռչելով իր տեղից, «և այս օր—ոչ, հէնց այս ժամին, կարելի է նա կը մեռնի։ Ինչ պէտք է անել։ Ես անմիջապէս կերթամ պրէտորի մօտ»։

Ո՛չ, ոչ այդպէս։ Պրէտորը, որպէս և Պանսան, ինքը էպիտորը, ժողովրդի արարածն են. և ժողովուրդը չէ կարող լսել որև է յապաղման մասին. նրանք չեն ուզի խաբուել ակնկալութեան րոպէին խակ։ Բացի դրանից ձեր բողոքի ընդհանրացումը կարող է նախազգուշացնել խորամանկ եղիպտացուն։ Յայտնի է, որ նա մի չահ ունի այս բանտարկութիւնների մէջ։ Ոչ. բարեբախտաբար քո գերիները բոլորը տանն են»։

«Ես ըմբռնում եմ քո ասածդ», ընդմիջեց Սալլուստ, «անմիջապէս վինիր գերիներին։ Փողոցները պատրիկ են։ Մենք ինքներս կերթանք Արբակի առնը, և կպատուենք բանտարկեալներին։ Շուտ, չուտ։ Հո, Պավուան այդտեղ է, իմ վերարկուն և սանդալները, մագաղաթ և մի եղէգ *)։ Ես կը գրեմ պրէտորին և կը խնդրեմ, որ Գլոկուսի դատավճռի գործադրութիւնը յետաձգէ, որովհետև, մենք մինչև մէկ ժամից յետոյ կարելի է կարողանանք ապացուցանել նրա անմեղութիւնը։ Այսպէս, այսպէս, այդ լաւ է։ Պաւլուս, վազիր այս նամակը տար պրէտորին, ամփիթեատրոնը։ Կանգնիր, մինչև նամակը

*) Եղէգը (կալամուս) գործ էր ածւում գրելու համար պապիրուսի և մագաղաթի վրայ. առիւծը մելրամոմի և մեռածների վրայ։ Նամակները երբեմն մէկի և երբեմն մեռածի վրայ էին գրում։

յանձնուի նրա ձեռքը։ Այժմ, ով ստրուածներ, որոնց նախախնամութիւնը Էպիկուրը ուրացաւ, օդնեցէք ինձ, և ես կասեմ, որ Էպիկուրը ստախօս էր»։

Գլուխ Դ.

Գարեհալ ամփիթեատրոնը։

Գլոկուս և Օլինթուս միասին բանտարկուել էին այն մութը և նեղ խուցի մէջ, ուր արենալի ոճրագործները սպասում էին իրանց վերջին և սոսկալի մահապատմանը։ Նրանց աչքերը, սովորած լինելով խաւարին, կարողանում էին նշմարել միմեանց երեսները այս ահաւոր ժամին, և այդ աղօտ լոյսի պատճառով, այն գուշակութիւնը, որ հալածել քշել էր բնական զոյները նրանց թուլերից, ստանում էր մի ուրիշ մոխրագոյն և մեռելային սպիտակութիւն։ Այնուամենայնիւ նրանց ճակատները բարձր էին և անվեհեր—նրանց անդամները չէին դողում—նրանց շրթունքները սեղմուած էին և ամրացած։ Մէկի կրօնքը, միւսի հպարտութիւնը, երկուսի էլ անմեղ լինելու գիտակցութիւնը, և կարելի է, միմեանց ընկերակցութիւնից ստացած փոխադարձ քաջալերութիւնը, զոհերին բարձրացրել և հերոս էր չինել։

«Այժմ ես այդ աղաղակը։ Նրանք մանչում են մարդկային արեան վրայ» ասաց Օլինթուս։

«Ես լսում եմ. իմ սիրտս թուլանում է. բայց ստուածները ինձ ոյժ են տալիս»։

«Աստուածները. ով անխոհեմ երիտասարդ, այս ժամին ընդունիր միակ Աստուծուն։ Արդեօք քեզ չը տուայրի բանտի մէջ. չարտասուեցի, չաղօթեցի քեզ

համար.—իմ Ջերմեռանդութեան և իմ ապնաթի մէջ, արդեօք ես քեզ համար աւելի չը մտածեցի քան ինձ համար»։

«Ինչ բարեկամ», պատասխանեց Գլոկուս, լուրջ ձեռով, «ես ականջ եմ դրել քեզ ասողի, զարմանքով, և մի թաքուն հակում ունենալով համոզուելու։ Եթէ մեզ խնայուէր մեր կեանքը, ես կարելի է ասիճանաբար կը սովորէի հեռանալ իմ հաւատքի վարդապետութիւններից և կը թեքուէի դէպի քոնը. բայց այս վերջին ժամուս, մի երկչոտ և մի սուր բան կը լինէր չտապով աչքի տալ սարսափի առջև, և առնել մի քայլ որը պիտի հետևանք լինէր երկար խորհրդածութեան։ Եթէ ես ընդունէի քո աղանդը, և մի կողմ ձգէի իմ հօր սուրբերին, արդեօք չէր թուլ, որ ես կաշառուած եմ քո երկնքի խոստումով, ու սարսափահար եմ եղել քո դժոխքի սպառնալիքով։ Ոչ, Ջերմեռանդ, մոռ մինձանց վրայ մտածենք փոխադարձ և հաւասար բարեսրտութեամբ — ես յարգելով քո անկեղծութիւնը — դու խղճալով իմ կոյր և կամակոր քաջութեան վրայ։ Ինչ որ եղել են իմ դատերը, այն կը լինի իմ վարձատրութիւնը։ Եւ բարձունքների Ջօրութիւն զօրութեանց խոստութեամբ չը պիտի դատ մարդկային սխալը, երբ դա կրաւած է անկեղծութեան և սրտի ճշմարտութեան հետ։ Այլ ես չը խօսենք այս մասին։ Սուս, լսում ես այդ ծանր մարմինը ինչպես են քարշ տալիս անցքի միջից։ Շուտով այդ հողի նման կը լինի և մերը»։

«Ո՛վ երկինք, ով Բրիատոս, արդէն ես սեանում եմ ձեզ», գոչեց Ջերմեռանդ Օլինթոսը, բարձրացնելով իր ձեռքերը. «ես չեմ դադում—ես ցնցում եմ, որ բանաը շուտով պիտի կատարուի»։

Գլոկուս լռութեամբ կախեց իր գլուխը։ Նա զգում էր իր և իր բանտակից քաջութեան տարբերութիւնը։ Հերձանոսը չէր սարսափում, բայց քրիստոնեան ցնծում էր։

Դուռը դղրդալով բացուեցաւ—նիզակների փայլը ցոլաց բանտի պատերի վրայ։

«Ամենայն Գլոկուս, քո ժամանակը հասել է», ասաց մի բարձր և պարզ ձայն. «առիւծը սպասում է քեզ»։

»Ես պատրաստեմ», ասաց ամենայնին։ Եղբայր և ընկեր, մի վերջին զրկախառնութիւն։ Օրհնիր ինձ և մնաս բարեաւ»։

Քրիստոնեան բացաւ իր թեները—նա զրկեց երիտասարդ հերձանոսին—նա համբուրեց նրա ճակատը և թուչը—նա բարձրաձայն հեկեկաց—նրա տաք արցունքները սրագ գլորուեցան նրա նոր բարեկամի երեսի վրայ։

«Ո՛հ, եթէ ես կարողանայի հաւատքի բերել քեզ, լաց չէի լինի։ Ո՛հ, երանի թէ ես կարողանայի քեզ ասել. մենք երկուսս մրաին կը ընթրենք այս գիշեր դրախտում»։

«Գեռ կարող է այդպէս լինել», պատասխանեց յայնը, դողդոջուն ձայնով։ «Նրանք, որոնց մահը չէ բաժանում, կարող են նորից հանդիպել գերեզմանի մուտ կողմում. աչխարհի վրայ—այս գեղեցիկ և սիրելական աչխարհի վրայ, մնաս բարեաւ դը յաւիտեան.—Յարգելի պաշտօնեայ ես հետևում եմ ձեզ»։

Գլոկուս կարծես լինք իրեն պատասխ նրա կըրծքից. և երբ եկաւ դուրս, օդը, թէև անարև, այնքան տաք էր և այրեցնալ, որ կարծես չորացնելու ազդեցու-

թիւն դործեց նրա վրայ։ Նրա կազմը, որ դեռ բոլորովին չէր վերակաղդուրուել մահացու հեղուկի ազդեցութիւնից, դողդողաց և ընկճուեցաւ։ Պաշտօնեաները բռնեցին նրան։

«Քաջութիւն ունեցիր», ասաց նրանցից մէկը. դու երիտասարդ ես, աչխոյժ և ամրակազմ։ Դու ունես մի կեանք, մի վճռակութիւն, և կարելի է դեռ կը յաղթես»։

Վլոկուս չը պատասխանեց. բայց ամաչելով իր թուլութիւնից, նա մի յանդուգն և ջղաձգական ճիգ դործ դրեց և վերստացաւ իր ջղերի ամրութիւնը։ Նրանք ծծեցին նրա մարմինը, որ կատարելապէս մերկ էր, բացի միայն մի կենդանիից, որ փաթաթուած էր նրա երիկամունքի շուրջը, սալուսը (ունայն կենդանի) դրին նրա ձեռքի մէջ, և առաջնորդեցին նրան դէպի արենան։

Եւ այժմ երբ յոյնը տեսաւ հազարաւոր և բիւրաւոր աչքեր յառած իր վրայ, նա այլ ևս չը դդաց, որ ինքը մահկանացու էր։ Ամեն երկիւղի երեսից—ամեն երկիւղ —չքացած էր։ Մի կարմիր և խրոխտ զոյն տարածուեցաւ նրա դէմքի գունատութեան վրայ—նա ստացաւ իր վաստակաւոր հասակի կատարեալ բարձրութիւնը։ Իր անդամների և մարմնի առաձգական զեղեցկութեամբ, իր ուշադիր և անխոժոժ ճակատով, այն վեհ արհամարհանքով, և այն աննուաճ հոգւով, որ տեսանելի կերպով արտաչնչում էր, լսելի կերպով խօսում էր նրա կեցուացքի, նրա շրթունքի և նրա աչքի մէջից—նա երեւում էր պարզ և չջարելի մարմնացումը իր երկրի արիութեան և նրա կրօնի աստուածութեան—միևնոյն ժամանակ մի հերոս և մի աստուած։

Նրա ոճիրի համար ժողովրդի ղդացած ատելութեան և զզուանքի մրմունջը, որով հանդիսականները

ողջունել էին նրա մուտքը, լսեց և տեղի տուաւ ակամայ ակնածութեան և կէս խղճացող յարգանքի առջև. և մի արագ ջղաձգական հառաչով, որ կարծես չարժեց ամբողջ այդ կենդանի կոյտը, որպէս թէ մէկ մարմին լինէր, հանդիսականները իրանց աչքերը դարձրին աթեներայուց դէպի մի սև և կոպիտ առարկայ, որ դրուած էր արենայի կենտրոնում։ Դա առիւծի վանդակաւոր օրջն էր։

«Ո՛վ Վլոկուս, ինչ չոգ է», ասաց Փուբլիան, և սակայն արև չը կայ։ Երանի թէ այդ ախմար նաւասահները *) կարողացած լինէին ծածկել հովանոս այդ քաց մնացած մասը»։

«Ոհ, իրօք չոգ է։ Իմ սիրտս խառնուում է—ես թուլանում եմ», ասաց Պանսալի կինը. մինչև անգամ նրա վերջաւոր սառլիկութիւնը չը դիմանալով այդ մարտանի առջև, որ չուտով պիտի տեղի ունենար։

Առիւծը քանի և չորս ժամ առանց կերակուրի էր պահուել, և ամբողջ առաւօտը ցոյց էր տուել մի սարսափելի անհանդստութիւն։ Պահապանը այդ անհանգստութիւնը վերագրել էր անօթութեան տանջանքներին։ Եւ սակայն նրա վրդովմունքը աւելի երկիւղից առաջ եկած էր թուում քան կատաղութիւնից. նրա մռնչիւնը արտայայտում էր ցաւ և տագնապ. նա կախ էր գցում իր գլուխը—հոտոտում էր օդը ձողերի արանքից—ցնծում էր—նորից վեր էր թռչում—և նորից արձակում էր իր վայրի և հեռաձնչիւն աղաղակները։ Եւ այժմ իր օրջի մէջ նա պառկած էր կատարելապէս համր և մունջ. իր լայն ուսղները սեղմել էր ձողե-

*) Սովորաբար նաւասահներին էր յանձնուում ամփիթատրոնի (վելարիան) հովանին կապելու գործը։

րին և ծանր չնչառութեամբ խանդարում էր գետնի աւազը։

Էդիտորի չրթունքը դողդողաց և նրա թշերը դունատուեցան. նա անձկութեամբ նայեց իր շուրջը — վարանուեցաւ — ուշացաւ. ամբոխը սկսեց անհամբերութեան ցոյցեր անել։ Կամաց չարժումով նա նչան արեց. պահապանը, որ կանգնել էր վանդակի հետ, զգուշութեամբ բարձրացրեց վանդակի դուռը, և առիւծը դուրս թռաւ ազատութեան մի որոտալից և ուրախ մռնչիւնն արձակելով։ Պահապանը չսպասմամբ յետ քաշուեցաւ այն վանդակապատ անցքի միջով, որ առաջնորդում էր արենայից դուրս, և թողեց անտառի արքային — և նրա զոհին։

Գլոկուա այնպիսի դիրք էր ստացել որպէս զի ամուր կանգնած լինի, երբ առիւծը յարձակուի նրա վրայ. նա բարձր պահել էր իր փաքրիկ և փայլուն զէնքը այն չնչին յոյսով, որ մի միակ ուղիղ հարուած հասցնէ (որովհետև գիտէր, որ լոկ մի հարուածի ժամանակ կաննէսայ) իր դժխեմ թշնամու աչքին և այդպիսով, կարելի է, ծակէ մինչև նրա ուղեղը։

Բայց ի կատարեալ զարմացում բոլորի, գազանը կարծես չը նկատեց իսկ ոճրագործի ներկայութիւնը։

Առաջին րոպէին երբ արձակուեցաւ նա յանկարծ կանգ առաւ արենայի մէջ, կիսով չափ կանգնեց իր ետևի ոտքերի վրայ հառաւելով բարձրի օդը անհամբեր հառաչանքներով. յետոյ յանկարծ առաջ թռաւ, բայց ոչ աթենացու վրայ։ Կէս արագութեամբ նա պտոյտ արեց արենայի չուրջը, դարձնելով իր ամեհի գլուխը այս կողմից այն կողմ. նրա նայուածքը այնքան անձկալից էր և չփոթուած, կարծես մի որ և է ճանապարհ էր փնտռում

փախչելու. մէկ կամ երկու անգամ նա փորձեց վերև թռչել այն եղերքից, որ բաժանում էր հանդիսասներին արենայի յատակից, և չը յաջողուելով, արձակեց մի պարտութեան ոռնոց՝ փոխարէն իր խոր արքայական մռնչիւնին։ Նա բարկութեան կամ անօթութեան ոչ մի նչան ցոյց չէր տալիս. նրա պոչը քարշ էր գալիս աւազի վրայ՝ փոխանակ մտրակելու նրա տզոր կողքերը. և նրա աչքը, թէև երբեմն թափառում էր Գլոկուայի կողմը, բայց նորից առանց ուշադրութեան հետևում էր նրանից։ Ի վերջոյ, կարծես յոգնած լինելով ի զուր փախուստի ճանապարհ որոնելով, հառաչելով սողաց իր վանդակի մէջ և նորից պառկեց հանգչելու։

Ժողովրդի առաջին զարմանքը առիւծի հակակրութեան մասին չուտով փոխարկուեցաւ բարկութեան նրա վախկոտութեան վրայ. և Գլոկուայի համար զղացած դիմադրութիւնը արդէն խեղդուեցաւ այն ցասման մէջ, որ առաջացել էր ամբոխի յուսախաբութիւնից։

Էդիտորը կոչեց առիւծապանին։

«Այս ինչ է։ Վեր առ խթանը, նրա դուրս քչիր վանդակից և փակիր դուռը վակից»։

Մինչդեռ առիւծապանը, բաւական երկիւղով բայց աւելի զարմանքով, պատրաստուում էր հնազանդելու, մի բարձրաձայն աղաղակ լսուեցաւ արենայի մուտքերի մէկից. մի խառնաչփոթութիւն, մի աղմուկ տեղի ունեցաւ — յանդիմանութեան ձայներ յանկարծ լսուեցան ու յանկարծ պատասխան ստանալով լսեցին։ Բոլոր աչքերը զարմացմամբ դարձան դէպի այն կողմը, ուրկից այս ընդմիջումը տեղի ունեցաւ. ամբոխը ճեղքուեցաւ, և յանկարծ Սալլուստ երևաց սենատորական հագուստների մեջ. նա չնչասպառ էր — տաքացած — կէս ուշաթափ և

նրա մազերը խառն։ Նա արագ իր աչքերը ձգեց արեւնային չուրջը։ «Հեռացրէք աթենացուն», գոչեց նա, «չուտ —նա անմեղ է, բանեցէք եգիպտացի Արբակին—նա է Ալեկիւդէսի սպանիչը»։

«Խելագարուել ես, Սալլուստ», ասաց պրէտորը, վեր կենալով իր նստարանից։ «Ի՞նչ է նշանակում այս զառանցանքը»։

«Հեռացրէք աթենացուն.—Շուտով, եթէ ոչ, նրա արիւնը ձեր գլխին։ Պրէտոր, ուշացիր, և դու կեանքով պիտի պատասխանես կայսեր առաջ քո այս արարքի համար։ Ես բերել եմ իմ հետ Ալեկիւդէսի մահուան ականատես վկային։ Տեղ բացէք—լեռ կանգնեցէք—ճանապարհ տուէք—Ո՛վ Պոմպէյի ժողովուրդ, ձեր աչքերը դարձրէք դէպի Արբակ—ահա այնտեղ նստած է։ Տեղ տուէք քահանայ Կալենուսին»։

Գունատ, հիւծուած, նոր դուրս եկած սովի և մահուան ճիրաններից, երեսը կախուած, աչքերը ապուշ, որպէս մի անգղի, լայն կաղմը մի կմախք դարձած—Կալենուս բերուեցաւ մինչև հէնց այն չարքը, ուր նըստած էր Արբակ։ Նրա ազատիչները մի քիչ միայն կեցրակուր էին տուել նրան, բայց գլխաւոր ուժը, որ զօրացնում էր նրա սակաւ անդամները՝ վրէժխնդրութիւն էր։

«Քահանայ Կալենուսը—Կալենուս», գոչեց ամբոխը։ »Նա է արդեօք։ Ոչ—դա մի մեռած մարդ է»։

«Քահանայ Կալենուսն է», ասաց պրէտորը, լրջութեամբ։ Ի՞նչ ունիս ասելու»։

«Եգիպտացի Արբակն է սպանել Ալեկիւդէսին Խեմի քահանային. այս աչքերը տեսան, որ նա զարկեց հարուածը։ Այն բանտի մէջից, ուր նա ինձ փակել էր,—սովամահ անելու համար, այն տանջանքից և մթութիւ-

նից աստուածները ինձ հանել են, որ նրա ոճրագործութիւնը յայտնեմ։ Արձակեցէք աթենացուն—նա անմեղ է։

«Ուրեմն սրա համար է, որ առիւծը չը վնասեց նրան։—Մի հրաշք, մի հրաշք», գոչեց Պանսան։

«Հրաշք, հրաշք», աղաղակեց հասարակութիւնը. «հեռացրէք աթենացուն—Արբակը առիւծին»։

Եւ այդ աղաղակը արձագանք գտաւ լեռից ձոր—ծովափից ծով—«Արբակը առիւծին»։

«Պաշտօնեաներ, հեռացրէք ամբաստանեալ Գլոկուսին—հեռացրէք, բայց դեռ պահեցէք նրան», ասաց պրէտորը։ «Աստուածները թափուած են իրանց հրաշքները այս օրուայ վրայ»։

Երբ պրէտորը Գլոկուսի ազատութեան հրամանը արձակեց, ցնծութեան մի ազաղակ լսուեցաւ—մի կատաղի ձայն—մի երեխայի ձայն—և այդ ձայնը երջանկութեան ձայնն էր, դա հնչեց ժողովրդի սրտի մէջ ներքաղաքական ուժով—դա սրտաչարժ էր - դա սուրբ էր, այդ երեխայի ձայնը։ Եւ ժողովուրդը արձագանք տուաւ այդ ձայնին համակրական չնորհաւորութեամբ։

«Լռութիւն», ասաց լուրջ պրէտորը—«ով է այդ»։

«Նիդիան—կոյր աղջիկը», պատասխանեց Սալլուստ. «նրա ձեռքն է, որ բարձրացրել է Կալենուսին գերեզմանից, և ազատել է Գլոկուսին առիւծից»։

«Այդ մասին յետ այսու կը տեսնենք», ասաց պրէտորը։ «Կալենուս, Խեմի քահանայ, դու ամբաստանեմ Աս Արբակին Ալեկիւդէսի սպանութեամբ»։

«Այո ամբաստանում եմ»։

«Դու տեսար սպանութիւնը»։

«Պրէտոր,—այս աչքերով—»։

«Այժմ բաւական է այսքան—մանրամասնութիւն-

նները պիտի սպասեն մի ուրիշ յարմար ժամանակի և տեղի։ Եգիպտացի Արբակ, դու լսում ես քո դեմ բերուած ամբաստանութիւնը—դու դեռ չես խօսեցել—դու ինչ ունես ասելու»։

Ամբոխի նայուածքը երկար ժամանակ ուղղուած էր Արբակի վրայ. բայց արդէն նրա դէմքից անհետացել էր այն չիմաստութիւնը, որ ուրիշ էր նրան, երբ Սալլուստ առաջին անգամ ամբաստանել էր նրան և Կալինուս նեղս էր տեղ։ Լսելով «Արբակը ապիւծին» ազազակը, նա իրօք զղացել էր, և նրա երեսի մուխ բռնազանման գոյնը տացել էր մի ուրիշ ժզոյն երանգ։ Բայց նա շուտով վերստացել էր իր խրոխտութիւնը և ինքնատպութիւնը։ Հպարտութեամբ նա յետ դարձրեց իրեն շրջապատող անթիւ աչքերի խիթ նայուածքը. և այժմ պատասխանելով պրէտորի հարցին, նա խօսեց մանաւորապէս այն խազազ և հրճալական չեշտով, որը բնորոշ էր նրա խօսելու ձևի մէջ.—

«Պրէտոր, այս ամբաստանութիւնը այնքան մի խնդիր բան է, որ պատասխանի արժանի չէ։ Իմ առաջին ամբաստանիչը ազնիւ Սալլուստն է—Պլուտոսի ամենաւ մտերիմ բարեկամը. իմ երկրորդ ամբաստանիչն է մի քահանայ. ես չարգում եմ նրա դիտաւը և կոչումը—բայց ով Պոմպէյի ժողովուրդ, դուք ինքներդ մի բան պիտէք Կալինուսի բնաւորութիւնից—նա այնքան ազատ է և ոսկու ծարաւ, որ նրա այդ մոլութիւնը առակ է եղել. այսպիսի մարդկանց վկայութիւնը կարելի գնել։ Պրէտոր, ես անմեղ եմ։

«Սալլուստ», ասաց դատաւորը, «ձրանել գոար Կալինուսին»։

«Արբակի բանտերի մէջ»։

«Եգիպտացի», ասաց պրէտորը խոժոռելով իր կերպարանքը, «դու ուրիշն չունդնել ես բանտարկել սատանայների քահանաներից մեկին—և ինչու»։

«Լսեցէք ինձ», պատասխանեց Արբակ, հանդարտութեամբ վեր կենալով. բայց նրա յուզմունքը պարզ երևում էր նրա երեսի վրայ։ «Այս մարդը եկաւ ինձ սպասնաց թէ նա կը բերէ իմ դէմ նոյն ամբաստանութիւնը ինչ որ այժմ բերել է, եթէ ես չը տամ նրան իմ ամբողջ հարստութեան կէսը. ես բողոքեցի դրա դէմ, բայց ի զուր։ Լռութիւն այդ տեղ. թոյլ մի տուէք քահանան ընդմիջէ ինձ։ Ազնիւ պրէտոր—և ով դուք ժողովուրդ, ես օտարական էի այս երկրում—ես գիտէի, որ անմեղ եմ—բայց և այնպէս մի քահանայի վկայութիւնը կարող էր իմ կործանման պատճառ դառնալ։ Իմ չիմաստութեան մէջ թէ ինչ կարող եմ անել, ես նրան հրապուրեցի այն բանտի մէջ (ուրկից նա դուրս է բերուել), խաբելով թէ դա իմ գանձարանն է։ Ես վճռել էի նրան պահել այնտեղ մինչև ձմեռային ոճրագործի դատավճիռը դուրս գրուէր, և նրա սպառնալիքները այլևս անօգուտ դառնային. բայց դրանից առաջ վատ դիտաւորութիւն չունէինք։ Ես կարող եմ սխալուած լինել, բայց ով կայ ձեր մէջ, որ չը ընդունի անձնապաշտպանութեան իրաւունք։ Եթէ ես մեղաւոր էի, ինչու այս քահանայի վկայութիւնը լուռ էր դատաստանի ժամանակ—այն ժամանակ ես նրան չէի բանտարկել կամ թաքցրել։ Ինչու նա չը յայտարարեց իմ յանցաւորութիւնը երբ ես հեռացել էի Պլուտոսից։ Պրէտոր, այս խօսքը պատասխան է պահանջում։ Իսկ մնացորդի մասին ես ինձ յանձնում եմ ձեր օրէնքներին։ Ես հայցում եմ նրանց պաշտպանութիւնը։ Հեռացնել ուշէք այս տեղից ամբաստանողին և

ամբաստանութեան։ Ես յօժարութեամբ և ուրախութեամբ կենթարկուիմ օրինաւոր դատաստանատան վճիռներին։ Այստեղ տեղը չէ սրանից աւելի խօսակցութեան»։

«Ճշմարիտ է խօսում», ասաց պրէտորը։ «Հո, պահապաններ—հեռացրէք Արքակին—պահեցէք Կալենուսին. Սալլուստ դուք պատասխանատու էք մեր առջև ձեր ամբաստանութեան համար։ Թող խաղերը վերսկսուին»։

«Ի՞նչ», գոչեց Կալենուս, դառնալով դէպի ժողովուրդը. «արդեօք Խիսը այսպէս արհամարհանքի պիտի ենթարկուի։ Արդեօք Ապէկիդէսի արիւնը դեռ պիտի վրէժխնդրութիւն ապաղակէ։ Արդեօք արդարութիւնը պիտի անկատար մնայ այժմ, որպէս զի ապագայում չկարողանայ իր ձանապարհից։ Արդեօք առիւծի ձեռքից պիտի խլուի նրա օրինաւոր զոհը։ Մի աստուած, մի աստուած, —ես զգում եմ, որ մի աստուած խօսում է իմ շրթունքներով։ «Առիւծի—առիւծի մօտ ձգեցէք Արքակին»։

Ցանկալի ուժասպառ կազմը այլ ևս չը կարողացաւ դիմանալ նրա կատաղի ոխին. նա ընկաւ դեմին բուռն յոգնութիւնից զգալով—վրիժուրը հաւաքուեցաւ նրա բերանի շուրջը—նա լրօք նմանում էր մի մարդու, որի մէջ մտած լինի գերբնական մի զօրութիւն։ Ժողովուրդը տեսաւ և մի սարսուռ զգաց։

«Մի աստուած խօսում է սորբ մարդու բերանով։ Առիւծի մօտ ձգեցէք եգիպտացուն»։

Այդ աղաղակով վեր թռան—յառաջ չարժուեցան հազարներ հազարների ետևից. նրանք հոսեցին բարձրերից—նրանք թափուեցան եգիպտացու կողմը։ Ի զուր էդիլը հրամայեց—ի զուր պրէտորը բարձրացրեց իր ձայնը և դռռաց օրէնքի սրամտրութիւնը։ Ժողովուրդը

արդէն կատաղի էր զարձել արեան տեսարանով—նրանք ծարաւի էին աւելի արեան համար—նրանց նախապատրաստուած չարմանքին օգնում էր նրանց վայրագութիւնը։ Յուզուած—բորբոքուած իրանց զոհերի տեսարանով նրանք մոռացան իրանց կառավարիչների իշխանութիւնը։ Դա այն անգին ժողովրդական ցնցումներից մէկն էր, որ սովորական է կէս ազատ, կէս ստրուկ և կատարելապէս տգէտ հասարակութիւնների մէջ. և որը յաճախ տեղի էր ունենում Հռոմի նահանգական մասնաւոր կազմակերպութեան մէջ։ Պրէտորի իշխանութիւնը մի եղէգի էր նմանում այդ մրրիկի առջև. այնուամենայնիւ, նրա հրամանով պահակները չարուել էին ցածի նատարանների շուրջը, ուր բարձր դասակարգի մարդիկ նըստել էին, ռամիկներից հեռու։ Պահակների գիծը չատ թոյլ մի պատնէշ էր—մարդկային ծովի ալիքները մի րոպէ կանգ առան, և Արքակին ժամանակ տուին համրել իր վախճանի ձիշդ վայրկեանները։ Մի յուսահատութեամբ և մի սարսափով, որոնք խորտակում էին ամեն հպարտութիւն, նա իր աչքը զարձրեց թաւալուղ և առաջացող ամբոխի վրայ—երբ, ձիշդ նրանց գլխի վերևում, այն լայն բացուածքի արանքից, որ մնացել էր հովանոց մէջ, նա տեսաւ մի տարօրինակ և անեղ երեւոյթ—նա տեսաւ—և նրա խորամանկութիւնը վերականգնեց նրա քաջութիւնը։

Նա բարձրացրեց իր ձեռքը. նրա վեհապանծ ձահի և արքայական դիմագծերի վրայ բաղմեց անսահման հանդիսաւորութեան և հրամայականութեան մի արտայայտութիւն։

«Տեսէք», դոռաց նա մի որոտալից ձայնով, որի առջև լռեց ամբոխի մռնչիւնը. «տեսէք ինչպէս

աառուածները պաշտպանում են անմեղին։ Օրկուսի վրէժխնդիր հոգին պահում են իմ ամբաստանողների առաջ վկայութեան դէմ։

Ամբոխի աչքերը հետևեցին եղիսաբեայ ձեռքին, և անոնց անպատմելի զարհուրանքով մի անապին չոգի, որ նեռի սրընթացութեամբ բարձրանում էր վեղուվ լերան գագաթից և առնում էր չոճի ձևը *). կոճղը սեռեիին,—ճիչերը կրակ.—մի կրակ, որ ամեն րոպէ փոխոխում էր իր երանգները. մերթ կատաղագին յուսահատել, մերթ թոյլ և մարելու մօտ կարմիր և յետոյ նորից սարսափելի կերպով վայլուն, անհանդուրժելի լոյսով։

Մի մեռելային, ճնշող լռութիւն տիրեց ամբոխի վրայ, և այդ անձայնութեան միջից երբեմն լսում էր առիւծի մռնչիւնը, որին արձագանք էր տալիս նրա եղբայր գազանը չինաստեան միջից։ Անհոգ դուշակներ էին դրանք օդի լզութեան, և վայրենի մարգարէներ գալիք բարկութեան։

Յետոյ վերի կողմից բարձրացաւ կանանց ընդհանուր ձիչը. մարդիկ ապուշ ապուշ նայում էին միմեանց երեսին, բայց համր էին։ Այդ րոպէին նրանք զգացին, որ գետինը չարժւում էր նրանց առքերի տակ. թաւրտնի պատերը դողդողացին, և հետևից նրանք լսեցին առաջաւոր կուսրների զղրիւնը. մի վայրկեան էլ անցաւ, և կարծես այդ լեռնաճուխը թաւալւում էր նրանց սև կողմը. և սրընթաց, դա թաւալւում էր սև յորդութեան պէս. նոյն ժամանակ ծովը դուրս ձգեց իր կրծքից մոխրի մի տարափ՝ խառնուած վառ քարերի անապին բեկորնե-

*) Պլինեից։

րով։ Ջախջախուող որթերի վրայ—տանի փողոցների վրայ—նոյն իսկ ամիւիթատրոնի վրայ—հետու և ընդարձակ—և բազմաթիւ խլացուցիչ թնդիւնների հանելով ալեկոծ ծովի մէջ,—տեղում էր այդ ահաւոր տարափը։

Այլ ևս չէր մտածում ամբոխը արդարութեան կամ Արրակի մասին. ապահովութիւն իրանց անձերի համար —ահա այդ էր նրանց միակ մտաղրաղութիւնը։ Իւրաքանչիւր մարդ երեսը դարձրեց և սկսեց փախչել. իւրաքանչիւր մարդ բաղխում, ճզմում, հրում էր միւսին՝ ճանապարհ բանալու համար։ Անհոգութեամբ ոտնակոխ անելով ընկածներին—հառաչանքների, հայհոյանքների, աղօթքների, և յանկարծական ձիչերի մէջ վիթխարի խուժանումը դուրս էր հոսում բազմաթիւ անցքներից։ Ո՛ւր փախչեն։ Ոմանք մտածելով, որ մի երկրորդ երկրաշարժ պիտի լինի՝ չուսպում էին դէպի տունը, որպէսզի վերցնեն իրանց թանկագին իրեղէնները և փախչեն քանի դեռ ժամանակ ունին. ոմանք, սարսափելով մոխրի տարափներից, որոնք այժմ թափւում էին փողոցների վրայ, հեզեզ հեզեզի հանից, վազում էին ամենամօտ տների, տաճարների, յարկերի կամ որ և է ապաստանի պաշտպանութեան տակ, և խոյս էին տալիս բաց օդի արհաւիրքներից։ Սակայն աւելի մութ, աւելի հակայ և աւելի հզօր էր գառնում ամպը նրանց գլխի վերև։ Մի յանկարծական և զարհուրելի դիչեր չարձակուել էր միջօրէի պետութեան վրայ։

Գլուխ Ը.

Բանաբերկեալի խոսքը և մեռելների փոսը։ Տառապանքը անղդայ է դեպի արհաւիրքը։

Գլոկուս ապշած իր փրկութիւնը տեսնելով, և կասկածելով թէ ինքը արթուն է, արհեստի պաշտօնեաների առաջնորդութեամբ տարուեցաւ մի փոկրիկ խուց՝ Թատրոնի շինութեան մէջ։ Պաշտօնեաները մի թոյլ վերարկու ձգեցին նրա վրայ և հաւաքուեցան նրա շուրջը զարմացմամբ և չնորհաւորելով նրան իր փրկութեան առթիւ։ Մի անհամբեր և սրտաճմլիկ ազազակ լսուեցաւ խուցի դրսից. խումբը ճանապարհ բացաւ, և կոյր աղջիկը առաջնորդուած մի բարեսիրտ մարդու ձեռքով ընկաւ Գլոկուսի ոտքերը։

«Ես էի որ փրկեցի քեզ», հեկեկաց նա, «այժմ թող մեռնեմ»։

«Նիդիա, զաւակս,—իմ ազնուարարս»։

«Օհ, թող գլամ քո հպարտութիւնը—քո չունչը։ Այո, այո, դու կենդանի ես։ Մենք չենք ուշացել։ Այդ սոսկալի գուռը, կարծում էի, որ երբեք չի բացուի. և Կալենուսը—օհ, նրա ձայնը նմանում էր քամու վերջին շունչերին դերեզմանների մէջ.—մենք սոխակուեցանք ապաւել,—աստուածներ իմ, կարծես ամբողջ ժամեր անցան մինչև կերակուրը և պինդն մի քիչ այժ տուին։ Բայց դու կենդանի ես, դու դեռ կենդանի ես։ Ես էս—ես փրկեցի քեզ»։

Այս սրտաշարժ տեսարանը չուտով ընդմիջուեցաւ այն դէպքով, որ մենք հենց նոր նկարագրեցինք։

«Լեռը, երկրաշարժը», արձագանք տուին ամեն կողմից։ Պաշտօնեաները վախան միւսների նման. նրանք

թողեցին Գլոկուսին և Նիդիային, որ ինչպէս ուզում են ապրեն վախչեն։

Երբ ամենացին ըմբռնեց չրջապատող վտանգի սպառնալիքը նրա ազնիւ սիրտը դարձաւ Օլինթուսի վրայ։ Նա էլ ազատուել էր վագրից աստուածների ձեռքով. արդեօք կարելի էր թողնել նրան, որ մեռնի մերձակայ խուցի մէջ մի ոչ նուազ սոսկալի մահով։ Բռնելով Նիդիայի ձեռքը, Գլոկուս չտապմամբ վազեց անցքից և հասաւ քրիստոնեայի խուցը. նա տեսաւ, որ Օլինթուս ծունկ չբերած աղօթում էր։

«Ելիր, ելիր, իմ բարեկամ», գոչեց նա։ «Փախիր և ազատուիր։ Տես, բնութիւնը քո առիթ ազատարարն է դարձել»։ Նա դուրս բերեց ապշած քրիստոնեային և ցոյց տուեց մի ամպ, որ առաջանում էր աւելի և աւելի մութ, տեսնելով մռնչի տարափներ և սունկ քարեր.—և նրա ուշադրութիւնը դարձրեց երես եկած ամբոխի դղրդալից վախուտի վրայ։

«Սա Աստուծոյ ձեռքն է—Օրհնեալ լինի նրա անունը», ասաց Օլինթուս «ջերմեռանդութեամբ։

«Փախիր, փախիր քո եղբայրներին. խորհեցէք միասին ձեր վախուտի մասին։ Մնաս բարեաւ»։

Օլինթուս չը պատասխանեց և ոչ էլ նա տեսաւ իր բարեկամի հեռացող ձևը։ Լուրջ և վեհ մտքեր ալիքել էին նրա հոգու վրայ, և իր յուզուած սրտի ոգևորութեան մէջ նա աւելի ցնծում էր Աստուծոյ ողորմութեամբ քան սարսափում նրա զօրութեան յայտնութիւնից։

Ի վերջոյ նա ուշքի եկաւ, և սկսեց արտօսրալով առաջանալ, ինքն էլ չը գիտէր թէ դէպի ուր։

Նրա ճանապարհի վրայ յանկարծ երևաց մի մութ և դատարկ խուցի բաց դռները. խաւարի մէջ պլպլում

էր մի միակ լամպ. և այդ լույսով նա տեսաւ երեք դաժան և մերկ դիակներ ընկած գետնի վրայ։ Նրա ոտքերը յանկարծ կանգ առան, որովհետև այդ դժխեմ խումբ ասկանդներից—արենալի ամֆիթատրոնի միջից—նա լսեց մի ցած ձայն, որ բարբառում էր Քրիստոսի անունը։

Նա չը կարողացաւ դիմագրել այդ բողոքին. նա մտաւ խուցը և նորա ոտքերը թմրախուճեան այն արիւնի մէջ, որ հոսում էր ջուգի վրայ դիակների վերքերից։

«Ո՞վ է», ասաց նազովրեցին, «որ կոչում է Աստուծոյ Որդու անունը»։

Ոչ մի պատասխան չեկաւ. և Օլինթոս պատուելով, ճրագի լույսով տեսաւ մի ծեր ոսկեհագազ մարդ, որ նստած է գետնի վրայ, և իր ծնկի վրայ առած էր մեռածների մեկի դլուխը։ Մեռեալի դիմագծերը ամուր և խիստ կերպով սեղմուած էին վերջին քնի մէջ. բայց նրա շրթունքի վրայ դեռ կարծես խաղում էր մի կատաղի ժպիտ—ոչ թէ քրիստոնեական յուսոյ ժպիտը՝ այլ ատելութեան և անընկճելիութեան ցամաքարական ծաղրը։ Նրա երեսի վրայ դեռ մնում էր երիտասարդութեան գեղեցիկ կոլորակութիւնը։ Նրա խիտ և փայլուն մազերը դանդուրներով թափուած էին նրա անկընճիռ ճակատի վրայ. և այրուածքը վեհասլաց ճակատի վրայ էր նրա անգղային թշերը։ Եւ այս երեսի վրայ թեքուած էր մի ուրիշ երես այնքան անոսանելի սիրուհիութեամբ—այնքան տենչալից և գորովալից խանդով—այնքան սիրալից և խորին յուսահատութեամբ։ Մերթընդ մերթ արտասուքները արագ իջնում էին, բայց ինքը չէր զգում այդ. և երբ նրա շրթունքները չարժուեցան, և նա մեքենայաբար արտասանեց իր յուսալից և օրհնեալ հաւատքի

աղօթքը, ոչ նրա սիրտը և ոչ նրա ղգացումը համապատասխանում էին աղօթքի բառերին. դա մի տեսակ ակամայ յուզմունք էր, որ դուրս էր թռչում նրա հոգու թմրածութիւնից։ Նրա աղան մեռած էր. և մեռած էր նրա համար,—և ծերունու սիրտը բեկանուած էր։

«Մեզմն»» ասաց Օլինթոս, խղճալով «վեր կաց և փախիր։ Աստուած բազմել է տարերքի թևերի վրայ։ Նոր Դամոբը գետապարտուած է։—Փախիր նախ քան բոցերը այրեն քեզ»։

«Նա մէլա այնքան լի էր կեանքով. նա չէ կարող մեռած լինել։ Ե՛կ այստեղ—ձեռքդ դիր նրա սրտի վրայ —անտարակոյս դա դեռ բաբախում է»։

«Եղբայր իմ, հոգին վախել է։ Մենք կը լինենք նրան մեր աղօթքներում։ Դու չես կարող նորից կեանք տալ համր կաւին։ Ե՛կ, ե՛կ—լաւ մէնդեռ խօսում եմ, այն պատերն ընկնում են—լաւ—այն տաղնապալից ձայները։ Մի րոպէ անգամ չէ կարելի կորցնել։—Ե՛կ»։

«Ես ոչինչ չեմ լսում», ասաց Մեզոն, չարժելով իր ահեղ գլուխը։ «Խեղճ ազատ, նրա սէրը սպանեց նրան»։

«Ե՛կ, ե՛կ նախիր այս բարեկամական բռնութիւնը»։

«Ի՛նչ, ոմ է ուզում բաժանել հօրը որդուց»։ Եւ Մեզոն ամուր գրկեց այդ դիակը, և խանդակաթ համբոյրներով ծածկեց դրա երեսը։ «Գնա», ասաց նա, մի վայրկեան բարձրացնելով իր երեսը։ «Գնա, մենք պէտք է միայնակ լինենք»։

«Աւազ», ասաց բարեսիրտ նազովրեցին, «մահը արդէն ձեզ բաժանել է»։

Ծերուկը չատ հանդարտութեամբ ժպտաց։ «Ո՛չ, ո՛չ, ոչ, «մրմնջաց նա երբ ձայնը իջնում էր ամեն մի բառի հետ,—«Մահն ուրիշ դիմասիրտ է եղած»։

Այս խօսքերով նրա դլուխն ընկաւ իր որդու կրծքի վրայ—նրա թևերը թուլացան։ Օլինթոս բռնեց նրա ձեռքից—երակը արդէն այլ ևս չէր բաբախում։ Հօր վերջին բառերը ճչմարտութեան բառեր էին—«Մահն աւելի դիտաւորեալ էր եղած»։

Նոյն միջոցին Գլոկուս և Նիզիան արագ արագ անցնում էին վտանգաւոր և սարսափելի վողոցներից։ Ամենացին լսել էր իր փրկչուհուց, որ Իօնէն դեռ Արքակի տանն էր։ Եւ այնտեղ նա այժմ թափում էր նրան ազատելու—փրկելու։ Այն մի քանի սորուկները, որոնց եգիպտացին թողել էր տանը, երբ նա երկար թափորով առաջացել էր դէպի ամիսիթեատրոնը, չէին կարողացել դիմադրել Սալլուստի զինուած խմբին. և յետոյ երբ հրաբուղխը բացուեցաւ, նրանք ապուշ կտրած և ահաբեկուած հաւաքուել էին տան ամենանաներքին անկիւնը։ Նոյն իսկ բարձրահասակ եթովպացին լքանել էր իր տեղը դրան մօտ. և Գլոկուս (որ Նիզիային թողել էր դուրսը—խնդճ Նիզիան, որ նորից նախանձոտ էր դարձել նոյն իսկ այդպիսի մի ժամում) անցաւ ահագին սրահից առանց հանդիպելու մի էակի» որից կարողանար հարցնել Իօնէի սենեակը։ Մինչդեռ նա գնում էր, երկընքի սքեսիթիւնը այնքան արագութեամբ սատկանում էր, որ նա դժուարութեամբ էր կարողանում ուղղել իր քայլափոխները։ Պահակազարդ սիւները կարծես երերում և դողդողում էին. և ամեն րոպէ նա լսում էր մոխրի մկրճիւնը, որ թափւում էր անկուսր պերիստիլի մէջ։ Նա բարձրացաւ վերի սենեակները—չնչասպառ անցնում էր այս և այն կողմ և բարձրաձայն կոչում էր Իօնէի անունը. և վերջապէս գալերիայի ծայրից նա լսեց մի ձայն—նրա ձայնը, որ զարմացմամբ պատասխանում

էր։ Առաջ թռչել—դուռը չախչախել—Իօնէին առնել թևերի մէջ—և դուրս վազել անից—մի րոպէի գործ թուաց նրան։ Հազիւ հասել էր այն տեղ, ուր Նիզիան կանգնած էր, որ նա լսեց քայլերի ձայներ, որոնք մերձենում էին տանը, և ճանաչեց Արբակի ձայնը. նա վերադառնում էր առնելու իր դանձը և Իօնէին և յետոյ Պոմպէից փախչելու։ Բայց այնքան թանձր էր մթնած ծուխը, որ թշնամիները չէ տեսան միմիանց, չէ նայելով, որ նրանք այնքան մօտիկ էին. միայն Գլոկուս խաւարի մէջ նշմարեց եգիպտացու ձիւնափայլ զգեստների չարժուն եղերագիծը։

Նրանք չտապեցին դէպի առաջ—այդ երեքը։ Աւազ, ո՛չ։ Նրանք այժմ մէկ քայլ չէին տեսնում իրանց առջև—սեւթիւնը կատարեալ էր։ Կասկածը և սարսափը շրջապատել էին նրանց. և Գլոկուսին այնպէս էր թուում թէ այն մարը, որից ազատուել էր, լոկ փոխել էր իր ձևերպարանքը և բազմատկել իր զոհերը։

Գլուխ Զ.

Պալենուս և Բուլբոս։—Պիտեկ և Գլոկուս։ Ամփիթեատրոնի աղջիկը և Ջուլիան։

Այդ յանկարծահաս ազէտը, որ կարծես կտրատել էր ընկերութեան կապերը, և բանտարկեալին ու բանտապահին տուել էր հաւասար ազատութիւն, չուտով Պալենուսին հասնեց այն պաշտօնեաների հսկողութեան տակից, որոնց պրէտորը յանձնել էր նրան։ Եւ երբ մթնութիւնը և ամբոխը բաժանեցին քահանային իր քահանապահներից, նա դողդոջուն քայլով ճամպարեց դէպի իր ատուածուհու տաճարը։ Մինչդեռ նա սողում

էր, և նախ քան մթնելը կատարել եղաւ, նա ղրկաց, որ մեկը բռնեց նրա ղեկաններից, և մի ձայն մրմնջաց նրա ականջին,—

«Լաւ է,—Կալենուս,—մի սակաւ ժամ է»։

«Այո, հօրս մարմնի վկայ։ Դու ճշ ես—քո երեսը մութն է և քո ձայնը անծանօթ»։

«Չես ճանաչում քո Բուրբոլին.—թռչի»։

«Աստուածներ—ինչպէս մթնելը թանձրանում է։ Հօ, հօ, այդ զարհուրելի լեռը վկայ, ինչ չանկարծական փալաքներ *)։—Ինչպէս նրանք ցոլում և գոլորշում են։ Հոգիների աչխարհը (Հադէս) արձակուել է մեր երկրի վրայ»։

«Փա՛ռ,—դու չես հաւատում այդ բաներին, Կալենո՛ւս։ Այժմ ժամանակ է, որ մենք հարստութիւն գիտենք»։

«Հմ»։

«Լաւ։ Ես տաճարը լի է ոսկով և թանկագին իմաստութիւններով, եկ երթանք վերցնենք այդ բաները և լեռայ մտնենք նաւը և հեռանանք։ Ոչ ոք այսօրուայ արածներից հաչիւ չի հարցնի»։

«Բուրբո՛, ձչմարիտ ես խօսում։ Սուս կաց և հետևիր ինձ տաճարի մէջ։ Ո՛վ հոգ ունի այժմ—ով է տեսնում հիմայ—որ դու քահանայ ես կամ ոչ։ Հետևիր և մենք կը կիսենք»։

---

*) Հրաբղխային փալաքներ։ Այս երևոյթները մանրամասն բնորոշ էին 1779-ի պայթման ժամանակ, և նրանց ապացոյցները դեռ ևս տեսանելի են այն նշանների մէջ, որոնք ձեռակել են այս աւելի սակաւ պայթիւնից, որը, այսքան անհամասեր կերպով նկարագրուած է այստեղ։

Տաճարի մէջ շատ քահանաներ կային հաւաքուած ուղտաններին չուրջը, ուր աղօթում էին, արտասուում էին և խարխափում հոգի մէջ։ Խարեբաներ լինելով ապահովեան ժամանակ, նրանք ոչ նուազ ահելորդապաշտ էին վտանգի րոպէին։ Կալենուս անցաւ նրանց մօտից, և մտաւ այն սենեակը, որ այժմ էլ կարելի է տեսնել դաշի հարաւային կողմում։ Բուրբոն հետևեց նրան—քահանան մի լոյս վառեց։ Գլխի և կեռակուրները թափուած էին ուղտանի վրայ, որոնք մնացել էին մի զոհարերական խնջոյքից։

«Մի մարդ, որ քառասուն և ութը ժամ ոչինչ չէ կերել», մրմնջաց Կալենուս, «մինչև անգամ ալապիսի ժամում էլ ախորժակ ունի»։ Նա բռնեց կեռակուրները և ագահութեամբ կլանեց։ Կարելի է ոչ մի բան այնքան անբնական կերպով զզուելի չէ, որքան այս արիկանների նուաստ հասարակութիւնը. որովհետև ոչ մի բան այնքան զարշ չէ, որքան ագահութեան քաջութիւնը։ Կողոպուտ և արբագործութիւն, մինչդեռ աչխարհի սիւները դողդողում են։ Ինչքան կարելի է աւելացնել բնութեան առանքները մարդու մոլութիւններով։

«Էլ չես վերջացնի», ասաց Բուրբոն անհամբերութեամբ. «քո երեսը ծիրանագոյն է դառնում և քո աչքերը արդէն դուրս են թռչում»։

«Ամեն օր մարդ լրատուութ չունի այսքան անօթի լինելու։ Ո՛ն, նուագիկը, ինչ ձայն է այդ—բոցավառ ջրերի սուլոցը. ինչ այդ ամպը անձրև էլ է թափում կրակի հետ։ Հա՛, ինչ, ձիչեր։ Նե՛ Բուրբո՛, նայիր, ինչպէս լուռ է ամեն բան հիմայ»։

Ի միջի այլոց, արեւաբաղխ լեռը այժմ սկսեց դուրս ձգել եռուն ջրի սիւներ։ Խառնուած և խմորուած կիսա-

վառ մոխիրներով, այդ հոսանքները սկսեցին եփուած ջրի նման յաճախ հեղուիլ փողոցների վրայ։ Եւ ճիշդ այնտեղ, ուր Խալխ քահանաները հաւաքուած ի դուր փորձում էին կրակ վառել և կնդրուկ ծխել, այդ մահաւոր հեղեղների ամենաստոկալինիներից մէկը, խառնուած հրահրեաց կզկզանքներով, թափեց իր մոլեգնութիւնը։ Դա բաղխուեցաւ քահանաների թեքուած կազմուածքներին. այդ ճիշը մահաւան ճիչ էր եղած—այդ լռութիւնը յաւիտենականութեան։ Մոխիրները—ձիւթային հեղեղները ցայտեցին սեզանների վրայ, ծածկեցին յատակը և կիսով չափ թաքցրին քահանաների դողդոջուն դիակները։

«Մեռան», ասաց Բուրբօն, առաջին անգամը ամբակուելով, և նորա վազելով խաւսի մէջ։ «Ես չէի կարծում, որ վառնդը այսքան մօտիկ լինի և մահացու»։

Երկու թշուառականները կանգնեցին իրանց աչքերը յառած մխիճանց վրայ—մարդ կարող էր լսել նրանց սրտերի բաբախիւնը։ Կալենուս, նաւազ յանդուգն բնութեամբ, բայց աւելի ագահ, առաջ ուչքի եկաւ։

«Պէտք է վերջացնենք մեր գործը և հեռանանք», ասաց նա ցածրաձայն մրմունջով, և սարսափելով իր ձայնից։ Նա դուրս եկաւ չէմքից, կանգ առաւ, անցաւ հրահրած յատակի և իր մեռած եղբայրների վրայից, մտաւ մառուր, և Բուրբօին կոչեց, որ հետևէ նրան։ Բայց գլադիատորը ասկաց և չեա քաշուեցաւ։

«Աւելի լաւ», մտածեց Կալենուս. «իմ մասն աւելի կը լինի»։ Ամենայն արագութեամբ նա հաւաքեց սառարի թեթև դանձերը, և դուրս գնաց սրբազան վայրից առանց մոռնալու իր ընկերոջ վրայ։ Լերան մի յանկարծական փայլակը վախչող քահանային երևացրեց Բուր-

բօին, որը անչարժ կանգնած էր չէմքի մէջ։ Նա սիրտ առաւ. ոտքը դուրս դրեց, որ երթայ հասնի նրան, երբ մոխրի մի վիթխարի սարսափ ուղղակի ընկաւ նրա ոտքերի առջև։ Գլադիատորը դարձեալ չեա ընկրկուեցաւ։ Խաւարը չրջապատեց նրան։ Բայց սարսափը չարունակում էր արագ—արագ. նորա խեղդիչ կոյտերը բարձրանում էին—Սահացու չոգիներ արտաչնչում էին նրանցից։ Թշուառի չունչը կապ ընկաւ—նա վհատութիւնից իղուր փորձեց փախչել—մոխիրները խցել էին ելքը—նա ճչում էր երբ նրա ոտքերը դալչում էին խաշող հեղուկին։ Ի՞նչպէս էր կարող փախչել. նա չէր կարող բարձրանալ օդի մէջ. ա՛խ, եթէ կարողանալ էլ նա չէր կարող դիմանալ նրա արհաւիրքներին։ Ամենից լաւ միջոցն էր մնալ խաւսի մէջ, որը դէթ պաշտպանուած էր սաստկիչ օդից։ Նա նստեց և սկսեց կրծել իր սառամները։ Ասիճանաբար դրսի հեղձուցիչ և թունաւոր օդը սկսեց սողալ սենեակի մէջ։ Նա այլևս չը կարողացաւ դիմանալ։ Նրա աչքերը լայն բացուած և պատելով ամեն կողմ նկատեցին մի սրբազան սառար, որը մի քահանայ թողել էր սենեակի մէջ. նա վերցրեց այդ։ Իր հակայական թևի յուսահատ զօրութեամբ, նա փորձեց պատը կտրել և ճանապարհ բանալ իր համար։

Նոյն միջոցին փողոցները արդէն դատարկուել էին. ամբոխը ցրիւ էր եկել և մտել պաշտպանութիւնների տակ. մոխիրը սկսեց լցնել քաղաքի ցածր մասը. բայց տեղ տեղ նորից լսւում էին փախստականների քայլերի ձայնը, որոնք զգուշութեամբ անցնում էին նրանց վրայից. տեղ տեղ փայլակների կապոյտ լոյսով տեսնում էին նրանց դժգոյն և թշուառ երեսները, և ոմանք էլ ցայտնում էին աւելի անհաստատ լոյսովը այն ջահերի,

որոնցով նրանք ուզում էին ճանապարհ գտնել։ Բայց ցաճախ եռուն ջուրը, թափառուն մոխիրը, կամ խորհրդաւոր և ուժգին քամիները, որոնք փչում և դադարում էին մէկ չնչով, հանդգնում էին այս աստանդական լոյսերը, և նրանց հետ նրանց կրողների վերջին կենդանութեան յոյսը։

Այն փողոցի մէջ, որ առաջնորդում էր դէպի Հերկուլանում տանող մեծ դուռը, Կլոդիուս այժմ չարունակում էր իր չուարած և կասկածաւոր ճանապարհը։ «Եթէ ես կարողանամ դուրս գալ բոց դաշտի մէջ», մտածում էր նա, «անտարակոյս քաղաքի դուրսը չատ կտրքեր կը լինին, և Հերկուլանում չատ հեռու չէ։ Փառք Մերկուրին, ես քիչ բան ունիմ կորցնելու, և այդ քիչն էլ իմ վրայ է»։

«Հոլլա, — օդնութիւն աստեղ — օդնութիւն», գոչեց դանդատ և սարսափ արտայայտող մի ձայն։ «Ես վայր եմ ընկել — իմ ջահս հանգել է — իմ գերիները լքանել են ինձ։ Ես Դիոմէդն եմ — հարուստ Դիոմէդը, — ասաը սիտեցրս այն մարդուն, որ օգնէ ինձ»։

Նոյն րոպէին Կլոդիուս զգաց, որ մէկը բռնեց իր ոտքը։ «Դրմզը ատնի քեզ, — թող երթամ, լմնար», ասաց խաղատոլը։

«Ո՛հ, օգնիր ինձ վերկենամ, ձեռքդ տուր ինձ»։

«Հա — վերկաց»։

«Այս Կլոդիուսն է։ Ես ճանաչում եմ ձայնը։ Ո՛ւր ես փախչում»։

«Հերկուլանում»։

«Փառք աստուածներին, ուրեմն մեր ճանապարհը միևնոյնն է մինչև քաղաքի դուռը։ Ինչու չես ուզում ապաստանել իմ ամարանոցիս մէջ։ Դու տեսել ես այն

երկար դեռնափոր մատաններըը չինուհիան տակ — Ի՞նչ տարափ կարող է թափանցել այդ ապաստանի մէջ»։

«Այո՛ ես տասւմ», ասաց Կլոդիուս խոհուն եղանակով։ «Ես մատանի մէջ կերակուր ամբարելով մենք կարող ենք մի քանի օր այնտեղ մնալ, եթէ այս զարմանալի վտիտրիկները այդքան ժամանակ չարունակուին»։

«Ո՛հ, օրհնեալ լինի այն մարդը, որ քաղաքի համար դռներ հնարեց», գոչեց Դիոմէդ։ «Ցնծ, մի ձրագ են դրել այն կամարի տակ. դրա օդնութեամբ մենք կարող ենք ուղղել մեր քայլերը»։

Օգը այժմ մի քանի րոպէ հանդարտեց. դրան ձրագը պարզ լոյս էր սփռում. փախստականները առաջացան — նրանք հասան դրանը — նրանք անցան հռոմայեցի պահակի մօտից. կայծակը չոզում էր նրա կապոյտ երեսի և չզգուած սաղաւարտի վրայ. բայց նրա խիտ դիմադծերը ամփոփ էին նոյն իսկ իրանց ահաբեկութեան րոպէին։ Նա կանդնած էր ուղիղ և անչարժ իր պաշտօնի վայրում։ Մինչև անգամ այդ ժամը Հռոմի անդութ վհատութեան մեքենային կեանք չէր տուել և չէր դարձրել բանական և ինքնակամ գործող մարդ։ Այնտեղ նա կանդնած էր հրատարակի տարերքի տակ. նա հրաման չէր տացել թողնելու իր պաշտօնավայրը և փախչելու *)։

Դիոմէդ և նրա ընկերը չտապմամբ առաջացան, երբ չանկարծ մի կանացի կազմուածք կտրեց նրանց ճանապարհը։ Դա այն աղջիկն էր, որի չարագուշակ ձայնը

*) Սեփի քան մէկ պահակի կմախք գտնուեցաւ իր պաշտօնավայրում։

այնքան յաճախ և այնքան ցնծութեամբ բարձրացել էր ի նպաստ «ցնծաւէթ տեսարանի»։

«Ո՛հ, Դիմիէդ», գոչեց նա, «ապաստան, ապաստան։ Տես, — ցոյց տալով մի երեխայի, որ կպած էր նրա կրծքին, «տես այս փոքր երեխային։ — Իմս է, — այս ամօթանքի երեխան։ Մինչև հիմա չեմ յայտնել, որ ես դրա մայրն եմ։ Բայց այժմ ես լիշում եմ, որ ես մի մայր եմ։ Ես վերցրի նրան նրա դայեակի օրօրոցից. նա փախել էր. ոմն կարող էր մտածել երեխայի վրայ այսպիսի մի ժամում, եթէ ոչ նա, որ ծնել է նրան։ Փրկիր նրան, փրկիր նրան»։

«Անէծք քո սուր ճանկիդ վրայ։ հեռացիր, բոզ», մրմնջաց Կլոդիուս կրճտելով իր ատամները։

«Ո՛չ, աղջիկ», ասաց ամէն մարդկանէր Դիմիէդ։ հեռանիր մեզ եթէ ուզում ես։ Այս կողմ — այս կողմ — դէպի կամարները»։

Նրանք առաջ անցան — նրանք հասան Դիմիէդի տունը — նրանք բարձրացան ծիծաղելին հենց որ հասան տան չէմքին, մտածելով, որ վտանգը անցել էր։

Դիմիէդ իր զերիներին հրամայեց վերը նկարագրուած մատանների մէջ տանել առաւօ կերակուր և խմել լոյսի համար, և այնտեղ ազատատանեցին Ջուլիան, Կլոդիուսը, մայրը և իր զաւակը, զերիների մեծ մասը և մի քանի ահաբեկուած այցելուներ և կլիէնտներ, որոնք եկել էին շրջակայքից։

Գլուխ Է.

Կործանման չարաճակութիւնը։

Այն Ամպը, որ այնպիսի մի թանձր մթութիւն էր տարածել ցերեկուայ լոյսի վրայ, այժմ դարձել էր մի անթափանցելի կոյտ։ Դա աւելի նմանուում էր մի նեղ սենեակի ծանր և չօշափելի խաւարին, քան թաց օդի մէջ սրևէ պլէներուայ ամենասաստ մթութեանը *)։ Բայց որքան որ մթութիւնը հաստատուած էր, նոյնքան էլ կործանիչները աւելի սարդ և աւելի խանձիչ վայել էին առնում վեզուվի շուրջը։ Նրանց ահաւոր գեղեցկութիւնը սահմանափակուած չէր կրակի սովորական երանգների մէջ. ոչ մի ծիածան երբէք չէր կարող տրցել նրանց բազմազան և ճոխ գոյների հետ։ Մերթ պայծառ կապոյտ ինչպես ամենաջինջ կապուտութիւնը հարաւային երկինքների — մերթ մի կապտախառն և օձանման կանանչ, որ անհանգստութեամբ ցասկում էր այս և այս կողմ, ինչպես մի ահագին օձի օղակները — մերթ մի մութ և անհանգստացնելի կարմիր, զարս հոսելով ծուխի սիւների միջից տարածուելով հեռու և լուսաւորելով ամբողջ քաղաքը կամարից կամար — մերթ յանկարծ մարելով և աւելով մի հիւանդոտ գունատութիւն, ինչպես իրանց կեանքի ողին — փալատակում էին հրաբղխի կործանները։

Տարափների դադարների միջոցին, լսում էին երկրի դղրդիւնը ներքևից, և խռոված ծովի հառաչանքները. կամ աւելի խուլ և, լսելի միայն ամենամեծ երկիւղով սրտած լռութեան, ազատքի ձայնի պէս սու-

---

*) Պլինեսից։

վիչ մրմունջները այն դաղերին, որոնք փախչում էին հեռաւոր լերան անդունդներից։ Երբեմն կարծես ամպը անջաւում էր իր կարծր կոյակից և փայլակի միջոցով առանում էր մարդկային կամ հրէշային ձևեր, որոնք քայլում էին մթնոլորտի երեսին, ընդհարւում միմեանց դէմ, և արագ անհետանում առուների չիմի քաոսի մէջ. այնպէս որ առաջին թափառականների աչքերի և երևակայութեան առջև, այդ անմարմին չոգինները թուում էին հսկայական թշնամիների մարմնական ձևերը — զարհուրանքի և մահուան գործակիրները *)։

Մախիրը չատ տեղերում արդէն մինչև մարդկանց ծնկները էր հասնում. և եռուն առուները, որոնք թափւում էին հրաբղխի չոգիացած չունչից, մանում էին անների մէջ, բերելով իրանց հետ մի ուժեղ և հեղձուցիչ գոլորշի։ Մի քանի տեղերում, ժայռերի անապին կատրներ, ձգուելով կատարների վրայ, փողոցները լցնում էին աւերակների բեկորներով, որոնք աւելի և աւելի արգելք էին լինում անցուդարձին. և որքան օրը առաջանում էր, երկրի չարժումը աւելի զգացում էր—գետինը կարծես սահում և սողում էր մարդկանց ոտքի տակ—ոչ կառք և ոչ էլ պատգարակ չէին կարող հասատանն պահուիլ, նոյն իսկ ամենահարթ գետնի վրայ։

Երբեմն մեծ մեծ քարեր, ընկնելու ժամանակ բաղխում էին միմեանց, և փշրւում անթիւ կտորներ էին գառնում. նրանցից ցայտում էին կրակի կայծեր, որոնք վառում էին ամեն կիզելի նիւթ, որ մօտիկ էր նրանց. և քաղաքից դուրս դաշտերի մէջ մեծ հրկիզութիւններ էին տեղի ունենում, որովհետև չատ աներ և նոյն իսկ

*) Գիան Կատսիուս։

այգեստաններ այսպիսով կրակ էին բռնել. և մերթ ընդ մերթ լոցերը յանկարծ և կատաղութեամբ հալածում էին թանձր խաւարը։ Քաղաքացիները, վանելու համար մթութիւնը, տեղ տեղ, հասարակաց վայրերում, գործնական տաճարների պորտիկոների մէջ և փորումի մուտքերում, դրել էին ջահեր. բայց այս ճրագները երկար չէին տևում. տարափները և քամիները հանգցնում էին նրանց, և այն խաւարը, որ յանկարծ տարածւում էր, մի ինչ որ բան ունէր իր մէջ, որ երկպառիկ սարսափով և երկպառիկ տպաւորութեամբ դրոշմում էր յուսահատութեան կնիքը մարդկային յոյսերի անկարողութեան վրայ։

Ցաճախ, այս չահերի բռպէական լոյսերով, վախատական խմբեր հանդիպում էին միմեանց. նրանցից ոմանք ամպարում էին դէպի ծով, և ոմանք ծովից դէպի ցամաք. որովհետև ովկեանը ամենայն արագութեամբ էտ էր քաշուել ցամաքից — մի կատարեալ խաւար տարածուած էր ջրի երեսին, և նոցա թաւալումն և հառաչող հոնակների վրայ մոխրի և ժայռերի տարափը թափւում էր առանց այն պաշտպանութեան, որ մարդիկ գտնում էին ցամաքի վրայ, փողոցներում և տարկերի տակ։ Վայրենացած, դաժանացած, մեռնելային կերպարանքներով և դիրքնական երկիւղով այս խմբերը հանդիպում էին, բայց ժամանակ չունէին միմեանց հետ խօսելու, խորհրդակցելու կամ վախատարձ խորհուրդներ առնելու. որովհետև տարափները այժմ թափւում էին աւելի չատ, թէև ոչ չարունակաբար, հանգցնելով այն ճրագները, որոնք դուլ էին տալիս ամեն մի խմբի, մինս խմբի մարդկանց մեռնելանման երեսները. նոքա իրարն էլ չատում էին պատպարուիլ ամենամօտ

ապաստանի տակ։ Լուսաւորութեան ամբողջ տարերքը խանգարուած էր։ Երբեմն երբեմն այդ պղպջուն լոյսերի միջոցով կարելի էր տեսնել մի դող, որ անցնում էր օբէնքի իշխանութեան ամենալուրջ ներկայացուցչի մօտից բեռնուած իր յանկարծական չահերի արդիւնքով, որոնց ուրախութիւնից նա սարսափելի կերպով ծիծաղում էր։ Եթէ մթութեան մէջ, մի կին բաժանւում էր իր ամուսնուց կամ մի ծնող իր զաւակից, այլ ևս իզուր էր մթութեան վերտաին գոռալու ցոյսը։ Ուրախանչիւր մարդ կուրօրէն, և չկոմթութեամբ առաջ էր վազում։ Ընկերական կեանքի բարդ և բազմակողմանի մեքենայից ուրիշ ոչինչ չէր մնացել եթէ ոչ նրա ամենաակզբնական օբէնքը — այն է ինքնապաշտպանութիւնն։

Այս սոսկալի տեսարանների միջից անցնում էր աթենացին Իօնէի և կոյր աղջկայ հետ միասին։ Յանկարծ հարբեցուց մարդկանց մի հոսանք, դէպի ծովը, անցաւ նրանց մօտից։ Նիդիան այս հոսանքի ուժգնութեամբ պատառուեցաւ Գլոկուսի կողքից, որը Իօնէի հետ արագ արագ առաջանում էր և երբ խումբը (որի կերպարանքները չէր տեսնում թանձր մթութեան պատճառով) անցաւ հեռացաւ, Նիդիան այլևս նրանց մօտ չէր։ Գլոկուս բարձրաձայն կոչեց նրան։ Ոչ մի պատասխան չեկաւ։ Նրանք չեռ գտնում, բայց իզուր, նրանք չը կարողացան գտնել կոյր աղջկան — յայտնի էր որ այդ մարդկային հոսանքը նրան աւելել տարել էր մի հակառակ ուղղութեամբ։ Նրանց բարեկամը, նրանց ազատարարը կորաւել էր։ Եւ ցայժմ Նիդիան էր եղել նրանց առաջնորդը։ Իր կուրութեան պատճառով նրան մի այլ ծանօթ էր տեսարանը։ Այն մշանջենական գիշերի չնարհիւ, որի մէջ նա ապրում էր,

նա սովոր էր քաղաքի բոլոր պատյանները, և այժմ անսխալ կերպով նրանց առաջնորդում էր դէպի ծովեզր ուրկից նրանք վճռել էին փախչել։ Այժմ, որ կողմից կարող էին երթալ. ամեն բան մութն էր նրանց համար — մի անծանօթ քաոս էր։ Յոգնած, յուսահատ, չուսած՝ նրանք, ինչ և իցէ, առաջ անցան. մռնիրը թափուում էր նրանց գլխին, քարերը զարկուում էին միմեանց և կայծեր արձակում նրանց ոտքերի տակից։

«Աւաղ, աւաջ», մրմնջաց Իօնէն, «ես այլ ևս չեմ կարողանում առաջանալ. իմ ոտքերս ընկղմում են այդ մռնրի մէջ։ Փախիր սիրելիս, սիրեցեալս, փախիր, և թող ինձ մեռնել այստեղ»։

Մի խօսիր, իմ նշանածս իմ հարսս։ Քեզ հետ մահը աւելի քաղցր է քան կեանքը առանց քեզ։ Բայց ուր — ա՛հ, ուր կարող ենք ուղղել մեր քայլերը այս մթութեան մէջ։ Արդէն կարծես մենք մի շրջան ենք արել և ճիշդ այնտեղ ենք գտնուում, ուր մի ժամ առաջ կայինք»։

«Ո՛վ աստուածներ, այդ ժայռը — աես, դա չախչախեց մեր գիմացի կառքը. փողոցների միջով երթալ մահ է նշանակուած»։

«Օրհնեալ կայծակ։ Տես, Իօնէ, տես, բախտի տաճարի պորտիկոն մեր առջև է։ Ե՛կ մտնենք նրա տակ, դա մեզ կը պաշտպանէ այս տարափներից»։

Նա գրկեց իր սիրելուն, և զգուշութեամբ հասաւ մինչև տաճարը։ Նա տարաւ նրան ամենահեռաւոր և ամենատպտով անկիւնը, և վեռուեցաւ նրա վրայ, որպէս զի իր մարմնով պաշտպանէ նրան կայծակից և տարերքից։ Սիրոյ զեղեցկութիւնը և անտանձնասիրութիւնը կարող էին սուրբ դարձնել նոյն իսկ այդ չարաղէտ ժամը։

«Այդ ով է», ասաց դողդոջուն և խուլ ձայն մի անձի, որ նրանցից առաջ մտել էր այդ պաշտպանութեան տակ։ «Բայց ինչ փոյթ, խորտակուած աշխարհի կործանումը մեզանից հեռացնում է թէ բարեկամ և թէ թշնամի»։

Իօնէին այդ ձայնը լսելով դարձաւ, և մի թոյլ ճիչ արձակելով նորից կուչ եկաւ Գլոկուսի բազուկների տակ. և Գլոկուս նայելով ձայնի ուղղութեամբ տեսաւ նրա երկիւղի առարկան։ Մթութեան միջից փայլում էին երկու բոցավառ աչքեր — և Գլոկուս, սարսափով տեսաւ իր համար դահիճ որոշուած առիւծին կուչ եկած սիւների տակ, և ճիչդ նրա կոպերին, անդիտանալով իր դրացիութեան վտանգի մասին պառկած էր հսկայ կապիը այն մարդու, որ նրանց հետ խօսել էր. դա վիրաւորուած պլպլիատորը, Նիկէրն էր։

Այդ կայծակը մարդկանց և գազանին փոխադարձաբար ցոյց էր տուել միմեանց. սակայն երկուսի բնազդումն էլ թմրած էր։ Ոչ, առիւծը ատելի և ատելի մօտենում էր պլպլիատորին, որպէս թէ ընկերութեան համար. և պլպլիատորը չէտ չէր քաշւում և չէր դողում։ Ինստինկտն յոգնախոհութիւնը լուծել էր իր թեթև սարսափները. որպէս նաև իր սովորական կապերը։

Մինչդեռ նրանք այս տհաճալի ապաստանի տակ էին դտնուում, ջահակիր մարդկանց և կռնատց մի խումբ անցաւ տաճարի առջևից։ Նրանք պատկանում էին նազովրեցիների ազանդին. այդ վանք և չնաչխարհիկ յուզմունքը իրօք չէր նուաճել նրանց ոտը, սակայն գրկել էր ոտը երկիւղից։ Նրանք վաղուց հաւատում էին, նախնի քրիստոնէութեան սիրալի հաստատին, որ վերջին օրը մօտ էր, նրանք այժմ երևակայում էին, որ այդ օրը հասած էր

«Վայ, վայ». գոչեց խմբի գլխաւորը մի սուր և թափանցող ձայնով։ «Անա Տէրը իջնում է գատաստան կատարելու. նա կրակ է տեղում երկնքից մարդկանց աչքերի առջև։ Վայ, վայ ձեզ, չոր տղօրներ և զօրաւորներ։ Վայ ձեզ ծիրանի զգեցողներ, վայ ձեզ, որ կրում էք իշխանութեան գաւազանը։ Վայ կռապաշտին, վայ նրան, որ երկրպագում է գազանին։ Վայ ձեզ որ թափում էք արբերի արիւնը, և հրճւում էք տեսնելով Աստուծոյ գաւակների մահուան տագնապը։ Վայ ծովերի պառնիկին։ Վայ վայ։

Եւ մի բարձրաձայն և խուլ յանկերգով խումբը երգեց, ձայնակցելով օդի զարհուրելի արտաբերքներին — «վայ ծովերի պառնիկին — վայ, վայ»։

Նազովրեցիները կամաց կամաց առաջացան. նրանց ջահերը դեռ պլպլում էին փոխորկի մէջ. նրանց ձայները դեռ աղաղակում էին սպառնալիքներ և անեղ ապրարութիւններ, մինչև նրանք կորուսեցան վաղորդների պատուհանների և օդի աղջամուղջի մէջ, և մահուան լռութիւնը նորից տարածուեցաւ տեսարանի վրայ։

Այժմ տեղի ունեցաւ տարաբնների յաճախական դադարներից մէկը, և Գլոկուս նորից Իօնէին քաջալերեց առաջ երթալ։ Ձիրդ այն րոպէին, երբ նոքա կանգնած էին պրոպիլէի սանդուղքների վերջին աստիճանի վրայ և դեռ վարանում էին իջնել մի ծերուկ, լինուած մի պատանու վրայ և աջ ձեռքին լռնած մի քսակ, դողդոջուն քալելով անցնում էր։ Պատանին իր ձեռքում կրում էր մի ջահ։ Ծերունին պատանու հայրն էր — մէկը ապահովութիւն առնուած։

Հայրը, ասաց պատանին, եթէ չես կարողանում արագ

քալել, ես պետք է թողնեմ քեզ, եթե ոչ մենք և բ-
կ ու ս ս էլ կը փշանանք։

«Փախիր, ուրեմն տղա և թող քո հօրը»։

«Բայց ես՝ չեմ կարող փախչել սովամահ լինելու. տուր ինձ ոսկու քսակը»։ Եւ պատանին խլեց դրամը։

«Թշուառականն, կողոպտում ես քո հօրը»։

«Ա՜հ, ով կարող է այս ժամին տեսնել և պատմել այս դէպքը։ Ագահ՝ սատակիր»։

Պատանին զարհուց, դեռևս տատալից իր հօրը, քսակը կորզեց նրա թուլացած ձեռքից, և փախաւ՝ մի սուր ոռնոց արձակելով։

«Ո՛վ՝ սատուածներ», գոչեց Գլոկուս, «դուք կուրացել էք ուրեմն, և ոչինչ չէք տեսնում այս խաւարի մէջ։ Այսպիսի ոճիրները լինչ դիւրութեամբ կարող են շփոթել անմեղին մեղաւորի հետ մէկ ընդհանուր կործանման մէջ. Իօնէ առաջ—առաջ»։

Գլուխ Ը.

Աբրակ հանդիպում է Գլոկուսին և Իօնէին։

Առաջանալով այնպէս, ինչպէս մարդիկ խարխափում են խաւարի մէջ մի եզք գտնելու՝ Իօնէն և նրա սիրականը չարունակում էին իրանց անորոշ ճանապարհը։ Այն րոպէներին, երբ հրաբղխային կայծակները ափում էին իրանց լոյսը փողոցների վրայ, նրանք կարողանում էին, այդ առնելի ճառագայթով գտնել իրանց ճանապարհը. սակայն դրա ներկայացրած տեսարանը քաջալերիչ կամ խրախուսիչ ոչ մի բան չունէր իր մէջ։ Տեղ տեղ, ուր մոխիրը չոր էր և խառնուած չէր լեռնից հոսած հրա-

րորոք լաւայինն, գետնի մակերևոյթը ներկայացնում էր մի բարոտանման և մեռելային սպիտակութիւն։ Տեղ տեղ, մոխիր և ժայռ կուտակուած էին միմեանց վրայ և նրանց տակից տեսնում էր կէս թաքնուած անդամները մի որևէ չարչարուած և չօշռուած փախստականի։ Մեռնողների հառաչանքները խառնուում էին կանանց ճիչերի հետ. նրանք լսելով—մերթ մօտից, մերթ հեռուից,—այդ անթափանց աղջամուղջի մէջ, կրկնապատիկ սարսափեցուցիչ էին դառնում այն չարչարիչ գիտակցութեամբ, թէ մարդ որքան անզօր է այդ դէպքում և չը պիտի թէ չրջապատող վտանգը, որ կողմից կարող է վրայ հասնել։ Իսկ սարդ և որոշ այդ բոլորի մէջից, լսում էին չարաղէտ լերան հզօր և բազմազան սրոտները, նրա մռնչող մրրիկը, նրա յորդաբուղխ հեղեղները, ժամանակ առ ժամանակ մի հրեղէն և մռնգին պայթիւնի դղրդեցուցիչ դոդոռոցը։ Եւ ամեն անգամ երբ հողմերը ոռնալով աւելում էին փողոցները, նրանք տանում էին իրանց հետ այրեցեալ փոչու կիզիչ հոտանքներ, և այնպիսի թունալից և տեղաուցիչ չոգիներ, որոնք մարդու քթին դպչելուց կարում էին նրա չունչը և ղժալնութիւնը։ Այդ չնչասպառութեան հետևում էր կանդ առած արեան հակազդեցութիւնը և ցաւի մի սուր և սարսուռն ղգացումը, որ դողդողալով անցնում էր ամեն մի ջղի և նեարդի միջից։

«Ո՛հ, Գլոկուս, իմ սիրելիս, իմ հոգիս, ու ինձ դրկիր մէջ։ Մէկ միայն դրկախառնութիւն, թող ղգամ որ քո թևերը իմ չուրջն են ձգուած և այդ դրկի մէջ թող մեռնեմ—այլ ես չեմ կարողանում»։

«Իմ խաթեր համար, իմ կեանքի համար—մի քիչ էլ քաջութիւն ունեցիր, քաղցրիկ Իօնէս իմ կեանքը

կցուած է քոնիդ հետ. և ահա—ջահեր են գալիս այս կողմը։ Տես ինչպէս նրանք դիմադրում են քամուն։ Հապա վոխորիկը նրանց վնասել չէ կարողանում. անսրտակոյս նրանք էլ փախչում են դէպի ծովը,—մենք կը միանանք նրանց խմբի հետ»։

Որպէս թէ սիրահարներին օգնելու և խրախուսելու համար, հողմերը և տարափները չանկարծ կանգ առան. մի խորին հանդարտութիւն կար միջնորդի մէջ —լեռը կարծես հանգստանում էր, կարելի է թարմ կառազանքներ էր հաւաքում իր հետևեալ պայթիւնի համար. ջահակիրները արագ արագ առաջանում էին։ «Մօտենում ենք ծովին», ասում էր նրանց գլխաւորի խաղաղ ձայնը։ «Ագատութիւն և հարստութիւն եմ խոստանում ամեն մի գերու, որ կենդանի կը մնայ այսօր։ Քաջալերուեցէ՛ք—ես ասում եմ ձեզ, որ աստուածները ինձ վստահութիւն են տուել, որ պիտի ազատեն ինձ—Յառա՛ջ»։

Ջահերը կարմիր և հաստատուն բոցով լուսաւորեցին Գլոկուսի աչքերը և Իօնէէի պատկերը, որը ուժասպառ և դողդողար ընկած էր իր սիրականի կրծքի վրայ։ Ջանազան գերիներ ասոնում էին լցուած և ծանր սնդուկներ և զամբիւղներ. նրանց առջևից մերկ սուրը ձեռին գնում էր Արբակի բերդանման հասակը։

«Երգում եմ իմ հայրերով», գոչեց եղիպտացին, «որ ճակատագիրը ժպտում է ինձ նոյն իսկ այս ստոկանքների միջից, և թշուառութեան և մահուան ամենասոսկալի տեսարանի միջից ինձ խոստանում է երջանկութիւն և սէր։ Հեռացիր, լոյս, ես պահանջում եմ իմ առնուհաս Իօնէին»։

«Պատանեան և մարդասպան», գոչեց Գլոկուս, կատաղութեամբ նայելով իր թշնամուն, «Նէմեսիսը քեզ առաջնորդել է այստեղ, որպէս զի քեզ ենթարկէ իմ վրէժխնդրութեանը—չատ յարմար գոհ ես դու Հադէսի (հոգիների աշխարհի) ստուերներին, որոնք այժմ կարծես բաց են թողուած աշխարհի վրայ։ Մօտեցիր—լակ գպիր Իօնէէ ձեռքին և քո գէնքը մի եղէգի պիտի փոխարկուի,—ես քեզ կտոր կտոր կանեմ»։

Յանկարծ, մինչդեռ նա խօսում էր, տեսարանը լուսաւորուեցաւ չափազանց լուսաւոր և մեռելային գունատութեան մի բոցով։ Լեռը վայրկեան չդիմացաւ խաւարի մէջ պայծառ և վիթխարի, ինչպէս գժոխքի պատերը, ինչպէս կրակի մի կոյտ։ Նրա գագաթը կարծես երկուքի ճեղքուեցաւ. կամ ասելի ճիշդն ասած կարծես նրա մակերևոյթի վրայ բարձրացան երկու տրէյալին ձևեր, որոնք ճակատած էին միմեանց դէմ ինչպէս երկու դևեր, որ մաքառում են մի աշխարհի համար։ Սրանք երկուքն էլ ունէին նոյն մութ արներանգ կրակի գոյնը. նրանք լուսաւորեցին ամբողջ միջնորդը հեռու և հեռու։ Բայց նրանք ամ, լերան ստորին մասը բացի երեք տեղից դեռ ծածկուած էր մութով. այդ կէտերից հոսում էին հալուած լաւայի օձապտոյտ և անկանոն գետեր *)։ Պարփակող թանձր մութի միջից այդ մութ կարմիր գետերը կամաց-կամաց հոսում էին դէպի կործանման յանձնուած քաղաքը։ Ամենից յոյն հոսանքի վրայ կարծես կապուեցաւ մի ապաւաժալին և սիրալի կամար, որից, ինչպէս պետնեի երախներից դուրս էին ժայթքում այդ չանկարծական փլէկէնթոնի ալբիւրները։ Եւ համրացած օդե

*) Տես ծան. (ա) վերջը։

միջից լսում էին ժայռաբեկորների խախտոցը, որոնք ընդհարուելով մրմնջոց էին հրելիէն ջրվեժով. նրանք մի սեացնում էին այն տեղը, ուր ընկնում էին, և միւս րոպէն սիրում էին վայրկեան գոյները այն հեղեղի, որի վրայ նրանք ծիում էին։

Սարուկները բարձրաձայն ճչացին և կուչ գալով ծածկեցին իրանց երեսները։ Եգիպտացին ինքը կանգնեց որպէս թէ զառուած լինէր վեմի հետ. բոցը լուսաւորում էր նրա հրամայական կերպարանքը և գոհարազարդ զգեստները։ Նրա հաւ բարձրանում էր մի սիւն, որի վրայ գրուած է Օզոսառսի բրոնզեայ արձանը. և կայսերական պատկերը կարծես կրակ էր դարձել։

Գլոկուս ճակատել էր եգիպտացու դէմ. իր ձախ ձեռքով նա գրկել էր Իօնէին, և իր աջ ձեռքով նա բարձրացրել էր այն սակիսը, որ արուած էր նրան իբրև զէնք արհնալի համար, և որը դեռ բարեբախտաբար գտնուում էր նրա մօտ. նրա յօնքերը կնճռոտած էին, նրա շրթունքները բաժանուած և մարգկային ապառնալիքների և ցաւման արտայայտութիւնը կարծես կախարդութեամբ քարացած արձանացած էին նրա կերպարանքի վրայ։

Արրակի աչքերը դարձան լեռնից և եկան հանդչեցին Գլոկուսի դէմքի վրայ։ Նա մի րոպէ վարանուեցաւ։ «Ինչու, երկմտիս», մրմնջաց նա, «արդեօք ասպետը չը նախապատրաստեցին իմ վերադառնալ վառնդի միակ օրհասը։ —Արդեօք այդ վառնդը չը անցել»։

«Հոգին», գոչեց նա բարձր ձայնով, «կարող է դիմանալ աշխարհի կործանման և երեակայական ասպետների մահեղնութեանը։ Արդ հոգու միջոցով ես կը յաղթեմ մինչև վերջ։ Յառաջ սարուկներ։—Ամենայն դիմադրիր

լինիմ, և քո արիւնը քո գլխիդ լինի։ Այսպէս, ուրեմն ես վերադառնում եմ Իօնէին»։

Նա առաջ գրեց մէկ քայլ—դա նրա վերջին քայլն էր այս աշխարհի վրայ։ Երկիրը չարժուեցաւ նրա ոտքի տակ այնպիսի մի ցնցումով, որ ամեն բան տակնուվրայ եղաւ։ Նոյն միջոցին մի ճայթիւն հնչեց քաղաքի մէջ, և բազմաթիւ տներ և սիւներ խորտակուեցան երկիր։ Կայծակը որպէս թէ հրապարուած բրոնզով, մի վայրկեան թրթռաց կայսերական արձանի չուրջը, յետոյ բրոնզը և սիւնը մէկ անգամից փչրեց։ Յանկ գլորուեցաւ աւերակը, արձագանք տալով փողոցի մէջ, և ձեղքելով ամուր յատակը, որի վրայ ընկաւ։ Աստղերի մարգարէութիւնը կատարուեցաւ։

Այդ ճայթիւնը, այդ բազխիւնը ուշաթափ արին Գլոկուսին մի վայրկեան։ Երբ նա ուշքի եկաւ լոյսը դեռ տարածուել էր տեսարանի վրայ, գետինը դեռ ալիքում և դողդողում էր նրա ներքև։ Իօնէն անզգայ ընկել էր գետնի վրայ, բայց Գլոկուս դեռ չէր տեսնում նրան—նրա աչքերը սեւեռուած էին մի մեռելային երեսի վրայ, որը կարծես առանց անդամների և իրանի դուրս էր նայում ջախջախուած սիւնի ամպին բեկորների տակից—անպատում մի ցաւի, տագնապի և յուսահատութեան երես։ Աչքերը արագ արագ գոցւում և բացւում էին, որպէս թէ զգացումը դեռ վախած չը լինէր. շրթունքները դողդողում էին և երբեմն յետ քաշւում ատամների վրայից—յետոյ յանկարծական մի անդորրութիւն և մթութիւն պատեց նրա դիմագծերին, որոնք, այնու ամենայնիւ պահպանում էին սոսկանքի արտայայտութիւնը, որ երբէք չէր կարելի մոռանալ։

Այս ձևով առաջին խմառաուն մոգը — մեծ Աբրակը — այրեցեալ գոտու տէր Հէրմէս — եգիպտական հարատևութեան վերջին չառաւիղը։

Գլուխ Ը.

Սիրահարների յուսահատութիւնը։ Ժողովրդի կացութիւնը։

Գլոկուս չնորհակալութեամբ, բայց ահով դարձրեց իր երեսը. նա Իօնէին նորից գրկեց և վազեց չափազանց լուսաւորուած փողոցների միջով։ Բայց յանկարծ մի նոսեմ առուեր աարաձուեցաւ օդի մէջ։ Ինազդմամբ նա նայեց դէպի լեռը, և տեսաւ, որ դազաթի երկու վիթխարի կատրներից մէկը ճօճւում և երերւում է. և յետոյ այնպիսի մի ամէնի ձայնով, որի նկարագրութիւնը ոչ մի լեզու չէ կարող անել, դա ընկաւ իր այրեցեալ պատուանդանից, և ինչպես հրեղէն մի հիւս ցած գլորուեցաւ լերան կողքից։ Այդ րոպէին դուրս փղձկայ ամենաուե ծխի մի ահագին կոյտ տարածուելով օդի, ծովի և երկրի վրայ։

Մոխրի մի ուրիչ — մի ուրիչ — և մի ուրիչ տարափ, չատ աւելի առատ քան առաջ, նոր կործանում տարածեց փողոցների մէջ։ Մթութիւնը նորից փաթաթուեցաւ նրանց չուրջը ինչպես մի քօղ. և Գլոկուս, որի յանդուգն սիրտը վերջ ի վերջոյ տարտափեց և յուսահատուեցաւ, ընկաւ մի կառարի ապատանի տակ, սեղմելով Իօնէին իր կրծքին — մի հարս այդ աւերակալին մահճակալի վրայ։ — Նա պառկեց, ապաստել մահուան։

Նոյն միջոցին Նիդիան, որ ամբոխի պատճառով բոնի բաժանուել էր Գլոկուսից և Իօնէից, ի զուր աշխատել էր գտնել նրանց։ Ի զուր նա բարձրացրել էր

այդ սխրագին ազաղակը, որ յատուկ է կոյրերին. նրա ձայնը կորաուեցաւ հազարաւոր աւելի անձնասիրական տարտափի ճիչերի մէջ։ Նորից և նորից նա վերադարձել էր այնտեղ, ուր բաժանուել էին միմեանցից. վերադարձել էր գտնելու իր անհետացած ընկերներին, բռնելու ամեն մի վախստականի առաջը — հարցնելու Գլոկուսի մասին — և լետ դրուելու անդամբեր ձեռքերով։ Ո՛վ, այդ ժամին, նոյն իսկ մի փոքրիկ ուշադրութիւն կը դարձնէր իր դրացու վրայ։ Կարելի է համաչխարհային արհաւիրքների ժամանակ, ոչ մի բան այնքան սովալի և գարշելի չէ, որքան այն անբնական ինքնասիրութիւնը, որ առաջ է գալիս այդ աղէտից։ Ի վերջոյ, Նիդիան մտածեց թէ քանի որ նրանք որոշել էին գնալ ծովեզերքը, այն կը լինէր իր ամենահաւանական միջոցը նրանց գտնելու, որ չարունակէր նոյն ճանապարհը։ Առաջնորդուելով այն գաղափարի միջոցով, որ միշտ կրում էր իր ձեռքում, աղջիկը ամենամեծ ուշիով գնաց դէպի ծովեզերքը։ Նա անհատատալի ճարպկութեամբ խոյս էր տալիս այն փլատակներից, որոնք ընկել էին ճանապարհի վրայ, պատրաստ էր փողոցներից առանց սխալուելու։ Նոյնքան երանաւէտ էր այժմ այն մչանջենական խաւարը, որը այնքան ազէտալից էր եղել սովորական կեանքում։

Խեղճ աղջիկ — դեղեցիկ էր տեսնել նրա քաջութիւնը — և ճակատագիրը կարծես օգնում էր այդքան տկար մի էակի։ Սուսն հեղեղները չէին դպչում նրան, եթէ ոչ այն ընդհանրատարած անձևի միջոցաւ, որ սովորաբար ընկերանում էր այդ հատանքներին, կղզեանքների ահագին կատրները փչրուում էին, նրա առջև և նրա կողքին, բայց խնայում էին նրա նուրբ կազ-

մուածքին. և երբ մոխրի փոքրիկ տարափներ ընկնում էին նրա վրայ, նա թօթափում էր դրանց մի թեթև ցնցումով, և նորից անվհերութեամբ շարունակում իր հանապարհը։ *)

Թալլ վտանգներով չրջապատուած, սակայն անվախ, լոկ մէկ փափագ ունենալով իրան նեցուկ՝ նա ճիշդ օրինակն էր Պսիքէի և նրա թափառումների. օրինակը Յուսոյ, որ քայլում է Սուսերի Հովտի մէջ. օրինակը Հոգու միայնակ բայց անվեհեր, կեանքի վտանգների և որոգայթների մէջ։

Ինչ և իցէ. նա այժմ իր ճանապարհի մէջ անդադար հանդիպում էր խոչնդոտանների այն խումբ-խումբ մարդկանց կողմից, որոնք խարխափում էին խաւարի մէջ, կամ կայծակների րոպէական լուսաւորութեան միջոցին, վազում էին այս և այն կողմ. և ի վերջոյ մի խումբը չահակիրներ, վազելով ուղղակի նրա ընդդէմ նրան ուժով ցած գլորեցին։

«Ի՞նչ», ասաց խմբի մէջից մէկ հոգի. «սա այն քաջ կոյր աղջիկն է։ Բաբոս վկայ. նա չը պիտի թողուն այստեղ մեռնելու։ Վեր կաց, իմ թեսալուհիս։ Այսպէս — այսպէս։ Վնասուեցար։ Հոգ չէ։ Ե՛կ մեզ հետ, մենք գնում ենք ծովեզերքը».

«Ո՛վ Սալլուստ, այդ քո ձայնն է»։ Փառք աստուածներին։ Գլոկուսին, Գլոկուսին տեսել էք»։

«Ե՞ս, ո՛չ։ Նա անտարակոյս այժմ քաղաքից հեռացած կը լինի։ Այն աստուածները, որ նրան փրկեցին

*) Մոխրի մի մեծ տարափ տեղաց մեր գլխին, որը մենք միշտ ստիպուած էինք թօթափել, եթէ ոչ, մենք պիտի չարչարէինք և թաղուէինք այդ կոյտ տակ։ Պ.ՆՆԻ։

ահաւոյից, անպատճառ նիմա կը փրկեն ալրեցեալ լեռնից»։

Մինչդեռ բարեսիրտ եպիկուրը այսպէս քաջալերում էր Նիդիային, նա նրան իր հետ քարշ էր տալիս դէպի ծովեզերք, ուշադրութիւն չը դարձնելով նրա սրբատաչարժ աղերսներին լետ մնալու և Գլոկուսին որոնելու. և աղջիկը յուսահատական չէչտով անդադար ճչում էր այդ սիրելի անունը, որը տարիքի այդ ապ տակալի ցնցումների միջոցին նրա սրտի մէջ կենդանի էր պահում մի ևրաժշտութիւն։

Յանկարծական լուսաւորութիւնը, լաւալի հեղեղների պայթիւնները, և երկրաչարժը, որոնց մենք արդէն նկարագրել ենք, տեղի ունեցան այն րոպէին երբ Սալլուստ և նրա խումբը հասան այն փողոցը, որ ուղղակի առաջնորդում էր դէպի նաւահանգիստը. և այստեղ մի անակնկալ բազմութիւն—աւելի քան քաղաքացիների կէս մասը—կարից նրանց ճանապարհը։ Մարդիկ հազարներով տարածուած էին դաշտերի վրայ, պարիսպներից դուրս, և չը գիտէին թէ ուր փախչին։ Ծովը չատ հեռացել էր եզերքից. և նրանք, որոնք գնացել էին ծովափը այնքան տարտափհար էին եղել այդ տարրի խռովութիւնից և գերբնական սեղտաւութիւնից, այն մահաւոր և տարօրինակ ծովային կենդանիներից, որոնց ջուրը թողել էր ւաղի վրայ, և այն անակնկալ քարերի ճայներից, որոնք լեռնից գնում էին ջրի մէջ, որ նրանք նորից վերադարձել էին ցամաքը, որպէս թէ դա մի նուազ տակալի վայր լինէր։ Այսպէսով մարդկային երկու հեղեղները մէկը դէպի ծով և միւսը ծովից դէպի ցամաք այդ տեղ հանդիպեցին միմեանց, ղղալով մէկ ահաւոր միխիթարութիւն, իրանց թէի մեծութեան մէջ, նրանք կանգնած էին լուսահատ և վարանուած։

«Աչխարհը կրակով պիտի կործանուի», ասաց մի Ծերուկ, որ հազել էր երկար և արձակ մի զգեստ, և աստղիկեան գլխոցի մի փիլիսոփայ էր։ Աստղիկեան և Հպիկուրեան դիատրիբներըը համաձայն են այս նախադասկութեան մէջ»։

«Այո, ժամը հասել է», գոչեց մի ձայն լուրջ բայց ոչ սարսափահար։

Ձայնի չուրջը եղողները դարձրին իրան երեսները։ Ձայնը գալիս էր նրանց գլխի վերևից։ Դա Օլինթուսի ձայնն էր, որը, չրջապատուած իր քրիստոնեայ բարեկամներով, կանգնած էր մի բարձրաբերձեան վրայ. նախանի յոյն գաղթականները այդ բարձրավանդակի վրայ կառուցել էին մի տաճար ի պատիւ Ապոլլոնի, որը այժմ ժամանակից աւերուած և կէս աւերակ էր դարձել։

Մինչդեռ նա խօսում էր, տեղի ունեցաւ այն չանկարծական լուսավառութիւնը, որը առաջընթացն էր եղել Արբակի մահուան, և փայլեց այդ անգին, անաբեկ, երկիւղահար և չնչարդել ամբոխի վրայ. երբէք աչխարհի վրայ մարդկանց երեսները այդքան անհոգի չեն եղել։ Երբէք մահկանացուների մի ժողով այդպէս պրոչմուած չէ եղել արհաւիրքի սոսկումով և վհատութեամբ։ Երբէք, մինչև վերջին փողը հնչէ, նորից չպիտի տեսնուի այդպիսի մի ժողով։ Եւ նրանց վերև կանգնած էր Օլինթուսի ձևը, տարածուած բազուկով, մարգարէական ճակատով, և գտահրատած կենդանի բոցերով։ Եւ ամբոխը ճանաչեց այն մարդուն, որին գտահպարտած էր գազանի ժանիքներին—այն մարդուն իր զոհը, այժմ իր պաղարարը. և լռութեան միջից նրա խորհրդաւոր ձայնը—

«Ժամը հասել է։

Քրիստոնեաները կրկնեցին այդ ազազակը։ Դա արձագանք տուաւ մեկ կողմից մինչև միւս կողմը։ Կին և մարդ, երեխայ և ծերուկներ, կրկնեցին, ոչ թէ բարձրաձայն, այլ մի խեղդուած և ահարկու մրմունջով—

«ԺԱՄԸ՛ ՀԱՍԵԼ Է»։

Այդ րոպէին մի վայրկեան ոտնոց լսուեցաւ օդի մէջ. ճոճուելով փախչելու վրայ միայն, բայց չիմանալով թէ ուր՝ անապատի պիչատիչ վագրը թռաւ ամբոխի մէջ և դուրս վազեց նրա ճեղքուած որմերի միջից։ Յետոյ և-ևս երկրաչարժը,—և յետոյ մթութիւնը նորից պատեց աչխարհը։

Եւ այժմ նոր փախստականներ հասան։ Արբակի գերիները, վերցնելով այն գանձերը, որոնք այլ ևս իրանց տիրոջը չէին պատկանում՝ միայն ամբոխին։ Նրանց ջահերից մեկը միայն դեռ պլպլում էր։ Դա Սոփիայի ձեռքումն էր. և դրա լոյսը ընկնելով Նիփիայի երեսի վրայ, նա անմիջապէս ճանաչեց թեսալուհուն։

«Այժմ ինչ բանի պէտք է քո ազատութիւնը, կոյր աղջիկ», ասաց գերին։

«Ո՞վ ես դու, կարող ես ինձ ասել թէ ուր է Գլաւկուա»։

«Այն, մի քանի րոպէ սրանից առաջ տեսայ նրան»։

«Օրհնեալ լինի քո գլուխը, որանէ»։

«Կուչ եկած փորումի կամարի տակ—մեռած կամ մահամերձ։—Գնացել է ընկերանալու Արբակին, որը այլ ևս կենդանի չէ»։

Նիփիան մեկ բառ անդամ չասաց, նա կամաց դուրս սահեց Սալլուստի կողմից. լռութեամբ նա դուրս գնաց իր եռև ընացածների միջով, և վերադարձաւ քաղաքը։ Նա հասաւ փորումին և կամարին. նա կռացաւ—նա խարխափեց—նա կոչեց Գլաւկուային։

Մի տկար ձայն պատասխանեց—«Ո՞վ է կոչում ինձ»։ Սաւերներէն ձայնն է այդ։ Ահա ես պատրաստ եմ»։

«Վեր կաց. հեռեր ինձ։ Բռնիր ձեռքս։ Գլոկուա դու պիտի վրկուես»։

Ջարմացմամբ, և յանկարծական յոյսով Գլոկուա վեր կացաւ—«Նարից Նիպիան։ Ա՜հ, ուրեմն դու դեռ կենդանի ես»։

Նրա ձայնի փափուկ ցնծութիւնը թափանցեց խեղճ թեսալուհու սիրտը, և նա օրհնեց Գլոկուային, որովհետև նա մտածել էր կոյր աղջկայ վրայ։

Նէս առաջնորդելով, կէս տանելով Իօնէին՝ Գլոկուա հեռանց իր ուղեցոյցին։ Աքանչելի զգուշութեամբ նա խոչ առաւ այն ճանապարհից, որ առաջնորդում էր դէպի իր թոռած ամբոխը, և մի ուրիշ ճանապարհով հասաւ ծովեզերքը։

Շատ յապաղումներից և անհաւատալի չարաւեստութիւնից յետոյ նրանք հասան ծովի մօտ, և միացան մի խումբ մարդկանց, որոնք աւելի յանդուգն քան մնացեալները վճռել էին դիմադրել որևէ վտանգի քան մնալ այսպիսի մի տեսարանի մէջ։ Խաւարով ծածկուած՝ նրանք մտան ծովը. բայց երբ հեռացան ցամաքից, և դարձան դէպի լերան մի նոր կողմը, նրա ճօլուած կրակի հոսանքները մինչև մի աստիճան լրանց կարմրութեամբ լուսաւորեցին ալիքները։

Իօնէն կատարեալապէս յոգնած և ուժասպառ եղած՝ քնեց Գլոկուայի կրծքի վրայ, և Նիպիան էլ նրա ոտքերի տակ։ Նոյն միջոցին փոչու ու մոխրի տարափները բարձրից թափւում էին ծովի մէջ և տարածւում էին նաև մակերեսոյթի վրայ։ Հեռու, հեռու, քամիներով տարածուած՝ այդ տարափները իջան ամենահեռաւոր տա-

մանները, զարմացնելով նոյն իսկ թխամորթ ափրիկացուն. նրանք տարածուեցան Հրէաստանի և Եգիպտոսի հիւսիսային հողի վրայ *)։

Գլուխ Ժ։

Հեռանալ առաւօտը։—Նիպիայի վախճանը։

Եւ հեղաբեռամբ, փափկութեամբ դեղեցկութեամբ ծագեց վերջապէս արշալոյսը դողդոջուն անդունդի վրայ։ —Հոմերը աստիճանաբար հանդչում էին, և փրփուրը անհետանում էր փափկանուշ ծովի չինուած կապոյտ երեսից։ Արեւելքի չուրջը աճօսր մշուշներ խլում էին այն վարդագոյն երանգները, որոնք աւետում էին առաւօտը. լոյսը սկսում էր վերստանալ իր սիրաշահութիւնը։ Սակայն հեռւում դեռ նշմարել էին կործանիչ ամպի սև և կոյտ կոյտ լեկորներ, որոնցից կարմիր շերտեր, վառուելով նահանջութեամբ և աւելի նսեմ, յայտնում էին թէ դեռ բորբոքուած էին Թաւալուն հուրերը «Աչրեցեալ Դաշտերի» լերան։ Այն սպիտակ պատերը և վայրկեան սիւները, որոնք նախ սքանչում էին սքանչագեղ ծովափը, այլև ևս չը կային։ Տխրադէմ և դաժան էին այն եզերքները, որոնք դեռ քիչ առաջ պսակուել էին Պոմպէյի և Հերկուլանում քաղաքներով։ Անդունդի անուշիկները լուսած էին նրա գրկից։ Դար դարի նուիրուած Մայրը պիտի տարածէ իր կապուտակ բաղուկները և չը դանէ նրանց—հառաչելով կորստածների չերիմներէն չուրջը։

Ոչ մի աղաղակ չը բարձրացաւ նաւաստիների

*) Դիոն Կասսիուս.

կողմից ողջունելու համար ծագող լույսը— դա չափազանց առաիճանաբար էր եկել, և նրանք չափազանց յոգնած էին ցնծությեան այդպիսի չանկարծական ցույցեր անելու—բայց չնորհակալությեան մեղմաձայն և խոր մի մրմունջ անցավ նրանց միջից, որոնք ամբողջ գիշեր հանել էին։ Նրանք նայեցին միմեանց երեսին և ժպտացին—նրանք սիրտ առան—մեկ անգամ ևս զգացին, որ մի աշխարհ կար իրանց չորս կողմը, և մի Աստուած իրանց գլխի վերև։ Եւ զգալով, որ վատագոյն աղէտը անցել էր՝ վատահաբեկ նաւաստիները դարձան և խաղաղությեամբ պահկեցին քնելու։ Որքան երկինքը աւելի ողողում էր լույսով, այնքան աւելանում էր այն լռությիւնը, որից նրանք զուրկ էին եղել գիշերը. և նաւը հանդարտ սահում էր դեպի իր նաւահանգիստը։ Մի քանի ուրիշ նաւեր էլ կարելի էր տեսնել անդունդի երեսին, որոնք սահում էին համամատ վախտականներ. նրանք ըստ երևոյթին անչարժ էին, բայց և այնպէս սահում էին առաջ։ Մի տեսակ ապահովությեան, ընկերությեան և լուսոյ գիտակցությիւն մտնում էր նայողների սրտի մէջ, մինչ նրանք տեսնում էին այդ բարակ կայմերը և սպիտակ առագաստները։ Արդեօք այդ նաւերը ինչ սիրուած բարեկամների (աչքից հեռացած և կորուսած խաւարի մէջ) սահում էին դեպի ապահովությիւն և ապաստան։

Ընդհանուր քնի լռությեան մէջոցին, Նիլիան անձայն վեր կացաւ։ Նա թեթևությամբ Գլոկուսի երեսի վրայ—նա ծծից նրա խոր քնի ծանր արտաշնչությիւնը—երկչոտությեամբ և ակնածությեամբ նա համբուրեց նրա ճակատը—նրա շրթունքները. նա չօշափեց նրա ձեռքը զգալու համար—դա սեղմուած էր Իսնէլի ձեռքի մէջ։

նա մի խոր հառաչանք արձակեց, և նրա երեսը մթնեց։ Նորից նա համբուրեց նրա ճակատը, և իր մաղերով սրբեց գիշերուայ խոնաւությիւնը նրա վրայից։ «Ամառուածները օրհնեն քեզ, ով աթենացի», մրմնջաց նա. «երջանիկ եղիր դո սիրեցեալիդ հետ, և երբեմն էլ յիշիր Նիդիային։ Աւաղ, նա այլ ևս ոչ մի բանի պէտք չէ այս աշխարհում։

Այս խօսքերն ասելով նա դարձաւ։ Կամաց կամաց նա աղաց ամխամակատն վրայ մինչև նաւի եռանի ծայրը, և կանգ առնելով՝ ծռուեցաւ անդունդի վրայ. զով փրփուրը ցայտեց նրա հրատապ ճակատի վրայ։ «Դա մահուան համբոյրն է», ասաց նա, «բարի գալուստ եմ մաղթում դրան»։ Բալասանաթույր օդը խաղում էր նրա ծփուն գիսակների մէջ—նա իր մաղերը յետ քաշեց իր ճակատի վրայից, և բարձրացրեց իր աչքերը—այնքան գիրգ և սրտաչարժ էին նրանք թէև անլոյս—դէպի երկինք, որի վսեմակ երեսը նա երբեք չէր տեսել։

«Ո՛չ, ո՛չ» ասաց նա, կէս բարձրաձայն և մտախոհ եղանակով, «ես չեմ կարող դիմանալ. այս նախանձոտ խստապահանջ սէրը վշրում և խեղճացնում է իմ ամբողջ հոգին։ Կարելի է նորից ես կը վնասեմ նրան—իմ մեծ թշուառությիւն էր իմ կողմից։ Ես փրկել եմ նրան—երկու անգամ փրկել եմ նրան—երանուէիա, երանուէիա միայն. ինչու չը մեռնեմ քանի դեռ երջանիկ եմ.—սա վերջին ուրախալիր միտքն է, որ ես երբևիցէ կարող եմ ունենալ։ Ո՛վ սրբազան ծով, ես լսում եմ, որ քո ձայնը կոչում է ինձ—դորա մէջ կայ մի զովացուցիչ և ուրախացուցիչ հրաւէր։ Ասում են, որ քո գրկիդ մէջ անապատություն կայ—որ քո գոհերը չեն անցնում մահա-

յու Սաիքսից—այդպէս լինի։ Ես չեմ ուզում հանդիպել նրան սառներնների մէջ, որովհետև այն ժամանակ նորից կը դանեմ նրան և Իօնէլն միասին։ Հանդստութիւն, հանդստութիւն հանդստութիւն—ուրիշ Ելիսէ չկայ իմ սրտի համար»։

Մի կէս նիրհած նաւաստի, որ պառկած էր տախտակամածի վրայ, լսեց ջրի մի թեթև ճլմոց։ Իր քնոտ աչքերով նա վեր նայեց, և հանկարծ, մինչդեռ նաւը ուրախ ուրախ թռչում էր առաջ, նա նշմարեց, որ տեսնում է, մի ինչ որ սպիտակ բան ալիքների երեսին. բայց դա մի ակնթարթում անհետացաւ։ Նա կամ դարձաւ և սկսեց երազել իր տան և զաւակների վրայ։

Երբ սրբահարները զարթնեցին, նրանց առաջին հոգսը մխիթարից մասին էր, նրանց երկրորդը հոգսը Նէպիալի մասին. բայց նա չը կար. ոչ ոք չէր տեսել նրան դիշերուանից յետոյ։ Նաւի ամեն մի ծակի մէջ որոնեցին նրան, բայց չը գտան։ Սկզբից մինչև վերջը խորհրդաւոր՝ կոյր թեսալուհին յաւիտեան անհետացել էր կենդանիների աշխարհից։ Նրանք լուռ դուշակեցին նրա վախճանը, և Գլոկուս և Իօնէ աւելի մերձենալով միմեանց (իրար մէջ զգալով ամբողջ աշխարհը) մոռացան իրանց ազատութիւնը, և արտասուեցին որպէս մի հեռացած քրոջ համար։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՐ ԱՄԵՆ ԲԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ Է։

Մի նամակ Գլոկուսից Սալուատին, տասը տարի Գամպելի կորստանումից յետոյ։

Աթէնք։

Գլոկուսից իր սիրելի Սալուատին—ողջոյն և առողջութիւն։ Դուք խնդրում էք ինձանից պատմել ձեզ այցելել Հռոմում—ա՛յ, Սալուատ, աւելի լաւ է, որ դուք գաք ինձ մօտ, Աթէնք։ Ես երդուել եմ չը մտնել կայսերական քաղաքը, նրա հակակ ազմուկի և փուք զուարճութիւնների մէջ։ Այսուհետև իմ երկրիս մէջ պիտի բնակուիմ յաւիտեան։ Մեր անցած մեծութեան ոգին աւելի սիրելի է ինձ քան ձեր մեծապոչ յաջողութեան պճնասարդ կեանքը։ Մի դիւթանք կայ ինձ համար այն պատմութեան մէջ, որոնք սրբագնացած են սուրբ և պատկառելի տաւերներով, դիւթանք, որ ոչ մի տեղ չեմ կարող ունենալ։ Իլիսուսի ձիթենու ծառաստաններում ես դեռ լսում եմ բանաստեղծութեան ձայնը—Փիլէի բարձունքների վրայ արշալոյսի ամպերը դեռ թռչում են ինձ պատանները հեռացած ազատութեան—յաւաջնթացները դալիք վաղուան։ Դուք ժպտում էք իմ ոգեորութեան վրայ, Սալուատ—աւելի լաւ է յուսալից լինել չղթաների մէջ, քան անձնատուր լինել նրանց փայլին։ Դուք տասում էք թէ դուք վստահէք, որ ես չեմ կարող վա-

ելել կեանքը խորտակուած վհատութեան այս մեղամաղձիկ վայրերում։ Դուք հրճուանքով նկարագրում էք Հռոմի չքեղութիւնը, և կայսերական պալատի զեղխութիւնները։ Իմ սիրելի Սալլուստ — non sumqua lis eram — այլևս չեմ այն՝ ինչ որ էի։ Իմ կեանքիս դէպքերը հանդարտացրել են իմ երիտասարդական ոտոռսաին արիւնը։ Իմ առողջութիւնս երբէք կատարելապէս չէ վերստացել իր սովորական առաձգականութիւնը, որ ունէր նախքան ես հիւանդացայ և պահկեցի ոճրագործների խառնաւ բանտում։ Իմ միտքս երբէք չէ կարողացել թօթափել Պոմպէյի վերջին օրուայ մութ տուները — այդ ահռելի աւերակների և կործանման սոսկանքները, մեր սիրեցեալ և յիշատակելի Նիդիայի վախճանը։ Ես մի դամբարան եմ կառուցել ի պատիւ նրա տուների, և ես ամեն օր տեսնում եմ այդ՝ իմ պրատենեակի պատուհանից։ Դա իմ մէջ վառ է պահում մի փափուկ յիշատակ — մի ոչ տհաճելի տխրութիւն — որոնք պատշաճ մեծարանքներ են նրա հաւատարմութեան և նրա վաղաժամ մահուան անբացատրելիութեան։ Ամեն օր Իոնէն ծաղիկներ է ժողովում, բայց ես իմ ձեռքով պսակներ եմ հիւսում նրա չիրիմի չորքը։ Նա արժանի էր մի դամբարան ունենալու Աթէնքում։

Դուք ասում էք, որ քրիստոնէական աղանդը տարածւում է Հռոմի մէջ։ Սալլուստ, ձեզ ես կարող եմ վստահել իմ զգացմունքը. ես չատ խորհել եմ այդ հաւատքի վրայ և ես ընդունել եմ այդ։ Պոմպէյի կործանումից յետոյ ես մէկ անգամ ես հանդիպեցի Օլինթուսին — որը փրկուեցաւ, ասում, միայն մէկ օրուայ համար. նա մարմրոսացաւ իր անվեհեր էնէրգիայի և ջերմեռանդութեան պատճառով։ Նա ինձ սովորացրեց Աստուծոյ մասին խօսել իմ ազատութեան մէջ տուիչից և երկրաչարժից։ Ես ականջ դրեցի — հաւատացի — պաշտեցի։ Իմ աչքի քան սիրեցեալ Իոնէն նոյնպէս ընդունել է այդ կրօնքը. մի կրօնք, որ լոյս սփռելով այս աշխարհի վրայ, հաւաքւում և կեդրոնացնում է նրա փառքը հանդերձեալի մէջ, ինչպէս արեւի մուտքը։ Մենք գիտենք, որ մենք միացած ենք հոգով ինչպէս մարմնով, յաւիտեան յաւիտենից։ Դարեր կարող են թաւալուիլ անցնել, մեր հողը կարող է լուծուիլ, աշխարհը կարող է խորշամել ինչպէս մի մազաթաղթ, բայց յաւիտենականութեան չորքը պարզուում է կեանքի անութը — անեղծանելի, անդադար։ Եւ ինչպէս երկիրը արեգակից, նոյնպէս անմահութիւնը երջանկութիւն է ծծում առաքինութիւնից, որը Աստուծոյ երեսի ժպիտն է։ Այցելեցէք Լինձ, ուրիշներ, ով Սալլուստ, երեցէք ձեր հետ Նեփկուրի Պիթագորասի, Պիոպինէպի խորհրդատու մատեանները. գինուեցէք պարտութիւն կրելու համար. և թող Ակադեմոսի հովասուններն մէջ, առաջնորդութեամբ մի աւելի հաստատ ուղեցոյցի, քաները և իմ չնորհաւած էր մեր նախահայրերին, վճռենք կեանքի ճշմարիտ նպատակներին և հոգու էութեան ահագ հարցի մասին։

Իոնէն — այդ անունը յիշելուց դեռ իմ սիրտը բաբախում է — Իոնէն կանգնած է իմ կողքին մինչդեռ ես գրում եմ. ես բարձրացնում եմ իմ աչքերը և իմ դէմքս հանդիպում է նրա ժպտին։ Արեւի լոյսը թերթում է Հիմէտուսի վրայ, և իմ պարտիզի մէջ ես լսում եմ ամառնային մեղուի բզզոցը։ Երջանիկ եմ, հարցնում էք։ Ո՛չ, ինչ կարող է տալ ինձ Հռոմը հաստատ այն բանին, որ ունիմ Աթէնքում։ Այստեղ ամեն բան զարհնեցնում է հոգին և ներշնչութիւն է փչում

մարդու կրքերի մէջ—ծառերը, ջրերը, բլուրները, երկինքը Աթէնքին են պատկանում. բանաստեղծութեան և աշխարհի իմաստութեան այդ մասը չքնաղ է, թէև ազատ։ Իմ սրտիս մէջ ես տեսնում եմ իմ նախահայրերի մարմարեայ արձանները Կերամիկուսի մէջ և տեսնում եմ նրանց դամբարանները։ Փողոցների մէջ ես տեսնում եմ Փիղիասի ձեռքը և Պերիկլէսի շուքին։ Հարմոդիուս և Արիստոգիտոն ամէն տեղ ներկայ են—բացի միմիայն մեր սրտերում.—դէթ իմ սրտից նրանք երբէք չը պիտի ջնջուին։ Եթէ որ և է բան կայ, որ կարող է ինձ մոռացնել թէ ես աթենացի եմ և ոչ ազատ, դա մինչև մի ստրկան Իոնէի ամբոխ, արթուն, կենդանի, անքուն սէրն է—մի սէր, որ մի նոր զգացմունք է ստացել մեր նոր հաստատքի մէջ *)—մի սէր, որի նկարագրութիւնը մեր բանաստեղծներից ոչ մէկը, որքան էլ զեղեցիկ լինին նրանք, չեն կարողացել ստուերագծել. որովհետև ձուլուել կրօնքի հետ՝ դա ստանում է կրօնքի յատկութիւններից,—դա խառնուած է մաքուր և չնաչխարհիկ մտքերի հետ. դա մի բան է, որը մենք կարող ենք լուսալ, որ պիտի ստանենք մեզ հետ ամբողջ յաւիտենականութեան մէջ, և հետևաբար պահպանում ենք դրան սպիտակ և անարատ, որպէս զի չը չիկնենք խոտուվանելու այդ մեր Աստուծոյ առջև։ Դա ճշմարիտ օրինակն է մեր յունական Կրոսի և Պսիքէի մասին առասպելաբանութեան—դա իրօք հոգին է քնած սիրոյ բաղուկների մէջ։ Եւ եթէ այս, իմ սէրը, մինչև մի ստոյնան զօրավիգ է լինում ինձ ընդդէմ ազատութեան համար իմ ունեցած

*) Տես ծանօթ. Բ. վերջումը։

փափագի տենդին, իմ կրօնքը ասելի մեծ զօրավիգ է լինում։ Երբ որ ես ուզում եմ առնել թուրս, հնչել փողը, և նետուիլ դէպի մի նոր Մարաթոն (բայց Մարաթոն առանց յաղթութեան) ես զգում եմ, որ իմ առույչ մտքերը իմ երկրիս անկարողութեան և հոռմի լուծի չարաչարիչ ծանրութեան մասին, դէթ մխիթարում եմ այն համոզմունքով թէ աշխարհը լոկ սկիզբն է կեանքի—թէ մի քանի տարուայ փառքը շատ քիչ նշանակութիւն ունի յաւիտենականութեան անհուն տարածութեան մէջ—թէ ոչ մի կատարեալ ազատութիւն չը կայ մինչև կաւ չղթաները թօթափուին հոգու վրայից, և ամբողջ սիեղերքը, ամբողջ յաւիտենականութիւնը դառնայ նրա ժառանգութիւնը և պետութիւնը։ Եւ սակայն, Սալլուստ, իմ յունական փափուկ սրտեան խառնուրդից մի բան կայ իմ կրօնքի մէջ։ Ես չեմ կարողանում ունենալ այնպիսի մարդկանց նախանձաւորութիւնը, որոնք միայն եղեռն և յաւիտենական բարկութիւն են տեսնում այն մահկանացուների մէջ, որոնք չեն կարողանում հաւատալ նրանց պէս։ Ես չեմ սարսափում ուրիշների ազանդից։ Ես չեմ յանդգնում նզովել նրանց—ես աղօթում եմ Մեծ Հօրը, որ նրանց հաւատացեալ դարձնէ։ Այս զաղջութիւնը ինձ կասկածանքի է ենթարկում քրիստոնեաների աչքում. բայց ես ներում եմ այդ. և յայտնապէս զայթակղութիւն չը պատճառելով ամբոխի նախապաշարումներին, ես կարողանում եմ իմ եղբայրներին պաշտպանել օրէնքի վտանգից և իրանց եռանդի հետևանքից։ Եթէ բարեխառնութիւնը թուում է ինձ բարեսրտութեան բնական արարածը, դա նաև տալիս է բարեգործութեան աննուաճ միջոցը։

Այսպէս է, ուրեմն, ով Սալլուստ, իմ կեանքը—

այսպէս են իմ զգայարանները—այս ձեով ես ոչնչանում կեանքը և սպասում եմ մահուան։ Իսկ դուք, ուրախ և պիտակիրա աշակերտք Եպիկուրի, դուք... Բայց եկէք այստեղ և տեսէք ինչ են մեր վայելքները, մեր յոյսերը և պիտի հասկանաք, որ ոչ կայսերական խնջոյքների չքեղութիւնը, ոչ խռնուած կրկէսի աղաղակները, ոչ աղմկալից ֆորումը, ոչ չոշոշուն թատրոնը, ոչ վեղարապարեհզները, ոչ Հռոմի հեշտասէր բաղնիքները—ընդունակ չեն առեղծելու այնպիսի պայծառ և անընդունակ երջանկութեան մի կեանք, որ դուք անխրատաբար ափսոսում էք իրրև ապարիզը աթենացի Գլոկուսի։ Մնաք բարեաւ...

Մօտաւորապէս տասն և եօթը դարեր անցել էին, երբ Պոմպէյի քաղաքը երեան հանուեցաւ իր լուռ գերեզմանից *)։ Նրա գոյները բոլորովին պարզ էին և չը նսեմացած. նրա պատերը թարմ էին որպէս թէ երէկ ներկուած լինէին—ոչ մի գոյն չէր մթնել նրա յատակի ճոխ մոզայիկների վրայ—նրա ֆորումի մէջ կիսակատար սիւները կարծես նոր էին գուրս եկել որմնադրի ձեռքից։ Նրա պարտէզների մէջ արբազան եռոտանին—նրա սրահի մէջ դրամարկղը—նրա բաղնիքների մէջ մարմնին քորելու գործիքը—նրա թատրոնների մէջ մուտքի դուռը—նրա սալոնների մէջ կարասիքը և լամպը—նրա արիկլիումների մէջ խնջոյքի փչրանքները—նրա կուբիկուլումների մէջ թոռամած գեղեցկութեան ներկը և անուշահոտութիւնները,—և ամենուրեք ոսկորները և կմախքները այն էակների, որոնք երբեմն չարժել էին

*) Պոմպէյ կործանուեցաւ 79 ս. Ք. և առաջին անգամ գտնուեցաւ 1750 թուականին։

պատանակը այդ կեանքի զեղխութեան մանրանկար սահայն վատահել մեքենային, գտնում էին իրանց տեղը մում որպէս թէ նոր դրուած լինէին *)։

Դիմէդի տանը գետնափոր մառանի մէջ գտնուեցան քսան կմախքներ (մեկը երեխայի). դրանք բոլորը նոյն տեղումն էին դրան մօտ, ծածկուած նոյնը մոխրայնի փոշիով, որը, ըստ երևոյթին, դրան ճեղքերից ներս էր մտած մինչև ամբողջ տեղը լցրած էր։ Այնտեղ կային գոնարեզէններ և դրամներ, աչտանակներ, լոյսի համար անհրաժեշտ, և դինի որ չորացել էր ամֆորների մէջ, տապալից կեանքի երկարացման համար։ Աւազը ամրացած խառնուածքով՝ տացել էր կմախքների ձևը, որպէս թէ մի կաղապար եղած լինէր. և ճանապարհորդը այժմ էլ կարող է տեսնել մի կանացի վզի և կրծքի հետքերը, որոնք կրում են երիտասարդութեան բոլորակ շրջագծերի նշանները—դա տարաբախտ Ջուլիայի կազմի նկարն է։ Հետաքրքրուող մարդուն այնպէս է թուում, որ օդը աստիճանաբար փոխարկուել է ծնծղալին չոգու։ Կամարների ներքևի բնակիչները վազել են դրան մօտ, քայց տեսել են որ դա փակուած և ամրացած է եռակից կղկղանքների բեկորներով, և փորձելով դուռը կոտրել նրանք խեղդուել են հնձուցիչ մթնոլորտի պատճառով։

Պարտիզի մէջ գտնուեցաւ մի կմախք, ոսկրուտ ձեռքի մօտ կար մի բանալի և նրա մօտ մի քսակ դրամ։ Ենթադրւում է որ այս մարդը տան տէրն է եղել—տարաբախտ Դիմէդը, որ կարելի է փորձել է փախչել պարտիզի դռնով, բայց սպանուել է կամ չոգինե՞ր կամ մի քարի բեկորով։ Արծաթեայ վազերի մօտ կար մի

*) Տես նախթ. Գ. վերջը։

ուրիշ կմախք, հաւանականապար մի գերու կմախքը։

Սալլուստի և Պանսայի տները, Խոխի տաճարը նրա արձանների հետ ճեռնածուական մեքենաները— նրա սուրբ գաբիրների թաքստիները, այժմ մերկացած են հետաքրքիր մարդկանց աչքերի համար։ Այդ տաճարի սենեակներից մէկի մէջ գտնուեցաւ մի ոսկեայ կմախք և նրա մօտ մի տապար. այդ տապարով երկու պատ ճեղքուած էին, գոնը աւելի չէր կարողացել թափանցել։ Քազաքի մէջ անգամ գտնուեցաւ մի ուրիշ կմախք, որի կողքին կար մի կոյտ դրամ, և Խոխի մենհանի խորշերդաւոր զարդերից չտաները։ Մահը վրայ էր հասել և Կալենուս իր ապաստանեան մէջ Բուրբոյի հետ միևնոյն ժամանակ տառապել էր։ Երբ պեղիչները հետացրին մի կոյտ վէրատակներ, նրանք գտան մի մարդու կմախքը, որ բառի տառացի նշանակութեամբ երկու կտոր էր եղել մի խորտակուած սիւնով. դանկը այնպիսի մի աչքի զարկով կազմուածքն ունէր, այնքան զարգացման նշաններ էին կրում նրա մտաւոր, որպէս նաև նրա վատագոյն ֆիզիկական մասերը, որ դա առաջ խորհրդածութեանց նիւթ է մատակարարել Սպուրզհայմի թէօրիաների հետեւողներին, որոնք նայել են մարդի այդ աւերուած պատառի վրայ։ Մինչև այսօր գարերի ընթացքից չհասուց, ճանապարհորդը կարող է տեսնել այն բարձր ապարանքը, որի ճարտարապետական զարդերի և պաճուճանքների մէջ երբեմն մտածում, խորհում, երազում և մեղանչում էր եգիպտացի Արբակի հոգին։

Աչքից անց կացնելով այդ անցած գնացած մի ընկերական սիրտմի գտնագան յիշատակները՝ մի օտարականի, այնչ հետաքրքիր և բարբարոս կղզուց, որի անունը լիշելուց Կայսերական Հռոմայեցին ցնցում էր, կանգ առաք փոքրիկասուն Կամպանիայի այդ վայելչանքների մէջ, և շարադրեց այս պատմութիւնը։

Վ Ե Ր Ջ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ

Ծ. Ա. Այժմեան իտալիացիները, մանաւանդ նրանք, որ բնակուում են Իտալիայի հարաւային մասերում, մի մտաւոր զուտանք ունին զեպի անուշահոտութիւնները. նրանք այդ հոտերը նկատում են որպէս վերին աստիճանի վատառզջ. և հռոմայեցի կամ նէապօլսեցի աղիկինը խնդրում է իր այգեկուներից անուշահոտութիւններ գործ չածել։ Բայց չատ ատրօրինակ բան է, որ այն ոնգերը, որոնք այդքան զգայուն են զեպի հոտաւէտ բոյրերը զարմանալի կերպով անզգայ են հակառակ զեպքում։ Մարդ կարող է ամենայն ճշտութեամբ հոմը կոչել «Sentina Gentium – ազգերի կոյուղին»։

Ծ. Բ. Մի չատ հետաքրքիր և չահեկան աշխատութիւն կարելի է գրել Յունաստանի և Հռոմի պարապիտների վրայ։ Առաջին երկրում նրանք աւելի անարգուած էին քան վերջինում։ Ալկիփրոնի «նամակները» չատ կենդանի կերպով նկարագրում են այն անպատուութիւնները, որոնց նրանք ենթարկուում էին մէկ ընթրիքի համար. մէկը գանգատուում է, որ հանդիսականները ձկան տասը չպատեցին նրա երեսին—որ գլխին զարկեցին և մեղր քսած քարեր տուին նրան ուտելու. մի պոռնիկ կին ձգում է նրա երեսին արիւնով լցուած մի վուշիկ, որը տրաքում և նրա երեսը ծածկում է իր պարունակութեամբ։ Այն ձևը, որով այս հացկատակները հատուցանում էին իրանց հիւրընկալներին նրանց հիւրասիրութիւնը նմանում էր այժմեան «պնակալէզների» ձևին, և կայանում էր սրախօս կատակների և զուարճալի պատմութիւնների մէջ, երբեմն էլ նրանք

պործնական կատակներ են անում միմեանց հետ և իրար ականջներն էին քաշում։ Ամէնքի դասատուները շատ խիստ աչքով էին նայում այս խեղճ միմոնների վրայ, և նրանց դասատվատում էին դանակոծութեան և բանտի. իրօք, պարապիսը Ամէնքի մէջ կարծես միևնոյնն էր, ինչ որ խենթը միջին դարում. բայց նա շատ աւելի անարդուած, և կարելի է աւելի սրտաճաք էր.—պոռնիկների ընկերակիցը լինելով՝ նա իր մէջ միացնում էր հատատի և խեղկատակի յատկութիւնները։ Այս ձևի մարդիկ բնորոշ էին Յունաստանին։ Լատիներէն կատակերգութիւնների մէջ մենք յաճախ հանդիպում ենք պարազիտների, այնու ամենայնիւ, նրանք Հռոմում կարծես նուազ անարդուած էին քան Ամէնքում։ Նաև Տէրենտիուս, որը խօսելով աթենական սովորութիւնների վրայ, հատկապէս մեղմացրել է ինչ որ կարող էր չափազանցութիւն երևալ հռոմայեցի ունկնդիրներին, մեր առջև չէ պատկերացնում մի բնաւորութիւն այնքան անարդուած և դարչելի, որպիսին է Ալկիմիոնի կամ Ամէնէուսի պարազիտը։ Աւելի խիստ և ժողովրդական՝ հռոմայեցիները յաճախ չէին դիջանում այսպիսի խեղկատակների թոյլ տալ, որ մտնեն իրանց ընկերութեան մէջ, և վարձում էին (ինչպէս մենք կարող ենք նկատել Պլաւտի «Նամակների» մէջ) լիմարներ կամ չարչատաններ, իրանց հիւրերին զուարճացնելու և յունական պարազիտի տեղը բռնելու համար։ Երբ Կլոդիուս պարազիտ է կոչում բնագրի մէջ, ընթերցողը այդ բառը պիտի ըմբռնէ իր այժմեան և ոչ հին նշանակութեամբ։

Պարազիտի մի շատ թոյլ բայց մի շատ չողոքարկիչ պատկերն էր ուսմբրան կամ առուերը, որը ընդհատում էր մի սրեկ հրաւիրուած հիւրի, և որը երբեմն նոյնչափ նշանակութեան տէր մի մարդ էր, որչափ հրաւիրուածը. սովորաբար նա լինում էր հիւրի մի չքաւոր ազգականը կամ նրա խեղճ բարեկամը։ Այս տեսակին էր պատկանում մեր բարեկամ Կլոդիուսի առուերը։

Ծ. Գ. Բախտի բոլոր խաղերը արդելուած էին օրէնքով. միայն «Սատուրնալի բուսում» կամ Դեկտեմբեր ամսուայ ընթացքում խաղալու ոչ մի արդելք չը կար։ Այս օրէնքի զօրաւորութիւնը յանձնուած էր էդիլներին, և ինչպէս խաղերի դէմ դրուած բոլոր օրէնքները, ամեն ժամանակներում, դա մնում էր բոլորովին ապարդիւն։

Ծ. Դ. Կարծւում է որ Սիլլան է սարածել Իտալիայի մէջ Բախտի կրօնքը *) Դա չատուով մեծ ժողովրդականութիւն չահեց և մասնաւորապէս հռոմայեցի սիկիլիների մէջ։ Բախտի քահանաները երդուեալ կուսակրօններ էին, և ինչպէս բոլոր այդպիսի քահանաներ, հռչակուած էին իրանց հեշտասիրութեան համար։ Յորնաղ քրմուհիներին կոչում է Jsiacae lenae, մի անուն, որ ցոյց է տալիս թէ նրանք ինչքան դիւրամատչելի էին սիրականների. և դիշերուայ քօղի տակ բազմաթիւ սիրային ինարիքներ էին կատարւում սրբազան տաճարների արտաքին մասերում։ Մի սիկիլն ասխատում էր մի քանի դիշեր հանել Բախտի խորանի առջև. սա նշանակում էր գրկանք դեպի ամուսինը և չնարհ դեպի սիրականը։ Մինչդեռ մարդ-

*) Կամպանիայի քաղաքների մէջ Ալեքսանդրիայի առեստրը հատանականաբար աւելի ազդեցութիւն ունէր քան Սիցիլայի բարեպաշտութիւնը (որը մի շատ ժողովրդական օրինակ չէր) Եգիպտոսի սիրեցեալ աստուածութեան կրօնքը հատատանալու խնդրի մէջ։

կային կրքերի մեկը այսպէս օժանդակում էր աստուածուհու հաւատքի տարածմանը, մեկ ուրիշը և ոչ նուազ ուժեղը—այն է Դիւրահաւատութիւնը—նոյնպէս ծառայում էր ամրացնելու համար նրա կրօնքի արմատները մարդկանց սրտերում։ Իսխի քահանաները պարծենում էին կախարդութեամբ և ապագայի գիտութեամբ։ Ամեն դասակարգի տիկիններ, և առնական սեռից էլ շատեր յարգում էին եգիպտացի կախարդներին և դիմում էին նրանց գուշակութեանը։ Վոլտէր, շատ զուարճալի ոգեւորութեամբ աշխատում է ապացուցանել, որ գնչուները Իսխի քուրմերի և քրմուհիների սերունդներն են, Աստրեատեանի աստուածուհու քահանաների սերունդին խառնուած։ Ապուլէիուսի ժամանակ այս սրբազան մոլորեցուցիչները կորցրել էին իրանց յարգը և նշանակութիւնը. արհամարհուած և չքաւոր՝ և նրանք թափառում էին տեղից տեղ մարգարէութիւններ վաճառելով և հիւանդութիւններ բժշկելով. և Վոլտէր բաւական սրամտութեամբ մեզ նկատել է տալիս, որ Ապուլէիուս չէ մոռացել նրանց բնորոշ ճարպկութիւնը՝ տան դրսի բակերից առարկաններ գողանալու մէջ։ Յետոյ նրանք զբաղւում էին ճնճղանմայութեամբ և տարօրինակ պարերով (հաւանականաբար բռնեմական պարերը)։ «Այս է եղել», ասում է չափազանց շատ եղրակացնող Ֆրանսացին, «վախճանը Իսխի և Օսիրիսի հին կրօնքի, որի անունը այժմ էլ ահ է ազդում մեզ»։ Այն ժամանակ, որի մասին խօսում է իմ պատմութիւնը, Իսխի հաւատքը իր հաշակի բարձրագոյն գագաթնակէտին էր հասել. և հարուստ մոլեռանդները նոյն իսկ Նեղոսից ջուր էին բերել տալիս, աստուածուհու սեղանների վրայ սրսկելու համար։ Իսխի տաճարի նկարագրութեան մէջ ես չեմ

մոռացել եգիպտահաւին, թէև ենթադրում են, որ այդ թռչունը մեռնում էր երբ եգիպտոսից դուրս էր արտում։ Բայց զանազան պատճառներով, որոնց՝ շատ երկար կը լիներ այստեղ թուել ես հակուած եմ հաւատալու, որ եգիպտահաւը բացակայ չէ Իսխի խորհրդանշական տաճարներից, թէև քիչ անդամ էր պատահում, որ նա երկար ապրէր, և կատարելապէս մերժում էր ամէն օտար կլիմայում։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ

Ծ. Ա. Բրիստոնէական թուականի նախնական դարերում, հեթանոսական փիլիսոփայութիւնը, մանաւանդ Պիթագորասի և Պլատոնի վարդապետութիւնները շատ ստորնացել և աղաւաղուել էին ոչ միայն ամենավայրենի միտիկականութեամբ, այլ նաև կախարդութեան ցնորական երազներով։ Պիթագորաս, իրօք արժանի չէր դրանից մի աւելի ազնիւ վախճանի. որովհետև, թէև վերին աստիճանի խելացի մի մարդ էր նա մի տարօրինակ չարլատան էր և ստեղծուած էր կախարդների մի զարոյի հայրը լինելու։ Պիթագորաս ինքը կամ մշակում էր կախարդութիւնը և կամ պարծենում էր նրա գիտութեամբ, և նրա հետևողները զարմանալի պատմութիւններ էին անում թէ նա դրել է լուսնի մակերևոյթի վրայ և թէ միևնոյն ժամանակ երևացել է զանազան վայրերում։ Նրա ոսկեայ կանոնները և ոսկեայ ազդրը մանաւանդ յարգանք էին վայելում Մեծն Յունաստանում, և նրա խորհրդաւոր թիւերի վարդապետութիւնների միջից նրա աշակերտները հնարեցին բազմաթիւ վարդապետութիւններ։ Նրան յաջորդող խաբեբաներից ամենից նշանաւորն էր Տիւնացի Ապոլլոնիուս, որի վրայ ակնարկութիւն է եղել բնագրի մէջ։ Աւելն տեսակ գերբնական դէպքեր

առեղի ունեցան այս պարոնի ծննդեան ժամանակ։ Պրոտէուս, եգիպտական աստուածը, գուշակեց նրա մօրը, մինչդեռ նա լոկ էր, որ ինքը Պրոտէուս վերածուի պիտի երեսր աշխարհի վրայ նրա միջոցով։ Այս բանից լեռայ դիւրին էր Պրոտէուսին վերապրել կերպարանափոխութեան զօրութիւնը։ Ապալլոնիուս գիտէր թէչունների լեզուն, կարդում էր մարդկանց խորհուրդները, և միշտ իւր մօտ ունէր մի մանրիմ ոգի։ Նա մի դիւտար էր (?) և ժողովուրդին համոզեց քարկոծել մի խեղճ դեղ, որ սառցել էր մի մատրոկանի պատկառելի կերպարանքը. այդ քարկոծական գործողութեան ենթարկուելուց լեռայ, այդ դեղը դարձաւ մի անագին շուն։ Նա չարութիւն էր սալիս մեռելներին. մեկ գիշեր անց էր կացրել Աքիլլէսի մօտ, և երբ Պամիլեան սպասուհուս, նա բարձրաձայն գոչեց (թէև նա այդ բոլորին ներկայացումն էր) «սպասնեցէք բռնակալին»։ Այսպիսի մի մեծ և առաքինի մարդու վախճանը արժանի էր իր կեանքին։ Այնպէս է թւում, որ նա համարձակ է երկինք։ Սրանից պակաս ինչ բան կարելի էր սպասել մի մարդուց, որ քարկոծել էր դեղին։ Եթէ մի սրա է անգլիացի հեղինակ խորհ մի նոր Ֆաուստ պատրաստելու ևս նրան կը չանճնարարեմ Ապոլլոնիուսը։

Բայց այս կախարդները փիլիսոփաներ էին (!)— ուշադրելի և բարեպաշտ մարդիկ—կային ուրիշներ, որոնց գիտութիւնը չատ աւելի սև և ժխեմ էր. դրանք Գօհարիկ կախարդութեան, կամ ուրիշ բառերով Սև Արուեստի մշակողներն էին։ Թէ Գօհարիկ և թէ Թէուրգիական հմայութիւնները թւում են թէ եգիպտական են. դէթ հաստատուած է, որ այդ արուեստները մշակող մարդիկ զարթնում էին թէ այդ հին աղբիւրից են առած իրանց

գլխաւոր գաղտնիքները. այդ երկու գիտութիւնները էլ չատ մօտից կապուած էին աստղաբաշխութեան հետ։ Ուրնմն վերապրելով Աբրակին կախարդութեան արուեստը և հոչակը, և միևնոյն ժամանակ աստղերի գիտութիւնը, կատարելապէս համերաշխ եմ ընթացել այդ ժամանակուայ ոգու և նրա ծննդեան հանգամանքների հետ։ Նա այդ դարի բնորոշ տիպն է։ Ես առաջ ուզած էի աւելի ընդարձակ և մանրամասն տեղեկութիւններ տալ Աբրակի չատկնութեան մասին իր արուեստի տիրապետութեան մէջ, և ընթերցողին ծանօթացնել այդ ժամանակուայ գանազան կախարդութիւնների հետ։ Բայց երկարել եգիպտացու բնաւորութիւնը աւելի գրաւից իմ ուշադրութիւնը, և ես դգացի, որ անհրաժեշտ էր չափաւոր լինել դէպի մի մեքենայութիւնը, որի գաղափարը, գիտութեան առաջադիմութեան չնորհիւ, այժմ ոևիքը, ամեն մարդ կարող է երևակայել, որ հասկանում է։ Արդարև, այնպէս ինչպէս որ կայ, չափազանց մաուրական մի առեղծագործութիւն էր, և պէտք չունի սարսափել աւելի կոպիտ և ֆիզիքական միջոցների կրկնութեանը։ Ես հետևաբար նրան թողլ տալ միայն չայտնել իր զօրութիւնը իր գիտութեան սարբական և ահնելու գաղտնիքների մէջ, և նրա աւելի նուրբ կախարդութիւնները թողնել միտքերի և տառերի մէջ։

Գալով Վեզուվի վհուկին—նրա թովչութիւնները և նրա հեզուհիները, նրա անձաւը և դրա ծառայութիւնները, որքան էլ ծանօթ լինեն մեզ հիւսիսի բնակիչներս, նորից հաստատում նկարագրութիւններ են նրա ժամանակի և ազգի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ ԳՐՔԻ

Ծ. Ա. «Զար աչքի ազդեցութիւնը»։ Այս նախա-

պաշարումը, որին ենթվի քան մեկ անգամ ես ակնարկութիւններ եմ արել այս գրքի մէջ, դեռ տարածուած է Մեծն Յունաստանում, և առաջուանից ոչ նուազ ազդեցութեամբ։ Յիշում եմ, որ Նապոլիում ես խօսակցում էի ամենաբարձր դասակարգի մի տիկնոջ հետ, որի մասսայ զարդացումը և տեղեկութիւնների պէսպիսութիւնը հաղուագիւտ էին աղնուական իտալացիների մէջ արական և էգ իգական սեռի մէջ. խօսակցութեան միջոցին ես նկատեցի, որ նա յանկարծ դադարեցաւ, և մի արագ և տարօրինակ շարժում գործեց իր մատով։ «Ատուածծ իմ, այդ մարդը», մրմնջաց նա դողդողալով։

«Ի՞նչ մարդ»։

«Տեսէք—այդ կողմը, որ նոր մտաւ»։

«Նա իրան չատ չողոքորթուած պիտի ղդայ, որ այսպիսի մի յուզում է պատճառել. անտարակոյս նա սիրելիօրեալ աքանչացողներից մէկն է»։

«Աքանչացող—Ատուածծ չանէ։ Նա չար աչք ունի։ Նրա աչքը ուղղակի սեւեռուած էր իմ վրայ։ Անպատճառ մի տարտափելի բան կը պատահէ»։

«Ես տարօրինակ ոչ մի բան չեմ տեսնում նրա աչքերի մէջ»։

«Աւելի վատ, վատագն աւելի մեծ է, երբ ակնարկ չէ։ Նա մի տարտափելի մարդ է։ Վերջին անգամ երբ նա նայեց իմ ամուսնուն, ամուսինս զլադուած էր թուղթ խաղալով և մէկ անգամից իր եկամուտի կէսը կորցրեց. նրա տարաբախտութիւնը անհատատալի էր։ Նոյն կոմսը հանդիպեց իմ ազգին պարէզների մէջ և հէնց այդ երեկոյ խեղճ երեխայի թևը կոտրուեցաւ։ Ո՛չ, ինչ անես, անպատճառ մի տարտափելի բան կը պատահէ, և

ահ երկինք, նա սքանչանում է իմ գլխարկիս վրայ»։

«Արդեօք ամեն մարդ կոմսի աչքերը նոյնչափ չարաղէտ է գտնում, և նրա սքանչացումը նոյնչափ յուզիչ»։

«Ամեն մարդ—ամեն ոք տարտափում է նրանից. և մի բան որ չատ տարօրինակ է, այն է, որ նա բարկանում է երբ տեսնում է, որ մէկը խոյս է տալիս նրանից»։

«Այդ իրօք չատ տարօրինակ է Թշուառականը»։

Նապոլիում նախապաշարումը լաւ ծառայութիւն է անում ոսկերիչներին, նրանք ահագին քանակութեամբ Թալիսմաններ են վաճառում որպէս հակահմայք mal-occhio-ի (կամ չար աչքի)։ Պոմպէյում, Թալիսմանները նոյնչափ բազմաթիւ էին, բայց ոչ միշտ նոյնչափ զեղչիկ կամ նոյնչափ զարդարուն։ Բայց ընդհանրապէս խօսելով՝ մարջանով չինած մի զարդը յաճախ գործ էր ածւում այն ժամանակ, ինչպէս նաև համաբուում է այսօր, որպէս մի չարախափան առարկայ։ Թրակիացիներին համար կարծւում էր, որ նրանք ժառանգաբար ունէին այս Թովչական յատկութիւնը, և մինչև անգամ մէկ նայուածքով կարող էին սպաննել մի մարդ։ Իսկ Աֆրիկէում, ուր այժմ էլ այդ հաւատքը զօրութիւն ունի, մի քանի ընտանիքի անդամների համար կարծւում էր, որ նրանք ոչ միայն կարող են սպաննել երեխաներին, այլ մինչև անգամ ծառեր չորացնել—և նրանք այնուամենայնիւ էլ չէին ենթարկւում այդ բանը ոչ Թէ անիծելով՝ այլ զովելով։ Չարաչքը միշտ չէր տարբերւում ուրիշ մարդկանց աչքերից։ Բայց իտալական սեռի մէջ այն անձնաւորութիւնները, որոնք երկու բիբ ունէին, ամենից չատ տարտափէին ազգում։ Իլլիրիանների համար աւելի էր, որ նրանք ունէին այս չարաչուք անհետեւութիւնը։ Ամեն

երկիրներէն մէջ, նոյն իսկ հիւսիսում, աչքը նկատում է որպէս թովչութեան գլխաւոր կեդրոնը. բայց այժմ, մէկ բիւր ունեցող ալիկնները չատ դիւրութեամբ են դարձում այդ կործանիչ ազդեցութիւնը։ Տես ինչքան մենք աւելի առաջ ենք գնացել մեր նախնիքներից։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԶՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԻ

Ծ. Ա. Եպիկուրի վարդապետութիւնները մաքուր են և պարզ։ Նա չէ ուրանում երկնային զօրութիւնների գոյութիւնը և վէլլէիուս (նրա փիլիսոփայութեան պաշտպանը և մեկնաբանողը) ասում է «Որ Եպիկուր առաջին մարդն էր, որ հաւատաց թէ աստուածներ կան, և նրա հաւատքը հիմնուած էր այն ապացոյցների վրայ, որ ինքը բնութիւնը զործում է ամեն մարդկանց մտքերի վրայ։ Նա երեակայում էր, որ հաւատքը դէպի Աստուած մի բնածին և նախապէս զաղափարն էր մարդկային հոգու—մի վարդապետութիւն, որից այժմեան բնազանցաբանները (անտարակոյս ոչ եպիկուրեաններ) մեծապէս օգտուել են։ Նա հաւատում էր, որ պաշտպութիւն դէպի երկնային զօրութիւնները պիտի կատարեր երջանկութիւնից և բարօրութիւնից առաջ եկած ակնածութեան մէջ, իսկ ոչ նրանց վրէժխնդրութեան ահրեայի կամ նրանց զօրութեան ահի մէջ։ Սա մի վսեմ և անվախ փիլիսոփայութիւն է, որ կարող է յարմարեցել մի քանի մեծ և զարգացած մտքերի, բայց որը չէր կարող ամենաձանարել մարդկութեան անհամեմատ մեծ մասի կրքերը։ Ըստ նրա վարդապետութեան աստուածների համար չատ աւելի անարժէք էր զբաղուել իրանց իսկական երջանկութեամբ, քան ուշադրութիւն դարձնել մարդկանց անօգուտ և անցաւոր գործերի կամ նրանց երջանկութեան և ապերջանկութեան վրայ։ Այս աչխարհի համար նրանք

անհամեմատիր վերացականութիւններ էին

«Իրանց երկնային փառքի մէջ բազմած։
Կարող են տեսնել ինչ է մեր խըմած»։

Կատոան, որ յարձակւում է Եպիկուրի փիլիսոփայութեան վրայ մեծ զգաստութեամբ և բաւական եթէ ոչ կատարեալ յաջողութեամբ, հասնում է հետեւեալ պարզ և գործնական եզրակացութեան։ «Ինչպէս», ասում է նա, «կարող է լինել սրբութիւն, եթէ աստուածները ուշադրութիւն չեն դարձնում մարդկանց գործերի վերայ—եթէ աստուածութիւնը ոչ մի գործ չէ ցոյց տալիս դէպի մարդկութիւնը, ուրեմն մեզ համար ինչ բանի պէտք է նա։ Ինչպէս հայցեմ նրա ողորմութիւնը։ Նա չէ կարող ողորմած լինել,—քանի որ բան քեզ, չնորհը և բարեսրտութիւնը միայն ապշութեան հետեանքներն են»։ Կատոան իրօք, Պոսիդոնիուսից (Deoratumâ Deorum) առաջ է բերում մի կտոր ապացուցանելու, որ Եպիկուր չէր հաւատում որ և է աստուծոյ գոյութեանը. և որ նրա պիտգումը, ընդհակառակը էր մի չէզոք էութիւն, լուկ մի նախապատրաստութիւն էր, որ մարդիկ նրան չամբաստանեն որպէս անաստուած։ «Եպիկուր չէր կարող այնքան լիմար լինել» ասում է Կատոա, «որ անհեղգութեամբ հաւատար, որ Աստուած ունի մարդու անդամները, առանց գործութեան այդ անդամները գործածելու համար, որ նա ոչնչ չի նշանակում էութիւն է, և ոչ աքի չէ տեսնում և ոչինչ չէ անում»։ Եպիկուրի մասին, այս խօսքը ճշմարիտ լինել կամ սուտ, դէթ մեկ բան անտարակուսելի է, որ նրա վերջին հետեւողները կատարելագործուած անաստուածներ էին։ Երգի մէջ ամփոփուած գաղափարները ճիշտ այն գաղափարներն են, որոնց՝ մենք հանդիպում ենք Պարտէզի չնորհալի փիլիսոփաների լուրջ արձակ գրուածքներում։

նների մէջ։ Նրանք կատարելապէս աղաւաղել էին Եպիկուրի բարոյական վարդապետութիւնները, որոնք մաքուր էին և գործնական, իսկ աւելի դիւրութեամբ ապականել էին նրա մէտաֆիզիքական վարդապետութիւնները, որոնք նուիրական վտանգաւոր էին և ցնորական։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՐՔԻ

Ծ. Ա. «Ձուլուած լաւագի գետեր»։ Հանճարեղ մարդիկ շատ թէօրիաներ են մտածել Պոմպէյի կործանման ճիշդ ձևի վրայ. ես իմ դրքի մէջ նկարագրել եմ այն ձևը, որ ամենից աւելի ընդհանուր ընդունելութիւն է գտել, և որը գետնի խաւերը քննելուց յետոյ, միակ ընդունելի և կարելի ձևն է երևում. ես յարել եմ այն թէօրիային, որ Պոմպէյի կործանումը վերագրում է մոխրի տարափների, եռացող ջրի հոսանքների, մեծ-մեծ քարերի անկմանը և երկրի ցնցումների։ Հերկուլանում, ընդհակառակը, ենթարկուել է ոչ միայն մոխրի տարափների այլ նաև հալուած լաւայի հեղեղի. և այն հոսանքները, որոնց մասին ակնարկութիւն է եղել պատմութեան մէջ, ընթերցողը պիտի ենթադրէ, որպէս Հերկուլանում և ոչ Պոմպէյը կործանող հեղեղները։ Այն հրաբղխային կաւճակները, որոնք ներս են բերուած իմ նկարագրութեան մէջ, ըստ ամենայն հաւանականութեան գտնուում էին Պոմպէյը կործանող միջոցների մէջ։ Պապիրուս և ուրիշ աւելի դիւրալուս նիւթեր գտնուեցան այրուած դրութեան մէջ։ Մեռաղեայ առարկաներ մասամբ հալուել էին. և մի բրոնզեայ արձան կատարելապէս կոր-կոր է եղել, որպէս թէ կաւճակով։ Ամբողջը միասին առած (ի բաց առնել ժամանակի կրճատման այն անխուսափելի բանաստեղծական աղաւաղութիւնը), ես կարծում եմ, որ իմ նկարագրու-

թիւնը շատ քիչ օժանդակուած է երևակայութիւնից, և նուազ ճիշդ չի լինի այն պատճառի համար, որ գտնուում մի վէպի մէջ։

Ծ. Բ. Այն ինչ որ մենք այժմ զգում ենք և կոչում ենք, սիրոյ զգայութիւն, շատ քիչ ծանօթ էր նախնիներին, և այսօր էլ հազիւ թէ զգայութիւն ունի քրիստոնէութիւնից դուրս։ Դա մի զգացում է, որ շատ սերտ կապով միացել է—ոչ թէ մի հաւատքի այլ մի համոզմանն հետ, համոզում, որ ընդունում է թէ սերը բղխում է հոգուց, և հոգու նման անմահ է։ Շատոբրիան իր այն աչխատութեան մէջ, որ այնքան լի է սխալներով և ճշմարտութիւններով (Քրիստոնէութեան ոգին) ակնարկութիւններ է արել այս զգացման վրայ իր սովորական պերճախօսութեամբ։ Դա իրօք կազմում է մեծ տարբերութիւնը նորերի և հների սիրային բանաստեղծութիւնների մէջ։ Ես մտածեցի որ, առանց բոլորովին աննկարագրելի լինելու ճշմարտութեան և բնութեան հետ, ես կարող եմ միևնոյն զգացումը վերագրել Գլոկուսին նրա քրիստոնեայ դառնալուց յետոյ, թէև նա միայն անորոշ կերպով կարողանում է գուշակել այդ բանը, և չէ կարողանում կատարելապէս բացատրել դրա պատճառը։

Ծ. Գ. Մինչև հիմա (1834) մօտ երեք հարիւր յետոյ համ չորս հարիւր կմախքներ գտնուել են Պոմպէյի մէջ. բայց, քանի որ դեռ քաղաքի մի մեծ մասը պեղուած չէ, դժուար է հաշուել ամբողջ մեռածների թիւը։ Այնուամենայնիւ մենք բաւական հիմունք ունինք եզրակացնելու, որ կործանման մէջ մեռածների թիւը շատ փոքր է համեմատելով ազատուածների թուին։ Մոխիրը հեռացրուած էր շատ տների վրայից, ըստ երևոյթին մեռած դանձերը ձեռք բերելու համար։ Մեր բարեկամ

ՊՈՊՊԷՅԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Բովանդակութիւն։

	Երես
Նախաբան։	3
Առաջաբան հեղինակի։	15
ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ	
Գլուխ Ա.—Պոմպէյի երկու պարոններ։ . . .	25
» Բ.—Կայր ծաղկավաճառ աղջիկը և մօգալի հեղեցկութիւնը։—Ամենացու խոստովանքը։—Ընթերցողի ծանօթանալը եղիպտացի Արբակի հետ։	30
» Գ.—Գլոկուսի ծագումը։—Պոմպէյի տների նկարագրութիւնը։—Անոր ու խումբի կլասիկական հանդէսը։	50
» Դ.—Խմիսի տաճարը։—Նրա քուրմերը։—Արբակի բնաւորութիւնը լուսաբանուում է։ .	
» Ե.—Աւելի տեղեկութիւն ծաղկավաճառ աղջկայ մասին։—Սիրոյ յաւաջադիմութիւնը։	94
» Զ.—Մաղիկը նորից օրօգայթի մէջ է ձգում այն թուչունին, որ նոր փախած էր, և իր ցանցերը բաց է անում մի ուրիշ զոհ որսալու։	107
» Է.—Մի Պոմպէյցի զուարճասէրի կեանքը։—Հռոմէական բաղնիքների մի վաքրիկ նմոյշը։	128
» Ը.—Արբակ հաճութեամբ նենգում է իր զաւակը և չահում է։	145
ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ	
Գլուխ Ա.—Պոմպէյի սաւրին գաւակարգի անեծից մեկը և կլասիկական չքջանի ճէնտէլմէնները։	171
	184
» Բ.—Երկու չոջեր։	
» Գ.—Գլոկուս գնում է մեկ աղջկայ, որ վերջը նրան չատ թանգ է նստում։	192
» Դ.—Գլոկուսի մրցակիցը աւելի չաւաջանում	

Սալլուստի տունն էլ տասել է մի համանման ալցելութիւն։ Այն կմախքները, որոնք մի կարճ միջոց միայն վերակենդանանալով բեմի վրայ կատարել են իրանց վաղանցիկ գերները Բուրբօ, Կալենուս, Պիսոնիդ, Ջուլիա և Արրակ անուններով, գանուեցան ճիշտ այնպէս, ինչպէս նկարագրուած է բնագրի մէջ.—երանի թէ նրանք նոյնչափ յաջողութեամբ վերակենդանացած լինէին ընթերցողի զուարճութեան համար, որքան եղել են ի միխիթարութիւն հեղինակին, որը, այն աշխատութեան մէջ, որ այժմ վերցնում է ի զուր աշխատել է մեզմացնել ամենից ցաւալի, մռայլ և չուտանալ մասը մի կեանքի, որի ոտտայնի մէջ չատ աւելի քիչ ճերմակ կայ հիւսուած, քան ինչ աշխարհը կարող է ենթադրել։ Բայց ինչպէս չատ ուրիշ բարեկամներ, երևակայութիւնը քմահաճ է, և լքանում է մեզ ճիշդ այն րոպէին, երբ ամենից չատ պէտք ունինք նրա օգնութեանը։ Որքան մեր տարիքը աւելանում է, այնքան մենք աւելի հասկանում ենք, որ առողջութիւնը աւելի հատատարիմ և աւելի անեական միխիթարիչ է քան երևակայութիւնը։ Բայց ես պէտք է ներողութիւն խնդրեմ, որ այսպէս չանկարծ և րոպէաբար տեղի տուի իմ թուլութեան առջև – դա լոկ մի րոպէ էր։ Վերադարձող առողջութեան հետ վերադառնում է նաև այն էնէրգիան, առանց որի հոգին ի զուր որսած կը լինէր մեզ և որը մեզ կարողութիւն է տալիս անդորրութեամբ կանգնել երես առ երես մեր կեանքի չարիքների հետ, և վճռապաշտ ի կատար ածել նրա նպատակները։ Միայն մեկ փիլիսոփայութիւն կայ (թէև դպրոցները հազար են) և նրա անունն է Տակտութիւն։

«ԿՐԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՅԱՂԹԵԼ ՀԱԿԱՏԱԳՐԻՆ»։

Վ Ե Ր Ջ

է իր ապագրիզի մէջ։ 202
» Ե.—Թեզէ Պրիան։—Նոր փոփոխութիւններ Նիզիայի համար։ 222
» Զ.—Երջանիկ գեղեցկուհին և կոյր գերուհին 232
» Է.—Իօնէն որոգայթի մէջ ընկած։—Մուկը աշխատում է ցանցը ծամել։ 241
» Ը.—Նիպտացու առանձնութիւնը և մենախօսութիւնը։—Նրա բնաւորութեան տարբալուծումը։ 249
» Թ.—Ի՞նչ պատահեց Իօնէին Աբրակի տանը։ Զարհուրելի թշնամու բարկութեան առաջին նշանը։ 268

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Գլուխ Ա.—Պոմպէյցիների փորումը։—Առաջին կոպիա մեքենայութիւնը, որով աշխարհի նոր թուականը չհնուեցաւ։ 285
» Բ.—Կէսօրուայ պրօսանքը Կամպանիայի ծովերի վրայ։ 294
» Գ.—Հաւատացեալների ժողովը։ . . . 311
» Դ.—Սիրոյ վտակը հոսում է։—Ո՞ւր։ . 326
» Ե.—Նիզիան հանդիպում է Զուլիային։—Հեթանոս քրոջ և հաւատացեալ եղբօր տեսակցութիւնը։ Մի աթենացու գաղափարը քրիստոնէութեան մասին։ 345
» Զ.—Դանդաղանը, աղջիկը և գլադիատորը։ 355
» Է.—Մի Պոմպէյցի գեղեցկուհու արդուզարդի սենեակը։—Նշանաւոր խօսակցութիւն Զուլիայի և Նիզիայի մէջ։ 367
» Ը.—Զուլիան գնում է Աբրակի մօտ։—Այդ տեսակցութեան արդիւնքը։ 376
» Թ.—Փոթորիկը հարաւում։—Վհուկի անձաւը։ 386
» Ժ.—Բոցավառ գոտու տէրը և նրա տարուկը։—Ճակատագիրը գրում է իր մարգարէութիւնը կարմիր տառերով, բայց ոմն կարդալ այդ։ 404
» ԺԱ.—Կէպլերի առաջացումը։ Դատապրու-

թիւնը հաստատում է։—Դանձը հիւսւում է, բայց անցնում է մի ուրիշի ձեռքը։ . . 417

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Գլուխ Ա.—Մտածութիւնները նախնի քրիստոնեաների ջերմեռանդութեան վրա։ Երկու հոգի կայացնում են մի վտանգաւոր վճիռ։ Պատերը ականջներ ունին։—Մանաւանդ սբերը բազան պատերը։ 431
» Բ.—Մի կլասիկական հիւրընկալ, խոնարհ և խոհեմուհի։ Ապեկիդես տեսնում է Իօնէի հետ։—Նրանց խօսակցութիւնը։ . . 436
» Գ.—Մի ա լա մօդ ընթրիք, և հանդիսականների մի ընտիր խումբ։ 455
» Դ.—Պատմութիւնը մի բոպէ կանգ է առնում մի միջանկեալ դէպքի առջև։ . . 481
» Ե.—Սիրագեղը։—Նրա ազդեցութիւնը։ . 488
» Զ.—Զանազան գերակատարներ համախմբւում են։ Այն գեաերը, որ ըստ երևոյթին, հոսում էին իրարից հեռու, այժմ թափւում են մեհենդն վտի մէջ։ 496
» Է.—Գլոկուսի վիճակը։—Բարեկամութիւնը փոթչւում է։—Թշնամութիւնը մեղմանում է։—Սէրը անփոփոխ է մնում, որովհետև սիրողը կոյր է։ 514
» Ը.—Կլասիկական թաղում։ 531
» Թ.—Մի դէպք պատահում է Իօնէին։ . 542
» Ժ.—Ինչ է պատահում Նիզիային Աբրակի տանը։—Եղիպտացու գործը չարժւում է Գլոկուսի համար։—Գործը յաճախ մի չատ անկասկած համար։ 546
պէտք այցելու է յանցաւորի համար։ . 553
» ԺԱ.—Նիզիան վճռակ է ձեռնամուխ։ . .
» ԺԲ. Մի իշամեղու յանդգնում մտնել սարդի ոստայնի մէջ։ 560
» ԺԳ.—Գերին հարցնում է դաքիրի պատգամը։—Նրանց, որոնք կատարում են, կոչ-

բերը կարող են խաբել։—Երկու նոր բանաստեղծություններ մեկ գիշերում։ . . . 567
» ԺԴ.—Նիլիան հանդիպում է Կալենուսին . 578
» ԺԵ.—Արթակ և Իօնէն—Նիլիան հասնում է պարտէզը։—Արիւնօք կիսախեղ նա, և կաղատէ Ամենայնուն։ 581
» ԺԶ.—Կերուխումի ընկերներին վշտակցությիւնը մեր տարախտութեան ժամանակ։—Բանաը և բանաստեղծները։ . . 594
» ԺԷ.—Մի փոփոխութիւն ի նպաստ Գլոկուսի։ 607

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գլուխ Ա.—Արթակի երազը։ Եգիպտացու այցելուն և նրա տուացած ազգարարութիւնը։ . 632
» Բ.—Ամիւիթատրոնը։ 647
» Գ.—Սալլուստ և Նիլիայի նամակը։ . . 672
» Դ.—Դարձեալ ամիւիթատրոնը։ . . 675
» Ե.—Բանաստեղծի խուցը և մեռելների վոսը։—Տառապանքը անզգայ է դէպի արհաւիրքը։ 690
» Զ.—Կալենուս և Բուրրոս։—Պիտիդը և Կլոդիուս։—Ամփիթատրոնի աղջիկը և Ջուլիան։ 695
» Է.—Կործանման չարունակութիւնը։ . 703
» Ը.—Արթակ հանդիպում է Գլոկուսին և Իօնէին։ 710
» Թ.—Սիրահարների յուսահատութիւնը։ Ժողովրդի կացութիւնը։ 716
» Ժ.—Հետեւալ առաւօտը։—Նիլիայի վախճանը։ 723

ԳԼՈՒԽ ՎԵՐՋԻՆ ՈՒՐ ԱՄԵՆ ԲԱՆ ԴԱԺԱՐՈՒՄ Է։

Մի նամակ Գլոկուսից Սալլուստին տասը տարի Պոմպէյի կործանումից յետոյ։ . . . 728
ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ. 735

ՀՀ ԱԱՀ ԳՐԱԴԱՐԱՆ Библиотека ՀՄՄՈ-Арм С Ա. ՑՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՆՎԱՆ

Մի մանկական հոգու պատմութիւն, ոչ մանուկների համար, թարգմ. Տ. Վ. . . . . 1 —
Երկունք, Թ. Դարու, Վերնոյի . . . . . 1 —
Թորոս Լևոնի » Բ. տպագր. . — 50
Թէոդորոս Ռշտունի » . . . . . 1 —
Ուրանիա, աստղագիտական վէպ, թարգմ. Հ. Աճառ. 1 50
Հայրենի հողը, Հանրի Բորդոլի, Հ. Աճառեանի. 1 —
Ջհուա Բուշան, (Հրէասպանութիւն) Շանրիարի . 1 —
Կատրուած սիրտ, Յ. Սոլովեանի. . . . . — 40
Յունօն, Պ. Պռօչեանի. . . . . 1 —
Կռուածաղիկ » » 1 30
Ցեցեր » » . . . . . 1 —
Բզէզ » » 1 20
Սկիզբն երկանց » » 1 20
Յուշիկներ » » . . . . . 1 —
Սպանուած ազաւնի, Նարդոսի . . . . . — 30
Տանտիրոջս աղջիկը » . . . . . — 20
Վէրք Հայաստանի, դրեց Թ. Աբովեանց. . . . 1 —
Յեց, Ուիլզալի, թարգմ. Մ. Մաամնեանի . . . — 80
Փեսայ որսողներ, տիկ. Մ. Խատիսեանի . . . — 50
Հաղարից մեկը, Ն. Մամիկոնեանի . . . . . — 60
Դաբօլի ընտանիքը, Ս. Նազարեանի . . . . . — 60
Նէլզուջա, Մոչխուբարիձէ, թարգմ. Տ. Փիրումեան — 45
Խուն-Խոր, տաճկահայերի կեանքից, Յ. Դազարեանի — 60
Դժոխք, երկու մասից, Յ. Ճանիկեանի . . . . . — 70
Նուռնուճար, ժողովրդական վէպ, Մըշըճեանի . — 30
Տիրան և Արփենիկ կամ Սիրոյ ճարակը, դրեց Աբշ. — 40
Սիրոյ ուխտաւոր, Իրվինգի, թ. Յ. Խօջամիր . — 25
Փիւրա բէկ, հատոր ա. Մ. Շեռամ. . . . . — 20
Գիւղական խալիֆայ, Արարատեանի. . . . . — 50
Խորտակուած սէր, Յ. Նալեանի. . . . . — 30

Գոհիկը, Օժեշկոյի, թարգմ. Ա. Մխիթարեան. . — 50
Մահմեդի կեանքը, Իրվինգի, անգլ. Թ. Փ. Վ. 1 20
Զօրանն ու նշանաձը, Գ. Բարխուդարեանի. . . — 40
Ոսկի չինողները, Ֆշօկկէ, թարգմ. Խ. Մարախրոսեան — 50
Դժբախտ կին, ռուս. Մ. Խաւիսեանի . . . . . — 45
Հանրիէտ, Կօպպէէի, թարգմ. Վ. Խանազ. . . . — 35
Սէրաք և Սամուէլ, գրեց Իրմիան Հայլիկ. . . — 50
Տանջանքի բովից, Բ. Այվազեանի . . . . . — 30
Հիւսիսի Աբծխը, » » . . . . . 1 —
Աչառ Աբկաթ, Ա. և Բ. հատ. » . . . . . 1 —
Թոդն, Ա. Ամատեանի . . . . . 1 —
Շինոց, Սարպեան . . . . . — 30
Խեղ-Կարապետ, Սարպեան. . . . . 1 —
Քօռ-Եղիկ » . . . . . — 30
Կայր եղաժիշտ, Կարալենկոյի, թարգմ. Մուշէ վրդ. — 60
Ռոստոմ և Զոհրաբ, թարգմ. Ս. Գիւլզադեան . — 60
Պատուհասի օրը, Կարալենկոյի թարգմ. Մուշէ վրդ. — 40
Երգուած, Յ. Մալխասեանի. . . . . — 40
Սիրա, Էդմոնդ դէ Ամիչիսի, Ֆրանս. թարգմ. Փ. Վ. 1 —
Հզօր, Սամսոն, Օժէշկոյի, թարգմ. Ա. Ոհարոնեան — 25
Աւօրեայ Հովեւերգուհին » » » — 40
Բօլ Նեւադան, Ա. Դիւմայի, թարգմ. Ներսիսեան — 70
Խորհրդաւոր կղզի, Ժ. Վէրնի թ.Մ.Մաւուրեան, 3 մ. 3 —
Փէրնատ, Ա. Դիւմայի, թարգմ. Տ. Արփիարեան 1 20
Աբաքսա կամ Վարժուհին, Սրբուհի Տիւսաբի. . 1 20
Մաթիաս Սանտօրֆ, Ժիւլ Վէրնէ, թարգմ. Ե.Թիւճ. — 50
Թան-Միրան, գրեց Սէլան . . . . . — 20
Փիլիսոփային աշակերտը, Պօլ. Բուրժէի, թ. Սարաֆի 1 —
Քամելիազարդ տիկինը, Ա. Դիւմայի, թ. Աղուռնի — 80
Կեանքի տեսարաններ, Քեռայիի . . . . . — 50

Գրքերը կարելի է ստանալ վաճառակատ և հատարակ կարմով Թումարով գնողներին դիջում կլինի. Դիմել՝ Тифлисъ. Г. И. Галустяну. Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Գինն է 1 Ր. 50 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0168719

GIFT